№	2014 թվականի գարնանային հոսք ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՐՑԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ
1	Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման՝ ՀՀ սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի բացի սահմանադրականությանը. o երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ **• եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանության ու կիրառման, որը խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունքը** o ՀՀ սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում առհասարակ չի անդրադառնում օրենքի բացի սահմանադրականությանը o ՀՀ սահմանադրական դատարանն առհասարակ չի ընդունում «իրավունքի բաց» հասկացությունը
2	Հայաստանի Հանրապետությունը հանդիսանում է. **• աշխարհիկ պետություն** o կղերական պետություն o աթեիստական պետություն o աստվածապետություն
3	Համաձայն ՀՀ Սահմանադրության՝ Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունները կարող են կարգավորվել. o ՀՀ Նախագահի հրամանագրով o միջազգային պայմանգրով **• օրենքով** o ՀՀ կառավարության որոշմամբ

4	Համաձայն ՀՀ Սահմանադրության՝ ընտրել և ընտրվել չեն կարող. **• դատարանի վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատազրկման դատապարտված և պատիժը կրող քաղաքացիները** o դատարանի վճռով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված քաղաքացիները o դատարանի վճռով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված քաղաքացիները, ինչպես նաև օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատազրկման դատապարտված և պատիժը կրող քաղաքացիները o դատարանի վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող քաղաքացիները
5	Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման՝ հասարակության և պետության ո՞ր կարիքները կարող են սեփականության օտարման հիմք հանդիսանալ՝ **• այդ կարիքները պետք է լինեն բացառիկ՝ պայմանավորված գերակա հանրային շահով** o հասարակության և պետության ամեն մի կարիք o որոնք միայն պայմանավորված են գերակա հանրային շահով o որոնք հիմնականում պայմանավորված են գերակա հանրային շահով
6	Համաձայն ՀՀ Սահմանադրության՝ պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես. **• անմիջականորեն գործող իրավունք** o անուղղակի գործող իրավունք o միջնորդավորված գործող իրավունք o իրավունքի աղբյուր
7	ՀՀ Նախագահը հրապարակում է. o որոշումներ o հրահանգներ **• հրամանագրեր և կարգադրություններ** o հրամաններ
8	Հայաստանի Հանրապետությունում դատավորներին օրենքով սահմանված կարգով կարգապահական պատասխանատվության է ենթարկում. o ՀՀ Նախագահը o ՀՀ արդարադատության նախարարը o ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահը **• ՀՀ արդարադատության խորհուրդը**

9	ՀՀ Ազգային ժողովի լիազորությունները սահմանվում են. o օրենքով **• ՀՀ Սահմանադրությամբ** o ՀՀ Ազգային ժողովի որոշումներով o ՀՀ Ազգային ժողովի կանոնակարգով
10	ՀՀ Ազգային ժողովը Հանրապետության Նախագահի վերադարձրած օրենքը քննարկում է. **• արտահերթ** o ՀՀ Նախագահի սահմանած ժամկետում o ՀՀ Ազգային ժողովի որոշմամբ սահմանված ժամկետում o ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված ժամկետում
11	Համաձայն ՀՀ Սահմանադրության՝ ՀՀ Նախագահի հրապարակած հրամանագրերը և կարգադրությունները չեն կարող հակասել. o ՀՀ կառավարության որոշումներին o միայն ՀՀ Սահմանդրությանը o վարչական ակտերին **• ՀՀ Սահմանադրությանը և օրենքներին**
12	Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման՝ ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածով երաշխավորված սեփականության իրավունքի սահմանափակման չափանիշը ու սահմանները վերապահվա՞ծ են օրենսդրի իրավասությանը. o այո **• ոչ** o վերապահված են կառավարության իրավասությանը o վերապահված են նախագահի իրավասությանը
13	ՀՀ Ազգային ժողովում օրենսդրական նախաձեռնության իրավունքը պատկանում է. **• պատգամավորներին և կառավարությանը** o ՀՀ վարչապետին o ՀՀ Նախագահին o ՀՀ Նախագահի աշխատակազմին

14	ՀՀ կառավարության ծրագրին հավանություն տալու մասին որոշումը Հանրապետության Ազգային ժողովն ընդունում է. **· պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ** o պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով o Ազգային ժողովի նիստին ներկա պատգամավորների ձայների մեծամասնությամբ o Ազգային ժողովի նիստին ներկա պատգամավորների ձայների առնվազն մեկ երրորդով
15	ՀՀ Ազգային ժողովը համաներում հայտարարում է. o ՀՀ կառավարության առաջարկությամբ o ՀՀ գլխավոր դատախազի առաջարկությամբ o ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի առաջարկությամբ **· ՀՀ Նախագահի առաջարկությամբ**
16	Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման՝ ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածով երաշխավորված սեփականության իրավունքի բովանդակությունը կազմող իրավազորությունների իրացման նախապայման հանդիսանու՞մ է. o սեփականատիրոջ հայեցողության բացակայությունը o համայնքի ավագանու հայեցողությունը o համայնքի ղեկավարի հայեցողությունը **· սեփականատիրոջ հայեցողությունը**
17	ՀՀ Ազգային ժողովը նշանակում է ՀՀ սահմանադրական դատարանի. **· հինգ անդամ** o վեց անդամ o չորս անդամ o բոլոր անդամներին
18	Համաձայն ՀՀ Սահմանադրության՝ Հայաստանի Հանրապետությունում օրենսդիր իշխանությունն իրականացնում է. **· ՀՀ Ազգային ժողովը** o ՀՀ նախագահը և Ազգային ժողովը o ՀՀ կառավարությունը o ՀՀ Ազգային ժողովը և համայնքների ավագանիները՝ օրենքով նախատեսված դեպքերում

19	Համաձայն ՀՀ Սահմանադրության՝ ո՞ր պաշտոնատար անձն է ղեկավարում կառավարության գործունեությունը և համակարգում նախարարների աշխատանքը. **· ՀՀ վարչապետը** o ՀՀ ազգային ժողովի նախագահը o ՀՀ Նախագահը o ՀՀ նախագահը և ՀՀ վարչապետը համատեղ
20	Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում. o հավաստիության կանխավարկածին **· իրավական որոշակիությանը** o իրավական անորոշակիությանը o ՀՀ կառավարության համապատասխան որոշմանը
21	ՀՀ Ազգային ժողովը կարող է անվստահություն հայտնել Հանրապետության կառավարությանը. **· պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ** o պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով o Ազգային ժողովի նիստին ներկա պատգամավորների ձայների մեծամասնությամբ o պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով
22	ՀՀ կառավարությունը կազմված է. **· ՀՀ վարչապետից և նախարարներից** o ՀՀ նախարարներից o ՀՀ Նախագահից, վարչապետից և նախարարներից o Հանրապետական պետական կառավարման մարմինների ղեկավարներից

23	«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասում անհատական դիմումին ներկայացվող պահանջներն, ըստ ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշմա,ն նշանակում է, որ. **• դիմողը պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե իր սահմանադրական որ իրավունքներն են խախտվել և ինչ անմիջական պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող օրինադրույթի և իր իրավունքների խախտման փաստի միջև** o դիմողը պարտավոր չէ իրավաբանորեն հիմնավորել, թե իր սահմանադրական, որ իրավունքներն են խախտվել o դիմողը պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե իր սահմանադրական որ իրավունքներն են խախտվել, սակայն պարտավոր չէ հիմնավորել անմիջական պատճառահետևանքային կապը՝ վիճարկվող օրինադրույթի և իր իրավունքների խախտման փաստի միջև o դիմողը պարտավոր չէ իրավաբանորեն հիմնավորել, թե իր սահմանադրական որ իրավունքներն են խախտվել, սակայն պարտավոր է հիմնավորել անմիջական պատճառահետևանքային կապը՝ վիճարկվող օրինադրույթի և իր իրավունքների խախտման փաստի միջև
24	Համաձայն ՀՀ Սահմանադրության՝ Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական ատյանը, բացի սահմանադրական արդարադատության հարցերից, հանդիսանում է. o ՀՀ սահմանդրական դատարանը o ՀՀ վարչական դատարանը **• ՀՀ վճռաբեկ դատարանը** o ՀՀ գերագույն դատարանը
25	Համաձայն ՀՀ Սահմանադրության՝ համայնքի սեփականությունը տնօրինում է. o համայնքի ղեկավարը **• համայնքի ավագանին** o ՀՀ տարածքային կառավարման նախարարը o ՀՀ կառավարությունը
26	ՀՀ նախարարի պաշտոնին կարող են նշանակվել. **• ՀՀ քաղաքացիները** o ՀՀ քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք o ՀՀ քաղաքացիություն չունեցող անձինք՝ օրենքով նախատեսված դեպքերում o ՀՀ քաղաքացիություն չունեցող անձինք՝ Սահմանադրությամբ նախատեսված դեպքերում

27	ՀՀ Ազգային ժողովի դռնփակ նիստ կարող է գումարվել. o ՀՀ Նախագահի հրամանագրով o ՀՀ Ազգային ժողովի նախագահի որոշմամբ o ՀՀ կառավարության որոշմամբ **· ՀՀ Ազգային ժողովի որոշմամբ**
28	ՀՀ վարչատարածքային միավորները և դրանց սահմանները սահմանվում են. o ՀՀ Նախագահի հրամանագրերով o ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով **· բացառապես ՀՀ օրենքներով** o ՀՀ կառավարության որոշումներով
29	Համաձայն ՀՀ Սահմանադրության՝ դատարանի վերջնական ակտերն ընդունվում են. **· ՀՀ անունից** o ՀՀ սահմանադրական դատարանի անունից o ՀՀ վճռաբեկ դատարանի անունից o ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի անունից
30	Հայաստանի Հանրապետությունում դատավորը պաշտոնավարում է. o մինչև 70 տարին լրանալը o անժամկետ o մինչև 75 տարին լրանալը **· մինչև 65 տարին լրանալը**
31	Հայաստանի Հանրապետությունում հանրաքվեների արդյունքների հետ կապված վեճերը օրենքով սահմանված կարգով լուծում է. o ՀՀ վճռաբեկ դատարանը **· ՀՀ Սահմանադրական դատարանը** o ՀՀ արդարադատության խորհուրդը o ՀՀ հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովը

32	Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման՝ ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ մասում ամրագրված օրենքի դրույթի «կիրառում» նշանակում է. o երբ վկայակոչումն ունի ծանուցողական բնույթ **· երբ անձի համար այն առաջացնում է իրավական հետևանքներ** o երբ դրա միջոցով դատավարության կողմի ուշադրությունն է հրավիրվում իր գործողությունների օրինականության վրա o երբ անձի համար այն չի առաջացնում իրավական հետևանքներ
33	ՀՀ Նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին եզրակացություն է տալիս. o ՀՀ կառավարությունը o ՀՀ վճռաբեկ դատարանը o ՀՀ Ազգային ժողովը **· ՀՀ Սահմանադրական դատարանը**
34	Հայաստանի Հանրապետությունում համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու հիմքերի մասին ՀՀ սահմանադրական դատարանը. **· տալիս է եզրակացություն** o ներկայացնում է միջնորդություն o կայացնում է որոշում o եզրակացություն չի տալիս
35	ՀՀ սահմանադրական դատարանն ընդունում է. o օրենքներ o միայն որոշումներ **· որոշումներ և եզրակացություններ** o միայն եզրակացություններ
36	ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներն իրավունք ունեն դիմելու կառավարությանը. **· գրավոր և բանավոր հարցերով** o միայն գրավոր հարցերով o հարցապնդումներով o միայն բանավոր հարցերով

37	ՀՀ ներքին քաղաքականությունը մշակում և իրականացնում է. **• ՀՀ կառավարությունը** o ՀՀ Ազգային ժողովը o ՀՀ կառավարությունը՝ Հանրապետության Նախագահի հետ համատեղ o ՀՀ Ազգային ժողովը՝ Հանրապետության կառավարության հետ համատեղ
38	ՀՀ սահմանադրական դատարանի որոշումները և եզրակացությունները ուժի մեջ են մտնում. o դրանց ընդունման պահից o դրանց հրապարակումից 20 օր հետո **• հրապարակման պահից** o հրապարակումից մեկ ամիս անց
39	Հայաստանի Հանրապետությունում հանրաքվեն նշանակում է. **• ՀՀ Նախագահը՝ Ազգային ժողովի առաջարկով կամ համաձայնությամբ** o ՀՀ Ազգային ժողովը՝ ՀՀ Նախագահի առաջարկով o ՀՀ կառավարությունը o ՀՀ Ազգային ժողովի նախագահը՝ պատգամավորների առաջարկությամբ
40	Համաձայն ՀՀ Սահմանադրության՝ դատախազությունը գործում է. **• Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում օրենքի հիման վրա** o օրենքներով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում o օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում o ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում
41	Համաձայն «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի՝ պետական գրանցման պահին կուսակցությունը պարտավոր է ունենալ. o ոչ պակաս, քան 2000 անդամ **• ոչ պակաս, քան 200 անդամ** o ոչ պակաս, քան 20 անդամ o ոչ պակաս, քան 150 անդամ

42	Հայաստանի Հանրապետությունում հանրաքվեի միջոցով ընդունված օրենքները փոփոխվում են. o միայն օրենքներով o ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն մեկ երրորդով **· միայն հանրաքվեով** o ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով
43	Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման՝ օրենսգրքում օգտագործվող հասկացությունները կարո՞ղ են ինքնաբավ լինել. o այո o որոշ բացառություններով այո o օրենքներում օգտագործվող հասկացություններն՝ այո, օրենսգրքերում օգտագործվողները՝ ոչ **· ոչ, դրանց բովանդակությանը բնորոշ հատկանիշների շրջանակը ճշգրտվում է, ոչ միայն օրինաստեղծ գործունեության արդյունքում, այլ նաև դատական պրակտիկայում**
44	ՀՀ Սահմանադրությունում փոփոխություններ կատարվում են հանրաքվեի միջոցով. o Հանրապետության Նախագահի կամ Ազգային ժողովի համաձայնությամբ **· Հանրապետության Նախագահի կամ Ազգային ժողովի նախաձեռնությամբ** o Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի նախաձեռնությամբ o Հանրապետության կառավարության նախաձեռնությամբ
45	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր կարող է ընտրվել. **· վերջին հինգ տարում ՀՀ քաղաքացի հանդիսացող անձը** o վերջին տասը տարում ՀՀ քաղաքացի հանդիսացող անձը o վերջին երկու տարում ՀՀ քաղաքացի հանդիսացող անձը o վերջին երեք տարում ՀՀ քաղաքացի հանդիսացող անձը
46	ՀՀ արդարադատության խորհրդի նիստերը վարում է. o ՀՀ գլխավոր դատախազը o ՀՀ արդարադատության նախարարը **· ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահը** o ՀՀ Նախագահը

47	Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից չի կարող զրկվել. o ՀՀ Նախագահը o ՀՀ Ազգային ժողովի պատգամավորը **· ոչ ոք** o ՀՀ վարչապետը
48	Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման՝ անձի իրավունքը խախտած պաշտոնատար անձանց վարչական պատասխանատվության ենթարկելը. o հանդիսանում է անձի խախտված իրավունքների պարտադիր բաղադրատարր **· չի հանդիսանում անձի խախտված իրավունքների պարտադիր բաղադրատարր** o անձի դատարանի մատչելիության և դատական պաշտպանության իրավունքի բաղադրատարր է o անձի արդյունավետ իրավական պաշտպանության իրավունքի բաղադրատարր է
49	Դատավորը և սահմանադրական դատարանի անդամը չեն կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, զբաղեցնել իրենց պարտականությունների հետ չկապված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում, պաշտոն առևտրային կազմակերպություններում, կատարել այլ վճարովի աշխատանք. **· բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից** o բացի բարեգործական բնույթի աշխատանքից o բացի գիտահետազոտական աշխատանքից o բացի շահույթ չհետապնդող աշխատանքից
50	Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման՝ դատական պաշտպանության իրավունքը սահմանափակման. **· ենթակա չէ** o ենթակա է o ենթակա է Նախագահի հրամանագրով նախատեսված դեպքերում o ենթակա է կառավարության որոշումներում նախատեսված դեպքերում
51	ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի լիազորությունների դադարման կարգը սահմանվում է. **· Ազգային ժողովի կանոնակարգ օրենքով** o ՀՀ Սահմանադրությամբ o ՀՀ Ազգային ժողովի որոշմամբ o ՀՀ Ազգային ժողովի նախագահի որոշմամբ

52	ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման համաձայն՝ ՀՀ սահմանադրական դատարանն իրավաչափ է համարում ՀՀ քաղաքացիությունից դուրս գալու՝ անձի կամարտահայտության դեպքում քաղաքացիության կորուստ պայմանավորելը. • **ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածով նախատեսված սահմանադրական արժեքների պաշտպանության անհրաժեշտությամբ** o իրավասու մարմնի հայեցողությամբ o բարոյական արժեքների պաշտպանության անհրաժեշտությամբ o քաղաքացիության ոլորտում ՀՀ կառավարության մշակած քաղաքականության արդյունավետ իրականացման անհրաժեշտությամբ
53	Համաձայն «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի՝ յուրաքանչյուր քաղաքացի կարող է միաժամանակ լինել. • **միայն մեկ կուսակցության անդամ** o միայն երկու կուսակցության անդամ o անսահմանափակ թվով կուսակցությունների անդամ o միայն հինգ կուսակցության անդամ
54	ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահին ՀՀ Նախագահը նշանակում է. • **ՀՀ արդարադատության խորհրդի առաջարկությամբ** o ՀՀ արդարադատության նախարարի միջնորդությամբ o ՀՀ վարչապետի առաջարկությամբ o ՀՀ արդարադատության նախարարի ներկայացմամբ
55	ՀՀ Նախագահը ՀՀ սահմանադրական դատարանի իր նշանակած անդամի լիազորությունները կարող է դադարեցնել. • **ՀՀ Սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա** o ՀՀ արդարադատության խորհրդի առաջարկությամբ o ՀՀ դատավորների միության առաջարկությամբ o ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի առաջարկությամբ
56	Համաձայն «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի՝ իր կազմակերպական կառուցվածքը, գործունեության առարկան, նպատակները և ձևերը կազմակերպությունը որոշում է. o ՀՀ կառավարության հետ համատեղ o իրավասու մարմնի հետ համատեղ • **ինքնուրույն** o ՀՀ արդարադատության նախարարության հետ համատեղ

57	Հայաստանի Հանրապետությունում պետական իշխանությունն իրականացվում է. o օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման հիման վրա o օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատման հիման վրա o օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների հավասարակշռման հիման վրա **· օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա**
58	ՀՀ Նախագահը իր հրաժարականը ներկայացնում է. **· ՀՀ Ազգային ժողով** o ՀՀ Սահմանադրական դատարան o ՀՀ կառավարություն o ՀՀ վարչապետին
59	Բացի ՀՀ նախագահից՝ ու՞մ կողմից կարող են ևս նշանակվել ՀՀ արդարադատության խորհրդի երկուական իրավաբան-գիտնականներ. o ՀՀ վարչապետի կողմից **· ՀՀ Ազգային ժողովի կողմից** o ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի կողմից o ՀՀ կառավարության կողմից
60	Համաձայն ՀՀ Սահմանադրության՝ դատապարտյալներին ներում է շնորհում. o ՀՀ վարչապետը **· ՀՀ Նախագահը** o ՀՀ Ազգային ժողովը o ՀՀ գլխավոր դատախազը
61	Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման՝«պարտավորություն» հասկացության սահմանդրահիրավական բովանդակությունը ենթադրում է. **· իրավունքի սուբյեկտի կողմից իրավունքի ուժով կամ իր ազատ կամահայտնությամբ և սեփական գործողությունների շնորհիվ ստանձնված համապատասխան վարքագիծ** o իրավունքի սուբյեկտի կողմից իրավունքի ուժով ստանձնած համապատասխան վարքագիծ o սահմանդրությամբ և օրենքով՝ իրավունքի սուբյեկտի կամքից անկախ, վերջինիս համար սահմանված պարտադիր վարքագծի կանոն

	o սահմանդրությամբ և օրենքով՝ իրավունքի սուբյեկտի կամքով պայմանավորված, վերջինիս համար սահմանված պարտադիր վարքագծի կանոն
62	Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման՝ ժամանակի մեջ իրավական ակտերի գործողության կանոնակարգումը հիմնվում է այն տրամաբանության վրա. o որ իրավական ակտերի հետադարձ ուժով գործողության հնարավորությունը ընդհանուր կանոն է o որ իրավական ակտերի հետադարձ ուժով գործողության մերժումը բացառություն է ընդհանուր կանոնից o որ իրավական ակտերի հետադարձ ուժով գործողության հնարավորությունն ընդհանուր կանոնն է, իսկ իրավական ակտերի հետադարձ ուժով գործողության մերժումը՝ բացառություն ընդհանուր կանոնից **· որ իրավական ակտերի հետադարձ ուժով գործողության մերժումն ընդհանուր կանոն է, իսկ այդ ակտերի հետադարձ ուժով գործողության հնարավորությունը՝ բացառություն ընդհանուր կանոնից**
63	ՀՀ Նախագահի հարցմամբ ներման հարցերի վերաբերյալ օրենքով սահմանված կարգով կարծիք է հայտնում. **· ՀՀ արդարադատության խորհուրդը** o ՀՀ Ազգային ժողովը o ՀՀ կառավարությունը o ՀՀ Սահմանադրական դատարանը
64	Համաձայն ՀՀ ընտրական օրենսգրքի՝ Հայաստանի Հանրապետությունում ընտրելու իրավունք ունեն. o քվեարկության անցկացման օրը 18 տարին լրացած ցանկացած անձ o քվեարկության անցկացման օրը Հայաստանի Հանրապետության 16 տարին լրացած քաղաքացիները o քվեարկության անցկացման օրը Հայաստանի Հանրապետության 21 տարին լրացած քաղաքացիները **· քվեարկության անցկացման օրը Հայաստանի Հանրապետության 18 տարին լրացած քաղաքացիները**

65	ՀՀ արդարադատության խորհրդի կազմի մեջ են մտնում. o վեց դատավորներ **· ինը դատավորներ** o երեք դատավորներ o հինգ դատավորներ
66	Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման՝ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշմամբ բողոքարկման հարցը քննելիս՝ դատական վերահսկողության խնդիրն է. o այդ մարմնի օրենքով սահմանված բացառիկ լիզորությունների կրկնօրինակումը o անկախ գործելու իրավասությամբ օժտված մարմնի գործունեությանը շարունակական և գործառնական վերահսկողությամբ միջամտելը o հանրային ծառայության սակագին սահմանելը կամ փոփոխելը **· այդ մարմնի որոշումների օրինականությունը վերահսկելը**
67	ՀՀ Նախագահ կարող է ընտրվել. o 25 տարին լրացած ՀՀ քաղաքացին o 21 տարին լրացած ՀՀ քաղաքացին **· 35 տարին լրացած ՀՀ քաղաքացին** o 30 տարին լրացած ՀՀ քաղաքացին
68	Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման՝ կազմակերպության դատարան դիմելու իրավունքի սահմանափակումները կհամապատասխանեն ՀՀ Սահմանադրությանը, եթե. **· կազմակերպությունը վեճերի արտադատական լուծման համար պատասխանատու մարմնի որոշումները վիճարկելու իրավունքից կամովին հրաժարվելու վերաբերյալ օրենքով սահմանված կարգով համաձայնագիր է կնքել վերջինիս գրասենյակի հետ** o բոլոր դեպքերում համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը o կազմակերպության և վեճերի արտադատական լուծման համար պատասխանատու մարմնի գրասենյակի միջև գրավոր համաձայնության բացակայության դեպքում նույնպես համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը o կազմակերպության դատարան դիմելու իրավունքի սահմանափակումները բոլոր դեպքերում չեն համապատախանում ՀՀ Սահմանադրությանը

69	Օտարերկրյա պետություններում և միջազգային կազմակերպություններին առընթեր դիվանագիտական ներկայացուցիչներին նշանակում և հետ է կանչում. o ՀՀ արտաքին գործերի նախարարը o ՀՀ կառավարությունը **· ՀՀ Նախագահը** o ՀՀ վարչապետը
70	ՀՀ նորընտիր Ազգային ժողովի առաջին նստաշրջանը գումարվում է պատգամավորների ընդհանուր թվի առնվազն. o 1/3-րդի ընտրությունից հետո **· 2/3-րդի ընտրությունից հետո** o 3/4-րդի ընտրությունից հետո o 3/5-րդի ընտրությունից հետո
71	Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման՝ դատավորների համար բարձր կենսաթոշակի սահմանումը. o դատավորներին տրվող արտոնություն է **· ոչ թե դատավորներին տրվող արտոնություն է, այլ հանրային և առաջին հերթին՝ արդարադատության շահերի պաշտպանության միջոց, նրանց անկախության սոցիալական երաշխիք** o ոչ թե դատավորներին տրվող արտոնություն է, այլ հանրային և առաջին հերթին արդարադատության շահերի պաշտպանության միջոց, նրանց անփոփոխելիության երաշխիք o ոչ թե դատավորներին տրվող արտոնություն է, այլ հանրային և առաջին հերթին արդարադատության շահերի պաշտպանության միջոց, նրանց ապաքաղաքականացվածությունը ապահովող երաշխիք
72	Համաձայն ՀՀ Ընտրական օրենսգրքի, Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ՀՀ քաղաքացիություն չունեցող անձինք ընտրելու իրավունք ունեն եթե. o ընտրություն անցկացվող համայնքի բնակչության ռեգիստրում մինչև քվեարկության օրն առնվազն մեկ ամսվա հաշվառում ունեն o ընտրություն անցկացվող համայնքի բնակչության ռեգիստրում մինչև քվեարկության օրն առնվազն տաս տարվա հաշվառում ունեն **· ընտրություն անցկացվող համայնքի բնակչության ռեգիստրում մինչև քվեարկության օրն առնվազն վեց ամսվա հաշվառում ունեն** o ՀՀ տարածքում ՀՀ քաղաքացի չհանդիսացող անձինք ընտրելու իրավունք չունեն

73	ՀՀ Նախագահը կառավարության անդամներին նշանակում և ազատում է. **· ՀՀ վարչապետի առաջարկությամբ** o ՀՀ Ազգային ժողովի առաջարկությամբ o ՀՀ Ազգային ժողովի նախագահի առաջարկությամբ o ՀՀ Նախագահի աշխատակազմի ղեկավարի ներկայացմամբ
74	Համաձայն ՀՀ ընտրական օրենսգրքի՝ Հայաստանի Հանրապետությունում ընտրությունների կազմակերպման և անցկացման նպատակով կազմավորվում է ընտրական հանձնաժողովների հետևյալ եռաստիճան համակարգ. o կենտրոնական ընտրական հանձնաժողով, քաղաքային ընտրական հանձնաժողովներ և տեղամասային ընտրական հանձնաժողովներ o կենտրոնական ընտրական հանձնաժողով, քաղաքային ընտրական հանձնաժողովներ և մունիցիպալ ընտրական հանձնաժողովներ o կենտրոնական ընտրական հանձնաժողով, համայնքային ընտրական հանձնաժողովներ և տեղամասային ընտրական հանձնաժողովներ **· կենտրոնական ընտրական հանձնաժողով, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներ և տեղամասային ընտրական հանձնաժողովներ**
75	Համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի՝ Հայաստանի Հանրապետությունում նորմատիվ իրավական ակտեր ընդունելու իրավասություն ունեն. o ՀՀ սահմանադրական դատարանի նախագահը **· ՀՀ առաջին ատյանի դատարանները, վերաքննիչ դատարանները և վճռաբեկ դատարանը՝ օրենքին կամ սույն օրենքով նախատեսված դեպքերում ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերին հակասող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի իրավական ակտն անվավեր ճանաչելու մասով** o Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի նախագահն իր իրավասությանը վերաբերող ցանկացած հարցով o տեղամասային ընտրական հանձնաժողովները
76	Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար. **· լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով** o ստանձնել են պարտավորություն o լիազորված են օրենսդրությամբ o կան իրավական հիմքեր

77	Համաձայն «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի՝ քաղաքացիների խումբը ճանաչվում է որպես կրոնական կազմակերպություն, եթե. **· ընդգրկում է առնվազն 200 հավատացյալ անդամ** o ընդգրկում է առնվազն 2 հավատացյալ անդամ o ընդգրկում է առնվազն 2000 հավատացյալ անդամ o ընդգրկում է առնվազն 20 հավատացյալ անդամ
78	ՀՀ Նախագահին պաշտոնանկ անելու մասին որոշումը կայացնում է. o ՀՀ սահմանադրական դատարանը **· ՀՀ Ազգային ժողովը** o ՀՀ կառավարությունը o ՀՀ գլխավոր դատախազությունը
79	ՀՀ կառավարության որոշումների գործողությունը կարող է կասեցնել. o ՀՀ Ազգային ժողովը **· ՀՀ Նախագահը** o ՀՀ սահմանադրական դատարանը o ՀՀ Ազգային ժողովի նախագահը
80	ՀՀ Ազգային ժողովի պատգամավորին չի կարելի կալանավորել. **· առանց ՀՀ Ազգային ժողովի համաձայնության** o առանց ՀՀ Ազգային ժողովի նախագահի համաձայնության o առանց ՀՀ Նախագահի համաձայնության o առանց ՀՀ սահմանադրական դատարանի եզրակացության
81	Հանրաքվեի դրված նախագիծը համարվում է ընդունված, եթե կողմ է քվեարկել. o քվեարկության մասնակիցների կեսից ավելին, բայց ոչ պակաս, քան ընտրական ցուցակներում ընդգրկված քաղաքացիների մեկ երրորդը o քվեարկության մասնակիցների երկու երրորդը, բայց ոչ պակաս, քան ընտրական ցուցակներում ընդգրկված քաղաքացիների մեկ քառորդը **· քվեարկության մասնակիցների կեսից ավելին, բայց ոչ պակաս, քան ընտրական ցուցակներում ընդգրկված քաղաքացիների մեկ քառորդը** o քվեարկության մասնակիցների երկու երրորդը, բայց ոչ պակաս, քան ընտրական ցուցակներում ընդգրկված քաղաքացիների կեսը

82	ՀՀ Սահմանադրական դատարանի՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից նշանակվող անդամները նշանակվում են. o ՀՀ Նախագահի առաջարկությամբ **• ՀՀ Ազգային ժողովի նախագահի առաջարկությամբ** o ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի առաջարկությամբ o ՀՀ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների առաջարկությամբ
83	Համաձայն «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 18 տարեկան երեխաները. o կարող են անդամագրվել կրոնական կազմակերպությանը **• չեն կարող անդամագրվել կրոնական կազմակերպությանը՝ անկախ կրոնական ծեսերին իրենց մասնակցելու պարագայից և այլ հանգամանքներից** o կարող են անդամագրվել կրոնական կազմակերպությանը ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ սահմանված կարգով o կարող են անդամագրվել կրոնական կազմակերպությանը, եթե պետք է մասնակցեն կրոնական ծեսերին
84	Համաձայն ՀՀ Սահմանադրության՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր իրավունքները և ազատությունները պաշտպանել. o պետական մարմիններին դիմելու միջոցով o դատարան դիմելու միջոցով o դատարան և դատախազություն դիմելու միջոցով **• օրենքով չարգելված բոլոր միջոցներով**
85	Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման՝ օրենսդիրը ֆիզիկական և իրավաբանական անձանց պարտականությունների և պատասխանատվության տեսակները, չափերը ու հարկադրանքի միջոցները սահմանելիս. o նշված հարցերում օրենսդրի հայեցողությունը չունի իր սահմանադրական շրջանակները o որպես կանոն կաշկանդված չէ սահմանադրական սկզբունքներով o սահմանադրական սկզբունքներով կաշկանդված է միայն բացառիկ դեպքերում **• նշված հարցերում օրենսդրի հայեցողությունն ունի իր սահմանադրական շրջանակները, և օրենսդիրն իր նշված լիազորություններն իրականացնելիս կաշկանդված է առանձին սահմանադրական սկզբունքներով**

86	Ու՞մ կողմից են ընտրվում ՀՀ արդարադատության խորհրդի կազմի մեջ մտնող ինը դատավորները. o երկու դատավորները ընտրվում են Ազգային ժողովի կողմից, իսկ յոթը ընտրվում են ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի կողմից **· ընտրվում են ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի կողմից** o նշանակվում են ՀՀ արդարադատության նախարարի կողմից o նշանակվում են ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի կողմից
87	ՀՀ-ում դատավորը չի կարող կալանավորվել. o առանց ՀՀ գլխավոր դատախազի համաձայնության **· առանց ՀՀ արդարադատության խորհրդի համաձայնության** o առանց ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի համաձայնության o առանց ՀՀ արդարադատության նախարարի համաձայնության
88	ՀՀ կառավարության լիազորությունները սահմանվում են. o ՀՀ Նախագահի հրամանագրերով o ՀՀ վարչապետի որոշումներով. o ՀՀ Ազգային ժողովի որոշումներով **· ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով**
89	Համաձայն «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի՝ հավաքը հանրային է, եթե դրան կարող է մասնակցել. o միայն ՀՀ քաղաքացիները **· յուրաքանչյուր ոք** o յուրաքանչյուր ոք՝ բացառությամբ Ադրբեջանի Հանրապետության քաղաքացիների o միայն ՀՀ քաղաքացիները և ԱՊՀ երկրների քաղաքացիները
90	Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման՝ խտրականության արգելքի սկզբունքի խախտում է հանդիսանում՝ o միևնույն կատեգորիայի անձանց շրջանակներում ցանկացած տարբերակված մոտեցումը o օբյեկտիվ հիմքով և իրավաչափ նպատակով պայմանավորված ցանկացած տարբերակված մոտեցումը **· այն տարբերակված մոտեցումը, որը զուրկ է օբյեկտիվ հիմքից և իրավաչափ նպատակից** o տարբեր կատեգորիայի անձանց շրջանակներում ցանկացած տարբերակված մոտեցում

91	ՀՀ Նախագահն ընտրվում է. **· ՀՀ քաղաքացիների կողմից** o ՀՀ քաղաքացիների և ՀՀ-ում բնակվող օտարերկրյա քաղաքացիների կողմից o ՀՀ քաղաքացիների և ՀՀ-ում բնակվող քաղաքացիություն չունեցող անձանց կողմից o ՀՀ քաղաքացիների և փախստականի կարգավիճակ ունեցող անձանց կողմից
92	Համաձայն ՀՀ Սահմանադրության՝ անվճար իրավաբանական օգնությունը ցույց է տրվում. **· օրենքով նախատեսված դեպքերում** o Հանրապետության Նախագահի հրամանագրով նախատեսված դեպքերում o ՀՀ կառավարության որոշմամբ նախատեսված դեպքերում o փաստաբանների պալատի կանոնադրությամբ նախատեսված դեպքերում
93	Համաձայն «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի՝ հանրային հավաք անցկացնելու համար կազմակերպիչը լիազոր մարմնին գրավոր իրազեկում չի ներկայացնում. **· մինչև 100 մասնակից ունեցող, հավաքների դեպքում** o մինչև 50 մասնակից ունեցող հավաքների դեպքում o մինչև 1000 մասնակից ունեցող հավաքների դեպքում o անկախ մասնակիզների թվաքանակից կազմակերպիչը պարտավոր է գրավոր իրազեկում ներկայացնել լիազոր մարմնին
94	Ու՞մ առաջարկով են օրենքները հանրաքվեի դրվում. o ՀՀ Նախագահի կամ Ազգային ժողովի o միայն ՀՀ Ազգային ժողովի նախագահի **· ՀՀ Ազգային ժողովի կամ կառավարության** o ՀՀ Նախագահի և կառավարության
95	Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման՝ խորհրդարանում քաղաքական ուժերի հարաբերակցության ցանկացած փոփոխություն, որն ընթացիկ շահեր է հետապնդում և փոխում է ժողովրդի ազատ կամարտահայտությամբ ձևավորված քաղաքական հավասարակշռությունն օրենսդիր մարմնում՝ **· անհամատեղելի է ժողովրդաիշխանության հիմնարար սկզբունքների հետ և իրավաչափ համարվել չի կարող** o կարող է համարվել իրավաչափ o համատեղելի է ժողովրդաիշխանության հիմնարար սկզբունքների հետ o թեև անհամատեղելի է ժողովրդաիշխանության հիմնարար սկզբունքների հետ, բայց կարող է իրավաչափ համարվել

96	Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են ՀՀ օրենքներով, ապա. o կիրառվում են օրենքներով նախատեսված նորմերը o այդ նորմերը չեն կիրառվում o այդ նորմերը ուժը կորցրած են ճանաչվում **· կիրառվում են այդ նորմերը**
97	ՀՀ-ում համայնքի սեփականությունը տնօրինում է. o համայնքի բնակչությունը o համայնքի ղեկավարը o տարածքային պետական կառավարման մարմինը **· համայնքի ավագանին**
98	Սահմանադրական ո՞ր սկզբունքից է անմիջականորեն բխում ՀՀ-ում պարտադիր սահմանադրական արդարադատություն ունենալու անհրաժեշտությունը. o սոցիալական պետության սկզբունքից o իշխանությունների տարանջատման սկզբունքից o պետական մարմինների փոխադարձ հարգանքի սկզբունքից **· սահմանադրության գերակայության սկզբունքից**
99	Ո՞ր իրավական ակտերը կարող են լինել անհատական դիմումի պիտանի առարկա. o ցանկացած իրավական ակտ o օրենքները՝ միայն ձևական իմաստով **· օրենքները՝ նյութական իմաստով** o միայն դատական ակտերը
100	Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետի՝ օրենքի բացը. **· չի կարող լինել անհատական դիմումի պիտանի առարկա և անվավեր ճանաչվել ՍԴ-ի կողմից, եթե խոսքն օրենքի իսկական բացի մասին է** o կարող է միշտ քննության առնվել ՍԴ-ի կողմից և անվավեր ճանաչվել՝ անկախ տեսակից o չի կարող լինել անհատական դիմումի պիտանի առարկա և անվավեր ճանաչվել ՍԴ-ի կողմից, եթե խոսքն օրենքի ոչ իսկական բացի մասին է o ոչ մի դեպքում չի կարող քննության առնվել ՍԴ-ի կողմից՝ անկախ տեսակից

№	2014 թվականի գարնանային հոսք «ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ (ՆԵՐԱՌՅԱԼ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ) ՀԱՐՑԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ
1	ՄԻԵԴ նախադեպային իրավունքը կարո՞ղ է ենթարկվել փոփոխությունների. o այո, միայն եթե փոփոխվում է ՄԻԵԿ-ի տեքստը (ներառյալ՝ արձանագրությունները), քանի որ ՄԻԵԴ նախադեպերը Կոնվենցիայի մեկնաբանություններն են և նոր իրավական նորմեր չեն կարող սահմանել **· այո, առանց ՄԻԵԿ-ի տեքստի (ներառյալ՝ արձանագրությունների) փոփոխման, քանի որ ՄԻԵԿ-ը կենդանի փաստաթուղթ է և այն պետք է մեկնաբանել «արդի օրվա պայմանների» լույսի ներքո՝ հասարակության զարգացմանը զուգընթաց** o այո, առանց ՄԻԵԿ-ի տեքստի (ներառյալ՝ արձանագրությունների) փոփոխման, եթե տվյալ հարցի շուրջ թե՛ նախկին, թե՛ նոր նախադեպերը վերաբերում են միայն նույն անդամ պետությանը o այո, առանց ՄԻԵԿ-ի տեքստի (ներառյալ՝ արձանագրությունների) փոփոխման, եթե տվյալ հարցի վերաբերյալ ՄԻԵԴ նախադեպ գոյություն ունեցել է, սակայն ՄԻԵԴ-ը, բացի նոր նախադեպ հանդիսացող դատական ակտից առանձին որոշում է կայացնում հին նախադեպը վերացնելու մասին
2	ՀՀ դատական պրակտիկայում ՄԻԵԴ նախադեպային իրավունքում արդարացի դատական քննության իրավունքը կիրառելի է քրեական դատավարությունում, եթե անձը մեղադրվում է այնպիսի արարք կատարելու մեջ, որը. **· անձի համար առաջացրել է կամ կարող էր առաջացնել այնպիսի հետևանքներ, որոնք հավասարազոր են *քրեական պատժին*՝ անկախ նրանից, թե ինչպես է որակվում տվյալ արարքն ազգային օրենսդրության համաձայն** o նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքով o նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքով, ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի այն բոլոր հոդվածներով, որոնք նախատեսում են անձին վարչական պատասխանատվության ենթարկելը՝ դատական կարգով o նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքով տվյալ արարքը քրեականացնող միջազգային այն պայմանագրով, որը վավերացվել է ՀՀ կողմից

3	ՄԻԵԴ նախադեպային իրավունքի համաձայն՝ ի՞նչն է հանդիսանում «օրենք». o «օրենք» հասկացությունը չունի ինքնավար բնույթ, դրա բովանդակությունը որոշվում է յուրաքանչյուր անդամ պետության օրենսդրության համաձայն, անդամ պետության ժողովրդավարական ճանապարհով ընտրված ներկայացուցչական մարմնի կողմից ժողովրդավարական ճանապարհով ընդունված իրավական ակտը հանդիսանում է օրենք o միայն այն իրավական ակտը, որը հրապարակային է, հասանելի՝ անկախ նրա անվանումից o միայն այն իրավական ակտը, որը քաղաքացուն հնարավորություն է տալիս տվյալ հանգամանքների նկատմամբ կիրառելի ողջամիտ ճշգրտությամբ կանխատեսել իր գործողությունների հետևանքները **· այն իրավական ակտը, որը հրապարակային է՝ հասանելի, կանխատեսելի և բավարար հստակ քաղաքացուն հնարավորություն ընձեռելու իր գործողությունների հետևանքները տվյալ հանգամանքների նկատմամբ կիրառելի ողջամիտ ճշգրտությամբ կանխատեսելու**
4	Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մարդկանց առևտուրը (թրաֆիկինգը) համարել է Կոնվենցիայի խախտում, նշելով, որ չնայած մարդկանց առևտուրը ուղղակիորեն նշված չէ Կոնվենցիայի տեքստում, «մարդկանց առևտուր» հասկացությունը սերտորեն կապված է. **· ՄԻԵԿ-ի 4-րդ հոդվածով ամրագրված «ստրկություն» հասկացության հետ** o ՄԻԵԿ-ի 3-րդ հոդվածով ամրագրված խոշտանգման հետ o ՄԻԵԿ-ի 3-րդ հոդվածով ամրագրված անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի հետ o ՄԻԵԿ-ի 4-րդ հոդվածով ամրագրված «հարկադիր աշխատանք» հասկացության հետ
5	ՄԻԵԴ նախադեպային իրավունքի համաձայն՝ գործում պաշտպանի անվճար հիմունքներով մասնակցությունը պարտադիր է. **· եթե դա են պահանջում արդարադատության շահերը** o եթե կասկածյալը կամ մեղադրյալը ցանկություն է հայտնում այդ մասին o եթե կասկածյալը կամ մեղադրյալը վատ է տիրապետում դատավարության լեզվին o եթե գործին մասնակցում է դատախազը
6	Եվրոպական դատարանը կարո՞ղ է իրականացնել փաստահավաք լսումներ կամ առաքելություն. o ոչ **· բացառիկ դեպքերում, երբ կողմերի միջև առկա հիմնական վեճի կապակցությամբ վճիռ կայացնելու համար կողմերի՝ Եվրոպական դատարանին տրամադրած փաստաթղթերը բավարար չեն** o այո, Եվրոպական դատարանի վարույթում գտնվող բոլոր գործերով

	o այո, Եվրոպական դատարանի վարույթում գտնվող բոլոր գործերով՝ կողմերի խնդրանքով
7	ՄԻԵԿ-ին կից 14-րդ Արձանագրության ընդունմամբ ավելացել են գանգատների ընդունելիության պայմաններ: Դատարանը կարող է անընդունելի ճանաչել գանգատը, եթե դիմումատուն էական վնաս չի կրել, բացառությամբ այն դեպքերի, եթե կոնվենցիայով և դրան կից Արձանագրություններով սահմանված մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը պահանջում է գանգատի ըստ էության քննություն. o «էական վնաս» և «կոնվենցիայով և դրան կից Արձանագրություններով սահմանված մարդու իրավունքների նկատմամբ հարգանք» հասկացությունները սահմանված են ՄԻԵԿ-ին կից 14-րդ Արձանագրության տեքստում o Եվրոպական դատարանը մինչ օրս չի կայացրել վճիռ, որում կանդրադառնար «էական վնաս» և «կոնվենցիայով և դրան կից Արձանագրություններով սահմանված մարդու իրավունքների նկատմամբ հարգանք» հասկացություններին **· Ionescu v Romania (No: 36659/04) գործում Եվրոպական դատարանն առաջին անգամ գործն անընդունելի ճանաչեց «էական վնաս»-ի բացակայության հիմքով** o Ionescu v Romania (No: 36659/04) գործում Եվրոպական դատարանն առաջին անգամ գործն անընդունելի ճանաչեց «կոնվենցիայով և դրան կից Արձանագրություններով սահմանված մարդու իրավունքների նկատմամբ հարգանք»-ի բացակայության հիմքով
8	ՄԻԵԴ նախադեպային իրավունքի համաձայն՝ լրագրողի կողմից իր տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու իրավունքի սահմանափակումը. o չի կարող սահմանափակվել ոչ մի դեպքում **· կարող է սահմանափակվել, եթե առկա է հասարակական շահի ավելի կարևոր պահանջ, ինչպես օրինակ, եթե տեղեկատվությունն առնչվում է քրեորեն հետապնդելի արարք կատարելու մտադրությանը կամ, եթե նման բացահայտումը հասարակությանը սպառնացող կամ հասցվող այլ լուրջ վնասի կանխման կամ խափանման միակ հնարավորությունն է** o կարող է սահմանափակվել ցանկացած դեպքում, եթե դատարանը գտնի, որ նշված տեղեկատվությունն անհրաժեշտ է գործով ամբողջ ճշմարտությունը բացահայտելու համար

	o պետք է սահմանափակվի ցանկացած դեպքում, երբ առկա է սկզբնական աղբյուրից նույն տեղեկատվությունը ստանալու հնարավորություն, քանի որ դատարանը պարտավոր է ապացույցները հետազոտել անմիջականորեն սկզբնաղբյուրից
9	ՄԻԵԿ-ի 3-րդ հոդվածով երաշխավորված իրավունքը. o կարող է սահմանափակվել, եթե առկա է հասարակական շահի ավելի կարևոր պահանջ o կարող է սահմանափակվել, եթե առկա է հասարակական շահի ավելի կարևոր պահանջ, եթե Կոնվենցիայի 3-րդ հոդվածով արգելված գործողություններն իրականացվում են ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ o կարող է սահմանափակվել, եթե առկա է հասարակական շահի ավելի կարևոր պահանջ, եթե Կոնվենցիայի 3-րդ հոդվածով արգելված գործողություններն իրականացվում են ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ և նախատեսված են օրենքով **· չի կարող սահմանափակվել ոչ մի դեպքում**
10	Եվրոպական կոնվենցիային կից Թիվ 12 Արձանագրությունը ստորագրությունների համար բաց է 2000 թվականից և սահմանում է խտրականությունն արգելող առավել լայն նորմեր, քան Կոնվենցիայի 14-րդ հոդվածը: Համաձայն Թիվ 12 Արձանագրության 1-ին հոդվածի. **· Օրենքով սահմանված ցանկացած իրավունքի իրականացումը պետք է ապահովվի առանց խտրականության** o Եվրոպական կոնվենցիայով սահմանված ցանկացած իրավունքի իրականացումը պետք է ապահովվի առանց խտրականության o Անդամ պետության սահմանադրությամբ սահմանված ցանկացած իրավունքի իրականացումը պետք է ապահովվի առանց խտրականության o Արձանագրության 1-ին հոդվածը գործում է Կոնվենցիայի 14-րդ հոդվածի հետ մեկտեղ

11	ՄԻԵԿ-ի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի «գույքի» հասկացության տարրերից են՝ սպառիչ թվարկված. o դատարանի որոշումը՝ անձին հատուցում տրամադրելու մասին, որից անձը իրավունք ունի սահմանափակորեն օգտվելու o միայն գույքային, ոչ գույքային շահերը o միայն թոշակ ստանալու իրավունքը **• դատարանի որոշումը՝ անձին հատուցում տրամադրելու մասին, որից անձն իրավունք ունի անարգել օգտվելու, գույքային, ոչ գույքային շահերը, թոշակ ստանալու իրավունքը**
12	ՄԻԵԴ նախադեպային իրավունքի համաձայն՝ արդյո՞ք Կոնվենցիայով երաշխավորված իրավունքի խախտման փաստի ճանաչումը ՄԻԵԴ-ի վճռում կարող է դիտվել իբր դիմումատուին տրված արդարացի փոխհատուցում. o ոչ, քանի որ Կոնվենցիայով երաշխավորված իրավունքները հանդիսանում են արդյունավետ, իրական և ոչ թե վերացական, թվացյալ իրավունքներ **• այո** o ոչ, քանի որ հակառակ դեպքում ՄԻԵԴ վճիռը չի կարող անմիջական հետևանքներ ունենալ դիմումատուի համար o ոչ, քանի որ չի ենթադրում ՄԻԵԴ վճռի կատարում, հետևաբար ՝ դրա կատարման նկատմամբ վերահսկողության իրականացում Եվրոպայի Խորհրդի Նախարարների Կոմիտեի կողմից
13	ՄԻԵԿ-ի իրավազորությունը, ըստ Կոնվենցիայի 1-ին հոդվածի, կարող է տարածվել. o միայն տվյալ երկրի աշխարհագրական սահմանների վրա՝ անկախ որևէ հանգամանքից **• նաև տվյալ երկրի աշխարհագրական սահմաններից դուրս ընկած տարածքի վրա, եթե տարածքն արդյունավետորեն վերահսկվում է այդ երկրի ուժերի կողմից** o նաև տվյալ երկրի աշխարհագրական սահմաններից դուրս տարածքում, եթե այդ տարածքը չի պատկանում Կոնվենցիայի անդամ պետությանը o տվյալ երկրի աշխարհագրական սահմաններից դուրս, եթե գանգատը բերվում է այդ տարածքում ապրող բնակչի կողմից
14	ՄԻԵԿ-ին կից 14-րդ Արձանագրության ընդունումով. **• Եվրոպական Միությանը թույլատրվում է վավերացնել ՄԻԵԿ-ը** o արգելվում է Եվրոպական Միությանը վավերացնել ՄԻԵԿ-ը o թույլատրվում է Միացյալ Ազգերի Կազմակերպությանը (ՄԱԿ) վավերացնել ՄԻԵԿ-ը o չի թույլատրվում, որ Եվրոպական Միությունը կամ ՄԱԿ-ը վավերացնի ՄԻԵԿ-ը

15	ՄԻԵԿ-ի 5(3) հոդվածի «ողջամիտ ժամկետ» հասկացության համատեքստում հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձի կալանքի տակ գտնվելու ժամկետը ըստ ՄԻԵԴ նախադեպային իրավունքի հաշվում է այն ժամկետը, որը. o սկսվում է անձի ձերբակալումից մինչ նախաքննության ավարտը o սկսվում է կալանքից մինչ նախաքննության ավարտը **· սկսվում է նախնական ձերբակալումից մինչև առաջին ատյանի դատարանում մեղադրական դատավճռի կայացումը կամ արդարացումը** o սկսվում է կալանքից մինչ դատապարտումը կամ արդարացումը
16	Կալանքը որպես խափանման միջոց գրավով փոխարինելու մասին միջնորդությունը մերժելու համար, ըստ ՄԻԵԴ նախադեպային իրավունքի, ազգային դատարանի դատավորի համար ինքնին բավարար հիմք է. o պատժի ծանրությունը o մեղադրյալի նախկինում դատված լինելու հանգամանքը o մեղսագրվող արարքով պատճառված վնասի չափը **· հետագա իրավախախտումները կանխելու հանրային շահը**
17	ՄԻԵԿ-ի 5(3) հոդվածի խախտում համարվել է, երբ երկրի ներպետական օրենսդրությունն արգելել է գրավի կիրառումը. **· ծանրացուցիչ հանգամանքներում կատարված սպանության համար** o մեղադրյալի՝ նախաքննությանը չներկայանալու համար ակնհայտ վտանգի առկայության պայմաններում o վտանգի առկայության պայմաններում, երբ անազատության մեջ գտնվելով, մեղադրյալը կարող է խոչընդոտել արդարադատության իրականացմանը o հետագա իրավախախտումները կանխելու նպատակով
18	ՄԻԵԿ-ի 13-րդ հոդվածով սահմանված «իրավական պաշտպանության արդյունավետ միջոց» հասկացությունը. o նշանակում է, որ «իրավական պաշտպանության արդյունավետ միջոցը» պետք է պարտադիր տրամադրվի ներպետական դատարանների կողմից o երաշխավորում է, որ ներպետական օրենսդրությունը դատարաններում կարելի է վիճարկել **· մեկնաբանվել է Եվրոպական դատարանի կողմից որպես ներպետական մակարդակում տեսականում և գործնականում արդյունավետ միջոց** o չի սահմանվել Եվրոպական դատարանի կողմից
19	Եվրոպական դատարանը ՄԻԵԿ-ի 9-րդ հոդվածը մեկնաբանել է այնպես, որ o այն չի երաշխավորվում կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը **· այն երաշխավորում է կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը** o կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից

	հրաժարվելու իրավունքը չի կարող դիտարկվել ՄԻԵԿ-ի 9-րդ հոդվածի ներքո o կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը պետք է դիտարկել միայն ՄԻԵԿ-ի 4–րդ հոդվածի ներքո
20	«Համաչափություն» հասկացությունը Կոնվենցիայի տեքստում սահմանված չէ, սակայն ՄԻԵԴ-ը լայնորեն օգտագործում է այն հիմնականում հետևյալ հոդվածների շրջանակներում. o ՄԻԵԿ-ի 36-րդ հոդվածում o ՄԻԵԿ-ի 29-րդ հոդվածի երկրորդ մասում **· ՄԻԵԿ-ի 8-ից 10-րդ հոդվածներում** o թիվ 14 արձանագրության 26-րդ հոդվածում
21	Ըստ ՄԻԵԿ-ի 5(2) կետի՝ «յուրաքանչյուր ձերբակալված իրեն հասկանալի լեզվով… տեղեկացվում է իր ձերբակալման պատճառների, ներկայացվող ցանկացած մեղադրանքի մասին»: Ինչպե՞ս է մեկնաբանվում այս դրույթը՝ ըստ ՄԻԵԴ նախադեպերի. o տեղեկացվում է պաշտոնական փաստաթղթով o ոչ պաշտոնական փաստաթղթով, սակայն գրավոր **· պետք է տեղեկացվի հասկանալի, հստակ, ոչ մասնագիտական լեզվով արտահայտված, իր ձերբակալման իրավական և փաստացի պատճառների մասին բանավոր կամ գրավոր** o բանավոր, սակայն կարիք չկա շարադրել ձերբակալման պատճառները, բավական է միայն նշել, որ հրամայված է անձին բերման ենթարկել
22	Անձին ՄԻԵԿ-ի անդամ պետության կողմից այլ պետություն հանձնելը կամ արտաքսելը. **· կարող է խախտել ՄԻԵԿ-ը, եթե անձը այդ երկրում կարող է պետական մարմինների կամ մասնավոր անձանց կողմից ենթարկվել մահապատժի կամ ՄԻԵԿ-ի 3-րդ հոդվածով սահմանված իրավունքների խախտումների** o չի կարող խախտել ՄԻԵԿ-ը o կարող է խախտել ՄԻԵԿ-ը, եթե անձը այդ երկրում կարող է միայն պետական մարմինների կողմից ենթարկվել մահապատժի կամ ՄԻԵԿ-ի 3-րդ հոդվածով սահմանված իրավունքների խախտումների o կարող է խախտել ՄԻԵԿ-ը, եթե ընդունող երկիրն ազատ արձակի տվյալ անձին

23	Ըստ ՄԻԵԿ-ին կից 7-րդ արձանագրության 2-րդ հոդվածի՝ քրեական գործերով գանգատարկման իրավունքից. o բացառություններ արվել չեն կարող o կարող են բացառություններ արվել օրենքով սահմանված ծանր հանցագործությունների առնչությամբ o կարող են բացառություններ արվել օրենքով սահմանված միջին ծանրության հանցագործությունների առնչությամբ կամ, երբ տվյալ անձը դատապարտվել է ամենաբարձր ատյանի կողմից, որը հանդես է եկել որպես առաջին ատյանի դատարան **· կարող են բացառություններ արվել օրենքով սահմանված աննշան հանցագործությունների առնչությամբ կամ, երբ տվյալ անձը դատվել է ամենաբարձր ատյանի կողմից, որը հանդես է եկել որպես առաջին ատյանի դատարան, կամ դատապարտված է եղել այդ անձի արդարացման դեմ վճռաբեկ գանգատի քննարկումից հետո**
24	Ըստ ՄԻԵԿ-ին կից 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի՝ կրկին չդատվելու, չպատժվելու իրավունքը սահմանող դրույթները. o խոչընդոտում են գործի վերանայմանը բոլոր դեպքերում o խոչընդոտում են գործի վերանայմանը՝ տվյալ պետության քրեական դատավարության օրենքին համապատասխան o չեն խոչընդոտում գործի վերանայմանը՝ տվյալ պետության քրեական դատավարության օրենքին համապատասխան, եթե նախորդ քննության ժամանակ թույլ են տրվել ոչ էական խախտումներ **· չեն խոչընդոտում գործի վերանայմանը տվյալ պետության քրեական դատավարության օրենքին համապատասխան, եթե ի հայտ են եկել նոր կամ նոր բացահայտված փաստեր կամ նախորդ քննության ժամանակ թույլ են տրվել էական խախտումներ, որոնք կարող էին ազդել գործի արդյունքի վրա**
25	ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածով սահմանված՝ արդար դատաքննության իրավունքի պահանջները ո՞ր պահից են սկսում գործել. o այն պահից, երբ անձը հարցաքննվել է որպես կասկածյալ **· այն պահից, երբ որոշվում են անձի քաղաքացիական իրավունքները, պարտականությունները կամ, երբ նրան ներկայացվել է ցանկացած քրեական մեղադրանք** o դա կախված է տվյալ երկրի քաղաքացիական կամ քրեական դատավարական օրենսդրությունից o երբ անձը սպառում է ներքին իրավական պաշտպանության բոլոր միջոցները

26	Ստորև նշված ո՞ր իրավունքը ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով չի համարվում «քաղաքացիական իրավունք և պարտականություն» o ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու թույլտվություն ստանալու իրավունքը • զինվորական ծառայության իրավունքը o դատական ծախսերի հատուցում ստանալու իրավունքը o այլ անձանց կողմից անձի գործարար համբավը հարգելու իրավունքը
27	ՄԻԵԿ-ին կից 14-րդ Արձանագրության ընդունմամբ. o Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի գործառույթներից ոչ մեկը չի փոփոխվել **• Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն օժտվել է Եվրոպական դատարանին իր կայացրած վճիռները մեկնաբանելու մասին դիմում ներկայացնելու իրավունքով և կարող է Եվրոպական դատարան հարցում հղել անդամ պետության կողմից դատարանի վճիռը, որի կողմ է հանդիսանում տվյալ անդամ պետությունը, չկատարելու դեպքում** o Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն օժտվել է Եվրոպական դատարանին իր կայացրած վճիռները մեկնաբանելու մասին հարցում անելու իրավունքով, սակայն չի կարող Եվրոպական դատարան հարցում հղել անդամ պետության կողմից դատարանի վճիռը, որի կողմ է հանդիսանում տվյալ անդամ պետությունը, չկատարելու դեպքում o Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի գործառույթներից հանվել է Եվրոպական դատարանի վճիռների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու գործառույթը
28	Դ.Հ.-ն ու այլոք ընդդեմ Չեխիայի հանրապետության գործով (դիմում թիվ 57325/00) (D.H. and others v. Czech Republic) Եվրոպական դատարանի Մեծ պալատը զարգացրեց Կոնվենցիայի 14-րդ հոդվածի կիրառությունը և ճանաչեց անուղղակի խտրականության սկզբունքը, որը, ի թիվս այլոց, նշանակում է, որ փոխվում է ապացուցման պարտականության բեռը կրողը և այս դեպքում. o դիմողի վրա է ընկնում խտրականության ապացուցման պարտականության բեռը **• պատասխանող մասնակից պետության վրա է ընկնում տարբերվող վերաբերմունքի հիմնավորման ապացուցման պարտականությունը** o երկու կողմերն էլ կրում են ապացուցման պարտականության բեռը o ոչ մի կողմ չի կրում ապացուցման պարտականության բեռ և Դատարանն ինքն է իրականացնում փաստահավաք առաքելություն

29	Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով և դրան կից արձանագրություններով սահմանված են. o Բացառապես քաղաքական իրավունքներ **· Հիմնականում քաղաքական և քաղաքացիական իրավունքներ և ազատություններ** o Բացառապես սոցիալական և մշակութային իրավունքներ o Բացառապես քաղաքացիական իրավունքներ և ազատություններ
30	Արդյո՞ք ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի 3-րդ մասի (ե) կետի խախտում կհամարվի, եթե դատավարության ավարտից հետո պետությունը դատապարտյալից բռնագանձի դատավարության ընթացքում պետական միջոցների հաշվին թարգմանչին վճարված գումարը. **· թարգմանչին վճարված գումարների բռնագանձումը կհամարվի ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի 3-րդ մասի (ե) կետով երաշխավորված անվճար թարգմանություն ստանալու իրավունքի խախտում** o թարգմանչին վճարված գումարների բռնագանձումը չի խախտում ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի 3-րդ մասի (ե) կետով երաշխավորված անվճար թարգմանիչ ունենալու իրավունքը o թարգմանչին վճարված գումարների բռնագանձումը խախտում է ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի 3-րդ մասի (ե) կետով երաշխավորված թարգմանիչ ստանալու իրավունքը, անկախ նրանից, թե անձը գտնվում է գույքային անբարենպաստ, թե բարենպաստ պայմաններում o թարգմանչին վճարված գումարների բռնագանձումը չի խախտում ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի 3-րդ մասի (ե) կետով երաշխավորված թարգմանիչ ստանալու իրավունքը, եթե մեղադրյալը ինքն է պահանջել թարգմանիչ
31	Կոնվենցիայի 2-րդ հոդվածով սահմանված կյանքի իրավունքը. o բացարձակ իրավունք է **· բարձր պայմանավորվող կողմը չի կարող շեղվել կյանքի իրավունքի կատարումից պատերազմի կամ ազգի կյանքին սպառնացող այլ արտակարգ դրության ժամանակ** o բացարձակ իրավունք է, և Բարձր պայմանավորվող կողմը կարող է շեղվել այս իրավունքի կատարումից պատերազմի կամ ազգի կյանքին սպառնացող այլ արտակարգ դրության ժամանակ o նախատեսված չէ ՄԻԵԿ-ով

32	Արդյո՞ք անձը կարող է դիմել ՄԻԵԴ՝ չսպառելով ներպետական իրավական պաշտպանության միջոցները. o որևէ դեպքում չի կարող դիմել ՄԻԵԴ, եթե չի սպառել ներպետական պաշտպանության իրավական միջոցները o չսպառելով ներպետական պաշտպանության իրավական միջոցները՝ կարող է դիմել ՄԻԵԴ և պարտավոր չի իր գանգատում նշել այն բոլոր քայլերի մասին, որ նա ձեռնարկել է ներպետական իրավական պաշտպանության միջոցները սպառելու համար **• չսպառելով ներպետական պաշտպանության իրավական միջոցները՝ կարող է դիմել ՄԻԵԴ, և դիմողը պետք է իր գանգատում նշի այն բոլոր քայլերը, որը նա ձեռնարկել է ներպետական իրավական պաշտպանության միջոցները սպառելու համար, սակայն գործով պատասխանող պետությունը պետք է Եվրոպական դատարանին հիմնավոր ձևով ցույց տա, որ դիմողի կողմից չսպառված իրավական պաշտպանության միջոցը մատչելի և արդյունավետ է եղել տեսականում և գործնականում** o դիմողն իր հայեցողությամբ է որոշում սպառել ներպետական պաշտպանության միջոցները, թե՝ ոչ
33	ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքով սահմանված պատճառաբանված դատական ակտ ստանալու իրավունքը ներպետական դատարանին ի՞նչ է պարտավորեցնում. o մանրամասն անդրադառնալ կողմերի ներկայացրած յուրաքանչյուր փաստարկին **• մանրամասն անդրադառնալ կողմի ներկայացրած այն փաստարկներին, որոնք գործի ելքի համար ունեն կամ կարող են ունենալ վճռորոշ նշանակություն** o ներպետական դատարանները պարտավոր են պատճառաբանել դատական ակտը միայն այն դեպքում, եթե գործը վերաբերում է անօրինական գործողություններով ձեռք բերված ապացույցների հարցերին o ներպետական դատարանները պարտավոր են պատճառաբանել դատական ակտը, բացառությամբ այն դեպքերի, երբ դատական ակտում հղում է կատարվում դատական նախադեպին
34	ՄԻԵԿ-ի 13-րդ հոդվածի իմաստով ի՞նչ է նշանակում «պետական մարմին» հասկացությունը. o բացառապես դատական իշխանության մարմինները o բացառապես վարչական մարմինները **• պետական իշխանության ցանկացած մարմին, որը բավարարում է ներպետական իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներին ներկայացվող պահանջները** o բացառապես դատախազությունը

35	ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի իմաստով, ամբաստանյալի կամ դատապարտյալի մասնակցությունը բարձրագույն դատական ատյանի քննությանն արդյո՞ք պարտադիր է. o ամբաստանյալի կամ դատապարտյալի մասնակցությունը բարձրագույն դատական ատյանի քննությանը բոլոր դեպքերում պարտադիր է o ամբաստանյալի կամ դատապարտյալի մասնակցությունը բարձրագույն դատական ատյանի քննությանն արգելվում է o ամբաստանյալի կամ դատապարտյալի մասնակցությունը բարձրագույն դատական ատյանի քննությանը պարտադիր է միայն այն դեպքում, երբ բարձրագույն դատական ատյան բողոքը բերվել է նրա կամ նրա պաշտպանի կողմից **· ամբաստանյալի կամ դատապարտյալի մասնակցությունը բարձրագույն դատական ատյանի քննությանը պարտադիր չէ, եթե բարձրագույն դատական ատյանը քննում է միայն իրավունքի հարցեր և ամբաստանյալը մասնակցել է տվյալ գործով առաջին ատյանի դատական քննությանը**
36	ՄԻԵԿ-ին կից 14-րդ Արձանագրության ընդունմամբ ավելացել են գանգատների ընդունելիության պայմաններ: Դատարանը կարող է անընդունելի ճանաչել գանգատը, եթե դիմումատուն էական վնաս չի կրել: Դատարանը Korolev v. Russia (No: 25551/05) գործով վճռում անդրադարձել է «էական վնաս» հասկացությանը, ընդունելով, որ. o «էական վնաս» հասկացությունը չի կարող ներառել դիմողի կրած չնչին նյութական վնասը **· նույնիսկ չնչին նյութական վնասը կարող է դիտվել որպես «էական վնաս»՝ ելնելով գործի առանձնահատկություններից, երկրում կամ տարածաշրջանում առկա տնտեսական վիճակից և որ Կոնվենցիայի խախտումը կարող է էական վնաս հասցնել՝ առանց նյութական վնաս պատճառելու** o «էական վնաս» հասկացությունը ներառում է բացառապես բարոյական վնասը o միայն կոնվենցիայով սահմանված իրավունքի խախտումը՝ առանց նյութական վնաս պատճառելու, չի կարող դիմողին էական վնաս հասցնել
37	ՄԻԵԴ նախադեպային իրավունքի համաձայն՝ ՄԻԵԿ-ի 12-րդ հոդվածով երաշխավորված ամուսնության իրավունքը ստորև նշված ո՞ր դեպքերի նկատմամբ չի տարածվում. **· համասեռամոլների նկատմամբ** o հակառակ սեռի պատկանող տղամարդու և կնոջ նկատմամբ o ազատազրկման դատապարտված տղամարդու և ազատության մեջ գտնվող կնոջ նկատմամբ o տարբեր կրոններ դավանող տղամարդու և կնոջ նկատմամբ

38	Արդյո՞ք ՄԻԵԿ-ի 12-րդ հոդվածով երաշխավորված ամուսնության իրավունքը ներառում է նաև ամուսնալուծության իրավունք. o ՄԻԵԿ-ի 12-րդ հոդվածով երաշխավորված ամուսնության իրավունքը բոլոր դեպքերում ներառում է նաև ամուսնալուծության իրավունք **· ՄԻԵԿ-ի 12-րդ հոդվածով երաշխավորված ամուսնության իրավունքը չի ներառում ամուսնալուծության իրավունք** o ՄԻԵԿ-ի 12-րդ հոդվածով երաշխավորված ամուսնության իրավունքը ներառում է նաև ամուսնալուծության իրավունքը, եթե անձն ամուսնալուծվում է երկրորդ անգամ ամուսնանալու նպատակով o ՄԻԵԿ-ի 12-րդ հոդվածով երաշխավորված ամուսնության իրավունքը ներառում է նաև ամուսնալուծության իրավունքը, եթե անձն ամուսնալուծվում է ամուսնուն հանցագործության համար դատապարտելու պատճառով
39	ՄԻԵԿ-ի թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածը տարածվում է. **· բարձր պայմանավորվող կողմի օրենսդիր մարմնի ընտրությունների վրա** o ԵԽԽՎ պատվիրակների ընտրությունների վրա o բարձր պայմանավորվող կողմի նախագահի ընտրությունների վրա o բարձր պայմանավորվող կողմի սահմանադրական հանրաքվեների վրա
40	Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեում 2011 թվականից ներդրվեց Եվրոպական դատարանի կայացրած վճիռների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու երկու ընթացակարգ, այն է՝ խստացված ընթացակարգ և ընդհանուր ընթացակարգ: Ստորև ներկայացվածից ընտրեք խստացված ընթացակարգով քննության ենթակա վճիռների սպառիչ ցանկը. o հրատապ, անհատական միջոցառումներ պահանջող վճիռներ, պիլոտային վճիռներ և միջպետական գործերով կայացված վճիռներ **· հրատապ, անհատական միջոցառումներ պահանջող վճիռներ և պիլոտային վճիռներ: Վճիռներ, որոնցով բացահայտվում են դատարանի և/կամ նախարարների կոմիտեի կողմից արձանագրված կառուցվածքային և/կամ համակարգային լուրջ խնդիրներ և միջպետական գործերով կայացված վճիռներ: Նախարարների կոմիտեն իրավունք ունի նաև անդամ պետության կամ քարտուղարության դիմումի հիման վրա որոշում կայացնել ցանկացած գործով կայացված վճռի կատարում խստացված ընթացակարգով քննելու վերաբերյալ** o բացառապես միջպետական գործերով կայացված վճիռներ o բացառապես հրատապ, անհատական միջոցառումներ պահանջող վճիռներ և պիլոտային վճիռներ

41	Ըստ ՀՀ Դատական օրենսգրքի՝ որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով ՄԻԵԴ-ի դատական ակտի. **· հիմնավորումները և օրենքի մեկնաբանությունները պարտադիր են նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ** o հիմնավորումները և օրենքի մեկնաբանությունները պարտադիր են նման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ o հիմնավորումները և օրենքի մեկնաբանությունները պարտադիր են նույն փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ o հիմնավորումները և օրենքի մեկնաբանությունները պարտադիր են միևնույն փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ
42	Արդյո՞ք ՄԻԵԿ-ի 13-րդ հոդվածը ներառում է դատավարության ոչ համաչափ ձգձգման դեմ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք. o ոչ, դատավարության ոչ համաչափ ձգձգման դեմ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը սահմանված է ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի 1-ին մասով o ոչ, դատավարության ոչ համաչափ ձգձգման դեմ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը սահմանված է ՄԻԵԿ-ի 5-րդ հոդվածով **· այո, ՄԻԵԿ-ի 13-րդ հոդվածը պետություններին պարտավորեցնում է իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների օգնությամբ դատավարության կողմին հնարավորություն տալ արագացնել գործով վարույթը կամ դատավարության ձգձգումների համար ստանալ համարժեք հատուցում** o ոչ, դատավարության ոչ համաչափ ձգձգման դեմ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը սահմանված է ՄԻԵԿ-ի 3-րդ հոդվածով
43	Արդյո՞ք ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով դատավորի անաչառության պահանջը խախտվում է, եթե միևնույն գործով դատավորը նախկինում եղել է դատախազության աշխատող. **· լոկ այն փաստը, որ դատավորը նախկինում աշխատել է դատախազությունում, դեռևս չի հանդիսանում նրա անաչառությանը կասկածելու հիմք, եթե դատավորը դատախազությունում իր նախկին աշխատանքի բնույթով առնչված չի եղել տվյալ գործին** o բոլոր դեպքերում, եթե դատավորը նախկինում աշխատել է դատախազությունում, ապա դա խախտում է դատավորի անաչառության պահանջը o եթե դատավորը նախկին աշխատանքում կատարել է վարչական բնույթի գործառույթներ, ապա դա խախտում է դատավորի անաչառության պահանջը o ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով դատավորի անաչառության

	պահանջը գնահատելիս՝ անթույլատրելի է հաշվի առնել դատավորի նախկին աշխատանքային գործառույթները
44	Արդյո՞ք ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածով երաշխավորված մեղադրյալի իրավունքների խախտում կհամարվի, եթե պետությունը օրենքով դատարանին իրավասություն վերապահի մեղադրյալի բացակայությամբ անցկացնել դատական քննություն և կայացնել դատական ակտ. o մեղադրյալի բացակայությամբ դատական քննության անցկացումը և որոշման կայացումը բոլոր դեպքերում խախտում է մեղադրյալի՝ ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածով երաշխավորված իրավունքները o մեղադրյալի բացակայությամբ դատական քննության անցկացումը և որոշման կայացումը որևէ դեպքում չի խախտում մեղադրյալի՝ ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածով երաշխավորված իրավունքները **• մեղադրյալի բացակայությամբ դատական քննության անցկացումը և որոշման կայացումը չի խախտում մեղադրյալի՝ ՄԻԵԿ-ի 6**-րդ հոդվածով երաշխավորված իրավունքները, եթե նա պատշաճ կերպով ծանուցված է եղել դատական նիստի տեղի, ժամանակի, դատական քննությանը ներկայացուցիչ ունենալու իրավունքի մասին և հստակ կերպով հրաժարվել է դատական քննությանը մասնակցելու իրավունքից o մեղադրյալի բացակայությամբ դատական քննության անցկացումը և որոշման կայացումը խախտում է մեղադրյալի՝ ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածով երաշխավորված իրավունքները, եթե նա համաձայնվում է առաջադրված մեղադրանքի հետ

45	Արդյո՞ք ՄԻԵԿ-ի 2-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորվում է նաև երրորդ անձի կամ պետության օգնությամբ մահանալու իրավունք. **• ՄԻԵԿ-ի 2-րդ հոդվածով երաշխավորված կյանքի իրավունքը որևէ դեպքում չի ենթադրում երրորդ անձի կամ պետության օգնությամբ մահանալու իրավունք** o ՄԻԵԿ-ի 2-րդ հոդվածով երաշխավորված կյանքի իրավունքը ենթադրում է նաև երրորդ անձի կամ պետության օգնությամբ մահանալու իրավունք, եթե անձը կամավոր ցանկություն է հայտնում մահանալ o ՄԻԵԿ-ի 2-րդ հոդվածով երաշխավորված կյանքի իրավունքը ենթադրում է երրորդ անձի կամ պետության օգնությամբ մահանալու իրավունք, եթե անձն անբուժելի հիվանդ է և նրան ապրելը պատճառում է տառապանքներ o ՄԻԵԿ-ի 2-րդ հոդվածով երաշխավորված կյանքի իրավունքը չի ենթադրում երրորդ անձի կամ պետության օգնությամբ մահանալու իրավունք, եթե հեղինակավոր բժշկական հանձնաժողովը եզրակացնում է, որ հիվանդը կարող է ապաքինվել
46	Բայաթյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության գործով Եվրոպական դատարանի Մեծ պալատը. **• գտել է, որ կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվող անձին քրեական պատասխանատվության ենթարկելը խախտել է Կոնվենցիայի 9-րդ հոդվածը և սահմանել է, որ 9-րդ հոդվածը չպետք է համակցել Կոնվենցիայի 4-րդ հոդվածի 3-րդ մասի (բ) կետի հետ** o գտել է, որ կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվող անձին քրեական պատասխանատվության ենթարկելը խախտել է Կոնվենցիայի 9-րդ հոդվածը, սակայն դիրքորոշում չի արտահայտել Կոնվենցիայի 4-րդ հոդվածի 3-րդ մասի (բ) կետի կապակցությամբ o գտել է, որ կրոնական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվող անձին քրեական պատասխանատվության ենթարկելը չի խախտել Կոնվենցիայի 9-րդ հոդվածը o արձանագրել է ինչպես կոնվենցիայի 9-րդ, այնպես էլ 4-րդ հոդվածի 3-րդ մասի (բ) կետի խախտում

47	Որո՞նք են ՄԻԵԿ-ի 6 հոդվածի 1-ին կետում սահմանված՝ գործի քննության ժամկետի «ողջամտության» չափանիշները. o գործի քննության ժամկետի ողջամիտ լինել կամ չլինելը որոշվում է գործի քննության տևողությամբ, որը չպետք է գերազանցի երեք տարին՝ հաշված այն պահից, երբ հայցը հարուցվել է դատարանում o գործի քննության ժամկետի ողջամիտ լինել կամ չլինելը որոշվում է նրանով, թե գերազանցե՞լ են արդյոք ազգային դատարաններն այն ժամկետները, որոնք սահմանված են երկրի համապատասխան դատավարական օրենսգրքով **· գործի քննության ժամկետի ողջամիտ լինել կամ չլինելը որոշվում է՝ ելնելով յուրաքանչյուր գործի կոնկրետ հանգամանքներից, ինչպես նաև հաշվի առնելով գործի ծավալը, և թե արդյոք ժամկետների ձգձգումները պայմանավորված էին ազգային մարմինների անգործությամբ և դիմողի գործողություններով** o գործի քննության ժամկետի ողջամիտ լինել կամ չլինելը որոշվում է քննության տևողությամբ, որը չպետք է գերազանցի երեք տարին, հաշված այն պահից, երբ գործն ընդունվել է դատարանի վարույթ
48	Ո՞ր դեպքերում կարող է արդարացված լինել ՄԻԵԿ-ի 6 հոդվածի 1-ին կետով սահմանված դատաքննության հրապարակայնության սահմանափակումը. o երբ դա, դատարանի կարծիքով, անհրաժեշտ է օբյեկտիվ ճշմարտությունը բացահայտելու համար **· երբ դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակության մեջ բարոյականության, հասարակական կարգի կամ պետական անվտանգության շահերից ելնելով, երբ դա են պահանջում անչափահասների շահերը կամ կողմերի մասնավոր կյանքի պաշտպանությունը կամ այնքանով, որքանով դա, դատարանի կարծիքով, հատուկ հանգամանքների բերումով խիստ անհրաժեշտ է, եթե հրապարակայնությունը կխախտեր արդարադատության շահերը** o բացառապես երկրի դատավարական օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով o երբ այդ մասին առկա է կողմերից թեկուզև մեկի միջնորդությունը
49	ՄԻԵԴ-ն իր դատական պրակտիկայում. o կիրառում է նախադեպային իրավունքի ինստիտուտը **· դատարանը կաշկանդված չէ իր կայացրած նախկին վճիռներով, սակայն շեղվում է իր կայացրած վճիռներից բացառապես հիմնավոր դեպքերում՝ նպատակ ունենալով ապահովել դատական պրակտիկայի հետևողականությունը, թափանցիկությունը և կանխատեսելիությունը** o չի կիրառում նախադեպային իրավունքի ինստիտուտը, քանի որ այն միջազգային ատյան է o չի կիրառում նախադեպային իրավունքի ինստիտուտը, քանի որ Դատարանի վճիռները պարտադիր կատարման ենթակա չեն

50	ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածով երաշխավորված իրավունքը կարող է արտահայտվել. o միայն գրավոր ձևով o միայն գրավոր և բանավոր ձևով **• գրավոր, բանավոր, տպագիր կամ արտահայտվելու գեղարվեստական այլ ձևի միջոցով կամ եղանակով** o միայն տպագիր ձևով
51	ՄԻԵԿ-ի համաձայն՝ ե՞րբ է թույլատրվում արտահայտելու ազատության իրավունքի սահմանափակումը. o եթե դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով o երբ դա թելադրված է բացառիկ անհրաժեշտությամբ o երկրի օրենսդրությամբ նախատեսված դեպքերում **• եթե դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգությունը,անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց հեղինակության, իրավունքների և ազատությունների պաշտպանության, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտման կանխման, արդարադատության հեղինակության և անաչառության պահպանման նպատակով**
52	Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն քրեական պատասխանատվության ենթարկելը վիրավորանքի կամ զրպարտանքի համար. **• ինքնին չի հակասում ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածին** o բոլոր դեպքերում հակասում է ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածին o անհամատեղելի է ՄԻԵԿ-ի 1-ին հոդվածի հետ o բոլոր դեպքերում հակասում է ՄԻԵԿ-ի 8-րդ հոդվածին
53	Եվրոպական դատարանը քննում է դատարան ներկայացված գործերը. o հերթականությամբ՝ ըստ գանգատների ներկայացման ամսաթվի o հերթականությամբ՝ ըստ գանգատների ներկայացման ամսաթվի, սակայն կիրառում է նաև առաջնայնության սկզբունքը **• կիրառելով 2009 թվականին սահմանված առաջնայնության սկզբունքը՝ հիմնվելով յոթ կատեգորիաների վրա** o առանց որևէ սահմանված հատուկ ընթացակարգի

54	ՄԻԵԿ-ի համաձայն՝ ե՞րբ է թույլատրվում պետական մարմինների միջամտությունն անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի իրականացմանը. o երբ վերջիններս դա անհրաժեշտ են համարում պետական անվտանգության պաշտպանության, հասարակական կարգը կամ երկրի տնտեսական բարեկեցությունն ապահովելու, անկարգություններն ու հանցագործությունները կանխելու, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով o երբ դա թելադրված է բացառիկ անհրաժեշտությամբ՝ երկրի սահմանադրական կարգի պաշտպանության, ներառյալ՝ խռովությունը կամ ապստամբությունը ճնշելու նպատակով օրենքին համապատասխան գործողություն ձեռնարկելու համար o երկրի օրենսդրությամբ նախատեսված դեպքերում **• եթե դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների եւ ազատությունների պաշտպանության նպատակով**
55	ՄԻԵԿ-ի 6-րդ արձանագրության 1-ին հոդվածն արգելում է. o ցմահ ազատազրկման դատապարտելը o մահապատիժը ցմահ ազատազրկման փոխարինելը o մահապատժի դատապարտված անձի նկատմամբ մահապատիժը տևական ժամանակ ի կատար չածելը **• մահապատժի դատապարտելը կամ մահապատժի ենթարկելը**
56	ՄԻԵԿ 1-ին արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ անձը ե՞րբ կարող է զրկվել սեփականությունից. **• գերակա հանրային շահերի պաշտպանության համար և օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով նախատեսված պայմաններով** o միայն օրենքով նախատեսված դեպքերում o միայն վարչական ակտի հիման վրա o անձը չի կարող զրկվել սեփականությունից

57	Եվրոպական դատարանը. o իր վճիռներում կոնվենցիան մեկնաբանելիս հղում չի կատարում այլ միջազգային ստանդարտներին o իր վճիռներում կոնվենցիան մեկնաբանելիս հղում է կատարում միայն ՄԻԵԿ-ի դրույթներին o իր վճիռներում կոնվենցիան մեկնաբանելիս հղում է կատարում միայն միջազգային հանրային իրավունքի սկզբունքներին **· իր վճիռներում կոնվենցիան մեկանբանելիս կարող է հղում կատարել մարդու իրավունքների պաշտպանության ոլորտի այլ միջազգային և տարածաշրջանային պայմանագրերի, ինչպես նաև այդ միջազգային պայմանագրերը կիրառող մարմինների որոշումներին, ինչպես նաև միջազգային հանրային իրավունքի սկզբունքներին**
58	Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն գնահատողական դատողությունները . o կարող են ապացուցվել o պետք է ապացուցվեն o լրագրողների դեպքում պետք է ապացուցվեն, իսկ այլ անձանց դեպքում՝ ոչ **· չեն կարող ապացուցվել և անընդունելի է գնահատող դատողությունների ճշմարտացիությունն ու հավաստիությունն ապացուցելու պահանջ ներկայացնել**
59	Ո՞ր դեպքում կարող է ՄԻԵԴ-ի դատավորը հեռացվել պաշտոնից. **· եթե մյուս դատավորները քվեների երկու երրորդի մեծամասնությամբ որոշում են ընդունում այն մասին, որ նա այլևս չի համապատասխանում ներկայացվող պահանջներին** o եթե Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովը քվեների մեծամասնությամբ որոշում է ընդունում այն մասին, որ նա այլևս չի համապատասխանում ներկայացվող պահանջներին o եթե Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն որոշում է ընդունում այն մասին, որ նա այլևս չի համապատասխանում ներկայացվող պահանջներին o եթե տվյալ Բարձր Պայմանավորվող կողմի Խորհրդարանը որոշում է ընդունում այն մասին, որ նա այլևս չի համապատասխանում ներկայացվող պահանջներին
60	Ո՞ր դեպքում է Եվրոպական դատարանը իր վճռում առաջարկություն անում պատասխանող պետության կողմից իրականացվելիք միջոցների մասին՝ տվյալ վճռում արձանագրված Կոնվենցիայի խախտումը վերացնելու համար. o միայն այն դեպքում, երբ խախտումը պարբերական է o միայն այն դեպքում, երբ խախտման բնույթն այնպիսին է, որ միայն մեկ հնարավոր լուծում կա խախտումը վերացնելու համար **· երբ խախտումը պարբերական է, և երբ խախտման բնույթն այնպիսին է, որ**

	միայն մեկ հնարավոր լուծում կա խախտումը վերացնելու համար o ոչ մի դեպքում
61	ՄԻԵԿ-ով Մեծ Պալատը երկու դեպքի առկայության դեպքում կարող է գործ քննել. երբ Պալատը ընդդատությունը զիջում է Մեծ պալատին (30-րդ հոդված) կամ այն դեպքում երբ գործի կողմերից որևէ մեկը պահանջում է, որ գործը հանձնվի Մեծ Պալատի քննությանը և Մեծ պալատի հանձնախումբը ընդունում է այդ պահանջը (43-րդ հոդված): Ի՞նչ էական տարբերություն կա այս երկու դեպքերում Մեծ պալատի կողմից գործի քննության պայմանների մեջ. o ոչ մի տարբերություն չկա o ՄԻԵԿ-ը նման դրույթ չի սահմանում o 30-րդ հոդվածը, ի թիվս այլ պայմանների, անդրադարձ է կատարում Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների դրույթների մեկնաբանմանն առնչվող լուրջ հարցի, մինչդեռ 43-րդ հոդվածով Մեծ պալատի հանձնախմբի կողմից պահանջի ընդունման պայման է հանդիսանում Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների մեկնաբանմանը կամ կիրառմանը վերաբերող հարցի առկայությունը **• 43-րդ հոդվածով Մեծ պալատի հանձնախմբի կողմից պահանջի ընդունման պայման է հանդիսանում Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների մեկնաբանմանը կամ կիրառմանը կամ ընդհանուր կարևորության այլ լուրջ հարցի առկայությունը, մինչդեռ 30-րդ հոդվածը, ի թիվս Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների դրույթների մեկնաբանմանն առնչվող լուրջ հարցի, սահմանում է նաև Պալատի կողմից Մեծ պալատին ընդդատության զիջման հնարավորություն, եթե Պալատի քննության ներքո գտնվող հարցի լուծումը կարող է հակասել Եվրոպական դատարանի ավելի վաղ կայացրած որոշմանը**

62	Ու՞մ կողմից կարող է անհատական գանգատներ ընդունել ՄԻԵԴ-ը և ենթադրվող ինչպիսի՞ խախտումների դեպքում. o անհատներից, որոնք պնդում են, թե դարձել են ՄԻԵԿ-ով կամ նրան կից արձանագրություններով ճանաչված իրենց իրավունքների՝ ՄԱԿ-ի անդամ որևէ պետության խախտման զոհ o ցանկացած անձից, հասարակական կազմակերպություններից, անձանց խմբից, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից և դրանց ղեկավարներից, որոնք պնդում են, թե դարձել են ՄԻԵԿ-ով կամ նրան կից արձանագրություններով և/կամ Բարձր պայմանավորվող կողմի օրենսդրությամբ ճանաչված իրենց իրավունքների՝ որևէ Բարձր պայմանավորվող կողմի թույլ տված խախտման զոհ **· ցանկացած անձից, հասարակական կազմակերպություններից կամ անձանց խմբից, որոնք պնդում են, թե դարձել են ՄԻԵԿ-ով կամ նրան կից արձանագրություններով ճանաչված իրենց իրավունքների՝ որևէ Բարձր պայմանավորվող կողմի թույլ տված խախտման զոհ** o ցանկացած անձից, հասարակական կամ անձանց խմբից, որոնք պնդում են, թե դարձել են ՄԻԵԿ-ով կամ նրան կից արձանագրություններով, կամ մարդու իրավունքներին և հիմնարար ազատությունների վերաբերյալ որեւէ այլ միջազգային համաձայնագրով ճանաչված իրենց իրավունքների՝ որեւէ Բարձր պայմանավորվող կողմի թույլ տված խախտման զոհ
63	Ո՞վ կարող է համարվել ՄԻԵԿ-ով կամ նրան կից արձանագրություններով ճանաչված իրավունքների խախտման «զոհ». o ֆիզիկական անձինք՝ ներառյալ սաղմնավորված, բայց դեռևս չծնված երեխաները o ֆիզիկական անձինք՝ ներառյալ սաղմնավորված, բայց դեռևս չծնված երեխաները, ֆիզիկական անձանց իրավահաջորդները, հասարակական կազմակերպությունները, անձանց խումբը o ֆիզիկական անձինք՝ ներառյալ սաղմնավորված, բայց դեռևս չծնված երեխաները, ֆիզիկական անձանց իրավահաջորդները, հասարակական, առևտրային կազմակերպությունները, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու դրանց ղեկավարները, անձանց խումբը **· ֆիզիկական անձինք, հասարակական կազմակերպությունները, անձանց խումբը**

64	Ի՞նչ իրավունք է երաշխավորված ՄԻԵԿ-ի 7-րդ արձանագրության 2-րդ հոդվածով. o վերադաս դատական ատյան բողոքարկելու իրավունք, երբ անձի քաղաքացիական իրավունքների և պարտականությունների վերաբերյալ քննված գործով դատարանը կայացրել է վճիռ կամ, երբ դատարանը նրան դատապարտել է ներկայացված քրեական մեղադրանքի հիման վրա o ազգային իշխանություններին ներման խնդրագրով դիմելու և ներում ստանալու իրավունքն այն բանից հետո, երբ անձը որևէ հանցագործության համար դատապարտվել է դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով **· քրեական հանցագործություն կատարելու համար դատարանի կողմից դատապարտված յուրաքանչյուր անձի իրավունքը, որպեսզի իր դատապարտումը կամ դատավճիռը վերանայվի վերադաս դատական ատյանի կողմից** o քրեական հանցագործություն կատարելու կասկածի հիման վրա ձերբակալման կամ կալանավորման պատճառով ազատությունից զրկված անձի իրավունքը, որպեսզի իր կալանավորման օրինականությունը և հիմնավորվածությունը ստուգվի վերադաս դատական ատյանի կողմից և ինքն անհապաղ ազատ արձակվի, եթե կալանավորումն անօրինական է
65	Ե՞րբ պետք է տեղի ունեցած լինեն այն ենթադրվող խախտումները, որոնց վերաբերյալ գանգատ է ներկայացվում ՄԻԵԴ. o ցանկացած ժամանակ o մինչև տվյալ երկրի կողմից ՄԻԵԿ-ի վավերացումն ընկած ժամանակահատվածում o միայն տվյալ երկրի կողմից ՄԻԵԿ-ի վավերացումից հետո ընկած ժամանակահատվածում **· տվյալ երկրի կողմից ՄԻԵԿ-ի վավերացումից հետո ընկած ժամանակահատվածում, ինչպես նաև մինչև ՄԻԵԿ-ի վավերացումն ընկած ժամանակահատվածում, եթե խախտումն ունի շարունակական բնույթ**
66	Ո՞ր մարմինն է վերահսկողություն իրականացնում Ստրասբուրգի մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման նկատմամբ. **· Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն** o Միացյալ ազգերի կազմակերպության Գերագույն հանձնակատարի գրասենյակը o Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովը o Միացյալ ազգերի կազմակերպության Գլխավոր վեհաժողովը

67	ՄԻԵԿ-ի գործողությունը տարածվում և կիրառվում է. o միայն տվյալ Բարձ Պայմանավորվող պետության քաղաքացիների նկատմամբ o միայն տվյալ Բարձր Պայմանավորվող պետության քաղաքացիների և տվյալ պետությունում մշտական բնակության իրավունք ունեցող օտարերկրյա քաղաքացիների նկատմամբ o օտարերկրյա այն քաղաքացիների նկատմամբ, ովքեր համարվում են Կոնվենցիայի անդամ պետության քաղաքացի **· բարձր Պայմանավորվող պետության իրավազորության ներքո գտնվող յուրաքանչյուր անձի նկատմամբ**
68	ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածով ամրագրված քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ հասկացությունը. o պետք է բացառապես մեկնաբանվի ներպետական օրենսդրությանը համապատասխան o մեկնաբանման համար վճռորոշ նշանակություն ունի իրավունքի ճյուղի բնույթը, որը կարգավորում է տվյալ հարցը o մեկնաբանման համար վճռորոշ նշանակություն ունի հարցը լուծելու համար համապատասխան իրավասությամբ օժտված մարմնի բնույթը **· մեկնաբանման համար վճռորոշ նշանակություն ունի ոչ թե այն, թե իրավունքը կամ պարտականությունն ինչպես են որակվում ներպետական օրենսդրությամբ, այլ թե որքանով է գործի վարույթը վճռորոշ մասնավոր իրավունքների և պարտականությունների համար**
69	Եվրոպական դատարանի միանձնյա դատավորն իրավասու է. **· անընդունելի հայտարարել Եվրոպական կոնվենցիայի 34-րդ հոդվածին համապատասխան ներկայացված անհատական գանգատը կամ այն հանել Եվրոպական դատարանի քննությանը ենթակա գործերի ցուցակից, եթե նման որոշում կարող է ընդունվել առանց գանգատի լրացուցիչ ուսումնասիրման** o միայն անընդունելի հայտարարել Եվրոպական կոնվենցիայի 34-րդ հոդվածին համապատասխան ներկայացված անհատական գանգատ o ընդունելի հայտարարել Եվրոպական կոնվենցիայի 34- րդ հոդվածին համապատասխան ներկայացված անհատական գանգատը o միայն հանել Եվրոպական դատարանի քննությանը ենթակա գործերի ցուցակից, եթե նման որոշում կարող է ընդունվել առանց գանգատի լրացուցիչ ուսումնասիրման

70	Միանձնյա կարգով գործերը քննելիս. o Եվրոպական դատարանի դատավորն իրավունք ունի քննել ցանկացած անհատական գանգատ o Եվրոպական դատարանի դատավորը պարտավոր է քննել այն անհատական գանգատները, որոնք ներկայացված են այն Բարձր պայմանավորվող կողմի դեմ, որի անունից ինքն ընտրվել է o Եվրոպական դատարանի դատավորն իրավունք ունի քննել միայն միջպետական գործեր **· Եվրոպական դատարանի դատավորը չի կարող քննել որևէ անհատական գանգատ, որը ներկայացված է այն Բարձր պայմանավորվող կողմի դեմ, որի անունից ինքն ընտրվել է**
71	Եթե ՄԻԵԴ-ը գտնում է, որ տեղի է ունեցել ՄԻԵԿ-ի կամ դրան կից արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա ՄԻԵԴ-ը. o պարտադրում է Բարձր պայմանավորվող կողմին ամբողջությամբ փոխհատուցել տուժած կողմին **· որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել** o թողնում է Բարձր պայմանավորվող կողմի հայեցողությանը o ապա ՄԻԵԴ-ը դիմում է Նախարարների կոմիտեին՝ պահանջելով տվյալ երկրի նկատմամբ կիրառել պատժամիջոցներ
72	ՄԻԵԿ-ի 15-րդ հոդվածի 2-րդ կետն արգելում է շեղումներ. **· հոդված 2-ից՝ բացառությամբ պատերազմական օրինական գործողությունների հետևանքով մարդկային զոհերի կապակցությամբ, կամ հոդված 3-ի, հոդված 4-ի կետ 1-ի և հոդված 7-ի դրույթներից** o հոդված 2-ից՝ բացառությամբ պատերազմական օրինական գործողությունների հետևանքով մարդկային զոհերի կապակցությամբ, կամ հոդված 3-ի, հոդված 4-ի կետ 2-ի, հոդված 7-ի, արձանագրություն 6-ի կամ 13-ի, կամ արձանագրություն 7-ի հոդված 4-ի դրույթներից o հոդված 1-ի, հոդված 2-ի, հոդված 7-ի, հոդված 13-ի դրույթներից o հոդված 8-ի դրույթներից
73	Արդարացի փոխհատուցումը՝ համաձայն ՄԻԵԿ-ի 41-րդ հոդվածի. **· կարող է տրվել Եվրոպական դատարանի կողմից նյութական վնասի, բարոյական վնասի և ծախսերի ու ծախքերի համար, ինչպես նաև կարող է ներառել անհատական և/կամ ընդհանուր միջոցներ** o պարտադիր տրվում է Եվրոպական դատարանի կողմից նյութական վնասի, բարոյական վնասի և ծախսերի ու ծախքերի համար o կարող է տրվել Եվրոպական դատարանի կողմից վնասների համար ex officio o նման հոդված չկա ՄԻԵկ-ում

74	Վճռի կողմ հանդիսացող պետության կողմից արդարացի փոխհատուցման վճարումների կամ տվյալ վճռում նշված անհատական կամ ընդհանուր միջոցների կատարման կապակցությամբ դիմումատուն իրավունք ունի. o Ուղղակիորեն դիմել Եվրոպական դատարան **· Տեղեկություններ ներկայացնել Նախարարների կոմիտեի քարտուղարություն, բացառությամբ ընդհանուր միջոցների կատարմանը վերաբերող հարցերի: Ընդհանուր միջոցների կիրառման ընթացքի վերաբերյալ հարցերով, անհրաժեշտության դեպքում Նախարարների կոմիտեի քարտուղարությունը տեղեկություններ է հայցում միջազգային կազմակերպություններից, հասարակական կազմակերպություններից կամ դիմումատուից** o Դիմել Նախարարների կոմիտե, ներառյալ ընդհանուր միջոցների կատարմանը վերաբերող հարցերի առնչությամբ o Դիմել Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին, բացառությամբ ընդհանուր միջոցների կատարմանը վերաբերող հարցերի: Ընդհանուր միջոցների կիրառման ընթացքի վերաբերյալ հարցերով, անհրաժեշտության դեպքում Գլխավոր քարտուղարը տեղեկություններ է հայցում միջազգային կազմակերպություններից, հասարակական կազմակերպություններից կամ դիմումատուից
75	ՄԻԵԿ-ի հոդված 3-ից շեղում թույլատրվում է. **· ոչ մի դեպքում** o բնակչության կյանքին կամ բարեկեցությանը սպառնացող արտակարգ դրության դեպքում o աղետի դեպքում o Կոնվենցիայով նախատեսված դեպքերում
76	Որպեսզի արձանագրվի ՄԻԵԿ-ի 3-րդ հոդվածի խախտում. **· վատ վերաբերմունքը պետք է հասնի իր խստության նվազագույն աստիճանի** o վատ վերաբերմունքը պետք է հասնի իր խստության առավելագույն աստիճանի o վատ վերաբերմունքը պետք է ուղղված լինի տեղեկատվություն ձեռք բերելու նպատակով պատժի իրականացման դեմ o պետք է առկա լինի անձին խոշտանգելու կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի ենթարկելու մտադրություն
77	ՄԻԵԿ-ի 11-րդ հոդվածով երաշխավորված է. o միավորվելու դրական իրավունքը o միավորվելու բացասական իրավունքը **· միավորվելու դրական և միավորվելու բացասական իրավունքը** o արտահայտվելու ազատության իրավունքը

78	Դիմումատուի կողմից իր կրած ծախսերի և ծախքերի մասին Եվրոպական դատարանին ներկայացված պահանջը պետք է բավարարի հետևյալ չափանիշները. o Դատարանը յուրաքանչյուր գործով ներկայացնում է առանձին չափանիշներ o Դատարանը չի սահմանել կոնկրետ չափանիշ, որով դիմումատուները պետք է առաջնորդվեն o ծախսերն ու ծախքերը պետք է իրականում կատարված լինեն և պետք է անհրաժեշտ լինեն, սակայն չկա սահմանված որևէ սահման ծախսերի ու ծախքերի չափի համար **• ծախսերն ու ծախքերը պետք է իրականում կատարված լինեն, պետք է լինեն անհրաժեշտ ողջամիտ չափի**
79	Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի հանձնարարականները. o պարտադրող բնույթի իրավական փաստաթղթեր են o խորհրդատվական բնույթի քաղաքական փաստաթղթեր են **• պարտադրող բնույթի քաղաքական փաստաթղթեր են** o խորհրդատվական բնույթի իրավական փաստաթղթեր են
80	Եվրոպական դատարանի վարույթում գտնվող գործով դիմումատուի մահվան դեպքում. o Եվրոպական դատարանը գործն անմիջապես հանում է գործերի ցուցակից o Եվրոպական դատարանը բոլոր դեպքերում շարունակում է գործի քննությունն առանց դիմումատուի առկայության **• Եվրոպական դատարանը կարող է թույլ տալ, որ դիմումատուի հարազատները շարունակեն գործը, կամ բացառիկ դեպքերում, մասնավորապես, երբ գործում արծարծվում է ընդհանուր կարևորություն ունեցող հարց, շարունակել գործի քննությունն առանց դիմումատուի** o Եվրոպական դատարանը կարող է թույլ տալ, որ ցանկացած հետաքրքրված անձ շարունակի գործը դիմումատուի անունից
81	ՄԻԵԿ-ի 11-րդ հոդվածով երաշխավորված միավորվելու բացասական իրավունքը նշանակում է. o միավորումներ ստեղծելու ազատություն o միավորմանն անդամագրվելու ազատություն o միավորումներ ստեղծելու և դրանց անդամագրվելու ազատություն **• հարկադրաբար միավորմանն անդամագրելու արգելք**

82	Համաձայն ՄԻԵԴ-ի նախադեպային որոշումների՝ ձերբակալման պահից մինչև դատարանի կամ դատական այլ պաշտոնյայի մոտ տարվելու պահն ընկած կալանքի առավելագույն ժամանակահատվածն է. o 24 ժամ o 4 օր 6 ժամ o 4 օր 16 ժամ **• չի սահմանվել ՄԻԵԴ-ի կողմից, քանի-որ յուրաքանչյուր դեպքում քննվում են գործի հանգամանքների առանձնահատկությունները**
83	ՄԻԵԿ-ի 5-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի դրույթներին համապատասխան «ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ» արտահայտության մեջ «անհապաղ» տերմինը նշանակում է. o անմիջապես o որքան հնարավոր է շուտ **• հնարավորինս շուտ և ըստ ներպետական օրենսդրությամբ սահմանված ժամկետների** o 48 ժամվա ընթացքում
84	Իրեն հանձնված գործերը քննելու համար Եվրոպական դատարանը. **• Նիստեր գումարում է միանձնյա, երեք դատավորից կազմված Կոմիտեներում, յոթ դատավորից կազմված Պալատներում և տասնյոթ դատավորից կազմված Մեծ պալատում** o Նիստեր գումարում է երեք դատավորից կազմված Կոմիտեներում, յոթ դատավորից կազմված Պալատներում և տասնյոթ դատավորից կազմված Մեծ պալատում o Նիստեր գումարում է միանձնյա, յոթ դատավորից կազմված Պալատներում և տասնյոթ դատավորից կազմված Մեծ պալատում o Նիստեր գումարում է միանձնյա, երեք դատավորից կազմված Կոմիտեներում, հինգ դատավորից կազմված Պալատներում և տասնյոթ դատավորից կազմված Մեծ պալատում
85	Որպեսզի ՄԻԵԿ-ի 8-րդ, 9-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածներով նախատեսված իրավունքների նկատմամբ անդամ պետության կողմից կիրառված սահմանափակումը ՄԻԵԴ-ի կողմից չճանաչվի իբր տվյալ իրավունքի խախտում, այդ սահմանափակումը պետք է. o նախատեսված լինի անդամ պետության օրենսդրությամբ o նախատեսված լինի անդամ պետության օրենսդրությամբ և հետապնդի օրենսդրությամբ նախատեսված իրավաչափ նպատակ o նախատեսված լինի անդամ պետության օրենսդրությամբ և անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակությունում **• նախատեսված լինի անդամ պետության օրենսդրությամբ, հետապնդի**

	իրավաչափ նպատակ և անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակությունում
86	Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածը տարածվում է. o միայն օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի կատարման փուլի վրա o միայն դատաքննության փուլի վրա **· դատաքննության, ինչպես նաև դատաքննությանը նախորդող և հաջորդող փուլերի վրա** o դատաքննության և դատաքննությանը հաջորդող փուլերի վրա
87	Ո՞րն է համարվում «քաղաքացիական իրավունք» ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի իմաստով. o հարկային դատավարության իրավունքը o Եվրոպական միությունում տեղաշարժի ազատության իրավունքը o անձին քրեական դատավարությունից արդարացնելուն հաջորդող հայեցողական փոխհատուցում ստանալու իրավունքը **· պատվի, հեղինակության և արժանապատվության պաշտպանության իրավունք**
88	Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն 2013թ. մայիսի 16-ին ընդունեց Արձանագրություն թիվ 15-ը, որով փոփոխություններ են նախատեսվում Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայում: Թիվ 15 Արձանագրությունը բաց է ստորագրությունների համար 2013թ. հունիսի 24-ից: Համաձայն Թիվ 15 Արձանագրության. o Եվրոպական կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետը վերացվել է o Եվրոպական կոնվենցիայի 35-րդ հոդվածով սահմանված ընդունելիության պայմաններում ոչ մի փոփոխություն չի նախատեսվում o Եվրոպական կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետը փոփոխվել է, սահմանելով «դիմողը չի կրել էական վնաս, եթե Կոնվենցիայով և դրան կից արձանագրություններով սահմանված իրավունքների պաշտպանությունը չի պահանջում գանգատի ըստ էության քննություն, և պայմանով, որ ոչ մի գանգատ չի կարող մերժվել այս հիմքով, եթե այն պատշաճ կերպով չի քննվել ներպետական դատական ատյանների կողմից» **· Եվրոպական կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետը**

	փոփոխվել է, սահմանելով «դիմողը չի կրել էական վնաս, եթե Կոնվենցիայով և դրան կից արձանագրություններով սահմանված իրավունքների պաշտպանությունը չի պահանջում գանգատի ըստ էության քննություն»
89	ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի 1-ին մասի կիրառության համար անհրաժեշտ է, որ **· Ներպետական մակարդակում առկա լինի «վեճ» մասնավոր անձանց կամ դիմումատուի և պետության միջև, որի արդյունքը վճռական է դիմումատուի քաղաքացիական իրավունքների և պարտականությունների համար** o Ներպետական մակարդակում առկա լինի «վեճ» միայն մասնավոր անձանց միջև, որի արդյունքը վճռական է դիմումատուի քաղաքացիական իրավունքների և պարտականությունների համար o Ներպետական մակարդակում առկա լինի «վեճ» միայն դիմումատուի և պետության միջև, որի արդյունքը վճռական է դիմումատուի քաղաքացիական իրավունքների և պարտականությունների համար o Ներպետական մակարդակում «վեճ»-ի առկայությունը էական դեր չունի Եվրոպական դատարանի կողմից ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի 1-ին մասը կոնկրետ գործով կիրառելի համարելու համար
90	Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն 2013թ. մայիսի 16-ին ընդունեց Արձանագրություն թիվ 15-ը, որով փոփոխություններ են նախատեսվում Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայում: Թիվ 15 Արձանագրությունը բաց է ստորագրությունների համար 2013թ. Հունիսի 24-ից: Համաձայն Թիվ 15 Արձանագրության. o Եվրոպական կոնվենցիայի 35-րդ հոդվածով սահմանված ընդունելիության պայմաններում ոչ մի փոփոխություն չի նախատեսվում o Եվրոպական կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետը փոփոխվել է, սահմանելով որ Դատարանը կարող է գործը քննության ընդունել միայն այն բանից հետո, երբ սպառվել եմ միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերին համապատասխան իրավական պաշտպանության բոլոր ներպետական միջոցները, և ութ ամսվա ընթացքում սկսած այն օրվանից, երբ կայացվել է ներպետական վերջնական որոշումը **· Եվրոպական կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետը փոփոխվել է, սահմանելով, որ Դատարանը կարող է գործը քննության ընդունել միայն այն բանից հետո, երբ սպառվել եմ միջազգային իրավունքի հանրաճանաչ**

	նորմերին համապատասխան իրավական պաշտպանության բոլոր ներպետական միջոցները, և չորս ամսվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ կայացվել է ներպետական վերջնական որոշումը o Եվրոպական կոնվենցիայի 35-րդ հոդվածով սահմանված ընդունելիության պայմանները վերացվել են
91	Եվրոպական դատարանը 2004 թվականից ի վեր կիրառում է «պիլոտային վճիռների» պրակտիկան. o բոլոր գործերով՝ որպես ընդհանուր ընթացակարգ **· միայն այն դեպքերում, երբ առկա են կոնվենցիայի պարբերական խախտումներ՝ այդ կերպ Եվրոպական դատարանի վարույթից նվազեցնելով նման խախտում ունեցող գործերի ծավալը** o միայն այն դեպքերում, երբ նույն գործով մեկից ավելի դիմումատուներ են հանդես գալիս և վիճարկում են նույն իրավունքների խախտումները o ոչ մի գործով
92	ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի տեքստում ուղղակի չնշված, սակայն ըստ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի արդար դատաքննության իրավունքի կարևոր բաղադրատարր է հանդիսանում. o ողջամիտ ժամկետում արդար դատաքննության իրավունքը o մասնավոր կյանքի իրավունքը **· կողմերի հավասարությունը և մրցակցային դատավարությունը** o հրապարակային լսումների իրավունքը
93	Կողմերի հավասարությունն ըստ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի նշանակում է, որ. **· դատավարության յուրաքանչյուր կողմին պետք է ընձեռվի պատշաճ հնարավորություն ներկայացնելու իր գործը, ներառյալ ապացույցներն այնպիսի պայմաններում, որոնք նրա համար մյուս կողմի համեմատությամբ չեն ստեղծի անբարենպաստ վիճակ** o դատավարության առնվազն մի կողմին պետք է ընձեռվի պատշաճ հնարավորություն ներկայացնելու իր գործը o դատավարության յուրաքանչյուր կողմին պետք է ընձեռվի պատշաճ հնարավորություն ներկայացնելու իր գործը, ներառյալ ապացույցները, եթե դա պահանջում է հանրային շահը

	o դատավարության յուրաքանչյուր կողմին պետք է ընձեռվի պատշաճ հնարավորություն ներկայացնելու իր գործը, ներառյալ ապացույցները, թեկուզ այնպիսի պայմաններում, որոնք մյուս կողմի համեմատությամբ ստեղծում են անհավասար վիճակ
94	Եվրոպական կոնվենցիայի 14-րդ Արձանագրության համաձայն. o Կողմերի միջև բարեկամական կարգավորում ձեռք բերելու արդյունքում կայացված որոշման կատարումը Դատարանը վերահսկում է անմիջականորեն **· Կողմերի միջև բարեկամական կարգավորում ձեռք բերելու արդյունքում կայացված որոշումը փոխանցվում է Նախարարների կոմիտե, որը վերահսկում է որոշման մեջ սահմանված բարեկամական կարգավորման պայմանների կատարումը** o Բարեկամական կարգավորման կապակցությամբ որևէ լրացուցիչ կարգավորում չի սահմանվում o Բարեկամական կարգավորման ընթացակարգերը չեն կարող իրականացվել դատավարության սկզբնական փուլում
95	Ըստ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի՝ արտահայտվելու ազատության տեսանկյունից ու՞մ գործունեության նկատմամբ են քննադատության շրջանակներն ավելի լայն. o դատավորների o սահմանադրական դատարանի անդամների **· քաղաքական գործիչների և քաղաքացիական ծառայողների՝ իրենց ծառայողական պարտականությունները կատարելիս** o ֆիզիկական անձանց
96	Ըստ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի՝ ՄԻԵԿ-ի 11-րդ հոդվածով երաշխավորված միավորվելու իրավունքի կարևորագույն տարր է կազմում. **· անձանց կողմից իրավաբանական անձ ստեղծելու հնարավորությունը** o մասնավոր անձանց տեղեկություն տարածելու ազատությունը o մասնավոր կյանքի պաշտպանվածությունը o գործադուլի իրավունքը

97	Մարդու իրավունքների եվրոպական դատարանը. • գործերը քննում է հերթականությամբ՝ ըստ գործերը Եվրոպական դատարան ներկայացված ամսաթվերի • գործերը քննում է ըստ այբբենական հերթականության **• գործերը քննում է ըստ սահմանված առաջնահերթության՝ հիմք ընդունելով ենթադրյալ խախտման բնույթը** • գործերը քննելիս չի կիրառում որևէ առաջնահերթություն
98	Եվրոպական դատարանն իրավասու է գանգատի ապահովման միջոց կիրառել, եթե գտնում է, որ դրա անհրաժեշտությունը կա. • Եվրոպական դատարանը դեռ չի անդրադարձել այս հարցին **• այո** • ոչ • այո, սակայն դրա համար անհրաժեշտ է տվյալ գործով պատասխանող մասնակից պետության համաձայնությունը
99	ՄԻԵԿ-ի 3-րդ հոդվածի ենթադրյալ խախտումների վերաբերյալ գործերով գործում եղած ապացույցներն ուսումնասիրելիս Եվրոպական դատարանը. **• կիրառում է <<ողջամիտ կասկածից վեր>>ապացուցման ստանդարտը** o չի կիրառում որևէ ստանդարտ oկիրառում է տարբեր ստանդարտներ oհիմք է ընդունում պատասխանող մասնակից պետության դատարանների կողմից սահմանված ստանդարտը, որը հավասարազոր է <<ողջամիտ կասկածից վեր>>ապացուցման ստանդարտին
100	2014թ. հունվարի 1-ից Եվրոպական դատարանի Կանոնների նոր խմբագրությամբ 47-րդ կանոնը կսկսի գործել, համաձայն որի. **• Եվրոպական դատարանը չի ընդունի այն դիմումները, որոնք լրացված չեն ամբողջությամբ և չեն պարունակում գործին վերաբերելի փաստաթղթերի պատճենները** • 47-րդ կանոնը չի նախատեսում որևէ փոփոխություն դիմումների ընդունման առնչությամբ • Եվրոպական դատարանը չի ընդունի այն դիմումները, որոնք լրացված չեն Դատարանի պաշտոնական լեզուներից մեկով, այն է՝ անգլերեն կամ ֆրանսերեն • Եվրոպական դատարանը չի ընդունի այն դիմումները, որոնք 20 էջից ավելի են

№	2014 թվականի գարնանային հոսք ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՐՑԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ
1	Ու՞մ սեփականությունն են համարվում վարձակալած գույքի ամորտիզացիոն միջոցների հաշվին կատարված բարելավումները. · **վարձատուի** o վարձակալի o վարձատուի և վարձակալի o ենթավարձակալի
2	Ըստ օրենքի ժառանգների թվին են պատկանում այն անաշխատունակ անձինք, ովքեր մինչև ժառանգատուի մահն առնվազն. o կես տարի գտնվել են նրա խնամքի ներքո · **մեկ տարի գտնվել են նրա խնամքի ներքո** o երկու տարի գտնվել են նրա խնամքի ներքո o երեք տարի գտնվել են նրա խնամքի ներքո
3	Գույքի նկատմամբ ընդհանուր սեփականությունը համարվում է բաժնային, եթե. o սեփականատերերի քանակը ավելին է, քան երկուսը · **օրենքով դրա նկատմամբ սահմանված չէ համատեղ սեփականություն** o օրենքով դրա նկատմամբ սահմանված է ընդհանուր սեփականություն o այլ բան նախատեսված չէ պայմանագրով կամ գործարար շրջանառության սովորույթներով
4	Սեփականության իրավունքը դադարում է սեփականատիրոջ կողմից. · **իր գույքը ոչնչացնելու դեպքում** o իր գույքն անհատույց օգտագործման հանձնելու դեպքում o գույքը վնասելու դեպքում o գույքի վարձակալության պայմանագիր կնքելու դեպքում

5	Վարկային կազմակերպությունը «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով լիցենզիա ստացած. o ֆիզիկական անձն է, որն իրավունք ունի իրականացնել «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված գործունեության տեսակները **· իրավաբանական անձն է, որն իրավունք ունի իրականացնել «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված գործունեության տեսակները** o իրավաբանական անձն է, որն իրավունք ունի զբաղվել գործունեության ցանկացած տեսակով o իրավաբանական անձն է, որն իրավունք ունի իրականացնել «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքով սահմանված գործունեության տեսակները
6	Ինչպիսի՞ պատասխանատվություն է կրում դուստր ընկերությունը հիմնական ընկերակցության կամ ընկերության պարտքերի համար. **· պատասխանատվություն չի կրում** o համապարտ o սուբսիդիար o բարոյական
7	Լիակատար ընկերակցության մասնակիցների կողմից ընկերակցության գործերը համատեղ վարելու դեպքում յուրաքանչյուր գործարք կնքելու համար ու՞մ համաձայնությունն է պահանջվում. o ընկերակցության մասնակիցների երկու երրորդի **· ընկերակցության բոլոր մասնակիցների** o ընկերակցության մասնակիցների կեսից ավելիի o լիակատար ընկերներից որևիցե մեկի
8	Ի՞նչ հետևանք ունի լիակատար ընկերակցության մասնակցին շահույթի կամ վնասների բաշխումից մեկուսացնելու մասին համաձայնությունը. o առաջացնում է ընդհանուր բնույթի պարտավորություններ **· առոչինչ է** o ուժի մեջ է մտնում տվյալ մասնակցին այդ մասին հայտնելուց հետո o ենթակա է պետական գրանցման

9	Լիակատար ընկերակցությանը մասնակցելուց հրաժարվելը պետք է հայտարարվի ընկերակցությունից մասնակցի դուրս գալուց. o մեկ օր առաջ o մեկ ամիս առաջ o մեկ տարի առաջ **· առնվազն վեց ամիս առաջ**
10	Այլ կերպ ինչպե՞ս է կոչվում վստահության վրա հիմնված ընկերակցությունը. o լիակատար ընկերակցություն **· կոմանդիտ ընկերակցություն** o կախյալ ընկերակցություն o խառը ընկերակցություն
11	Եթե վստահության վրա հիմնված ընկերակցության ֆիրմային անվանման մեջ մտցված է ավանդատուի անունը, ապա ի՞նչ է դառնում այդ ավանդատուն. o կոմանդիտիստ o բաժնետեր **· լիակատար ընկեր** o հատուկ ավանդատու
12	Վարկային կազմակերպությունը կարող է ստեղծվել. o միայն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և բաժնետիրական ընկերության կազմակերպաիրավական ձևերով **· սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, բաժնետիրական ընկերության կամ առևտրային կոոպերատիվի կազմակերպաիրավական ձևերով** o միայն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, բաց բաժնետիրական ընկերության, ոչ առևտրային կոոպերատիվի և հիմնադրամի կազմակերպաիրավական ձևերով o միայն առևտրային կոոպերատիվի կազմակերպաիրավական ձևով
13	Ինչերի՞ է բաժանված բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը. o որոշակի թվով բաժնեմասերի **· որոշակի թվով բաժնետոմսերի** o փայերի o որոշակի թվով բաժինների

14	Ինչպե՞ս է կոչվում այն բաժնետիրական ընկերությունը, որի մասնակիցներն առանց մյուս մասնակիցների համաձայնության կարող են օտարել իրենց պատկանող բաժնետոմսերը. o հիմնադրամ **· բաց բաժնետիրական ընկերություն** o փակ բաժնետիրական ընկերություն o վստահության վրա հիմնված ընկերակցություն
15	Խնայողական միությունները կարող են ստեղծվել բացառապես. o սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ձևով **· կոոպերատիվների ձևով** o բաց բաժնետիրական ընկերության ձևով o փակ բաժնետիրական ընկերության ձևով
16	Փակ բաժնետիրական ընկերությունում ովքե՞ր ունեն այդ ընկերության այլ բաժնետերերի կողմից վաճառվող բաժնետոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունք. o ընկերության հիմնադիրները **· ընկերության բաժնետերերը** o ցանկացած անձ o առավել բարձր գին առաջարկած անձը
17	Վարկային կազմակերպության լիցենզիան. o 5 տարի է **· անժամկետ է** o 3 տարի է o 25 տարի է
18	Ու՞մ անդամության վրա է հիմնված կոոպերատիվը. o միայն քաղաքացիների **· քաղաքացիների և իրավաբանական անձանց** o միայն իրավաբանական անձանց o պետական և տեղական ինքնակառավարման մարմինների

19	Վարկային կազմակերպության լիցենզիան. o կարող է տրվել այլ անձանց օգտագործման, սակայն չի կարող օտարվել կամ գրավադրվել **· չի կարող այլ անձանց տրվել օգտագործման, օտարվել կամ գրավադրվել** o կարող է տրվել այլ անձանց օգտագործման և տնօրինման իրավունքով, սակայն չի կարող գրավադրվել o կարող է տրվել այլ անձանց օգտագործման, ինչպես նաև գրավադրվել
20	Ստորև թվարկվածներից ո՞ր պահանջմունքների բավարարման համար են ստեղծվում հասարակական միավորումները. o նյութական **· հոգևոր կամ ոչ նյութական** o տնտեսական o քաղաքական
21	Վարկային կազմակերպությունների գործունեության նկատմամբ վերահսկողության բացառիկ իրավունքը պատկանում է. o Համաշխարհային բանկին **· ՀՀ կենտրոնական բանկին** o ցանկացած առևտրային բանկի o ՀՀ արդարադատության խորհրդին
22	Որո՞նք կարող են իրենց ձեռնարկատիրական գործունեությունը համակարգելու նպատակով ստեղծել իրավաբանական անձանց միություններ. o ֆիզիկական անձինք o պետական մարմինները o ֆիզիկական և իրավաբանական անձինք **· առևտրային կազմակերպությունները**
23	Ապրանքների և ծառայությունների տեղաշարժման սահմանափակումներ կարող են մտցվել օրենքին համապատասխան, եթե դրանք անհրաժեշտ են. **· մարդկանց անվտանգության ապահովման, կյանքի և առողջության պաշտպանության, բնության ու մշակութային արժեքների պահպանության համար** o մարդկանց անվտանգության ապահովման, կյանքի և առողջության պաշտպանության, բնության ու մշակութային արժեքների պահպանության համար, հայցի ապահովում կիրառելու համար o մարդկանց անվտանգության ապահովման, կյանքի և առողջության պաշտպանության o մարդկանց անվտանգության ապահովման, բնության ու մշակութային արժեքների պահպանության համար

24	Վարկային կազմակերպությունները պարտավոր են. o ֆինանսական տարվա ավարտից հետո՝ մեկամսյա ժամկետում, մամուլում հրապարակել իրենց տարեկան ֆինանսական հաշվետվությունները և աուդիտային եզրակացությունը **· ֆինանսական տարվա ավարտից հետո՝ վեցամսյա ժամկետում, մամուլում հրապարակել իրենց տարեկան ֆինանսական հաշվետվությունները և աուդիտային եզրակացությունը** o ֆինանսական տարվա ավարտից հետո՝ վեցամսյա ժամկետում, մամուլում հրապարակել միայն իրենց տարեկան ֆինանսական հաշվետվությունները o ֆինանսական տարվա ավարտից հետո՝ մեկամսյա ժամկետում, մամուլում հրապարակել միայն աուդիտային եզրակացությունը
25	Ինչպե՞ս է կոչվում այլ (գլխավոր) գույքի սպասարկման համար նախատեսված և դրա հետ ընդհանուր նշանակությամբ կապված գույքը. **· պատկանելիք** o բաղադրատարր գույք o օժանդակ o փոխկապված
26	Ի՞նչ կարգով կարող են փոխանցվել անվանական արժեթղթով հավաստված իրավունքները. **· պահանջների զիջման (ցեսիայի) համար սահմանված կարգով** o կողմերի սահմանած կարգով o ակցեպտի համար սահմանված կարգով o փոխառության համար սահմանված կարգով
27	Ամուսնությունը կնքվում է. o քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ առանց ամուսնացող անձանց անմիջական ներկայությամբ **· քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ ամուսնացող անձանց պարտադիր ներկայությամբ** o վանական համալիրում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ ամուսնացող անձանցից որևէ մեկի պարտադիր ներկայությամբ o քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում՝ ամուսնական պայմանագրով սահմանված կարգով՝ ամուսնացող անձանցից որևէ մեկի պարտադիր ներկայությամբ

28	Ստորև թվարկվածներից ո՞րն արժեթուղթ չի հանդիսանում. o հասարակ մուրհակը o բաժնետոմսը **· ինդոսամենտը** o բանկային վկայագիրը
29	Ամուսինների իրավունքներն ու պարտականությունները ծագում են. o ամուսնական պայմանագրի ստորագրման պահից **· քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում ամուսնության պետական գրանցման պահից** o ամուսնական պայմանագրի նոտարական վավերացման պահից o քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում ամուսնության պետական գրանցումը մերժելու պահից
30	Նշվածներից ո՞րն է լիարժեք ճիշտ. o Անձը կարող է ամուսնանալ նաև 17 տարեկանում, եթե առկա է նրա ծնողների, որդեգրողների, դատարանի կամ հոգաբարձուի համաձայնությունը: Անձը կարող է ամուսնանալ նաև 14 տարեկանում, եթե առկա է նրա ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությունը, և ամուսնացող մյուս անձը առնվազն 16 տարեկան է **· Անձը կարող է ամուսնանալ նաև 17 տարեկանում, եթե առկա է նրա ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությունը: Անձը կարող է ամուսնանալ նաև 16 տարեկանում, եթե առկա է նրա ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությունը, և ամուսնացող մյուս անձը առնվազն 18 տարեկան է** o Անձը կարող է ամուսնանալ նաև 18 տարեկանում, եթե առկա է նրա ծնողների, որդեգրողների, դատարանի կամ հոգաբարձուի համաձայնությունը: Անձը կարող է ամուսնանալ նաև 15 տարեկանում, եթե առկա է նրա ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությունը, և ամուսնացող մյուս անձը առնվազն 18 տարեկան է o Անձը կարող է ամուսնանալ նաև 16 տարեկանում, եթե առկա է նրա ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությունը: Անձը կարող է ամուսնանալ նաև 14 տարեկանում, եթե առկա է նրա ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությունը, և ամուսնացող մյուս անձը առնվազն 18 տարեկան է

31	Գործարար շրջանառության սովորույթները չեն կիրառվում, եթե **· հակասում են քաղաքացիական օրենսդրության պարտադիր դրույթներին կամ պայմանագրին** o հակասում են քաղաքացիական օրենսդրության ոչ պարտադիր դրույթներին և պայմանագրին o հակասում են քաղաքացիական օրենսդրության ոչ պարտադիր դրույթներին o հակասում են քրեական օրենսդրության ոչ պարտադիր դրույթներին
32	Ինչպիսի՞ն կարող է լինել պարտատոմսը. o օրդերային **· ըստ ներկայացնողի կամ անվանական** o միայն անվանական o միայն ըստ ներկայացնողի
33	Ինչպիսի՞ն չի կարող լինել բաժնետոմսը. o հասարակ o արտոնյալ o ազատ շրջանառու կամ սահմանափակ շրջանառու **· օրդերային**
34	Ինչպե՞ս է կոչվում սուբյեկտի՝ օրենքով և այլ իրավական ակտերով ճանաչված ու պահպանվող իրավունքը՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը. o տիրապետման իրավունք **· սեփականության իրավունք** o վարձակալության իրավունք o սերվիտուտ
35	Ինչպե՞ս է կոչվում գույքից դրա օգտակար բնական հատկությունները քաղելու, ինչպես նաև դրանից օգուտ ստանալու իրավաբանորեն ապահովված հնարավորությունը. o տնօրինման իրավունք o տիրապետման իրավունք **· օգտագործման իրավունք** o երաշխիք

36	Ինչպե՞ս է կոչվում գույքի ճակատագիրը որոշելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունը. **· տնօրինման իրավունք** o տիրապետման իրավունք o օգտագործման իրավունք o սերվիտուտ
37	Ո՞ւմ սեփականությունն են պետական բյուջեի միջոցները. o համայնքների **· Հայաստանի Հանրապետության** o ՀՀ քաղաքացիների o քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց
38	Ստորև թվարկվածներից ո՞րը գույքային իրավունք չէ. o սեփականության իրավունքը o գրավի իրավունքը **· հեղինակության իրավունքը** o սերվիտուտի իրավունքը
39	Ո՞ր պահից է ծագում սեփականության իրավունքը նոր ստեղծված անշարժ գույքի նկատմամբ. **· դրա պետական գրանցման պահից** o դրա ստեղծման պահից o դրա ստեղծման մասին համաձայնության ձեռքբերման պահից o ՀՀ կառավարության կողմից սահմանված պահից
40	Նշվածներից ո՞րն է լիարժեք համապատասխանում ՀՀ քաղաքացիական օրենսդրությանը. **· օրենքի անալոգիայի կիրառման անհնարինության դեպքում կողմերի իրավունքները և պարտականությունները որոշվում են՝ ելնելով քաղաքացիական օրենսդրության սկզբունքներից** o օրենքի անալոգիայի կիրառման անհնարինության դեպքում կողմերի իրավունքները և պարտականությունները որոշվում են՝ ելնելով քրեական օրենսդրության սկզբունքներից o իրավունքի անալոգիայի կիրառման անհնարինության դեպքում կողմերի միայն իրավունքները որոշվում են՝ ելնելով քաղաքացիական օրենսդրության սկզբունքներից o օրենքի անալոգիայի կիրառման անհնարինության դեպքում կողմերից միայն

	մեկի իրավունքները և պարտականությունները որոշվում են՝ ելնելով քաղաքացիական օրենսդրության սկզբունքներից
41	Ո՞ր պահից է ծագում այն գույքը ձեռք բերողի սեփականության իրավունքը, որի նկատմամբ իրավունքը ենթակա է պետական գրանցման. **• դրա գրանցման պահից** o գույքը ձեռք բերողին հանձնելու պահից o գույքը ձեռք բերողի կողմից ընդունելու պահից o գույքը ձեռք բերողի և այն հանձնողի կողմից որոշված պահից
42	Ի՞նչ է համարվում այն գույքը, որը չունի սեփականատեր, կամ որի սեփականատերն անհայտ է կամ հրաժարվել է դրա նկատմամբ սեփականության իրավունքից. o անշարժ գույք o շարժական գույք **• տիրազուրկ գույք** o լքված գույք
43	Ո՞ր նորմերի կիրառումն անալոգիայով չի թույլատրվում. **• քաղաքացիական իրավունքները սահմանափակող և պատասխանատվություն սահմանող** o միայն քաղաքացիական իրավունքները սահմանափակող o ցանկացած նորմի o միայն պատասխանատվություն սահմանող

44	Նշվածներից ո՞րը չի հանդիսանում ամուսնության կնքման իրավական արգելք. o ամուսնության կնքումն այն անձանց միջև, որոնցից թեկուզև մեկը գտնվում է օրենքով սահմանված կարգով գրանցված մեկ այլ ամուսնության մեջ o ամուսնության կնքումը մերձավոր ազգականների (ուղիղ վերընթաց ու վարընթաց ազգականների՝ ծնողների ու զավակների, պապի, տատի ու թոռների, ինչպես նաև հարազատ և համահայր կամ համամայր եղբայրների ու քույրերի, մորաքրոջ, հորաքրոջ, հորեղբոր և մորեղբոր զավակների) միջև **· ամուսիններից մեկի այլ կրոն դավանելը** o ամուսնության կնքումը որդեգրողների և որդեգրվածների միջև
45	Առանց հողամասի կամ այլ գույքի, որում հայտնաբերվել է գանձը, սեփականատիրոջ համաձայնությամբ պեղումներ կատարող կամ արժեքներ որոնող անձի կողմից հայտնաբերման դեպքում, ու՞մ է հանձնվում գանձը. **· հողամասի կամ գույքի սեփականատիրոջը** o պեղումներ կատարող անձին o պետությանը o համայնքին
46	Ու՞մ սեփականությանն է հանձնվում պատմության և մշակույթի հուշարձաններ պարունակող գանձը. o գանձը հայտնաբերած անձի o այն հողամասի սեփականատիրոջ, որտեղ հայտնաբերվել է գանձը **· պետության** o համայնքի
47	Քաղաքացիները և իրավաբանական անձինք իրենց պատկանող քաղաքացիական իրավունքները՝ ներառյալ դրանց պաշտպանության իրավունքը, իրականացնում են. o պետության հայեցողությամբ **· իրենց հայեցողությամբ** o դատարանի հայեցողությամբ o ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հայեցողությամբ

48	Ո՞ր պահից է ձեռքբերման վաղեմության ուժով անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունք ծագում գույքը ձեռք բերած անձի մոտ. o գույքը որպես սեփականը տիրապետելու պահից o ձեռքբերման վաղեմության համար օրենքով սահմանված ժամկետը լրանալու պահից o ՀՀ կառավարության կողմից սահմանված պահից **· այդ իրավունքի պետական գրանցման պահից**
49	Նշվածներից ո՞րն է լիարժեք համապատասխանում ՀՀ քաղաքացիական օրենսդրությանը. o Իրավաբանական անձանց այն գործողությունները, որոնք իրականացվում են բացառապես այլ անձին վնաս և օգուտ պատճառելու մտադրությամբ, ինչպես նաև պարտականությունն այլ ձևով չարաշահելը չի թույլատրվում **· Քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողությունները, որոնք իրականացվում են բացառապես այլ անձի վնաս պատճառելու մտադրությամբ, ինչպես նաև իրավունքն այլ ձևով չարաշահելը չի թույլատրվում** o Քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողությունները, որոնք իրականացվում են բացառապես այլ անձի վնաս պատճառելու մտադրությամբ, ինչպես նաև իրավունքն այլ ձևով չարաշահելը թույլատրվում է o Քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողությունները, որոնք իրականացվում են բացառապես այլ անձի օգուտ պատճառելու մտադրությամբ, ինչպես նաև իրավունքն այլ ձևով չչարաշահելը չի թույլատրվում
50	Երաշխիքային ժամկետը սկսվում է. o ապրանքն արտադրելու պահից o ապրանքը վաճառելու պահից o ապրանքի թերությունները հայտնաբերելու պահից **· ապրանքը գնորդին հանձնելու պահից, եթե այլ բան նախատեսված չէ առուվաճառքի պայմանագրով**
51	Մրցակցության սահմանափակման նպատակներով քաղաքացիական իրավունքներն օգտագործել, ինչպես նաև շուկայում գերիշխող դրությունը չարաշահել o թույլատրվում է **· չի թույլատրվում** o թույլատրվում է օրենքով սահմանված կարգով o թույլատրվում է օրենքով և դատարանի որոշմամբ սահմանված չափով և կարգով

52	Բանկային վկայագիրը կարող է լինել. **· ըստ ներկայացնողի կամ անվանական** o փաստացի և ըստ ներկայացնողի o միայն անվանական o փաստացի և հավանական
53	Ու՞մ սեփականությունն է ամուսնության ընթացքում ամուսինների ձեռք բերած գույքը, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ նրանց միջև կնքված պայմանագրով. o ամուսիններից յուրաքանչյուրի անձնական սեփականությունը o ամուսինների բաժնային սեփականությունը o ամուսինների զավակների սեփականությունը **· ամուսինների համատեղ սեփականությունը**
54	Ապրանքի պիտանիության ժամկետը որոշվում է. o դրա վաճառքի օրվանից հաշվվող ժամանակահատվածով o ապրանքը գնորդին հանձնելու օրվանից հաշվվող ժամանակահատվածով **· դրա պատրաստման օրվանից հաշվվող ժամանակահատվածով, որի ընթացքում ապրանքը պիտանի է օգտագործման** o կողմերի համաձայնությամբ որոշված ժամանակահատվածով
55	Եթե ապրանքի համար սահմանված է երաշխիքային ժամկետ, գնորդն իրավունք ունի ապրանքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել. o պայմանով, որ առուվաճառքի պայմանագրով սահմանված լիներ այդ իրավունքը **· պայմանով, որ թերությունները հայտնաբերվել են երաշխիքային ժամկետի ընթացքում** o պայմանով, որ թերությունները հայտնաբերվել են երաշխիքային ժամկետի ավարտից ողջամիտ ժամկետում o պայմանով, որ թերությունները հայտնաբերվել են ապրանքի պիտանիության ժամկետում
56	Փոխադրման կամ փոստով առաքման ենթակա ապրանքի թերությունների հայտնաբերման ժամկետը հաշվարկվում է. o ապրանքն առաքման հանձնելու օրվանից **· ապրանքը նշանակման վայրը հասնելու օրվանից** o ապրանքն արտադրելու օրվանից o ապրանքը գնելու օրվանից

57	Ու՞մ սեփականությունն է ամուսնության ընթացքում ամուսիններից մեկի նվեր կամ ժառանգություն ստացած գույքը. o նրանց համատեղ սեփականությունը **· նվեր կամ ժառանգություն ստացած ամուսնու սեփականությունը** o նրանց բաժնային սեփականությունը o նրանց զավակների սեփականությունը
58	Ի՞նչ ձևով պետք է կնքվի գրավի պայմանագիրը. **· գրավոր** o գրավոր և ենթարկվի նոտարական վավերացման o բանավոր o կողմերի պայմանավորված որոշակի ձևով
59	Եթե մշտական ռենտայի պայմանագրով սահմանված չեն ռենտա վճարելու ժամկետները, ապա ինչպե՞ս պետք է վճարվի մշտական ռենտան. o յուրաքանչյուր տարվա վերջում o յուրաքանչյուր ամիս o ռենտա ստացողի պահանջով **· յուրաքանչյուր օրացուցային եռամսյակի վերջում**
60	Անձն ունի իր քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանության իրավունք. o պայմանագրով չարգելված բոլոր եղանակներով **· օրենքով չարգելված բոլոր եղանակներով** o օրենքով արգելված բոլոր եղանակներով o պայմանագրով արգելված բոլոր եղանակներով
61	Մշտական ռենտա ստացողներ կարող են լինել. o միայն քաղաքացիները o միայն իրավաբանական անձինք **· միայն քաղաքացիները, ինչպես նաև ոչ առևտրային կազմակերպությունները, եթե դա չի հակասում օրենքին և համապատասխանում է նրանց գործունեության նպատակներին** o ցանկացած անձ

62	Ի՞նչ է համարվում այն գրավը, որի առարկան անցնում է գրավառուի տիրապետմանը. o հիփոթեք **· գրավական** o կոշտ գրավ o հաջորդող գրավ
63	Եթե իրավունքը խախտած անձը դրա հետևանքով ստացել է եկամուտներ, ապա անձը, ում իրավունքը խախտվել է, մյուս վնասների հետ միասին բաց թողնված օգուտի հատուցման պահանջի. o իրավունք ունի այդ եկամուտներից պակաս չափով **· իրավունք ունի այդ եկամուտներից ոչ պակաս չափով** o իրավունք չունի o իրավունք ունի, եթե այդ մասին նշված է պայմանագրի մեջ
64	Մշտական ռենտայի դիմաց անվճար հանձնված գույքի պատահական կորստի կամ պատահական վնասվածքի ռիսկը կրում է. o ռենտա ստացողը o համապարտ՝ ռենտա ստացողը և վճարողը o ոչ ոք **· ռենտա վճարողը**
65	Ի՞նչ է համարվում անշարժ գույքի գրավը, ինչպես նաև հողամասի կառուցապատման իրավունքի գրավը. **· հիփոթեք** o գրավական o կոշտ գրավ o հաջորդող գրավ
66	Եթե այլ բան նախատեսված չէ ցմահ ռենտայի պայմանագրով, ապա թույլատրվում է ցմահ ռենտա սահմանել հօգուտ. o միայն մի քաղաքացու **· մի քանի քաղաքացիների, որոնց բաժինները ռենտա ստանալու իրավունքում ճանաչվում են հավասար** o երկուսից ոչ ավելի քաղաքացիների o երեքից ոչ ավելի քաղաքացիների

67	Նշվածներից ո՞րն է լիարժեք համապատասխանում ՀՀ քաղաքացիական օրենսդրությանը. o Քաղաքացու միայն պատվի պաշտպանությունը ցանկացած անձանց պահանջով թույլատրվում է նաև նրա մահից հետո **· Քաղաքացու պատվի և արժանապատվության պաշտպանությունը շահագրգիռ անձանց պահանջով թույլատրվում է նաև նրա մահից հետո** o Քաղաքացու պատվի և արժանապատվության պաշտպանությունը շահագրգիռ անձանց պահանջով թույլատրվում է նաև նրա մահից հետո մեկ ամսվա ընթացքում o Քաղաքացու միայն արժանապատվության պաշտպանությունը ցանկացած անձանց պահանջով թույլատրվում է նաև նրա մահից հետո
68	Ի՞նչ ժամկետում կարող է ներկայացվել առոչինչ գործարքի անվավերության հետևանքների կիրառման մասին հայցը դրա կատարման օրվանից. **· տասը տարվա ընթացքում** o առանց ժամկետի սահմանափակման o մեկ տարվա ընթացքում o երեք տարվա ընթացքում
69	Ամուսնության կնքման իրավական արգելք է. o ամուսնական պայմանագրի բացակայությունը o ամուսնության կնքումն այն անձանց միջև, որոնցից թեկուզև մեկին դատարանը ազատազրկման ձևով պատիժ է նշանակել **· ամուսնության կնքումն այն անձանց միջև, որոնցից թեկուզև մեկին դատարանը ճանաչել է անգործունակ** o ամուսնության կնքումն այն անձանց միջև, որոնցից թեկուզև մեկին դատարանը ճանաչել է սահմանափակ գործունակ
70	Եթե անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորող տեղեկությունները տարածած անձին պարզելն անհնար է, ապա անձը, ում մասին նման տեղեկություններ են տարածվել, իրավունք ունի դիմելու դատարան. o չտարածված տեղեկություններն իրականությանը չհամապատասխանող ճանաչելու պահանջով **· տարածված տեղեկություններն իրականությանը չհամապատասխանող ճանաչելու պահանջով** o տարածված տեղեկություններն իրականությանը մասնակի համապատասխանող ճանաչելու պահանջով o դատարան դիմելու իրավունք չունի

71	Եթե պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, ապա պարտավորության ծագումից հետո ի՞նչ ժամկետում այն պետք է կատարվի. o մեկամսյա ժամկետում o պարտապանի որոշած ժամկետում **· ողջամիտ ժամկետում** o պարտատիրոջ որոշած ժամկետում
72	Ստորև թվարկվածներից ինչո՞վ կարող է ապահովվել պարտավորությունների կատարումը. o հայցային վաղեմությամբ o քաղաքացիաիրավական պատասխանատվությամբ **· երաշխավորությամբ** o հետադարձ պահանջով
73	Նվիրառուն իրավունք ունի մինչև նվերն իրեն հանձնելը. **· ցանկացած պահի հրաժարվել դրանից** o միայն նվիրատուի համաձայնությամբ հրաժարվել դրանից o ցանկացած պահի հրաժարվել դրանից, եթե դա անշարժ գույք է o իրավունք չունի հրաժարվել նվերից
74	Նվիրատվության պայմանագիրը կնքվում է. o գրավոր, եթե պայմանագրի առարկան անշարժ գույք է o գրավոր, եթե նվերի արժեքը գերազանցում է նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկը o բանավոր, սակայն կողմերի ցանկությամբ կարող է կնքվել գրավոր **· գրավոր**
75	Ե՞րբ է ուժի մեջ մտնում երաշխիքը, եթե այլ բան նախատեսված չէ երաշխիքով. o պրինցիպալի պարտավորության կատարման օրվանից **· այն տալու օրվանից** o բենեֆիցիարի սահմանած օրվանից o այն տալուց մեկ տարի անց

76	Ի՞նչ ձևով պետք է կնքվի նախավճարի մասին համաձայնությունը. **· գրավոր** o գրավոր և ենթարկվի նոտարական վավերացման o բանավոր o կողմերի պայմանավորված որոշակի ձևով
77	Քաղաքացու իրավունակությունը ծագում է. o նրա ծննդյան պահին և դադարում պայմանագրում սահմանված ժամկետում **· նրա ծննդյան պահին և դադարում է մահվամբ** o նրա մահվան պահին o նրա ծննդյան պահից մեկ տարվա ընթացքում և դադարում մահվամբ
78	Եթե վարձակալության ժամկետը պայմանագրով որոշված չէ, ապա վարձակալության պայմանագիրը կնքված է համարվում. o մեկ տարի ժամկետով o երեք տարի ժամկետով o անորոշ ժամկետով, սակայն հինգ տարուց ոչ ավելի **· անորոշ ժամկետով**
79	Ամուսնալուծությունը կատարվում է. o միայն արտադատական կարգով o միայն դատական կարգով **· քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում՝ ՀՀ ընտանեկան օրենսգրքով նախատեսված դեպքերում և օրենսդրությամբ սահմանված կարգով, ինչպես նաև դատական կարգով** o ՀՀ-ում ամուսնալուծությունն արգելված է
80	Շենքը կամ շինությունը վարձատուի կողմից հանձնելը եւ վարձակալի կողմից դրա ընդունելն իրականացվում է. o բանավոր, վկաների ներկայությամբ o կողմերի ստորագրած փոխանցման ակտով o փոխանցման ակտով, որը ենթակա է նոտարական վավերացման **· փոխանցման ակտով կամ փոխանցման մասին կողմերի ստորագրած այլ փաստաթղթով**

81	Նշվածներից ո՞րն է լիարժեք համապատասխանում ՀՀ քաղաքացիական օրենսդրությանը. o Քաղաքացու անվան փոխելը հիմք չէ նախորդ անվամբ ձեռք բերված նրա միայն պարտականությունները փոփոխելու համար **· Քաղաքացու անվան փոխելը հիմք չէ նախորդ անվամբ ձեռք բերված նրա իրավունքները և պարտականությունները դադարելու կամ փոփոխելու համար** o Քաղաքացու անվան փոխելը հիմք է նախորդ անվամբ ձեռք բերված նրա իրավունքները և պարտականությունները դադարելու կամ փոփոխելու համար o Քաղաքացու անվան փոխելը հիմք չէ նախորդ անվամբ ձեռք բերված նրա միայն իրավունքները դադարելու համար
82	Բնակելի տարածության վարձակալության պայմանագրի օբյեկտ կարող է լինել. o բնակության համար պիտանի բնակելի տարածությունը **· մշտական բնակության համար պիտանի բնակելի տարածությունը** o ժամանակավոր բնակության համար պիտանի բնակելի տարածությունը o բնակելի տարածությունը
83	Նշվածներից ո՞րն է լիարժեք համապատասխանում ՀՀ քաղաքացիական օրենսդրությանը. o Քաղաքացին պարտավոր չէ իր պարտապաններին և պարտատերերին տեղյակ պահել անունը փոխելու մասին ու չի կրում իր անունը փոխելու վերաբերյալ այդ անձանց մոտ տեղեկությունների բացակայության հետևանքով առաջացած վնասների ռիսկը **· Քաղաքացին պարտավոր է իր պարտապաններին և պարտատերերին տեղյակ պահել անունը փոխելու մասին ու կրում է իր անունը փոխելու վերաբերյալ այդ անձանց մոտ տեղեկությունների բացակայության հետևանքով առաջացած վնասների ռիսկը** o Քաղաքացին իրավունք ունի իր պարտատերերին տեղյակ պահել անունը փոխելու մասին ու կրում է իր անունը փոխելու վերաբերյալ այդ անձանց մոտ տեղեկությունների բացակայության հետևանքով առաջացած վնասների ռիսկը o Քաղաքացին իրավունք ունի իր պարտապաններին տեղյակ պահել անունը փոխելու մասին ու կրում է իր անունը փոխելու վերաբերյալ այդ անձանց մոտ տեղեկությունների բացակայության հետևանքով առաջացած վնասների ռիսկը
84	Ամուսիններից մեկի դիմումի հիման վրա ամուսնալուծությունը կատարվում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում, եթե մյուս ամուսինը. o դատարանի կողմից ճանաչվել է սահմանափակ գործունակ o մյուս ամուսինը չի ցանկանում ամուսնալուծվել **· դատարանի կողմից ճանաչվել է անհայտ բացակայող** o դատապարտվել է ազատազրկման՝ երեք ամսից ոչ պակաս ժամկետով

85	Ամուսիններից մեկի դիմումով ամուսնալուծության գործեր քննելիս դատարանը. o պարտավոր է միջոցներ ձեռնարկել ամուսիններին հաշտեցնելու համար և իրավունք ունի գործի քննությունը հետաձգել՝ հաշտվելու համար ամուսիններին տրամադրելով մինչև երեքամսյա ժամկետ o իրավունք չունի միջոցներ ձեռնարկել ամուսիններին հաշտեցնելու համար, սակայն իրավունք ունի գործի քննությունը հետաձգել՝ հաշտվելու համար ամուսիններին տրամադրելով մինչև երեք տարի ժամկետ **· իրավունք ունի միջոցներ ձեռնարկել ամուսիններին հաշտեցնելու համար և իրավունք ունի գործի քննությունը հետաձգել՝ հաշտվելու համար ամուսիններին տրամադրելով մինչև երեքամսյա ժամկետ** o պարտավոր է միջոցներ ձեռնարկել ամուսիններին հաշտեցնելու համար և իրավունք ունի գործի քննությունը կարճել՝ հաշտվելու համար ամուսիններին տրամադրելով մինչև երեքամսյա ժամկետ
86	Ժառանգության պարտադիր բաժին է համարվում ժառանգի իրավունքը՝ անկախ կտակի բովանդակությունից. **· ժառանգելու այն բաժնի առնվազն կեսը, որը նրան կհասներ ըստ օրենքի ժառանգելու դեպքում** o ժառանգելու այն բաժնի առնվազն մեկ երրորդը, որը նրան կհասներ ըստ օրենքի ժառանգելու դեպքում o ժառանգելու այն բաժնի առնվազն մեկ չորրորդը, որը նրան կհասներ ըստ օրենքի ժառանգելու դեպքում o ժառանգելու այն բաժնի առնվազն երկու երրորդը, որը նրան կհասներ ըստ օրենքի ժառանգելու դեպքում
87	Ժառանգության բացման վայրը ժառանգատուի. o հաշվառման վերջին վայրն է **· բնակության վերջին վայրն է** o ծննդյան վայրն է o կտակում նշված վայրն է
88	Անարժան ժառանգներին ժառանգությունից մեկուսացնելու պահանջով դատարան դիմելու իրավունք ունեն. o ցանկացած անձինք o ժառանգատուի իրավահաջորդները **· այն անձինք, որոնց համար նման մեկուսացումն առաջացնում է ժառանգության հետ կապված գույքային հետևանքներ** o ժառանգատուի առաջին հերթի ժառանգները

89	Կտակարարի գույքի չկտակված մասը. o բաշխվում է կտակում նշված ժառանգների միջև հավասար բաժիններով **· բաշխվում է ըստ օրենքի ժառանգների միջև** o բաշխվում է դատարանի վճռի համաձայն o անցնում է Հայաստանի Հանրապետությանը
90	Կտակարարն իրավունք ունի ժառանգությունից զրկել ըստ օրենքի ժառանգներին. o միայն օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում o միայն դատարանի վճռի հիմքով **· առանց պատճառների բացատրության** o իրավունք չունի զրկել
91	Կտակարարը փակ կտակը հանձնում է նոտարին. o մեկ վկայի ներկայությամբ o երեք վկաների ներկայությամբ **· երկու վկաների ներկայությամբ** o առանց վկաների մասնակցության
92	Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար քաղաքացին իրավունք ունի ստեղծել. o գյուղատնտեսական ընկերություններ կամ չլինել դրանց մասնակիցը o ոչ տնտեսական ընկերություններ, միություններ **· տնտեսական ընկերություններ կամ լինել դրանց մասնակիցը** o տնտեսական ընկերություններ և լինել դրանց մասնակիցը
93	Նշվածներից ո՞րն է լիարժեք համապատասխանում ՀՀ քաղաքացիական օրենսդրությանը. o Քաղաքացին իր պարտավորությունների համար պատասխանատու չէ իրեն պատկանող ամբողջ գույքով, բացառությամբ այն գույքի, որի վրա, օրենքին համապատասխան, բռնագանձում չի տարածվում o Քաղաքացին իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով առանց որևէ բացառության **· Քաղաքացին իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով, բացառությամբ այն գույքի, որի վրա, օրենքին համապատասխան, բռնագանձում չի տարածվում** o Անձն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով, բացառությամբ այն գույքի, որի վրա, պայմանագրին համապատասխան, բռնագանձում չի տարածվում

94	Կտակակատարն իրավունք ունի ժառանգությունը պահպանելու, կառավարելու ու կտակը կատարելու հետ կապված դատական և այլ գործերը վարել. o բոլոր ժառանգների անունից **• իր անունից** o ժառանգատուի անունից o ժառանգների համաձայնությամբ մեկ ժառանգի անունից
95	Կտակարարն իրավունք ունի՞ այն ժառանգի վրա, որին անցնում է բնակելի տունը (բնակարանը), պարտավորություն դնել, որպեսզի նա տունը կամ դրա որոշակի մասը տրամադրի այլ անձի (անձանց)՝ ցմահ օգտագործման. o այո, եթե կտակը կազմելու ժամանակ այդ պայմանը համաձայնեցվել է ժառանգի հետ o այո, եթե ցմահ օգտագործողը ծնողազուրկ անչափահաս երեխա է **• այո, առանց որևէ պայմանի** o իրավունք չունի
96	Եթե այլ բան նախատեսված չէ կտակով, ապա շահառուին տրամադրված բնակելի տան ցմահ օգտագործման իրավունքը. o հիմք է այդ տանը նրա ընտանիքի անդամների բնակության համար **• հիմք չէ այդ տանը նրա ընտանիքի անդամների բնակության համար** o հիմք է այդ տանը նրա անչափահաս ընտանիքի անդամների բնակության համար o հիմք է այդ տանը նրա անգործունակ ընտանիքի անդամների բնակության համար
97	Ըստ օրենքի ժառանգության դեպքում ժառանգատուի մայրական կողմի պապը և տատը ժառանգման են հրավիրվում. o երկրորդ հերթի ժառանգների հետ o առաջին հերթի ժառանգների հետ **• երրորդ հերթի ժառանգների հետ** o չորրորդ հերթի ժառանգների հետ
98	Մինչև ժառանգության բացումը մահացած ըստ օրենքի ժառանգի բաժինն անցնում է. o նրա երեխաներին ու ամուսնուն և նրանց միջև բաշխվում է հավասարապես o նրա ծնողներին և նրանց միջև բաշխվում է հավասարապես o նրա առաջին հերթի ժառանգներին և նրանց միջև բաշխվում է հավասարապես **• նրա երեխաներին և նրանց միջև բաշխվում է հավասարապես**

99	Քաղաքացուն դատարանով սնանկ ճանաչելու դեպքում պարտատերերի պահանջների բավարարման կարգը և դադարման հիմքերը, ինչպես նաև պարտատերերի պահանջների բավարարման առանձնահատկությունները սահմանվում են սնանկության հարաբերությունները կարգավորող. o դատական ակտով o կառավարության հրահանգով **· օրենքով** o միայն սնանկության գործերով կառավարչի որոշմամբ
100	Ժառանգությունը կարող է ընդունվել ժառանգության բացման օրվանից. o մեկ տարվա ընթացքում o ցանկացած ժամանակ **· վեց ամսվա ընթացքում** o երեք ամսվա ընթացքում
101	Անձը, որն անշարժ գույքի սեփականատերը չէ, տվյալ գույքի նկատմամբ ձեռք է բերում սեփականության իրավունք, եթե այն. **· տասը տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ տիրապետել է որպես սեփական գույք** o հինգ տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ տիրապետել է որպես սեփական գույք o տասը տարվա ընթացքում բարեխղճորեն և բացահայտ տիրապետել է որպես սեփական գույք o տասը տարվա ընթացքում բացահայտ և անընդմեջ տիրապետել է որպես սեփական գույք
102	Կոոպերատիվները կարող են ստեղծվել. o միայն որպես ոչ առևտրային կազմակերպություններ **· որպես և առևտրային, և ոչ առևտրային կազմակերպություններ** o միայն որպես առևտրային կազմակերպություններ o որպես հիմնարկ կամ ներկայացուցչություն

103	Փոքրահասակի գործարքներով՝ ներառյալ նրա կողմից ինքնուրույն կնքված գործարքները, գույքային պատասխանատվություն են կրում նրա ծնողները, որդեգրողները կամ խնամակալը, եթե չապացուցեն, որ. o պարտավորությունն իրենց մեղքով է խախտվել: Այդ անձինք, օրենքին համապատասխան, պատասխանատվություն են կրում նաև փոքրահասակի պատճառած վնասի համար o պարտավորությունն իրենց մեղքով չի խախտվել: Այդ անձինք, օրենքին համապատասխան, պատասխանատվություն չեն կրում նաև փոքրահասակի պատճառած վնասի համար **· պարտավորությունն իրենց մեղքով չի խախտվել: Այդ անձինք, օրենքին համապատասխան, պատասխանատվություն են կրում նաև փոքրահասակի պատճառած վնասի համար** o բավարար դրամական միջոցներ չունեն և չեն ցանկանում հատուցել պատճառած վնասի համար
104	Խնամակալություն սահմանվում է . o տասնչորս տարին լրացած անչափահասների, ինչպես նաև հոգեկան խանգարման հետևանքով դատարանով անգործունակ ճանաչված քաղաքացիների նկատմամբ o տասնչորս տարին լրացած անչափահասների, ինչպես նաև հոգեկան խանգարման հետևանքով դատարանով գործունակ ճանաչված քաղաքացիների նկատմամբ **· տասնչորս տարին չլրացած անչափահասների, ինչպես նաև հոգեկան խանգարման հետևանքով դատարանով անգործունակ ճանաչված քաղաքացիների նկատմամբ** o տասնչորս տարին լրացած անչափահասների, ինչպես նաև ֆիզիկական խանգարման հետևանքով անգործունակ ճանաչված անձանց նկատմամբ
105	Ու՞մ սեփականությունն է հիմնադիրների՝ հիմնադրամին հանձնված գույքը. o պետության o հիմնադիրների o հիմնադրամի աշխատանքային կոլեկտիվի **· հիմնադրամի**
106	Բաց բաժնետիրական ընկերությունը քանի՞ տարին մեկ է պարտավոր, ի գիտություն բոլորի, հրապարակել իր տարեկան հաշվետվությունը և հաշվապահական հաշվեկշիռը. o հինգ տարին մեկ o երեք տարին մեկ **· ամեն տարի** o բաց բաժնետիրական ընկերությունը օրենքով սահմանված նման պարտավորություն չունի

107	Հոգաբարձությունը սահմանվում է. o տասնչորսից մինչև տասնյոթ տարեկան անչափահասների, ինչպես նաև սահմանափակ գործունակ չճանաչված քաղաքացիների նկատմամբ o տասնչորսից մինչև տասնութ տարեկան չափահասների, ինչպես նաև անսահմանափակ գործունակ ճանաչված քաղաքացիների նկատմամբ **· տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասների, ինչպես նաև սահմանափակ գործունակ ճանաչված քաղաքացիների նկատմամբ** o տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասների, ինչպես նաև անսահմանափակ գործունակ ճանաչված քաղաքացիների նկատմամբ
108	Ամուսնալուծության համար ամուսինների փոխադարձ համաձայնության առկայության դեպքում դատարանը լուծում է ամուսնությունը ամուսինների կողմից ամուսնալուծության մասին դիմում տալու օրվանից ոչ ուշ. o եռամսյա ժամկետում o վեցօրյա ժամկետում **· մեկամսյա ժամկետում** o մեկամյա ժամկետում
109	Ամուսնությունը, որը լուծվում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմնում, համարվում է դադարած. o ամուսնալուծության վկայականի հանձնումից երեք օր հետո o ամուսնալուծության վերաբերյալ դիմում ներկայացնելու օրվանից **· ամուսնալուծության պետական գրանցման պահից** o դատական ակտի հրապարակման պահից
110	Ամուսնությունը, որը լուծվում է դատական կարգով, համարվում է դադարած. o ամուսնալուծության պետական գրանցման պահից o ամուսնալուծության վերաբերյալ դիմում ներկայացնելու օրվանից **· դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից** o դատական ակտի հրապարակման պահից

111	Ամուսնալուծված ամուսինների նոր ամուսնության պետական գրանցում չի կատարվում. o առանց Հայաստանյաց առաքելական եկեղեցու համաձայնության o առանց երեխաների համաձայնության **· առանց ամուսնալուծության վկայականի առկայության** o առանց օրենքով սահմանված տույժը և տուգանքը վճարելու
112	Երբ մատակարարման պայմանագրով նախատեսված կոմպլեկտի մեջ մտնող ապրանքների մատակարարումն իրականացվում է առանձին մասերով, ապա ե՞րբ է վճարում գնորդը. **· կոմպլեկտի մեջ մտնող վերջին մասը բեռնելուց (ընտրությունից) հետո, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով** o կոմպլեկտի մեջ մտնող առաջին մասը բեռնելուց հետո, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով o կոմպլեկտի կեսը բեռնելուց հետո o մինչև կոմպլեկտի բեռնելը
113	Թույլատրվու՞մ է արդյոք ընկերության բաժնետոմսերը վճարելու պարտականությունից բաժնետիրոջն ազատել՝ ներառյալ ընկերության նկատմամբ պահանջների հաշվանցով. o այո, թույլատրվում է բաժնետիրոջ ցանկությամբ **· ոչ, չի թույլատրվում** o այո, թույլատրվում է օրենքով սահմանված կարգով o այո, թույլատրվում է ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված դեպքերում
114	Ամուսնությունն անվավեր է ճանաչում. o նոտարը o քաղաքացիական կացության ակտերի գրանցում իրականացնող մարմինը **· դատարանը** o Հայաստանյաց առաքելական սուրբ եկեղեցին
115	Խնամակալության և հոգաբարձության մարմինը չափահաս գործունակ քաղաքացու պատրոն (օգնական) նշանակում է. o միայն դատարանի համաձայնությամբ o միայն համայնքի ղեկավարի համաձայնությամբ **· տվյալ քաղաքացու համաձայնությամբ** o վարչական շրջանի ղեկավարի և տվյալ քաղաքացու միաժամանակյա համաձայնությամբ

116	Ըստ ներկայացնողի է համարվում այն արժեթուղթը, որով հավաստվող իրավունքները պատկանում են. o արժեթղթում նշված անձին **• արժեթուղթը ներկայացնողին** o այն անձին, ով կարող է իր կարգադրությամբ նշանակել այլ անձի o արժեթղթերի տիրոջ պարտատերերին
117	Հիմնադրամ է համարվում. o քաղաքացիների կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն ունեցող կազմակերպությունը, որը հետապնդում է սոցիալական, բարեգործական, մշակութային, կրթական կամ այլ հանրօգուտ նպատակներ o քաղաքացիների և (կամ) իրավաբանական անձանց կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն ունեցող կազմակերպությունը, որը հետապնդում է միայն սոցիալական նպատակներ o իրավաբանական անձանց կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող կազմակերպությունը, որը հետապնդում է սոցիալական, բարեգործական, մշակութային, կրթական կամ այլ առևտրային նպատակներ **• քաղաքացիների և (կամ) իրավաբանական անձանց կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող կազմակերպությունը, որը հետապնդում է սոցիալական, բարեգործական, մշակութային, կրթական կամ այլ հանրօգուտ նպատակներ**
118	Եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով, ապա էներգիան ենթաաբոնենտին փոխանցելիս էներգամատակարարող կազմակերպության առջև ո՞վ է պատասխանատվություն կրում. o ոչ ոք o ենթաաբոնենտը **• աբոնենտը** o աբոնենտը և ենթաաբոնենտը միասին
119	Ի՞նչ է պարտավոր կատարել էներգամատակարարող կազմակերպությունը էներգիայի մատուցումն ընդհատելու, սահմանափակելու կամ դադարեցնելու դեպքում. **• նախազգուշացնել աբոնենտին** o ոչինչ o լուծել պայմանագիրը o միակողմանիորեն հրաժարվել պայմանագրից

120	Ինչպե՞ս է կոչվում արժեթղթի այն տեսակը, որով հավաստվող իրավունքները պատկանում են նրանում նշված անձին. o օրդերային արժեթուղթ o ըստ ներկայացնողի արժեթուղթ **• անվանական արժեթուղթ** o ներկայացուցչական արժեթուղթ
121	Ի՞նչ ձևով է կնքվում անշարժ գույքի վաճառքի պայմանագիրը. **• գրավոր՝ կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով, որը ենթակա է նոտարական վավերացման** o միայն բանավոր o կողմերի պայմանավորված որոշակի ձևով o փաստաթղթեր փոխանակելու միջոցով
122	Ամուսնությունն անվավեր է ճանաչվում. o ամուսնալուծության վերաբերյալ դիմում ներկայացնելու օրը o ամուսնալուծության վերաբերյալ դիմում ներկայացնելու պահից հաջորդող օրը o դատական ակտի հրապարակման պահից **• ամուսնությունն անվավեր ճանաչելու պետական գրանցման պահից**
123	Քաղաքացիական իրավունքների օբյեկտները կարող են ազատորեն օտարվել կամ անցնել մեկ անձից մյուսին համապարփակ իրավահաջորդության կարգով (ժառանգում, իրավաբանական անձի վերակազմակերպում), կամ այլ եղանակով, եթե դրանք. o միայն հանված են շրջանառությունից o հանված չեն շրջանառությունից, կամ դրանց շրջանառությունը սահմանափակված է o հանված են շրջանառությունից, կամ դրանց շրջանառությունը սահմանափակված է **• հանված չեն շրջանառությունից, կամ դրանց շրջանառությունը սահմանափակված չէ**
124	Ու՞մ համաձայնությամբ է կառավարվում լիակատար ընկերակցությունը. **• բոլոր մասնակիցների ընդհանուր համաձայնությամբ** o մասնակիցներից մեկի համաձայնությամբ o մասնակիցների թվի առնվազն երկու երրորդի համաձայնությամբ o մասնակիցների թվի առնվազը հիսուն տոկոսի համաձայնությամբ

125	Ամուսնությունն անվավեր ճանաչելու դեպքում բարեխիղճ ամուսինն իրավունք ունի պահպանելու. o ամուսնության պետական գրանցման ժամանակ ընտրված ազգանունը և հայրանունը o ամուսնության պետական գրանցման ժամանակ ընտրված հայրանունը o ամուսնության պետական գրանցման ժամանակ ընտրված անունը **· ամուսնության պետական գրանցման ժամանակ ընտրված ազգանունը**
126	Ամուսնությունն անվավեր ճանաչելը չի ազդում. o այդպիսի ամուսնությունից ծնված կամ ամուսնությունն անվավեր ճանաչելու պահից հետո՝ երեք հարյուր վաթսունհինգ օրվա ընթացքում, ծնված երեխաների իրավունքների վրա o այդպիսի ամուսնությունից ծնված կամ ամուսնությունն առոչինչ ճանաչելու պահից հետո՝ երեք հարյուր երկու օրվա ընթացքում, ծնված երեխաների իրավունքների վրա o այդպիսի ամուսնությունից ծնված կամ ամուսնությունն անվավեր ճանաչելու պահից հետո՝ երեք տարվա ընթացքում, ծնված երեխաների իրավունքների վրա **· այդպիսի ամուսնությունից ծնված կամ ամուսնությունն անվավեր ճանաչելու պահից հետո՝ երեք հարյուր օրվա ընթացքում, ծնված երեխաների իրավունքների վրա**
127	Եթե տարասեռ զույգի տարրերը կազմում են ընդհանուր նշանակությամբ իրենց օգտագործումը ենթադրող միասնական ամբողջություն, ապա դրանք դիտվում են որպես. o գլխավոր զույգ o պատկանելիք o գլխամասային զույգ **· բաղադրատարր զույգ**
128	Ինչպիսի՞ պատասխանատվություն են կրում լիակատար ընկերակցության մասնակիցներն ընկերակցության պարտավորությունների համար իրենց զույգով. o պատասխանատվություն չեն կրում o պատասխանատվություն են կրում ընկերակցությունում իրենց ունեցած մասնակցության չափով **· համապարտ սուբսիդիար** o պատասխանատվություն են կրում ընկերակցության պարտավորությունների 50%-ի չափով

129	Շենքի, շինության կամ այլ անշարժ գույքի վաճառքի պայմանագրով գնորդին այդ գույքի նկատմամբ սեփականության իրավունք փոխանցելու հետ միաժամանակ նաև ի՞նչ է փոխանցվում. · հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը o ոչինչ o հարակից շինությունների նկատմամբ իրավունքները o այն հողամասի նկատմամբ իրավունքները, որն այդ անշարժ գույքը չի զբաղեցնում
130	Վճարային արժեթղթեր են. o կոնոսամենտը o երկակի պահեստային վկայագիրը և հասարակ պահեստային վկայագիրը **· չեկը, հասարակ մուրհակը և փոխանցելի մուրհակը (վճարագիրը)** o պարտատոմսը և բաժնետոմսը
131	Ի՞նչ ձևով կարող են ստեղծվել տնտեսական ընկերությունները. o իրավաբանական անձանց միության o հասարակական միավորման o լիակատար ընկերակցության **· սահմանափակ կամ լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերության կամ բաժնետիրական ընկերության**
132	Թույլատրվու՞մ է արդյոք վաճառողին սեփականության իրավունքով չպատկանող հողամասում գտնվող անշարժ գույքի վաճառքը. o այո, այդ հողամասի սեփականատիրոջ համաձայնությամբ **· այո, առանց այդ հողամասի սեփականատիրոջ համաձայնության, եթե դա չի հակասում նման հողամասի** օգտագործման համար օրենքով կամ պայմանագրով սահմանված պայմանների o ոչ o միայն խիստ սահմանափակ դեպքերում
133	Ինչ կազմակերպաիրավական ձևերով կարող են ստեղծվել տնտեսական ընկերակցությունները. **· լիակատար ընկերակցության կամ վստահության վրա հիմնված ընկերակցության (կոմանդիտային ընկերակցության) ձևով** o հասարակական միավորման ձևով o իրավաբանական անձանց միության ձևով o բաժնետիրական ընկերության ձևով

134	Վաճառողին սեփականության իրավունքով չպատկանող հողամասում գտնվող անշարժ գույքի վաճառքի դեպքում գնորդը հողամասի համապատասխան մասի նկատմամբ ի՞նչ իրավունք է ձեռք բերում. o սեփականության **• օգտագործման, նույն պայմաններով, ինչ ուներ անշարժ գույքը վաճառողը** o որևէ իրավունք ձեռք չի բերում o տնօրինման
135	Տեղեկատվությունը ծառայողական, առևտրային կամ բանկային գաղտնիք է, եթե այն. o երրորդ անձանց հայտնի լինելու ուժով ունի միայն իրական առևտրային արժեք, չկա օրինական հիմքերով այն ազատորեն ստանալու հնարավորություն և տեղեկատվություն ունեցողը միջոցներ է ձեռնարկում դրա գաղտնիության պահպանման համար o երրորդ անձանց անհայտ լինելու ուժով ունի միայն հնարավոր առևտրային արժեք, առկա է օրինական հիմքերով այն ազատորեն ստանալու հնարավորություն և տեղեկատվություն ունեցողը միջոցներ է ձեռնարկում դրա գաղտնիության պահպանման համար o երրորդ անձանց անհայտ լինելու ուժով ունի իրական կամ հնարավոր առևտրային արժեք, սակայն առկա է օրինական հիմքերով այն ազատորեն ստանալու հնարավորություն և տեղեկատվություն ունեցողը միջոցներ է ձեռնարկում դրա գաղտնիության պահպանման համար **• երրորդ անձանց անհայտ լինելու ուժով ունի իրական կամ հնարավոր առևտրային արժեք, չկա օրինական հիմքերով այն ազատորեն ստանալու հնարավորություն և տեղեկատվություն ունեցողը միջոցներ է ձեռնարկում դրա գաղտնիության պահպանման համար**
136	Բանկային վկայագիրը կարող է լինել. o միայն ըստ ներկայացնողի o միայն անվանական o բաժնային և հավանական **• ըստ ներկայացնողի կամ անվանական**
137	Սեփականատերը կրում է իրեն պատկանող գույքի պահպանման հոգսը, եթե այլ բան նախատեսված չէ. o միայն օրենքով o միայն պայմանագրով o օրենքով, պայմանագրով և հանձնման-ընդունման արձանագրությամբ **• օրենքով կամ պայմանագրով**

138	Ռենտայի պայմանագրով մի կողմը (ռենտա ստացողը) մյուս կողմին (ռենտա վճարողին) ի՞նչ իրավունքով է գույք հանձնում. o միայն օգտագործման o միայն տիրապետման **· սեփականության** o գույք չի հանձնում
139	Ե՞րբ պետք է կատարվի պարտավորությունը, այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում. **· այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում** o այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ յոթնօրյա ժամկետում o այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի համապատասխան պահանջ ներկայացնելուց հետո՝ ողջամիտ ժամկետում o այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ կողմերի՝ լրացուցիչ համաձայնեցված ժամկետում

140	Ի՞նչ կարգով է ավելանում կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման և այլ դեպքերում դրամական պարտավորությամբ քաղաքացուն անմիջականորեն որպես ապրուստի միջոց վճարվող գումարը. o կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման և այլ դեպքերում դրամական պարտավորությամբ քաղաքացուն անմիջականորեն որպես ապրուստի միջոց վճարվող գումարն ավելանում է սպառողական զամբյուղի չափի ավելացմանը համամասնորեն **· կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման և այլ դեպքերում դրամական պարտավորությամբ քաղաքացուն անմիջականորեն, որպես ապրուստի միջոց վճարվող գումարն ավելանում է աշխատավարձի նվազագույն չափի ավելացմանը համամասնորեն** o կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման և այլ դեպքերում դրամական պարտավորությամբ քաղաքացուն անմիջականորեն որպես ապրուստի միջոց վճարվող գումարն ավելանում է ՀՀ դրամի արժեզրկմանը համամասնորեն o կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման և այլ դեպքերում դրամական պարտավորությամբ քաղաքացուն անմիջականորեն որպես ապրուստի միջոց վճարվող գումարն ավելանում է գնաճի չափի ավելացմանը համամասնորեն
141	Գործարքը համարվում է վերացնող պայմանով կնքված, եթե կողմերն իրավունքների և պարտականությունների դադարումը կախման մեջ են դրել մի հանգամանքից. **· որը հայտնի չէ՝ կիրականանա, թե ոչ** o որով գործարքը կատարվելու է կնքվելուց անմիջապես հետո o որով գործարքը կնքվել է երկու քաղաքացու միջև o որով տվյալ գործարքի համար օրենքով կամ կողմերի համաձայնությամբ սահմանված չէ գրավոր ձև
142	Հողամասը ռենտայի դիմաց հանձնելու դեպքում ռենտա ստացողն ի ապահովումն իր հանդեպ ռենտա վճարողի պարտավորության ապահովման, այդ գույքի նկատմամբ ձեռք է բերում. o որևէ իրավունք ձեռք չի բերում o օգտագործման իրավունք o սեփականության իրավունք **· գրավի իրավունք**

143	Մատակարարման պետական պայմանագրով մատակարարն ու՞մ է պարտավոր հանձնել ապրանքները. o իր գործունեության վայրի համայնքի ղեկավարին o միայն ՀՀ կառավարությանը o պարտավոր չէ հանձնել **• պետական պատվիրատուին կամ նրա ցուցումով այլ անձի**
144	Իրավաբանական անձանց միաձուլման դեպքում ու՞մ են անցնում նրանցից յուրաքանչյուրի իրավունքները և պարտականությունները. o իրավաբանական անձի ներկայացուցչություններին o իրավաբանական անձի հիմնադիրներին **• նոր առաջացած իրավաբանական անձին՝ փոխանցման ակտին համապատասխան** o նրանցից յուրաքանչյուրի իրավունքները և պարտականությունները դադարում են
145	Ո՞վ իրավունք ունի հետ գնել մշտական ռենտան. o ոչ ոք o ցանկացած անձ o մշտական ռենտա ստացողը **• մշտական ռենտայի վճարողը**
146	Հիմնարկի պարտավորությունների համար պատասխանատվություն կրում է. o հիմնարկը **• այն ստեղծած իրավաբանական անձը** o հիմնարկի տնօրենը o հիմնարկի աշխատավորական կոլեկտիվը
147	Ինչի՞ հիման վրա է կնքվում մատակարարման պետական պայմանագիրը. **• պետական կարիքների համար ապրանքների մատակարարման պետական պատվիրատուի պատվերի հիման վրա** o ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունած օրենքի հիման վրա o ՀՀ կառավարության և մատակարարի նախաձեռնության o մատակարարի նախաձեռնության հիման վրա

148	Կեղծ է համարվում. o գործարքի տվյալ տեսակի համար սահմանված ձևի խախտմամբ կնքված գործարքը **· առերևույթ, առանց համապատասխան իրավական հետևանքներ առաջացնելու մտադրության կնքված գործարքը** o անշարժ գույքի վաճառքի գործարքը, եթե դրանից բխող իրավունքը չի գրանցվել լիազոր պետական մարմնում o մեկ այլ գործարքի քողարկման նպատակով կնքված գործարքը
149	Իրավաբանական անձի կազմից մեկ կամ մի քանի իրավաբանական անձանց առանձնանալու դեպքում վերակազմակերպված իրավաբանական անձի իրավունքները և պարտականություններն անցնում են. o ոչ մեկին o իրավաբանական անձանց հիմնարկներին o իրավաբանական անձանց հիմնադիրներին **· նրանցից յուրաքանչյուրին՝ բաժանիչ հաշվեկշռին համապատասխան**
150	Ինչպե՞ս է բաշխվում պետական կարիքների համար ապրանքների մատակարարման պատվերը. o փակ մրցույթով, եթե այլ բան նախատեսված չէ պետական կարիքների համար ապրանքների մատակարարման մասին օրենքներով **· մրցույթով, եթե այլ բան նախատեսված չէ պետական կարիքների համար ապրանքների մատակարարման մասին օրենքներով** o միջազգային կազմակերպությունների սահմանած կարգով o պետական պատվիրատուի հայեցողությամբ
151	Սեփականատերը կրում է իրեն պատկանող գույքի պատահական կորստի կամ պատահական վնասվածքի ռիսկը, եթե այլ բան նախատեսված չէ o օրենքով և հանձնման-ընդունման արձանագրությամբ o պայմանագրով և հանձնման-ընդունման արձանագրությամբ o օրենքով, պայմանագրով և հանձնման-ընդունման արձանագրությամբ **· օրենքով կամ պայմանագրով**

152	Պետական կարիքների համար ապրանքների մատակարարման պատվերի բաշխման մրցույթում հաղթած մատակարարի (կատարողի) հետ պետական պայմանագիր կնքելը պետական պատվիրատուի համար. o ցանկալի է o նախընտրելի է **• պարտադիր է** o կամավոր է
153	Առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձինք կարող են ստեղծվել. o ցանկացած ձևով o հասարակական կազմակերպության ձևով **• տնտեսական ընկերակցությունների և ընկերությունների ձևով** o հիմնադրամների ձևով
154	Մշտական ռենտայի պայմանագրի՝ հետգնման իրավունքից ռենտա վճարողի հրաժարվելու մասին պայմանը. o որևէ հետևանք չունի o անվավեր է **• առոչինչ է** o պայմանագիրը համարվում է չկնքված
155	Օրենքներով սահմանվում են գույքի այն տեսակները, որոնք կարող են գտնվել միայն. **• պետության կամ համայնքների սեփականության ներքո** o պաշտոնատար անձանց սեփականության ներքո o պետության կամ պաշտոնատար անձանց սեփականության ներքո o համայնքների կամ պաշտոնատար անձանց սեփականության ներքո
156	Ի՞նչ տեսակի կարող են լինել կոոպերատիվները, կախված իրենց գործունեության բնույթից. o ցանկացած տեսակի **• շահույթ ստանալու նպատակ հետապնդող (առևտրային), կամ նման նպատակ չհետապնդող (ոչ առևտրային) կազմակերպություններ** o հասարակական կազմակերպություններ o անձնական կազմակերպություններ

157	Մայրության, հայրության, երեխաների դաստիարակության և կրթության, ինչպես նաև ընտանեկան կյանքի այլ հարցեր ամուսինները. o համատեղ լուծում են՝ ելնելով ընտանիքում կնոջ գերակայության սկզբունքից o լուծում են առանձին-առանձին՝ ելնելով ամուսիններից յուրաքանչյուրի վաստակի չափի մեծության սկզբունքից o համատեղ լուծում են՝ ելնելով ընտանիքում տղամարդու գերակայության սկզբունքից **· համատեղ լուծում են՝ ելնելով ամուսինների իրավահավասարության սկզբունքից**
158	Ամուսիններից մեկի ազգանվան փոփոխությունը. o առաջացնում է օրենքով սահմանված քրեական պատասխանատվություն o առաջացնում է մյուս ամուսնու ազգանվան մասնակի փոփոխություն o առաջացնում է մյուս ամուսնու ազգանվան լրիվ փոփոխություն **· մյուս ամուսնու ազգանվան փոփոխություն չի առաջացնում**
159	Ի՞նչ պատասխանատվություն է կրում պահանջը զիջած սկզբնական պարտատերը նոր պարտատիրոջ առջև. o պահանջը զիջած սկզբնական պարտատերը նոր պարտատիրոջ առջև պատասխանատվություն է կրում նրան փոխանցված պահանջի անվավերության համար, սակայն պատասխանատվություն չի կրում պարտապանի կողմից այդ պահանջը չկատարելու համար **· պահանջը զիջած սկզբնական պարտատերը նոր պարտատիրոջ առջև պատասխանատվություն է կրում նրան փոխանցված պահանջի անվավերության համար, սակայն պատասխանատվություն չի կրում պարտապանի կողմից այդ պահանջը չկատարելու համար, բացի այն դեպքից, երբ սկզբնական պարտատերը նոր պարտատիրոջ առջև երաշխավորություն է ստանձնել պարտապանի համար** o պահանջը զիջած սկզբնական պարտատերը նոր պարտատիրոջ առջև պատասխանատվություն է կրում միայն նրան փոխանցված պահանջի անվավերության համար o պահանջը զիջած սկզբնական պարտատերը նոր պարտատիրոջ առջև պատասխանատվություն է կրում նրան փոխանցված պահանջի անվավերության համար, ինչպես նաև պարտապանի կողմից այդ պահանջը չկատարելու համար
160	Իրավաբանական անձի իրավունքները կարող են սահմանափակվել. o ՀՀ կառավարության որոշմամբ o ՀՀ Նախագահի հրամանագրով **· միայն օրենքով նախատեսված դեպքերում և օրենքով սահմանված կարգով** o ըստ անհրաժեշտության

161	Ամուսինների ընդհանուր համատեղ սեփականության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են. o միայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքով o միայն ամուսինների միջև կնքված ամուսնական պայմանագրով o ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև ամուսինների միջև կնքված առուվաճառքի պայմանագրով **· ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, ինչպես նաև ամուսինների միջև կնքված ամուսնական պայմանագրով**
162	Եթե կողմը, որի համար մատակարարման պետական պայմանագիր կնքելը պարտադիր է, խուսափում է այն կնքելուց, ապա ի՞նչ պահանջով մյուս կողմը կարող է դիմել դատարան. o մրցույթն անվավեր ճանաչելու o մրցույթը չկայացած ճանաչելու o դատարան դիմելու իրավունք չունի **· այդ կողմին պետական պայմանագիր կնքելուն պարտադրելու պահանջով**
163	Տուժանք վճարելու պահանջով պարտատերը պարտավոր չէ ապացուցել, որ. **· իրեն վնաս է պատճառվել** o պարտավորությունը պատշաճ չի կատարվել o պարտավորությունը կատարվել է մասնակիորեն o պարտավորությունը թերի է կատարվել
164	Պետական պայմանագրին համապատասխան՝ պետական պատվիրատուի ծանուցումը մատակարարին (կատարողին) գնորդ կցելու մասին. o հիմք է ապրանքն առաքելու համար o հիմք է ապրանքն արտադրելու համար **· հիմք է պետական պայմանագիր կնքելու համար** o հիմք է վերադասի համաձայնությամբ պայմանագրի նախագիծը կազմելու համար
165	Պահանջի զիջման միջոցով այլ անձի չեն կարող անցնել. o դրամական պահանջները **· պարտատիրոջ անձի հետ անխզելիորեն կապված իրավունքները՝ ներառյալ ալիմենտի և կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման պահանջները** o անշարժ գույքի նկատմամբ իրավունքները՝ ներառյալ գրավի իրավունքը o շարժական գույքի հետ կապված իրավունքները

166	Սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել **· այլ անձը** o ոչ ոք o միայն համայնքը o միայն պետական կառավարչական հիմնարկը
167	Ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի ի՞նչ չափով են հատուցվում վնասները, եթե պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար սահմանված է տուժանք. o եթե պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար սահմանված է տուժանք, ապա վնասները չեն հատուցվում. հատուցվում է միայն տուժանքը o եթե պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար սահմանված է տուժանք, ապա վնասները հատուցվում են ամբողջ ծավալով՝ առանց հաշվի առնելու տուժանքով ստացվածը **· եթե պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար սահմանված է տուժանք, ապա վնասները հատուցվում են տուժանքով չծածկված մասով** o եթե պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար սահմանված է տուժանք, ապա այն հատուցվում է վնասով չծածկված մասով
168	Ինչպիսի՞ պատասխանատվություն են կրում իրավաբանական անձի հիմնադիրները մինչև իրավաբանական անձի պետական գրանցումը ծագած՝ իրավաբանական անձի ստեղծման հետ կապված պարտավորությունների համար. o ընդհանուր բաժնային o անհատական o չեն կրում պատասխանատվություն **· համապարտ**
169	Եթե պետական պատվիրատուի կողմից որոշված գնորդը հրաժարվում է ծանուցման մեջ նշված ապրանքներից և դրանց մատակարարման պայմանագիրը կնքելուց, ապա ի՞նչ է պարտավոր կատարել մատակարարը (կատարողը). **· անհապաղ տեղեկացնել պետական պատվիրատուին** o գնորդին պարտադրել ընդունելու ծանուցման մեջ նշված ապրանքները o ապրանքները մատակարարել մեկ այլ գնորդի o դիմել դատախազություն

170	Գտանքի մասին ոստիկանություն կամ տեղական ինքնակառավարման մարմին հայտնելու պահից հետո ի՞նչ ժամկետում գտնված գույքը ստանալու իրավազոր անձի չհայտնաբերվելու կամ այն գտնող անձին, ոստիկանություն կամ տեղական ինքնակառավարման մարմին գույքի նկատմամբ իր իրավունքի մասին չհայտարարելու դեպքում է գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ձեռք բերում դրա գտնողը. **· վեց ամսվա ընթացքում** o մեկ տարվա ընթացքում o երկու շաբաթվա ընթացքում o երեք ամսվա ընթացքում
171	Իրավաբանական անձը ենթակա է վերագրանցման միայն. o արտակարգ իրավիճակներում o նրա նկատմամբ անվճարունակության վարույթ հարուցվելու դեպքում o հարկային պետական ծառայության նախաձեռնությամբ **· օրենքով սահմանված դեպքերում**
172	Ամուսնական պայմանագիրը կնքվում է. o միայն բանավոր o գրավոր և ենթակա չէ նոտարական վավերացման o բանավոր և ենթակա է նոտարական վավերացման **· գրավոր և ենթակա է նոտարական վավերացման**
173	Հողամասի սեփականատերը, այդ թվում՝ ինքնակամ կառույցի առկայությամբ հողամասը ձեռք բերողը, կրում է դրա վրա գտնվող ինքնակամ կառույցի. **· օգտագործման ու ինքնակամ կառույցի քանդման հետ կապված ռիսկերը** o միայն օգտագործման հետ կապված ռիսկերը o միայն ինքնակամ կառույցի քանդման հետ կապված ռիսկերը o օգտագործման, ինքնակամ կառույցի քանդման և սեփականաշնորհման հետ կապված ռիսկերը
174	Եթե լիազորագրում ժամկետ նշված չէ, ապա այն ուժը պահպանում է. **· լիազորագիրը տալու օրվանից մեկ տարվա ընթացքում** o լիազորագիրը տալու օրվանից երեք ամսվա ընթացքում o լիազորագիրը տալու օրվանից երկու տարվա ընթացքում o լիազորագիրը տալու օրվանից երեք տարվա ընթացքում

175	Եթե պայմանագրում նշված չէ դրա կնքելու վայրը, ապա ո՞ր վայրում է պայմանագիրը կնքված համարվում. **· օֆերտա ուղարկած քաղաքացու բնակության կամ իրավաբանական անձի գտնվելու վայրում** o պայմանագրի առարկա հանդիսացող գույքի գտնվելու վայրում o պայմանագրի կատարման վայրում o ակցեպտը ստացող քաղաքացու բնակության կամ իրավաբանական անձի գտնվելու վայրում
176	Առևտրային կազմակերպությունների միջև հարաբերություններում արգելվում է. o փոխառությունը o առուվաճառքը o փոխանակությունը **· նվիրատվությունը**
177	Ինքնակամ կառույցները կարող են ճանաչվել օրինական՝ համայնքների ղեկավարների, համայնքի վարչական տարածքներից դուրս՝ մարզպետների կողմից. **· կառավարության սահմանած կարգով** o համայնքի ղեկավարի սահմանած կարգով o մարզպետի սահմանած կարգով o միայն դատարանի սահմանած կարգով
178	Ինքնակամ կառույցը չի կարող ճանաչվել օրինական, եթե կառույցը պահպանելը. **· խախտում է այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ է սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը** o խախտում է այլ անձանց իրավունքները և օրենքով չպահպանվող շահերը կամ վտանգ է սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը o խախտում է այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը o խախտում է երրորդ պետության իրավունքները և միջազգային պայմանգրով ամրագրված շահերը կամ մասնակի վտանգ է սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը

179	Նշվածներից ո՞րն է լիարժեք համապատասխանում ՀՀ քաղաքացիական օրենսդրությանը. **· գնելու նախապատվության իրավունքի խախտմամբ բաժնի վաճառքի դեպքում բաժնային սեփականության ցանկացած մասնակից իրավունք ունի երեք ամսվա ընթացքում դատական կարգով պահանջել իրեն փոխանցելու գնորդի իրավունքները և պարտականությունները** o գնելու նախապատվության իրավունքի խախտմամբ բաժնի վաճառքի դեպքում բաժնային սեփականության ցանկացած մասնակից իրավունք ունի երեք տարվա ընթացքում դատական կարգով պահանջել իրեն փոխանցելու գնորդի իրավունքները և պարտականությունները o գնելու նախապատվության իրավունքի խախտմամբ բաժնի վաճառքի դեպքում բաժնային սեփականության ցանկացած մասնակից իրավունք ունի երեք օրվա ընթացքում դատական կարգով պահանջել իրեն փոխանցելու գնորդի իրավունքները և պարտականությունները o գնելու նախապատվության իրավունքի խախտմամբ բաժնի վաճառքի դեպքում յուրաքանչյուր ոք իրավունք ունի երկու ամսվա ընթացքում արտադատական կարգով պահանջել իրեն փոխանցելու գնորդի իրավունքները և պարտականությունները
180	Քաղաքացին կարող է անհայտ բացակայող ճանաչվել, եթե. o երեք տարվա ընթացքում նրա բնակության վայրում տեղեկություններ չկան նրա գտնվելու վայրի մասին o նա չունի բնակության հիմնական վայր **· մեկ տարվա ընթացքում նրա բնակության վայրում տեղեկություններ չկան նրա գտնվելու վայրի մասին** o նա գտնվում է հետախուզման մեջ
181	Գնորդի կողմից առուվաճառքի պայմանագրում նշված քանակից ավելի ապրանք ընդունելու դեպքում լրացուցիչ ընդունված ապրանքի համար վճարվում է. **· նույն ապրանքի համար պայմանագրով սահմանված գնով, եթե այլ գին սահմանված չէ կողմերի համաձայնությամբ** o լրացուցիչ ընդունված ապրանքի արժեքի ութսուն տոկոսը o նմանատիպ ապրանքների համար սովորաբար վճարվող գնով o վաճառողի կողմից սահմանված գնով

182	Նշվածներից ո՞րն է լիարժեք համապատասխանում ՀՀ քաղաքացիական օրենսդրությանը. **· Եթե բաժնային սեփականության մյուս մասնակիցները հրաժարվում են վաճառվող բաժինը գնելուց կամ անշարժ գույքի սեփականության իրավունքում բաժինը ձեռք չեն բերում ծանուցումը ստանալու օրվանից մեկ ամսվա, իսկ շարժական գույքի սեփականության իրավունքում՝ տասն օրվա ընթացքում, վաճառողն իրավունք ունի իր բաժինը վաճառել ցանկացած անձի** o Եթե բաժնային սեփականության մյուս մասնակիցները հրաժարվում են վաճառվող բաժինը գնելուց կամ անշարժ գույքի սեփականության իրավունքում բաժինը ձեռք չեն բերում ծանուցումը ստանալու օրվանից մեկ տարվա, իսկ շարժական գույքի սեփականության իրավունքում՝ տասն օրվա ընթացքում, վաճառողն իրավունք ունի իր բաժինը վաճառել ցանկացած անձի o Եթե բաժնային սեփականության մյուս մասնակիցները հրաժարվում են վաճառվող բաժինը գնելուց կամ անշարժ գույքի սեփականության իրավունքում բաժինը ձեռք չեն բերում ծանուցումը ստանալու օրվանից մեկ ամսվա, իսկ շարժական գույքի սեփականության իրավունքում՝ մեկ օրվա ընթացքում, վաճառողն իրավունք ունի իր բաժինը վաճառել ցանկացած անձի o Եթե բաժնային սեփականության մյուս մասնակիցները հրաժարվում են վաճառվող բաժինը գնելուց կամ անշարժ գույքի սեփականության իրավունքում բաժինը ձեռք չեն բերում ծանուցումը ստանալու օրվանից մեկ տարվա, իսկ շարժական գույքի սեփականության իրավունքում մեկ օրվա ընթացքում, վաճառողն իրավունք ունի իր բաժինը վաճառել ցանկացած անձի
183	Իր ամբողջ գույքը կամ դրա մի մասը նվիրելու՝ առանց գույքի, իրավունքի կամ պարտականությունից ազատելու տեսքով նվիրատվության կոնկրետ առարկան նշելու խոստումը. o հանդիսանում է նվիրատվության պայմանագիր o հանդես է գալիս որպես նվիրաբերություն o հանդիսանում է հրապարակային օֆերտա **· առոչինչ է**
184	Նվիրաբերությունն ընդունելու համար. o պահանջվում է նվիրաբերողի համաձայնությունը **· որևէ մեկի թույլտվություն կամ համաձայնություն չի պահանջվում** o պահանջվում է համապատասխան պետական մարմնի գրավոր համաձայնությունը o պահանջվում է նվիրաբերություն ստացող իրավաբանական անձի գործունեության վայրի համայնքի ղեկավարի համաձայնությունը

185	Վարձակալության հանձնված գույքի օգտագործմանը լրիվ կամ մասնակիորեն խոչընդոտող թերությունների համար պատասխանատվություն է կրում. o վարձակալը, եթե նույնիսկ վարձակալության պայմանագիրը կնքելիս նա չի իմացել այդ թերությունների մասին **· վարձատուն, եթե նույնիսկ վարձակալության պայմանագիրը կնքելիս նա չի իմացել այդ թերությունների մասին** o գույքը արտադրողը o վարձակալը, եթե այդ թերությունները վարձակալը հայտնաբերել է վարձակալության պայմանագրի գործողության ընթացքում
186	Հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը տարածվում է դրա սահմաններում գտնվող. **· վերգետնյա և ստորգետնյա տարածքի վրա, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի** o միայն վերգետնյա տարածքի վրա, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի o միայն ստորգետնյա տարածքի վրա, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի o միայն ստորջրյա տարածքի վրա, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի
187	Անշարժ գույք վարձակալած քաղաքացու մահվան դեպքում. o վարձակալության պայմանագիրը դադարում է o վարձակալության պայմանագիրը համարվում է չկնքված o վարձակալության պայմանագիրը լուծվում է վարձատուի նախաձեռնությամբ **· վարձակալության պայմանագրով նրա իրավունքները և պարտականությունները փոխանցվում են ժառանգին, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով**
188	Ապահովագրական վկայագրերն ապահովագրության գլխավոր պայմանագրին չհամապատասխանելու դեպքում նախապատվությունը տրվում է. o գլխավոր պայմանագրին **· ապահովագրական վկայագրին** o ոչ մեկին նախապատվություն չի տրվում o նախապատվությունը տրվում է գլխավոր պայմանագրին, եթե այլ բան սահմանված չէ օրենքով

189	Գույքային ապահովագրության պայմանագրով նախատեսված ապահովագրական գումարը. o պետք է ավել լինի, քան դրա իրական (շուկայական) արժեքը o պետք է մեկ և կես անգամ ավել լինի, քան դրա իրական (շուկայական) արժեքը **· չի կարող գերազանցել պայմանագրի կնքման պահին այդ գույքի իրական (շուկայական) արժեքը** o չի կարող գերազանցել դրա իրական (շուկայական) արժեքը, եթե այլ բան սահմանված չէ պայմանագրով
190	Եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը. o քաղաքացիական գործի վարույթը կարճում է o համապատասխանաբար նվազեցնում է պարտատիրոջ պատասխանատվության չափը **· համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը** o ամբողջությամբ ազատում է պարտապանին պատասխանատվությունից
191	Պարտապանը կետանցող չի համարվում, քանի դեռ. o պարտատերը չի պահանջել վնասների, այդ թվում՝ բաց թողնված օգուտի հատուցում o դա ապացուցված չէ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով o իր գործողություններով հավաստում է պարտավորության կատարումից իր չխուսափելը **· պարտավորությունը չի կարող կատարվել պարտատիրոջ կետանցի հետևանքով**
192	Նախնական պայմանագիրը պետք է պարունակի պայմաններ, որոնք. o չեն զետեղվելու հիմնական պայմանագրում o որոշակիացնում են հիմնական պայմանագրով առաջանալիք հարկային պարտավորությունների չափը **· թույլ են տալիս սահմանել հիմնական պայմանագրի առարկան, ինչպես նաև մյուս էական պայմանները** o կողմերին հնարավորություն են տալիս խուսափել հիմնական պայմանագիրը կնքելուց

193	Շահառուն չի կարող փոխարինվել այլ անձով այն բանից հետո. o երբ ստացվել է ապահովագրողի առարկությունը փոխարինման դեմ **· երբ նա ապահովագրության պայմանագրով կատարել է որևէ պարտականություն կամ ապահովագրողին պահանջ է ներկայացրել ապահովագրական հատուցում ստանալու համար** o երբ նա ապահովագրության պայմանագրով չի կատարել որևէ պարտականություն և ապահովագրողին պահանջ չի ներկայացրել ապահովագրական հատուցում ստանալու համար o երբ ապահովագրողը ապահովագրության պայմանագրով կատարել է որևէ պարտականություն կամ ապահովագրողին պահանջ է ներկայացրել ապահովագրական հատուցում ստանալու համար
194	Ապահովագրության պայմանագիրն ուժի մեջ է մտնում. o ապահովադրի կողմից ապահովագրավճարն ամբողջությամբ կամ պայմանագրով նախատեսված չափով վճարելու պահից, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով o ապահովագրական դեպքը վրա հասնելու պահից **· կնքման պահից, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով** o ապահովագրության պայմանագրում նշված ձևով
195	Ոչ կյանքի ապահովագրության պայմանագրով նախատեսված ապահովագրական պատահարը վրա հասնելիս. o ապահովադիրը պարտավոր չէ ողջամիտ և մատչելի միջոցներ ձեռնարկել հնարավոր վնասները նվազեցնելու համար o ապահովագրողը պարտավոր է ողջամիտ և մատչելի միջոցներ ձեռնարկել հնարավոր վնասները նվազեցնելու համար o ապահովադիրը պարտավոր չէ միջոցներ ձեռնարկել, բայց կարող է միջոցներ ձեռնարկել իր ցանկությամբ **· ապահովադիրը պարտավոր է ողջամիտ և մատչելի միջոցներ ձեռնարկել հնարավոր վնասները նվազեցնելու համար**
196	Ամուսնական պայմանագիրը կարող է կնքվել. o միայն մինչև ամուսնության պետական գրանցումը o միայն ամուսնությունից հետո o ամուսնալուծվելիս **· ինչպես մինչև ամուսնության պետական գրանցումը, այնպես էլ ամուսնության ցանկացած ժամանակահատվածում**

197	Որո՞նք են ճանաչվում պետական կարիքներ, որոնց համար մատակարարվում են ապրանքներ. o պետական մարմնի ցանկացած պահանջմունքը **· պետական բյուջեի միջոցների հաշվին վճարվող և օրենքով սահմանված կարգով որոշվող Հայաստանի Հանրապետության պահաջմունքները** o տեղական բյուջեի միջոցների հաշվին վճարվող և ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված կարգով որոշվող համայնքների պահանջմունքները o ՀՀ քաղաքացիների պահանջմունքները
198	Ոչ կյանքի ապահովագրության պայմանագրից բխող պահանջներով հայցը կարող է ներկայացվել. o մեկ տարվա ընթացքում o չի կարող ներկայացվել **· երեք տարվա ընթացքում** o երկու տարվա ընթացքում
199	Մասնակիցների ավանդները, ըստ դրանց արժեքի, եթե այլ բան չի բխում համատեղ գործունեության պայմանագրից կամ փաստացի հանգամանքներից. o ենթադրվում են հավասար, եթե մասնակիցները ներդրել են հավասար արժեքի դրամ o չեն կարող լինել հավասար **· ենթադրվում են հավասար** o չեն կարող ենթադրվել հավասար, եթե մասնակիցները չեն ներդրել հավասար արժեքի դրամ և հավասար արժեքի գույք
200	Եթե այլ բան սահմանված չէ օրենքով կամ համատեղ գործունեության պայմանագրով կամ չի բխում պարտավորության էությունից, համատեղ գործունեության մասնակիցների ներդրած գույքը, որի նկատմամբ մինչև ներդրումը նրանք ունեին սեփականության իրավունք. **· համարվում է նրանց ընդհանուր բաժնային սեփականությունը** o չի համարվում նրանց ընդհանուր բաժնային սեփականությունը o համարվում է յուրաքանչյուրի անձնական սեփականությունը o համարվում է ստեղծած կազմակերպության սեփականությունը

201	Իրավաբանական անձի բաժանման դեպքում նրա իրավունքները և պարտականություններն անցնում են նոր առաջացած իրավաբանական անձանց. o փոխանցման ակտին և բաժանիչ հաշվեկշռին միաժամանակ **· բաժանիչ հաշվեկշռին համապատասխան** o պետական ռեգիստրի եզրակացությանը համապատասխան o տվյալ իրավաբանական անձի գործադիր մարմնի որոշմանը համապատասխան
202	Մասնակիցների համատեղ գործունեության արդյունքում ստացված շահույթը բաշխվում է. o բոլորի միջև հավասարապես՝ անկախ նրանց ներդրած ավանդի o ընդհանուր գործում նրանց ներդրած դրամական գումարին համամասնորեն **· ընդհանուր գործում նրանց ավանդի արժեքին համամասնորեն, եթե այլ բան նախատեսված չէ համատեղ գործունեության պայմանագրով կամ մասնակիցների համաձայնությամբ** o փոխադարձ համաձայնությամբ
203	Մասնակիցների համատեղ գործունեության արդյունքում ստացված շահույթին մասնակցելուց մասնակիցներից որևէ մեկին զրկելու մասին համաձայնությունը. o ունի իրավաբանական ուժ, եթե նրա մասնակցությունը մասնակիցների կողմից անբավարար է համարվել **· առոչինչ է** o ունի իրավաբանական ուժ պայմանագրով սահմանված դեպքում o չի կարող կայացվել, եթե մասնակիցն իր պարտականությունները կատարել է բարեխիղճ
204	Եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով, ապա անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել. **· իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում** o իրեն պատճառված վնասի հիսուն տոկոսի չափով հատուցում o միայն բաց թողնված օգուտի հատուցում o իրեն պատճառված վնասի կրկնապատիկի չափով հատուցում
205	Հայցային վաղեմությունը չի տարածվում. **· ավանդները վերադարձնելու վերաբերյալ ավանդատուների կողմից բանկին ներկայացվող պահանջների վրա** o պատճառված վնասը մասնակի հատուցելու պահանջների վրա o անհիմն հարստացման պահանջների վրա և առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասը հատուցելու պահանջների վրա o առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասը հատուցելու պահանջների վրա

206	Եթե կողմերից մեկը լրիվ կամ մասնակի կատարել է նոտարական վավերացում պահանջող գործարքը, իսկ մյուս կողմը խուսափում է գործարքի նոտարական վավերացումից, դատարանն իրավունք ունի. o այդ գործարքի հետ կապված հայցադիմումը ստանալիս վերադարձնել այն **· գործարքը կատարած կողմի պահանջով այն վավեր ճանաչել** o գործարքը համարել առոչինչ և գործի վարույթը կարճել o գործարքը համարել կեղծ
207	Համատեղ գործունեության անժամկետ պայմանագրից հրաժարվելու մասին մասնակցի դիմումը պետք է տրվի ոչ ուշ, քան. **· պայմանագրից նրա ենթադրվող դուրս գալուց երեք ամիս առաջ** o պայմանագրից նրա ենթադրվող դուրս գալուց երկու ամիս առաջ o նման մտադրություն առաջանալու օրվան հաջորդող երեք օրվա ընթացքում o նման մտադրություն առաջանալու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում
208	Պարտավորության մեջ անձանց փոփոխվելու դեպքում հայցային վաղեմության ժամկետը. o ընդհատվում է, եթե կողմերը չեն առարկում o կասեցվում է, եթե կողմերը չեն առարկում o վերսկսվում է, եթե կողմերը չեն առարկում **· չի փոփոխվում**
209	Անհատապես որոշվող գույք է համարվում. o գույքի սեփականատիրոջ համար ոչ նյութական բնույթի մեծ արժեք ներկայացնող գույքը **· այլ գույքից իրեն ներհատուկ հատկանիշներով առանձնացված գույքը** o գույքի նման տեսակի մեջ համեմատաբար քիչ քանակությամբ թողարկվող գույքը o այլ գույքի հետ համեմատած բավականին բարձր ինքնարժեք ունեցող գույքը
210	Ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի բնակարանը. **· բնակության համար նախատեսված և իրավունքների պետական գրանցումն իրականացնող լիազորված մարմնում առանձին ծածկագրով գրանցված կամ համարակալված տարածքն (շինությունն) է** o բնակության համար նախատեսված ոչ բնակելի տարածքն (շինությունն) է o բնակության համար նախատեսված իրավունքի օբյեկտն է o բնակության համար նախատեսված և առանձին հատակագիծ ունեցող ինքնակամ կառույցն է

211	Վիճակախաղ, տոտալիզատոր կամ այլ խաղեր անցկացնելու կանոններին համապատասխան խաղի կազմակերպիչը շահած անձանց պետք է վճարի նրանց շահումը. o հինգ օրվա ընթացքում o փոխադարձ համաձայնությամբ **· խաղերի արդյունքները որոշելու պահից ոչ ուշ, քան տասն օրում** o խաղեր անցկացնելու կանոններով նախատեսված չափով, ձևով (դրամով կամ բնեղենով) և ժամկետում, իսկ եթե այդ կանոններում ժամկետը նշված չէ, ապա խաղերի արդյունքները որոշելու պահից ոչ ուշ, քան տասնհինգ օրում
212	Խաղերի կազմակերպչի կողմից սահմանված ժամկետում խաղեր անցկացնելուց հրաժարվելու դեպքում խաղերի մասնակիցներն իրավունք ունեն. o կազմակերպչից պահանջել խաղերի վերախաղարկում **· կազմակերպչից պահանջել խաղերի վերացմամբ կամ դրանց ժամկետի հետաձգմամբ պատճառված իրական վնասի հատուցում** o կազմակերպչից պահանջել խաղերի վերացմամբ կամ հետաձգմամբ պատճառված ամբողջ վնասի հատուցում o կազմակերպչից պահանջել չստացված օգուտները
213	Եթե պարգևի հրապարակային խոստման մեջ դրա չափը նշված չէ, ապա. **· այն որոշվում է պարգև խոստացած անձի հետ համաձայնությամբ, իսկ վեճի դեպքում՝ դատարանով** o այն որոշվում է պարգև խոստացած անձի որոշմամբ, իսկ վեճի դեպքում՝ արտադատական կարգով o այն որոշվում է միայն արտադատական կարգով o նման հրապարակային խոստումը համարվում է առոչինչ
214	Պարգև վճարելու պարտականությունը ծագում է, եթե. o այն հրապարակվել է զանգվածային լրատվության միջոցներով **· պարգև վճարելու խոստումը հնարավորություն է ընձեռում պարզել, թե ով է այն խոստացել** o պարգև վճարելու խոստումը հնարավորություն է ընձեռում պարզել, թե ով է կատարում այն o կատարողի կողմից հրապարակային խոստումը կատարելու մասին հայտարարություն տալու օրվանից տասն օրվա ընթացքում

215	Ո՞ր դեպքում է պարտավորությունը դադարում հաշվանցով. o պարտավորությունը լրիվ կամ մասնակի դադարում է միատեսակ այն պահանջի հաշվանցով, որի ժամկետը լրացել է կամ նշված չէ, կամ որոշված է պահանջի պահով o պարտավորությունը լրիվ կամ մասնակի դադարում է հանդիպական այն պահանջի հաշվանցով, որի ժամկետը լրացել է կամ նշված չէ, կամ որոշված է պահանջի պահով o պարտավորությունը լրիվ կամ մասնակի դադարում է միատեսակ հակընդդեմ այն պահանջի հաշվանցով, որի ժամկետը լրացել է կամ նշված չէ, կամ որոշված է պահանջի պահով **· պարտավորությունը լրիվ կամ մասնակի դադարում է միատեսակ հանդիպական այն պահանջի հաշվանցով, որի ժամկետը լրացել է կամ նշված չէ, կամ որոշված է պահանջի պահով**
216	Հրապարակային մրցույթ հայտարարած անձն աշխատանքները ներկայացնելու համար սահմանված ժամկետի. o միայն երկրորդ կեսի ընթացքում իրավունք ունի փոփոխել և/կամ լրացնել դրա պայմանները կամ մասնակի վերացնել մրցույթը **· միայն առաջին կեսի ընթացքում իրավունք ունի փոփոխել դրա պայմանները կամ վերացնել մրցույթը** o ընթացքում իրավունք չունի փոփոխել և/կամ լրացնել դրա պայմանները կամ վերացնել մրցույթը o միայն երրորդ կեսի ընթացքում իրավունք ունի վերացնել մրցույթը, եթե մասնակիցները համաձայն են
217	Դատարանը հայցային վաղեմությունը կիրառում է. o իր նախաձեռնությամբ o եթե դրան չի առարկում պատասխանողը **· միայն վիճող կողմի դիմումով, որը պետք է տրվի մինչև դատարանի կողմից վճիռ կայացնելը** o հայցվոր կողմի պահանջով, որը պետք է տրվի մինչև դատարանի կողմից վճիռ կայացնելը

218	Ամուսնական պայմանագիրը. o չի կարող սահմանափակել ամուսինների իրավունակությունը, սակայն կարող է սահմանափակել գործունակությունը, չի կարող սահմանափակել իրենց իրավունքների պաշտպանության համար դատարան դիմելու նրանց իրավունքը, կարգավորել ամուսինների միջև անձնական ոչ գույքային հարաբերությունները, երեխաների նկատմամբ ամուսինների իրավունքներն ու պարտականությունները, նախատեսել անաշխատունակ անապահով ամուսնու ապրուստի միջոց պահանջելու իրավունքը սահմանափակող նորմ, ներառել այլ պայմաններ, որոնք ամուսիններից մեկին դնում են անբարենպաստ իրավիճակի մեջ կամ հակասում են ընտանեկան օրենսդրության հիմնական սկզբունքներին o չի կարող սահմանափակել ամուսինների իրավունակությունը կամ գործունակությունը, իրենց իրավունքների պաշտպանության համար դատարան դիմելու նրանց իրավունքը, կարգավորել ամուսինների միջև անձնական ոչ գույքային հարաբերությունները, երեխաների նկատմամբ ամուսինների իրավունքներն ու պարտականությունները, սակայն կարող է նախատեսել անաշխատունակ անապահով ամուսնու ապրուստի միջոց պահանջելու իրավունքը սահմանափակող նորմ, ներառել այլ պայմաններ, որոնք ամուսիններից մեկին դնում են անբարենպաստ իրավիճակի մեջ կամ հակասում են ընտանեկան օրենսդրության հիմնական սկզբունքներին o կարող է սահմանափակել ամուսինների իրավունակությունը կամ գործունակությունը, իրենց իրավունքների պաշտպանության համար դատարան դիմելու նրանց իրավունքը, կարգավորել ամուսինների միջև անձնական ոչ գույքային հարաբերությունները, երեխաների նկատմամբ ամուսինների իրավունքներն ու պարտականությունները, նախատեսել անաշխատունակ անապահով ամուսնու ապրուստի միջոց պահանջելու իրավունքը սահմանափակող նորմ, ներառել այլ պայմաններ, որոնք ամուսիններից մեկին դնում են անբարենպաստ իրավիճակի մեջ կամ հակասում են ընտանեկան օրենսդրության հիմնական սկզբունքներին **· չի կարող սահմանափակել ամուսինների իրավունակությունը կամ գործունակությունը, իրենց իրավունքների պաշտպանության համար դատարան դիմելու նրանց իրավունքը, կարգավորել ամուսինների միջև անձնական ոչ գույքային հարաբերությունները, երեխաների նկատմամբ ամուսինների իրավունքներն ու պարտականությունները, նախատեսել անաշխատունակ անապահով ամուսնու ապրուստի միջոց պահանջելու իրավունքը սահմանափակող նորմ, ներառել այլ պայմաններ, որոնք ամուսիններից մեկին դնում են անբարենպաստ իրավիճակի մեջ կամ հակասում են ընտանեկան օրենսդրության հիմնական սկզբունքներին**

219	Բնակարանների գործառնական նշանակության փոփոխումը արտադրական, հասարակական կամ այլ գործառնական նշանակության իրականացվում է. **· օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված կարգով** o պայմանագրով սահմանված կարգով o համաձայնագրով սահմանված կարգով o դատական կարգով
220	Վնաս պատճառողի մեղքի բացակայությամբ պատճառված վնասի հատուցումը. o չի կարող նախատեսվել **· կարող է նախատեսվել օրենքով** o նման համաձայնությունն առոչինչ է o կարող է նախատեսվել, եթե կողմերը համաձայն են
221	Իրավաբանական անձը համարվում է լուծարված, իսկ նրա գոյությունը՝ դադարած. o իրավաբանական անձի կառավարման բարձրագույն մարմնի կողմից որոշման ընդունման պահից **· պետական գրանցման պահից** o լուծարային հաշվեկշիռը հաստատելու պահից o իրավաբանական անձին դատարանի կողմից սնանկ ճանաչելու պահից
222	Անհրաժեշտ պաշտպանության վիճակում պատճառված վնասը. o ամեն դեպքում ենթակա է հատուցման o ենթակա է հատուցման ամբողջությամբ **· ենթակա չէ հատուցման, եթե չեն գերազանցվել դրա սահմանները** o ենթակա չէ հատուցման, եթե նույնիսկ գերազանցվել են դրա սահմանները
223	Պարտավորությունները ծագում են. **· պայմանագրից, վնաս պատճառելու հետևանքով և ՀՀ քաղաքացիական օրենսգրքում նշված այլ հիմքերից** o միայն պայմանագրից o միայն վնաս պատճառելու հետևանքով և ՀՀ քաղաքացիական օրենսգրքում նշված այլ հիմքերից o վարչական ակտում սահմանված հիմքերից

224	Ստորև թվարկվածներից ո՞րն է համարվում իրավաբանական անձի իրավունակության ծագման պահ. o իրավաբանական անձի հիմնադրման մասին պայմանագրի կնքման պահը o հիմնադիրների կողմից իրավաբանական անձի կանոնադրության հաստատման պահը o իրավաբանական անձի կառավարման մարմինների ընտրության և նշանակման պահը **• նրա ստեղծման պահը**
225	Ծայրահեղ անհրաժեշտության, այսինքն՝ վնաս պատճառողին կամ այլ անձանց սպառնացող վտանգի վերացման պայմաններում պատճառված վնասը, եթե այդ վտանգը տվյալ հանգամանքներում չէր կարող վերացվել այլ միջոցներով, պետք է հատուցվի. **• վնաս պատճառած անձի կողմից** o այն անձի կողմից՝ ի շահ որի գործել է վնաս պատճառողը o ՀՀ Կառավարության կողմից o միայն երրորդ անձի կողմից
226	Ստորև թվարկվածներից ո՞րն է համարվում իրավաբանական անձի իրավունակության դադարման պահ. **• նրա լուծարման ավարտի պահը** o գործունեությունը դադարեցնելու մասին նրա հիմնադիրների կողմից որոշման ընդունման պահը, եթե որևէ հիմնադիր չի առարկում այդ մասին o նրա տնօրենի փոփոխման պահը կամ կանոնադրության՝ ՀՀ օրենսդրությանը հակասելու պահը o իրավաբանական անձին տրված լիցենզիայի դադարեցման պահը
227	Իրավաբանական անձի ստեղծման նպատակով կնքված պայմանագրի հիման վրա ի՞նչ են մշակում իրավաբանական անձի հիմնադիրները. o գործունեության ռազմավարությունը **• ստեղծվող իրավաբանական անձի կանոնադրությունը** o գործունեության հիմնական ուղղությունները o օրենքի նախագիծ

228	Իրավաբանական անձի հիմնադիրներն ինչպիսի՞ պատասխանատվություն են կրում մինչև իրավաբանական անձի պետական գրանցումը ծագած՝ իրավաբանական անձի ստեղծման հետ կապված պարտավորությունների համար. o բարոյական կամ ֆինանսական o պատասխանատվություն չեն կրում **· համապարտ** o սուբսիդիար կամ դրամական
229	Ստորև թվարկվածներից ո՞րն է համարվում իրավաբանական անձի ստեղծման պահ. o նրա հիմնադիրների կողմից նրա կանոնադրության հաստատման պահը o իրավաբանական անձի հիմնադրման մասին պայմանագրի կնքման պահը o նրա ֆիրմային անվանման գրանցման պահը **· նրա պետական գրանցման պահը**
230	ՀՀ ընտանեկան օրենսգրքի իմաստով երեխա է համարվում. o յուրաքանչյուր ոք, ով ունի ծնողներ o 35 տարեկան անձը o 21 տարեկան անձը **· 18 տարին չլրացած անձը**
231	Ի՞նչ իրավական հետևանքներ է ունենում նորացումը սկզբնական պարտավորության հետ կապված լրացուցիչ պարտավորությունների համար. o նորացումը չի դադարեցնում սկզբնական պարտավորության հետ կապված լրացուցիչ պարտավորությունները, եթե դրանք կարող են կատարվել հիմնական պարտավորությունից անկախ **· նորացումը դադարեցնում է սկզբնական պարտավորության հետ կապված լրացուցիչ պարտավորությունները, եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ** o նորացումը չի դադարեցնում սկզբնական պարտավորության հետ կապված լրացուցիչ պարտավորությունները o նորացումը դադարեցնում է միայն սկզբնական պարտավորության կատարումն ապահովող լրացուցիչ պարտավորությունները

232	Քաղաքացին դատարանի վճռով ճանաչվել էր անգործունակ և նրա նկատմամբ խնամակալություն էր սահմանվել: Խնամակալը երրորդ անձի հետ նվիրատվության պայմանագիր է կնքել անգործունակ անձի սեփական բնակարանի վերաբերյալ: Տվյալ դեպքում. o նման գործարքն արգելված չէ, քանի որ անգործունակ ճանաչված քաղաքացու անունից գործարքներ է կնքում նրա խնամակալը **· արգելվում է անգործունակ ճանաչված քաղաքացիների անունից նրանց օրինական ներկայացուցիչների կատարած նվիրատվությունը** o կարող է կնքել միայն նվիրաբերության պայմանագիր o գործարքի վավերությունը կախված է բնակարանի մակերեսից և անգործունակ անձի նյութական վիճակից
233	Այն դեպքում, երբ տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասը վնասը հատուցելու համար չունի բավարար եկամուտներ կամ այլ գույք. o վնասը լրիվ կամ պակասող մասով պետք է հատուցեն նրա ծնողները, որդեգրողները կամ խնամակալները՝ անկախ իրենց մեղքի առկայությունից o վնասը ենթակա չէ հատուցման մինչև անչափահասի կողմից գույք ձեռք բերելը **· վնասը լրիվ կամ պակասող մասով պետք է հատուցեն նրա ծնողները, որդեգրողները կամ հոգաբարձուն, եթե չեն ապացուցում, որ վնասն իրենց մեղքով չի պատճառվել** o վնասը չի հատուցվում
234	Խնամակալի կամ հսկողություն իրականացնելու համար պարտավոր կազմակերպության անգործունակ ճանաչված քաղաքացու վնասի հատուցման պարտականությունը. **· չի դադարում հետագայում նրան գործունակ ճանաչելու դեպքում** o դադարում է հետագայում նրան գործունակ ճանաչելու դեպքում o դրվում է համապատասխան կազմակերպության վրա o չի դադարում հետագայում նրան գործունակ ճանաչելու դեպքում, պայմանով, որ անձը համապատասխան գույք ունենա հատուցման համար
235	Սահմանափակ գործունակ ճանաչված քաղաքացու պատճառած վնասը հատուցում է. o հոգաբարձուն կամ պատասխանատու անձը **· ինքը՝ վնաս պատճառողը** o ենթակա չէ հատուցման մինչև լրիվ գործունակ դառնալը o համապատասխան կազմակերպությունը, որը պարտավոր էր հսկողություն իրականացնել

236	Գործունակ քաղաքացին, ինչպես նաև տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասը, որը վնաս է պատճառել այնպիսի վիճակում, երբ նա չէր կարող գիտակցել իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարել դրանք. o իր պատճառած վնասի համար պատասխանատվություն է կրում մասնակի o ամբողջությամբ պատասխանատվություն է կրում իր պատճառած վնասի համար **· պատասխանատվություն չի կրում իր պատճառած վնասի համար** o պատասխանատվություն չի կրում իր պատճառած վնասի համար մեղմացնող հանգամանքների առկայության դեպքում
237	Եթե վնասը պատճառվել է տուժողի կյանքին կամ առողջությանը, դատարանը՝ տուժողի ու վնաս պատճառողի գույքային դրության, ինչպես նաև այլ հանգամանքների հաշվառմամբ. o չի կարող վնասը հատուցելու պարտականությունը լրիվ կամ մասնակիորեն դնել վնաս պատճառողի վրա o կարող է վնաս պատճառողին ամբողջությամբ ազատել վնասի հատուցման պարտականությունից **· կարող է վնասը հատուցելու պարտականությունը լրիվ կամ մասնակիորեն դնել վնաս պատճառողի վրա** o տուժողին զրկել վնասի հատուցում ստանալու իրավունքից
238	Ձեռքբերման վաղեմության ուժով գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ծագումը որոշվում է. o այն պետության իրավունքով, որտեղ տվյալ անձը գտնվում է o այն պետության իրավունքով, որտեղ գույքը գտնվել է ձեռքբերման վաղեմության ժամկետի սկզբում **· այն պետության իրավունքով, որտեղ գույքը գտնվել է ձեռքբերման վաղեմության ժամկետի ավարտման պահին** o այն պետության իրավունքով, որտեղի քաղաքացի է համարվում ձեռքբերման վաղեմության իրավունքը ձեռք բերողը
239	Առավել վտանգ ստեղծող գործունեությամբ պատճառված վնասի համար վնասը հատուցելու պարտականությունը դրվում է. o առավել վտանգի աղբյուրն օգտագործողի վրա **· առավել վտանգի աղբյուրը սեփականության իրավունքով կամ այլ օրինական հիմքով տիրապետող** իրավաբանական անձի կամ քաղաքացու վրա o այն անձի վրա, ում գործողությունների պատճառով պատճառվել է վնաս o այն կազմակերպության վրա, որը պարտավոր էր պատշաճ հսկողություն իրականացնել

240	Վնասը համատեղ պատճառած անձինք տուժողի առջև. o կրում են պատասխանատվություն ըստ իրենց մասնակցության չափի o կրում են սուբսիդիար պարտականություն **· կրում են համապարտ պատասխանատվություն** o կրում են պատասխանատվություն ըստ տուժողի պահանջի
241	Պարտատերն իրավունք ունի չընդունել պարտավորության մաս առ մաս կատարումը, եթե այլ բան նախատեսված չէ. **· օրենքով, այլ իրավական ակտերով, պարտավորության պայմաններով և չի բխում գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից** o միայն օրենքով o օրենքով, այլ իրավական ակտերով, պարտավորության պայմաններով o ՀՀ սահմանադրությամբ
242	Նշվածներից ո՞րն է ճիշտ. **· ծնողները պարտավոր են ապրուստի միջոցներ տրամադրել իրենց օգնության կարիքն ունեցող անաշխատունակ չափահաս զավակներին** o ծնողներն իրավունք ունեն ապրուստի միջոցներ տրամադրել իրենց օգնության կարիքն ունեցող անաշխատունակ չափահաս զավակներին o ծնողները պարտավոր են ապրուստի միջոցներ տրամադրել իրենց օգնության կարիքն ունեցող աշխատունակ չափահաս զավակներին o ծնողները պարտավոր չեն ապրուստի միջոցներ տրամադրել իրենց օգնության կարիքն ունեցող անաշխատունակ չափահաս զավակներին
243	Տուժողի դիտավորության հետևանքով ծագած վնասը. o ենթակա է հատուցման **· հատուցման ենթակա չէ** o ենթակա է հատուցման, եթե մեղավոր անձն ունի բավարար նյութական միջոցներ o հատուցման ենթակա են միայն իրական վնասները

244	Ճանապարհին գտնվող շարժական գույքի նկատմամբ գործարքով սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքի ծագումն ու դադարումը որոշվում է. o այն պետության իրավունքով, որտեղից դուրս է եկել այդ գույքը, եթե այլ բան սահմանված չէ կողմերի համաձայնությամբ **· այն պետության իրավունքով, որտեղից առաքվել է այդ գույքը, եթե այլ բան սահմանված չէ կողմերի համաձայնությամբ** o այն պետության իրավունքով, որի քաղաքացին է հանդիսանում գույքի սեփականատերը o կողմերի համաձայնությամբ ընտրված պետության իրավունքով
245	Եթե տուժողի կոպիտ անզգուշությունը նպաստել է վնասի առաջացմանը կամ մեծացմանը, ապա. o վնասը ենթակա է հատուցման բոլոր դեպքերում o վնասը ենթակա չէ հատուցման o վնասը ենթակա է հատուցման անկախ տուժողի կոպիտ անզգուշության չափից **· հատուցման չափը պետք է նվազեցվի՝ կախված տուժողի և վնաս պատճառողի մեղքի աստիճանից**
246	Գործարքի ձևը որոշվում է. o գործարքի կատարման վայրի իրավունքով o կողմերի համաձայնությամբ ընտրված պետության իրավունքով o այն պետության իրավունքով, որի քաղաքացիներն են հանդիսանում կողմերը **· այն պետության իրավունքով, որտեղ այն կնքվել է**
247	Նշվածներից ո՞րն է ճիշտ. **· աշխատունակ չափահաս զավակները պարտավոր են պահել իրենց անաշխատունակ և օգնության կարիք ունեցող ծնողներին և հոգ տանել նրանց մասին** o աշխատունակ չափահաս զավակները պարտավոր են պահել իրենց աշխատունակ և օգնության կարիք ունեցող ծնողներին և հոգ տանել նրանց մասին o աշխատունակ չափահաս զավակները պարտավոր չեն պահել իրենց անաշխատունակ և օգնության կարիք ունեցող ծնողներին և հոգ տանել նրանց մասին o անաշխատունակ չափահաս զավակները պարտավոր են պահել իրենց անաշխատունակ և օգնության կարիք ունեցող ծնողներին և հոգ տանել նրանց մասին

248	Արտասահմանում կնքված գործարքի ձևը չպահպանելը. o հիմք չէ այն անվավեր ճանաչելու համար, եթե պահպանվել են միջազգային իրավունքի նորմերը o հիմք է այն անվավեր ճանաչելու համար՝ անկախ այն հանգամանքից, թե պահպանվել են արդյոք ՀՀ իրավունքի նորմերը **· հիմք չէ այն անվավեր ճանաչելու համար, եթե պահպանվել են ՀՀ իրավունքի պահանջները** o հիմք է այն անվավեր ճանաչելու բոլոր դեպքերում
249	Քաղաքացիական օրենսգրքի համաձայն կերակրողի մահվամբ ծագած վնասները հատուցելիս արդյո՞ք հաշվի առնվում է տուժողի մեղքը. o հաշվի առնվում է մասամբ o հաշվի է առնվում և բացառում է վնասի հատուցումը **· հաշվի չի առնվում** o հաշվի առնվում է վնաս պատճառողի պահանջով
250	Արտերկրում տրված լիազորագրի ձևը չպահպանելը. o հիմք է այն անվավեր ճանաչելու համար, եթե նույնիսկ պահպանվել են ՀՀ իրավունքի պահանջները **· հիմք չէ այն անվավեր ճանաչելու համար, եթե պահպանվել են ՀՀ իրավունքի պահանջները** o հիմք չէ անվավեր ճանաչելու ոչ մի դեպքում o հիմք է այն անվավեր ճանաչելու, եթե չեն պահպանվել միջազգային իրավունքի նորմերը
251	Հաշվի առնելով վնաս պատճառած քաղաքացու գույքային դրությունը՝ վնասի հատուցման չափը. o չի կարող նվազեցվել, բացառությամբ, երբ վնասը պատճառվել է դիտավորությամբ կատարված գործողություններով **· կարող է նվազեցվել, բացառությամբ, երբ վնասը պատճառվել է դիտավորյալ կատարված գործողություններով** o կարող է նվազեցվել, եթե վնաս պատճառած անձը չի առարկում o ոչ մի պարագայում չի կարող նվազեցվել
252	Քաղաքացու առողջության քայքայմամբ պատճառված վնասը հատուցելիս. **· հաշվի չի առնվում տուժողի կողմից առողջության քայքայումից հետո ստացած աշխատավարձը (եկամուտը)** o հաշվի է առնվում առողջության քայքայումից հետո տուժողի ստացած աշխատավարձը o հաշվի է առնվում միայն տուժողի հիմնական աշխատավայրի աշխատավարձը o հաշվի չեն առնվում տուժողի ստացած եկամուտները

253	Պայմանագիրը կարգավորվում է. o այն պետության իրավունքով, որտեղ պետք է ավարտվի այդ պարտավորությունը o այն պետության իրավունքով, որտեղ կնքվել է պայմանագիրը o այն պետության իրավունքով, որի քաղաքացիներն են հանդիսանում կողմերը **· կողմերի համաձայնությամբ ընտրված պետության իրավունքով**
254	Փոխառու իրավաբանական անձի վերակազմակերպման դեպքում ու՞մ են անցնում գույքի անհատույց օգտագործման պայմանագրով նրա իրավունքներն ու պարտականությունները. **· նրա իրավահաջորդ իրավաբանական անձին, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով** o փոխատուին, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով o երրորդ անձին o պետությանը
255	Փոխառու քաղաքացու մահվամբ, եթե այլ բան նախատեսված չէ գույքի անհատույց օգտագործման պայմանագրով. o կնքվում է նոր պայմանագիր **· պայմանագիրը դադարում է** o նրա իրավունքներն ու պարտականություններն անցնում են նրա ժառանգներին o պայմանագիրը համարվում է չկնքված
256	Միակողմանի գործարքներից ծագող պարտավորությունների նկատմամբ կիրառվում է. o այն պետության իրավունքը, որտեղ կնքվել է գործարքը **· այն պետության իրավունքը, որտեղ կատարվել է գործարքը** o այն պետության իրավունքը, որը կիրառելու վերաբերյալ համաձայնություն են կայացրել կողմերը o այն պետության իրավունքը, որտեղ կատարվել է պարտավորությունը
257	Կերակրողի մահվամբ հասցված վնասը վնաս կրած անձանց հատուցվում է. o հիսունութ տարեկանից մեծ կանանց և վաթսուներեք տարեկանից մեծ տղամարդկանց՝ ցմահ **· հիսունհինգ տարեկանից մեծ կանանց և վաթսուն տարեկանից մեծ տղամարդկանց՝ ցմահ** o մինչև այդ անձանց կենսաթոշակային տարիքի հասնելը o ցմահ, եթե նրանք հասել են կենսաթոշակային տարիքի

258	Ի՞նչ ձևով է կնքվում կապալի պայմանագիրը. **· գրավոր** o նոտարական վավերացմամբ o բանավոր o կողմերի պայմանավորված որոշակի ձևով
259	Տուժողի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման գումարը. o վերջնական է և ենթակա չէ փոփոխման o կյանքի թանկացման դեպքում ենթակա չէ ինդեքսավորման o կյանքի թանկացման դեպքում ենթակա է ինդեքսավորման, եթե նման թանկացումը էական ազդեցություն է թողել **· կյանքի թանկացման դեպքում, օրենքով սահմանված կարգով, ենթակա է ինդեքսավորման**
260	Փախստականի անձնական օրենքը. o նրա քաղաքացիության երկրի իրավունքն է **· նրան ապաստան տրամադրած պետության իրավունքն է** o նրա ընտրությամբ կարող է լինել իր քաղաքացիության երկրի կամ գտնվելու վայրի երկրի իրավունքը o այն երկրի իրավունքը, որն առավել բարենպաստ վիճակ է նախատեսում իր համար
261	Ի՞նչ իրավական հետևանք է առաջացնում պայմանագրի գործողության ժամկետի լրանալը կողմերի պարտավորությունների համար. o պայմանագրի գործողության ժամկետի լրանալը դադարեցնում է կողմերի պարտավորությունները՝ անկախ օրենքում կամ պայմանագրում այդ մասին նշված լինելուց o պայմանագրի գործողության ժամկետի լրանալը դադարեցնում է կողմերի պարտավորությունները, ինչպես նաև վերացնում է պատասխանատվությունն այդ պարտավորությունները խախտելու համար **· օրենքով կամ պայմանագրով կարող է նախատեսվել, որ պայմանագրի գործողության ժամկետի ավարտով դադարում են կողմերի պարտավորությունները** o պայմանագրի գործողության ժամկետի լրանալը դադարեցնում է պարտավորությունները՝ պահպանելով այդ պարտավորությունները խախտելու համար պատասխանատվությունը

262	Օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի քաղաքացիական գործունակությունը ՀՀ-ում կնքված գործարքներով. **· որոշվում է ՀՀ իրավունքով** o որոշվում է իր քաղաքացիության երկրի իրավունքով o որոշվում իր համաձայնությամբ իր երկրի կամ գործարքը կնքելու վայրի իրավունքով o որոշվում է գործարքների կատարման վայրի երկրի իրավունքով
263	Իրավական ինչ հետևանքների է հանգեցնում պարտավորության մեջ անձանց փոփոխվելը հայցային վաղեմության համար. o պարտավորությունը նորացվում է, հայցային վաղեմության ժամկետի ընթացքը ընդհանտվում է o հայցային վաղեմության ժամկետի ընթացքը սկսվում է նորից **· պարտավորության մեջ անձանց փոփոխվելը չի հանգեցնում հայցային վաղեմության ժամկետի և դրա հաշվարկման կարգի փոփոխման** o հայցային վաղեմության ընթացքը նորից է սկսվում պարտավորության մեջ նոր ներգրավված անձի համար, սակայն պահպանվում է նախկին անձանց համար
264	Օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի քաղաքացիական գործունակությունը ՀՀ-ում վնաս պատճառելու հետևանքով ծագած պարտավորություններով. **· որոշվում է ՀՀ իրավունքով** o որոշվում է վնաս պատճառած անձի քաղաքացիության երկրի իրավունքով o որոշվում է վնաս պատճառած անձի ընտրությամբ o որոշվում է վնաս պատճառած անձի բնակության երկրի իրավունքով
265	Ոչ առևտրային կազմակերպության անվանումը պետք է ցուցում պարունակի. **· իր գործունեության բնույթի մասին** o իր գործունեության ծավալման վայրի մասին o իր հիմնադիրների մասին o իր մասնաճյուղերի առկայության մասին

266	Նշվածներից ո՞րն է լիարժեք համապատասխանում ՀՀ քաղաքացիական օրենսդրությանը. **· ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից** o ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ քսանօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից o ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտատերը պարտավոր է կատարել այդ մասին պարտապանի պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթամսյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից o ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է ցպահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝երկօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից
267	Ինչի՞ համար է կնքվում կապալի պայմանագիրը. o իրավաբանական գործողություններ կատարելու համար o միայն գույք պատրաստելու համար **· գույք պատրաստելու կամ մշակելու (վերամշակելու) կամ այլ աշխատանք կատարելու համար՝ պատվիրատուին հանձնելով դրա արդյունքը** o դրամական միջոցներ տրամադրելու համար

268	Իր պարտավորությունների համար ինչո՞վ է պատասխանատու տնտեսական ընկերությունը. o միայն մասնակիցների գույքով o տնօրենի գույքով o իրեն պատկանող գույքի մի մասով **· իրեն պատկանող ամբողջ գույքով**
269	Ի՞նչ փաստաթղթի հիման վրա է գործում ներկայացուցչությունը. o իր հաստատած կանոնադրության հիման վրա **· իրավաբանական անձի հաստատած կանոնադրության հիման վրա** o հիմնադիրների հետ կնքած պայմանագրի հիման վրա o հիմնադրի որոշման հիման վրա
270	Պարտապանն իրավունք ունի պարտավորությունը կատարել ժամկետից շուտ, եթե այլ բան նախատեսված չէ. **· օրենքով, այլ իրավական ակտերով կամ պարտավորության պայմաններով կամ չի բխում պարտավորության էությունից** o միայն պարտավորության պայմաններով կամ չի բխում պարտավորության էությունից o այլ իրավական ակտերով կամ պարտավորության պայմաններով կամ բխում է պարտավորության էությունից o միայն միջազգային իրավական ակտով
271	Ու՞մ է հանձնվում կապալի պայմանագրով կապալառուի կատարած աշխատանքի արդյունքը. o պետությանը **• պատվիրատուին** o երրորդ անձին o ենթակապալառուին
272	Ի՞նչ փաստաթղթի հիման վրա է գործում մասնաճյուղը. o իր հաստատած կանոնադրության հիման վրա **· իրավաբանական անձի հաստատած կանոնադրության հիման վրա** o հիմնադիրների հետ կնքած պայմանագրի հիման վրա o հիմնադրի որոշման հիման վրա

273	Ո՞վ է նշանակում ներկայացուցչությունների ղեկավարներին. **· իրավաբանական անձը** o իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմինը o ներկայացուցչությունը o իրավաբանական անձը՝ միայն ներկայացուցչության առաջարկությամբ
274	Ո՞վ է նշանակում մասնաճյուղերի ղեկավարներին. **· իրավաբանական անձը** o իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմինը o մասնաճյուղը o իրավաբանական անձը՝ միայն մասնաճյուղի առաջարկությամբ
275	Եթե այլ բան նախատեսված չէ կապալի պայմանագրով, ապա ո՞վ է որոշում պատվիրատուի առաջադրանքը կատարելու եղանակները. o պատվիրատուն o կապալառուն և պատվիրատուն համատեղ **· կապալառուն** o պատվիրատուի հիմնադիրը
276	Ստորև թվարկվածներից ի՞նչ բնույթի գործունեություն չի կարող իրականացնել հիմնարկը. **· առևտրային** o կառավարչական o սոցիալ-մշակութային o կրթական
277	Ստորև թվարկվածներից ո՞րն է իրավաբանական անձ. o հիմնարկը o մասնաճյուղը o ներկայացուցչությունը **· կոոպերատիվը**

278	Գույքը պատրաստելու համար կնքված կապալի պայմանագրով ու՞մ են փոխանցվում այդ գույքի նկատմամբ իրավունքները. o կապալառուին **• պատվիրատուին** o ոչ մեկին o կապալառուին և պատվիրատուին
279	Ի՞նչ փաստաթղթի հիման վրա է գործում հիմնարկը. o իր հաստատած կանոնադրության հիման վրա **• իրավաբանական անձի հաստատած կանոնադրության հիման վրա** o հիմնադիրների հետ կնքած պայմանագրի հիման վրա o հիմնադրի որոշման հիման վրա
280	ՀՀ տարածքում հուղարկավորությունը իրականացվում է. **• մահացածի մարմինը (աճյունը) գերեզմանատների սահմաններում տրամադրված գերեզմանատեղերում հողին հանձնելու կամ դիակիզման միջոցով** o մահացածի մարմինը (աճյունը) գերեզմանատների սահմաններում տրամադրված գերեզմանատեղերում միայն հողին հանձնելու միջոցով o մահացածի մարմինը (աճյունը) միայն դիակիզման միջոցով o ՀՀ ընտանեկան օրենսգրքով սահմանված կարգով
281	Ի՞նչ իրավական հետևանքներ է առաջացնում հիմնական պահանջով հայցային ժամկետի ավարտը լրացուցիչ պահանջների համար (գրավ, տուժանք, պահում, երաշխավորություն, նախավճար) o հիմնական պահանջով հայցային վաղեմության ժամկետի ավարտմամբ չի լրանում լրացուցիչ պահանջներով հայցային վաղեմության ժամկետը o հիմնական պահանջով հայցային վաղեմության ժամկետի ավարտմամբ լրանում է նաև լրացուցիչ պահանջներով հայցային վաղեմության ժամկետը՝ օրենքում նախատեսված դեպքերում **• հիմնական պահանջով հայցային վաղեմության ժամկետի ավարտմամբ լրանում է նաև լրացուցիչ պահանջներով հայցային վաղեմության ժամկետը** o հիմնական պահանջով հայցային վաղեմության ժամկետի ավարտմամբ լրանում է նաև լրացուցիչ պահանջներով հայցային վաղեմության ժամկետը՝ բացառությամբ այն լրացուցիչ պահանջների, որոնք հաշվարկվել են որպես տոկոսներ պարտավորության գումարը վճարելու կետանցի համար

282	Բանկային ավանդի պայմանագիրը, որով ավանդատուն քաղաքացի է. o նախնական պայմանագիր է o պայմանագիր է հօգուտ երրորդ անձի o միանալու պայմանագիր է **• հրապարակային պայմանագիր է**
283	Համիրավ պարտատերերից մեկի հանդեպ պարտավորությունը լրիվ կատարելը պարտապանին. **• ազատում է մյուս պարտատերերի հանդեպ պարտավորությունը կատարելուց** o չի ազատում մյուս պարտատերերի հանդեպ պարտավորությունը կատարելուց o ազատում է մյուս պարտապանների հանդեպ պարտավորությունը կատարելուց o ազատում է մյուս պարտապանների հանդեպ պարտավորությունը կատարելուց, եթե առկա է կողմերի համաձայնությունն այդ մասին
284	Եթե լուծարվող իրավաբանական անձի գույքի արժեքն անբավարար է պարտատերերի պահանջները բավարարելու համար, ապա այն կարող է լուծարվել միայն. o նրա հիմնադիրների որոշմամբ **• սնանկության հետևանքով** o դատարանի կողմից իրավաբանական անձի գրանցումն անվավեր ճանաչելու հետևանքով o պետական գրանցման մարմնի թույլտվությամբ
285	Նշվածներից ո՞րն է լիարժեք համապատասխանում ՀՀ քաղաքացիական օրենսդրությանը. **• պարտապանն իրավունք ունի իրենից գանձվելիք դրամը կամ արժեթղթերը մուծել նոտարի դեպոզիտ, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ դատարանի դեպոզիտ, եթե նա չի կարողանում կատարել պարտավորությունը** o պարտապանն իրավունք ունի իրենից գանձվելիք դրամը կամ արժեթղթերը մուծել բանկի դեպոզիտ, իսկ պայմանագրով նախատեսված դեպքերում՝ դատարանի դեպոզիտ, եթե նա չի կարողանում կատարել պարտավորությունը o պարտապանն իրավունք ունի իրենից գանձվելիք միայն արժեթղթերը մուծել նոտարի դեպոզիտ, իսկ պայմանագրով նախատեսված դեպքերում՝ դատարանի դեպոզիտ, եթե նա չի կարողանում կատարել պարտավորությունը o պարտապանն իրավունք ունի իրենից գանձվելիք միայն արժեթղթերը մուծել նոտարի դեպոզիտ, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ որևէ պետական մարմնի դեպոզիտ, եթե նա չի կարողանում կատարել պարտավորությունը

286	Քաղաքացու հետ բանկային ավանդի պայմանագիր կնքելը և նրա ավանդի հաշվին դրամական միջոցներ մուծելը հավաստվում է. o միայն ավանդի գումարի մուտքագրման կտրոնով o միայն բանկային գրքույկով **· բանկային գրքույկով, եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ** o ավանդային պայմանագրի կնքումով
287	Կարո՞ղ է արդյոք պետական մարմինը հանդես գալ որպես տնտեսական ընկերակցության մասնակից. o այո, ՀՀ կառավարության սահմանած կարգով o այո, ՀՀ օրենքներով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով o այո, միայն խիստ սահմանափակ դեպքերում **· ոչ, չի կարող**
288	Ո՞ր դեպքում կապալառուն իրավունք ունի իր պարտավորությունների կատարմանը մասնակից դարձնել ենթակապալառուներին. **· եթե օրենքից կամ կապալի պայմանագրից չի բխում կապալի պայմանագրում նշված աշխատանքն անձամբ կատարելու կապալառուի պարտականությունները** o ցանկացած դեպքում o եթե այդ մասին առկա է պատվիրատուի հատուկ ցանկությունը o ոչ մի դեպքում
289	Բանկային հաշվի պայմանագրով հաշվում մուտք եղած դրամական միջոցները բանկը. o իրավունք ունի օգտագործել միայն հաճախորդի համաձայնությամբ o իրավունք չունի օգտագործել o իրավունք ունի օգտագործել, եթե պայմանագիրը նման պայման է պարունակում **· իրավունք ունի օգտագործել՝ երաշխավորելով հաճախորդի այդ միջոցներն անխոչընդոտ տնօրինելու իրավունքը**

290	Ի՞նչ իրավական հետևանքներ է նախատեսում ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը խաբեության, բռնության, սպառնալիքի ազդեցության ներքո, մեկ կողմի ներկայացուցչի մյուս կողմի հետ չարամիտ համաձայնությամբ կամ ծանր հանգամանքների բերումով կնքված գործարքի մյուս կողմից տուժողի ստացած գույքի, ինչպես նաև մյուս կողմից նրան հասանելիքի համար. o այդ գույքը տուժող կողմը վերադարձնում է գործարքի մյուս կողմին o կիրառվում է երկկողմանի ռեստիտուցիայի ընդհանուր կանոնը **· այդ գույքը բռնագանձվում է հօգուտ Հայաստանի Հանրապետության** o բռնագրավվում է հօգուտ Հայաստանի Հանրապետության, որպես տվյալ արարքը կազմող հանցագործության համար պատիժ
291	Բանկային սպասարկում մատուցելու բանկի հնարավորությունների բացակայության պատճառաբանությամբ բանկը. o իրավունք չունի մերժել բանկային հաշվի բացելը **· իրավունք ունի մերժել բանկային հաշիվ բացելը** o իրավունք ունի մերժել միայն այն դեպքում, երբ նման հնարավորություն սահմանված է բանկի կանոնադրությամբ o չի կարող մերժել, եթե այդ մասին հրապարակային ծանուցում չի տվել
292	Կապալի պայմանագրի առկայության դեպքում իրավունք ունի՞ արդյոք պատվիրատուն առանձին աշխատանքների կատարման պայմանագրեր կնքել նաև այլ անձանց հետ. o ոչ **· այո, գլխավոր կապալառուի համաձայնությամբ** o այո, անկախ գլխավոր կապալառուի ցանկության o այո, ենթակապալառուի համաձայնությամբ
293	Կապալի պայմանագրում աշխատանքը կատարելու ո՞ր ժամկետներն են նշվում. o միայն սկզբնական և միջանկյալ o միայն վերջնական և միջանկյալ **· սկզբնական և վերջնական, կողմերի համաձայնությամբ աշխատանքի առանձին փուլերի ավարտի (միջանկյալ)** o ժամկետ չի նշվում
294	Հաճախորդի կարգադրությունները և նրան ներկայացված բոլոր պահանջները բավարարելու համար բանկային հաշվում դրամական միջոցների անբավարարության դեպքում առաջին հերթին դուրս են գրվում. o արձակման նպաստները և աշխատավարձը **· ալիմենտներ բռնագանձելու վերաբերյալ կատարողական փաստաթղթով նախատեսված պահանջները** o աշխատավարձը և այլ ծախսերը o պետական բյուջե կատարվող վճարները

295	Ինչպե՞ս կարող են փոփոխվել կապալի պայմանագրում նշված աշխատանքը կատարելու սկզբնական, միջանկյալ և վերջնական ժամկետները. o պատվիրատուի նախաձեռնությամբ o կապալառուի նախաձեռնությամբ o չեն կարող փոխվել **· պայմանագրում նախատեսված դեպքերում և կարգով**
296	Կապալի պայմանագրում ենթակա աշխատանքների գինը կամ այն որոշելու եղանակները նշված չլինելու դեպքում ինչպե՞ս է որոշվում գինը. o կապալառուի սահմանած չափով o գին չի որոշվում **· վճարվում է այն գինը, որը համեմատելի հանգամանքներում սովորաբար գանձվում է նույնանման աշխատանքների համար** o պատվիրատուի սահմանած չափով
297	Բանկային հաշվի պայմանագիրը հաճախորդի դիմումով. **· լուծվում է ցանկացած ժամանակ** o չի կարող լուծվել ցանկացած ժամանակ o կարող է լուծվել այդ մասին ոչ ուշ, քան մեկ շաբաթ առաջ զգուշացնելու դեպքում o կարող է լուծվել այդ մասին ոչ ուշ, քան երեք օր առաջ նախազգուշացնելու դեպքում
298	Եթե կապալի պայմանագրով աշխատանքի գինը որոշվել է և աշխատանքը կատարվում է կապալառուի կազմած նախահաշվին համապատասխան, ապա ո՞ր պահից է նախահաշիվն ուժի մեջ մտնում. o այն կազմելու պահից o կապալառուի կողմից այն հաստատելու պահից **· պատվիրատուի կողմից այն հաստատելու պահից** o այն չի կարող ուժի մեջ մտնել
299	Իրավունքները չեկով. o չեն կարող փոխանցվել o կարող են փոխանցվել՝ ինկասո հաշվարկների մասին կանոններով o կարող են փոխանցվել՝ ակրեդիտիվի կանոններով **· կարող են փոխանցվել՝ իրավունքներն արժեթղթով փոխանցելու մասին կանոններով**

300	Հրապարակային մրցույթը. o չի կարող լինել բաց o պետք է անպայման լինի բաց o պետք է անպայման լինի փակ **· կարող է լինել ինչպես փակ, այնպես էլ բաց**
301	Պատվիրատուի և կապալառուի միջև աշխատանքի թերությունների կամ դրանց պատճառների հետ կապված վեճ առաջանալու դեպքում ցանկացած կողմի պահանջով. o կապալի պայմանագիրը լուծվում է **· նշանակվում է փորձաքննություն** o պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը o կապալառուն հրաժարվում է պայմանագիրը կատարելուց
302	Վտանգ ստեղծող գործունեությունն արգելելու պահանջով հայցի հարուցման համար. **· կարող է հիմք ծառայել ապագայում վնաս պատճառելու վտանգը** o կարող է հիմք ծառայել միայն արդեն հասցված վնասը o կարող է հիմք ծառայել ցանկացած հանգամանք o կարող է հիմք ծառայել միայն արդեն հասցված և գնահատված վնասը
303	Ի՞նչ ձևով է կնքվում գույքի անհատույց օգտագործման պայմանագիրը. **· գրավոր՝ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով** o բանավոր o կողմերի պայմանավորված որոշակի ձևով կամ կոնկլյուդենտ գործողությունների միջոցով o մամուլում արված հայտարարությամբ
304	Ո՞վ իրավունք ունի գույքն անհատույց օգտագործման հանձնելու. o գույքն օգտագործողը o գույքի սեփականատերը **· գույքի սեփականատերը և օրենքով կամ սեփականատիրոջ կողմից դրա համար լիազորված այլ անձինք** o գույքի սեփականատիրոջ կողմից դրա համար լիազորված անձինք

305	Առևտրային կազմակերպությունն ու՞մ իրավունք չունի գույքն անհատույց օգտագործման հանձնել. o միայն իր հիմնադրին և այլ ոչ առևտրային կազմակերպության o այլ առևտրային կազմակերպության o ֆիզիկական անձանց, բացառությամբ օտարերկրյա քաղաքացիների **· իր հիմնադրին, մասնակցին, ղեկավարին, կառավարման կամ վերահսկողության մարմինների անդամին**
306	Ի՞նչ իրավաբանական հետևանքների է հանգեցնում անվավեր գործարքը. o անվավեր գործարքը չի հանգեցնում իրավաբանական հետևանքների, բացառությամբ այն հետևանքների, որոնք կարող էին ծագել նաև բանավոր կնքվող պայմանագրից **· անվավեր գործարքը չի հանգեցնում իրավաբանական հետևանքների, բացառությամբ այն հետևանքների, որոնք կապված են գործարքի անվավերության հետ: Նման գործարքն անվավեր է կնքելու պահից** o անվավեր գործարքը չի հանգեցնում իրավաբանական հետևանքների, բացառությամբ այն դեպքերի, երբ լրացել է դրանց վիճարկման համար օրենքով նախատեսված հայցային վաղեմության ժամկետը o անվավեր գործարքը չի հանգեցնում իրավաբանական հետևանքների, բացառությամբ այն հետևանքների, որոնց վերաբերյալ համանձայնվել են գործարքի կողմերը
307	Կապալի պայմանագրին համապատասխան՝ պայմանների բացակայությամբ կամ դրանց թերի լինելու դեպքում, ի՞նչ պահանջների պետք է համապատասխանի կապալառուի կատարած աշխատանքի որակը. o կապալառուի սահմանած պահանջներին **· համապատասխան տեսակի աշխատանքներին սովորաբար ներկայացվող պահանջներին** o պատվիրատուի սահմանած պահանջներին o ցանկացած պահանջի
308	Փոխատուն պատասխանատվություն է կրում անհատույց օգտագործման հանձնված գույքի. o այն թերությունների համար, որոնք ի հայտ են եկել գույքի անհատույց օգտագործման պայմանագրի կնքումից հետո **· այն թերությունների համար, որոնք նա դիտավորությամբ չի մատնանշել գույքի անհատույց օգտագործման պայմանագիր կնքելիս** o այն թերությունների համար, որոնց մասին նա չէր իմացել և չէր կարող իմանալ o այն թերությունների համար, որոնք առաջացել են փոխառուի մեղքով

309	Եթե կապալի պայմանագրով այլ իրավական ակտերով կամ գործարար շրջանառության սովորույթներով աշխատանքի արդյունքի համար սահմանված է երաշխիքային ժամկետ, ապա աշխատանքի արդյունքը որքա՞ն ժամանակ պետք է համապատասխանի որակի մասին պայմանագրի պայմաններին. **· երաշխիքային ժամկետի ամբողջ ընթացքում** o երաշխիքային ժամկետի կեսի ընթացքում o երկու ամիս սկսած այն պահից, երբ երաշխիքային ժամկետն ավարտվել է o երեք տարի
310	Գերեզմանատների կազմակերպման համար տրամադրված հողատարածքները համարվում են. **· անբաժանելի և չեն կարող բաժանվել ինքնուրույն հողամասերի** o բաժանելի և կարող են բաժանվել ինքնուրույն հողամասերի o անբաժանելի, սակայն ՀՀ կառավարության սահմանած կարգով կարող են բաժանվել ինքնուրույն հողամասերի o բաժանելի, սակայն չեն կարող բաժանվել ինքնուրույն հողամասերի
311	Ի՞նչ ժամկետով է կնքվում գույքի անհատույց օգտագործման պայմանագիրը. o խիստ սահմանափակ, բայց նվազագույնը երկու ամիս ժամկետով **· պայմանագրով որոշված ժամկետով** o միայն անորոշ ժամկետով o մեկ ամսով
312	Պարտատերը կարող է հրաժարվել կատարումն ընդունելուց և պահանջել հատուցելու վնասները. o եթե դա բխում է իր շահերից **· եթե պարտապանի կետանցի հետևանքով կատարումը պարտատիրոջ համար կորցրել է իր հետաքրքրությունը** o պարտատերը չի կարող հրաժարվել կատարումն ընդունելուց o պարտավորության կատարման ցանկացած փուլում
313	Եթե այլ բան նախատեսված չէ կապալի պայմանագրերով, ապա ո՞ր օրվանից է սկսվում երաշխիքային ժամկետը. **· այն օրվանից, երբ պատվիրատուն ընդունել է, կամ պետք է ընդուներ կատարված աշխատանքի արդյունքը** o այն օրվանից, երբ կապալառուն ավարտել է աշխատանքները և դիմել պատվիրատուին, կազմել աշխատանքների ընդունման ակտ o պայմանագրի դադարման օրվանից o պայմանագրի կնքման օրվանից

314	Ո՞ր դեպքում է պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով. o նյութական վնաս պատճառելու դեպքում և պայմանագրում նախատեսված դեպքում o մեղքի բացակայության դեպքում o իր հայեցողությամբ **· մեղքի առկայության դեպքում**
315	Եթե գույքի անհատույց օգտագործման պայմանագրում ժամկետ որոշված չէ, ապա ի՞նչ ժամկետով է կնքված համարվում պայմանագիրը. **· անորոշ** o երկու տարի ժամկետով o երեք ամիս ժամկետով o մեկ տարի ժամկետով
316	Պարտավորությունը դիտավորյալ խախտելու համար պատասխանատվությունը վերացնելու կամ սահմանափակելու մասին նախապես կնքված համաձայնությունը ի՞նչ իրավական հետևանք ունի. **· այն առոչինչ է** o այն գործում է o այն համարվում է ուժի մեջ o այն առոչինչ է միայն դատական ակտի հիման վրա
317	Ի՞նչ հետևանք ունի գույքի անհատույց օգտագործման պայմանագրի ժամկետի ավարտից հետո փոխառուի կողմից փոխատուի առարկությունների բացակայությամբ գույքից օգտվելը. **· պայմանագիրը ճանաչվում է վերսկսված՝ նույն պայմաններով անորոշ ժամկետով** o պայմանագիրը դադարում է o որևէ հետևանք չունի o անհրաժեշտ է կնքել նոր պայմանագիր
318	Անհատույց օգտագործման հանձնված գույքից փոխառուի կատարած բաժանելի բարելավումներն ու՞մ սեփականությունն են համարվում. **· փոխառուի, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով** o փոխատուի, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով o ոչ մեկի o փոխատուի ժառանգների

319	Կողմերի համաձայնությամբ պարտավորությունը կարող է դադարել կատարման փոխարեն. **· հրաժարագին տրամադրելով (դրամ վճարելով, գույք հանձնելով և այլն)** o երաշխիք տրամադրելով (դրամ վճարելով, գույք հանձնելով և այլն) o երաշխավորություն տրամադրելով (դրամ վճարելով, գույք հանձնելով և այլն) o կանխավճար տրամադրելով (դրամ վճարելով, գույք հանձնելով և այլն)
320	Հատուցվու՞մ է արդյոք փոխառուի կողմից առանց փոխատուի համաձայնության անհատույց օգտագործման հանձնված գույքից կատարված անբաժանելի բարելավումների արժեքը. o այո, հատուցվում է, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով **· ոչ, չի հատուցվում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով** o այո, նախապես՝ համարժեք չափով o այո, հատուցվում է պայմանագրով սահմանված կարգով
321	Պարտատիրոջ կողմից պարտապանին իր պարտականություններից ազատելով (պարտքը ներելով). o պարտավորությունը կասեցվում է **· պարտավորությունը դադարում է, եթե դա չի խախտում պարտատիրոջ գույքի նկատմամբ այլ անձանց իրավունքները** o պարտավորությունը շարունակվում է o պարտավորությունը կասեցվում է, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով
322	Եթե պարտատերը հրաժարվել է պարտապանի առաջարկած պատշաճ կատարումն ընդունելուց, ապա նա համարվում է. **· կետանցող** o պարտավորությունը զիջող o պարտավորությունը դադարելու վերաբերյալ համաձայնություն տվող o պարտավորությունը ընդունելուց հրաժարվող
323	Եթե պարտավորության կատարման անհնարինությունն առաջացել է այնպիսի հանգամանքից, որի համար կողմերից որևէ մեկը պատասխանատու չէ, ապա պարտավորությունը. **· դադարում է** o կասեցվում է o շարունակվում է o կասեցվում է, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով

324	Եթե պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի ակտի հրապարակման հետևանքով պարտավորությունը կատարելը լրիվ կամ մասնակի դառնում է անհնարին, ապա պարտավորությունը. o ամբողջությամբ դադարում է o լրիվ կամ մասնակի կասեցվում է o շարունակվում է **· լրիվ կամ համապատասխան մասով դադարում է**
325	Պարտապանի մահով պարտավորությունը. o շարունակվում է, եթե դա նախատեսված է օրենքով o կասեցվում է **· դադարում է, եթե կատարումը չի կարող տեղի ունենալ առանց պարտապանի անձնական մասնակցության կամ պարտավորությունն այլ կերպ անխզելիորեն կապված է պարտապանի անձի հետ** o դադարում է մասնակի
326	Փոխատու իրավաբանական անձի վերակազմակերպման դեպքում ու՞մ են անցնում գույքի անհատույց օգտագործման պայմանագրով փոխատուի իրավունքներն ու պարտականությունները. o փոխառուին կամ նրա իրավահաջորդին o երրորդ անձին **· փոխատուի իրավահաջորդին** o պետությանը կամ համայնքին
327	Պարտավորությունը լրիվ կամ մասնակի դադարում է միատեսակ հանդիպական այն պահանջի հաշվանցով, որի ժամկետը. **· լրացել է կամ նշված չէ, կամ որոշված է պահանջի պահով** o միայն լրացել է կամ նշված չէ o միայն որոշված է պահանջի պահով o միայն լրացել է
328	Կողմերը կարող են կնքել. o միայն օրենքով չնախատեսված պայմանագիր o միայն օրենքով նախատեսված պայմանագիր **· ինչպես օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված, այնպես էլ չնախատեսված պայմանագիր** o միայն բանավոր պայմանագիր

329	Ինչպիսի՞ իրավական հետևանքներ է առաջացնում արտաքին տնտեսական գործարքի հասարակ գրավոր ձևը չպահպանելը. o տվյալ գործարքը դարձնում է վիճարկելի **· հանգեցնում է դրա անվավերության** o վեճի դեպքում կողմերին զրկում է ի հաստատումն գործարքի ու նրա պայմանների՝ վկաների ցուցմունքներ վկայակոչելու, սակայն նրանց չի զրկում գրավոր և այլ ապացույցներ ներկայացնելու իրավունքից o գործարքը համարվում է չկնքված, և չի առաջանում որևէ իրավական հետևանք
330	Ինչպիսի՞ իրավական հետևանքներ է առաջացնում գործարքի հասարակ գրավոր ձևը չպահպանելը. o գործարքը դարձնում է վիճարկելի o գործարքը դարձնում է անվավեր o գործարքը համարվում է չկնքված, և չի առաջանում որևէ իրավական հետևանք **· վեճի դեպքում կողմերին զրկում է ի հաստատումն գործարքի ու նրա պայմանների՝ վկաների ցուցմունքներ վկայակոչելու, սակայն նրանց չի զրկում գրավոր և այլ ապացույցներ ներկայացնելու իրավունքից**
331	Կապալի պայմանագրով կատարված աշխատանքի անպատշաճ որակի վերաբերյալ պահանջներ ներկայացնելու համար որքա՞ն է հայցային վաղեմության ժամկետը շենքերի և շինությունների համար. **· երեք տարի** o վեց ամիս o մեկ տարի o հինգ տարի
332	Եթե կապալի պայմանագրին համապատասխան աշխատանքի արդյունքը պատվիրատուն ընդունել է մաս առ մաս, հայցային վաղեմության ընթացքը սկսում է. o աշխատանքի արդյունքն ամբողջությամբ ավարտելու օրվանից **· աշխատանքի արդյունքն ամբողջությամբ ընդունելու օրվանից** o աշխատանքի արդյունքի կեսն ընդունելու օրվանից o պայմանագրային աշխատանքների ավարտման պահից
333	Եթե նախնական պայմանագրում ժամկետ որոշված չէ, ապա նախնական պայմանագիրը կնքելու պահից ի՞նչ ժամկետում պետք է կնքվի հիմնական պայմանագիրը. **· մեկ տարվա ընթացքում** o երկու տարվա ընթացքում o հինգ տարվա ընթացքում o կողմերի ցանկությամբ ցանկացած ժամանակ

334	Պայմանագրի պայմանները մեկնաբանելիս դատարանն ինչի՞ց պետք է ելնի. o պայմանագիրը ստորագրողի անձնական մեկնաբանություններից o կողմերի մեկնաբանություններից o պետական մարմնի մեկնաբանություններից **· նրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից**
335	Կենցաղային կապալի պայմանագրով պատվիրատուի հանձնարարությամբ ի՞նչ աշխատանք է պարտավորվում կատարել ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող կապալառուն. o որոշակի իրավաբանական գործողություններ o առքուվաճառք **· պատվիրատուի կենցաղային կամ այլ անձնական պահանջները բավարարելու համար նախատեսված որոշակի աշխատանքներ** o շինարարական, կենցաղային և այլ աշխատանքներ
336	Նվիրատվության պայմանագիրը կնքելուց հետո նվիրառուն մահացել է: Սույն պայմանագրով սահմանված չէր նվիրատվության իրավահաջորդությունը: Տվյալ դեպքում նվիրառուի, ում նվիրատվության պայմանագրով խոստացվել է նվեր, իրավունքները, եթե այլ բան նախատեսված չէ նվիրատվության պայմանագրով. o փոխանցվում են նրա ժառանգներին **· չեն փոխանցվում նրա ժառանգներին** o փոխանցվում են նրա ժառանգներին, եթե նվերի արժեքը գերազանցում է նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկը o փոխանցվում են նրա ժառանգներին, եթե նվերի արժեքը գերազանցում է նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկը
337	Կենցաղային կապալի պայմանագրում ինչպե՞ս է որոշվում աշխատանքի գինը. o վերադաս կազմակերպության կողմից սահմանված կարգով o կապալառուի սահմանած չափով o պատվիրատուի սահմանած չափով **· կողմերի համաձայնությամբ**

338	Բաց սակարկությունների կազմակերպիչը իրավունք ունի հրաժարվել մրցույթն անցկացնելուց՝ այդ մասին հայտարարելով մրցույթն անցկացնելու օրվանից ոչ ուշ, քան. o երեք օր առաջ o քսան օր առաջ o տասն օր առաջ **· երեսուն օր առաջ**
339	Շինարարական կապալի պայմանագրով պատվիրատուի առաջադրանքով ի՞նչ աշխատանք է պարտավորվում կատարել կապալառուն. o իրավաբանական կամ փաստաբանական գործողություններ **· կառուցել որոշակի օբյեկտ կամ կատարել շինարարական այլ աշխատանքներ** o նվիրատվություն կամ նվիրաբերություն o առքուվաճառք կամ փաստաբանական գործողություններ
340	Ե՞րբ է համարվում կնքված այն պայմանագիրը, որից ծագող իրավունքներն ենթակա են պետական գրանցման. **· այդ իրավունքի պետական գրանցման պահից** o այդ իրավունքի պետական գրանցման համար դիմում ներկայացնելու պահից o պետական մարմնի համաձայնության պահից o պայմանագիրը ստորագրելու պահից
341	Ո՞վ է կրում շինարարական կապալի պայմանագրի առարկա շինարարական օբյեկտի պատահական կորստի կամ պատահական վնասվածքի ռիսկը մինչև այդ օբյեկտը պատվիրատուի կողմից ընդունելը. o պատվիրատուն **· կապալառուն** o պատվիրատուն և կապալառուն համատեղ o ոչ ոք
342	Ի՞նչ ձևով կարող է կնքվել պայմանագիրը, եթե տվյալ տեսակի պայմանագիր կնքելու համար օրենքով որոշակի ձև սահմանված չէ. o պետական մարմնի սահմանած ձևով o պայմանագիր չի կարող կնքվել **· գործարքներ կնքելու համար նախատեսված ցանկացած ձևով** o համայնքի ղեկավարի սահմանած ձևով

343	Նշվածներից ո՞րն է ճիշտ. **· նոտարն արդարադատության իրականացմանը նպաստող հանրային ծառայություններ իրականացնող անձ է, որը ՀՀ անունից, ՀՀ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, իրականացնում է «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքով նախատեսված նոտարական գործողություններ և ծառայություններ** o նոտարն արդարադատություն իրականացնող անձ է, որը ՀՀ անունից, ՀՀ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, իրականացնում է «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքով նախատեսված նոտարական գործառնություններ o նոտարն արդարադատության իրականացմանը նպաստող մասնավոր ծառայություններ իրականացնող անձ է, ով իր անունից, ՀՀ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, իրականացնում է «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքով նախատեսված նոտարական գործողություններ և ծառայություններ o նոտարն արդարադատության իրականացմանը նպաստող հանրային ծառայություններ իրականացնող անձ է, ով իր անունից, իր ռիսկով իրականացնում է «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքով նախատեսված նոտարական գործողություններ և ծառայություններ
344	Շինարարական կապալի պայմանագրի դեպքում ինչո՞վ է սահմանվում նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը. o օրենքով **· շինարարական կապալի պայմանագրով** o չի սահմանվում o միջազգային պայմանագրով
345	Օֆերտան կաշկանդու՞մ է արդյոք ուղարկող անձին՝ այն հասցեատիրոջ կողմից ստանալու պահից. o պետական մարմնի միջամտության դեպքում է կաշկանդում o չի կաշկանդում **· կաշկանդում է** o դատարանի ակտով է կաշկանդում
346	Ի՞նչ է առաջարկն ընդունելու մասին այն անձի պատասխանը, ում հասցեագրվել է առաջարկը. o օֆերտա **· ակցեպտ** o բանակցությունները վերսկսելու հայտարարություն o մտադրությունների մասին հուշագիր

347	Արդյո՞ք լռությունն ակցեպտ է, եթե այլ բան չի բխում օրենքից, գործարար շրջանառության սովորույթից կամ կողմերի նախկին գործարար հարաբերություններից. o ակցեպտ է, եթե ողջամիտ ժամկետում պատասխան չի տրվել o ակցեպտ է o պետական մարմնի համաձայնության դեպքում է ակցեպտ **· ակցեպտ չէ**
348	Գիտության, գրականության կամ արվեստի ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքը ծագում է. o այն հրատարակելու ուժով **· այն ստեղծելու փաստի ուժով** o այն լիազորված պետական մարմնում գրանցելու ուժով o դրա մատչելիության ուժով
349	Նշվածներից ի՞նչ գործողություն նոտարը չի կատարում։ **· օտարերկրյա քաղաքացիներին ՀՀ քաղաքացիություն է շնորհում** o տալիս է ժառանգության իրավունքի վկայագրեր o միջոցներ է ձեռք առնում ժառանգական գույքի պահպանության համար o վավերացնում է գործարքներ (պայմանագրեր, կտակներ, լիազորագրեր, համաձայնագրեր և այլն)
350	Վաճառողի կողմից գնորդին առանց վերջինիս համաձայնության երրորդ անձանց իրավունքներով ծանրաբեռնված ապրանք հանձնելու դեպքում գնորդն իրավունք ունի վաճառողից պահանջել. **· ապրանքի գնի նվազեցում կամ առուվաճառքի պայմանագրի լուծում, եթե վաճառողը չի ապացուցում, որ գնորդը գիտեր կամ պետք է իմանար տվյալ ապրանքի նկատմամբ երրորդ անձանց իրավունքների մասին** o ազատել ապրանքը երրորդ անձանց իրավունքներից o երրորդ անձանց հետ կնքել լրացուցիչ պայմանագիր o կնքել նոր պայմանագիր կամ ապրանքը փոխանցել այլ անձանց
351	ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համաձայն՝ ինչպիսի՞ աճուրդներ և մրցույթներ կարող են լինել. o սահմանափակ և անսահմանափակ o չեզոք և կողմնակալ **· բաց և փակ** o տարրական և բարդ

352	Մտավոր սեփականության օբյեկտներ են. o միայն մտավոր գործունեության արդյունքները o մտավոր գործունեության արդյունքները և դրանց հետ կապված գույքային պահանջները **· մտավոր գործունեության արդյունքները և քաղաքացիական շրջանառության մասնակիցների, ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների անհատականացման միջոցները** o մտավոր գործունեության արդյունքները և միայն ֆիզիկական անձանց, ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների անհատականացման միջոցները
353	Ո՞վ կարող է մասնակցել բաց աճուրդին և բաց մրցույթին. o միայն իրավաբանական անձինք **· ցանկացած անձ** o միայն պետական մարմինները o միայն ֆիզիկական անձինք
354	Մտավոր գործունեության արդյունք չեն. o գիտության, գրականության և արվեստի ստեղծագործությունները o կատարումները, հնչյունագրերը (ֆոնոգրամաները) և հեռարձակող կազմակերպությունների հաղորդումները **· ֆիրմային անվանումները** o գյուտերը, օգտակար մոդելները, արդյունաբերական նմուշները
355	Եթե երրորդ անձը մինչև առուվաճառքի պայմանագրի կատարումը ծագած հիմքերով գնորդի դեմ հայց է հարուցում ապրանքն առգրավելու մասին, ապա ու՞մ է պարտավոր գործին մասնակից դարձնել գնորդը. o ոչ ոքի **· վաճառողին** o վաճառողի ներկայացուցչին o արտադրողին
356	Քաղաքացու իրավունակությունը և գործունակությունը կարող են սահմանափակվել. o պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ակտերով նախատեսված դեպքերում և կարգով o օրենքով և Հանրապետության նախագահի հրամանագրով նախատեսված դեպքերում և կարգով o օրենքով, Հանրապետության նախագահի հրամանագրով և ՀՀ Կառավարության որոշմամբ նախատեսված դեպքերում և կարգով **· միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով**

357	Քաղաքացին կարող է դատարանով անգործունակ ճանաչվել, եթե. o ոգելից խմիչքների, թմրամիջոցների չարաշահման, ինչպես նաև մոլեխաղերով հրապուրվելու հետևանքով իր ընտանիքը դրել է նյութական ծանր դրության մեջ o տառապում է որևէ հոգեկան հիվանդությամբ o կիսով չափ կորցրել է իր հիշողությունը **· հոգեկան խանգարման հետևանքով չի կարող հասկանալ իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարել դրանք**
358	Ու՞մ համաձայնությամբ է հնարավոր պայմանագրի փոփոխումը և լուծումը, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով. o միայն կողմերից մեկի համաձայնությամբ **· կողմերի համաձայնությամբ** o միայն պետական մարմինների համաձայնությամբ o միայն դատարանի համաձայնությամբ
359	Առուվաճառքի պայմանագրով գնորդին հանձնվող ապրանքն ի՞նչ ժամկետում պետք է պիտանի լինի այն նպատակներին, որոնց համար այդ տեսակի ապրանքը սովորաբար օգտագործվում է. o հայցային վաղեմության **· ողջամիտ ժամկետում** o մեկ տարի o երեք տարի
360	Եթե այլ բան նախատեսված չէ առուվաճառքի պայմանագրով, ապա ո՞ր պահից է սկսվում երաշխիքային ժամկետը. **· ապրանքը գնորդին հանձնելու պահից** o պայմանագիրը կնքելու պահից o ապրանքի համար վճարելու պահից o պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից
361	Խնամակալության և հոգաբարձության մարմինները սահմանվում են. **· միայն օրենքով** o օրենքով և Հանրապետության նախագահի հրամանագրով o օրենքով, Հանրապետության նախագահի հրամանագրով և ՀՀ Կառավարության որոշումներով o պետական և տեղական ինքնակառավարման մարմինների որոշումներով

362	Ամուսիններից մեկի պարտավորությունների համար կարող է բռնագանձում տարածվել. o նրա սեփականության ներքո գտնվող գույքի, ինչպես նաև ամուսինների ընդհանուր գույքում նրա բաժնի վրա, եթե պարզի, որ տվյալ գույքը ձեռք է բերվել հանցավոր ճանապարհով o նրա սեփականության ներքո գտնվող գույքի, ինչպես նաև ամուսինների ընդհանուր գույքի վրա, եթե պարզի, որ տվյալ գույքը ձեռք է բերվել հանցավոր ճանապարհով o նրա սեփականության ներքո գտնվող գույքի, ինչպես նաև մյուս ամուսնու գույքի վրա **· նրա սեփականության ներքո գտնվող գույքի, ինչպես նաև ամուսինների ընդհանուր գույքում նրա բաժնի վրա**
363	Նշվածներից ի՞նչ գործողություն նոտարը չի կատարում. **· հաստատում է դատական ակտի՝ օրինական ուժի մեջ մտած լինելու հանգամանքը՝ կատարելով համապատասխան գրառում** o վավերացնում է փաստաթղթերի պատճենների կամ դրանց քաղվածքների իսկությունը o վավերացնում է փաստաթղթերի թարգմանության իսկությունը o տալիս է ընդհանուր համատեղ կամ ընդհանուր բաժնային սեփականության ներքո գտնվող գույքից հասանելիք բաժնի նկատմամբ սեփականության իրավունքի վկայագրեր
364	Եթե առուվաճառքի պայմանագրով նախատեսվում է վաճառողի պարտականությունը գնորդին կոմպլեկտով հանձնելու ապրանքների որոշակի հավաքածու, ապա ո՞ր պահից է պարտավորությունը համարվում կատարված. o կոմպլեկտում ներառված գույքը հանձնելու պահից o կոմպլեկտում ներառված գլխավոր գույքը և պատկանելիքը հանձնելու պահից o պայմանագիրը կնքելու պահից **· կոմպլեկտում ներառված բոլոր ապրանքները հանձնելու պահից**
365	Իրավաբանական անձը կարող է վերակազմակերպվել. o միայն բաժանման ձևով o բաժանման, միաձուլման և միացման ձևով o առանձնացման և վերակազմավորման ձևով **· միաձուլման, միացման, բաժանման, առանձնացման և վերակազմավորման ձևով**

366	Ապրանքների ապառիկ վաճառքն ի՞նչ գնով է կատարվում. o արտադրողի սահմանած գնով **· վաճառքի օրվա գնով** o ապրանքը գնորդին հանձնելու օրվա գներով o գնորդի ցանկությամբ որոշված գնով
367	Եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով, ապա ո՞ր պահից է գնորդը դառնում ապրանքի սեփականատեր. o պայմանագիրը կնքելու պահից o ապրանքն իրեն հանձնելու պահից **· ապրանքի համար վճարելու պահից** o վաճառողի սահմանած օրվանից
368	Լիակատար ընկերակցության մասնակիցներ կարող են լինել. **· միայն անհատ ձեռնարկատերերը և (կամ) առևտրային կազմակերպությունները** o ցանկացած իրավաբանական անձ o միայն անհատ ձեռնարկատերերը o ցանկացած քաղաքացի
369	Եթե բաժինը բնեղենով առանձնացնել անհնար է կամ դրա դեմ առարկում են բաժնային կամ համատեղ սեփականության մնացած մասնակիցները, ընդհանուր գույքում պարտապանի բաժնի վրա բռնագանձում տարածելու պահանջ ներկայացրած պարտատերն իրավունք ունի ընդհանուր սեփականության մնացած մասնակիցներից պահանջել. o պարտապանի փոխարեն մարել պարտքը o շուկայական գնով վաճառելու իրենց բաժինը **· շուկայական գնով գնելու պարտապանի բաժինը՝ պարտքը մարելու համար** o փոխհատուցել իր վնասները
370	Մտավոր գործունեության արդյունք չեն. o սելեկցիոն նվաճումները o ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաները **· ապրանքային նշանները (սպասարկման նշանները)** o չբացահայտված տեղեկատվությունը՝ ներառյալ արտադրության գաղտնիքները (նոու-հաու)

371	Վաճառողի կողմից գնորդին ինչպիսի՞ փաստաթուղթ հանձնելու պահից է մանրածախ առուվաճառքի պայմանագիրը համարվում պատշաճ ձևով կնքված. o պայմանագրով նախատեսված գործարար շրջանառության սովորույթներով ձևավորված **· դրամարկղային, ապրանքային չեկ, կամ ապրանքի վճարված լինելը հավաստող այլ փաստաթուղթ** o բաժնետոմս o բանկային վկայագիր
372	Ո՞ր դեպքերում պայմանագիրը, կողմերից մեկի պահանջով, կարող է փոփոխվել կամ լուծվել դատարանի վճռով. **· միայն մյուս կողմի թույլ տված՝ պայմանագրի էական խախտման կամ օրենքով կամ պայմանագրով նախատեսված այլ դեպքերում** o միայն իրավաբանական անձի պահանջի դեպքում o միայն պետական մարմինների համաձայնության դեպքում o ցանկացած դեպքում՝ կողմերից մեկի պահանջով
373	Քաղաքացիական շրջանառության մասնակիցների, ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների անհատականացման միջոց չեն. o ֆիրմային անվանումները o ապրանքային նշանները (սպասարկման նշանները) **· գիտության, գրականության և արվեստի ստեղծագործությունները** o աշխարհագրական նշումները, ծագման տեղանունները և երաշխավորված ավանդական արտադրանքի անվանումները
374	Ի՞նչ է համարվում անձանց անորոշ շրջանակի հասցեագրված ապրանքի առաջարկը՝ գովազդով, քարտացուցակներով (կատալոգներով) և նկարագրությամբ, եթե այն պարունակում է մանրածախ առուվաճառքի պայմանագրի բոլոր էական պայմանները. **· հրապարակային օֆերտա** o հրապարակային ակցեպտ o ոչինչ o պարզապես առաջարկ

375	Մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքները ծագում են. o դրանց ստեղծման փաստի ուժով՝ այդ օբյեկտներին տնտեսական պահպանություն տրամադրելու հետևանքով o միայն լիազորված պետական մարմնի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքով կամ այլ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով՝ այդ օբյեկտներին իրավական պահպանություն տրամադրելու հետևանքով **· դրանց ստեղծման փաստի ուժով կամ լիազորված պետական մարմնի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքով կամ այլ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով՝ այդ օբյեկտներին իրավական պահպանություն տրամադրելու հետևանքով** o նոտարի կողմից վավերացվելուց հետո
376	Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է. o առոչինչ o կասեցված o դադարեցված **· լուծված կամ փոփոխված**
377	Գնորդը ոչ պարենային ապրանքն իրեն հանձնելու պահից ի՞նչ ժամկետում իրավունք ունի այն գնելու վայրում փոխարինելու այլ չափի, ձևի, գույքի ապրանքով, եթե վաճառողն ավելի երկար ժամկետ չի հայտարարել. o երեք օրվա ընթացքում **· տասնչորս օրվա ընթացքում** o մեկ ամսվա ընթացքում o երեք ամսվա ընթացքում
378	Ի՞նչ ձևով է կնքվում պայմանագրի փոփոխման կամ լուծման համաձայնությունը, եթե այլ բան չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պայմանագրից կամ գործարար շրջանառության սովորույթներից. o միայն հասարակ գրավոր ձևով o միայն նոտարական ձևով **· այն ձևով, ինչով պայմանագիրը** o ցանկացած ձևով

379	Բաժնետիրական ընկերությունն իրավունք ունի վերակազմավորվել. o լիակատար ընկերակցության o վստահության վրա հիմնված ընկերակցության **· սահմանափակ պատասխանատվության ընկերության կամ առևտրային կոոպերատիվի** o հիմնադրամի
380	Չբացահայտված տեղեկատվությանն իրավական պահպանություն տրամադրելու պայմանները սահմանվում են՝ o ՀՀ կառավարության որոշմամբ o պայմանագրով **· օրենքով** o ՀՀ կառավարության որոշմամբ կամ պայմանագրով
381	Նոտարը վավերացնում է. **· գործունակ անձանց կտակները, իսկ ներկայացուցիչների միջոցով կտակների վավերացում չի թույլատրվում** o անգործունակ անձանց կտակները, իսկ ներկայացուցիչների միջոցով կտակների վավերացում չի թույլատրվում o գործունակ անձանց կտակները, ինչպես նաև ներկայացուցիչների միջոցով կտակները o անգործունակ անձանց կտակները, ինչպես նաև ներկայացուցիչների միջոցով կտակները
382	Վերալիազորման իրավունքով տրված լիազորագրի գործողության ժամկետը. **· չի կարող գերազանցել հիմնական լիազորագրի գործողության ժամկետը** o 5 տարի է o 4 տարի է o կարող է գերազանցել հիմնական լիազորագրի գործողության ժամկետը ոչ ավելի, քան մեկ ամսով
383	Պահանջվու՞մ է արդյոք պարտապանի համաձայնությունը պարտատիրոջ իրավունքներն այլ անձի անցնելու համար, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով. o պարտապանի հայեցողությամբ o պահանջվում է **· չի պահանջվում** o պարտատիրոջ հայեցողությամբ

384	Եթե մատակարարման պայմանագրում բեռնման կարգադրագիր ուղարկելու ժամկետ նախատեսված չէ, ապա ի՞նչ ժամկետում այն պետք է ուղարկվի մատակարարին. **· մատակարարման փուլը սկսվելուց առնվազն երեսուն օր առաջ** o պայմանագրի կնքումից երեսուն օր հետո o ողջամիտ ժամկետում o բեռնման կարգադրագիր չի ուղարկվում
385	Թույլատրվու՞մ է արդյոք պարտատիրոջ անձի հետ անխզելիորեն կապված իրավունքների՝ ներառյալ ալիմենտի և կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման պահանջների անցնելն այլ անձի. o թույլատրվում է **· չի թույլատրվում** o թույլատրվում է եթե անձն առաջին հերթի ժառանգ է o թույլատրվում է օրենքով սահմանված դեպքերում
386	Ու՞մ սեփականությունն է հանդիսանում հիմնադիրների (մասնակիցների)՝ հասարակական միավորմանը հանձնած գույքը. o հիմնադրամի o պետության o իրավաբանական անձանց միության **· հասարակական միավորման**
387	Ի՞նչ նպատակներով է օգտագործում հասարակական միավորումն իր գույքը. **· իր կանոնադրությամբ սահմանված նպատակների համար** o ՀՀ Ազգային ժողովի որոշմամբ սահմանված նպատակների համար o հասարակական միավորման քսանհինգ անդամների կողմից սահմանված նպատակների համար o հասարակական միավորման նախագահի կողմից սահմանված նպատակների համար
388	Պատասխանատու՞ են արդյոք հասարակական միավորման մասնակիցները տվյալ հասարակական միավորման պարտավորությունների համար. o պատասխանատու են, եթե տվյալ հարցի վերաբերյալ առկա է ՀՀ կառավարության կողմից ընդունված որոշում o պատասխանատու են **· պատասխանատու չեն** o պատասխանատու են, եթե ՀՀ Նախագահը ստորագրել է հրամանագիր

389	Պատասխանատու՞ են արդյոք հասարակական միավորումներն իրենց մասնակիցների պարտավորությունների համար. o պատասխանատու են **· պատասխանատու չեն** o պատասխանատու են, եթե տվյալ հարցի վերաբերյալ առկա է ՀՀ կառավարության կողմից ընդունված որոշում o պատասխանատու են, եթե ՀՀ Նախագահը ստորագրել է հրամանագիր
390	Ե՞րբ է պայմանագիրը համարվում կնքված, եթե օրենքին համապատասխան պայմանագիր կնքելու համար անհրաժեշտ է նաև հանձնել գույք. o կողմերից մեկի հայեցողությամբ **· համապատասխան գույքը հանձնելու պահից** o պետական մարմնի համաձայնության պահից o պայմանագիրը կնքելու պահից
391	Ո՞վ է վճարում ապրանքների համար, երբ պետական կարիքների համար ապրանքները մատակարարվում են բեռնման կարգադրագրում նշված ստացողներին. o բեռնման կարգադրագրում նշված ստացողը **· պետական պատվիրատուն, եթե վճարման այլ կարգ սահմանված չէ պետական պայմանագրով** o մատակարարը, եթե վճարման այլ կարգ սահմանված չէ պետական պայմանագրով o պետական կարիքների համար ապրանքների դիմաց չի վճարվում
392	Մտավոր գործունեության արդյունքի հեղինակի իրավունքը. o (հեղինակության իրավունքը) գույքային իրավունք է և կարող է պատկանել միայն այն անձին, ում ստեղծագործական աշխատանքով ստեղծվել է մտավոր գործունեության արդյունքը o (հեղինակության իրավունքը) անձնական ոչ գույքային իրավունք է և կարող է պատկանել միայն այն անձին, ով գրանցել է մտավոր գործունեության արդյունքը **· (հեղինակության իրավունքը) անձնական ոչ գույքային իրավունք է և կարող է պատկանել միայն այն անձին, ում ստեղծագործական աշխատանքով ստեղծվել է մտավոր գործունեության արդյունքը** o (հեղինակության իրավունքը) անձնական ոչ գույքային իրավունք է և պատկանում է հանրությանը

393	Ի՞նչ ձևով պետք է կնքվի տուժանքի մասին համաձայնությունը. o հիմնական պարտավորության ձևով **· գրավոր՝ անկախ հիմնական պարտավորության ձևից** o կողմերի համար ընդունելի ձևով o բանավոր
394	Պետական պայմանագրով գնորդի կողմից ապրանքների համար վճարելիս գնորդի այդ պարտավորությամբ ի՞նչ է համարվում պետական պատվիրատուն. o միջնորդ **· երաշխավոր** o պարտատեր o պարտապան
395	Նոտարը վավերացնում է այն բոլոր փաստաթղթերի վրա եղած. **· ֆիզիկական անձանց ստորագրությունների իսկությունը, որոնք չունեն գործարքի բնույթ** o իրավաբանական անձանց ստորագրությունների իսկությունը, որոնք չունեն գործարքի բնույթ o ֆիզիկական անձանց ստորագրությունների իսկությունը, որոնք ունեն գործարքի բնույթ o իրավաբանական անձանց ստորագրությունների իսկությունը, որոնք ունեն գործարքի բնույթ
396	Կարո՞ղ է արդյոք հավատարմագրային կառավարիչը գույքի հավատարմագրային կառավարման պայմանագրով լինել շահառու. o կարող է, եթե դա անհրաժեշտ է **· չի կարող** o կարող է ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով o պարտավոր է
397	Հեղինակության իրավունքն. o օտարելի ու անփոխանցելի է և գործում է անժամկետ o անօտարելի ու փոխանցելի է և գործում է անժամկետ **· անօտարելի ու անփոխանցելի է և գործում է անժամկետ** o անօտարելի ու անփոխանցելի է և գործում է հինգ տարի ժամկետով

398	Ի՞նչ հետևանք ունի ներկայացուցչին տրված նվիրատվության կատարման այն լիազորագիրը, որում նշված չէ նվիրառուն և սահմանված չէ նվիրատվության առարկան. o նվիրատվության առարկան ընտրվում է նվիրառուի ցանկությամբ o գույքը, որպես սեփականություն հանձնվում է կամայական նվիրառուի o առաջացնում է բոլոր իրավական հետևանքները **· առոչինչ է**
399	Եթե պետական պատվիրատուի հրաժարվելը պետական պայմանագրով նախատեսված ապրանքներից հանգեցրել է պետական պայմանագրի լուծման կամ փոփոխման, ապա ո՞վ է հատուցում դրա հետևանքով գնորդին պատճառված վնասները. o ոչ ոք o մատակարարը o մատակարարը և պետական պատվիրատուն **· պետական պատվիրատուն**
400	Մտավոր գործունեության արդյունքների կամ քաղաքացիական շրջանառության մասնակիցների, ապրանքների և ծառայությունների անհատականացման միջոցների (այսուհետ՝ անհատականացման միջոցներ) նկատմամբ գույքային իրավունքների տիրապետողը մտավոր սեփականության այդ օբյեկտն. o առանց թույլտվության օրինաչափ օգտագործման իրավունք չունի o իր հայեցողությամբ, սակայն պետական մարմնի պարտադիր ցուցումների կատարմամբ, ցանկացած ձևով և եղանակով օրինաչափ օգտագործելու իրավունք ունի **· իր հայեցողությամբ ցանկացած ձևով և եղանակով օրինաչափ օգտագործելու բացառիկ իրավունք ունի** o իր հայեցողությամբ ցանկացած ձևով և եղանակով անօրինաչափ օգտագործելու բացառիկ իրավունք ունի
401	Ստորև թվարկվածներից ո՞ր դեպքում է աբոնենտի հետ կնքվում էներգամատակարարման պայմանագիր. o աբոնենտի վերադաս կազմակերպության թույլտվության առկայության դեպքում **· սպառված էներգիայի հաշվառման ապահովվածության դեպքում** o էներգաընդունիչ սարքավորումների բացակայության դեպքում o ոչ մի դեպքում

402	Ո՞ր պահից է կնքված համարվում էներգամատակարարման պայմանագիրը, եթե որպես աբոնենտ հանդես է գալիս կենցաղային սպառման համար էներգիա օգտագործող քաղաքացին. o էներգիայի դիմաց առաջին վճարումը կատարելու պահից **· միացված ցանցին սահմանված կարգով աբոնենտի առաջին փաստացի միացման պահից** o էներգամատակարարող կազմակերպության կողմից սահմանված պահից o կողմերի որոշած պահից
403	Եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ, ապա ի՞նչ ժամկետով է կնքված համարվում էներգամատակարարման պայմանագիրը. o ողջամիտ o վեց ամիս **· անորոշ** o մեկ տարի
404	Եթե մինչև էներգամատակարարման պայմանագրի գործողության ժամկետի ավարտը կողմերից որևէ մեկը չի հայտնում այն դադարելու կամ նոր պայմանագիր կնքելու մասին, ապա ի՞նչ ժամկետով է երկարաձգված համարվում որոշակի ժամկետով կնքված էներգամատակարարման պայմանագիրը. o ողջամիտ o անորոշ **· նույն ժամկետով և պայմաններով** o օրենքով նախատեսված առավելագույն ժամկետով և պայմաններով
405	Եթե էներգամատակարարման պայմանագրով որպես աբոնենտ հանդես է գալիս էներգիան կենցաղային սպառման համար օգտագործող քաղաքացին, ապա նա որքա՞ն էներգիա իրավունք ունի օգտագործել. **· իր համար խելամտորեն անհրաժեշտ քանակի** o էներգամատակարարող կազմակերպության համար խելամտորեն թույլատրելի քանակի o պետականորեն սահմանված քվոտաների շրջանակներում o էներգամատակարարող կազմակերպության կողմից սահմանած քանակի

406	Եթե էներգամատակարարման պայմանագրով աբոնենտն էներգիան կենցաղային սպառման համար օգտագործող քաղաքացի չէ, ապա ո՞վ է պարտավոր ապահովել շահագործվող էներգետիկ ցանցերի պատշաճ տեխնիկական վիճակն ու անվտանգությունը. · **աբոնենտը** · էներգամատակարարող կազմակերպությունը · պետությունը · ոչ ոք
407	Եթե շենքի կամ շինության վարձակալության պայմանագրում բացակայում է վարձավճարի չափի մասին պայմանը, ապա ըստ քաղաքացիական օրենսգրքի. · վարձավճարը պետք է վճարվի այն գնով, որը համեմատելի հանգամանքներում սովորաբար գանձվում է նույնանման տարածքների վարձակալության համար · վարձավճարը որոշվում է՝ ելնելով վարձակալին հանձնված շենքի կամ շինության փաստացի չափերից · **պայմանագիրը համարվում է չկնքված** · վարձավճարը որոշվում է դատարանի վճռով
408	Ո՞ր դեպքում նվիրատուն իրավունք ունի վերացնել նվիրատվությունը. · **եթե նվիրառուն նվիրատուին դիտավորյալ պատճառել է մարմնական վնասվածքներ** · նման իրավունք չունի · եթե նվիրատվության պայմանագիրը կնքելուց հետո վատացել է նվիրատուի գույքային կամ ընտանեկան դրությունը · եթե վատացել է նվիրառուի ընտանեկան դրությունը
409	Կարող է արդյո՞ք նվիրատուն վերացնել նվիրատվությունը, եթե նա նվիրառուից ավելի երկար ապրի. · ոչ, չի կարող · **այո, եթե նման իրավունք սահմանված է նվիրատվության պայմանագրում** · այո, եթե նվիրառուն արդեն հիվանդ է · այո, եթե նվիրատուն անչափահաս է
410	Ի՞նչ է պարտավոր կատարել նվիրառուն նվիրատվության վերացման դեպքում. · պահանջել վնասների հատուցում · վճարել տուժանք · **վերադարձնել նվիրատուի նվիրած գույքը, եթե այն բնեղենով պահպանվել է նվիրատվության վերացման պահին** · ոչինչ

411	Ինչի՞ նկատմամբ չեն կիրառվում նվիրատվության պայմանագիրը կատարելուց հրաժարվելու և նվիրատվությունը վերացնելու ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կանոնները. · անշարժ գույքի նկատմամբ · արվեստի ստեղծագործությունների նկատմամբ · հինգ միլիոն դրամից ավելի արժեք ունեցող նվերների նկատմամբ · **փոքրարժեք նվերների նկատմամբ**
412	Փոխանցվու՞մ են արդյոք նվիրատվություն խոստացած նվիրատուի պարտականությունները նրա ժառանգներին (իրավահաջորդներին). · այո, եթե նման ցանկություն հայտնում են նվիրառուի ժառանգները · այո, ցանկացած դեպքում · **այո, եթե այլ բան նախատեսված չէ նվիրատվության պայմանագրով** · ոչ, երբեք չեն փոխանցվում
413	Ինչպե՞ս է կոչվում գույքի կամ իրավունքի նվիրատվությունը հանրօգուտ նպատակներով. · օգտակար նվիրատվություն · գույքի կամ իրավունքի փոխանցում · գույքի կամ իրավունքի փոխանակում · **նվիրաբերություն**
414	Ներքոշարադրյալներից ի՞նչ իրավունք ունի պահանջել առանձնացող սեփականատերը բաժնային սեփականության մյուս մասնակիցներից, եթե բաժինը բնեղենով առանձնացնելը չի թույլատրվում օրենքով կամ դա անհնար է առանց ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքին անհամաչափ վնաս պատճառելու. · պահանջել գույքը հրապարակային սակարկություններով վաճառել՝ ստացված գումարը հետագայում բաշխելով ընդհանուր սեփականության մասնակիցների միջև՝ նրանց բաժիններին համաչափ · հրաժարվել գնելու նախապատվության իրենց իրավունքից · փոխհատուցել առանձնացող սեփականատիրոջ իրական վնասները · **պահանջել վճարելու իր բաժնի արժեքը**
415	Ի՞նչ իրավունք ունի պահանջել բաժնային սեփականության ցանկացած մասնակից գնելու նախապատվության իրավունքի խախտմամբ գույքի վաճառքի դեպքում. · դատական կարգով պահանջել անվավեր ճանաչել առուվաճառքի պայմանագիրը · **երեք ամսվա ընթացքում դատական կարգով պահանջել իրեն փոխանցել գնորդի իրավունքները և պարտականությունները** · դատական կարգով պահանջել վնասների փոխհատուցում · դատական կարգով պահանջել լուծել առուվաճառքի պայմանագիրը

416	Եթե իրադրության փոփոխման հետևանքով նվիրաբերված գույքի օգտագործումը նվիրաբերողի սահմանած նպատակին համապատասխան դառնում է անհնար, իսկ նվիրաբերող քաղաքացին մահացել է, գույքը ի՞նչ կարգով կարող է օգտագործվել այլ նպատակով. · միայն նվիրաբերողի ժառանգների համաձայնությամբ · նվիրառուի հայեցողությամբ · **միայն դատարանի վճռով** · չի կարող օգտագործվել
417	Ինչպե՞ս է տեղի ունենում սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալի բաժնեմասի անցումը ընկերության մասնակից քաղաքացիների ժառանգներին և իրավաբանական անձանց իրավահաջորդներին. · սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալի բաժնեմասերն անցնում են ընկերության մասնակից քաղաքացիների ժառանգներին և իրավաբանական անձանց իրավահաջորդներին, միայն ընկերության մյուս մասնակիցների համաձայնությամբ · սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալի բաժնեմասերն անցնում են ընկերության մասնակից քաղաքացիների ժառանգներին և իրավաբանական անձանց իրավահաջորդներին, միայն կանոնադրությամբ նման հնարավորություն ուղղակիորեն նախատեսված լինելու դեպքում · սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալի բաժնեմասերն անցնում են ընկերության մասնակից քաղաքացիների ժառանգներին և իրավաբանական անձանց իրավահաջորդներին, միայն ընկերության մյուս մասնակիցների երկու երրորդի համաձայնության դեպքում · **սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալի բաժնեմասերն անցնում են ընկերության մասնակից քաղաքացիների ժառանգներին և իրավաբանական անձանց իրավահաջորդներին, եթե ընկերության կանոնադրությամբ նախատեսված չէ, որ նման անցումը թույլատրվում է միայն ընկերության մնացած մասնակիցների համաձայնությամբ**
418	Եթե այլ բան նախատեսված չէ վարձակալության պայմանագրով, ապա ու՞մ սեփականությունն են վարձակալած գույքի օգտագործման արդյունքում վարձակալի ստացած պտուղները, արտադրանքը և եկամուտը. · վարձատուի · **վարձակալի** · վարձատուի և վարձակալի · ոչ մեկի

419	Ինչպիսի՞ հետևանք է առաջացնում վարձակալության պայմանագրում այնպիսի տվյալների բացակայությունը, որոնք թույլ են տալիս որոշակիորեն սահմանել այն գույքը, որը որպես վարձակալության օբյեկտ հանձնվում է վարձակալին. · պայմանագիրը համարվում է առոչինչ · պայմանագիրը լուծվում է · **վարձակալության օբյեկտի մասին պայմանը համարվում է չհամաձայնեցված, իսկ համապատասխան պայմանագիրը՝ չկնքված** · պայմանագիրը շարունակում է գործել մինչև նոր պայմանագիր կնքելը
420	Ի՞նչ ձևով է կնքվում շինության վարձակալության պայմանագիրը. · **գրավոր՝ կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով** · փաստաթղթեր փոխանակելու միջոցով · բանավոր ձևով · կողմերի պայմանավորված որոշակի ձևով
421	Եթե պայմանագրում վարձակալության ժամկետը որոշված չէ, և կողմերից որևէ մեկը մինչև օրենքով սահմանված առավելագույն ժամկետը լրանալը չի հրաժարվել պայմանագրից, ապա ի՞նչ է տեղի ունենում առավելագույն ժամկետը լրանալուց հետո. · նոր պայմանագիր է կնքվում · **պայմանագիրը դադարում է** · պայմանագիրը երկարաձգվում է նոր ժամկետով · պայմանագիրը երկարաձգվում է նույն ժամկետով
422	Ի՞նչ ժամկետով է կնքված համարվում օրենքով սահմանված առավելագույն ժամկետը գերազանցող ժամկետով կնքված վարձակալության պայմանագիրը. · **առավելագույն ժամկետին հավասար ժամկետով** · առավելագույն ժամկետի կեսին հավասար ժամկետով · հինգ տարի ժամկետով · համարվում է չկնքված
423	Ի՞նչ վիճակում է վարձատուն պարտավոր գույքը տրամադրել վարձակալին. · բարեկարգ · իր համար խելամիտ · **վարձակալության պայմանագրի պայմաններին և գույքի նշանակությանը համապատասխանող վիճակում** · ոչ պատշաճ

424	Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման սահմանադրական պայմաններն են. · օտարումը պետք է իրականացվի օրենքով սահմանված կարգով, ինչպես նաև օտարվող սեփականության դիմաց պետք է տրվի հետագա համարժեք փոխհատուցում · օտարումը պետք է իրականացվի պայմանագրով սահմանված կարգով, ինչպես նաև օտարվող սեփականության դիմաց պետք է տրվի մասնակի փոխհատուցում · օտարումը պետք է իրականացվի պայմանագրով սահմանված կարգով, ինչպես նաև օտարվող սեփականության դիմաց պետք է տրվի նախնական մասնակի փոխհատուցում **· օտարումը պետք է իրականացվի օրենքով սահմանված կարգով, ինչպես նաև օտարվող սեփականության դիմաց պետք է տրվի նախնական համարժեք փոխհատուցում**
425	Վարձակալության հանձնված գույքի ո՞ր թերությունների համար վարձատուն պատասխանատվություն չի կրում. · բոլոր **· այն թերությունների համար, որոնք նա նշել է պայմանագիրը կնքելիս** · այն թերությունների համար, որոնց մասին նա չգիտեր · այն թերությունների համար, որոնք նա չի նշել պայմանագիրը կնքելիս
426	Նշվածներից ո՞րն է ճիշտ. **· հասարակության և պետության կարիքների համար սեփականությունը կարող է օտարվել հօգուտ պետության, համայնքի կամ կազմակերպության** · հասարակության և պետության կարիքների համար սեփականությունը կարող է օտարվել միայն հօգուտ պետության · հասարակության և պետության կարիքների համար սեփականությունը կարող է օտարվել միայն հօգուտ համայնքի · հասարակության և պետության կարիքների համար սեփականությունը կարող է օտարվել միայն հօգուտ կազմակերպության
427	Ինչպե՞ս են որոշվում վարձակալի կողմից վճարվող վարձավճարը մուծելու կարգը, պայմանները և ժամկետները. · վարձատուի կողմից · վարձակալի կողմից **· վարձակալության պայմանագրով** · չեն որոշվում
428	Եթե վարձակալության պայմանագրով որոշված չէ վարձավճարը մուծելու կարգը, ապա ի՞նչ կարգ է կիրառվում. · վարձակալի սահմանած կարգը **· նույնանման գույքի վարձակալության ժամանակ համեմատելի հանգամանքներում սովորաբար գործող կարգը**

	• որևէ կարգ չի կիրառվում • վարձատուի սահմանած կարգը
429	Ի՞նչ ժամկետում է կատարվում վարձակալության հանձնված գույքի հիմնական վերանորոգումը, եթե պայմանագրով այն որոշված չէ, կամ առաջացել է անհետաձգելի անհրաժեշտություն. • մեկ տարի • **ողջամիտ** • վեց ամիս • չի կատարվում
430	Եթե մահացել է անշարժ գույք վարձակալած քաղաքացին, ապա ո՞ր դեպքում վարձատուն իրավունք ունի մերժել նրա ժառանգին պայմանագրի կողմ դառնալու մնացած ժամկետում. • **եթե պայմանագիր կնքելը պայմանավորված է եղել վարձակալի անհատական հատկանիշներով** • եթե վարձակալ քաղաքացու ժառանգն անչափահաս է • ոչ մի դեպքում • ցանկացած դեպքում
431	Իրավունք ունի՞ արդյոք վարձակալը վարձակալության պայմանագրով վարձակալության հանձնված գույքը հանձնել ենթավարձակալության. • ոչ • **այո, միայն վարձատուի համաձայնությամբ, եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, այլ օրենքներով կամ այլ իրավական ակտերով** • այո, անկախ վարձատուի ցանկությունից • այո, ենթավարձակալի համաձայնությամբ
432	Իրավունք ունի՞ արդյոք վարձակալը վարձակալության պայմանագրով վարձակալության իրավունքը գրավ դնել. • ոչ • **այո, միայն վարձատուի համաձայնությամբ, եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, այլ օրենքներով կամ այլ իրավական ակտերով** • այո, անկախ վարձատուի ցանկության • այո, գրավառուի համաձայնությամբ

433	Վարձակալի կողմից վարձակալության իրավունքը գրավ դնելու դեպքում ո՞վ է պատասխանատվություն կրում վարձատուի առջև. · **վարձակալը** · գրավառուն · ոչ ոք · վարձակալը և գրավառուն
434	Ի՞նչ ժամկետով կարող է կնքվել ենթավարձակալության պայմանագիրը. · անսահմանափակ ժամանակ · խելամիտ ժամանակ · տասն օր ժամանակ · **վարձակալության պայմանագրի ժամկետը չգերազանցող ժամկետով**
435	Ի՞նչ հետևանք կարող է առաջացնել վարձակալի կողմից պայմանագրով սահմանված վճարման ժամկետը լրանալուց հետո երկու անգամից ավելի վարձավճարը չմուծելը. · որևէ հետևանք չի կարող ունենալ · **վարձատուի պահանջով պայմանագիրը կարող է դատարանով վաղաժամկետ լուծվել** · պայմանագիրը կարող է համարվել առոչինչ · վարձատուի կողմից կարող է սահմանվել վարձավճարը մուծելու նոր ժամկետ
436	Ի՞նչ հետևանք ունի վարձակալության պայմանագրի ժամկետի ավարտից հետո վարձակալի կողմից վարձատուի առարկությունների բացակայությամբ գույքից օգտվել շարունակելը. · որևէ հետևանք չունի · պայմանագիրը դադարում է · **պայմանագիրը ճանաչվում է վերսկսված՝ նույն պայմաններով անորոշ ժամկետով** · անհրաժեշտ է կնքել նոր պայմանագիր
437	Եթե վարձակալության պայմանագրի դադարման դեպքում վարձակալը վարձակալած գույքը վարձատուին վերադարձրել է ժամկետի խախտմամբ, ապա ի՞նչ իրավունք ունի վարձատուն. · **վարձավճար պահանջել կետանցի ամբողջ ժամկետի համար** · կնքել նոր պայմանագիր · որևէ իրավունք չունի · չընդունել վերադարձվող գույքը

438	Վարձույթի պայմանագրով վարձատուն ի՞նչ է պարտավորվում վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել. · հողամաս · բնակարան · **շարժական գույք** · անշարժ գույք
439	Ու՞մ սեփականությունն են համարվում վարձակալված գույքից վարձակալի կատարած բաժանելի բարելավումները, եթե այլ բան նախատեսված չէ վարձակալության պայմանագրով. · **վարձակալի** · վարձատուի · վարձատուի և վարձակալի · ենթավարձակալի
440	Ի՞նչ ժամկետով է կնքվում վարձույթի պայմանագիրը. · խելամիտ · անորոշ · անսահմանափակ · **մինչև մեկ տարի**
441	Ի՞նչ նպատակներով է օգտագործվում վարձույթի պայմանագրով տրամադրված գույքը. · շահույթ ստանալու նպատակով · **սպառողական նպատակներով, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով կամ չի բխում պարտավորության էությունից** · ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու նպատակով · փոխարինման նպատակով
442	Իրավաբանական անձը, որի ֆիրմային անվանումը գրանցված է օրենքով սահմանված կարգով, ունի. · **դրա օգտագործման բացառիկ իրավունք** · դրա օգտագործման անսահմանափակ իրավունք · դրա օգտագործման սահմանափակ իրավունք · դրա օգտագործման միջնորդավորված իրավունք
443	Իրավունք ունե՞ն արդյոք վարձակալը և նրա հետ մշտապես բնակվող քաղաքացիները թույլատրել բնակելի տարածությունում անհատույց բնակվելու ժամանակավոր բնակիչների. · այո, վարձակալի համաձայնությամբ · **այո, վարձակալի և նրա հետ մշտապես բնակվող քաղաքացիների ընդհանուր համաձայնությամբ** · այո, վարձատուի համաձայնությամբ · ոչ

444	Բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին կառավարության որոշումն օտարման ենթակա սեփականության սեփականատիրոջ կամ շահագրգիռ այլ անձի կողմից կարող է բողոքարկվել դատարան՝ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին կառավարության որոշումն ուժի մեջ մտնելուց հետո. · մեկ տարվա ընթացքում · **մեկ ամսվա ընթացքում** · երեք ամսվա ընթացքում · տասնհինգ օրվա ընթացքում
445	Նշվածներից ո՞րն է լիարժեք համապատասխանում ՀՀ քաղաքացիական օրենսդրությանը. · լիցենզային պայմանագրով մտավոր գործունեության արդյունքի կամ անհատականացման միջոցի նկատմամբ բացառիկ իրավունք ունեցող կողմը (լիցենզառու) մյուս կողմին (լիցենզատու) թույլատրում է օգտագործել մտավոր սեփականության համապատասխան օբյեկտը · լիցենզային պայմանագրով մտավոր գործունեության արդյունքի կամ անհատականացման միջոցի նկատմամբ բացառիկ իրավունք ունեցող կողմը (լիցենզառու) մյուս կողմին (լիցենզատու) թույլատրում է սեփականաշնորհել մտավոր սեփականության համապատասխան օբյեկտը · **լիցենզային պայմանագրով մտավոր գործունեության արդյունքի կամ անհատականացման միջոցի նկատմամբ բացառիկ իրավունք ունեցող կողմը (լիցենզատուն) մյուս կողմին (լիցենզառուին) թույլատրում է օգտագործել մտավոր սեփականության համապատասխան օբյեկտը** · լիցենզիոն պայմանագրով մտավոր գործունեության արդյունքի նկատմամբ իրավունք ունեցող կողմը (լիցենզատուն) մյուս կողմին (լիցենզառուին) պարտավորեցնում է օգտագործել մտավոր սեփականության համապատասխան օբյեկտը
446	Պետական բյուջեի միջոցները հանդիսանում են. · **Հայաստանի Հանրապետության սեփականությունը** · ժողովրդի սեփականությունը · համայնքային սեփականությունը · Հայաստանի Հանրապետության կառավարության սեփականությունը
447	Գույքը ձեռք բերողին հանձնված է համարվում այն ձեռք բերողի կամ նրա նշած անձի. · կողմից գրավոր հավաստում ստանալու պահից · անունով գույքը ուղարկելու համար այն փոխադրողին հանձնելու պահից · կողմից տվյալ գույքը տնօրինելու պահից · **փաստացի տիրապետմանն անցնելու պահից**

448	Հեղինակը կարող է ստանձնել. · ապագայում ստեղծագործություն, գյուտ կամ մտավոր գործունեության այլ արդյունք ստեղծելու և իր գործատու համարվող պատվիրատուին այդ արդյունքն օգտագործելու բացառիկ իրավունք տրամադրելու պարտավորություն · ներկայում ստեղծագործություն, գյուտ կամ մտավոր գործունեության այլ արդյունք ստեղծելու և իր գործատու համարվող պատվիրատուին այդ արդյունքն օգտագործելու բացառիկ իրավունք տրամադրելու պարտավորություն · **ապագայում ստեղծագործություն, գյուտ կամ մտավոր գործունեության այլ արդյունք ստեղծելու և իր գործատու չհամարվող պատվիրատուին այդ արդյունքն օգտագործելու բացառիկ իրավունք տրամադրելու պարտավորություն** · ապագայում ստեղծագործություն, գյուտ, արժեթուղթ կամ մտավոր գործունեության այլ արդյունք ստեղծելու և իր գործատու համարվող պատվիրատուին այդ արդյունքը ցուցադրելու բացառիկ իրավունք տրամադրելու պարտավորություն
449	Համայնքի բյուջեի միջոցները հանդիսանում են. · Հայաստանի Հանրապետության սեփականությունը · ժողովրդի սեփականությունը · **համայնքի սեփականությունը** · տվյալ համայնքի տարածքում գրանցված և գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց ընդհանուր բաժնային սեփականություն
450	Եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով, պայմանագրով գույքը ձեռք բերողի սեփականության իրավունքը ծագում է. · **գույքը հանձնելու պահից** · գույքի նպատակային օգտագործման պահից · գույքի տնօրինման պահից · դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից
451	Հեղինակային իրավունքը տարածվում է. · միայն հրապարակված ստեղծագործությունների վրա · միայն չհրապարակված ստեղծագործությունների վրա · **ինչպես հրապարակված, այնպես էլ չհրապարակված ստեղծագործությունների վրա** · հարակից իրավունքների վրա

452	Հեղինակային իրավունքը չի տարածվում. · ստեղծագործական գործունեության արդյունք համարվող գիտության, ստեղծագործությունների վրա · ստեղծագործական գործունեության արդյունք համարվող գրականության ստեղծագործությունների վրա · **գիտական հայտնագործությունների, գաղափարների, սկզբունքների, մեթոդների, ընթացակարգերի, տեսակետների, համակարգերի, արարողակարգերի, գիտական տեսությունների, մաթեմատիկական բանաձևերի, վիճակագրական դիագրամների, խաղի կանոնների վրա, եթե անգամ դրանք արտահայտված, նկարագրված, բացահայտված, լուսաբանված են ստեղծագործություններում** · ստեղծագործական գործունեության արդյունք համարվող արվեստի ստեղծագործությունների վրա
453	Հեղինակային իրավունքի օբյեկտ չեն. · գրական (գրական-գեղարվեստական, գիտական, ուսումնական, հրապարակախոսական և այլ) ստեղծագործությունները · տեքստով և առանց տեքստի երաժշտական ստեղծագործությունները · **կատարումները, հնչյունագրերը** · դրամատիկական և սցենարային ստեղծագործությունները
454	Ու՞մ պարտականությունն է վարձակալության հանձնված բնակելի տարածության ընթացիկ վերանորոգումը. · վարձատուի, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով · **վարձակալի, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով** · վարձատուի և վարձակալի · թաղապետարանի
455	Ամուսիններից մեկի պարտավորությունների համար կարող է բռնագանձում տարածվել նրա սեփականության ներքո գտնվող գույքի, ինչպես նաև. · ամուսինների համատեղ սեփականությունը հանդիսացող գույքի վրա · **ամուսինների ընդհանուր գույքում նրա բաժնի վրա** · այն անձանց գույքի վրա, որոնց հետ նա գտնվում է պայմանագրային հարաբերությունների մեջ · ամուսինների զավակների գույքի վրա
456	Գույքային իրավունքների սահմանափակումները կիրառվում են. · եթե վնաս է պատճառվում ստեղծագործության բնականոն օգտագործմանը · եթե ոտնահարում են հեղինակի օրինական շահերը · եթե ոտնահարում են այլ անձանց շահերը · **պայմանով, եթե դրանք անհարկի վնաս չեն պատճառում ստեղծագործության բնականոն օգտագործմանը և չեն ոտնահարում հեղինակի օրինական շահերը**

457	Ու՞մ պարտականությունն է վարձակալության հանձնված բնակելի տարածության հիմնական վերանորոգումը. · **վարձատուի, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով** · վարձակալի, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով · վարձատուի և վարձակալի · թաղապետարանի
458	Եթե այլ բան նախատեսված չէ բնակելի տարածության վարձակալության պայմանագրով, ապա վարձակալն ի՞նչ պարբերականությամբ պետք է մուծի վարձավճարը. · տարին մեկ անգամ · **ամեն ամիս** · ամիսը երկու անգամ · յուրաքանչյուր շաբաթ
459	Ի՞նչ ժամկետով է կնքված համարվում բնակելի տարածության վարձակալության պայմանագիրը, եթե վարձակալության ժամկետը պայմանագրով որոշված չէ. · խելամիտ · վեց ամիս · երկու ամիս · **անորոշ**
460	Հայաստանի Հանրապետությունում վիճակախաղերի կազմակերպման գործունեություն կարող են իրականացնել. · միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող հիմնադիրներ ունեցող Հայաստանի Հանրապետությունում գրանցված առևտրային կազմակերպությունները՝ համապատասխան լիցենզիայի հիման վրա · միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի և (կամ) Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձ հանդիսացող հիմնադիրներ ունեցող Հայաստանի Հանրապետությունում գրանցված ոչ առևտրային կազմակերպությունները՝ համապատասխան լիցենզիայի հիման վրա · միայն օտարերկրյա քաղաքացի և (կամ) Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձ հանդիսացող հիմնադիրներ ունեցող Հայաստանի Հանրապետությունում գրանցված ոչ առևտրային կազմակերպությունները՝ առամց համապատասխան լիցենզիայի հիման վրա · **միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի և (կամ) Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձ հանդիսացող հիմնադիրներ ունեցող Հայաստանի Հանրապետությունում գրանցված առևտրային կազմակերպությունները՝ համապատասխան լիցենզիայի հիման վրա**

461	Կեղծանվամբ կամ անանուն ստեղծագործությունների դեպքում հեղինակի գույքային իրավունքները ծագում են ստեղծագործությունն օրինական ճանապարհով հանրությանը մատչելի դառնալու պահից և գործում են · 50 տարի · 5 տարի · **70 տարի** · 15 տարի
462	Բնակելի տարածության վարձակալի մահվան դեպքում ո՞վ է դառնում վարձակալ. · ոչ ոք · **նախկին վարձակալի հետ մշտապես բնակվող քաղաքացիներից մեկը՝ մյուսների ընդհանուր գրավոր համաձայնությամբ** · նախկին վարձակալի հետ ժամանակավոր բնակվող քաղաքացիներից մեկը · նախկին վարձակալի հետ ժամանակավոր բնակվող քաղաքացիներից մեկը՝ վարձատուի ցուցումով
463	Ի՞նչ է տեղի ունենում, եթե բնակելի տարածության վարձակալի մահվան դեպքում նրա հետ մշտապես բնակվող քաղաքացիներն իրենցից մեկին վարձակալ ճանաչելու մասին գրավոր համաձայնություն չեն կայացնում. · վարձատուի պահանջով պայմանագիրը դադարում է · նրանցից մեկը դառնում է վարձակալ՝ առանց մյուսների համաձայնության · նրանցից մեկը դառնում է վարձակալ՝ վարձատուի ցուցումով · **բոլոր քաղաքացիները դառնում են համավարձակալներ**
464	Ստեղծագործության նկատմամբ գույքային իրավունքների գործողության ժամկետի ավարտից հետո այն վերածվում է. · մասնավոր սեփականության · համայնքային սեփականության՝ պայմանագրով նախատեսված դեպքում և կարգով · **հանրային սեփականության** · մասնավոր սեփականության՝օրենքով նախատեսված դեպքում և կարգով
465	Իրավունքի գրավատու կարող է լինել. · **այն անձը, ում պատկանում է գրավ դրվող իրավունքը** · ցանկացած ֆիզիկական և իրավաբանական անձ՝ անկախ գրավ դրվող իրավունքի պատկանելությունից · դատարանում իրավունքի մասին վեճ ունեցող յուրաքանչյուր անձ · քաղաքացիական իրավունքների ցանկացած սուբյեկտ՝ անկախ գրավ դրվող իրավունքի պատկանելությունից

466	Վարձակալության իրավունքի գրավը չի թույլատրվում. · **առանց գույքի սեփականատիրոջ համաձայնության** · առանց գույքն օգտագործողի համաձայնության · առանց բնակարանում փաստացի բնակվող անձի համաձայնության · առանց գույքը տիրապետողի համաձայնության
467	Ընդհանուր համատեղ սեփականության ներքո գտնվող գույքը կարող է գրավ դրվել. · սեփականատերերի մեծամասնության գրավոր համաձայնությամբ · **միայն բոլոր սեփականատերերի գրավոր համաձայնությամբ** · առանց որևէ մեկի համաձայնության · սեփականատերերից մեկի գրավոր համաձայնությամբ
468	Ինչպե՞ս է կոչվում ֆինանսական վարձակալության պայմանագիրը. · ֆրանչայզինգ · **լիզինգ** · ֆակտորինգ · վարձույթ
469	Բազմաբնակարան շենքի շինության սեփականատեր կարող է լինել. · միայն ֆիզիկական անձը · միայն Հայաստանի Հանրապետությունը և համայնքները · միայն ֆիզիկական կամ իրավաբանական անձը · **ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, Հայաստանի Հանրապետությունը և համայնքները**
470	Ներքոշարադրյալներից ո՞րն է կախյալ տնտեսական ընկերություն. · տնտեսական ընկերությունը համարվում է կախյալ, եթե մյուս (գերակշռող, մասնակցող) ընկերակցությունը կամ ընկերությունն ունի սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալի կամ բաժնետիրական ընկերության քվեարկող բաժնետոմսերի ավելի քան հիսուն տոկոսը · **տնտեսական ընկերությունը համարվում է կախյալ, եթե մյուս (գերակշռող, մասնակցող) ընկերակցությունը կամ ընկերությունն ունի սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալի կամ բաժնետիրական ընկերության քվեարկող բաժնետոմսերի ավելի քան քսան տոկոսը** · տնտեսական ընկերությունը համարվում է կախյալ, եթե մյուս (գերակշռող, մասնակցող) ընկերակցությունը կամ ընկերությունն ունի սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալի կամ բաժնետիրական ընկերության քվեարկող բաժնետոմսերի ավելի քան երկու երրորդը

	• տնտեսական ընկերությունը համարվում է կախյալ, եթե մյուս (գերակշռող, մասնակցող) ընկերակցությունը կամ ընկերությունն ունի սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալի կամ բաժնետիրական ընկերության քվեարկող բաժնետոմսերի ավելի քան երեք հինգերորդը
471	Հարակից իրավունքները չեն. • կատարումները, հնչյունագրերը, ֆիլմերի ամրագրումները • **դրամատիկական և սցենարային ստեղծագործությունները** • տվյալների բազաների պարունակությունը • հեռարձակող կազմակերպությունների հաղորդումները
472	Կատարողի գույքային իրավունքները ծագում են կատարման պահից և գործում են. • 5 տարի • **50 տարի** • 25 տարի • 35 տարի
473	Ի՞նչ ձևով է կնքվում ֆինանսական վարձակալության պայմանագիրը. • **գրավոր՝ կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով** • փաստաթղթեր փոխանակելու միջոցով • բանավոր ձևով • կողմերի պայմանավորված որոշակի ձևով

474	Ներքոշարադրյալներից ո՞րն է ներկայացնում իրավաբանական անձ հասկացությունն ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի. · **իրավաբանական անձ է համարվում այն կազմակերպությունը, որը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող** · իրավաբանական անձ է համարվում այն կազմակերպությունը, որն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող · իրավաբանական անձ է համարվում այն կազմակերպությունը, որը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող · իրավաբանական անձ է համարվում այն կազմակերպությունը, որը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող
475	Ինչպիսի՞ն պետք է լինեն քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանության եղանակները. · **ինքնապաշտպանության եղանակները պետք է համաչափ լինեն խախտմանը և դուրս չգան խախտման համար անհրաժեշտ գործողությունների սահմաններից** · ինքնապաշտպանության եղանակները պետք է համաչափ լինեն խախտմանը և դուրս չգան անհրաժեշտ պաշտպանության սահմաններից · ինքնապաշտպանության եղանակները պետք է համաչափ լինեն խախտմանը և չպատճառեն անհամաչափ վնաս · ինքնապաշտպանության եղանակները պետք է համաչափ լինեն խախտմանը և չխախտեն այլոց իրավունքները
476	Տվյալների բազա պատրաստողի իրավունքները ծագում են տվյալների բազայի պատրաստումն ավարտելու պահից և գործում են. · 45 տարի · **15 տարի** · 25 տարի · 35 տարի

477	Նշվածներից ո՞րն է ճիշտ. • բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականությունը տիրապետելուց և օգտագործելուց ստացված միջոցները ներառվում են ընդհանուր գույքի կազմում՝ բաժնային սեփականության սեփականատերերի բաժիններին ոչ համամասնորեն, որոնք ուղղվում են ոչ պարտադիր նորմերի կատարմանը և շենքի կառավարմանը • բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականությունը տնօրինելուց, տիրապետելուց և օգտագործելուց ստացված միջոցները ներառվում են ընդհանուր գույքի կազմում՝ համատեղ սեփականության սեփականատերերի բաժիններին համամասնորեն, որոնք ուղղվում են բարեգործական նպատակների իրականացմանը • **բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականությունը տնօրինելուց, տիրապետելուց և օգտագործելուց ստացված միջոցները ներառվում են ընդհանուր գույքի կազմում՝ բաժնային սեփականության սեփականատերերի բաժիններին համամասնորեն, որոնք ուղղվում են պարտադիր նորմերի կատարմանը և շենքի կառավարմանը** • ստորաբաժանված շենքի ընդհանուր բաժնային սեփականությունը միայն օգտագործելուց ստացված ֆինանսական միջոցները ներառվում են ընդհանուր գույքի կազմում բաժնային սեփականության սեփականատերերի բաժիններին ոչ համամասնորեն, որոնք հետագայում, կառավարության սահմանած կարգով, ուղղվում են պարտադիր նորմերի կատարմանը և շենքի կառավարմանը
478	Պետական կարիքների համար կապալային աշխատանքների պետական պայմանագրում ո՞վ է հանդես գալիս որպես պետական պատվիրատու. • ՀՀ քաղաքաշինության նախարարը • ՀՀ վարչապետը • ոչ ոք • **լիազորված պետական մարմինը**
479	Պետական կարիքների համար կապալային աշխատանքների պետական պայմանագրում ո՞վ է հանդես գալիս որպես կապալառու. • համայնքները • համայնքի ավագանիները • **իրավաբանական անձը կամ քաղաքացին** • քաղաքացին

480	Ինչպե՞ս պետք է մեկնաբանվեն քաղաքացիական իրավական նորմերը քաղաքացիական իրավական նորմերի տեքստում կիրառվող բառերի և արտահայտությունների տարբեր ձևերով մեկնաբանման դեպքում. · նորմի բովանդակությունը բացահայտվում է այն ներառող հոդվածի վերագրին համապատասխանող մեկնաբանմամբ · նորմի բովանդակությունը բացահայտվում է այն ներառող իրավական ակտի ընդհանուր նպատակի հաշվառմամբ · **նախապատվությունը տրվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված՝ քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին համապատասխանող մեկնաբանմանը** · նորմը մեկնաբանվում է մինչ այդ եղած իրավակարգավորմանը համապատասխանող մեկնաբանմամբ
481	Գյուտի, օգտակար մոդելի և արդյունաբերական նմուշի նկատմամբ իրավունքները պահպանվում են, եթե տրվել է. · լիազորագիր · **արտոնագիր** · հրամանագիր · վճարագիր
482	Ի՞նչ ժամկետով կարող է սահմանվել ցմահ ռենտան. · **ռենտայի վճարման դիմաց գույքը հանձնած քաղաքացու կամ նրա մատնանշած այլ քաղաքացու կյանքի ամբողջ ժամանակահատվածի համար** · ռենտայի վճարման դիմաց գույքը հանձնած քաղաքացու կյանքի մի մասի ժամանակահատվածի համար · տասը տարով · քսան տարով
483	Ցմահ ռենտայի պայմանագրի դեպքում ո՞ր պահից է դադարում ռենտա վճարելու պարտավորությունը. · ռենտա ստացողներից մեկի մահվան դեպքում · **վերջին ռենտա ստացողի մահվամբ** · չի դադարում · ռենտա ստացողներից երկուսի մահվամբ
484	Նշվածներից ո՞րն է լիարժեք համապատասխանում ՀՀ քաղաքացիական օրենսդրությանը. · արտոնագրի զիջման մասին պայմանագիրը կարող է կնքվել բանավոր, իսկ պայմանագրից ծագող իրավունքները գրանցվում են լիազոր մարմնում · **արտոնագրի զիջման մասին պայմանագիրը պետք է կնքվի գրավոր, իսկ պայմանագրից ծագող իրավունքները գրանցվում են լիազոր մարմնում** · արտոնագրի զիջման մասին ակտը պետք է կնքվի գրավոր, իսկ պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են նոտարական վավերացման

	• արտոնագրի զիջման մասին ակտը պետք է կնքվի գրավոր, իսկ պայմանագրից ծագող իրավունքները ենթակա չեն գրանցման
485	Ի՞նչ հետևանք ունի պայմանագիրը կնքելու պահին մահացած քաղաքացու օգտին ցմահ ռենտա սահմանող պայմանագիրը. • այն կնքման պահից մտնում է ուժի մեջ • անվավեր է • **առոչինչ է** • այն ուժի մեջ է մտնում տասն օր հետո
486	Ինչպե՞ս է կոչվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է. • առևտուր • ռիսկային գործունեություն • շահադիտական գործունեություն • **ձեռնարկատիրական գործունեություն**
487	Արտոնագրի տիրոջ պահանջով արտոնագրի խախտումը պետք է. • կարճվի, իսկ իրավախախտողը պարտավոր է արտոնագրի տիրոջը հատուցել կրած վնասները, եթե ունի բավարար դրամական միջոցներ • **դադարեցվի, իսկ իրավախախտողը պարտավոր է արտոնագրի տիրոջը հատուցել կրած վնասները** • կասեցվի, իսկ իրավախախտողը կարող է արտոնագրի տիրոջը հատուցել կրած վնասները • դադարեցվի, իսկ իրավախախտողը պարտավոր է արտոնագրի տիրոջը հատուցել կրած վնասները, եթե ունի բավարար դրամական միջոցներ
488	Ո՞րն է ձեռնարկատիրական գործունեության հիմնական նպատակը. • **շահույթ ստանալը** • բարեգործությունը • աշխատատեղերի ստեղծումը • անձանց միավորելը

489	Կարո՞ղ են արդյոք սահմանափակվել քաղաքացիական իրավունքները. · ոչ · **այո, միայն օրենքով** · այո, միայն ենթաօրենսդրական ակտով · այո, օրենքով և իրավական այլ ակտերով
490	Շինության սեփականատերերն ընդհանուր բաժնային գույքի պարտադիր նորմերի մասով. · **կառավարման նպատակով կարող են ստեղծել իրավաբանական անձ՝ համատիրություն** · օտարման նպատակով կարող են ստեղծել իրավաբանական անձ՝ համատիրություն · կառավարման նպատակով կարող են ստեղծել համադաշնություն · օտարման նպատակով պարտավոր են ստեղծել հիմնադրամ՝ համատիրություն
491	Ինչպե՞ս են կիրառվում օրենսդրության պարտադիր դրույթներին կամ պայմանագրին հակասող գործարար շրջանառության սովորույթները. · **չեն կիրառվում** · օրենսդրության պարտադիր դրույթները կամ պայմանագիրը դրանց համապատասխանեցնելուց հետո · հակասող դրույթներին զուգահեռ · հատուկ իրավական ակտի ընդունումից հետո
492	Վարձակալը կարո՞ղ է հրաժարվել վարձույթի պայմանագրից. · **ցանկացած ժամանակ** · միայն մեկ ամիս առաջ վարձատուին տեղեկացնելուց հետո · միայն երեք ամիս առաջ վարձատուին տեղեկացնելուց հետո · միայն վարձակալության պայմանագրի գործողությունը դադարելուց հետո
493	Բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքի ընդհանուր բաժնային սեփականության հողամասի նկատմամբ յուրաքանչյուր բնակարանի կամ ոչ բնակելի տարածքի սեփականատիրոջ բաժինը որոշվում է. · տվյալ սեփականատիրոջը պատկանող բնակարանի կամ ոչ բնակելի տարածքի մակերեսի հանրագումարը այդ շենքի բոլոր բնակարանների ու ոչ բնակելի տարածքների մակերեսներին և արտահայտվում է կոտորակով · տվյալ սեփականատիրոջը պատկանող միայն բնակարանի մակերեսի հարաբերությամբ այդ շենքի բոլոր բնակարանների ու ոչ բնակելի տարածքների մակերեսներին և արտահայտվում է կոտորակով · տվյալ սեփականատիրոջը պատկանող բնակարանի կամ ոչ բնակելի տարածքի մակերեսի հարաբերությամբ այդ շենքի հողամասի մակերեսներին և արտահայտվում է կոտորակով կամ տոկոսով · **տվյալ սեփականատիրոջը պատկանող բնակարանի կամ ոչ բնակելի տարածքի**

	մակերեսի հարաբերությամբ այդ շենքի բոլոր բնակարանների ու ոչ բնակելի տարածքների մակերեսներին և արտահայտվում է կոտորակով
494	Ինչպե՞ս է կոչվում անձի չստացած եկամուտը, որն այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր. • կորուստ • նախատեսված օգուտ • **բաց թողնված օգուտ** • չստացած օգուտ
495	Նշվածներից ո՞րն է լիարժեք համապատասխանում ՀՀ քաղաքացիական օրենսդրությանը. • **բուսաբուծության մեջ սելեկցիոն նվաճում է համարվում արհեստական ճանապարհով կամ ընտրության միջոցով ստացված և գոյություն ունեցող բույսի սորտերից մեկ կամ մի քանի տարբերակիչ տնտեսական հատկանիշներ ունեցող բույսի սորտը** • բուսաբուծության մեջ սելեկցիոն նվաճում է համարվում բնական ճանապարհով կամ ընտրության միջոցով ստացված և գոյություն ունեցող բույսի սորտերից մեկ տնտեսական հատկանիշներ ունեցող բույսի սորտը • բուսաբուծության մեջ սելեկցիոն նվաճում է համարվում արհեստական ճանապարհով կամ ընտրության միջոցով ստացված և գոյություն ունեցող բույսի սորտերից մի քանի տարբերակիչ տնտեսական, համային, հոտային հատկանիշներ ունեցող բույսի սորտը • բուսաբուծության մեջ սերմնային նվաճում է համարվում բնական ճանապարհով կամ ընտրության միջոցով ստացված և գոյություն ունեցող բույսի սորտերից մեկ կամ մի քանի տարբերակիչ տնտեսական հատկանիշներ ունեցող բույսի սորտը

496	Ո՞վ է հատուցում պետական մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց ապօրինի գործողությունների հետևանքով քաղաքացուն կամ իրավաբանական անձին պատճառված վնասները. • ոչ ոք • դատարանը • պետական մարմնի համապատասխան պաշտոնատար անձը • **Հայաստանի Հանրապետությունը**
497	Ո՞վ է հատուցում տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց ապօրինի գործողությունների հետևանքով քաղաքացուն կամ իրավաբանական անձին պատճառված վնասները. • ոչ ոք • դատարանը • տեղական ինքնակառավարման մարմնի համապատասխան պաշտոնատար անձը • **համապատասխան համայնքը**
498	Նշվածներից ո՞րն է լիարժեք համապատասխանում ՀՀ քաղաքացիական օրենսդրությանը. • **անասնաբուծության մեջ սելեկցիոն նվաճում է համարվում մարդու կողմից ստեղծված և ծննդաբանական կառուցվածքով ու այն նույն կենդանիների ցեղի կենդանիներից տարբերելու և կենդանիների մեկ ցեղի ձևով բազմանալու համար քանակապես բավարար հատկություններով օժտված կենդանիների ցեղը, այսինքն՝ ընդհանուր ծագում ունեցող կենդանիների բազմանդամ խումբը** • անասնաբուծության մեջ սելեկցիոն նվաճում է համարվում մարդու կողմից ստեղծված և ծննդաբանական կառուցվածքով ու այն նույն կենդանիների ցեղի կենդանիներից տարբերելու և կենդանիների մեկ ցեղի ձևով բազմանալու համար որակապես բավարար հատկություններով օժտված կենդանիների ցեղը, այսինքն՝ ընդհանուր ծագում ունեցող կենդանիների բազմանդամ խումբը • անասնաբուժության մեջ սելեկցիոն նվաճում է համարվում կենդանու կողմից ստեղծված և ծննդաբանական կառուցվածքով ու այն նույն կենդանիների ցեղի կենդանիներից տարբերելու և կենդանիների մեկ ցեղի ձևով բազմանալու համար քանակապես բավարար հատկություններով օժտված կենդանիների ցեղը, այսինքն՝ ընդհանուր ծագում ունեցող կենդանիների բազմանդամ խումբը • անասնաբուժության մեջ սելեկցիոն նվաճում է համարվում մարդու կողմից ստեղծված և ծննդաբանական կառուցվածքով ու այն նույն կենդանիների ցեղի կենդանիներից տարբերելու և կենդանիների մեկ ցեղի ձևով բազմանալու համար քանակապես բավարար հատկություններով օժտված կենդանիների ցեղը, այսինքն՝ մասնակի ծագում ունեցող կենդանիների միանդամ խումբը

499	Նշվածներից ո՞րն է լիարժեք համապատասխանում ՀՀ քաղաքացիական օրենսդրությանը. · **չբացահայտված տեղեկատվությունն ապօրինի հիմքերով ստացած, տարածած կամ օգտագործած անձը պարտավոր է այդ տեղեկատվության օրինական տիրոջը հատուցել դրա ապօրինի օգտագործմամբ պատճառված վնասները** · չբացահայտված տեղեկատվությունն օրինական հիմքերով ստացած, տարածած կամ օգտագործած անձը պարտավոր է այդ տեղեկատվության օրինական տիրոջը հատուցել դրա ապօրինի օգտագործմամբ պատճառված վնասները · չբացահայտված տեղեկատվությունն ապօրինի հիմքերով ստացած ֆիզիկական անձը պարտավոր է այդ տեղեկատվության օրինական տիրոջը հատուցել դրա օրինական օգտագործմամբ պատճառված վնասները · բացահայտված տեղեկատվությունն ապօրինի հիմքերով ստացած, տարածած կամ օգտագործած անձը պարտավոր է այդ տեղեկատվության օրինական տիրոջը հատուցել դրա ապօրինի օգտագործմամբ պատճառված վնասները
500	Ինչպե՞ս է կոչվում քաղաքացիական իրավունքներ ունենալու և պարտականություններ կրելու ունակությունը. · քաղաքացիական գործունակություն · **քաղաքացիական իրավունակություն** · քաղաքացիական աշխատունակություն · քաղաքացիական իրավասուբյեկտություն
501	Ֆիրմային անվանումն այն անվանումն է, որի ներքո. · **առևտրային կազմակերպությունը իրականացնում է իր գործունեությունը և տարբերվում այլ իրավաբանական անձանցից** · ոչ առևտրային կազմակերպությունը իրականացնում է իր գործունեությունը և տարբերվում այլ իրավաբանական անձանցից · կազմակերպությունը իրականացնում է իր գործունեությունը և տարբերվում այլ անձանցից · կազմակերպությունը իրականացնում է իր գործունեությունը և նմանվում այլ իրավաբանական անձանցից
502	Ո՞ր պահին է ծագում քաղաքացու իրավունակությունը. · տասնվեց տարեկանից · չափահաս դառնալու պահին · տասնչորս տարեկանից · **ծննդյան պահին**

503	Ֆիրմային անվանման նկատմամբ բացառիկ իրավունքը ծագում է տվյալ անվանումով իրավաբանական անձի պետական գրանցման օրվանից կամ. · **գրանցված իրավաբանական անձի ֆիրմային անվանման փոփոխության մասին իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանում գրառում կատարելու օրվանից, պատկանում է տվյալ իրավաբանական անձին (այսուհետ նաև՝ ֆիրմային անվանման իրավատեր)** · գրանցված իրավաբանական անձի ֆիրմային անվանման փոփոխության մասին իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանում գրառում կատարելու օրվանից հինգ օր հետո, պատկանում է տվյալ իրավաբանական անձին (այսուհետ նաև՝ ֆիրմային անվանման իրավատեր) · գրանցված իրավաբանական անձի ֆիրմային անվանման փոփոխության մասին իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանում գրառում կատարելու օրվանից մեկ ամիս հետո, պատկանում է տվյալ իրավաբանական անձին (այսուհետ նաև՝ ֆիրմային անվանման իրավատեր) · գրանցված իրավաբանական անձի ֆիրմային անվանման փոփոխության մասին իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանում գրառում կատարելու օրվանից երկու ամիս հետո, պատկանում է տվյալ իրավաբանական անձին (այսուհետ նաև՝ ֆիրմային անվանման իրավատեր)
504	Ե՞րբ է դադարում քաղաքացու իրավունակությունը. · **նրա մահվամբ** · դրանից քաղաքացու հրաժարվելու պահից · դատարանի վճռով սահմանված պահից · նրա մահից մեկ տարի հետո
505	Ի՞նչ է ներառում քաղաքացու անունը. · միայն նրա անունը · միայն նրա ազգանունը · նրա անունն ու հայրանունը · **նրա ազգանունն ու անունը, նրա ցանկությամբ՝ նաև հայրանունը**
506	Ո՞րն է համարվում քաղաքացու բնակության վայր. · այն վայրը, որտեղ քաղաքացին հաշվառված է · **այն վայրը, որտեղ քաղաքացին մշտապես կամ առավելապես ապրում է** · այն վայրը, որը քաղաքացին նշում է որպես բնակության վայր · այն վայրը, որտեղ քաղաքացին լինում է առնվազն երեք տարին մեկ անգամ
507	Ո՞րն է համարվում տասնչորս տարեկան չդարձած անչափահասների բնակության վայր. · այն վայրը, որտեղ նրանք հաշվառված են · այն վայրը, որտեղ նրանք լինում են առնվազն երեք օրը մեկ անգամ · **նրանց օրինական ներկայացուցիչների՝ ծնողների, որդեգրողների կամ**

	խնամակալների բնակության վայրը • բնակության վայր հասկացություն նրանց համար օրենքով չի սահմանված
508	Չբացահայտված տեղեկատվությունն ապօրինի օգտագործումից պահպանելու իրավունքը ծագում է. • համապատասխան արտոնագիր տալու պահից • դրա գրանցման հիման վրա՝ գրանցման վկայագիր տալով • դրա գաղտնիության վերաբերյալ միջոցներ ձեռնարկելու մասին հայտարարելու օրվանից • **անկախ այդ տեղեկատվության նկատմամբ որևէ ձեւականություն կատարելուց (գրանցելուց, վկայական ստանալուց և այլն)**
509	Ինչպե՞ս է կոչվում իր գործողություններով քաղաքացիական իրավունքներ ձեռք բերելու և իրականացնելու, իր համար քաղաքացիական պարտականություններ ստեղծելու և դրանք կատարելու քաղաքացու ունակությունը. • քաղաքացիական իրավունակություն • **քաղաքացիական գործունակություն** • քաղաքացիական պարտք • քաղաքացիական հարաբերություն
510	Ո՞ր պահից է լրիվ ծավալով ծագում քաղաքացու գործունակությունը. • տասնվեց տարեկան դառնալու պահից • **չափահաս, այսինքն՝ տասնութ տարեկան դառնալու պահից** • տասնչորս տարեկան դառնալու պահից • ծննդյան պահից
511	Հաշվի առնելով չբացահայտված տեղեկատվության օգտագործման վրա բարեխիղճ ձեռք բերողի կատարած ծախսերը՝ դատարանը. • կարող է թույլ չտալ դրա հետագա օգտագործման թույլտվությունը • **կարող է դրա հետագա օգտագործումը թույլատրել հատուցելի ոչ բացառիկ լիցենզիայի պայմաններով** • կարող է դրա հետագա օգտագործումը թույլատրել հատուցելի բացառիկ լիցենզիայի պայմաններով • չի կարող դրա հետագա օգտագործումը թույլատրել լիցենզիայի պայմաններով
512	Թվարկածներից ո՞ր դեպքում է, որ տասնվեց տարին լրացած անչափահասը կարող է լրիվ գործունակ ճանաչվել. • իր ցանկության դեպքում • **եթե նա աշխատում է աշխատանքային պայմանագրով** • ոչ մի դեպքում • եթե կնքել է անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր

513	Ու՞մ համաձայնությամբ է խնամակալության և հոգաբարձության մարմինը որոշում ընդունում անչափահասին լրիվ գործունակ ճանաչելու վերաբերյալ. · անչափահասի · **ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի** · ոչ ոքի · քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի
514	Նշվածներից ո՞րն է լիարժեք համապատասխանում ՀՀ քաղաքացիական օրենսդրությանը: · **ֆիրմային անվանումն օգտագործվում է միայն այնպես, ինչպես այն գրանցված է, պայմանով, որ սպառողի կողմից այն չընկալվի որպես ապրանքային նշան** · ֆիրմային անվանումն օգտագործվում է միայն այնպես, ինչպես այն գրանցված է, պայմանով, որ սպառողի կողմից այն ընկալվի որպես ապրանքային նշան · ֆիրմային անվանումն օգտագործվում է միայն այնպես, ինչպես այն գրանցված է, պայմանով, որ սպառողի կողմից այն չընկալվի որպես ֆիրմային նշան · ֆիրմային անվանումն օգտագործվում է միայն պայմանագրով նախատեսված կարգով և նպատակների իրագործման համար
515	Ինչպե՞ս է կատարվում անչափահասին լրիվ գործունակ ճանաչելը, եթե բացակայում է նրա ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությունը. · ՀՀ կառավարության որոշմամբ · քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի սահմանած կարգով · չի կատարվում · **դատարանի վճռով**
516	Եթե օրենքով թույլատրվում է ամուսնանալ մինչև տասնութ տարեկան դառնալը, ապա ո՞ր պահից է քաղաքացին լրիվ ծավալով ձեռք բերում գործունակություն. · տասնութ տարեկան դառնալու պահից · **ամուսնանալու պահից** · երեխայի ծննդյան պահից · ամուսնու գործունակություն ձեռք բերելու պահից
517	Ու՞մ սեփականությունն է դառնում գտնված գույքը, եթե գտանքի մասին ոստիկանություն կամ տեղական ինքնակառավարման մարմին հայտնելու պահից հետո՝ վեց ամսվա ընթացքում, գտնված գույքը ստանալու իրավազոր անձը չի հայտնաբերվել կամ գույքի նկատմամբ իր իրավունքի մասին չի հայտարարել այն գտնող անձին, ոստիկանություն կամ տեղական ինքնակառավարման մարմին, իսկ գույքը գտնողը հրաժարվում է այն վերածել սեփականության. · պետության · **համայնքի**

	• ոչ ոքի • այդ մասին առաջինը դիմում ներկայացրած անձի
518	Ո՞ր դեպքում քաղաքացին, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերը դատարանի վճռով կարող է սնանկ ճանաչվել. • եթե այդ մասին առկա է քաղաքացու հատուկ ցանկությունը • **եթե նա ի վիճակի չէ բավարարել պարտատերերի պահանջները** • միայն խիստ սահմանափակ դեպքերում • ոչ մի դեպքում
519	Ստորև թվարկվածներից ո՞ր գործարքներն իրավունք ունի ինքնուրույն կնքել վեցից մինչև տասնչորս տարեկան փոքրահասակը. • որևէ գործարք կնքելու իրավունք չունի • անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր • **մանր կենցաղային գործարքներ** • բնակարանի վարձակալության պայմանագիր
520	Որո՞նք են քաղաքացիական օրենսգրքով ճանաչվում պետական կարիքներ, որոնց համար մատակարարվում են ապրանքներ. • պետական մարմնի ցանկացած պահանջմունք • ՀՀ քաղաքացիների պահանջմունքները • տեղական բյուջեի միջոցների հաշվին վճարվող և ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված կարգով որոշվող համայնքների պահանջմունքները • **պետական բյուջեյի միջոցների հաշվին վճարվող և օրենքով սահմանված կարգով որոշվող Հայաստանի Հանրապետության պահանջմունքները**
521	Ի՞նչ է սահմանվում անգործունակ ճանաչված քաղաքացու նկատմամբ. • **խնամակալություն** • հոգաբարձություն • խնամակալություն և հոգաբարձություն • վերահսկողություն
522	Ո՞վ է գործարքներ կնքում անգործունակ ճանաչված քաղաքացու անունից. • նրա հոգաբարձուն • **նրա խնամակալը** • անգործունակ ճանաչված քաղաքացին • ոչ ոք

523	Եթե դատարանը միջոցներ է ձեռնարկել պարզելու օտարերկրյա իրավունքի նորմերի բովանդակությունը, սակայն դա ողջամիտ ժամկետներում չի պարզվել, ապա. · կիրառում է միջազգային իրավունքը · **կիրառում է Հայաստանի Հանրապետության իրավունքը** · կիրառում է օտարերկրյա պետության իրավունքը · ոչ մի իրավունք չի կիրառում
524	Ովքե՞ր կարող են նշանակվել խնամակալ կամ հոգաբարձու. · 35 տարին լրացած անձինք · դատավորները · անհատ ձեռնարկատերերը · **չափահաս գործունակ քաղաքացիները**
525	Խնամարկյալի անշարժ և արժեքավոր շարժական գույքի մշտական կառավարման անհրաժեշտության դեպքում խնամակալության ու հոգաբարձության մարմինն այդպիսի գույքի նկատմամբ ի՞նչ պայմանագիր է կնքում իր կողմից նշանակված կառավարչի հետ. · գույքի անհատույց օգտագործման · առուվաճառքի · վարձակալության · **գույքի հավատարմագրային կառավարման**
526	Ի՞նչ կարող է սահմանվել չափահաս գործունակ քաղաքացու խնդրանքով, որը վատառողջ լինելու պատճառով չի կարող ինքնուրույն իրականացնել ու պաշտպանել իր իրավունքները և կատարել պարտականությունները. · վերահսկողություն · **պատրոնաժ** · խնամակալություն · հոգաբարձություն
527	Եթե անձն ունի երկու կամ ավելի պետության քաղաքացիություն, ապա. · նրա անձնական օրենքն այն պետության իրավունքն է, որի քաղաքացիությունն ունի տվյալ անձը · **նրա անձնական օրենքն այն պետության իրավունքն է, որի հետ այդ անձն առավել սերտ է կապված** · նրա անձնական օրենքն այն պետության իրավունքն է, որտեղ նա գտնվում է · ինքն է ընտրում իր անձնական օրենքը

528	Ի՞նչ է տեղի ունենում անհայտ բացակայող ճանաչված քաղաքացու հայտնվելու կամ նրա գտնվելու վայրը հայտնաբերվելու դեպքում. • վճիռը մնում է ուժի մեջ • **դատարանը վերացնում է նրան անհայտ բացակայող ճանաչելու մասին վճիռը** • վճիռը բողոքարկվում է վերաքննիչ դատարանում • վճիռը ճանաչվում է անվավեր
529	Որքա՞ն ժամանակ քաղաքացու բնակության վայրում նրա գտնվելու վայրի մասին տեղեկությունների բացակայության դեպքում քաղաքացին կարող է դատարանով մահացած ճանաչվել. • մեկ տարվա ընթացքում • **երեք տարվա ընթացքում** • վեց ամսվա ընթացքում • հինգ տարվա ընթացքում
530	Ռազմական գործողությունների կապակցությամբ անհայտ կորած զինծառայողը կամ այլ քաղաքացին ին՞չ ժամկետում կարող է դատարանով մահացած ճանաչվել. • ռազմական գործողությունների ավարտից անմիջապես հետո • **ոչ շուտ, քան ռազմական գործողությունների ավարտից երկու տարի հետո** • ոչ շուտ, քան երեք տարի ռազմական գործողությունների ավարտից հետո • ոչ շուտ, քան մեկ տարի ռազմական գործողությունների ավարտից հետո
531	Փոխադրողը պարտավոր է բեռը, ուղևորին կամ ուղեբեռը նշանակված վայր հասցնել պայմանագրով նախատեսված. • ժամկետներում • ողջամիտ ժամկետում • **ժամկետներում, իսկ այդպիսի ժամկետների բացակայության դեպքում՝ ողջամիտ ժամկետում** • ժամկետներում, իսկ այդպիսի ժամկետների բացակայության դեպքում՝ իրեն հարմար ժամկետում
532	Ո՞ր օրն է համարվում մահացած ճանաչված քաղաքացու մահվան օր. • **նրան մահացած ճանաչելու վերաբերյալ դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրը** • նրան մահացած ճանաչելու վերաբերյալ վճռի կայացման օրը • նրա մահը քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում գրանցելու օրը • նրան մահացած ճանաչելու մասին դատարան դիմում ներկայացնելու օրը

533	Ապահովադիրն իրավունք ունի ապահովագրության պայմանագրում նշված շահառուին փոխարինելու. • այլ անձով • տարբեր անձանցով • **այլ անձով՝ այդ մասին գրավոր ծանուցելով ապահովագրողին** • այլ անձով՝ այդ մասին գրավոր չծանուցելով ապահովագրողին
534	Վարձակալի կողմից առանց վարձատուի համաձայնության վարձակալած գույքից կատարած անբաժանելի բարելավումների արժեքը. • **չի հատուցվում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով** • չի հատուցվում • հատուցվում է օրենքով նախատեսված կարգով • հատուցվում է պայմանագրով նախատեսված կարգով
535	Կեղծ գործարքը, այսինքն՝ առերևույթ, առանց համապատասխան իրավական հետևանքներ առաջացնելու մտադրության կնքված գործարքը. • անվավեր է • վիճարկելի է • **առոչինչ է** • վիճահարույց է
536	Շինծու գործարքը, այսինքն՝ մեկ այլ գործարքի քողարկման նպատակով կնքված գործարքը. • **առոչինչ է** • վիճարկելի է • անվավեր է • վիճահարույց է
537	Եթե գույքը հատուցմամբ ձեռք է բերվել այդ գույքն օտարելու իրավունք չունեցող անձից, որի մասին ձեռք բերողը չգիտեր և չէր կարող իմանալ, ապա նա համարվում է. • **բարեխիղճ ձեռք բերող** • ոչ բարեխիղճ ձեռք բերող • տիրապետող • բարեխիղճ օգտագործող
538	Ո՞վ է սեփականության իրավունք ձեռք բերում անտառներում հավաքված հատապտուղների նկատմամբ, այն դեպքերում, երբ օրենքին համապատասխան, սեփականատիրոջ ընդհանուր թույլտվությամբ կամ տեղական սովորույթի համաձայն, թույլատրվում է անտառներում հատապտուղներ հավաքել. • անտառի սեփականատերը • **այն հավաքած անձը** • համայնքը • պետությունը

539	Դրամական միջոցները, ինչպես նաև ըստ ներկայացնողի արժեթղթերը. • **չեն կարող հետ պահանջվել բարեխիղճ ձեռք բերողից** • կարող են հետ պահանջվել բարեխիղճ ձեռք բերողից • պետք է հետ պահանջվեն բարեխիղճ ձեռք բերողից • ընդհանրապես ետ վերադարձման ենթակա չեն
540	Բնակելի տարածության օգտագործման իրավունքի ծագումը, իրականացման պայմանները և դադարումը սահմանվում են. • սեփականատիրոջ հետ կնքված հասարակ գրավոր պայմանագրով • **սեփականատիրոջ հետ նոտարական կարգով վավերացված գրավոր պայմանագրով** • սեփականատիրոջ հետ բանավոր համաձայնությամբ • միայն դատական կարգով
541	Ապրանքային նշանի իրավատերը բացառիկ իրավունք ունի. • **տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու ապրանքային նշանը, ինչպես նաև այլ անձանց թույլատրելու կամ արգելելու դրա օգտագործումը** • միայն տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու ապրանքային նշանը • միայն այլ անձանց թույլատրելու կամ արգելելու դրա օգտագործումը • միայն տիրապետելու և օգտագործելու ապրանքային նշանը
542	Գործարքները կնքվում են. • **բանավոր կամ գրավոր (հասարակ կամ նոտարական) ձևով** • միայն գրավոր • միայն նոտարական վավերացմամբ, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով և այլ իրավական ակտերով • միայն բանավոր, սակայն կողմերի հայեցողությամբ նաև գրավոր
543	Կիրառվու՞մ են արդյոք քաղաքացիական օրենսդրությունը և իրավական այլ ակտերը մի կողմի՝ մյուսի վարչական կամ իշխանական այլ ենթակայության վրա հիմնված գույքային՝ ներառյալ հարկային, ֆինանսական ու վարչական հարաբերությունների նկատմամբ. • **ոչ, չեն կիրառվում, եթե այլ բան նախատեսված չէ օրենսդրությամբ** • այո, կիրառվում են, եթե այլ բան նախատեսված չէ հարկային, ֆինանսական ու վարչական օրենսդրությամբ • որևէ դեպքում չեն կիրառվում • կարող են կիրառվել միայն օրենքի անալոգիայի կիրառման կարգով, եթե համապատասխան վարչական օրենսդրության մեջ կա իրավակարգավորման բաց

544	Թվարկածներից ո՞րն է տիտղոսային արժեթուղթ. · բաժնետոմսը · չեկը · **հասարակ պահեստային վկայագիրը** · փոխանցելի մուրհակը (վճարագիրը)
545	Պարտապանը կարող է պարտավորության կատարումը դնել երրորդ անձի վրա, եթե. · դա սահմանված է օրենքով · **օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից կամ դրա էությունից չի բխում պարտավորությունն անձամբ կատարելու պարտապանի պարտականությունը** · դա սահմանված է օրենքով և այլ իրավական ակտերով, գործարար շրջանառության սովորույթներով և ՀՀ անունից կնքված միջազգային պայմանագրերով · դա սահմանված է օրենքով, այլ իրավական ակտերով և պարտավորության պայմաններով
546	Ո՞ր պահից է սեփականատերը կորցնում ընդհանուր գույքում բաժնի նկատմամբ իրավունքը. · **փոխհատուցում ստանալու պահից** · գույքի պատահական վնասվածքի պահից · պետական գրանցման պահից · գործարքի կնքման պահից
547	Գրավի առարկա դրամական միջոցները պահվում են. · **բանկի կամ նոտարի դեպոզիտային հաշվում** · Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության դեպոզիտային հաշվում · ինկասացիոն կազմակերպության դեպոզիտային հաշվում · համայնքի դեպոզիտային հաշվում
548	Մասնաճյուղը. · ինքնուրույն իրավաբանական անձ է · դուստր կազմակերպություն է · **իրավաբանական անձի գտնվելու վայրից դուրս տեղակայված նրա առանձնացված ստորաբաժանումն է** · կախյալ կազմակերպություն է

549	Բնակարանի նկատմամբ ի՞նչ իրավունք է ձեռք բերում բնակարանային կոոպերատիվի անդամը, որը լրիվ մուծել է իր փայավճարը կոոպերատիվի կողմից իրեն տրամադրված բնակարանի համար. · օգտագործման · **սեփականության** · տնօրինման · վարձակալության
550	Ինչպե՞ս են կոչվում հողում կամ այլ գույքում թաղված կամ այլ եղանակով թաքցված դրամը կամ արժեքավոր առարկաները, որոնց սեփականատերը չի կարող դրանք հայտնաբերել կամ օրենքի ուժով կորցրել է դրանց նկատմամբ սեփականության իրավունքը. · գտանք · տիրազուրկ գույք · **գանձ** · անհայտ գույք
551	Առուվաճառքի պայմանագրի համաձայն՝ ներկատան արտադրամաս է վաճառվել իր բոլոր սարքավորումներով: Սակայն ապրանքի պատկանելիքները կամ փաստաթղթերը վաճառողի կողմից սահմանված ժամկետում չեն հանձնվել գնորդին: Այդ դեպքում գնորդն իրավունք ունի. · պահանջել վնասների հատուցում · պահանջել նվազեցնել ապրանքի արժեքը · **հրաժարվել ապրանքից, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով** · պահանջել վճարելու օրենքով սահմանված տուժանքը
552	Գնորդը գնված ապրանքի մեջ հայտնաբերել է տեսականու մասին առուվաճառքի պայմանագրի պայմանին չհամապատասխանող ապրանքներ, սակայն ողջամիտ ժամկետում վաճառողին չի հայտնել ապրանքներից հրաժարվելու մասին: Այդ դեպքում. · գնորդը մեկ տարվա ընթացքում իրավունք ունի հրաժարվել ապրանքից · գնորդն իրավունք ունի չվճարել այդ ապրանքների համար · գնորդն իրավունք ունի պահանջել փոխարինել այդ ապրանքները այլ ապրանքով · **այդ ապրանքները համարվում են ընդունված**
553	Մշտական ռենտայի պայմանագրում, որով գույքը վճարով հանձնվել է մշտական ռենտայի դիմաց, հետգնման գնի մասին պայմանի բացակայության դեպքում գույքը հետ է գնվում. · ռենտայի տարեկան գումարին համապատասխան գնի հիսուն տոկոսը վճարելու միջոցով · **ռենտայի տարեկան գումարին համապատասխան գին վճարելու միջոցով** · ռենտայի տարեկան գումարին համապատասխան գնի երկու երրորդը վճարելու

	միջոցով • ռենտայի եռամսյակային գումարին համապատասխան գին վճարելու միջոցով
554	Եթե փոխանակության պայմանագրին համապատասխան փոխանակվող ապրանքները հանձնելու ժամկետները չեն համընկնում, ապա կողմի, որը պետք է ապրանքը հանձնի մյուս կողմից ապրանք ստանալուց հետո, պարտավորության կատարման նկատմամբ կիրառվում են. • առուվաճառքի մասին կանոնները • **պարտավորության հանդիպական կատարման կանոնները** • փոխառության մասին կանոնները • պահանջի զիջման մասին կանոնները
555	Եթե նվիրատվությունը կատարվում է նվիրատուի կողմից ներկայացուցչին տրված նվիրատվության կատարման լիազորագրի հիման վրա, սակայն լիազորագրում նշված չէ նվիրառուն, ապա տվյալ իրավիճակում. • ներկայացուցիչն իրավունք ունի անձամբ ընտրել նվիրառուին • ներկայացուցիչը պարտավոր է նվիրատուից ճշտել նվիրառուի անունը • **նման լիազորագիրն առոչինչ է** • ներկայացուցիչն իրավունք ունի նվիրատվության պայմանագիրը հօգուտ իրեն կնքել
556	Եթե ժառանգը, ում վրա դրվել է կտակային հանձնարարության կատարումը, ժառանգության պարտադիր բաժնի իրավունք ունի, ապա կտակային հանձնարարության կատարելու նրա պարտականությունը. • **սահմանափակվում է նրա պարտադիր բաժնի չափը գերազանցող՝ նրան անցած ժառանգության արժեքով** • սահմանափակվում է նրա պարտադիր բաժնի չափի արժեքով • ոչնչով չի սահմանափակվում • սահմանափակվում է նրա պարտադիր բաժնի մեկ երկրորդ չափի արժեքով

557	Քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է. · **իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա** · կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, հանրային գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման · կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, հանրային գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա · գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական, վարչական և քրեական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, չխախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա
558	Ցման ռենտայի դիմաց հանձնված գույքի պատահական կորուստը կամ պատահական վնասվածքը ռենտա վճարողին. · ազատում է ցման ռենտայի պայմանագրով նախատեսված պայմաններով այն վճարելու պարտավորությունից, եթե նա արդեն վճարել է պայմանագրով նախատեսված գումարի կեսը · ազատում է ցման ռենտայի պայմանագրով նախատեսված պայմաններով այն վճարելու պարտավորությունից · **չի ազատում ցման ռենտայի պայմանագրով նախատեսված պայմաններով այն վճարելու պարտավորությունից** · ազատում է ցման ռենտայի պայմանագրով նախատեսված պայմաններով այն վճարելու պարտավորությունից, եթե նա արդեն վճարել է պայմանագրով նախատեսված գումարի երկու երրորդը

559	Ստորև թվարկվածներից ո՞րն է համարվում ինվեստիցիոն (ներդրումային)արժեթուղթ. · մուրհակը · **բաժնետոմսը** · չեկը · երկակի պահեստային վկայագիրը
560	Ստորև թվարկվածներից ո՞րը վճարային արժեթուղթ չէ. · հասարակ մուրհակը · չեկը · փոխանցելի մուրհակը · **պարտատոմսը**
561	Ո՞ր գործարքները կարող են կնքվել բանավոր. · **կնքման պահին կատարվող բոլոր գործարքները, բացառությամբ այն գործարքների, որոնց համար սահմանված է նոտարական ձև, և այն գործարքների, որոնց հասարակ գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է դրանց անվավերության, եթե այլ բան սահմանված չէ կողմերի համաձայնությամբ** · բոլոր այն գործարքները, որոնց համար սահմանված է պարտադիր գրավոր ձև · բոլոր այն գործարքները, որոնց համար չի պահանջվում նոտարական վավերացում · գրավոր պայմանագրի կատարմանն ուղղված գործարքները՝ անկախ կողմերի համաձայնությունից
562	Ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի ո՞վ կարող է ներկայացնել վիճահարույց գործարքն անվավեր ճանաչելու պահանջ. o ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում նշված անձինք o միայն գործարքի կողմերը · **ՀՀ քաղաքացիական օրենսգրքում նշված անձինք** o յուրաքանչյուր ոք
563	Գույքի կամ իրավունքի հանդիպական հանձնման կամ հանդիպական պարտավորության առկայության դեպքում պայմանագիրը. o համարվում է նվիրատվության պայմանագիր o նվիրատվության պայմանագիր չի համարվում և այդպիսի պայմանագրի նկատմամբ կիրառվում են կեղծ գործարքի նկատմամբ կիրառվող կանոնները · **նվիրատվության պայմանագիր չի համարվում և այդպիսի պայմանագրի նկատմամբ կիրառվում են շինծու գործարքի նկատմամբ կիրառվող կանոնները** o համարվում է նվիրատվության պայմանագիր, եթե մյուս կողմը չի առարկում

564	Պարտքային փաստաթուղթը պարտապանի մոտ գտնվելը հավաստում է. o պարտավորության առկայությունը **• պարտավորության դադարումը, քանի դեռ այլ բան չի ապացուցվել** o պարտավորության անվավերությունը o պարտավորության միայն մասնակի կատարումը, եթե այլ բան չի ապացուցվել
565	Ի՞նչ է պարտավոր տալ պարտապանի պահանջով պարտատերը՝ ընդունելով կատարումը. **• ստացական՝ կատարումը լրիվ կամ համապատասխան մասով ստանալու մասին** o գրություն՝ պարտավորությունից հրաժարվելու մասին o բնեղեն o պարտատերն օրենքով սահմանված նման պարտավորություն չունի
566	Կողմերից յուրաքանչյուրը ցանկացած ժամանակ կարող է հրաժարվել գույքի անհատույց օգտագործման պայմանագրից. o առանց մյուս կողմին նախապես զգուշացնելու o երեք ամիս առաջ այդ մասին ծանուցելով մյուս կողմին, եթե ծանուցման այլ ժամկետ նախատեսված չէ պայմանագրով o մեկ ամիս առաջ, իսկ անշարժ գույքի դեպքում՝ երեք ամիս առաջ այդ մասին ծանուցելով մյուս կողմին, եթե ծանուցման այլ ժամկետ նախատեսված չէ պայմանագրով **• մեկ ամիս առաջ այդ մասին ծանուցելով մյուս կողմին, եթե ծանուցման այլ ժամկետ նախատեսված չէ պայմանագրով**
567	Եթե կատարումը նախատեսված է անձամբ պարտատիրոջ համար կամ պարտավորությունն այլ կերպ անխզելիորեն կապված է պարտատիրոջ անձի հետ, ապա պարտատիրոջ մահով պարտավորությունը. o կասեցվում է **• դադարում է** o շարունակվում է o դադարում է մասնակի
568	Ինչպիսի՞ պայմանագրով են կողմերը պարտավորվում ապագայում կնքել գույք հանձնելու, աշխատանքներ կատարելու կամ ծառայություններ մատուցելու մասին պայմանագիր (հիմնական պայմանագիր). o արձանագրային կամ այլընտրանքային o հայեցողական կամ ֆակուլտատիվ o հիմնական **• նախնական**

569	Գրավոր պայմանագրի կատարմանն ուղղված գործարքները կարող են կողմերի համաձայնությամբ կնքվել . o գրավոր և պարտադիր կարգով ենթակա են նոտարական վավերացման o միայն գրավոր **• բանավոր, եթե դա չի հակասում օրենքին, այլ իրավական ակտերին և պայմանագրին** o բանավոր, եթե նույնիսկ այն հակասում է կողմերի միջև կնքված պայմանագրին
570	Օֆերտան պետք է պարունակի. o պայմանագրի բոլոր պայմանները o միայն պայմանագրի առարկան o միայն պայմանագրի էական պայմանները, օֆերտա ուղարկած անձի տվյալները և պայմանագրի առարկան **• պայմանագրի էական պայմանները**
571	Ի՞նչ ձևով են անցկացվում սակարկությունները. **• աճուրդի կամ մրցույթի** o միայն բաց և փակ աճուրդների o պետական մարմնի որոշումներով՝ հույժ գաղտնի o միայն մրցույթի
572	Օրենքով սահմանված կանոնների խախտմամբ անցկացված սակարկությունները շահագրգիռ անձի հայցով դատարանը կարող է ճանաչել. o ոչ պատշաճ o առոչինչ o չկայացած **• անվավեր**
573	Շինծու գործարքի նկատմամբ, հաշվի առնելով դրա էությունը. o կիրառվում են այն գործարքին վերաբերող կանոնները, որը տուժող կողմն իրականում նկատի են ունեցել շինծու գործարքը կնքելիս **• կիրառվում են այն գործարքին վերաբերող կանոնները, որը կողմերն իրականում նկատի են ունեցել շինծու գործարքը կնքելիս** o կիրառվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 312-րդ հոդվածով (էական նշանակություն ունեցող մոլորության ազդեցության տակ կնքված գործարքի անվավերությունը) սահմանված կանոնները o կիրառվում են այն գործարքին վերաբերող կանոնները, որը սահմանվել է դատարանի կողմից

574	Տնտեսական ընկերակցության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում ներդրված ավանդը կարող է լինել. o միայն ՀՀ դրամ o միայն ՀՀ դրամ և արժեթղթեր o միայն դրամ, արժեթղթեր և այլ գույք **• դրամ, արժեթղթեր, այլ գույք կամ գույքային իրավունքներ, ինչպես նաև դրամական գնահատում ունեցող այլ իրավունքներ**
575	Իրավունք ունե՞ն պայմանագրի կողմերը պահանջելու վերադարձնել այն, ինչը կատարել են պարտավորությամբ մինչև պայմանագրի փոփոխման կամ լուծման պահը. o իրավունք չունեն՝ անկախ օրենքով կամ պայմանագրով այլ բան նախատեսված լինելուց o իրավունք ունեն o իրավունք ունեն, եթե պայմանագիրը կնքվել է գրավոր **• իրավունք չունեն, եթե այլ բան սահմանված չէ օրենքով կամ կողմերի համաձայնությամբ**
576	Եթե ապրանքների ընտրության ժամկետ պայմանագրով նախատեսված չէ, գնորդը (ստացողը) ապրանքների ընտրությունը պետք է կատարի. o ապրանքները պատրաստ լինելու մասին մատակարարի ծանուցումն ստանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում o ապրանքները պատրաստ լինելու մասին մատակարարի ծանուցումն ստանալուց հետո՝ երեսնօրյա ժամկետում **• ապրանքները պատրաստ լինելու մասին մատակարարի ծանուցումն ստանալուց հետո՝ ողջամիտ ժամկետում** o ապրանքները պատրաստ լինելուց հետո՝ ողջամիտ ժամկետում
577	Ի՞նչ ձևով է կնքվում էներգամատակարարման պայմանագիրը. o կողմերի պայմանավորված որոշակի ձևով o բանավոր **• գրավոր** o գրավոր և ենթակա են նոտարական վավերացման
578	Ապրանքի թերությունների հետևանքով պատճառված վնասը տուժողի ընտրությամբ ենթակա է հատուցման. o ենթակա է հատուցման վաճառողի կողմից o ենթակա է հատուցման ապրանք արտադրողի կողմից **• տուժողի ընտրությամբ ենթակա է հատուցման վաճառողի կամ ապրանք արտադրողի կողմից** o տուժողի ընտրությամբ ենթակա է հատուցման վաճառողի կամ ապրանք մատակարարողի կողմից

579	Նվիրատուի մահից հետո նվիրառուին նվերի հանձնում նախատեսող պայմանագիրը. o իրավունքներ և պարտականություններ է առաջացնում նվիրատուի ժառանգների համար o վավեր է, եթե պայմանագիրը կնքվել է գրավոր **• առոչինչ է** o իրավունքներ և պարտականություններ է առաջացնում նվիրատուի ժառանգների համար, եթե առկա է պայմանագրի առարկա գույքը
580	Եթե նվիրառուի վերաբերմունքը նրան նվիրված գույքի նկատմամբ, որը նվիրատուի համար իրենից ոչ գույքային մեծ արժեք է ներկայացնում, դրա անդառնալի կորստի սպառնալիք է ստեղծում, ի՞նչ իրավունք ունի նվիրատուն. o հրաժարվել պայմանագիրը կատարելուց o պահանջել անվավեր ճանաչելու նվիրատվության պայմանագիրը o ոչ մի **• դատական կարգով պահանջել վերադարձնելու նվիրատվությունը**
581	Սեփականության օտարումը հասարակության և պետության կարիքների համար կարող է կատարվել միայն. o բացառիկ՝ ոչ գերակա հանրային շահերի դեպքերում o բացառիկ՝ գերակա հանրային շահերի դեպքերում, օրենքով սահմանված կարգով, առանց նախնական փոխհատուցմամբ o բացառիկ՝ գերակա մասնավոր շահերի դեպքերում, օրենքով սահմանված կարգով, նախնական համարժեք փոխհատուցմամբ **• բացառիկ՝ գերակա հանրային շահերի դեպքերում, օրենքով սահմանված կարգով, նախնական համարժեք փոխհատուցմամբ**
582	Եթե իրադրության փոփոխման հետևանքով նվիրաբերված գույքի օգտագործումը նվիրաբերողի սահմանած նպատակին համապատասխան դառնում է անհնար, ապա ո՞ր դեպքում կարող է օգտագործվել այլ նպատակով. **• միայն նվիրաբերողի համաձայնությամբ, իսկ նվիրաբերող քաղաքացու մահվան կամ իրավաբանական անձի լուծարման դեպքում՝ դատարանի վճռով** o առանց նվիրաբերողի համաձայնության o նվիրառուի հայեցողությամբ o միայն նվիրառուի համաձայնությամբ, իսկ նվիրառու քաղաքացու մահվան կամ իրավաբանական անձի լուծարման դեպքում՝ դատարանի վճռով

583	Ի՞նչ իրավունք ունեն նվիրաբերողը կամ նրա ժառանգները, եթե նվիրաբերություն ստացողը նվիրաբերած գույքն օգտագործել է նվիրաբերողի սահմանած նշանակությանն անհամապատասխան. o պահանջել գույքն օգտագործել նվիրաբերողի սահմանած նշանակությանը համապատասխան • **պահանջել նվիրաբերության վերացում** o հրաժարվել պայմանագիրը կատարելուց o պայմանագիրը ճանաչել առոչինչ
584	Ստորև թվարկվածներից ի՞նչը չի կարող լինել վարձակալության պայմանագրի օբյեկտ. o հողամասը o տրանսպորտային միջոցը • **սպառվող գույքը** o շենքերը
585	Ի՞նչ իրավական ակտով կարող են սահմանվել գույքի տեսակներ, որոնց վարձակալության հանձնելը չի թույլատրվում կամ սահմանափակված է. o ՀՀ կառավարության որոշմամբ o ՀՀ Նախագահի հրամանագրով • **օրենքով** ՀՀ Ազգային ժողովի որոշմամբ
586	Սեփականատերեր չհամարվող անձինք կարող են ունենալ հետևյալ գույքային իրավունքները. • **կառուցապատման, սերվիտուտի, գրավի** o կառուցապատման, սերվիտուտի, գրավի, վարձակալության o կառուցապատման, սերվիտուտի, գրավի, վարձակալության, հեղինակության o միայն կառուցապատման և սերվիտուտի
587	Իրավաբանական անձի կամ քաղաքացու աշխատողի կողմից պատճառված վնասը հատուցում է. o իրավաբանական անձը կամ քաղաքացին • **իրավաբանական անձը կամ քաղաքացին, եթե վնասը պատճառվել է իր աշխատանքային (ծառայողական, պաշտոնեական) պարտականությունները կատարելիս** o աշխատողը o աշխատողը, եթե վնասը պատճառվել է իր աշխատանքային (ծառայողական, պաշտոնեական) պարտականությունները կատարելիս

588	Քաղաքացին կամ իրավաբանական անձը, որն անշարժ գույքի սեփականատեր չէ, սակայն այն տասը տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ տիրապետում է որպես սեփական գույք, այդ գույքի նկատմամբ ձեռք է բերում. o հավատարմագրային կառավարման իրավունք o միայն օգտագործման իրավունք • **սեփականության իրավունք** o միայն տիրապետման իրավունք
589	Մեկից ավելի մասնակից ունեցող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը մասնակիցների ձայների քանի՞ տոկոսի որոշմամբ կարող է լուծարվել. • **միաձայն որոշմամբ** o ոչ պակաս, քան քսան տոկոսի որոշմամբ o ոչ պակաս, քան հիսուն տոկոսի որոշմամբ o բավարար է միայն մեկ մասնակցի համապատասխան պահանջը
590	Բնակելի տարածության վարձակալն իրավունք ունի՞ իր վարձակալած տարածությունը կամ դրա մի մասը հանձնել ենթավարձակալության. o ոչ • **այո, վարձատուի համաձայնությամբ** o այո, անկախ վարձատուի համաձայնության o այո, ենթավարձակալի պահանջի առկայության դեպքում
591	Կատարողն իրավունք ունի՞ գիտահետազոտական աշխատանքների կատարմանը ներգրավել երրորդ անձանց. • **այո, միայն պատվիրատուի համաձայնությամբ** o ոչ o այո, առանց պատվիրատուի համաձայնության o այո, կատարողի և երրորդ անձի ցանկությամբ
592	Իրավաբանական անձն ունի իր անվանումը, որը. o կարող է ցուցում պարունակել նրա կազմակերպական-իրավական ձևի մասին o չպետք է ցուցում պարունակի նրա կազմակերպական-իրավական ձևի մասին • **ցուցում է պարունակում նրա կազմակերպական-իրավական ձևի մասին** o ցուցում է պարունակում նրա հիմնադիրների և մասնակիցների մասին

593	Ո՞ր պահից են ծագում գույքի նկատմամբ պետական գրանցման ենթակա իրավունքները. o այդպիսի գույքի նկատմամբ պայմանագրի ստորագրման պահից o այդպիսի գույքի նկատմամբ պայմանագիր կնքած կողմերի սահմանած պահից • **դրանց գրանցման պահից** o ցանկացած պահից
594	Ապրանքային նշանի գրանցման փաստը և դրա նկատմամբ իրավունքը հավաստվում է. o սովորույթի ուժով • **վկայագրով** o հրամանագրով o վճարագրով
595	Եթե վնասը պատճառվել է տուժողի խնդրանքով կամ համաձայնությամբ. o վնասի հատուցումը չի կարող մերժվել • **վնասի հատուցումը կարող է մերժվել** o վնասը կարող է մերժվել միայն այն դեպքում, երբ տուժողը չի առարկում o վնասը հատուցվում է լիարժեք
596	Նվիրատուն իրավունք ունի նվիրառուից պահանջել հատուցելու. • **նվերն ընդունելուց հրաժարվելու հետևանքով իրեն պատճառված իրական վնասը** o նվերն ընդունելուց հրաժարվելու հետևանքով իրեն պատճառված իրական վնասը և բաց թողնված օգուտը o նվերն ընդունելուց հրաժարվելու հետևանքով իրեն պատճառված վնասը նվիրատվության պայմանագրի առարկա համարվող գույքի արժեքը գերազանցող մասով o նվիրատուն նվերն ընդունելուց հրաժարվելու հետևանքով իրեն պատճառված վնասը հատուցելու պահանջի իրավունք չունի
597	Նախավճար է համարվում այն դրամական գումարը, որ պայմանավորվող կողմերից մեկը պայմանագրով հասանելիք վճարների հաշվին տալիս է մյուս կողմին. • **իբրև պայմանագրի կնքման ապացույց և դրա կատարման ապահովում** o իբրև պայմանագրի կնքման ապացույց o իբրև պայմանագրի կատարման ապահովում o իբրև պայմանագրի կնքման ապացույց և նախավճար տված անձի կողմից դրա կատարման ապահովում

598	Դատական կարգով կատարված ամուսնալուծությունը. o ենթակա չէ պետական գրանցման o կարող է ենթարկվել պետական գրանցման **• ենթակա է պետական գրանցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով** o ենթակա է պետական գրանցման, եթե ամուսինները չեն առարկում
599	Եթե ժառանգատուի բնակության վերջին վայրն արտասահմանում է կամ անհայտ է, ապա ժառանգության բացման վայր է համարվում. o ժառանգության զանգվածի մեջ մտնող անշարժ գույքի կամ դրա առավել արժեքավոր մասի վայրը **• ժառանգության զանգվածի մեջ մտնող անշարժ գույքի կամ դրա առավել արժեքավոր մասի, իսկ անշարժ գույքի բացակայության դեպքում՝ շարժական գույքի կամ դրա առավել արժեքավոր մասի գտնվելու վայրը** o ժառանգատուի ընտանիքի անդամների բնակության վայրը o ժառանգության զանգվածի մեջ մտնող անշարժ գույքի, իսկ անշարժ գույքի բացակայության դեպքում՝ շարժական գույքի կամ դրա առավել արժեքավոր մասի գտնվելու վայրը
600	Կտակակատար պարտավոր է կտակը կատարելու մասին հաշվետվություն ներկայացնել. o նոտարի պահանջով **• ժառանգների պահանջով** o ժառանգության բացման վայրի համայնքի ղեկավարի պահանջով o ժառանգների և նոտարի պահանջով

№	2014 թվականի գարնանային հոսք ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՐՑԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ
1	Դատարանը քաղաքացիական գործով փորձագետին նախազգուշացնում է քրեական պատասխանատվության մասին. • անհիմն եզրակացություն տալու համար • **ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար** • եզրակացություն տալուց հրաժարվելու կամ խուսափելու համար • եզրակացությունը սահմանված ժամկետում չտալու համար
2	Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ Հայաստանի Հանրապետության դատարաններում քաղաքացիական գործերով դատավարության կարգը սահմանվում է. • միայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով • **Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով և դրանց համապատասխան ընդունված այլ օրենքներով** • Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով • Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով և ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներով
3	Քաղաքացիական գործով դատարանը որոշում է կայացնում արագացված դատաքննության կիրառումը դադարեցնելու մասին, եթե. • գործին մասնակցող անձն այդ մասին միջնորդություն է արել • գործին մասնակցող անձը դատական նիստին չի ներկայացել • **գործի արագացված դատաքննության ընթացքում դատարանը գալիս է համոզման, որ վերացել են արագացված դատաքննության հիմքերը** • պատասխանողն ընդունել է հայցը
4	Ի՞նչ է անում դատարանը քաղաքացիական գործով արագացված դատաքննություն կիրառելու մասին որոշում կայացնելուց հետո. • **անցնում է գործն ըստ էության լուծող դատական ակտի կայացմանը** • լսում է կողմերի ցուցմունքները և կայացնում է վճիռ • կայացնում է վճիռ, եթե պատասխանողը չի ներկայացել նիստին • կայացնում է վճիռ ոչ ուշ, քան երկու շաբաթվա ընթացքում, եթե այդ ժամկետում պատասխանողը չի ներկայացնում հայցադիմումի վերաբերյալ գրավոր պատասխան

5	Ակնհայտ անհիմն հայցը դատարանի կողմից մերժելու դեպքում քաղաքացիական գործով պատասխանողն իրավունք ունի. • դիմել նախաքննության մարմնին՝ հայցվորին քրեական պատասխանատվության ենթարկելու պահանջով • դիմել դատարան՝ հայցվորին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջով • **ընդդեմ հայցվորի հայց հարուցել նույն դատարան՝ իրեն պատճառած վնասները հատուցելու պահանջով** • դիմել դատարան՝ իր կրած վնասները դատական ծախսերի մեջ ներառելու պահանջով
6	Դատարանը քաղաքացիական գործով կայացնում է վճիռ. • հայցը կամ դիմումը առանց քննության թողնելու դեպքում • գործի վարույթը կասեցնելու դեպքում • հայցի ապահովումը վերացնելու դեպքում • **վեճն ըստ էության լուծելու դեպքում**
7	Քաղաքացիական գործով վճիռ կայացնելիս լուծման ենթակա հարցերը որոշելիս՝ անհրաժեշտ համարելով լրացուցիչ հետազոտել ապացույցները կամ շարունակել գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների պարզումը, դատարանը. • **վերսկսում է գործի քննությունը** • հետաձգում է գործի քննությունը՝ գործին մասնակցող անձանց կողմից լրացուցիչ նյութեր ներկայացնելու համար • կասեցնում է գործի վարույթը • կրկին հետազոտում է գործում եղած ապացույցները՝ դեռևս չպարզված հանգամանքները պարզելու համար
8	Դատարանի վճիռը քաղաքացիական գործով կազմված է. • ներածական, նկարագրական և եզրափակիչ մասերից • ներածական, պատճառաբանական և եզրափակիչ մասերից • նկարագրական, պատճառաբանական և եզրափակիչ մասերից • **ներածական, նկարագրական, պատճառաբանական և եզրափակիչ մասերից**
9	Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի. • վկա կարող է լինել գործի ելքով չշահագրգռված ցանկացած անձ, որին հայտնի են դատարանի կողմից վեճի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող տեղեկություններ և հանգամանքներ • **վկա կարող է լինել ցանկացած անձ, որին հայտնի են դատարանի կողմից վեճի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող տեղեկություններ և հանգամանքներ** • վկա կարող է լինել գործին մասնակցող անձանց հետ ազգակցական կապի մեջ չգտնվող ցանկացած անձ, որին հայտնի են դատարանի կողմից վեճի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող տեղեկություններ և հանգամանքներ

	• վկա կարող է լինել գործի մասնակից չհանդիսացող ցանկացած անձ, որին հայտնի են դատարանի կողմից վեճի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող տեղեկություններ և հանգամանքներ
10	Վճռի նկարագրական մասը քաղաքացիական գործով չի ներառում. • հայցադիմումի համառոտ շարադրանքը • հայցադիմումի պատասխանի համառոտ շարադրանքը • գործին մասնակցող անձանց դիմումների և միջնորդությունների համառոտ շարադրանքը • **կոնկրետ ապացույցները մերժելու փաստարկները**
11	Վճռի պատճառաբանական մասը քաղաքացիական գործով չի ներառում. • դատարանի կողմից պարզված հանգամանքները • ապացույցները, որոնց վրա հիմնված են դատարանի հետևությունները, այս կամ այն ապացույցները մերժելու փաստարկները • **հայցապահանջները բավարարելու կամ մերժելու մասին դատարանի եզրահանգումները** • այն օրենքները, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը և այլ իրավական ակտերը, որոնցով դատարանը ղեկավարվել է վճիռ կայացնելիս
12	Վճռի եզրափակիչ մասը քաղաքացիական գործով չի ներառում. • եզրահանգումներ յուրաքանչյուր հայցապահանջը բավարարելու կամ մերժելու մասին • նշում՝ վճռի կամովին չկատարելու դեպքում այն դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով պարտապանի հաշվին կատարելու մասին • **նշումներ՝ դատարանի վճռի հարկադիր կատարման ընթացքում հաշտության համաձայնություն կնքելու կողմերի իրավունքի և դրա իրականացման կարգի մասին** • նշումներ՝ վճիռը բողոքարկելու ժամկետների ու կարգի մասին
13	Գործարքն անվավեր ճանաչելիս դատարանը պարտավոր է քաղաքացիական գործով վճռի եզրափակիչ մասում նշել նաև. • գործարքի անվավերության հիմքերը • **գործարքի անվավերության հետևանքները** • գործարքի անվավերության հետևանքների կիրառման կարգը • գործարքի անվավերության հետ կապված այլ հարցեր

14	Կողմերի հաշտության համաձայնությունը հաստատելու մասին քաղաքացիական գործով վճիռը պետք է պարունակի հաշտության համաձայնության. • **բառացի շարադրանքը (տեքստը)** • համառոտ շարադրանքը • հիմնական պայմանները • եզրափակիչ մասը
15	Նոր երևան եկած հանգամանքներով քաղաքացիական դատավարությունում վերանայման ենթակա են. • վերաքննիչ դատարանի և վճռաբեկ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռները և որոշումները • միայն առաջին ատյանի դատարանների և վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը • միայն առաջին ատյանի դատարանների դատական ակտերը • **միայն օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը**
16	Գույք հատկացնելու մասին քաղաքացիական գործով վճռում դատարանը չի ներառում. • հանձնման ենթակա գույքի անվանումը • եթե հայտնի է՝ գույքի գտնվելու վայրը • գույքի արժեքը • **գույքն անհատականացնող հատկանիշները**
17	Պայմանագիր կնքելուն հարկադրելու պահանջի մասին վճռով՝ քաղաքացիական գործով վճռի եզրափակիչ մասում դատարանը նշում է. • **այն պայմանները, որոնցով կողմերը պարտավոր են կնքել պայմանագիրը** • պայմանագրի էական պայմանները • պայմանագրի յուրաքանչյուր վիճելի պայմանի վերաբերյալ որոշումը • պայմանագրի յուրաքանչյուր էական պայմանի վերաբերյալ որոշումները
18	Պայմանագիրը կնքելու կամ փոխելու հետ կապված քաղաքացիական գործով վեճով վճռի եզրափակիչ մասում դատարանը նշում է. • պայմանագրի էական պայմանները • **պայմանագրի յուրաքանչյուր վիճելի պայմանի վերաբերյալ որոշումը** • պայմանագրի բոլոր պայմանները • պայմանագրի էական պայմանների վերաբերյալ որոշումները
19	Քաղաքացիական գործի վարույթը կարճելու մասին դատարանը կայացնում է. • որոշում • **վճիռ** • մասնավոր հրաման • եզրակացություն

20	Ընդհանուր իրավասության դատարանի քաղաքացիական գործն ըստ էության լուծող դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում. • հրապարակման պահից • այն հրապարակելուց մեկ ամիս հետո • այն հրապարակելուց տասնհինգ օր հետո • **այն հրապարակելուց մեկ ամիս հետո, բացառությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերի**
21	Քաղաքացիական դատավարությունում վճռի կայացումից հետո դատարանը դրա կատարման ապահովման միջոցներ է ձեռնարկում. • իր նախաձեռնությամբ • **գործին մասնակցող անձի դիմումով** • իր նախաձեռնությամբ կամ գործին մասնակցող անձի դիմումով • իր նախաձեռնությամբ, գործին մասնակցող կամ շահագրգիռ այլ անձի դիմումով
22	Դատարանն իրավունք ունի քաղաքացիական գործով լրացուցիչ վճիռ կայացնել. • միայն իր նախաձեռնությամբ • միայն գործին մասնակցող անձանց դիմումով • միայն կողմերի դիմումով • **գործին մասնակցող անձանց դիմումով կամ իր նախաձեռնությամբ**
23	Կարո՞ղ է արդյոք բողոքարկվել լրացուցիչ վճիռ կայացնելը մերժելու մասին քաղաքացիական գործով որոշումը. • ոչ, չի կարող • **կարող է ցանկացած դեպքում** • կարող է, եթե միայն նման դիմումով հանդես է եկել հայցվորը • կարող է, եթե միայն նման դիմումով հանդես է եկել պատասխանողը
24	Վճիռ կայացրած դատարանն իրավունք ունի՝ չփոխելով քաղաքացիական գործով վճռի բովանդակությունը վճիռը պարզաբանել. • գործին մասնակցող անձանց դիմումով • իր նախաձեռնությամբ • **գործին մասնակցող անձանց դիմումով կամ իր նախաձեռնությամբ** • իր նախաձեռնությամբ, գործին մասնակցող կամ շահագրգիռ այլ անձանց դիմումով
25	Վճիռը պարզաբանելու մասին պահանջը քաղաքացիական գործով կարող է ներկայացվել. • վճիռը ստանալուց հետո՝ յոթնօրյա ժամկետում • մինչև վճիռն օրինական ուժի մեջ մտնելը • վճռի բողոքարկման դեպքում՝ մինչև բողոք բերելը • **մինչև վճռի կատարումը**

26	Վճիռը քաղաքացիական գործով պարզաբանելու կամ վրիպակները, գրասխալները և թվաբանական սխալներն ուղղելու մասին դատարանը. • կայացնում է լրացուցիչ վճիռ • **կայացնում է որոշում** • կազմում է պարզաբանում • արձակում է հրաման
27	Քաղաքացիական գործով առանձին ակտի ձևով կայացված որոշման մեջ նշվող տեղեկություն չէ. • գործին մասնակցող անձանց անունը (անվանումը) • **գործին մասնակցող անձանց բնակության (գտնվելու) վայրը** • հարցը, որի վերաբերյալ որոշում է կայացվում • քննարկվող հարցով եզրահանգումը
28	Դատարանի՝ առանձին ակտի ձևով կայացված որոշումն ուժի մեջ է մտնում. • **ընդունման պահից** • ընդունման պահից երեք օր հետո • այդ ակտով սահմանված ժամկետում • հրապարակման պահից տասնհինգ օր հետո
29	Քաղաքացիական գործով առանձին ակտի ձևով կայացված դատարանի որոշումը. • միայն կցվում է դատական նիստի արձանագրությանը • հրապարակվում է բանավոր և կցվում է դատական նիստի արձանագրությանը՝ դատական նիստից անմիջապես հետո դրանց պատճենները հանձնելով գործին մասնակցող անձանց • **պատշաճ ձևով ուղարկվում է գործին մասնակցող անձանց՝ կայացման օրվանից եռօրյա ժամկետում** • կցվում է դատական նիստի արձանագրությանը՝ դատական նիստից անմիջապես հետո դրանց պատճենները հանձնելով գործին մասնակցող անձանց՝ նրանցից ստորագրություն վերցնելով կամ ուղարկվում է գործին մասնակցող անձանց՝ կայացման օրվանից եռօրյա ժամկետում
30	Քաղաքացիական գործով դատական նիստերից դուրս վարվու՞մ է արդյոք արձանագրություն. • ոչ, չի վարվում • **վարվում է առանձին դատավարական գործողություններ կատարելիս** • վարվում է ոչ դատավարական գործողություններ կատարելիս • վարվում է, եթե կողմերից մեկը այն վարելու մասին միջնորդություն է ներկայացրել

31	Քաղաքացիական գործով դատական նիստի դահլիճում ձայնագրման համակարգ տեղադրված լինելու դեպքում. • դատական նիստի արձանագրություն վարվում է • **արձանագրությունը վարվում է դատական նիստի ձայնային արձանագրման և համակարգչային եղանակով միաժամանակ համառոտագրման միջոցով** • արձանագրությունը վարվում է ձայնագրման միջոցով • արձանագրության վարման հետ միաժամանակ կատարվում է դատական նիստի ձայնագրում
32	Քաղաքացիական գործով դատական նիստի պարզ թղթային արձանագրությունը կցվում է գործի նյութերին՝ հավաստված. • **նախագահող դատավորի և քարտուղարի ստորագրությամբ** • դատական նիստի քարտուղարի ստորագրությամբ • նախագահող դատավորի, դատական նիստի քարտուղարի և կողմերի ստորագրությամբ • նախագահող դատավորի, դատական նիստի քարտուղարի, կողմերի և դատավարության մյուս մասնակիցների ստորագրությամբ
33	Քաղաքացիական գործով հատուկ համակարգչային ձայնագրման և համակարգչով արձանագրություն վարելիս դրա համառոտագրումը ստորագրվում է. • **դատական նիստի քարտուղարի կողմից** • նախագահող դատավորի կողմից • նախագահող դատավորի և դատական նիստի քարտուղարի կողմից • նախագահող դատավորի, դատական նիստի քարտուղարի, կողմերի և դատավարության մյուս մասնակիցների կողմից
34	Դատական նիստի արձանագրության համակարգչային արձանագրման կրիչի օրինակը դրա համառոտագրման հետ քաղաքացիական գործին մասնակցող անձանց գրավոր դիմումի հիման վրա նրանց տրամադրվում է. • **դատական նիստից անմիջապես հետո** • ոչ ուշ, քան դիմումը տալուն հաջորդող օրը • դատական նիստին հաջորդող եռօրյա ժամկետում • գործով վճիռ կայացնելուց հետո
35	Դատական նիստի պարզ թղթային եղանակով արձանագրման դեպքում գրավոր արձանագրության պատճենը քաղաքացիական գործին մասնակցող անձանց գրավոր դիմումի հիման վրա նրանց տրամադրվում է. • դատական նիստից անմիջապես հետո • **ոչ ուշ, քան հաջորդ օրը** • դատական նիստին հաջորդող եռօրյա ժամկետում • գործով վճիռ կայացնելուց հետո

36	Քաղաքացիական գործով դատավարության մասնակիցներն իրավունք ունեն ծանոթանալ պարզ թղթային եղանակով կազմված դատական նիստի արձանագրությանը և այն կազմելու լրիվության կամ ճշտության վերաբերյալ դիտողություններ ներկայացնել. • ցանկացած ժամանակ • վճռի հրապարակումից հետո 7 օրվա ընթացքում • **մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը** • մինչև վճռի կատարումը
37	Դատական նիստի պարզ թղթային եղանակով կազմված արձանագրության վերաբերյալ քաղաքացիական գործին մասնակցող անձանց դիտողությունները նախագահող դատավորն ուսումնասիրում է. • **դրանք ներկայացնելու պահից երեք օրվա ընթացքում** • դրանք ներկայացնելու պահից հինգ օրվա ընթացքում • դրանք ներկայացնելու օրը • մինչև վճռի կայացումը
38	Քաղաքացիական դատավարությունում քաղաքացու կյանքին կամ առողջությանը սպառնացող վտանգի մասին դիմումը տրվում է. • վտանգի աղբյուրի գտնվելու վայրի քաղաքացիական գործեր քննող դատարան • դիմողի ընտրությամբ՝ քաղաքացիական գործեր քննող ցանկացած դատարան • **դիմողի բնակության վայրի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան** • պատասխանողի բնակության (գտնվելու) վայրի առաջին ատյանի դատարան
39	Քաղաքացու կյանքին կամ առողջությանը սպառնացող վտանգի մասին դիմումը քաղաքացիական դատավարությունում քննվում է. • քաղաքացիական դատավարության ընդհանուր կարգով • հատուկ հայցային վարույթի կարգով • հատուկ վարույթի կարգով • **արագացված դատաքննության կարգով**
40	Հատուկ հայցային վարույթի գործով անձը դատարան է ներկայացնում. • **դիմում** • հայցադիմում • վճռաբեկ բողոք • վարչական ակտ

41	Քաղաքացու կյանքին կամ առողջությանը սպառնացող վտանգի մասին դիմումը քաղաքացիական դատավարությունում քննվում է. • քաղաքացիական դատավարության ընդհանուր կարգով • հատուկ հայցային վարույթի կարգով • հատուկ վարույթի կարգով • **արագացված դատաքննության կարգով**
42	Դատարանը քաղաքացիական գործը հարուցում է միայն. • հայցի հիման վրա • որոշման հիման վրա • դիմումի հիման վրա • **հայցի կամ դիմումի հիման վրա**
43	Վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձինք կարող են գործի մեջ մտնել. • **մինչև դատարանի կողմից վճիռ կայացնելը** • մինչև գործը դատաքննության նշանակելը • մինչև գործը դատաքննության նախապատրաստելը • մինչև դատարանի վճռի օրինական ուժի մեջ մտնելը
44	Քաղաքացիական գործի քննության ընթացքում դատավորի փոխարինման դեպքում գործի քննությունը. • շարունակվում է ընդհանուր կարգով • շարունակվում է ընդհանուր կարգով, եթե առկա է գործին մասնակցող բոլոր անձանց համաձայնությունը • **սկսվում է սկզբից** • շարունակվում է ընդհանուր կարգով կամ սկսվում է սկզբից՝ դատարանի նոր կազմի հայեցողությամբ
45	Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքով, ապա քաղաքացիական դատավարությունում. • կիրառվում են Հայաստանի Հանրապետության օրենքներն ու այլ իրավական ակտերը • **կիրառվում են միջազգային պայմանագրի նորմերը** • կասեցնում է գործի վարույթը և դիմում է դատարանների նախագահների խորհրդին՝ օրենքով սահմանված կարգով հարցին ընթացք տալու համար • հարցը լուծվում է՝ ելնելով գործարար շրջանառության սովորույթներից

46	Դատարանը քաղաքացիական գործերով. • **կայացնում է վճիռներ, որոշումներ և արձակում վճարման կարգադրություններ** • կայացնում է վճիռներ և որոշումներ • կայացնում է վճիռներ, որոշումներ (այդ թվում՝ մասնավոր) և հանձնարարականներ • կայացնում է վճիռներ, որոշումներ և կատարողական թերթեր
47	Քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատական ակտը պարտադիր է. • միայն քաղաքացիների և իրավաբանական անձանց համար • միայն պետական, տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց համար • **բոլոր պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, իրավաբանական անձանց և քաղաքացիների համար ու ենթակա է կատարման ՀՀ ամբողջ տարածքում** • միայն գործին մասնակցող անձանց և դատական ակտերի հարկադիր կատարողի համար
48	Դատարանին ընդդատյա վեճը մինչև քաղաքացիական գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելը. • **կողմերի համաձայնությամբ կարող է հանձնվել արբիտրաժային տրիբունալի լուծմանը** • կարող է հանձնվել արբիտրաժային տրիբունալ • դատարանի առաջարկությամբ կարող է հանձնվել արբիտրաժային տրիբունալի լուծմանը • դատավարության ցանկացած մասնակցի առաջարկությամբ կարող է հանձնվել արբիտրաժային տրիբունալի լուծմանը
49	Քաղաքացիական գործով քվեարկության դեպքում մեծամասնության կարծիքի հետ չհամաձայնվող դատավորն. • **իրավունք ունի չստորագրելու դատական ակտը, սակայն այդ դեպքում պարտավոր է գրավոր շարադրել իր հատուկ կարծիքը** • իրավունք չունի չստորագրելու դատական ակտը և պարտավոր է գրավոր շարադրել իր հատուկ կարծիքը • իրավունք չունի չստորագրելու դատական ակտը, սակայն կարող է գրավոր շարադրել իր հատուկ կարծիքը • իրավունք ունի չստորագրելու դատական ակտը և կարող է շարադրել կամ չշարադրել իր հատուկ կարծիքը
50	Քաղաքացիական դատավարությունում գործը միանձնյա քննելիս դատավորի ինքնաբացարկի հարցը լուծվում է. • **գործը քննող դատավորի կողմից** • դատարանի նախագահի, իսկ եթե գործը գտնվում է դատարանի նախագահի վարույթում՝ մեկ այլ դատավորի կողմից

	• վերաքննիչ դատարանի կողմից • վերաքննիչ դատարանի նախագահի կողմից
51	Ո՞ր դեպքում է հնարավոր ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանում վերանայել առաջին ատյանի դատարանում հաստատված փաստը. • բողոքի քննության ժամանակ առաջին ատյանի դատարանում հաստատված փաստերն ընդունվում են որպես հիմք, և վերանայման ենթակա չեն • բողոքի քննության ժամանակ առաջին ատյանի դատարանում հաստատված փաստերն ընդունվում են որպես հիմք, բացառությամբ այն դեպքի, երբ բողոքում վիճարկվում է այդ փաստը, և ներկայացվում են հիմնավոր կասկածներ դրա հավաստիության վերաբերյալ • **բողոքի քննության ժամանակ առաջին ատյանի դատարանում հաստատված փաստերն ընդունվում են որպես հիմք, բացառությամբ այն դեպքի, երբ բողոքում վիճարկվում է այդ փաստը, և վերաքննիչ դատարանը հանգում է այն եզրակացության, որ տվյալ փաստի վերաբերյալ եզրակացության հանգելիս առաջին ատյանի դատարանն ակնհայտ սխալ է թույլ տվել** • բողոքի քննության ժամանակ առաջին ատյանի դատարանում հաստատված փաստերը որպես անվերապահ հիմք չեն ընդունվում, և ենթակա են կրկնակի հաստատման վերաքննիչ դատրանի կողմից
52	Գործի նախապատրաստման կամ քննության ժամանակ պարզելով, որ քաղաքացիական հայցը հարուցվել է ոչ այն անձի կողմից, որին պատկանում է պահանջի իրավունքը կամ ոչ այն անձի դեմ, ով պետք է պատասխանի այդ հայցով, դատարանը կարող է. • **հայցվորի համաձայնությամբ թույլ տալ, որ նա կամ պատասխանողը փոխարինվեն պատշաճ հայցվորով կամ պատասխանողով** • անկախ հայցվորի համաձայնությունից՝ նրան փոխարինել պատշաճ հայցվորով • անկախ հայցվորի համաձայնությունից՝ պահանջի պատշաճ իրավատիրոջը գործին ներգրավվել որպես համահայցվոր • անկախ հայցվորի համաձայնությունից՝ պատասխանողին փոխարինել պատշաճ պատասխանողով
53	Քաղաքացիական գործի քննության ընթացքում անպատշաճ կողմին փոխարինելուց հետո գործի քննությունը. • շարունակվում է ընդհանուր կարգով • **սկսվում է սկզբից** • շարունակվում է ընդհանուր կարգով կամ սկսվում է սկզբից, եթե առկա է գործին մասնակցող բոլոր անձանց համաձայնությունը • շարունակվում է ընդհանուր կարգով կամ սկսվում է սկզբից՝ դատարանի հայեցողությամբ

54	Կողմերն իրավունք ունեն քաղաքացիական գործն ավարտել հաշտության համաձայնությամբ. • մինչև գործի քննությունը սկսելը • **դատավարության ցանկացած փուլում** • մինչև առաջին ատյանի դատարանում առաջին անգամ ըստ էության քննվող գործերով վճիռ կայացնելը • մինչև դատարանի վճռի օրինական ուժի մեջ մտնելը
55	Դատարանը չի հաստատում քաղաքացիական գործով կողմերի հաշտության համաձայնությունը, եթե. • այն հակասում է օրենքին • եթե խախտում է այլ անձանց օրինական շահերը • **այն հակասում է օրենքին և այլ իրավական ակտերին կամ խախտում է այլ անձանց իրավունքները և օրինական շահերը** • այն հակասում է իրավական ակտերին կամ խախտում է այլ անձանց իրավունքները
56	Վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձինք քաղաքացիական դատավարությունում օգտվում են. • հայցվորի բոլոր իրավունքներից, բացառությամբ հայցի հիմքը կամ առարկան փոխելու իրավունքից • հայցվորի բոլոր իրավունքներից, բացառությամբ հայցային պահանջների չափը փոխելու իրավունքից • հայցվորի բոլոր իրավունքներից, բացառությամբ դատական ակտերը բողոքարկելու իրավունքից • **հայցվորի բոլոր իրավունքներից և կրում է նրա բոլոր պարտականությունները**
57	Վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձինք քաղաքացիական դատավարությունում օգտվում են. • **կողմի իրավունքներից և կրում են նրա պարտականությունները, բացի հայցի հիմքը կամ առարկան փոխելու, հայցային պահանջների չափն ավելացնելու կամ նվազեցնելու, հայցից հրաժարվելու, հայցն ընդունելու կամ հաշտության համաձայնություն կնքելու և դատական ակտի հարկադիր կատարում պահանջելու իրավունքներից** • կողմի բոլոր իրավունքներից • միայն հայցի հիմքը կամ առարկան փոխելու, հայցային պահանջների չափն ավելացնելու կամ նվազեցնելու, հայցից հրաժարվելու, հայցն ընդունելու և հաշտության համաձայնություն կնքելու իրավունքներից • միայն հայցի հիմքը կամ առարկան փոխելու, հայցային պահանջների չափը նվազեցնելու, հայցից հրաժարվելու և հայցն ընդունելու իրավունքներից

58	Դատավարական իրավահաջորդությունը քաղաքացիական դատավարությունում հնարավոր է. • **դատավարության ցանկացած փուլում** • գործի նախապատրաստական փուլում • մինչև դատարանի վճիռը օրինական ուժի մեջ մտնելը • մինչև դատարանի կողմից վճռի հրապարակումը
59	Պետության գույքային շահերի պաշտպանության հայցով դատարան դիմելու իրավունք քաղաքացիական դատավարությունում ունեն. • Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացի • պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, դրանց պաշտոնատար անձինք • **պետական մարմինները, իսկ վերջիններիս կողմից հայց չներկայացնելու դեպքում դատախազը՝ «Դատախազության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով** • քաղաքացիական իրավունքի բոլոր սուբյեկտները
60	Ի՞նչ իրավունք ունի անել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը, եթե եզրակացնում է, որ փաստի վերաբերյալ եզրակացության հանգելիս առաջին ատյանի դատարանն ակնհայտ սխալ է թույլ տվել. • բեկանում է բողոքարկվող վճիռը՝ գործն ուղարկում առաջին ատյանի դատարան՝ վիճարկվող փաստը վերահաստատելու համար • իրավունք չունի հաստատված համարելու նոր փաստ, սակայն կարող է հաստատված չհամարել ստորադաս դատարանի հաստատած փաստը • իրավունք ունի հաստատված համարելու նոր փաստ, սակայն չի կարող հաստատված չհամարել ստորադաս դատարանի հաստատած փաստը • **իրավունք ունի հաստատված համարելու նոր փաստ կամ հաստատված չհամարելու ստորադաս դատարանի հաստատած փաստը, եթե առաջին ատյանի դատարանի հետազոտած ապացույցների հիման վրա հնարավոր է հանգել նման եզրակացության**
61	Ի՞նչ իրավունք ունի անել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը, եթե առաջին ատյանի դատարանը հետազոտված ապացույցների հիման վրա դատական ակտում եզրակացության չի հանգել որևէ փաստի վերաբերյալ, ինչը պարտավոր էր անել. • ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը բեկանում է բողոքարկված վճիռը և գործն ուղարկում առաջին ատյանի դատարան՝ տվյալ փաստը հաստատելու համար • ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանն իրավունք ունի հաստատված համարելու նոր փաստ՝ հետազոտելով գործում եղած ապացույցները • **ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանն իրավունք ունի հաստատված համարելու նոր փաստ, եթե առաջին ատյանի դատարանի հետազոտած ապացույցների հիման վրա հնարավոր է հանգել նման եզրակացության**

	• ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանն իրավունք չունի հաստատված համարելու նոր փաստ, սակայն կարող է նման ցուցումով գործն ուղարկել առաջին ատյանի դատարան
62	Քաղաքացիական գործով որպես վկա կանչված անձի ծանուցագրում պետք է նշվեն. • դատարան ներկայանալու վայրը, ժամանակը և այն գործը, որի կապակցությամբ նա պետք է հարցաքննվի • դատարան ներկայանալու վայրը, ժամանակը, գործի էությունը, որի կապակցությամբ նա պետք է հարցաքննվի, ինչպես նաև չներկայանալու հետևանքները • **նրա ներկայանալու վայրը, ժամանակը և այն գործը, որի կապակցությամբ նա պետք է հարցաքննվի, ինչպես նաև չներկայանալու հետևանքները** • դատարանի անվանումը, գտնվելու վայրը, վկայի ներկայանալու ժամանակը, գործը, որի կապակցությամբ նա պետք է հարցաքննվի, կողմերի տվյալները, ինչպես նաև չներկայանալու հետևանքները
63	Քաղաքացիական գործով, եթե դա անհրաժեշտ է, ապա եզրակացություն տալու համար, փորձագետն իրավունք ունի. • **ծանոթանալ գործի նյութերին, մասնակցել դատական նիստերին, հարցեր տալ, դատարանից խնդրել իրեն տրամադրել լրացուցիչ նյութեր, ինչպես նաև իրեն տրամադրված նյութերի անբավարարության դեպքում կարող է հրաժարվել եզրակացություն տալուց** • ծանոթանալ գործի նյութերին, դատարանից խնդրել իրեն տրամադրել լրացուցիչ նյութեր, հրաժարվել եզրակացություն տալուց • առարկել գործին մասնակցող անձանց փաստարկների դեմ, ինչպես նաև փորձաքննությանն առաջադրված հարցերի վերաբերյալ ներկայացնել իր փաստարկները • իրեն տրամադրված նյութերի անբավարարության դեպքում տալ մասնակի եզրակացություն

64	Ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու և հետազոտելու համար պատշաճ ձևով տեղեկացված քաղաքացիական գործին մասնակցող անձանց չներկայանալը. • **արգելք չէ ապացույցները զննելու և հետազոտելու համար** • հիմք է ապացույցների զննման և հետազոտման գործողությունների կատարումը հետաձգելու համար • բացառում է նրանց կողմից իրենց պահանջները կամ առարկությունները հիմնավորելիս այդ ապացույցները վկայակոչելու հնարավորությունը • բացառում է նրանց կողմից այդ ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու և հետազոտելու մասին կրկին միջնորդություն անելու հնարավորությունը
65	Գրավոր ապացույցներ են քաղաքացիական գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների մասին տեղեկություններ պարունակող. • պայմանագրերը, տեղեկագրերը, ստացականները և այլ փաստաթղթերը • պահպանության և օգտագործման համար ժամանակի և տարածության մեջ փոխանցման ենթակա տեղեկություն պարունակող տեքստային, պատկերային, տեսաշարային և (կամ) ձայնաշարային, ինչպես նաև այլ նյութական կրիչները • **ակտերը, պայմանագրերը, տեղեկանքները, գործարար թղթակցությունը, այլ փաստաթղթերը և նյութերը, այդ թվում՝ էլեկտրոնային կամ կապի այլ միջոցով կամ փաստաթղթերի իսկությունը հաստատելու հնարավորություն ընձեռնող այլ եղանակով ստացված ապացույցները** • գործին մասնակցող անձանց իրավունքները և պարտականությունները հաստատող փաստաթղթերը
66	Քաղաքացիական գործով գրավոր փաստաթղթերը դատարան են ներկայացվում. • դրանց բնագրի և պատշաճ ձևով վավերացված պատճենի մեկական օրինակներով • բնօրինակով • պատշաճ վավերացված պատճենի ձևով • **բնօրինակով կամ պատշաճ վավերացված պատճենի ձևով**
67	Քաղաքացիական գործում գտնվող փաստաթղթերի բնօրինակները դրանք ներկայացրած անձանց միջնորդությամբ վերադարձվում են նրանց. • դրանց պատշաճ վավերացված պատճենները դատարան ներկայացնելու դեպքում՝ վերջիններիս ներկայացման օրը • դատարանի վճռի հրապարակումից հետո • **դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո** • դատարանի հայեցողությամբ՝ ցանկացած ժամանակ

68	Անհրաժեշտության դեպքում քաղաքացիական գործով ապացույցների զննմանը և հետազոտմանը կարող են մասնակից դարձվել. • փորձագետներ • վկաներ • **փորձագետներ և վկաներ** • փորձագետներ, վկաներ և ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձինք
69	Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ իրեղեն ապացույցներ են այլ առարկաները. • **որոնք իրենց արտաքին տեսքով, ներքին հատկություններով, գտնվելու վայրով կամ այլ հատկանիշներով կարող են գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների հաստատման միջոց դառնալ** • որոնք գործին մասնակցող անձանց միջև գործարքի կատարման օբյեկտ են հանդիսացել կամ որոնց նկատմամբ իրավունքների և պարտականությունների վերաբերյալ գործին մասնակցող անձինք համաձայնություն են կնքել • որոնց նկատմամբ իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կամ դրանց հետ կապված գործին մասնակցող անձանց միջև վեճ է առաջացել • որոնց հետազոտությամբ դատարանը կարող է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները, ինչպես նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքներ պարզել
70	Քաղաքացիական գործի քննության ժամանակ ծագող հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակով դատարանը կարող է փորձաքննություն նշանակել. • միայն իր նախաձեռնությամբ • միայն կողմերի միջնորդությամբ • երրորդ անձանց միջնորդությամբ • **կողմի (կողմերի) միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ**
71	Քաղաքացիական գործով փորձաքննություն նշանակելու մասին դատարանի որոշման մեջ սահմանվում են. • **հարցերի ցանկը և բովանդակությունը** • պարզաբանման ենթակա հարցերը • պարզաբանման ենթակա հարցերը և փորձաքննության կատարման ժամկետները • պարզաբանման ենթակա հարցերը, ինչպես նաև փորձաքննության կատարման կարգն ու ժամկետները

72	Ինչի՞ մասին է դատարանը նախազգուշացնում վկային ըստ քաղաքացիական դատավարության օրենսգրքի. · իր բարեկամների դեմ ցուցմունք չտալու իրավունքի մասին · իր իրազեկության աղբյուրը հստակ չնշելու անթույլատրելիության մասին · **ակնհայտ կեղծ ցուցմունք տալու կամ ցուցմունք տալուց հրաժարվելու համար քրեական պատասխանատվության մասին** · չհիմնավորված ցուցմունք տալու անթույլատրելիության մասին
73	Ապացույցների ապահովման մասին միջնորդության մեջ, համաձայն քաղաքացիական դատավարության օրենսգրքի, պետք է նշվեն. · ապահովման կարիք ունեցող ապացույցները · ապահովման կարիք ունեցող հանգամանքները · ապահովման կարիք ունեցող պատճառները · **ապահովման կարիք ունեցող ապացույցները, այն հանգամանքները, որոնց հաստատման համար դրանք անհրաժեշտ են և պատճառները, որոնք հիմք են ծառայել դրանք ապահովելու միջնորդությամբ դիմելու համար**
74	Ի՞նչ է անում ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը, եթե դատարանի կայացրած գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի կամ սխալ է պատճառաբանված. · վերաքննիչ դատարանը գործն ուղարկում է առաջին ատյանի դատարան՝ վճիռը պատշաճ պատճառաբանելու համար անհրաժեշտ ցուցումներով · **վերաքննիչ դատարանը պատճառաբանում է անփոփոխ թողնված դատական ակտը** · վերաքննիչ դատարանը բեկանում է վճիռը և պատճառաբանում անփոփոխ թողնված դատական ակտը · վերաքննիչ դատարանը փոփոխում է դատական ակտը՝ սեփական պատճառաբանություններով
75	Թվարկածներից ինչի՞ համար պետական տուրք չի վճարվում՝ համաձայն քաղաքացիական դատավարության օրենսգրքի. · հայցադիմումների համար · իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման մասին դիմումների համար · **որպես վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ գործին մասնակցելու մասին դիմումների** · արբիտրաժային տրիբունալի վճիռների հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու մասին դիմումների համար
76	Քաղաքացիական դատավարությունում հայցագինը մեծացնելու դեպքում պետական տուրքի չբավականացնող գումարը. · վճարվում է նախապես՝ ավելացված հայցագնին համապատասխան · **գանձվում է վճիռը կայացնելիս՝ ավելացված հայցագնին համապատասխան**

	• վճարվում է հայցագինը մեծացնելու մասին դիմելու պահից եռօրյա ժամկետում • չի վճարվում
77	Քաղաքացիական դատավարությունում հայցագինը նվազեցնելու դեպքում ավել վճարված պետական տուրքը. • գանձվում է մյուս կողմից • գանձվում է կողմերից՝ հայցագնի բավարարված և մերժված հայցապահանջների չափերին համապատասխան • վերադարձվում է վճարողին • **չի վերադարձվում**
78	Այն դեպքում, երբ քաղաքացիական դատավարական ժամկետի վերջին օրը ոչ աշխատանքային օր է, ժամկետի ավարտման օր ե՞րբ է համարվում. • **դրան հաջորդող աշխատանքային օրը** • հենց այդ օրը • դրան հաջորդող երրորդ օրը • նախորդ աշխատանքային օրը
79	Ե՞րբ են կատարվում քաղաքացիական դատավարական գործողությունները. • քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված ժամկետներում • քաղաքացիական դատավարության օրենսգրքով կամ այլ օրենքներով սահմանված ժամկետներում • **քաղաքացիական դատավարության օրենսգրքով կամ այլ օրենքներով սահմանված ժամկետներում: Դրանց բացակայության դեպքում դատավարական գործողությունների կատարման ժամկետները սահմանում է դատարանը** • քաղաքացիական օրենսգրքով սահմանված ժամկետներում
80	Դատավարական ժամկետի ընթացքը քաղաքացիական դատավարությունում սկսվում է. • դրա սկզբի համար որոշված տարվա, ամսվա ամսաթվին • **այն օրացույցային տարվա, ամսվա, ամսաթվի հաջորդ օրվանից, որով որոշված է դրա սկիզբը** • դրա սկզբի համար որոշված տարվա, ամսվա, ամսաթվին հաջորդող 10-րդ օրվանից • դատարանի սահմանած պահից

81	Չլրացած բոլոր քաղաքացիական դատավարական ժամկետների ընթացքը կասեցվում է. • **գործի վարույթի կասեցմամբ** • գործի վարույթի հետաձգմամբ • հայցը կամ դիմումը առանց քննության թողնելու դեպքում • ֆորս մաժորային հանգամանքներ առաջանալու դեպքերում
82	Ո՞ր դեպքում է քաղաքացիական դատավարությունում դատարանը, գործին մասնակցող անձի դիմումի հիման վրա, վերականգնում բաց թողնված ժամկետը. • օրենքով նախատեսված դեպքերում • գործին մասնակցող անձի հետ կապված հանգամանքներից ելնելով • գործի հանգամանքներից ելնելով • **քաղաքացիական դատավարության օրենսգրքով կամ այլ օրենքներով սահմանված դատավարական ժամկետը բաց թողնելու պատճառները հարգելի ճանաչելու դեպքում**
83	Ո՞ր դատարան կարող է հարուցվել կատարման վայրի նշմամբ պայմանագրից բխող հայցը քաղաքացիական դատավարությունում. • **պայմանագրի կատարման վայրի դատարան** • միայն հայցվորի բնակության (գտնվելու) կամ պատասխանողի բնակության (գտնվելու) վայրի դատարան • միայն հայցվորի բնակության (գտնվելու) վայրի դատարան • միայն պատասխանողի բնակության (գտնվելու) վայրի դատարան
84	Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ ներքոշարադրյալներից ի՞նչ իրավունք ունի անել վերաքննիչ դատարանը՝ բողոքարկվող դատական ակտը վերանայելիս. • բեկանել և անհրաժեշտության դեպքում՝ փոփոխել ստորադաս դատարանի ակտը, եթե առկա է կողմերից մեկի՝ ուշադրության արժանի շահ • **մասնակիորեն բեկանել և փոփոխել ստորադաս դատարանի ակտը, եթե ստորադաս դատարանի հաստատած փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, և եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից** • մերժել վերաքննիչ բողոքը՝ փոփոխելով ստորադաս դատարանի ակտը, եթե ստորադաս դատարանի հաստատած փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, և եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից • մասնակիորեն բեկանել ստորադաս դատարանի ակտը, և կայացնել նոր դատական ակտ, եթե ստորադաս դատարանի հաստատած փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, և եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից

85	Համաձայն քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ ի՞նչ է լինում, երբ գործին մասնակցող անձինք դատարանին և գործին մասնակցող այլ անձանց չեն հայտնում գործի վարույթի ժամանակ իրենց հասցեն փոխելու մասին. • **դատավարական փաստաթղթերն ուղարկվում են նրանց վերջին հայտնի հասցեով և համարվում են հանձնված, թեկուզև հասցեատերն այդ հասցեում այլևս չի բնակվում կամ չի գտնվում** • դատավարական փաստաթղթերն ուղարկվում են նրանց աշխատավայրի հասցեով • դատավարական փաստաթղթերն ուղարկվում են նրա վերջին հայտնի բնակության վայրի համատիրության հասցեով • դատավարական փաստաթղթերն ուղարկվում են նրա վերջին հայտնի բնակության վայրի տեղական ինքնակառավարման մարմնի հասցեով
86	Հայցվորի ընտրությամբ ո՞ր դատարան կարող է հարուցվել տարբեր մարզերի տարածքներում բնակվող (գտնվող) պատասխանողների դեմ քաղաքացիական հայցը. • **պատասխանողներից մեկի բնակվելու (գտնվելու) վայրի դատարան** • պատասխանողներից մեծ մասի բնակվելու (գտնվելու) վայրի դատարան • այն պատասխանողի բնակվելու (գտնվելու) վայրի դատարան, որին առավելապես են վերաբերվում հայցապահանջները • հայցվորի բնակության (գտնվելու) վայրի դատարան
87	Համաձայն քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ ո՞ր հայցը չի կարող հարուցվել հայցվորի բնակության վայրի դատարան. • ալիմենտ բռնագանձելու կամ հայրությունը որոշելու վերաբերյալ հայցը • **այլ վայրում գտնվող գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայցը** • առողջությանը, ինչպես նաև կերակրողի մահվամբ պատճառված վնասի հատուցման վերաբերյալ հայցը • օրենքով սահմանված կարգով անհայտ բացակայող կամ հոգեկան խանգարման հետևանքով անգործունակ ճանաչված, ազատազրկման դատապարտված անձանց դեմ ամուսնալուծության վերաբերյալ հայցը
88	Ո՞ր դեպքում դատարանը քաղաքացիական գործը այլ դատարանի քննության չի հանձնում. • եթե գործը տվյալ դատարանում քննելիս պարզվել է, որ այն վարույթ է ընդունվել ընդդատության կանոնների խախտմամբ • **եթե գործը վարույթ է ընդունվել ընդդատության կանոնների պահպանմամբ, թեկուզև այն հետագայում դարձել է ընդդատյա այլ դատարանի** • եթե դատավորների ինքնաբացարկը կամ նրանց հայտնած բացարկը բավարարելուց հետո նրանց փոխարինումը տվյալ դատարանում դարձել է անհնարին • եթե գործը տվյալ դատարանում քննելը անհնարին է դարձել այլ պատճառներով

89	Գործը դռնփակ նիստում քննելու մասին դատարանը կայացնում է. • վճիռ • դատավճիռ • արձանագրություն • **որոշում**
90	Քաղաքացիական գործերով դատարան ներկայացված հայցադիմումը պետք է լինին. • բանավոր, իսկ կից փաստաթղթերը՝ գրավոր • բանավոր, եթե պատասխանող կողմը նախապես իրազեկված է հայցադիմումը բանավոր ներկայացնելու մասին • բանավոր • **գրավոր**
91	Ինչպիսի՞ գործեր իրավունք ունի դատարանը միացնել մեկ վարույթում՝ համաձայն քաղաքացիական դատավարության օրենսգրքի. • **մի քանի միատեսակ գործեր, որոնց մասնակցում են միևնույն անձինք** • միևնույն անձանց մասնակցությամբ դատարանի վարույթում գտնվող գործերը • միևնույն անձանց մասնակցությամբ մի քանի տեսակ գործեր, եթե այդ գործերի համատեղ քննությունը կարող է ապահովել դրանց առավել արագ և ճիշտ լուծումը • միևնույն անձանց մասնակցությամբ այնպիսի գործեր, որոնց միջև առկա է փոխադարձ կապ
92	Ի՞նչ ժամկետում է դատավորը հայցադիմումը ստանալու օրվանից քաղաքացիական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով հայցադիմումի ընդունումը չմերժելու դեպքում կայացնում դա ընդունելու մասին որոշում. • **եռօրյա ժամկետում** • հնգօրյա ժամկետում • յոթնօրյա ժամկետում • տասնհինգօրյա ժամկետում
93	Ի՞նչ է կցվում պայմանագիր կնքելուն հարկադրելու մասին հայցադիմումին քաղաքացիական դատավարությունում. • **համապատասխան պայմանագրի նախագիծը** • համապատասխան պայմանագրի բոլոր էական պայմանների նկարագիրը • կողմերի փոխհամաձայնեցրած պայմանագրի նախագիծը • համապատասխան պայմանագրի ընդօրինակելի ձև

94	Քաղաքացիական դատավարությունում ե՞րբ է հայցադիմումը դատարանում համարվում ընդունված՝ հայցադիմումում թույլ տրված խախտումները վերացվելու և եռօրյա ժամկետում դատարան կրկին ներկայացվելու դեպքում. • **հայցադիմումը սկզբնական ներկայացնելու օրը** • հայցադիմումը ներկայացնելու օրը • հայցադիմումը վարույթ ընդունելու օրը • հայցադիմումը հետ վերադարձնելու օրը
95	Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը հայցվորի կողմից ստանալուց հետո, ի՞նչ ժամկետում կարող է բողոքարկվել վերաքննիչ քաղաքացիական դատարան. • **եռօրյա ժամկետում** • հնգօրյա ժամկետում • յոթնօրյա ժամկետում • տասնհինգօրյա ժամկետում
96	Ինչպե՞ս է վարվում դատավորը, եթե չեն պահպանվել քաղաքացիական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածում սահմանված՝ հայցադիմումի ձևին և բովանդակությանն առաջադրվող պահանջները. • մերժում է դրա ընդունումը • **վերադարձնում է հայցադիմումը** • այն թողնում է առանց քննության • այն ընդունում է վարույթ՝ հայցվորին թույլատրելով մինչև գործի քննությունը սկսելը վերացնել թույլ տրված խախտումները
97	Ինչպե՞ս է վարվում դատավորը քաղաքացիական դատավարությունում, եթե հայցադիմումը ստորագրել է այնպիսի անձ, որի պաշտոնեական դրությունը նշված չէ. • մերժում է դրա ընդունումը • այն թողնում է առանց քննության • **վերադարձնում է հայցադիմումը** • պահանջում է ստորագրել այն կամ համապատասխան դեպքերում՝ ներկայացնել հայցադիմումը ստորագրած
98	Եթե քաղաքացիական գործն ընդդատյա չէ տվյալ դատարանին, ապա դատավորը. • մերժում է հայցադիմումի ընդունումը • **վերադարձնում է հայցադիմումը** • հայցադիմումը ուղարկում է ըստ ընդդատության • հայցը թողնում է առանց քննության

99	Քաղաքացիական դատավարությունում հայցադիմումը վերադարձնելու հիմք չի հանդիսանում. • եթե այլ դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի վարույթում առկա է նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ գործ • եթե մեկ հայցադիմումում միացված են մեկ կամ մի քանի պատասխանողներին ուղղված միմյանց հետ չկապված պահանջներ • **եթե հայցադիմումին չեն կցվել հայցապահանջները հաստատող ապացույցներ** • եթե չեն ներկայացվել սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթղթեր
100	Քաղաքացիական դատավարությունում ո՞ր դատարան կարող է բողոքարկվել հայցադիմումը վերադարձնելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը. • այն բողոքարկման ենթակա չէ • առաջին ատյանի դատարանի դատարանի նախագահին • վճռաբեկ դատարան • **վերաքննիչ դատարան**
101	Քաղաքացիական դատավարությունում ի՞նչ ժամկետում հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը կարող է բողոքարկվել հայցվորի կողմից այն ստանալուց հետո. • **եռօրյա ժամկետում** • հնգօրյա ժամկետում • յոթնօրյա ժամկետում • տասնհինգօրյա ժամկետում
102	Համաձայն քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ ե՞րբ են ուղարկվում պատասխանողին հայցադիմումը և դրան կից փաստաթղթերը, այն դեպքում, երբ հայցադիմումը ներկայացնելու հետ միաժամանակ հայցվորը միջնորդություն է ներկայացնում հայցի կամ ապացույցների ապահովման պահանջով և դատարանը բավարարում է այդ միջնորդությունը. • մինչև միջնորդությունը քննարկելը՝ ծանուցելով դրա քննարկման վայրի և ժամանակի մասին • **դատարանի որոշումը կատարելուց հետո անհապաղ** • այդ մասին որոշումը կայացնելուց հետո՝ եռօրյա ժամկետում • նույն օրը

103	Քաղաքացիական դատավարությունում, եթե պատասխանողի փաստացի գտնվելու վայրն անհայտ է, ապա դատարանը. • գործը քննում է նրա բացակայությամբ • **գործը քննում է նրա վերջին հայտնի բնակության վայրի համայնքի ղեկավարի կամ նրա վերջին հայտնի աշխատավայրի տնօրինության կողմից ծանուցում ստանալու փաստը հավաստող մակագրությամբ հաղորդագրություն ստանալուց հետո** • կասեցնում է գործի վարույթը և հայտարարում է պատասխանողի հետախուզում • գործը թողնում է առանց քննության
104	Քաղաքացիական դատավարությունում ի՞նչ ժամկետում է պարտավոր պատասխանողը հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը ստանալուց հետո դատարան ուղարկել հայցադիմումի պատասխան. • եռօրյա ժամկետում • մեկ շաբաթվա ընթացքում • **երկշաբաթյա ժամկետում** • դատարանի կողմից նշված ժամկետում
105	Հայցադիմումի պատասխանը քաղաքացիական դատավարությունում կարող է չպարունակել. • դատարանի անվանումը, որտեղ ներկայացվել է հայցը • հայցում ներկայացված յուրաքանչյուր պահանջը ընդունելու կամ դրա դեմ մասնակի կամ ամբողջությամբ առարկելու մասին պատասխանողի դիրքորոշումը • **հաշտության համաձայնության հնարավոր տարբերակները** • այն փաստերը, որոնք ընկած են առարկությունների հիմքում, և այն ապացույցները, որոնք հաստատում են այդ փաստերից յուրաքանչյուրը՝ համապատասխան նշումով, թե ինչ փաստի հաստատմանն է այն ուղղված
106	Հակընդդեմ հայցը քաղաքացիական դատավարությունում չի ընդունվում, եթե. • **դրանում ներկայացված են սկզբնական հայցի հետ չկապված պահանջներ** • հակընդդեմ պահանջն ուղղված է սկզբնական պահանջի հաշվանցմանը • հակընդդեմ հայցի բավարարումը լրիվ կամ մասամբ բացառում է սկզբնական հայցի բավարարումը • հակընդդեմ և սկզբնական հայցերի միջև առկա է փոխադարձ կապ, ու դրանց համատեղ քննությունը կարող է ապահովել վեճի առավել արագ և ճիշտ լուծումը
107	Դատարանը քաղաքացիական հայցի ապահովման միջոցներ է ձեռնարկում. • **գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ** • դատարանի նախագահի հանձնարարությամբ • միայն գործին մասնակցող անձի միջնորդությամբ • միայն իր նախաձեռնությամբ

108	Ո՞ր փուլում է թույլատրվում քաղաքացիական հայցի ապահովումը. • մինչ հայցադիմումը դատարանի վարույթ ընդունելը • գործի նախապատրաստման փուլում • **դատավարության ցանկացած փուլում** • մինչ դատաքննության փուլը
109	Ե՞րբ է քաղաքացիական հայցի ապահովման միջնորդությունը քննարկվում և կայացվում որոշում. • այն ներկայացնելու օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում • **այն ստացվելու օրը** • այն ներկայացնելու օրվանից հետո՝ հնգօրյա ժամկետում • ներկայացնելու օրը, իսկ լրացուցիչ հետազոտության անհրաժեշտության դեպքում՝ ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում
110	Ո՞րը քաղաքացիական հայցի ապահովման միջոց չէ. • պատասխանողին պատկանող գույքի կամ դրամական միջոցների վրա հայցագնի չափով արգելանք դնելը • պատասխանողին որոշակի գործողություններ կատարելն արգելելը • **պատասխանողին բնակության վայրից բացակայելն արգելելը** • այլ անձանց կողմից վեճի առարկային վերաբերող որոշակի գործողությունների կատարումն արգելելը
111	Քաղաքացիական հայցի ապահովման քանի՞ միջոց իրավունք ունի կիրառել դատարանը. • միայն միջնորդության մեջ նշված միջոցները • **անհրաժեշտության դեպքում՝ մի քանի միջոց** • միայն մեկ միջոց • ոչ ավելի, քան երկու միջոց
112	Դրամական միջոցների բռնագանձման վերաբերյալ քաղաքացիական հայցի ապահովման դեպքում պատասխանողն իրավունք ունի հարկադիր կատարման ծառայության դեպոզիտ հաշիվ մուծել. • դատարանի որոշմամբ սահմանված գումարը • **հայցվորի պահանջած գումարը** • կողմերի փոխադարձ համաձայնությամբ սահմանված գումարը • իր կողմից չվիճարկվող գումարը
113	Ի՞նչ ժամկետում է կատարվում հայցի ապահովման մասին դատարանի որոշումը համաձայն քաղաքացիական դատավարության օրենսգրքի. • կայացման օրվանից եռօրյա ժամկետում • դատարանի որոշմամբ նշված ժամկետում • **անհապաղ** • կայացման օրվանից հնգօրյա ժամկետում

114	Գործին մասնակցող անձի միջնորդությամբ դատարանն իրավունք ունի քաղաքացիական հայցի ապահովման մեկ միջոցը. • **փոխարինել մեկ այլ միջոցով կամ ձևափոխել** • միայն ձևափոխել • միայն փոխարինել մեկ այլ միջոցով • փոխարինել այլ միջոցով կամ ձևափոխել՝ ընտրելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ չնախատեսված հայցի ապահովման այլ միջոց
115	Քաղաքացիական հայցի ապահովման վերացման հարցը լուծվում է դատական նիստում՝ միջնորդությունը ստանալուց հետո. • անհապաղ • եռօրյա ժամկետում • հնգօրյա ժամկետում • **տասնօրյա ժամկետում**
116	Ի՞նչ է անում ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքների քննության արդյունքում. • մերժում է վերաքննիչ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, կամ վերացնում է բողոքարկվող դատական ակտը՝ գործն ուղարկելով նոր քննության • մերժում է վերաքննիչ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, կամ բեկանում է բողոքարկվող դատական ակտը՝ գործն ուղարկելով նոր քննության • վերացնում է բողոքարկվող դատական ակտը և կայացնում նոր դատական ակտ • **մերժում է վերաքննիչ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, կամ կայացնում է նոր դատական ակտ, որն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից**
117	Նոր երևան եկած հանգամանքներով քաղաքացիական գործով վերաքննիչ դատարանի դատական ակտը վերանայում է. • **վճռաբեկ դատարանը** • դիմողի որոշմամբ՝ վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանը • վերաքննիչ դատարանը • դատական ակտը կայացրած առաջին ատյանի դատարանը
118	Քաղաքացիական հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու մասին որոշումը դատարանը պատշաճ ձևով ուղարկում է գործին մասնակցող անձանց. • անհապաղ • **եռօրյա ժամկետում** • հնգօրյա ժամկետում • տասնօրյա ժամկետում

119	Ի՞նչ ժամկետում կարող են քաղաքացիական գործին մասնակցող անձինք հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը բողոքարկել վերաքննիչ դատարան. • **հայցվորի կողմից այն ստանալուց հետո եռօրյա ժամկետում** • հայցվորի կողմից այն ստանալուց հետո տասնօրյա ժամկետում • հայցվորի կողմից այն ստանալուց հետո տասնհինգօրյա ժամկետում • հայցվորի կողմից այն ստանալուց հետո որոշմամբ սահմանված ժամկետում
120	Թվարկածներից ո՞ր դեպքում դատարանը պարտավոր չէ կասեցնել քաղաքացիական գործի վարույթը. • եթե անհնարին է տվյալ գործի քննությունը մինչև սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ գործով կամ հարցով որոշում կայացնելը • եթե անհնարին է տվյալ գործի քննությունը մինչև քրեական դատավարության կարգով քննվող այլ գործով որոշում կայացնելը • **եթե գործին մասնակցող քաղաքացու մահից հետո վիճելի իրավահարաբերությունը թույլ չի տալիս իրավահաջորդություն** • եթե գործին մասնակցող քաղաքացին ճանաչվել է անգործունակ
121	Ստորև նշվածներից ո՞ր դեպքում դատարանն իրավունք չունի կասեցնել գործի վարույթը՝ համաձայն քաղաքացիական դատավարության օրենսգրքի. • եթե նշանակել է փորձաքննություն • եթե պատասխանողը գտնվում է հետախուզման մեջ • եթե գործին մասնակցող իրավաբանական անձը վերակազմակերպվում է • **եթե դատական նիստի ժամանակի և վայրի մասին պատշաճ ձևով տեղեկացված կողմը չի ներկայացել դատական նիստին**
122	Գործի վարույթը ե՞րբ է վերսկսվում ըստ քաղաքացիական դատավարության օրենսգրքի. • հայցվորի միջնորդության հիման վրա՝ հայցից հրաժարվելու հիմքով գործի վարույթը կարճելու համար • **դրա կասեցումն առաջացրած հանգամանքների վերանալուց հետո** • կողմերի միջնորդության հիման վրա՝ նրանց հաշտության համաձայնությունը հաստատելու համար • պատասխանողի միջնորդության հիման վրա՝ հայցն ամբողջովին կամ մասամբ ընդունելու հիմքով վեճն ավարտելու համար
123	Քաղաքացիական գործի վարույթը կասեցնելու կամ վերսկսելու մասին որոշումը դատարանը պատշաճ ձևով ուղարկում է գործին մասնակցող անձանց. • անհապաղ • **եռօրյա ժամկետում** • հնգօրյա ժամկետում • տասնօրյա ժամկետում

124	Արդյո՞ք քաղաքացիական գործի վարույթը կասեցնելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը կարող է բողոքարկվել: Եթե այո, ապա որտե՞ղ. • որոշումը բողոքարկման ենթակա չէ • այո, այն կարող է բողոքարկվել դատարանի նախագահին • այո, այն կարող է բողոքարկվել վճռաբեկ դատարան • **այո, այն կարող է բողոքարկվել վերաքննիչ դատարան**
125	Նշվածներից ո՞ր հանգամանքը քաղաքացիական գործի վարույթի կարճման հիմք չէ. • վեճը ենթակա չէ դատարանում քննության • նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ • **գործը տվյալ դատարանում քննելիս պարզվել է, որ այն վարույթ է ընդունվել ընդդատության կանոնների խախտմամբ** • գործին մասնակցող քաղաքացու մահից հետո վիճելի իրավահարաբերությունը բացառում է իրավահաջորդությունը
126	Քաղաքացիական գործի վարույթի կարճման դեպքում նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ թույլատրվում է կրկին դիմել դատարան, եթե գործի վարույթի կարճման հիմք է հանդիսացել. • վեճը դատարանում քննության ենթակա չլինելու հանգամանքը • գործին մասնակցող իրավաբանական անձի լուծարման հանգամանքը • **հայցվորի՝ հայցից դատաքննության նախապատրաստման փուլում հրաժարվելու հանգամանքը** • դատարանի կողմից կողմերի հաշտության համաձայնությունը հաստատելու հանգամանքը
127	Քաղաքացիական գործը պետք է քննվի և վճիռ կայացվի. • **ողջամիտ ժամկետում** • երկամսյա ժամկետում • եռամսյա ժամկետում • ոչ ուշ, քան 6 ամսվա ընթացքում
128	Ի՞նչ իրավական հետևանք ունի դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը. • վճռի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է գործի սխալ լուծման • վճռի բեկանման միանշանակ հիմք է՝ անկախ ունեցած հետևանքների • վճռի բեկանման միանշանակ հիմք է՝ եթե հանգեցրել է դատավարության մասնակցի իրավունքի էական խախտման • **վճռի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել գործի սխալ լուծման**

129	Քաղաքացիական գործով դատական նիստի ժամանակ դատարանի կողմից կիրառվող սանկցիա չէ. • նախազգուշացումը • նիստերի դահլիճից հեռացնելը • դատական տուգանքը • **խիստ նկատողությունը**
130	Իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման վերաբերյալ դատարանի կողմից քննվող քաղաքացիական գործ չէ. • անձանց ազգակցական հարաբերություններին վերաբերվող գործը • անձի՝ ուրիշի խնամքի տակ գտնվելու վերաբերյալ գործը • անհաղթահարելի ուժի առկայության վերաբերյալ գործը • **անձանց փաստացի ամուսնության մեջ գտնվելու վերաբերյալ գործը**
131	Ինպե՞ս է դատարանը որոշում ապացույցների հետազոտման հաջորդականությունը՝ համաձայն քաղաքացիական դատավարության օրենսգրքի. • **հաշվի առնելով գործին մասնակցող անձանց կարծիքները** • հաշվի առնելով կողմերի կարծիքները • հաշվի առնելով գործին մասնակցող անձանց և դատավարության այլ մասնակիցների կարծիքները • անկախ դատավարության մասնակիցների կարծիքներից
132	Ի՞նչ է անում ՀՀ վճռաբեկ դատարանը, երբ դատարանի կայացրած՝ գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի կամ սխալ է պատճառաբանված. • փոփոխում է դատական ակտը սեփական պատճառաբանություններով • **պատճառաբանում է անփոփոխ թողնված դատական ակտը** • բեկանում է դատական ակտը՝ հաստատելով սեփական պատճառաբանությունները • բեկանում է դատական ակտը՝ գործն ուղարկելով առաջին ատյանի դատարան՝ պատշաճ պատճառաբանման համար անհրաժեշտ ցուցումով
133	Քաղաքացիական գործի բոլոր ապացույցները հետազոտելուց հետո. • դատարանը հեռանում է վճիռ կայացնելու • նախագահողը գործի քննությունը հայտարարում է ավարտված, և դատարանը հեռանում է վճիռ կայացնելու • դատարանն անցնում է ապացույցների գնահատմանը • **նախագահողը գործին մասնակցող անձանց հարցնում է, թե նրանք արդյոք չեն ցանկանում ներկայացնել լրացուցիչ նյութեր՝ դրանք հետազոտելու միջնորդությամբ**

134	Քաղաքացիական օրենսգրքով նախատեսված դեպքերում տասնվեց տարեկան դարձած անչափահասի՝ իրեն լրիվ գործունակ (էմանսիպացված) ճանաչելու մասին դիմումը դատարանը քննում է. • դիմողի մասնակցությամբ • զույգ ծնողների մասնակցությամբ • ծնողներից մեկի (որդեգրողների, հոգաբարձուի) մասնակցությամբ • **դիմողի, ծնողներից մեկի (որդեգրողների, հոգաբարձուի) կամ խնամակալության ու հոգաբարձության մարմնի ներկայացուցչի պարտադիր մասնակցությամբ**
135	Քաղաքացիական դատավարությունում քաղաքացուն անգործունակ ճանաչելու վերաբերյալ գործ հարուցելու հիմք չի կարող հանդիսանալ. • նրա ընտանիքի անդամների դիմումը • խնամակալության և հոգաբարձության մարմնի դիմումը • հոգեբուժական հաստատության տնօրինության դիմումը • **նրա աշխատավայրի տնօրինության դիմումը**
136	Քաղաքացիական դատավարությունում քաղաքացուն սահմանափակ գործունակ ճանաչելու վերաբերյալ գործ հարուցելու հիմք է հանդիսանում. • **նրա ընտանիքի անդամների կամ խնամակալության և հոգաբարձության մարմնի դիմումը** • նրա ընտանիքի անդամների կամ հոգեբուժական հաստատության տնօրինության դիմումը • նրա ընտանիքի անդամների կամ աշխատավայրի տնօրինության դիմումը • նրա ընտանիքի անդամների կամ բնակության վայրի համայնքի ղեկավարի դիմումը
137	Քաղաքացիական դատավարությունում անգործունակ ճանաչված ապաքինված քաղաքացուն դատահոգեբուժական փորձաքննության համապատասխան եզրակացության հիման վրա գործունակ ճանաչելու համար դատարան կարող է դիմել. • միայն խնամակալը • միայն խնամակալը կամ ընտանիքի անդամը • միայն հոգեբուժական հաստատության տնօրինությունը • **նրա խնամակալը կամ ընտանիքի անդամը կամ հոգեբուժական հաստատության տնօրինությունը**

138	Քաղաքացիական դատավարությունում երեխայի որդեգրման վերաբերյալ դատարան տրվող դիմումում նշվող՝ օրենքով առաջադրված տեղեկություններ չեն հանդիսանում. • որդեգրել ցանկացող անձի (անձանց) ազգանունը, անունը, հայրանունը, բնակության վայրը, որդեգրվող երեխայի ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան ժամանակը և բնակության վայրը • **որդեգրվող երեխայի ծնողների, նրանց այն ազգականների ազգանունը, անունը, հայրանունը և բնակության վայրը, որոնց հետ բնակվում է որդեգրվող երեխան** • որդեգրել ցանկացող անձի (անձանց) ցանկության դեպքում նրա (նրանց) միջնորդությունը՝ որդեգրվող երեխայի ծննդյան ժամանակը փոփոխելու մասին, եթե նա մինչև մեկ տարեկան է • որդեգրել ցանկացող անձի (անձանց) ցանկության դեպքում նրա (նրանց) միջնորդությունը՝ որդեգրվող երեխայի ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան ժամանակը և վայրը փոխելու, իրեն (իրենց) որպես որդեգրվող երեխայի ծնող (ծնողներ) գրառելու մասին
139	Քաղաքացիական դատավարությունում քաղաքացուն անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու վերաբերյալ դիմումում նշվող տեղեկություն չէ. • քաղաքացուն անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու դեպքում դիմողի համար ակնկալվող իրավական հետևանքները • քաղաքացու անհայտ բացակայությունը հավաստող հանգամանքները • անհայտ բացակայողին մահ սպառնացող կամ այլ հանգամանքները, որոնք հիմք են տալիս ենթադրելու, որ նրա մահը որոշակի դժբախտ պատահարի հետևանք է • **քաղաքացու՝ դիմողին հայտնի ժառանգության զանգվածը և ժառանգների կազմը**
140	Քաղաքացիական դատավարությունում գույքը տիրազուրկ ճանաչելու վերաբերյալ դիմումում նշվող՝ օրենքով առաջադրված տեղեկություն չէ. • գույքը (դրա անվանումը), որը պետք է տիրազուրկ ճանաչվի, դրա հիմնական տարբերակիչ հատկանիշները • **գույքի պատրաստման (արտադրության, կառուցման) ժամանակը և դրա շուկայական արժեքը դատարան դիմելու պահին** • ապացույցները, որոնք հաստատում են սեփականատիրոջ կողմից առանց գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պահպանելու մտադրության գույքը թողնելու փաստը • գույքը դիմողի տիրապետմանն անցնելու փաստը հաստատող ապացույցները

141	Քաղաքացիական դատավարությունում կորցրած արժեթղթով հավաստված իրավունքը վերականգնելու վերաբերյալ դիմումում պետք է նշվեն. • **կորցրած արժեթղթի վավերապայմանները, արժեթուղթը տված կազմակերպության անվանումը, ինչպես նաև շարադրվեն արժեթղթի կորստի հանգամանքները** • կորցրած արժեթղթի վավերապայմանների նշումը և դրա կորստի հանգամանքների շարադրումը • կորցրած արժեթղթի վավերապայմանների, արժեթղթով հավաստված իրավունքների և արժեթուղթը տված կազմակերպության նշումը, ինչպես նաև արժեթղթի կորստի հանգամանքների շարադրումը • միայն արժեթղթի կորստի հանգամանքները
142	Քաղաքացիական դատավարությունում դատարանի վճռի հարկադիր կատարման ընթացքում կողմերի հաշտության համաձայնությունը ստանալով՝ հարկադիր կատարողը պարտավոր է. • կարճել կատարողական վարույթը և հաստատել հաշտության համաձայնություն • կարճել կատարողական վարույթը և վերադարձնել կատարողական թերթը • **կասեցնել կատարողական վարույթը և անհապաղ դիմել կատարողական թերթ տված դատարան** • ավարտել կատարողական վարույթը
143	Քաղաքացիական դատավարությունում որոշակի դրամական պահանջներով վճարման կարգադրություն արձակելու դիմումի քննության արդյունքում, դատավորի կողմից ձեռնարկվող՝ օրենքով նախատեսված գործողություն չէ. • վճարման կարգադրություն արձակելը • վճարման կարգադրություն արձակելու դիմումը մերժելը • վճարման կարգադրություն արձակելու դիմումը մասամբ մերժելը՝ մյուս մասով վճարման կարգադրություն արձակելը • **դիմումը վերադարձնելը**
144	Ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ չմտած վճռի դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն. • **գործին մասնակցող անձինք, ինչպես նաև գործին մասնակից չդարձված այն անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ վճիռ է կայացվել** • միայն գործին մասնակցող անձինք • միայն գործին մասնակից չդարձված այն անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ վճիռ է կայացվել • դատախազը, եթե վեճն առնչվում է պետության, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց գույքային շահերի հետ

145	Քաղաքացիական գործով վերաքննիչ բողոքը պատշաճ ձևով ուղարկվում է. • կողմերին • **վերաքննիչ դատարան և գործին մասնակցող անձանց, իսկ բողոքի պատճենը՝ դատական ակտը կայացրած առաջին ատյանի դատարան** • վճիռը կայացրած առաջին ատյանի դատարան • երրորդ անձանց և վճիռը կայացրած առաջին ատյանի դատարան
146	Առաջին ատյանի դատարանը վերաքննիչ բողոքի պատճենը ստանալու օրվանից հետո պարտավոր է քաղաքացիական գործը պատշաճ ձևով ուղարկել վերաքննիչ դատարան. • ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում, իսկ դրա անհնարինության դեպքում ողջամիտ՝ սեղմ ժամկետում • ոչ ուշ, քան հնգօրյա ժամկետում, իսկ դրա անհնարինության դեպքում ողջամիտ՝ սեղմ ժամկետում • ոչ ուշ, քան տասնօրյա ժամկետում, իսկ դրա անհնարինության դեպքում ողջամիտ՝ սեղմ ժամկետում • **ոչ ուշ, քան հաջորդ օրը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ողջամիտ սեղմ ժամկետում**
147	Օրինական ուժի մեջ մտած դատական ակտը պարտադիր է. • միայն բոլոր պետական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների համար • միայն պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց համար • ոչ ոքի համար • **բոլոր պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, իրավաբանական անձանց և քաղաքացիների համար ու ենթակա է կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում**
148	Վերաքննիչ բողոք բերող անձը պարտավոր է քաղաքացիական գործին մասնակցող այլ անձանց պատշաճ ձևով ուղարկել. • միայն բողոքի պատճենը • **բողոքի և դրան կից փաստաթղթերի պատճենները** • բողոքի, իր մոտ առկա և գործում բացակայող լրացուցիչ ապացույցների պատճենները • բողոքի, դրան կից փաստաթղթերի պատճենները, ինչպես նաև բողոքը վերաքննիչ դատարան ուղարկելը (հանձնելը) հավաստող փաստաթղթերը

149	Քաղաքացիական գործին մասնակցող անձը, վերաքննիչ բողոքի պատճենը ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, իրավունք ունի իր պատասխանն ուղարկելու. • միայն վերաքննիչ դատարան • միայն գործին մասնակցող այլ անձանց • **վերաքննիչ դատարան և գործին մասնակցող այլ անձանց** • վճիռ կայացրած դատարան, վերաքննիչ դատարան և դատավարության մյուս մասնակիցներին
150	Քաղաքացիական գործով վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշումը. • **կարող է բողոքարկվել վճռաբեկության կարգով՝ որոշումը ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում** • կարող է բողոքարկվել վերաքննիչ դատարանի նախագահին՝ որոշումը ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում • կարող է բողոքարկվել վճռաբեկության կարգով՝ որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում • բողոքարկման ենթակա չէ
151	Վերաքննիչ քաղաքացիական դատարանը գործի վարույթը կասեցնելու մասին առաջին ատյանի դատարանի որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքը. • **քննում և կայացնում է որոշում գործը ստանալուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում** • քննում և կայացնում է որոշում գործը ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում • քննում և կայացնում է որոշում գործը ստանալուց հետո՝ անհապաղ • քննում և կայացնում է որոշում գործը ստանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում
152	Վերաքննիչ քաղաքացիական դատարանը. • կաշկանդված չէ վերաքննիչ բողոքով և գործը կրկնակի քննում է՝ գործում եղած, ինչպես նաև լրացուցիչ ներկայացված ապացույցներով, եթե դրանք ներկայացնողը հիմնավորում է առաջին ատյանի դատարանում այդ ապացույցները ներկայացնելու անհնարինությունը՝ իրենից անկախ պատճառներով • կաշկանդված չէ վերաքննիչ բողոքով, սակայն վեճը կրկնակի քննում է միայն գործում եղած ապացույցներով • կաշկանդված չէ վերաքննիչ բողոքով և գործում եղած ինչպես նաև լրացուցիչ ներկայացված ապացույցներով, կրկնակի քննում է գործը • **դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում**
153	Վերաքննիչ քաղաքացիական դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում. • հրապարակման պահից • հրապարակվելուց տասն օր հետո

	• հրապարակվելուց տասնհինգ օր հետո • **հրապարակման պահից մեկ ամիս հետո**
154	Քաղաքացիական գործով վճռաբեկ բողոք բերելու հիմքերն են. • **դատական սխալը՝ նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի խախտումը, որը կարող էր ազդել գործի ելքի վրա կամ նոր երևան եկած, կամ նոր հանգամանքները** • գործին մասնակցող անձանց նյութական իրավունքի խախտումը, ինչպես նաև նոր երևան եկած հանգամանքները • միայն գործին մասնակցող անձանց նյութական և դատավարական իրավունքի խախտումը • գործին մասնակցող անձանց դատավարական իրավունքի խախտումը, ինչպես նաև նոր երևան եկած հանգամանքները
155	Քաղաքացիական գործով դատարանի ըստ էության ճիշտ վճիռը չի կարող բեկանվել. • **միայն ձևական նկատառումներով** • եթե դատարանը գործը քննել է ոչ օրինական կազմով, սակայն կայացրել է օրինական վճիռ • եթե դատարանը վճիռ է կայացրել գործին մասնակից չդարձած անձանց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ • եթե վճիռը ստորագրել է ոչ այն դատավորը, որը կայացրել է այն
156	Վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող անձինք քաղաքացիական գործով վճռաբեկ բողոքը պատշաճ ձևով ուղարկում են վճռաբեկ դատարան, իսկ դրա պատճենը. • **դատական ակտը կայացրած դատարան ու գործին մասնակցող անձանց** • միայն դատական ակտը կայացրած դատարան • վճիռը կայացրած դատարան, առաջին ատյանի դատարան և գործին մասնակցող անձանց • դատական ակտը կայացրած դատարան, գործին մասնակցող անձանց և դատավարության մյուս մասնակիցներին
157	Քաղաքացիական գործով վճռաբեկ բողոքում նշվող՝ օրենքով պահանջվող տեղեկություն չէ. • դատարանի անվանումը, որին հասցեագրվում է բողոքը, բողոք բերող անձի անունը (անվանումը) • գործին մասնակցող անձանց անունները (անվանումները) • **վճռի բովանդակության համառոտ շարադրանքը** • բողոք բերած անձի պահանջը

158	Որ՞ոնք են քաղաքացիական գործի քննության սահմանները վճռաբեկ դատարանում. • **դատական ակտը վերանայվում է միայն վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում** • վեճը կրկնակի քննվում է գործում եղած ապացույցներով • գործն ըստ էության քննվում է գործում եղած, ինչպես նաև լրացուցիչ ներկայացված ապացույցներով • գործը քննվում է անկախ վճռաբեկ բողոքում նշված հիմքերից
159	Վճռաբեկ դատարանի՝ քաղաքացիական գործն ըստ էության լուծող դատական ակտը համարվում է ընդունված, եթե դրա օգտին քվեարկել են. • բոլոր դատավորները • դատավորների ընդհանուր թվի երեք քառորդը • **նիստին ներկա դատավորների մեծամասնությունը** • առնվազն չորս դատավոր
160	Քաղաքացիական գործով վճռաբեկ դատարանի դատական ակտն օրինական ուժի մեջ է մտնում. • **հրապարակման պահից** • հրապարակելուց երեք օր հետո • հրապարակելուց հինգ օր հետո • ՀՀ պաշտոնական տեղեկագրում տեղադրելու պահից
161	Քաղաքացիական դատավարությունում ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումը պատշաճ ձևով ուղարկվում է բողոք բերած անձին, գործին մասնակցող անձանց և համապատասխան դատարան՝ այն հրապարակելու օրվանից. • եռօրյա ժամկետում • հնգօրյա ժամկետում • **ողջամիտ ժամկետում** • տասնօրյա ժամկետում
162	Նոր հանգամանքներով քաղաքացիական դատավարությունում վերանայման ենթակա են. • **միայն օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը** • միայն առաջին ատյանի դատարանների և վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը • միայն առաջին ատյանի դատարանների դատական ակտերը • վերաքննիչ դատարանի և վճռաբեկ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռները և որոշումները

163	Քաղաքացիական դատավարությունում նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերը վերանայելու դիմումները կարող են բերվել այն պահից, երբ դիմում բերող անձն իմացել է կամ կարող էր իմանալ դրանց ի հայտ գալու մասին. • մեկամսյա ժամկետում • քառասունհինգօրյա ժամկետում • **եռամսյա ժամկետում** • վեցամսյա ժամկետում
164	Նոր երևան եկած հանգամանքներով քաղաքացիական դատավարությունում առաջին ատյանի դատական ակտը վերանայում է. • դատական ակտը կայացրած առաջին ատյանի դատարանը • **վերաքննիչ դատարանը** • վճռաբեկ դատարանը • մասնագիտացված դատարանը
165	Քաղաքացիական դատավարությունում նոր հանգամանքներով դատական ակտի վերանայելու բողոքը ստանալուց հետո ի՞նչ ժամկետում է համապատասխան դատարանը որոշում կայացնում վերանայման վարույթ հարուցելու կամ բողոքը վերադարձնելու մասին. • բողոքը ստանալու օրը • **մեկամսյա ժամկետում** • ոչ ուշ, քան տասնօրյա ժամկետում • ոչ ուշ, քան տասնհինգօրյա ժամկետում
166	Քաղաքացիական դատավարությունում դատարանը իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատում է միայն այն դեպքում, եթե. • դիմողը հնարավորություն չունի այլ կարգով ստանալու այդ փաստը հավաստող պատշաճ փաստաթղթեր • **դիմողը հնարավորություն չունի այլ կարգով ստանալու այդ փաստը հավաստող պատշաճ փաստաթղթեր կամ անհնար է վերականգնել կորցրած փաստաթղթերը** • հնարավոր է վերականգնել կորցրած փաստաթղթերը • դիմողը հնարավորություն ունի այլ կարգով ստանալու այդ փաստը հավաստող պատշաճ փաստաթղթերը, սակայն դիմել է դատարան
167	Քաղաքացիական դատավարությունում միջազգային դատարանի վարույթում գտնվող գործի հետ կապված հանգամանքներ պարզելու կամ ապացույցներ, փաստաթղթեր և այլ նյութեր ներկայացնելու վերաբերյալ այդ դատարանի կողմից ուղարկված հարցումներին Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը պատասխանում և անհրաժեշտ նյութերն ու փաստաթղթերն այդ դատարան է ներկայացնում. • հնգօրյա ժամկետում, եթե միջազգային դատարանի կանոնակարգերով այլ ժամկետ սահմանված չէ • տասնօրյա ժամկետում, եթե միջազգային դատարանի կանոնակարգերով այլ ժամկետ սահմանված չէ

	• **տասնհինգօրյա ժամկետում, եթե միջազգային դատարանի կանոնակարգերով այլ ժամկետ սահմանված չէ** • մեկամսյա ժամկետում, եթե միջազգային դատարանի կանոնակարգերով այլ ժամկետ սահմանված չէ
168	Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ ի՞նչ իրավական հետևանքներ է առաջացնում նյութական իրավունքի նորմի խախտումը կամ սխալ կիրառումը. • նյութական իրավունքի նորմի խախտումը կամ սխալ կիրառումը վճռի բեկանման հիմք է, եթե առաջացրել է գույքային իրավունքների խախտում • հանգեցնում է վճռի բեկանման, եթե կողմի շահերին էական վնաս է հասցրել • վճռի բեկանման անվերապահ հիմք է • **վճռի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է գործի սխալ լուծման**
169	Իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման վերաբերյալ քաղաքացիական գործերը քննվում են. • դիմողի գտնվելու վայրի դատարանում կամ վարչական դատարանում • միայն վարչական դատարանում • վերաքննիչ դատարանում • **դիմողի գտնվելու վայրի դատարանում, բացառությամբ անշարժ գույքը սեփականության իրավունքով տիրապետելու փաստը հաստատելու վերաբերյալ գործերի, որոնք քննվում են անշարժ գույքի գտնվելու վայրի դատարանում**
170	Քաղաքացիական դատավարության օրենսգրքի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության դատարանների հարցումներով օտարերկրյա պետությունների տարածքներում դատավարական գործողությունները կատարվում են. • **Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով** • Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով և համապատասխան օտարերկրյա պետության օրենքներով սահմանված կարգով • Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված բացառություններով • Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, եթե դրանց նորմերը չեն հակասում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքին

171	Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով քաղաքացիական գործերով դատարաններին առնչվող փոխադարձ իրավական օգնություն ցույց տալու հարցերով հաղորդակցությունն իրականացվում է. • **Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության միջոցով, իսկ միջազգային պայմանագրով նախատեսված լինելու դեպքում՝ դիվանագիտական ուղիներով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության դատարանների և օտարերկրյա պետության դատարանների միջև անմիջական հաղորդակցության միջոցով** • միայն Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության միջոցով • Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության միջոցով, իսկ միջազգային պայմանագրով նախատեսված լինելու դեպքում՝ դիվանագիտական ուղիներով • Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության միջոցով կամ Հայաստանի Հանրապետության դատարանների և օտարերկրյա պետության դատարանների միջև անմիջական հաղորդակցության միջոցով
172	Դատախազը պետության գույքային շահերի պաշտպանության հայց է հարուցում. • «Դատախազության ծառայության մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում • «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետում • **«Դատախազության մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում** • ՀՀ դատական օրենսգրքով նախատեսված դեպքերում
173	Հայց հարուցած պետական մարմինը. • չի օգտվում հայցվորի իրավունքներից, չի կրում հայցվորի պարտականությունները • չի օգտվում հայցվորի իրավունքներից, սակայն կրում է նրա պարտականությունները • օգտվում է հայցվորի իրավունքներից, սակայն չի կրում հայցվորի պարտականությունները • **օգտվում է հայցվորի իրավունքներից և կրում է նրա պարտականությունները**
174	Քաղաքացիական դատավարությունում դատարանն իրավունք ունի գործին մասնակցող անձանց նկատմամբ կիրառելու հետևյալ դատական սանկցիաները. • միայն նախազգուշացում • միայն նախազգուշացում և դատական տուգանք • **նախազգուշացում, հեռացում նիստերի դահլիճից, դատական տուգանք, պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով համապատասխանաբար գլխավոր դատախազին կամ փաստաբանների պալատին դիմելը** • նախազգուշացում, պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով

	համապատասխանաբար գլխավոր դատախազին կամ փաստաբանների պալատին դիմելը
175	Նոր հանգամանքներով քաղաքացիական դատավարությունում վերանայման ենթակա են. • **միայն օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը** • միայն առաջին ատյանի դատարանների և վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը • միայն առաջին ատյանի դատարանների դատական ակտերը • վերաքննիչ դատարանի և վճռաբեկ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռները և որոշումները
176	Քաղաքացիական գործով օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցները. • **իրավաբանական ուժ չունեն և չեն կարող դրվել վճռի հիմքում** • կարող են դրվել վճռի հիմքում միայն բացառիկ դեպքերում՝ դատարանի կողմից համապատասխան միջնորդությունը բավարարվելու արդյունքում • կարող են դրվել վճռի հիմքում միայն կողմերի համաձայնության առկայության դեպքում • կարող են դրվել վճռի հիմքում միայն դատարանի պատճառաբանված որոշման առկայության դեպքում
177	Քաղաքացիական գործով դատարանի համար որևէ ապացույց. • ինքնուրույն հիմք չէ վճիռ կայացնելու համար • նախապես հաստատվածի ուժ չունի • **նախապես հաստատվածի ուժ չունի, բացառությամբ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերի** • նախապես հաստատվածի ուժ չունի, բացառությամբ գույքային շահերի պաշտպանության հայցերով պետական մարմինների կողմից ներկայացված ապացույցների
178	Քաղաքացիական հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու մասին որոշումը վերացվելու դեպքում. • գործի վարույթը համարվում է կարճված • գործի քննությունը տեղափոխվում է վերաքննիչ դատարան • **գործի վարույթը համարվում է վերսկսված** • գործի վարույթը համարվում է կասեցված

179	Քաղաքացիական գործի վարույթի կասեցումն առաջացրած հանգամանքների վերանալուց հետո. • **գործի վարույթը վերսկսվում է** • գործը քննվում է նույն դատարանում, սակայն այլ կազմով • գործի քննությունը սկսվում է սկզբից • գործի քննությունը շարունակվում է դատարանի կոլեգիալ կազմով
180	Վեճն ըստ էության լուծելու դեպքում առաջին ատյանի դատարանը կայացնում է վճիռ, որը պետք է. • հրապարակման օրվանից յոթ օրվա ընթացքում ուղարկվի կողմերին՝ դիտողություններ և առաջարկություններ ներկայացնելու համար • չհակասի մինչ այդ այլ դատարանների կողմից նմանատիպ գործերով կայացված վճիռներին և համապատասխանի կողմերից յուրաքանչյուրի գույքային շահերին • համապատասխանի կողմերից յուրաքանչյուրի գույքային շահերին • **լինի օրինական և հիմնավորված**
181	Հակընդդեմ քաղաքացիական հայցը հարուցվում է. • միայն սկզբնական հայցի ակնհայտ անհիմն լինելու դեպքում • սկզբնական հայցը հարուցվելու պահից տասնօրյա ժամկետում • **հայց հարուցելու ընդհանուր կանոններով** • սկզբնական համաձայնությամբ
182	Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում ապացույց չեն համարվում. • փորձագետների եզրակացությունները • գործին մասնակցող անձանց ցուցմունքները • վկաների ցուցմունքները • **կողմերի բացատրությունները**
183	Դատական նիստի արձանագրության վերաբերյալ քաղաքացիական գործին մասնակցող անձանց դիտողություններն ընդունելու կամ մերժելու մասին. • **նախագահող դատավորը կայացնում է որոշում** • տրվում է դատարանի պարզաբանում • նախագահող դատավորը տալիս է գրավոր պատասխան • նախագահող դատավորը կայացնում է լրացուցիչ վճիռ
184	Վճռաբեկ դատարանում քաղաքացիական գործի քննությունը սկսվում է. • տվյալ գործով հայցվորի ելույթով • վճռաբեկ դատարանի պալատի նախագահի ելույթով • **վճռաբեկ դատարանի պալատի դատավորի զեկուցումով** • վճռաբեկ դատարանի կազմի ներկայացմամբ

185	Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող և քաղաքացիական գործեր քննելու իրավասություն ունեցող միջազգային դատարան դիմելու իրավունք ունի յուրաքանչյուր անձ, եթե իրեն վերաբերող քաղաքացիական գործով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով ընդունված. • որևէ որոշմամբ խախտվել են Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված իր իրավունքներն ու օրինական շահերը • **վերջնական դատական որոշմամբ խախտվել են Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված իր իրավունքները** • դատական որևէ ակտով խախտվել են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ երաշխավորված իր իրավունքները, ազատություններն ու օրինական շահերը • դատարանի որոշմամբ կարճվել է քաղաքացիական գործով վարույթը
186	Քաղաքացիական գործին մասնակցող անձանց դիմումները և միջնորդությունները դատարանը լուծում է. • միայն փորձագետի եզրակացությունը լսելուց հետո • **գործին մասնակցող մյուս անձանց կարծիքները լսելուց հետո** • առանց այլ անձանց կարծիքները լսելու • գործում եղած բոլոր ապացույցների համադրմամբ և գնահատմամբ
187	Քաղաքացիական գործը քննող դատարանը կարող է վերացնել հայցի ապահովումը. • իր նախաձեռնությամբ կամ գործին մասնակցող անձի միջնորդությամբ • **գործին մասնակցող անձի միջնորդությամբ** • միայն կողմերի համաձայնությամբ • իր կամ գործին մասնակցող անձի միջնորդությամբ
188	Քաղաքացիական գործերով ու՞մ առջև է իրականացվում արդարադատությունը. • **օրենքի և դատարանի առջև՝ քաղաքացիների ու իրավաբանական անձանց հավասարության սկզբունքների հիման վրա** • օրենքի և դատարանի առջև՝ քաղաքացիների, իրավաբանական անձանց և այլ սուբյեկտների հավասարության սկզբունքների հիման վրա • օրենքի, իրավական ակտերի և դատարանի առջև՝ քաղաքացիների ու իրավաբանական անձանց հավասարության սկզբունքների հիման վրա • օրենքի, իրավական ակտերի և դատարանի առջև՝ հավասարության սկզբունքի հիման վրա
189	Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում ապացույց չէ. • փորձագետի եզրակացությունը • գործին մասնակցող անձի ցուցմունքը

	• **կողմի առարկությունը** • վկայի ցուցմունքը
190	Ո՞ր դեպքերում է թույլատրվում դռնփակ դատավարությունը քաղաքացիական գործերով. • առևտրային և այլ գաղտնիք պահպանելու անհրաժեշտության դեպքում • օրենքով նախատեսված դեպքերում • **օրենքով նախատեսված դեպքերում, ինչպես նաև որդեգրման գաղտնիությունը, քաղաքացիների անձնական կամ ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունն ապահովելու, առևտրային կամ այլ գաղտնիք պահպանելու անհրաժեշտության վերաբերյալ միջնորդությունը դատարանի կողմից բավարարվելու դեպքում** • օրենքով և իրավական ակտերով նախատեսված դեպքերում, ինչպես նաև որդեգրման գաղտնիությունը, քաղաքացիների անձնական կյանքի անձեռնմխելիությունն ապահովելու վերաբերյալ միջնորդությունը դատարանի կողմից բավարարվելու դեպքում
191	Դատարանն ի՞նչ է պարզում քաղաքացիական գործերով օտարերկրյա իրավունք կիրառելիս. • դրա նորմերի գոյությունը և բովանդակությունը • օտարերկրյա պետությունում դրանց մեկնաբանման և կիրառման պրակտիկան • ոչինչ • **դրա նորմերի գոյությունը և բովանդակությունը՝ օտարերկրյա պետությունում դրանց մեկնաբանման և կիրառման պրակտիկային համապատասխան**
192	Իրավունք ունի՞ դատարանը քաղաքացիական գործերով կիրառել գործարար շրջանառության սովորույթներ. • **այո** • ոչ • այո, միայն այն դեպքում, երբ բացակայում է տվյալ հարաբերությունը կարգավորող օրենք, ինչպես նաև անհնար են օրենքի և իրավունքի անալոգիաները • բացառիկ դեպքերում՝ եթե կողմերը փոխադարձ համաձայնությամբ դատարանում փաստում են իրենց մեջ ձևավորված գործարար շրջանառության սովորույթների առկայություն
193	Ի՞նչ կարգով է լուծվում դատավորի ինքնաբացարկի միջնորդությունը քաղաքացիական դատավարությունում. • **գործի քննությունը ընդհատվում է մինչև այդ հարցի լուծումը: Նիստը կարող է ընդհատվել ոչ ավելի, քան 3 օրով** • գործի քննությունն ընդհատվում է մինչև այդ հարցի լուծումը: Նիստը կարող է ընդհատվել ոչ ավելի, քան 7 օրով

	• գործի քննությունն ընդհատվում է մինչև այդ հարցի լուծումը: Նիստը կարող է ընդհատվել անորոշ ժամկետով • գործի քննությունը կարող է շարունակվել առանց ընդհատումների
194	Ի՞նչ հետևանքներ են առաջանում քաղաքացիական գործով դատավորի ինքնաբացարկի դեպքում. • **դատական նիստը հայտարարվում է փակված, դատավորը փոխարինվում է նույն դատարանի մեկ այլ դատավորով և գործի քննությունն իրականացվում է սկզբից** • դատական նիստը հայտարարվում է փակված, դատավորը փոխարինվում է նույն դատարանի մեկ այլ դատավորով և գործի քննությունը շարունակվում է • դատական նիստը հետաձգվում է, դատավորը փոխարինվում է նույն դատարանի մեկ այլ դատավորով և գործի քննությունը վերսկսվում է • դատական նիստը հետաձգվում է այլ դատավոր նշանակվելու և գործի քննությունը շարունակվելու համար
195	Ի՞նչ կարգով է փաստաբանին լիազորագիր տրվում քաղաքացիական դատավարությունում. • **հասարակ գրավոր ձևով և վավերացման ենթակա չէ** • հատուկ գրավոր ձևով, որը ենթակա է վավերացման • վավերացված նոտարի կամ օրենքով նման իրավասություն ունեցող պաշտոնատար անձի կողմից • բանավոր՝ դատարանի առջև հաստատելու միջոցով
196	Ո՞վ կարող է քաղաքացիական դատավարությունում հանդես գալ դատարանում որպես թարգմանիչ. • **այն անձը, որը տիրապետում է թարգմանության համար անհրաժեշտ լեզուներին** • այն անձը, որը տիրապետում է մի քանի լեզուների • այն անձը, որը տիրապետում է դատավարության լեզվին • այն անձը, որը կարող է հաղորդակցվել դատավարության մասնակիցների հետ
197	Քաղաքացիական դատավարությունում յուրաքանչյուր ապացույց գնահատվում է. • գործում եղած բոլոր ապացույցների լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ • գործում եղած ապացույցների բազմակողմանի և լրիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ • գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ • **գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ**

198	Եթե քաղաքացիական գործով իրեղեն ապացույցները չեն կարող բերվել դատարան, ապա որտե՞ղ և ի՞նչ կարգով են դրանք պահպանվում. • **դրանց գտնվելու վայրում: Դրանք պետք է մանրամասն նկարագրվեն և /կամ/ կնքվեն, իսկ անհրաժեշտության դեպքում՝ լուսանկարվեն կամ տեսանկարահանվեն** • դրանց գտնվելու վայրում: Դրանք պետք է նկարագրվեն և /կամ/ կնքվեն • կողմի նախընտրած վայրում: Դրանք պետք է նկարագրվեն և /կամ/ կնքվեն, իսկ անհրաժեշտության դեպքում՝ լուսանկարահանվեն կամ տեսանկարահանվեն • կողմի նախընտրած վայրում: Դրանք պետք է նկարագրվեն և /կամ/ կնքվեն
199	Դատարանը քաղաքացիական գործով անհապաղ զննում և հետազոտում է շուտ փչացող իրեղեն ապացույցները. • դատարանում • **դրանց գտնվելու վայրում** • իր կողմից որոշված վայրում • կողմերի նախընտրած վայրում
200	Ի՞նչ կարգով են որոշվում գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը. • գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է յուրաքանչյուր կողմ՝ կրելով այն սխալ որոշելու հետևանքների ռիսկը • **գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա** • գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ ներկայացված պահանջի կամ առարկության համար կիրառելի օրենքի դրույթների հիման վրա • գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա՝ այդ մասին ընդունելով առանձին որոշում
201	Քաղաքացիական դատավարությունում նույն հիմքով դատավորի ինքնաբացարկի մասին միջնորդության կրկին ներկայացնել. • թույլատրվում է • թույլատրվում է, եթե դատավորը չի առարկում • **չի թույլատրվում** • թույլատրվում է, եթե գործին մասնակցող անձինք չեն առարկում

202	Քաղաքացիական գործին մասնակցող անձինք իրավունք ունե՞ն ներկա գտնվել փորձաքննությանը. • այո • ոչ • **այո, բացառությամբ այն դեպքերի, երբ նրանց ներկայությունը կարող է խանգարել փորձագետի բնականոն աշխատանքին** • այո, եթե առկա է ՀՀ արդարադատության նախարարության թույլտվությունը
203	Հանրահայտ հանգամանքները. • ապացուցման կարիք չունեն, եթե դրանք հաստատվել են նախկինում քննված՝ քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով • ենթակա են ապացուցման, եթե կողմերից մեկը պնդում է • ապացուցվում են ընդհանուր կարգով • **ապացուցման կարիք չունեն**
204	Դատական հանձնարարությունը կատարելու մասին կայացված որոշումը ի՞նչ ժամկետում է բոլոր նյութերի հետ միասին ուղարկվում քաղաքացիական գործը քննող դատարան. • եռօրյա ժամկետում • **անհապաղ** • հինգօրյա ժամկետում • մեկամսյա ժամկետում
205	Ի՞նչ իրավական հետևանքներ է առաջադրում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, այն դեպքում, եթե կողմերը ոչնչացնել կամ թաքցրել են որևէ ապացույց կամ այլ եղանակով խոչընդոտել դրա հետազոտմանը և գնահատմանը՝ դատավարության մյուս կողմի համար անհնարին կամ դժվարին դարձնելով ապացույցներ հավաքելը և ներկայացնելը. • **նման փաստերի առկայության դեպքում դատարանը խոչընդոտող կողմի վրա է դնում հակառակը ապացուցելու պարտականությունը** • նման փաստերի առկայության դեպքում դատարանը հաստատված է համարում այն փաստը, որը ենթակա էր հաստատման հիշյալ ապացույցով • նման փաստերի առկայության դեպքում դատարանը մյուս կողմի միջնորդության հիման վրա պարտավորեցնում է ներկայացնել համապատասխան ապացույցը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ վերականգնել այն • նման փաստերի առկայության դեպքում դատարանը կասեցնում է գործի վարույթը՝ կողմի արարքում հանցանքի առկայությունը պարզելու համար

206	Քաղաքացիական գործով պետական տուրքը ենթակա է վերադարձման. • **«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով** • ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով • ՀՀ Սահմանադրությամբ սահմանված կարգով • ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով
207	Ի՞նչ ժամկետում կարող է հայցը վարույթ ընդունելու մասին դատարանի որոշումը բողոքարկվել վերաքննիչ դատարան գործին մասնակցող անձանց կողմից այն ստանալուց հետո. • եռօրյա ժամկետում • **հայցը վարույթ ընդունելու մասին որոշումը բողոքարկման ենթակա չէ** • տասնօրյա ժամկետում • այդ որոշմամբ սահմանված ժամկետում
208	Դատական նիստը նախագահողի գործողությունների դեմ քաղաքացիական գործին մասնակցող անձանց առարկությունները մտցվու՞մ են դատական նիստի արձանագրության մեջ. • **այո** • ոչ • այո, եթե չեն առարկում գործին մասնակցող անձինք • այո, դատարանի նիստի քարտուղարի հայեցողությամբ
209	Հայցվորը կամ պատասխանողը իրավունք ունի՞ դատարանին խնդրել քաղաքացիական վեճը լուծել իր բացակայությամբ՝ ներկայացված փաստաթղթերի և նյութերի հիման վրա. • ոչ • **այո** • այո, մյուս կողմի հետ նախապես համաձայնեցնելուց հետո միայն • այո, դատարանի նախաձեռնությամբ
210	Պատասխանողին՝ գույք հանձնելու կամ դրամական գումարներ գանձելու հետ չկապված որոշակի գործողություններ կատարելուն պարտադրող քաղաքացիական գործով վճռի եզրափակիչ մասում դատարանը նշում է, թե. • ով պետք է կատարի այդ գործողությունները • ով, որտեղ պետք է կատարի այդ գործողությունները • ով, որտեղ, երբ պետք է կատարի այդ գործողությունները • **ով, որտեղ, երբ կամ ինչ ժամկետում պետք է կատարի այդ գործողությունները**
211	Ընդհանուր իրավասության դատարանի վճիռը հրապարակվում է քաղաքացիական գործի քննությունն ավարտելուց հետո. • տասը օրվա ընթացքում • **տասնհինգ օրվա ընթացքում** • քսան օրվա ընթացքում • մեկ ամսվա ընթացքում

212	Ընդհանուր իրավասության դատարանի վճռի օրինակը հանձնվում է քաղաքացիական գործին մասնակցող անձանց հրապարակվելուց. • **անմիջապես հետո** • հինգ օր հետո • տասը օր հետո • տասնհինգ օր հետո
213	Քաղաքացիական գործով դատական նիստի պարզ թղթային արձանագրությունում չի նշվում. • դատական նիստի տարին, ամիսը, ամսաթիվը և վայրը • դատական նիստը սկսելու և ավարտելու ժամը • գործի անվանումը • **վերջնական դատական ակտի նկարագրական մասը**
214	Քաղաքացիական դատավարությունում քաղաքացու կյանքին կամ առողջությանը սպառնացող վտանգի մասին եռօրյա ժամկետում հայցադիմում չներկայացնելու դեպքում քաղաքացու կյանքին կամ առողջությանը սպառնացող վտանգը կանխելու մասին դատարանի որոշումը. • **կորցնում է իր ուժը** • պահպանում է իր ուժը • պահպանում է իր ուժը տաս օրվա ընթացքում • պահպանում է իր ուժը մեկ ամսվա ընթացքում
215	Համայնքի ղեկավարն իրավունք ունի դատարան դիմել. • Հայաստանի Հանրապետության ոչ գույքային շահերի պաշտպանության հայցով • Հայաստանի Հանրապետության գույքային շահերի պաշտպանության հայցով • համայնքի ոչ գույքային շահերի պաշտպանության հայցով • **համայնքի գույքային շահերի պաշտպանության հայցով**
216	Քաղաքացիական օրենսգրքով նախատեսված դեպքերում 16 տարեկան դարձած անչափահասը կարո՞ղ է դիմել դատարան իրեն լրիվ գործունակ (էմանսիպացված) ճանաչելու մասին դիմումով. • **այո** • ոչ • այո, ծնողների համաձայնությամբ • այո, ծնողներից մեկի համաձայնությամբ

217	1080. Քաղաքացիական դատավարությունում քաղաքացուն սահմանափակ գործունակ ճանաչելու վերաբերյալ դիմումի մեջ պետք է շարադրվեն. • այն հանգամանքները, որոնք վկայում են, որ ոգելից խմիչքներ չարաշահող անձն իր ընտանիքը դրել է նյութական ծանր կացության մեջ • այն հանգամանքները, որոնք վկայում են, որ ոգելից խմիչքներ կամ թմրամիջոցներ չարաշահող անձն իր ընտանիքը դրել է ծանր կացության մեջ • **այն հանգամանքները, որոնք վկայում են, որ ոգելից խմիչքներ կամ թմրամիջոցներ չարաշահող, ինչպես նաև մոլախաղերով հրապուրվող անձն իր ընտանիքը դրել է նյութական ծանր կացության մեջ** • այն հանգամանքները, որոնք վկայում են, որ մոլախաղերով հրապուրվող անձն իր ընտանիքը դրել է նյութական ծանր կացության մեջ
218	Քաղաքացիական դատավարությունում քաղաքացու հոգեկան խանգարման վերաբերյալ հիմնավոր կասկածների առկայության դեպքում դատավորը, նրա հոգեկան վիճակը պարզելու համար, իրավունք ունի՞ նշանակել դատահոգեբուժական փորձաքննություն. • **այո** • ոչ • այո, փորձաքննության ենթակա անձի համաձայնությամբ • այո, փորձաքննության ենթակա անձի մերձավոր ազգականների համաձայնությամբ
219	Քաղաքացիական դատավարությունում իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատող դատարանի վճռում. • չպետք է շարադրվի հաստատված փաստը • կարող է շարադրվել հաստատված փաստը • **պետք է շարադրվի հաստատված փաստը** • պետք է շարադրվի դիմումը բավարարելու շարժառիթները
220	Ըստ ներկայացնողի կամ օրդերային արժեթուղթը (այսուհետ՝ արժեթուղթ) կորցրած անձը կարող է, գործերի տարածքային ընդդատությանը համապատասխան դիմում ներկայացնել ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան. • կորցրած արժեթուղթն անվավեր ճանաչելու մասին • կորցրած արժեթղթով հավաստված իրավունքը վերականգնելու մասին • **կորցրած արժեթուղթն անվավեր ճանաչելու և դրանով հավաստված իրավունքը վերականգնելու մասին** • կորցրած արժեթուղթը վավեր ճանաչելու մասին
221	Կորցրած արժեթղթով հավաստված իրավունքը վերականգնելու վերաբերյալ քաղաքացիական գործը քննվում է. • **այդ արժեթուղթը տված կազմակերպության գտնվելու վայրի դատարանում** • այդ արժեթուղթը կորցրած անձի բնակության (գտնվելու) վայրի ընդհանուր իրավասության դատարանում

	• ցանկացած դատարանում • վարչական դատարանում
222	Քաղաքացիական դատավարությունում դատարանը կորցրած արժեթղթով հավաստված իրավունքը վերականգնելու մասին դիմումն ընդունելուց հետո որոշում է կայացնում այդ արժեթղթով վճարումները կամ հանձնումները. • հետաձգելու մասին • **արգելելու մասին** • կատարելու մասին • կասեցնելու մասին
223	Դատարանը կորցրած արժեթղթով հավաստված իրավունքը վերականգնելու վերաբերյալ քաղաքացիական գործը քննում է հաղորդագրության հրապարակման օրվանից. • տասն օր անցնելուց հետո • մեկ ամիս անցնելուց հետո • **երկու ամիս անցնելուց հետո** • երեք ամիս անցնելուց հետո
224	Դատարանը կորցրած արժեթղթով հավաստված իրավունքը վերականգնելու վերաբերյալ քաղաքացիական գործով դիմումը բավարարելու դեպքում վճիռ է կայացնում կորցրած արժեթուղթն. • անվավեր ճանաչելու մասին • **անվավեր ճանաչելու և դիմողի՝ դրանով հավաստված իրավունքը վերականգնելու մասին** • առոչինչ ճանաչելու և դիմողին դրանով հավաստված իրավունքը վերականգնելու մասին • վավեր ճանաչելու մասին
225	Ըստ ներկայացնողի և օրդերային կորցրած արժեթղթերով հավաստված իրավունքները վերականգնելու քաղաքացիական գործի վարույթով դատարանի կողմից հաղորդագրությունը հրապարակելու օրվանից ի՞նչ ժամկետում արժեթուղթը տիրապետողի դիմումը ստանալու դեպքում դատարանն առանց քննության է թողնում արժեթուղթը կորցրած անձի դիմումը. • քսան օրվա ժամկետում • մեկ ամսյա ժամկետում • **երկամսյա ժամկետում** • եռամսյա ժամկետում

226	Քաղաքացիական դատավարությունում դատական սանկցիա կիրառելու մասին որոշումը ո՞ր պահից է մտնում ուժի մեջ. • **հրապարակման պահից ուժի մեջ է** • հրապարակման պահից 7 օր հետո • հրապարակման հաջորդ օրվանից • հրապարակման պահից 10 օր հետո
227	Դատարանի քաղաքացիական գործով վճռի հարկադիր կատարման ընթացքում հաշտության համաձայնություն կնքելուց բացի ուրիշ ինչին կարող է վերաբերվել հաշտության համաձայնությունը. • հաշտության եղանակին • հաշտության ժամկետներին • հաշտության եղանակին և ժամկետներին • **դատարանի վճռի հարկադիր կատարման եղանակին, ժամկետներին և կարգին**
228	Վերաքննիչ դատարանը քաղաքացիական գործը ստանալու օրվանից հետո որքա՞ն ժամկետում է կայացնում որոշում վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին. • **եռօրյա ժամկետում** • հինգօրյա ժամկետում • տասնօրյա ժամկետում • տասնհինգօրյա ժամկետում
229	Վերաքննիչ դատարանի քաղաքացիական գործով բողոքը վերադարձնելու մասին որոշումը կարող է բողոքարկվել վճռաբեկության կարգով որոշումը ստանալուց հետո. • մեկշաբաթյա ժամկետում • **երկշաբաթյա ժամկետում** • քսանօրյա ժամկետում • մեկամսյա ժամկետում

230	Ներքոշարադրյալ ձևակերպումներից ո՞րն է առավել լիարժեք արտահայտում ապացույցի՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով տրված բնորոշումը. • գործով ապացույցներ են փաստերը, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը • **գործով ապացույցներ են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը** • գործով ապացույցներ են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է վեճի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը • գործով ապացույցներ են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը
231	Ստորև թվարկածներից ո՞րը վճռաբեկ բողոք բերելու հիմք չի հանդիսանում. • դատավարական իրավունքի այնպիսի խախտումը, որը կարող էր ազդել գործի ելքի վրա • **նյութական իրավունքի բոլոր տեսակի խախտումները** • նոր երևան եկած հանգամանքները • նոր հանգամանքները
232	Դատարանը, գործի նախապատրաստման կամ քննության ժամանակ, պարզելով, որ հայցը հարուցվել է ոչ այն անձի կողմից, որին պատկանում է պահանջի իրավունքը կամ ոչ այն անձի դեմ, ով պետք է պատասխանի այդ հայցով, կարող է. • փոխարինել հայցվորին կամ պատասխանողին • պատասխանողի համաձայնությամբ թույլ տալ, որ նա կամ հայցվորը փոխարինվեն պատշաճ հայցվորով կամ պատասխանողով • **հայցվորի համաձայնությամբ թույլ տալ, որ նա կամ պատասխանողը փոխարինվեն պատշաճ հայցվորով կամ պատասխանողով** • վարույթից հեռացնել տվյալ հայցվորին կամ պատասխանողին

233	Քաղաքացիական գործով վճռաբեկ բողոքին կցվում են. • սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարած լինելը հավաստող փաստաթուղթը • բողոքի պատճենը գործը քննող դատարան և գործին մասնակցող անձանց ուղարկելու մասին ապացույցները • **սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարած լինելը հավաստող փաստաթուղթը և բողոքի պատճենը գործը քննող դատարան և գործին մասնակցող անձանց ուղարկելու մասին ապացույցները** • սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարած լինելը հավաստող փաստաթուղթը և բողոքի պատճենը գործը քննող դատարան ուղարկելու մասին ապացույցները
234	Քաղաքացիական գործով վճռաբեկ բողոք բերած անձն իրավունք ունի՞ հետ վերցնելու բողոքը. • ոչ • **այո, մինչև վճռաբեկ դատարանը սկսի գործի քննությունը** • այո, վճռաբեկ դատարանի կողմից քննությունը սկսելուց հետո • այո, մինչև վճռաբեկ դատարանը սկսի գործի քննությունը, ինչպես նաև վճռաբեկ դատարանի կողմից քննությունը սկսելուց հետո
235	Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանը կայացնում է որոշում՝ քաղաքացիական գործը վճռաբեկ դատարանում ստանալու պահից. • երեք օրվա ընթացքում • հինգ օրվա ընթացքում • **մեկ ամսվա ընթացքում** • քսան օրվա ընթացքում
236	Վիճելի հարաբերությունը կարգավորող օրենքի կամ այլ իրավական ակտի բացակայության դեպքում դատարանը ինչի՞ հիման վրա է լուծում վեճերը և այլ գործերը. • **կիրառում է նույնանման հարաբերություններ կարգավորող օրենքի նորմերը** • կիրառում է իրավունքի սկզբունքները • կիրառում է տվյալ հարցի վերաբերյալ գիտության մեջ ձևավորված մոտեցումները • կիրառում է նույնանման իրավական համակարգ ունեցող պետությունների օրենսդրական կարգավորումները:
237	Քաղաքացիական գործով բացատրություններ տալու անհրաժեշտության դեպքում վճռաբեկ դատարանի նիստին կարող են կանչվել. • բողոք բերած անձը, ինչպես նաև գործին մասնակցող անձինք և վկաները • միայն բողոք բերած անձը • **բողոք բերած անձը, ինչպես նաև գործին մասնակցող անձինք** • վճռաբեկ դատարանի նիստին ոչ ոք չի կարող կանչվել

238	Հայց հարուցած համայնքի ղեկավարը. • չի օգտվում հայցվորի իրավունքներից, չի կրում հայցվորի պարտականությունները • չի օգտվում հայցվորի իրավունքներից, սակայն կրում է նրա պարտականությունները • օգտվում է հայցվորի իրավունքներից, սակայն չի կրում հայցվորի պարտականությունները • **օգտվում է հայցվորի իրավունքներից և կրում է նրա պարտականությունները**
239	Քաղաքացուն անգործունակ ճանաչելու վերաբերյալ քաղաքացիական գործը դատարանը քննում է. • տվյալ քաղաքացու մերձավոր ազգականի մասնակցությամբ • դատախազի պարտադիր մասնակցությամբ • տվյալ քաղաքացու մերձավոր ազգականի և խնամակալության և հոգաբարձության մարմնի ներկայացուցչի պարտադիր մասնակցությամբ • **խնամակալության և հոգաբարձության մարմնի ներկայացուցչի պարտադիր մասնակցությամբ: Քաղաքացին կարող է կանչվել դատական նիստին, եթե դա թույլ է տալիս նրա առողջական վիճակը**
240	Քաղաքացուն սահմանափակ գործունակ ճանաչելու վերաբերյալ քաղաքացիական գործը դատարանը քննում է. • այդ քաղաքացու պարտադիր մասնակցությամբ • **այդ քաղաքացու և խնամակալության ու հոգաբարձության մարմնի ներկայացուցչի պարտադիր մասնակցությամբ** • այդ քաղաքացու և նրա մերձավոր ազգականի պարտադիր մասնակցությամբ • խնամակալության ու հոգաբարձության մարմնի ներկայացուցչի պարտադիր մասնակցությամբ
241	Քաղաքացիական դատավարությունում քաղաքացուն անգործունակ ճանաչելու մասին դատարանի վճռի հիման վրա խնամակալության և հոգաբարձության մարմինը նշանակում է. • **խնամակալ** • հոգաբարձու • խնամակալ կամ հոգաբարձու • ոչինչ

242	Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ ո՞վ իրավունք ունի դիմելու դատարան. • յուրաքանչյուր շահագրգիռ անձ՝ անկախ նրանից ունի սեփական շահ, թե՝ ոչ • **յուրաքանչյուր շահագրգիռ անձ՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար** • յուրաքանչյուր շահագրգիռ անձ՝ իր և այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության համար՝ թեկուզև այդ անձանց ներկայացուցիչը չէ • յուրաքանչյուր շահագրգիռ անձ՝ անգամ եթե տվյալ պահին հնարավոր չէ ապացուցել, որ պահանջվող պաշտպանությունը կարող է անմիջականորեն ազդել տվյալ անձի իրավունքներին, ազատություններին և օրինական շահերին
243	Քաղաքացուն հոգեբուժական հիվանդանոցային հարկադիր բուժման ենթարկելու վերաբերյալ դիմումի քննության արդյունքներով դատարանը կայացնում է վճիռ, որով. • **մերժում կամ բավարարում է դիմումը** • մերժում է դիմումը • բավարարում է դիմումը • դիմումը թողնում է առանց քննության
244	Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ քաղաքացիական գործերով դատավարությունն իրականացվում է. • վիճելի իրավահարաբերության ծագման պահին գործած օրենքներով • վեճը դատարան մուտքագրելու ժամանակ գործող օրենքներով • կողմերի համար առավել բարենպաստ իրավական ռեժիմ սահմանող օրենքներով • **գործի քննության ժամանակ գործող օրենքներով**
245	Քաղաքացիական դատավարությունում լրացուցիչ վճիռ կայացնելը մերժելու մասին որոշումը կարո՞ղ է արդյոք բողոքարկվել. • **այո, կարող է բողոքարկվել** • ոչ, չի կարող բողոքարկվել • կարող է բողոքարկվել միայն երրորդ անձանց կողմից • կարող է բողոքարկվել միայն հայցվորի կողմից
246	Պարզ թղթային եղանակով կազմված դատական նիստի արձանագրության վերաբերյալ քաղաքացիական գործին մասնակցող անձանց դիտողությունները նախագահող դատավորն ուսումնասիրում է. • **միանձնյա** • դատական նիստի քարտուղարի մասնակցությամբ • կողմերի մասնակցությամբ • դիտողություն ներկայացրած անձի և դատական նիստի քարտուղարի մասնակցությամբ

247	Քաղաքացիական դատավարությունում առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին ընդդատյա են. • քաղաքացիական բոլոր գործերը, բացառությամբ քաղաքացիական դատարանների քննությանն ընդդատյա գործերի • քաղաքացիական բոլոր գործերն, եթե մի կողմը քաղաքացի է • քաղաքացիների մասնակցությամբ քաղաքացիական բոլոր գործերն, եթե դրանք չեն առնչվում ձեռնարկատիրական գործունեության ոլորտին • **քաղաքացիական բոլոր գործերը**
248	Քաղաքացիական գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել. • այդ ակտը հրապարակվելու օրվանից տասնհինգօրյա ժամկետում • այդ ակտը ստանալու օրվանից տասնօրյա ժամկետում • այդ ակտը ստանալու օրվանից մեկ ամսյա ժամկետում • **մինչ այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը**
249	Նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման դիմում քաղաքացիական գործով չի կարող ներկայացվել, եթե դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո անցել է. • տասը տարի • **քսան տարի** • մեկ տարի • վեց ամիս
250	Քաղաքացիական գործով վճիռը պարզաբանելու կամ վրիպակները, գրասխալները և թվաբանական սխալներն ուղղելու մասին որոշումը կարո՞ղ է արդյոք բողոքարկվել. • կարող է բողոքարկվել միայն այն անձի կողմից ում այդ վրիպակները, գրասխալները և թվաբանական սխալները վերաբերում են • **այո, կարող է բողոքարկվել** • ոչ, չի կարող բողոքարկվել • կարող է բողոքարկվել միայն երրորդ անձանց կողմից
251	Քաղաքացիական դատավարությունում միջազգային դատարան դիմելու կարգը սահմանվում է. • Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի կանոնակարգով • Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կանոնակարգով • **միջազգային դատարանի կանոնակարգերով** • Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության և միջազգային դատարանի կանոնակարգերով

252	Քաղաքացիական դատավարությունում միջազգային դատարան դիմելու իրավունք ունեցող անձանց շրջանակը սահմանվում է. • **տվյալ միջազգային դատարանի կանոնակարգերով** • Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կանոնակարգով • Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի կանոնակարգով • Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության և տվյալ միջազգային դատարանի կանոնակարգերով
253	Քաղաքացիական դատավարությունում որպես դատական սանկցիա դատարանի դահլիճից հեռացնելը թվարկածներից ու՞ մ նկատմամբ չի կարող կիրառվել. • պատասխանողի • գործի քննությանը որպես կողմ մասնակցող փաստաբանի • հայցվորի • **տվյալ պահին ցուցմունք տվող վկայի**
254	Ո՞ ր պահից է ուժի մեջ մտնում վերաքննիչ վարույթը կարճելու մասին վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշումը. • որոշումը կայացնելու հաջորդ օրվանից • **որոշման կայացման պահից** • որոշում կայացնելուց հինգ օր հետո • որոշում կայացնելուց երեք օր հետո
255	Քաղաքացիական դատավարությունում քաղաքացուն անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու վերաբերյալ դիմումը տրվում է. • նրա վերջին հայտնի բնակության վայրի ընդհանուր իրավասության դատարան • **նրա վերջին հայտնի բնակության վայրի կամ դիմողի բնակության վայրի ընդհանուր իրավասության դատարան** • նրա վերջին հայտնի բնակության վայրի քաղաքացիական դատարան • նրա վերջին հայտնի բնակության վայրի կամ դիմողի բնակության վայրի քաղաքացիական դատարան
256	Քաղաքացիական դատավարությունում դատավորը բացակայողի մասին տեղեկություններ ստանալու նպատակով, հարցում է անում բացակայողի. • վերջին հայտնի բնակության վայրի կազմակերպությանը • վերջին հայտնի բնակության վայրի և աշխատավայրի համապատասխան կազմակերպություններին • **վերջին հայտնի բնակության վայրի և աշխատավայրի համապատասխան կազմակերպություններին, ինչպես նաև որոշում է կայացնում՝ դիմողի հաշվին հաղորդագրություն հրապարակել մամուլում՝ քաղաքացուն անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու վերաբերյալ գործ հարուցելու մասին** • վերջին հայտնի բնակության վայրի կազմակերպությանը և հարևաններին

257	Քաղաքացիական դատավարությունում քաղաքացուն անհայտ բացակայող ճանաչելու մասին՝ դատարանի վճռի հիման վրա, բացակայողի գույքի գտնվելու վայրի խնամակալության և հոգաբարձության մարմինն այդ գույքի նկատմամբ. • **խնամակալություն է սահմանվում** • հոգաբարձություն է սահմանվում • պատրոնաժ է սահմանվում • ոչինչ չի սահմանվում
258	Քաղաքացիական դատավարությունում անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված քաղաքացու ներկայանալու դեպքում դատարանը նրա դիմումի հիման վրա վճիռ է կայացնում նախկինում կայացրած իր վճիռը. • չեղյալ հայտարարելու մասին • անվավեր ճանաչելու մասին • **վերացնելու մասին** • առոչինչ ճանաչելու մասին
259	Շարժական գույքը տիրազուրկ ճանաչելու վերաբերյալ դիմումը քաղաքացիական դատավարությունում տրվում է գույքը տիրապետող. • քաղաքացու բնակության վայրի ընդհանուր իրավասության դատարան • իրավաբանական անձի գտնվելու վայրի ընդհանուր իրավասության դատարան • **քաղաքացու բնակության վայրի կամ իրավաբանական անձի գտնվելու վայրի ընդհանուր իրավասության դատարան** • քաղաքացու բնակության վայրի քաղաքացիական դատարան
260	Քաղաքացիական դատավարությունում դատարանը, գտնելով, որ գույքը սեփականատեր չունի կամ այն դրա սեփականատիրոջ կողմից թողնվել է առանց դրա նկատմամբ սեփականության իրավունքը պահպանելու մտադրության, վճիռ է կայացնում գույքը տիրազուրկ ճանաչելու և. • **տիրապետող անձի սեփականությանն այն հանձնելու մասին** • համապատասխան համայնքի սեփականությանն այն հանձնելու մասին • Հայաստանի Հանրապետության սեփականությանն այն հանձնելու մասին • Հայաստանի Հանրապետության կամ համապատասխան համայնքի սեփականությանն այն հանձնելու մասին
261	Նշվածներից ո՞րն է ճիշտ. • **քրեական գործով օրինական ուժի մեջ մտած դատավճիռը պարտադիր է դատարանի համար միայն այն փաստերով, ըստ որոնց հաստատված են որոշակի գործողություններ և դրանք կատարած անձինք** • քրեական գործով օրինական ուժի մեջ չմտած դատավճիռը պարտադիր է դատարանի համար միայն այն փաստերով, ըստ որոնց հաստատված են որոշակի գործողություններ և դրանք կատարած անձինք • քրեական գործով օրինական ուժի մեջ չմտած վճիռը պարտադիր է միայն կողմերի համար և միայն այն փաստերով, ըստ որոնց հաստատված են որոշակի

	գործողություններ և դրանք կատարած անձինք • քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ չմտած դատավճիռը պարտադիր է դատարանի համար
262	Նշվածներից ո՞րն է ճիշտ. • քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ չմտած դատարանի վճռով հաստատված հանգամանքները նույն անձանց միջև դատարանում այլ գործ քննելիս կրկին չեն ապացուցվում • նախկինում քննված՝ քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված հանգամանքները նույն անձանց միջև դատարանում այլ գործ քննելիս կրկին ապացուցվում են • նախկինում քննված՝ քրեական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված հանգամանքները նույն անձանց միջև դատարանում այլ գործ քննելիս կրկին չեն ապացուցվում • **նախկինում քննված՝ քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված հանգամանքները նույն անձանց միջև դատարանում այլ գործ քննելիս կրկին չեն ապացուցվում**
263	Դատական հանձնարարության մասին որոշումը պարտադիր է հանձնարարությունը ստացած դատարանի համար և պետք է կատարվի այն ստանալու օրվանից. • **տասնօրյա ժամկետում** • մեկօրյա ժամկետում • անհապաղ • եռամսյա ժամկետում
264	Նշվածներից ո՞րն է ճիշտ. • **դատական նիստերի դահլիճ դատավորի մտնելու պահին դահլիճում ներկա գտնվողները ոտքի են կանգնում, այնուհետև՝ նախագահողի հրավերով զբաղեցնում իրենց տեղերը** • դատական նիստերի դահլիճ դատավորի մտնելու պահին դահլիճում ներկա գտնվողները ոտքի են կանգնում, այնուհետև՝ կողմերից մեկի հրավերով զբաղեցնում իրենց տեղերը • դատական նիստերի դահլիճ դատավորի մտնելու պահին դահլիճում ներկա գտնվողները ոտքի են կանգնում, այնուհետև՝ պատասխանող կողմի հրավերով զբաղեցնում իրենց տեղերը • դատական նիստերի դահլիճ դատավորի մտնելու պահին դահլիճում ներկա

	գտնվողները ոտքի են կանգնում, այնուհետև՝ դատական նիստերի քարտուղարի հրավերով զբաղեցնում իրենց տեղերը
265	Նշվածներից ո՞րն է լիարժեք ճիշտ • դատարանի վճիռը դահլիճում ներկաները լսում են նստած • **դատարանի վճիռը դահլիճում ներկաները լսում են հոտնկայս** • դատարանի վճիռը դահլիճում չի հրապարակվում • վճռի հրապարակման պահին դահլիճում ներկա գտնվողները պարտադիր կերպով դուրս են հրավիրվում դատական նիստերի դահլիճից
266	Նշվածներից ո՞րն է լիարժեք ճիշտ. • դատական նիստի կինո և լուսանկարահանում, տեսաձայնագրում, ինչպես նաև ռադիոյով ու հեռուստատեսությամբ հեռարձակում իրականացնելու համար բավարար է միայն պատասխանող կողմի համաձայնությունը • **դատական նիստի կինո և լուսանկարահանումը, տեսաձայնագրումը, ինչպես նաև հեռարձակումը ռադիոյով ու հեռուստատեսությամբ կատարվում են կողմերի համաձայնությամբ՝ գործը քննող դատարանի թույլտվությամբ** • դատական նիստի կինո և լուսանկարահանումը, տեսաձայնագրումը, ինչպես նաև հեռարձակումը ռադիոյով ու հեռուստատեսությամբ կատարվում են կողմերի համաձայնությամբ՝ գործը քննող դատարանի նիստերի քարտուղարի թույլտվությամբ • դատական նիստի կինո և լուսանկարահանումը, տեսաձայնագրումը, ինչպես նաև հեռարձակումը ռադիոյով ու հեռուստատեսությամբ կատարվում է միայն հայցվոր կողմի համաձայնությամբ, իսկ գործը քննող դատարանի թույլտվություն չի պահանջվում
267	Դատավարության ընթացքում դատարանի՝ առանձին ակտի տեսքով չձևակերպված որոշումն ուժի մեջ է մտնում. • **կայացման պահից** • կայացման պահից երեք օր հետո • այդ ակտով սահմանված ժամկետում • հրապարակման պահից տասնհինգ օր հետո

268	Քաղաքացիական դատավարությունում որպես վկա կարող են հարցաքննվել. • դատավորները՝ որևէ գործի լուծման վերաբերյալ քննարկումների առնչությամբ • **փաստաբանները** • ներկայացուցիչները՝ այն փաստական հանգամանքների առնչությամբ, որոնք նրանց հայտնի են դարձել իրենց վստահորդին իրավաբանական ծառայություններ մատուցելիս • ձեռնադրված հոգևորական-խոստովանահայրը՝ գործի այն հանգամանքների առնչությամբ, որոնք նրան հայտնի են դարձել խոստովանության ժամանակ
269	Նշվածներից ո՞րն է լիարժեք ճիշտ. • միայն դռնբաց դատական նիստին ներկա գտնվողներն իրավունք ունեն կատարել գրառումներ, սղագրություն և ձայնագրություն, իսկ գործին մասնակցող անձինք՝ ոչ • միայն գործին մասնակցող անձինք իրավունք ունեն կատարել գրառումներ, սղագրություն և ձայնագրություն, իսկ դռնբաց դատական նիստին ներկա գտնվողները՝ ոչ • գործին մասնակցող անձինք և դռնբաց դատական նիստին ներկա գտնվողներն իրավունք չունեն կատարել գրառումներ, սղագրություն և ձայնագրություն • **գործին մասնակցող անձինք և դռնբաց դատական նիստին ներկա գտնվողներն իրավունք ունեն կատարել գրառումներ, սղագրություն և ձայնագրություն**
270	Քաղաքացիական դատավարությունում նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման բողոք կարող է բերվել. o 1 ամսվա ընթացքում այն պահից, երբ բողոք բերող անձն իմացել է կամ կարող էր իմանալ դրանց ի հայտ գալու մասին • **3 ամսվա ընթացքում այն պահից, երբ բողոք բերող անձն իմացել է կամ կարող էր իմանալ դրանց ի հայտ գալու մասին** o 3 ամսվա ընթացքում այն պահից, երբ բողոք բերող անձն ստացել է ՀՀ սահմանադրական դատարանի կամ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճիռը կամ որոշումը o 6 ամսվա ընթացքում այն պահից, երբ բողոք բերող անձն իմացել է կամ կարող էր իմանալ դրանց ի հայտ գալու մասին
271	Հայցային վարույթի գործով անձն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան է ներկայացնում. o դիմում • **հայց** o վճարման կարգադրություն o վարչական ակտ

272	Քաղաքացիական դատավարությունում դատավարական գործողություններ կատարելու համար ժամկետները որոշվում են. o օրացուցային օրերով o աշխատանքային օրերով • **օրացուցային ստույգ տարով, ամսով, ամսաթվով կամ որոշակի ժամանակահատվածով, որի ընթացքում գործողությունը կարող է կատարվել** o աշխատանքային և ոչ աշխատանքային օրերով
273	Հայցը մերժելու մասին վճիռ կայացվելու դեպքում հայցի ապահովման միջոցները. o վերացվում են վճռի հրապարակման պահից o պահպանվում են մինչև վճիռը դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն ներկայացնելը • **պահպանվում են մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը** o պահպանվում են մինչև «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով կատարողական վարույթն ավարտելու մասին որոշում կայացնելը
274	Հայցը բավարարելու մասին վճիռ կայացվելու դեպքում հայցի ապահովման միջոցները. o պահպանվում են մինչև վճիռն օրինական ուժի մեջ մտնելը o պահպանվում են մինչև վճիռը հարկադիր կատարման ներկայացնելը o պահպանվում են մինչև «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով կատարողական վարույթն ավարտելը կամ կարճելը • **պահպանվում են մինչև վճռի կատարումը**
275	Քաղաքացիական գործին մասնակցող անձինք հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը կարող են բողոքարկել. o առաջին ատյանի դատարանի նախագահին • **վերաքննիչ դատարան** o վճռաբեկ դատարան o որոշումը բողոքարկման ենթակա չէ
276	Քաղաքացիական գործի վարույթը կասեցնելու մասին դատարանի որոշումը բողոքարկվել վերաքննիչ դատարան գործին մասնակցող անձանց կողմից այն ստանալուց հետո. • **եռօրյա ժամկետում** o հնգօրյա ժամկետում o տասնօրյա ժամկետում o այդ որոշմամբ սահմանված ժամկետում

277	Դատական տուգանքը կիրառվում է. o կողմերի նկատմամբ o կողմերի և երրորդ անձանց նկատմամբ o գործին մասնակցող անձանց, ներկայացուցիչների և դատական նիստին ներկա գտնվող այլ անձանց նկատմամբ • **գործին մասնակցող անձանց և փաստաբան չհանդիսացող ներկայացուցիչների նկատմամբ**
278	Վճիռը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե. o դատական նիստի ժամանակի և վայրի մասին պատշաճ ձևով տեղեկացված գործին մասնակցող անձանցից որևէ մեկը դատական նիստին չի ներկայացել o դատարանը գործը քննել է գործին մասնակցող անձանցից որևէ մեկի բացակայությամբ, որը պատշաճ ձևով տեղեկացվել է նիստի ժամանակի և վայրի մասին • **դատարանը գործը քննել է գործին մասնակցող անձանցից որևէ մեկի բացակայությամբ, որը պատշաճ ձևով չի տեղեկացվել նիստի ժամանակի և վայրի մասին** o դատական նիստի ժամանակի և վայրի մասին պատշաճ ձևով տեղեկացված պատասխանողը դատական նիստին չի ներկայացել
279	Ներքոշարադրյալներից ո՞րով, ըստ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի, վճռաբեկ բողոքը կարող է չընդունվել քննության. o բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար o վերանայվող դատական ակտն առերևույթ (prima facie) հակասում է վճռաբեկ դատարանի նախկինում ընդունած որոշումներին • **վճռաբեկ բողոք է ներկայացվել առանց վճռի՝ վերաքննության կարգով բողոքարկման** o առկա է նոր երևան եկած կամ նոր հանգամանք
280	Գործը հետաձգելուց հետո դրա նոր քննությունը. o վերսկսվում է սկզբից o կասեցվում է • **վերսկսվում է ընդհատման պահից** o ավարտվում է

281	Քաղաքացիական դատավարությունում քաղաքացու՝ հոգեբուժական հիվանդանոցային հարկադիր բուժման վերաբերյալ դիմումը դատավորը քննում է գործը հարուցելու օրվանից. o 7 օրվա ընթացքում • **5 օրվա ընթացքում** o 10 օրվա ընթացքում o 15 օրվա ընթացքում
282	Վերաքննիչ քաղաքացիական դատարանում գործի քննության ողջամիտ ժամկետը որոշելիս. o հաշվի չի առնվում նաև առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամկետը o հաշվի է առնվում նաև առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամկետը, եթե առաջին ատյանի դատարանում գործի քննությունն ավարտվել է մեկամսյա ժամկետում • **հաշվի է առնվում նաև առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամկետը** o հաշվի է առնվում նաև առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամկետը, եթե առաջին ատյանի դատարանում գործի քննությունն ավարտվել է երկամսյա ժամկետում
283	Վերաքննիչ դատարանը միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքները քննում և կայացնում է որոշում. o գործն ստանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում o վերաքննիչ բողոքը ներկայացնելուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում • **գործն ստանալուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում** o գործն ստանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում
284	Ու՞մ վրա է դրված ապացուցման պարտականությունը քաղաքացիական դատավարությունում. • **գործին մասնակցող անձանց վրա** o միայն հայցվորի և պատասխանողի վրա o դատարանի վրա o վկայի, փորձագետի և մասնագետի վրա

285	Գործին մասնակցող անձինք իրավունք ունե՞ն հղում կատարելու միայն այն ապացույցների նկատմամբ. o որոնք առկա են ապացույցին հղում կատարող գործին մասնակցող անձի մոտ o որոնց հետ գործին փորձագետը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով ծանոթացել է նախօրոք **o որոնց հետ գործին մասնակցող մյուս անձինք ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով ծանոթացել են նախօրոք** o որոնք գտնվում են գործին մասնակցող մյուս անձանց մոտ
286	Եթե հոգեբուժական հաստատությունից ստացված տեղեկությունների համաձայն անձի հոգեկան վիճակը թույլ չի տալիս նրան մասնակցել հոգեբուժական հիվանդանոցային հարկադիր բուժման վերաբերյալ դիմումի քննության դատական նիստին, ապա դատավորը. • կասեցնում է գործի վարույթը • հետաձգում է գործի քննությունը • մերժում է դիմումը • **դիմումը քննում է հոգեբուժական հաստատությունում**
287	Քաղաքացուն անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչելու վերաբերյալ քաղաքացիական գործի քննության հետ կապված դատական ծախսերից դիմողը. • չի ազատվում, եթե դիմողն ունի համապատասխան նյութական միջոցներ • **ազատվում է** • ազատվում է, եթե դիմողը գտնվում է ծանր նյութական վիճակում • դատարանի հայեցողությամբ՝ հաշվի առնելով դիմողի նյութական և ընտանեկան դրությունը
288	Քաղաքացիական գործով լրացուցիչ վճիռ կայացնելը մերժելու դեպքում դատարանն այդ մասին. • կայացնում է վճիռ • որևէ դատական ակտ չի կայացնում • **կայացնում է որոշում** • կայացնում է միջանկյալ վճիռ

289	Քաղաքացիական դատավարությունում նոր հանգամանքներով առաջին ատյանի դատական ակտը վերանայում է. • **վերաքննիչ դատարանը** • մասնագիտացված դատարանը • վճռաբեկ դատարանը • համապատասխան դատական ակտը կայացրած առաջին ատյանի դատարանը
290	Իրավունք ունի՞ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը նոր ապացույց ընդունել. • **ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանն իրավունք չունի նոր ապացույց ընդունելու և բողոքը քննելիս հիմնվում է միայն այն ապացույցների վրա, որոնք ներկայացվել են առաջին ատյանի դատարանին** • ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանն իրավունք ունի նոր ապացույց ընդունել • ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանն իրավունք ունի նոր ապացույց ընդունել, միայն եթե գտնում է, որ նոր ապացույցն էական նշանակություն ունի գործի քննության համար • ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանն իրավունք ունի նոր ապացույց ընդունել, միայն եթե մյուս կողմը վերաքննիչ բողոքի իր պատասխանում չի առարկում դրա դեմ
291	Արդարադատություն իրականացնելիս դատավորները. • անկախ չեն և ենթարկվում են միայն օրենքին • **անկախ են և ենթարկվում են միայն օրենքին** • անկախ են և ենթարկվում են միայն ՀՀ կառավարության որոշումներին • անկախ են և ենթարկվում են միայն դատարանի նախագահին
292	Հայաստանի Հանրապետությունում դատավարությունը տարվում է. • **հայերեն** • այն լեզվով, որին տիրապետում է դատավորը • այն լեզվով, որին տիրապետում են կողմերը • այն լեզվով, որին տիրապետում է հայցվորը

293	Գործը դռնփակ նիստում քննելիս ներկա են գտնվում. • գործին մասնակցող անձինք, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև վկաները, փորձագետները և թարգմանիչները, որոնցից վերցվում է ստորագրություն՝ բացահայտված գաղտնի տեղեկությունները չհրապարակելու և չօգտագործելու մասին • **գործին մասնակցող անձինք, նրանց ներկայացուցիչները, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև վկաները, փորձագետները և թարգմանիչները, որոնցից վերցվում է ստորագրություն՝ բացահայտված գաղտնի տեղեկությունները չհրապարակելու և չօգտագործելու մասին** • գործին մասնակցող անձինք, նրանց ներկայացուցիչները, որոնցից վերցվում է ստորագրություն՝ բացահայտված գաղտնի տեղեկությունները չհրապարակելու և չօգտագործելու մասին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև վկաները, փորձագետները և թարգմանիչները, որոնցից չի վերցվում ստորագրություն՝ բացահայտված գաղտնի տեղեկությունները չհրապարակելու և չօգտագործելու մասին • գործին մասնակցող անձինք, նրանց ներկայացուցիչները, իսկ անհրաժեշտության դեպքում՝ միայն վկաները, որոնցից վերցվում է ստորագրություն՝ բացահայտված գաղտնի տեղեկությունները չհրապարակելու և չօգտագործելու մասին
294	Դատարանն օրենքին կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրին համապատասխան. • կարող է կիրառել նաև այլ պետությունների իրավունքի նորմեր, եթե այդ պետության համապատասխան մարմինը տվել է իր համաձայնությունը • կարող է կիրառել նաև այլ պետությունների իրավունքի նորմեր, եթե կողմերը չեն առարկում • չի կարող կիրառել այլ պետությունների իրավունքի նորմեր • **կարող է կիրառել նաև այլ պետությունների իրավունքի նորմեր**
295	Հատուկ հայցային վարույթի գործով անձն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան է ներկայացնում. o հայցադիմում • **դիմում** o հայց o վերաքննիչ բողոք
296	Սնանկության գործերը վարվում են. • երկու դատավորի կազմով • **դատավորի կողմից՝ միանձնյա** • դատարանի նախագահի կողմից՝ դատարանի դատավորներից մեկի հետ համատեղ • չորս դատավորի կազմով

297	Քաղաքացիական գործերով վարույթ ընդունված վճռաբեկ բողոքները վճռաբեկ դատարանը քննում է. • **պալատի նախագահի և առնվազն հինգ դատավորի կազմով** • պալատի նախագահի և առնվազն չորս դատավորի կազմով • պալատի նախագահի և առնվազն յոթ դատավորի կազմով • պալատի նախագահի և առնվազն վեց դատավորի կազմով
298	Դատական նիստում դատական ակտի հրապարակման ժամանակ. • հայտարարվում է հատուկ կարծիքի առկայության մասին և հատուկ կարծիքը հրապարակվում է • չի հայտարարվում է հատուկ կարծիքի առկայության մասին և հատուկ կարծիքը չի հրապարակվում • **հայտարարվում է հատուկ կարծիքի առկայության մասին, սակայն հատուկ կարծիքը չի հրապարակվում** • հայտարարվում է հատուկ կարծիքի առկայության մասին և հրապարակվում է հատուկ կարծիքի միայն այն մասը, որը կապված է դատական ակտի եզրափակիչ մասի հետ
299	Դատավորի ինքնաբացարկի մասին միջնորդությունը. • ներկայացվում է բանավոր, սակայն միջնորդության մեջ չեն շարադրվում դրա հիմքերը • ներկայացվում է գրավոր, սակայն միջնորդության մեջ չեն շարադրվում դրա հիմքերը • ներկայացվում է բանավոր, որում նշվում են դրա հիմքերը • **ներկայացվում է գրավոր, որում շարադրվում են դրա հիմքերը**
300	Հայցվորը հայցից կարող է հրաժարվել առաջին ատյանի դատարանում. • մինչև դատաքննության սկիզբը • **մինչև դատաքննության ավարտը** • մինչև վճռի հրապարակումը • մինչև գործը դատաքննության նախապատրաստելը

№	2014 թվականի գարնանային հոսք ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՐՑԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ
1	Ի՞նչ իմաստ ունի <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքում <<վարչարարություն>> հասկացությունը. • վարչական մարմինների գործունեություն, որը եզրափակվում է վարչական ակտերի ընդունմամբ, ինչպես նաև գործողություն կամ անգործություն, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ • վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող գործունեություն, որը եզրափակվում է վարչական կամ նորմատիվ ակտերի ընդունմամբ • վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող գործունեություն, որն ավարտվում է նորմատիվ ակտերի ընդունմամբ, ինչպես նաև գործողություն կամ անգործություն, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ **• վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող գործունեություն, որը եզրափակվում է վարչական կամ նորմատիվ ակտերի ընդունմամբ, ինչպես նաև գործողություն կամ անգործություն, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ**
2	Հայեցողական լիազորություն իրականացնելիս վարչական մարմինը. **• պարտավոր է օրենքով կանխորոշված նպատակին հասնելու համար կիրառել պիտանի, անհրաժեշտ և չափավոր միջոց** • իրավունք ունի անձին ծանրաբեռնել լրացուցիչ ապացույց ներկայացնելու պարտականությամբ • կաշկանդված չէ որևէ հանգամանքով • պարտավոր է առաջնորդվել վարչական վարույթի մասնակցի կարծիքով
3	Եթե դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի ընթացքում պարզվում է, որ ընդունվելիք վարչական ակտի համար անհրաժեշտ է որևէ տեղեկատվություն, որի տնօրինողն այլ վարչական մարմին է, իսկ դիմողն օրենքով չի կրում այն հավաստող ապացույց ներկայացնելու պարտականություն, ապա վարչական ակտ ընդունող վարչական մարմինը. • տեղեկացնում է այդ մասին վարույթի մասնակցին՝ միաժամանակ նախազգուշացնելով համապատասխան տեղեկատվությունը չներկայացնելու դեպքում դիմումի մերժման մասին • մերժում է դիմումը • կարճում է վարչական վարույթը **• հարցում է կատարում տեղեկատվությունը տնօրինող վարչական մարմնին**

4	Եթե վարչական մարմինը պարզում է, որ այլ վարչական մարմնի օգնությամբ կարող է առավել արդյունավետությամբ իրականացնել դիմողի՝ ՀՀ Սահմանադրությամբ և այլ իրավական ակտերով նախատեսված իրավունքների պաշտպանությունը, ապա. • իրավասու է իր հայեցողությամբ որոշելու տվյալ վարչական մարմնին փոխօգնության հարցով դիմելու կամ չդիմելու հարցը • իրավասու չէ դիմելու տվյալ վարչական մարմնի օգնությանը • **պարտավոր է դիմել տվյալ վարչական մարմնի օգնությանը** • պարտավոր է առաջնորդվել վարույթի մասնակցի կարծիքով
5	Ըստ ՀՀ Սահմանադրական դատարանի դիրքորոշման՝ վարչական մարմնի արագ գործելու պարտականությունն արդյո՞ք չի բացառում վարչական վարույթի մասնակցի ծանուցվելու, լսվելու և ապացույցներ ներկայացնելու իրավունքների իրացման հնարավորությունը. • այո, բացառում է • ոչ, չի բացառում • **ոչ, չի բացառում, եթե այդ ակտի ընդունումը կանխորոշված չէ օրենքով** • յուրաքանչյուր դեպքում վարչական մարմինը որոշում է իր հայեցողությամբ
6	Ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման՝ որ ակտն է իրավական նորմ պարունակում. • ռեալ ակտը • **համայնքի բյուջեն հաստատելու մասին համայնքի ավագանու որոշումը** • համայնքի ղեկավարի կողմից արձակված վարչական ակտը • համայնքի ղեկավարի կողմից արձակված՝ իր հետ աշխատանքային հարաբերություններում գտնվող անձանց ուղղված ակտը
7	Ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման՝ նորմատիվ ակտ է հանդիսանում. • **համայնքի բյուջեն հաստատելու մասին համայնքի ավագանու որոշումը** • արտոնագիր տրամադրելու մասին իրավասու վարչական մարմնի որոշումը • համայնքի ղեկավարի կողմից արձակված վարչական ակտը • հիմնարկի ղեկավարի կողմից արձակված՝ իր հետ աշխատանքային հարաբերություններում գտնվող անձանց ուղղված ակտը

8	Ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման՝ վարչական ակտի հիմնական հատկանիշ է հանդիսանում. • իրավական նորմ պարունակելու հանգամանքը • **անհատական իրավական ակտ հանդիսանալու հանգամանքը** • գործադիր իշխանության մարմինների բնականոն աշխատանքին ուղղված լինելու հանգամանքը • մասնավոր իրավունքի ոլորտում ընդունված լինելու հանգամանքը
9	Ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման՝ վարչական ակտով անձի վրա ոչ իրավաչափ պարտականություն դնելը, որը կարող է պարզվել այդ վարչական ակտի վիճարկման արդյունքում. • **բավարար չէ վարչական ակտն առոչինչ ճանաչելու համար** • բավարար է վարչական ակտն առոչինչ ճանաչելու համար • բավարար չէ վարչական ակտն առոչինչ ճանաչելու համար, եթե վերաբերում է ոչ իրավաչափ իրավունք տրամադրելուն • բավարար է վարչական ակտն առոչինչ ճանաչելու համար, եթե վերաբերում է ոչ իրավաչափ պարտականություն դնելուն
10	Ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման՝ վարչական ակտով անձին ոչ իրավաչափ իրավունք տրամադրելը, որը կարող է պարզվել այդ վարչական ակտի վիճարկման արդյունքում. • բավարար է վարչական ակտն առոչինչ ճանաչելու համար, եթե վերաբերում է ոչ իրավաչափ պարտականություն դնելուն • բավարար է վարչական ակտն առոչինչ ճանաչելու համար • բավարար չէ վարչական ակտն առոչինչ ճանաչելու համար, եթե վերաբերում է ոչ իրավաչափ իրավունք տրամադրելուն • **բավարար չէ վարչական ակտն առոչինչ ճանաչելու համար**
11	Ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման՝ վարչական ակտի առոչինչ լինելը հաստատված համարելու համար անհրաժեշտ է, որ. • վարչական ակտով անձի վրա ոչ իրավաչափ պարտականություն դնելը կամ անձին ոչ իրավաչափ իրավունք տրամադրելը, կարող է պարզվել այդ վարչական ակտի վիճարկման արդյունքում • նորմատիվ ակտով տրամադրված իրավունքը կամ դրած պարտականությունը առերևույթ ոչ իրավաչափ լինի • **վարչական ակտով տրամադրված իրավունքը կամ դրած պարտականությունը առերևույթ ոչ իրավաչափ լինի** • վարչական ակտով տրամադրված իրավունքը կամ դրած պարտականությունը ոչ իրավաչափ լինի

12	Ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման՝ վարչական ակտն առոչինչ չի կարող ճանաչվել. • **երբ վիճարկվում է վարչական ակտի հիմքում դրված հանգամանքների հավաստիությունը, կամ կիրառված նորմի սխալ կիրառելիությունը, կամ մեկնաբանությունը** • երբ վիճարկվում է վարչական ակտով տրամադրված իրավունքը կամ դրած պարտականությունն առերևույթ ոչ իրավաչափ լինելը • երբ վիճարկվում է վարչական ակտով տրամադրված իրավունքն առերևույթ ոչ իրավաչափ լինելը • երբ վիճարկվում է վարչական ակտով դրված պարտականության առերևույթ ոչ իրավաչափ լինելը
13	Ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման՝ հարկային օրենսդրության խախտման համար պատասխանատվություն կիրառելու ժամկետն անցնելու հիմքով պատասխանատվություն սահմանող վարչական ակտում արդեն իսկ առկա է. • վարչական ակտն առոչինչ լինելու հիմք, ոչ իրավաչափ իրավունք տրամադրելը • վարչական ակտն առոչինչ լինելու հիմք, ոչ իրավաչափ պարտականություն դնելը • վարչական ակտն առոչինչ լինելու հիմք՝ օրենքի սխալ մեկնաբանումը • **վարչական ակտն առոչինչ լինելու հիմք, ակնհայտ ոչ իրավաչափ պարտականություն դնելը**
14	Խաղաղ երթի ընթացքում մասնակիցները, դուրս գալով մայթերից և շարժվելով չսահմանված վայրերով (երթևեկելի փողոցներով), խոչընդոտում են ճանապարհային երթևեկությանը: Ոստիկանությունը ճանապարհային երթևեկության անվտանգությունն ապահովելու նպատակով ցրում է երթը: Նկարագրված իրավիճակում. • **խախտվում է համաչափության սկզբունքը** • խախտվում է առավելագույնի սկզբունքը • խախտվում է ձևական պահանջների չարաշահման սկզբունքը • չի խախտվում համաչափության սկզբունքը

15	Անձը, դիմելով վարչական մարմին, ներկայացնում է վարչական դատարանի վճիռը, վերաքննիչ և վճռաբեկ բողոքները մերժելու մասին վարչական վերաքննիչ և վճռաբեկ դատարանների որոշումները: Ի լրումն ներկայացված փաստաթղթերի, վարչական մարմինը պահանջում է ներկայացնել նաև վարչական դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը հավաստող ապացույց: Դրանով վարչական մարմինը վարչարարության որ սկզբունքն է խախտում. • ձևական պահանջները չարաշահելու արգելքը. • առավելագույնի սկզբունքը. • **և ձևական պահանջները չարաշահելու արգելքը, և առավելագույնի սկզբունքը** • որևէ սկզբունք չի խախտում
16	Վարչարարությունում արդյոք գործում է իրավահավասարության սկզբունքը. • **այո** • այո, եթե այն սահմանված է հատուկ օրենքով • այո, սակայն այն կիրառվում է վարչական մարմնի հայեցողությամբ • ոչ
17	Ձևական պահանջները չարաշահելու արգելքը վարչական մարմիններին վարչարարություն իրականացնելիս արգելում է. • անձանց ծանրաբեռնել այնպիսի պարտականություններով, որոնք նրանք օրենքով չեն կրում • անձանցից պահանջել պահպանելու վարչարարության ձևական պահանջները • **անձանցից պահանջել կատարելու այնպիսի գործողություններ, որոնք վերջիններիս կողմից, ըստ էության, կատարվել են** • անձանցից պահանջել ներկայացնելու այնպիսի փաստաթղթեր, որոնք վերջիններիս կողմից արդեն իսկ ներկայացվել են
18	Վարչական մարմինների լիազորությունները կարող են սահմանվել ենթաօրենսդրական ակտերով. • **միայն օրենքով նախատեսված դեպքերում** • միայն ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում • ցանկացած դեպքում • ՀՀ Նախագահի հրամանագրերով, ՀՀ կառավարության որոշումներով և ՀՀ վարչապետի որոշումներով նախատեսված դեպքերում

19	Ոստիկանությունը հրահանգում է խաղաղ ընթացք ստացած հանրահավաքի դադարեցման մասին. • ոստիկանությունն արձակում է այլ ձևի վարչական ակտ • ոստիկանությունն արձակում է նորմատիվ ակտ • **ոստիկանությունն արձակում է բանավոր վարչական ակտ** • ոստիկանությունն արձակում է ռեալ ակտ
20	Հեռահաղորդակցության արտոնագիր տրամադրելու իրավասություն ունեցող վարչական մարմինն արտոնագիր տրամադրելու դեպքում միևնույն փաստական հանգամանքներում հինգ իրավաբանական անձանց արտոնագրելու դեպքում իրավունք ունի մերժելու միևնույն փաստական հանգամանքներում վեցերորդ իրավաբանական անձին. • **ոչ, իրավունք չունի, քանի որ վարչական մարմինը կխախտի կամայականության արգելքի սկզբունքը** • ոչ, իրավունք չունի քանի որ վարչական մարմինը կխախտի առավելագույնի սկզբունք • ոչ, իրավունք չունի քանի որ վարչական մարմինը կխախտի հավասարության կանխավարկածը • այո, իրավունք ունի
21	Եթե օրենքը վարչական մարմնին լիազորել է մանրածախ առևտրի կանոնները խախտած անհատ ձեռնարկատիրոջը նախազգուշացնել կամ տուգանել, ապա վարչական մարմինը մանրածախ առևտրի կանոնները խախտած անհատ ձեռնարկատիրոջ գործունեությունը դադարեցնելու իրավունք ունի. • այո, իրավունք ունի • ոչ, իրավունք չունի, քանի որ վարչական մարմինը կխախտի առավելագույնի սկզբունքը • ոչ, իրավունք չունի, քանի որ վարչական մարմինը կխախտի հավասարության կանխավարկածը • **ոչ, իրավունք չունի, քանի որ վարչական մարմնի նման գործողությունը կամ որոշումը դուրս է օրենքով սահմանված հայեցողության շրջանակներից**
22	Վարչական մարմնի գործունեությունը, որը վերաբերում է միայն վարչական մարմնի ներսում գործող հանրային ծառայողներին (վարչական մարմնի ներքին գործունեությունը) ՎՀՎՎՕ-ի իմաստով վարչարարություն է. • այո, վարչարարություն է • վարչարարություն է միայն առանձին օրենքներով նախատեսված դեպքերում • **ոչ, վարչարարություն չէ** • ոչ, վարչարարություն չէ, բացառությամբ ՀՀ կառավարության որոշումներով և ՀՀ վարչապետի որոշումներով նախատեսված դեպքերի

23	Եթե վարչական մարմինը հիմնավոր կասկածներ ունի քննարկվող փաստական հանգամանքի ապացուցման պարտականությունը կրող վարչական վարույթի մասնակցի ներկայացրած բացատրություններում տեղ գտած տվյալների, տեղեկությունների իսկության վերաբերյալ, ապա. • **պարտավոր է ինքնուրույն և իր հաշվին ձեռնարկել միջոցներ՝ դրանց իսկության մեջ հավաստիանալու համար** • կարող է ապացուցված չհամարել քննարկվող փաստական հանգամանքը, քանի որ դրա ապացուցման պարտականությունը կրում է վարչական վարույթի մասնակիցը • պարտավոր է ինքնուրույն և իր հաշվին ձեռնարկել միջոցներ՝ քննարկվող փաստական հանգամանքն ապացուցելու ուղղությամբ • կարող է վարչական վարույթի մասնակցից պահանջել լրացուցիչ ապացույցներ
24	Իրավաբանական անձին հեռահաղորդակցության բնագավառում արտոնագիր տալը ՎՀՎՎՕ-ի իմաստով վարչարարություն է. • **այո, վարչարարություն է** • ոչ, վարչարարություն չէ • ոչ, վարչարարություն չէ, բացառությամբ՝ ՀՀ Նախագահի հրամանագրով նախատեսված դեպքերի • ոչ, վարչարարություն չէ, բացառությամբ՝ ՀՀ կառավարության որոշումներով և ՀՀ վարչապետի որոշումներով նախատեսված դեպքերի
25	Վարչական մարմնի իրավասու ստորաբաժանման պետի հրամանն իր ենթակային՝ իրավաբանական անձին հեռահաղորդակցության բնագավառում արտոնագիր տալու հարց ուսումնասիրելու մասին ՎՀՎՎՕ-ի իմաստով վարչարարություն է. • այո, վարչարարություն է • **ոչ, վարչարարություն չէ** • ոչ, վարչարարություն չէ, բացառությամբ՝ ՀՀ Նախագահի հրամանագրով նախատեսված դեպքերի • ոչ, վարչարարություն չէ, բացառությամբ՝ ՀՀ կառավարության որոշումներով և ՀՀ վարչապետի որոշումներով նախատեսցած դեպքերի
26	Ո՞րն է վարչական վարույթի հասկացության բովանդակությունը ըստ <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի. • **վարչական մարմնի՝ վարչական ակտ ընդունելուն ուղղված գործունեությունն է** • վարչական մարմնի՝ ներքին ակտ ընդունելուն ուղղված գործունեությունն է • վարչական մարմնի՝ նորմատիվ ակտ ընդունելուն ուղղված գործունեությունն է • վարչական մարմնի՝ իրավական հետևանք առաջացնող ակտ ընդունելուն ուղղված գործունեությունն է

27	Ի՞նչ փուլերից է բաղկացած վարչական վարույթը. • միմյանց փոխկապակցված՝ վարույթի հարուցման և ընթացիկ փուլերից • ընթացիկ և եզրափակիչ փուլերից • **միմյանց փոխկապակցված՝ վարույթի հարուցման, ընթացիկ և եզրափակիչ փուլերից** • միմյանց փոխկապակցված՝ վարույթի հարուցման, ընթացիկ, եզրափակիչ և կատարման փուլերից
28	Ի՞նչի հիման վրա է հարուցվում վարչական վարույթը. • **անձի (անձանց) դիմումի կամ վարչական մարմնի նախաձեռնության հիման վրա (հարուցման փուլ)** • միայն անձի (անձանց) դիմումի հիման վրա (հարուցման փուլ) • միայն վարչական մարմնի նախաձեռնության հիման վրա (հարուցման փուլ) • անձի (անձանց) դիմումի, վարչական մարմնի նախաձեռնության, ինչպես նաև վարչական մարմնի վերադաս մարմնի ցուցումի հիման վրա (հարուցման փուլ)
29	Ինչպե՞ս է եզրափակվում վարչական վարույթը. • նորմատիվ, վարչական կամ անհատական ակտի ընդունմամբ (եզրափակիչ փուլ) • նորմատիվ ակտի ընդունմամբ (եզրափակիչ փուլ) • ներքին, անհատական, ինչպես նաև վարչական ակտի ընդունմամբ (եզրափակիչ փուլ) • **վարչական ակտի ընդունմամբ (եզրափակիչ փուլ)**
30	Անմիջական սպառնացող վտանգը կանխելու կամ արդեն իսկ առաջացած վտանգի հետևանքները վերացնելու, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում ի՞նչ փուլով կարող է սահմանափակվել վարչական վարույթը. • միայն հարուցման փուլով • **միայն եզրափակիչ փուլով** • միայն ընթացիկ փուլով • միայն հարուցման և ընթացիկ փուլերով
31	Ովքե՞ր են հանդիսանում վարչական վարույթի մասնակիցներ. • միայն վարչական ակտի հասցեատերը • միայն երրորդ անձինք • **վարչական ակտի հասցեատերը, երրորդ անձինք** • վարչական ակտի հասցեատերը, երրորդ անձինք, փորձագետը, վկան, թարգմանիչը

32	Ովքե՞ր են այլ անձինք վարչական վարույթում. · միայն վկաները, փորձագետները · միայն փորձագետները, թարգմանիչները · երրորդ անձինք, վկաները, մասնագետները, թարգմանիչները, ինչպես նաև պետական ու տեղական ինքնակառավարման մարմինները · **վկաները, փորձագետները, թարգմանիչները, ինչպես նաև պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների (այսուհետ՝ այլ մարմիններ) ներկայացուցիչները**
33	Վարչական վարույթում ինչպե՞ս կարող են մասնակցել վարույթի մասնակիցները. · **ինքնուրույն, իրենց ներկայացուցիչների միջոցով կամ նրանց հետ միասին** · ինքնուրույն կամ իրենց ներկայացուցիչների միջոցով · ինքնուրույն, իրենց ներկայացուցիչների միջոցով կամ նրանց հետ միասին, եթե ներկայացուցիչն ունի բարձրագույն իրավաբանական կրթություն · ինքնուրույն և բարձրագույն իրավաբանական կրթություն ունեցող իրենց ներկայացուցիչների միջոցով
34	Վարչական մարմնի կողմից իրականացված փաստացի ներգործությունը (ռեալ ակտ). · **ֆիզիկական այն ազդեցությունն է, որն առաջացնում է իրավիճակի փաստացի փոփոխություն կամ փոփոխության ենթակա իրավիճակի պահպանում** · ֆիզիկական այն ազդեցությունն է, որն առաջացնում է իրավիճակի փաստացի փոփոխություն · ֆիզիկական այն ազդեցությունն է, որն առաջացնում է փոփոխության ենթակա իրավիճակի պահպանում · իրավիճակի կարգավորմանն ուղված գործունեություն է
35	Ե՞րբ կարող է հայտնվել բացարկ վարչական վարույթում. · **մինչև վարչական վարույթն ավարտվելը** · մինչև լսումներ անցկացնելը · մինչև գործը քննության ընդունելը · վարույթ հարուցելուց հետո 3 օրյա ժամկետում
36	Ո՞վ է որոշում ընդունում վարչական մարմնի ղեկավարին հայտնած բացարկի վերաբերյալ. · այդ նպատակով ստեղծված հանձնաժողովը՝ կոլեգիալ կազմով · ղեկավարին փոխարինելու լիազորություն ունեցող պաշտոնատար անձը · վերադաս պաշտոնատար անձը · **վարչական մարմնի ղեկավարն ինքը**

37	Վարչարարության հիմնարար սկզբունքները չեն տարածվում. • անձանց համար փաստական հետևանքներ առաջացնող գործողությունների և անգործության (ռեալ ակտ) վրա • վարչական մարմինների՝ հանրային իրավունքի բնագավառում իրականացվող գործունեության վրա • վարչական մարմինների՝ վարչական ակտի ընդունմամբ եզրափակվող գործունեության վրա • **վարչական մարմինների և ֆիզիկական ու իրավաբանական անձանց քաղաքացիաիրավական հարաբերությունների նկատմամբ**
38	Ո՞ր լեզվով է իրականացվում վարչական վարույթը և ո՞ր լեզվով է ընդունվում վարչական ակտը. • վարչական վարույթը մասնակիցների միջնորդությամբ կարող է անցկացվել համապատասխան փոքրամասնության լեզվով, իսկ վարչական ակտն ընդունվում է հայերենով • վարչական վարույթը կարող է անցկացվել և վարչական ակտը կարող է ընդունվել վարույթի մասնակցի միջնորդությամբ համապատասխան փոքրամասնության լեզվով • **վարչական վարույթն իրականացվում և վարչական ակտն ընդունվում է հայերենով** • վարչական վարույթը կարող է իրականացվել վարույթի մասնակիցներին հասկանալի ցանկացած լեզվով, իսկ վարչական ակտն ընդունվում է հայերենով
39	Վարչական ակտ է հանդիսանում. • անձին տեղեկանք տրամադրելը • **անձին վարորդական իրավունքի վկայական տրամադրելը** • անձի իրավունքը սահմանափակող փոփոխության ենթակա իրավիճակի պահպանումը • անձի իրավունքը սահմանափակող իրավիճակի վրա փաստացի ներգործումը
40	Վարչական ակտ չի հանդիսանում. • անձին հարկային պարտականությունը չկատարելու համար տուգանելը • անձին վարորդական իրավունքի վկայական տրամադրելը • անձի շինարարական թուլտվություն տրամադրելը • **անձի իրավունքը սահմանափակող իրավիճակի վրա փաստացի ներգործումը**

41	Ռեալ ակտ է հանդիսանում. · ավագանու կողմից ընդունված իրավական նորմ պարունակող որոշումը · **իրավասու մարմնի կողմից տեղեկանքի տրամադրումը** · անձին շինարարական թուլտվություն տրամադրելը · նախարարի հրամանը
42	Ստորև նշվածներից ո՞րը վարչական վարույթ հարուցելու հիմք չէ. · անձի դիմումը · անձի բողոքը · վարչական մարմնի նախաձեռնությունը · **այդ հարաբերությունները կարգավորող օրենսդրության փոփոխությունը**
43	Ռեալ ակտ չի հանդիսանում. · վարչական մարմնի կողմից որոշակի գումարի վճարումը · վարչական մարմնի կողմից տեղեկանքի տրամադրումը · վարչական մարմնի կողմից տրամադրված տեղեկատվական ծանուցումները · **ավագանու կողմից ընդունված իրավական նորմ պարունակող որոշումը**
44	Ի՞նչ է կատարվում, երբ դիմումը ներկայացվել է ոչ իրավասու վարչական մարմնին. · դիմումը ստացած վարչական մարմինը մերժում է վարչական վարույթ հարուցելը · դիմումը ստացած վարչական մարմինը հնգօրյա ժամկետում դա վերահասցեագրում է իրավասու վարչական մարմին՝ ծանուցելով դիմողին · **դիմումը ստացած վարչական մարմինը եռօրյա ժամկետում դա վերահասցեագրում է իրավասու վարչական մարմին՝ ծանուցելով դիմողին** · վարչական մարմինը դիմումին ընթացք չի տալիս
45	Որո՞նք են վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելու հիմքերը. · **վարչական ակտ ընդունելու վերաբերյալ օրենքի պահանջը, դրանից բխող անհրաժեշտությունը կամ օրենքով վարչական մարմնին վերապահված հայեցողական լիազորությունը** · վարչական ակտ ընդունելու վերաբերյալ օրենսդրության պահանջը, դրանից բխող անհրաժեշտությունը կամ օրենքով, Հանրապետության Նախագահի հրամանագրով վարչական մարմնին վերապահված հայեցողական լիազորությունը · վարչական ակտ ընդունելու վերաբերյալ օրենքի, ՀՀ կառավարության

	որոշման պահանջը, դրանցից բխող անհրաժեշտությունը կամ օրենքով վարչական մարմնին վերապահված լիազորությունը • ՀՀ կառավարության ծրագրի կատարման անհրաժեշտությունը
46	Դիմումի հիման վրա վարչական մարմինը վարչական վարույթի հարուցումից հետո ի՞նչ ժամկետում է ծանուցում վարույթի մասնակիցներին. • հնգօրյա ժամկետում • **եռօրյա ժամկետում** • մեկօրյա ժամկետում • անհապաղ
47	Վարչական մարմինն իր նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելիս վարույթի մասնակիցներին կամ նրանց ներկայացուցիչներին ո՞ր դեպքում է պատշաճ ձևով ծանուցում վարչական վարույթ հարուցելու մասին. • **եթե վարչական վարույթի հարուցումից մինչև վարչական ակտն ընդունելու միջև ընկած ժամանակահատվածը երեք օրից ավելի է** • եթե վարչական վարույթի հարուցումից մինչև վարչական ակտն ընդունելու միջև ընկած ժամանակահատվածը 24 ժամից ավելի է • եթե վարչական վարույթի հարուցումից մինչև վարչական ակտն ընդունելու միջև ընկած ժամանակահատվածը 3 ժամից ավելի է • բոլոր դեպքերում
48	Ի՞նչ ժամկետում է պարտավոր վարչական մարմինն ընդունելու վարչական ակտ, եթե վարչական վարույթ հարուցելուց հետո վարչական մարմնի տրամադրության տակ առկա են համապատասխան վարչական ակտ ընդունելու համար անհրաժեշտ փաստաթղթերը, բավարար չափով պարզաբանված և ճշգրտված են տվյալ գործի հանգամանքները. • նշված հանգամանքների ի հայտ գալուց հետո՝ հնգօրյա ժամկետում • նշված հանգամանքների ի հայտ գալուց հետո՝ անհապաղ • նշված հանգամանքների ի հայտ գալուց հետո՝ եռօրյա ժամկետում • **նշված հանգամանքների ի հայտ գալուց հետո՝ ողջամիտ ժամկետում՝ չսպասելով ընդհանուր կամ հատուկ ժամկետի լրանալուն**

49	Ի՞նչ է պարտավոր ապահովել վարչական մարմինը. **· փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները** · փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, բացառությամբ դիմումատուի օգտին առկա հանգամանքների: Դիմումատուի օգտին առկա հանգամանքների բացահայտման պարտականությունը կրում է դիմող կողմը · փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը, եթե դա չի հակասում ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգությանը, հասարակական կարգի պահպանմանը, հանցագործությունների կանխմանը · փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը, եթե դա չի հակասում, ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգությանը, հասարակական կարգի պահպանմանը, հանցագործությունների կանխմանը, հանրության առողջության և բարոյականությանը, այլոց սահմանադրական իրավունքներին և ազատություններին
50	Խճուղում շրջվել է բենզինի բաքով բեռնատար ավտոմեքենան: Բենզինը թափել-ծածկել է ճանապարհը և ներթափանցում է գյուղատնտեսական նպատակներով օգտագործվող սահմանակից խաղողի այգիներ: Իրավասու վարչական մարմինը միջամտում է, ավազ է ցանում ճանապարհին՝ բենզինը չեզոքացնելու, չորացնում բենզափոսերը և հեռացնել է տալիս նավթով ապականված վարելահողը. **· վարչական մարմինն իրականացրել է գործողություն, որն անձանց համար առաջացրել է փաստական հետևանքներ (ռեալ ակտ)** · վարչական մարմինն իրականացրել է գործողություն, որն անձանց համար առաջացրել է փաստական հետևանքներ (նորմատիվ ակտ) · վարչական մարմինն իրականացրել է գործողություն, որն անձանց համար առաջացրել է փաստական հետևանքներ (վարչական ակտ) · վարչական մարմինն իրականացրել է գործողություն, որն անձանց համար առաջացրել է փաստական հետևանքներ (ներքին ակտ)
51	Վարչական մարմնի գործունեության հրապարակայնությունը և վարչական վարույթի իրականացման ժամանակ այդ մարմնի անաչառությունն ապահովելու նպատակով ովքե՞ր իրավունք ունեն վարույթն իրականացնող մարմնում ծանոթանալ վարչական վարույթի նյութերին. · վարչական վարույթի մասնակիցները և վարչական մարմնի ղեկավար մարմնի ներկայացուցիչները · վարչական վարույթի մասնակիցները, վկաները, մասնագետները, փորձագետները

	• **վարչական վարույթի մասնակիցները** • վարչական վարույթի մասնակիցները և մամուլի ներկայացուցիչները
52	Եթե վարչական վարույթ հարուցելու դիմումը ներկայացվել է ոչ իրավասու վարչական մարմին, ապա վարչական մարմինը. • **վարչական մարմինը եռօրյա ժամկետում դա վերահասցեագրում է իրավասու վարչական մարմին՝ ծանուցելով դիմողին** • վարչական մարմինը եռօրյա ժամկետում դա վերահասցեագրում է իրավասու վարչական մարմին • վարչական մարմինը եռօրյա ժամկետում դիմումը վերադարձնում է դիմողին • վարչական մարմինը եռօրյա ժամկետում դիմումը վերադարձնում է դիմողին նշելով իրավասու վարչական մարմնին
53	Ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման՝ վարչական մարմնի անձին ծանուցման ձևն ընտրելու հայեցողությունը պետք է իրականացվի այնպես. • ինչպես նպատակահարմար կգտնի վարչական մարմինը • **որպեսզի իրագործվի համապատասխան օրենքով (օրենքներով) հետապնդված նպատակը, այն է՝ անձի վերաբերյալ հարուցված վարչական վարույթի իրականացման մասին ծանուցումը նրան պետք տրամադրվի այնպես, որ ողջամտորեն ապահովվի վերջինիս մասնակցությունը վարչական վարույթին** • ինչպես նպատակահարմար կգտնի վարչական մարմնի վերադաս վարչական մարմինը • որպեսզի իրագործվի համապատասխան կառավարության որշմամբ հետապնդված նպատակը, այն է՝ անձի վերաբերյալ հարուցված վարչական վարույթի իրականացման մասին ծանուցումը նրան պետք տրամադրվի այնպես, որ ողջամտորեն ապահովվի վերջինիս մասնակցությունը վարչական վարույթին

54	Անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում որպես կանոն ո՞վ է կրում ապացուցման պարտականությունը համաձայն <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 43 հոդվածի 1-ին մասի. • **անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում** • վարչական մարմինն անձի համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում • անձը՝ նրա համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում • վարչական մարմինը
55	ՀՀ կառավարությունը կարող է հանդես գալ, որպես վարչական մարմին. • ոչ • այո, եթե նպատակահարմար կգտնի • այո, օրենքով նախատեսված դեպքերում կարող է հանդես գալ որպես վարչական մարմին • այո, վարչապետի որոշումներով նախատեսված դեպքերում
56	Վարչական մարմնի անձի համար լրացուցիչ հանրային պարտականությունները նախատեսող իրավական նորմ չպարունակող իրավական ակտը հանդիսանում է. • նորմատիվ իրավական ակտ • **վարչական ակտ** • գործողություն • անգործություն

57	Ե՞րբ է սկսվում վարչական վարույթի ժամկետը. • դիմումը տվյալ վարչական մարմնում մուտքագրելու, ինչպես նաև դիմումը փոստային ծառայությանը հանձնելու օրվանից, իսկ վարչական մարմնի նախաձեռնությամբ ընդունվելիք վարչական ակտերի համար՝ նախաձեռնության օրվանից • **դիմումը տվյալ վարչական մարմնում մուտքագրելու օրվանից, իսկ վարչական մարմնի նախաձեռնությամբ ընդունվելիք վարչական ակտերի համար՝ նախաձեռնության օրվանից** • դիմումի հիման վրա տվյալ վարչական մարմնում վարույթ հարուցելու օրվանից, իսկ վարչական մարմնի նախաձեռնությամբ ընդունվելիք վարչական ակտերի համար՝ նախաձեռնության վերաբերյալ իրազեկման օրվանից • դիմումը տվյալ վարչական մարմնում մուտքագրելու օրվանից, իսկ վարչական մարմնի նախաձեռնությամբ ընդունվելիք վարչական ակտերի համար՝ նախաձեռնության վերաբերյալ իրազեկման օրվանից
58	Ի՞նչ իրավական հետևանք է առաջացնում դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի արդյունքում օրենքով սահմանված ժամկետում վարչական ակտ ընդունելու իրավասություն ունեցող վարչական մարմնի կողմից ակտը չընդունելը. • վարչական վարույթը երկարացվում է 5 օրով • դիմումը համարվում է մերժված • **վարչական ակտը համարվում է ընդունված, և դիմողը կարող է ձեռնամուխ լինել համապատասխան իրավունքի իրականացմանը** • վարչական վարույթը վերսկսվում է
59	ՎՀՎՎՕ-ում ամրագրված է. • ձևական պահանջների չարաշահման սկզբունքը • ձևական պահանջների պարտադիրության սկզբունքը • **ձևական պահանջների չարաշահման արգելքի սկզբունքը** • ձևական պահանջների անտեսման սկզբունքը

60	Ստորև նշված հիմքերից ո՞րն է վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը կարճելու հիմք. • դատարանի վարույթում գտնվում է միևնույն առարկայի վերաբերյալ և միևնույն հիմքերով գործ • դիմումն անթույլատրելի է • փոխվել է դիմողի կարգավիճակը, որն օրենքի ուժով բացառում է դիմումով հայցվող վարչական ակտի ընդունումը • **օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումների կամ դրանց կանխման հետ չկապված հարցով իրավիճակի փոփոխման կամ օրենքով նախատեսված այլ հիմքով վերացել է վարչական ակտի ընդունման անհրաժեշտությունը**
61	Համապատասխան իրավասու վարչական մարմինն իր որոշմամբ մերժում է անշարժ գույքի պետական գրանցումը: Սույն որոշումը հանդիսանում է. • նորմատիվ իրավական ակտ • **վարչական ակտ** • ռեալ ակտ • ներքին ակտ
62	ՎՀՎՎՕ-ի համաձայն՝ վարչական ակտը կարող է պարունակել ընդհանուր և անորոշ հասցեատերերի ուղղված կարգավորումներ. • **ոչ** • այո, եթե վարչական մարմինը նպատակահարմար կգտնի • այո, եթե վարչական մարմնի վերադաս մարմինը նպատակահարմար կգտնի • այո, ՀՀ վարչապետի համապատասխան որոշմամբ սահմանված կարգով

63	Ի՞նչ ժամկետներում անձը կարող է դիմել բողոքարկման ոչ ենթակա վարչական ակտը փոփոխելու, անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ. • **դիմումը պետք է տրվի 3 ամսվա ընթացքում այն օրից, երբ վարույթը վերսկսելու հարցով դիմած անձն իմացել է վարչական վարույթը վերսկսելու հիմք դարձած որևէ հանգամանքի (հանգամանքներ) մասին** • դիմումը պետք է տրվի 6 ամսվա ընթացքում այն օրից, երբ վարույթը վերսկսելու հարցով դիմած անձն իմացել է վարչական վարույթը վերսկսելու հիմք դարձած որևէ հանգամանքի (հանգամանքներ) մասին • դիմումը պետք է տրվի վարչական ակտն ընդունելուց հետո 3 տարվա ընթացքում • դիմումը պետք է տրվի վարչական ակտն ընդունելուց հետո 10 տարվա ընթացքում
64	Եթե վարչական ակտ ընդունելու համար անհրաժեշտ է նաև վարչական այլ մարմինների թույլտվությունը կամ համաձայնությունը, ապա ո՞վ է իրականացնում դրանք հայցելու և ստանալու համար անհրաժեշտ գործողությունները, ներառյալ՝ լրացուցիչ փաստաթղթեր հավաքելը. • ակտի հասցեատերը • դիմողը • **վարչական վարույթ հարուցած վարչական մարմինը** • ակտի հասցեատերը և վարչական վարույթը հարուցած վարչական մարմինը միասին
65	Համապատասխան իրավասու վարչական մարմնի որոշումն անձին փախստականի կարգավիճակ տրամադրելու մասին հանդիսանում է. • նորմատիվ իրավական ակտ • **վարչական ակտ** • ռեալ ակտ • ներքին ակտ
66	Ի՞նչ ձևի վարչական ակտ կարող է ընդունվել դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի արդյունքում. • միայն բանավոր վարչական ակտ • **միայն գրավոր վարչական ակտ** • գրավոր և բանավոր վարչական ակտ • գրավոր, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև բանավոր վարչական ակտ

67	Ճանապարհային ոստիկանության սպան իր մասնավոր սեփականությունը հանդիսացող մեքենայով խախտում է ճանապարհային երթևեկության կանոնները: Ճանապարհային ոստիկանության նույն ստորաբաժանման կողմից, որտեղ նա ծառայում է տուգանվում է ճանապարհային երթևեկության կանոնների համար: Այս իրավիճակում խախտում թույլ տված սպան հանդես է գալիս որպես. • օրենքով սահմանված պարտականությունները խախտած ոստիկան • օրենքով սահմանված պարտականությունները խախտած հանրային ծառայող • օրենքով սահմանված պարտականությունները խախտած սպա • **օրենքով սահմանված պարտականությունները խախտած ֆիզիկական անձ**
68	Հայցվող սակայն օրենքով սահմանված ժամկետում չարձակված և օրենքի ուժով ընդունված համարվող վարչական ակտն իր իրավական ներգործության ուժով. • զիջում է ժամանակին ընդունված վարչական ակտին • **չի զիջում ժամանակին ընդունված վարչական ակտին** • չի զիջում ժամանակին ընդունված վարչական ակտին միայն օրենքով սահմանված հատուկ դեպքերում • գերազանցում է ժամանակին ընդունված վարչական ակտին
69	Հայցվող սակայն օրենքով սահմանված ժամկետում չարձակված և օրենքի ուժով ընդունված համարվող վարչական ակտը. • ի սկզբանե անվիճարկելի է • վիճարկելի է միայն օրենքով սահմանված բացառիկ դեպքերում • **ի սկզբանե անվիճարկելի չէ, և կարող է նույն նախադրյալների առկայության դեպքում ինչ որ սահմանված ժամկետում ընդունված վարչական ակտը վերացվել** • ակտի հասցեատիրոջը հանձնելու օրվանից անվիճարկելի է
70	Ե՞րբ է գրավոր վարչական ակտը համարվում ընդունված. • **վարչական մարմնի իրավասու պաշտոնատար անձի կողմից ստորագրվելու օրվանից** • վարչական մարմնի կողմից հրապարակվելու օրվանից • վարչական մարմնի տեղեկագրում հրապարակվելու օրվանից • ակտի հասցեատիրոջը հանձնելու օրվանից

71	Գրավոր վարչական ակտի ընդունումից հետո ե՞րբ պետք է այն հանձնվի վարույթի մասնակիցներին. • **եռօրյա ժամկետում** • անհապաղ • հնգօրյա ժամկետում • ակտի հասցեատիրոջը հնգօրյա ժամկետում, իսկ մյուս մասնակիցներին ոչ ուշ, քան տասնօրյա ժամկետում
72	Գրավոր վարչական ակտում, ինչպես նաև դրա բաղկացուցիչ մաս կազմող փաստաթղթերում օրենքով սահմանված կարգով փոփոխություններ և լրացումներ կատարելու դեպքում այդ փոփոխությունները և լրացումները կատարած վարչական մարմինը պարտավոր է արդյո՞ք դրանք հանձնել վարչական ակտի հասցեատիրոջը. • **այո** • ոչ • այո՝ միայն օրենքով սահմանված դեպքերում • այո՝ ակտի հասցեատիրոջ պահանջով
73	Ճանապարհային ոստիկանության սպային՝ իր ղեկավարի կողմից ոստիկանության կանոնադրության խախտման համար նկատողություն է հայտատարվում: Այս իրավիճակում խախտում թույլ տված սպան հանդես է գալիս որպես. • ֆիզիկական անձ • **ծառայող** • հանրային սուբյեկտիվ իրավունքների կրող • օրենքով սահմանված պարտականությունները խախտած ֆիզիկական անձ
74	Վարչական ակտի հասցեատերը վարչական ակտի գոյությանը վստահելու իրավունք ունի, եթե նա. • համապատասխան վարչական ակտի ընդունմանը հասել է կաշառքի, սպառնալիքի կամ վարչական մարմնի պաշտոնատար անձին դիտավորյալ մոլորության մեջ գցելու միջոցով • համապատասխան վարչական ակտի ընդունմանը հասել է կեղծ կամ ոչ լրիվ փաստաթղթեր ներկայացնելու միջոցով • **եթե վարչական ակտի հիման վրա ստացածն արդեն իսկ օգտագործել է** • նախապես իմացել է վարչական ակտի ոչ իրավաչափ լինելու մասին կամ այդ մասին պարտավոր էր իմանալ՝ իր համար մատչելի տեղեկությունների հիման վրա

75	Ե՞րբ է վարչական ակտը դառնում անվիճարկելի. • **եթե վարչական ակտի ընդունման օրվանից անցել է 10 տարի, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի** • եթե վարչական ակտի ընդունման օրվանից անցել է 1 տարի, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի • եթե վարչական ակտի ուժի մեջ մտնելու օրվանից անցել է 1 տարի, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի • եթե վարչական ակտի ուժի մեջ մտնելու օրվանից անցել է 10 տարի, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի
76	Համապատասխան իրավասու վարչական մարմնի որոշումը սահմանափակ պատասխանատվության ընկերությանը պետական դրամական օգնություն տրամադրելու վերաբերյալ հանդիսանում է. • նորմատիվ իրավական ակտ • **վարչական ակտ** • ռեալ ակտ • ներքին ակտ
77	Ո՞ր մարմին կարող է ներկայացվել վարչական կարգով բողոքը. • **ակտն ընդունած վարչական մարմին, ակտը ընդունած վարչական մարմնի վերադաս վարչական մարմին** • միայն ակտը ընդունած մարմնի վերադաս մարմին • ակտը ընդունած մարմնի վերադաս մարմնին և կառավարություն • ակտը ընդունած մարմնի վերադաս մարմնին և ՀՀ կառավարությանը առընթեր ոստիկանություն
78	Ինչպե՞ս է վարչական վարույթում լուծվում հարցը, երբ ակտը բողոքարկվել է վարչական և դատական կարգով միաժամանակ. • բողոքը ենթակա է դատական քննության, եթե դատարանը պարտադիր չի համարել վարչական կարգով բողոքի քննարկումը • բողոքը քննվում է և վարչական, և դատական կարգով • բողոքը ենթակա է վարչական քննության, որի դեպքում դատարանում գործը կասեցվում է մինչև վարչական կարգով հարցի լուծումը • **բողոքը ենթակա է դատական քննության, որի դեպքում վարչական մարմնում հարուցված վարույթը կարճվում է**

79	Վարչական բողոքը ի՞նչ ժամկետում կարող է բերվել. • **վարչական ակտն ուժի մեջ մտնելու օրվանից 6 ամսվա ընթացքում** • վարչական ակտն ընդունելու օրվանից 6 ամսվա ընթացքում • վարչական ակտն ուժի մեջ մտնելու օրվանից 1 տարվա ընթացքում • վարչական ակտն ընդունելու օրվանից 1 տարվա ընթացքում
80	Համապատասխան իրավասու վարչական մարմնի որոշումն անձին պետական կենսաթոշակի նշանակման մասին հանդիսանում է. • նորմատիվ իրավական ակտ • **վարչական ակտ** • ռեալ ակտ • ներքին ակտ
81	Ո՞ր դեպքում վարչական բողոք բերելը չի կասեցնում բողոքարկվող վարչական ակտի կատարումը. • այն դեպքում, երբ անհապաղ կատարումն անհրաժեշտ է պետության շահերից ելնելով • **այն դեպքում, երբ անհապաղ կատարումն անհրաժեշտ է հանրային շահերից ելնելով** • այն դեպքում, երբ անհապաղ կատարումն անհրաժեշտ է այլոց սեփականության իրավունքը պաշտպանելու համար • այն դեպքում, երբ անհապաղ կատարումն անհրաժեշտ է այլոց իրավունքներից և ազատություններից ելնելով
82	Ինչո՞վ է առաջնորդվում վարչական մարմինը վարչական բողոքը քննարկելիս. • **ինչպես գործում առկա, այնպես էլ լրացուցիչ ներկայացվող ապացույցներով** • գործում առկա ապացույցներով • լրացուցիչ ապացույցներով • միայն լսումների ժամանակ ուսումնասիրված ապացույցներով

83	Քննարկելով վարչական ակտի վերաբերյալ բերված վարչական բողոքը՝ վարչական մարմինը, որն ընդունել է բողոքարկվող վարչական ակտը, ի՞նչ իրավասություն ունի. • **բավարարելու բողոքն ամբողջությամբ կամ մասնակիորեն՝ ճանաչելով վարչական ակտն անվավեր կամ առոչինչ կամ ընդունելով նոր վարչական ակտ** • բավարարելու բողոքն ամբողջությամբ կամ մասնակիորեն՝ ճանաչելով բողոքարկվող գործողությունը ամբողջությամբ կամ մասնակիորեն ոչ իրավաչափ և դադարեցնելով տվյալ գործողությունը, եթե բողոքի վերաբերյալ դիմում ընդունելու պահին այն շարունակվել է • մերժելու բողոքը՝ գործողության իրավաչափ լինելու պատճառաբանությամբ • մերժելու բողոքը՝ անգործության իրավաչափ լինելու պատճառաբանությամբ
84	Արդյո՞ք ընթացակարգային նորմերը խախտելը վարչական ակտի բեկանման հիմք կարող է դառնալ. • ոչ • այո • **միայն այն դեպքում, երբ բողոքը քննարկող վարչական մարմինն իրավասու չէ ընդունելու բողոքարկվող վարչական ակտը** • միայն այն դեպքում, երբ բողոքը քննարկող վարչական մարմինն իրավասու է ընդունելու բողոքարկվող վարչական ակտը
85	Համապատասխան իրավասու վարչական մարմնի կողմից անձին պետական կենսաթոշակի գումարի վճարումը հանդիսանում է. • նորմատիվ իրավական ակտ • վարչական ակտ • **ռեալ ակտ** • ներքին ակտ
86	Ո՞ր մարմինն է իրականացնում վարչական ակտի հարկադիր կատարումը. • **այդ ակտն ընդունած վարչական մարմինը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի** • ոստիկանությունը • դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը • այդ ակտն ընդունած վարչական մարմնի վերադաս վարչական մարմինը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի

87	Եթե գործողությունը պարտավոր անձի կողմից չի կատարվում կամ, եթե պարտավոր անձը ձեռնպահ չի մնում որևէ գործողություն կատարելուց, որի վերաբերյալ համապատասխան վարչական ակտ է ընդունվել, ի՞նչ չափի տուգանք կարող է նշանակվել. • նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով • նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով • **նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով** • նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից մինչև հազարապատիկի չափով
88	Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին օրենքի 82 հոդվածից ելնելով ի՞նչ կարգով է նշանակվում տուգանք. • դատարանի կարգադրությամբ՝ վարչական մարմնի որոշման հիման վրա • դատարանի հանձնարարականով՝ վարչական մարմնի որոշման հիման վրա • միայն դատարանի վճռով՝ շահագրգիռ անձի հայցադիմումի հիման վրա • **միայն դատարանի վճռով՝ վարչական մարմնի պահանջի հիման վրա**
89	Վարչական մարմնի կողմից ընդունված ենթաօրենսդրական ակտերը, որոնք ունեն ընդհանուր և վերացական բնույթ, արտաքին ներգործություն և ուղղված են ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերի կենսագործմանը՝ հանդիսանում են. • **նորմատիվ իրավական ակտ** • վարչական ակտ • ռեալ ակտ • ներքին ակտ
90	Վարչական վարույթում հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին պարտավոր անձը. • օրենքով սահմանված դեպքերում կարող է նախազգուշացվել • օրենքով սահմանված դեպքերում կարող է չզգուշացվել • **պետք է նախազգուշացվի** • վարչական մարմնի գրավոր որոշման հիման վրա կարող է զգուշացվել

91	Ինչպե՞ս պետք է կազմվի և ինչպե՞ս պետք է հանձնվի պարտավոր անձին հարկադրանքի միջոցների կիրառման մասին նախազգուշացումը վարչական վարույթում. • պարտավոր անձի պահանջով կազմվում է գրավոր և հանձնվում պարտավոր անձին նրա կողմից նշված եղանակով • պետք է կազմվի գրավոր և վարչական ակտի հետ միասին հանձնվի պարտավոր անձին • օրենքով սահմանված դեպքերում կազմվում է գրավոր և <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքով վարչական ակտերի հանձնման համար սահմանված կարգով և դեպքերում հանձնվում է պարտավոր անձին **• պետք է կազմվի գրավոր և <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքով վարչական ակտերի հանձնման համար սահմանված կարգով հանձնվի պարտավոր անձին**
92	Ի՞նչ կարող է արվել վարչական վարույթում, եթե պարտավոր անձը փոխարինող գործողության կամ անմիջական հարկադրանքի կիրառման ժամանակ դիմադրություն է ցույց տալիս. • պարտավոր անձը կարող է տուգանվել • պարտավոր անձը կարող է քրեական պատասխանատվության ենթարկվել • պարտավոր անձը կարող է կալանավորվել **• դիմադրությունը կարող է հաղթահարվել ուժի կիրառմամբ՝ օրենքով սահմանված կարգով**
93	Ա-ն դիմում է վարչական մարմին որոշակի լիցենզավորված գործունեությամբ զբաղվելու համար լիցենզիա ստանալու համար: Օրենքով սահմանված ժամկետում վարչական մարմինը լիցենզիա չի տրամադրել և դիմումին էլ ոչ մի պատասխան չի ներկայացրել: Կարող է արդյոք անձը հաստատված համարել<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի հիմքով հայցվող իրավունքի տրամադրումը. **• այո** • ոչ • անձը կարող է վարչական վարույթը հարուցված համարել • ոչ, քանի որ վարչական մարմնի իրավասու պաշտոնատար անձի կողմից նման վարչական ակտը ստորագրված չէ

94	Ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման՝ վարչական մարմնի վարչական ակտը պետք է պարունակի նշում. • այն բոլոր էական փաստական և իր հայեցողության նաև իրավական հիմքերի մասին, որոնք վարչական մարմնին թույլ են տվել ընդունելու վարչական ակտը • իր հայեցողությամբ այն բոլոր էական փաստական և իրավական հիմքերի մասին, որոնք վարչական մարմնին թույլ են տվել ընդունելու վարչական ակտը • այն բոլոր էական փաստական և իրավական հիմքերի մասին, որոնք վարչական մարմնին թույլ են տվել ընդունելու նորմատիվ իրավական ակտը **• այն բոլոր էական փաստական և իրավական հիմքերի մասին, որոնք վարչական մարմնին թույլ են տվել ընդունելու վարչական ակտը**
95	ՀՀ որ պաշտոնատար անձի որոշումները վարչական ակտ չեն կարող հանդիսանալ. **• ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի** • ՀՀ վարչապետի • Երևանի քաղաքապետի • ՀՀ արդարադատության նախարարի
96	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարի ստեղծված հանձնաժողովի արձանագրությունը՝ լինելով արտաքին ներգործության անհատական իրավական ակտ՝ ընդունված հանրային իրավունքի բնագավառում, որը ակտի հասցեատերերի համար առաջացնում է իրավական հետևանքներ, հանդիսանում է արդյոք վարչական ակտ. **• այո** • ոչ • ոչ, քանի որ դա ռեալ ակտ է • ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարի ստեղծված հանձնաժողովի արձանագրությունը վարչական ակտ չէ, քանի որ որևէ արձանագրություն չի կարող վարչական ակտ հանդիսանալ

97	Х կուսակցությունը իրավասու վարչական մարմնին տեղեկացնում է, որ ցանկանում է հանրահավաք անցկացնել: Իրավասու վարչական մարմինը Х կուսակցությունից պահանջում է օրենքով չնախատեսված տեղեկություններ կուսակցության բոլոր անդամների մասին: Իրավասու վարչական մարմինը. • խախտում է կամայականության արգելքի սկզբունքը • ոչինչ չի խախտում, քանի որ իր հայեցողությամբ իրավունք ունի պահանջելու օրենքով չնախատեսված տեղեկություններ • **խախտում է օրինականության սկզբունքը** • խախտում է հավասարության կանխավարկածը
98	Վստահության իրավունքն առաջանում է. • **միայն բարենպաստ վարչական ակտի գոյության հանդեպ** • միայն միջամտող վարչական ակտի գոյության հանդեպ • միայն ռեալ ակտի գոյության հանդեպ • ինչպես բարենպաստ և միջամտող վարչական ակտերի, այնպես էլ՝ ռեալ ակտի գոյության հանդեպ
99	Վստահության իրավունքը վերաբերում է. • միայն իրավաչափ վարչական ակտին • միայն ոչ իրավաչափ վարչական ակտին • միայն ռեալ ակտին • **ինչպես իրավաչափ, այնպես էլ ոչ իրավաչափ վարչական ակտին**
100	ՎՀՎՎՕ-ի համաձայն վարչական ակտի հիմնական հատկանիշ է հանդիսանում. • **հանրային իրավունքի ոլորտում ընդունված լինելը** • մասնավոր իրավունքի ոլորտում ընդունված լինելը • հանրային և մասնավոր իրավունքի ոլորտում ընդունված լինելը • միջազգային մասնավոր իրավունքի ոլորտում ընդունված լինելը

101	Ենթակա՞ է արդյոք հատուցման վարչական մարմինների կողմից իրականացվող վարչարարության հետևանքով անձանց պատճառված նասը. • **ենթակա է հատուցման՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի VII բաժնի դրույթներին համապատասխան** • ենթակա է հատուցման օրենքով սահմանված կարգով • ենթակա չէ հատուցման, բացառությամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի VII բաժնում սահմանված դեպքերի • ենթակա է հատուցման՝ կառավարության սահմանված կարգով
102	Ստորև նշվածներից ոչ իրավաչափ վարչարարության, իսկ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի VII բաժնով նախատեսված դեպքերում՝ նաև իրավաչափ վարչարարության հետևանքով անձանց պատճառված վնասի համար ո՞վ կարող է կրել պատասխանատվություն. • ՀՀ կառավարությունը • տվյալ վարչական մարմինը • ՀՀ ֆինանսների նախարարությունը • **Հայաստանի Հանրապետությունը**
103	Որո՞նք են վնասի հատուցման նախապայմանները վարչական վարույթում. • **վնասի հատուցում չի իրականացվում, քանի դեռ վարչական մարմնի իրավական ակտը, գործողությունը կամ անգործությունը, որով անձին վնաս է հասցվել, սահմանված կարգով ոչ իրավաչափ չի ճանաչվել, բացառությամբ իրավաչափ վարչարարությամբ հասցված վնասի** • վնասի հատուցում չի իրականացվում, քանի դեռ վարչական մարմնի իրավական ակտը, գործողությունը կամ անգործությունը, որով անձին վնաս է հասցվել, առոչինչ չի ճանաչվել • վնասի հատուցում չի իրականացվում, քանի դեռ վարչական մարմնի իրավական ակտը, գործողությունը կամ անգործությունը, որով անձին վնաս է հասցվել, առոչինչ չի ճանաչվել վերադաս վարչական մարմնի և դատարանի կողմից • վնասի հատուցումը կարող է իրականացվել, միայն վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական մարմնի իրավական ակտը, գործողությունը կամ անգործությունը, որով անձին վնաս է հասցվել՝ առոչինչ ճանաչելու դեպքում, բացառությամբ իրավաչափ վարչարարությամբ հասցված վնասի

104	Ինչպե՞ս է իրականացվում վնասի հատուցումը վարչական վարույթում. • միայն վարչարարությամբ առաջացած հետևանքները դրամական միջոցներով հատուցելու եղանակով • վարչարարությամբ առաջացած հետևանքները վերացնելու կամ համարժեք գույք տալու միջոցով • **վարչարարությամբ առաջացած հետևանքները վերացնելու կամ դրամական միջոցներով հատուցելու եղանակով** • միայն վարչարարությամբ առաջացած հետևանքները վերացնելու եղանակով
105	Ե՞րբ է բացառվում հետևանքները վերացնելը վարչական վարույթում. • **եթե փաստացի կամ իրավական հիմքերով հնարավոր չէ նախկին դրության վերականգնումը, ինչպես նաև այն դեպքում, երբ գոյություն ունեցող դրությունը համապատասխանում է անձի համար անվիճարկելի դարձած վարչական ակտին** • միայն այն դեպքում, եթե փաստացի կամ իրավական հիմքերով հնարավոր չէ նախկին դրության վերականգնումը • երբ գոյություն ունեցող դրությունը համապատասխանում է անձի համար անվիճարկելի դարձած վարչական ակտին • եթե վնաս կրողը ցանկանում է հատուցումը ստանալ դրամական միջոցներով
106	Եթե վնասը որևէ փաստացի դրության՝ ի վնաս անձի փոփոխության մեջ է, ապա պատասխանատվություն կրողն ի՞նչ է պարտավոր անել վարչական վարույթում. • պարտավոր է դրամական միջոցներով փոխհատուցել վնասը • պարտավոր է վերացնել դրա առաջացրած հետևանքները՝ բերելով նախկին դրության, իսկ եթե դա անհնար կամ անարդյունավետ է, ապա դրան համարժեք այլ դրության վերականգնման միջոցով, կամ տրամադրել դրամական փոխհատուցում • փոխհատուցել իր ունեցած միջոցներին համարժեք • **պարտավոր է վերացնել դրա առաջացրած հետևանքները՝ նախկին դրության, իսկ եթե դա անհնար կամ անարդյունավետ է, ապա դրան համարժեք այլ դրության վերականգնման միջոցով**
107	Եթե անձը մեղք ունի ոչ իրավաչափ դրության առաջացման համար, ապա նա ո՞ր դեպքում կարող է պահանջել հետևանքների վերացում վարչական վարույթում. • բոլոր դեպքերում • ոչ մի դեպքում • **եթե ցանկանում է և ի վիճակի է կրելու հետևանքների վերացման՝ իր մեղքով առաջացած ծախսերի մասնաբաժինը** • եթե վնասի մյուս մասի առանձին վերականգնումը հնարավոր է

108	Կաշկանդված վարչարարության է հանդիսանում. • **վարչական մարմնի օրենքում նկարագրված փաստական հանգամանքների առկայության դեպքում խիստ որոշակի իրավական հետևանքներ կիրառելը** • վարչական մարմնի օրենքում նկարագրված փաստական հանգամանքների առկայության դեպքում ինքնուրույն որոշելն այն իրավական հետևանքը, որը վարչական մարմինն իրավասու է կիրառել • որոշակի փաստական հանգամանքների առկայության դեպքում վարչական մարմնի իրավական հետանքներն ընտրելու ազատությունը • վարչական մարմնի օրենքում նկարագրված փաստական հանգամանքների առկայության դեպքում հայեցողության կիրառման հնարավորությունը
109	Վարչական վարույթում ո՞ր դեպքում է պատասխանատվություն կրողը վնասը հատուցում դրամական միջոցներով. • եթե դա պահանջում է վնաս կրողը • օրենքով սահմանված դեպքերում • **եթե հետևանքների վերացումը հնարավոր կամ բավարար չէ, կամ հետևանքների վերացման համար անհրաժեշտ են ավելի մեծ ծախսեր, քան պատճառված գույքային վնասը** • եթե հետևանքների վերացումը կտևի 6 ամսից ավելի ժամանակ, իսկ վնաս կրողը հիմնավորում է այդ ժամկետում նոր վնասներ կրելը
110	Վարչական վարույթում վնասի հատուցում պահանջող անձն ի՞նչ չափով է կրում վնասի հետևանքների վերացման ծախսերը. • **այն չափով, որ չափով դրանք առաջացել են իր մեղքով** • վնասի հետևանքների վերացման ծախսեր չի կրում • ամբողջությամբ • այն չափով, որ չափով դրանք առաջացել են իր մեղքով, սակայն ոչ ավել, քան ամբողջ ծախսերի 50 տոկոսը
111	Վարչական ո՞ր մարմին պետք է ներկայացվի վնասի հատուցման պահանջը. • դատարան • **այն վարչական մարմին, որի վարչարարության հետևանքով պատճառվել է վնասը** • այն վարչական մարմին վերադաս վարչական մարմին, որի վարչարարության հետևանքով պատճառվել է վնասը կամ դատարան • այն վարչական մարմին վերադաս վարչական մարմին, որի վարչարարության հետևանքով պատճառվել է վնասը

112	ՀՀ Նախագահը կարող է հանդես գալ, որպես վարչական մարմին. • ոչ • այո, եթե նպատակահարմար կգտնի • **այո, օրենքով նախատեսված դեպքերում գործառույթային իմաստով կարող է հանդես գալ որպես վարչական մարմին** • այո, կառավարության և վարչապետի որոշումներով նախատեսված դեպքերում
113	Ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման, եթե ներկայացվել են այնպիսի փաստաթղթեր, որոնցից ակնհայտ է, որ տվյալ վարչական ակտով ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում. • **վիճարկվող վարչական ակտը ենթակա է անվավեր ճանաչման** • վիճարկվող վարչական ակտը ենթակա չէ անվավեր ճանաչման • վիճարկվող վարչական ակտն առոչինչ է • վիճարկվող վարչական ակտը ենթակա չէ վերացման
114	Վարչական մարմնի կողմից հատուցման պահանջն ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժելու կամ դիմումը չքննարկելու դեպքում վնաս կրած անձը ինչպե՞ս կարող է բողոքարկել այդ ակտը. • վարչական մարմնի հատուցման պահանջն ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժելու կամ դիմումը չքննարկելու մասին ակտը բողոքարկման ենթակա չէ • վարչական մարմնի հատուցման պահանջն ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժելու կամ դիմումը չքննարկելու մասին ակտը կարող է բողոքարկել միայն վերադաս վարչական մարմին • վարչական մարմնի հատուցման պահանջն ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժելու կամ դիմումը չքննարկելու մասին ակտը կարող է բողոքարկել միայն վարչական դատարան • **վարչական մարմնի կողմից հատուցման պահանջն ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժելու կամ դիմումը չքննարկելու դեպքում կարող է դա բողոքարկել՝ վարչական ակտը, վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը բողոքարկելու համար՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված ընդհանուր կարգով**
115	Եթե վնասը պատճառել են մեկից ավելի պատասխանատվություն կրողներ, ապա վարչական վարույթում. • պատասխանատվություն է կրում այն մարմինը, որն առաջինն է վնաս պատճառել • **վնաս կրած անձի առջև նրանք կրում են համապարտ պատասխանատվություն** • վնաս է կրում այն մարմինը, որի գործողությունների արդյունքում է առաջացել հետագա վնասը

	• յուրաքանչյուրը կրում է իր գործողությունների չափով առաջացած վնասի պատասխանատվությունը
116	Ի տարբերություն դատարանի, վարչական մարմինը բողոքարկման վարույթի շրջանակներում իրավունք ունի վերստուգելու վարչական ակտի. • վարչական ակտի համապատասխանությունը ենթաօրենսդրական ակտերին • **վարչական ակտի նպատակահարմարությունը** • վարչական ակտի համապատասխանությունը ՀՀ կողմից վավերացրած միջազգային պայմանագրերին • վարչական ակտի համապատասխանությունը գործարար շրջանառության սովորույթներին
117	Վերադաս վարչական մարմինն առանց բողոքի կարող է իր նախաձեռնությամբ վերանայել ստորադաս վարչական մարմնի ընդունած վարչական ակտը. • **այո** • ոչ • միայն ՀՀ կողմից վավերացրած միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում • միայն ՀՀ Նախագահի հրամանագրերով նախատեսված դեպքերում
118	Եթե անձն ի վիճակի չէ գործի բազմակողմանի և օբյեկտիվ քննության անցկացման համար անհրաժեշտ իր համար բարենպաստ փաստական հանգամանքները պարզի, վարչական մարմինը պարտավոր է արդյոք պարզելու այդ փաստական հանգամանքները. • եթե նպատակահարմար կգտնի, այո • ոչ • միայն վերադաս վարչական մարմնի հանձնարարության դեպքում • **այո**
119	Իրավաչափ վարչարարության հետևանքով պատճառված վնասը ե՞րբ է ենթակա հատուցման. • վնասը ենթակա չէ հատուցման • վնասը ենթակա չէ հատուցման, բացառությամբ օրենսդրությամբ սահմանված դեպքերի • վնասը ենթակա չէ հատուցման, բացառությամբ այդ անձի մահվան դեպքի • **միայն ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված դեպքերում, ինչպես նաև այն դեպքերում, երբ անձը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի ուժով վստահության իրավունք ունի**

120	ՎՀՎՎՕ-ի բողոքարկման վարույթին վերաբերող դրույթները տարածվում են միայն. • վարչական մարմինների կողմից ընդունված նորմատիվ ակտերի վրա • վարչական մարմինների կողմից ընդունված վարչական ակտերի վրա • վարչական մարմինների կատարած գործողությունների (անգործության) վրա • **վարչական մարմինների կողմից ընդունված վարչական ակտերի և վարչական մարմնի գործողության կամ անգործության վրա**
121	Եթե վարչական մարմինը կարող է ավելի շուտ կայացնել հայցվող վարչական ակտը քան օրենքով սահմանված առավելագույն ժամկետի լրանալը, ապա. • **վարչական մարմինը պարտավոր է ավելի շուտ կայացնել հայցվող վարչական ակտը քան օրենքով սահմանված առավելագույն ժամկետի լրանալը** • վարչական մարմինը պարտավոր չէ ավելի շուտ կայացնել հայցվող վարչական ակտը, քան օրենքով սահմանված առավելագույն ժամկետի լրանալը • վարչական մարմինն իրավունք չունի ավելի շուտ կայացնել հայցվող վարչական ակտը, քան օրենքով սահմանված առավելագույն ժամկետի լրանալը • վարչական մարմինը կարող է, եթե նպատակահարմար գտնի, ավելի շուտ կայացնել հայցվող վարչական ակտը, քան օրենքով սահմանված առավելագույն ժամկետի լրանալը
122	Ե՞րբ է հարուցվում բողոքի հիման վրա իրականացվող վարչական վարույթը. • վարչական մարմնում մուտքագրելու հաջորդ օրը • **վարչական մարմնում մուտքագրելու օրը** • վարչական մարմնում մուտքագրելուց ոչ ուշ, քան երեք օր անց • վարչական մարմնի ղեկավարի կողմից մակագրելու օրվանից ոչ ուշ, քան երեք օր անց
123	Վարչական վարույթի շրջանակներում վարչական վարույթի մասնակիցների դիրքորոշում արտահայտելը. • նրանց պարտականությունն է • նրանց պարտավորությունն է • վարչական մարմնի կողմից տրամադրված արտոնություն է • **նրանց իրավունքն է**

124	Ճանապարհային ոստիկանությունն ազատում է փողոցը՝ մասնավոր սեփականության իրավունքով որևէ մեկին պատկանող շինության մուտքը վթարված ավտոմեքենայից. • ճանապարհային ոստիկանությունը դրանով սահմանափակում է անձի իրավունքը • ճանապարհային ոստիկանությունը դրանով անձի համար պարտականություն է սահմանում • ճանապարհային ոստիկանությունը դրանով փաստացի չի ներգործում անձի իրավունքը սահմանափակող իրավիճակի վրա՝ դրսևորելով անգործություն, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ **• ճանապարհային ոստիկանությունը դրանով փաստացի ներգործում է անձի իրավունքը սահմանափակող իրավիճակի վրա՝ կատարելով գործողություն, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ**
125	Հայեցողական լիազորությունն օրենքով վարչական մարմնին վերապահված իրավունք է. . ընտրելու մի քանի հնարավոր լուծումներից իրավաչափը . կիրառելու մի քանի հնարավոր իրավաչափ լուծումներից համաչափ լուծումը **. ընտրելու մի քանի հնարավոր իրավաչափ լուծումներից որևէ մեկը** . կիրառելու մի քանի հնարավոր ոչ իրավաչափ լուծումներից ամենաարդյունավետը
126	Ստորև շարադրված ո՞ր դրույթը չի հանդիսանում օրինականության սկզբունքի տարր. • վարչական մարմինները պետք է գործեն օրենքին համապատասխան • վարչական մարմինների լիազորությունները սահմանվում են օրենքով կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ իրավական այլ ակտերով **• վարչական մարմինները պարտավոր են ոչ իրավաչափ լուծումներից ընտրել առավել արդյունավետը** • վարչական մարմինը պարտավոր է օրենքով կանխորոշված նպատակին հասնելու համար կիրառել պիտանի, անհրաժեշտ և չափավոր միջոց
127	Ստորև շարադրված ո՞ր սկզբունքով է վարչական մարմինը պարտավոր առաջնորդվել հայեցողական լիազորությունն իրականացնելիս. • վարչարարության իրականացման համաչափության և կամայականության արգելքի սկզբունքներով • իրավահավասարության սկզբունքով • իրավունքի գերակայության սկզբունքով **• վերը թվարկված բոլոր սկզբունքներով**

128	Եթե ՀՀ կառավարությունը զինակոչիկներին տարկետում տրամադրելու իր հայեցողական լիազորությունը մշտապես գործադրել է օտարերկրյա բուհ ընդունված ուսանողների նկատմամբ, ապա հետագայում միատեսակ փաստական հանգամանքների առկայությամբ. • ցանկացած պահի կարող է հրաժարվել նման գործելաոճից՝ առանց որևէ հիմնավորումների • չի կարող է հրաժարվել նման գործելաոճից որևէ պարագայում • կարող է հրաժարվել նման գործելաոճից միայն վարույթի մասնակցի համաձայնությամբ **• կարող է հրաժարվել նման գործելաոճից, եթե հիմնավորի, որ զորակոչի ապահովումը գերակա է արտերկրում ուսանելուց, որի պարագայում հետագայում մտադիր է մշտապես գործել այլ կերպ (նշված հիմքով չտրամադրել տարկետում)**
129	Ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման՝ չվիճարկված վարչական ակտի իրավաչափությունը. • կարող է կասկածի տակ դրվել միայն ՀՀ քաղաքացիների կողմից • կարող է կասկածի տակ դրվել միայն պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց կողմից • կարող է կասկածի տակ դրվել ցանկացած անձի կողմից, բացառությամբ՝ պետական մարմինների **• որևէ անձ, այդ թվում՝ պետական մարմինը, չի կարող կասկածի տակ դնել**
130	Ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման՝ վարչական վարույթի օրն անձի կողմից ծանուցում ստանալը, կարող է համարվել պատշաճ ծանուցում. • ինչպես նպատակահարմար կգտնի վարչական մարմինը • այո՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի **• ոչ** • այո
131	ՎՀՎՎՕ-ի իմաստով վարչարարությունը արտահայտվում է. • գործողության և անգործության տեսքով **• իրավական ակտի կամ փաստական հետևանքներ առաջացնող գործողության կամ անգործության տեսքով** • նորմատիվ ակտի և գործողության տեսքով • ռեալ ակտի տեսքով

132	Ե՞րբ են բանավոր և այլ ձևի վարչական ակտերը համարվում ընդունված. • այդ ակտերը գրավոր ձևակերպելու պահից • այդ ակտերի ընդունման մասին ակտի հասցեատիրոջը իրազեկելու պահից **• այդ ակտերը հրապարակվելու պահից** • այդ ակտերը հրապարակելու պահից, եթե ակտերի հասցեատերերը չեն պահանջում այդ ակտերի ընդունման մասին իրենց իրազեկել փոստով
133	Ե՞րբ են ուժի մեջ մտնում բանավոր և այլ ձևի վարչական ակտերը. **• այդ ակտերը հրապարակելու պահից** • այդ ակտերի ընդունման մասին ակտի հասցեատիրոջը փոստով իրազեկելու պահից • այդ ակտերը գրավոր ձևակերպելու պահից • այդ ակտերը գրավոր ձևով ակտի հասցեատիրոջը հանձնելու պահից
134	ՎՀՎՎՕ-ում ամրագրված վարչարարության նշված սկզբունքներից ո՞րն է պարտադրում, որ վարչական մարմինների լիազորությունները սահմանվում են օրենքով կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ իրավական այլ ակտերով. **• վարչարարության օրինականության սկզբունքը** • հայեցողական լիազորությունների սահմանափակման սկզբունքը • ձևական պահանջների չարաշահելու արգելքի սկզբունքը • վարչարարության համաչափության սկզբունքը
135	ՎՀՎՎՕ-ում ամրագրված վարչարարության նշված սկզբունքներից ո՞րն է արգելում վարչական մարմնին հավասար մոտեցում ցուցաբերել տարբեր փաստական հանգամանքների նկատմամբ. • օրինականության սկզբունքը • ձևական պահանջների պարտադիրության սկզբունքը • ձևական պահանջների չարաշահելու արգելքի սկզբունքը **• կամայականության արգելքի սկզբունքը**

136	Ինչպիսի՞ վարչարարության հետևանքով անձանց պատճառված վնասն է ենթակա հատուցման. • միայն ոչ իրավաչափ վարչարարության • իրավաչափ և ոչ իրավաչափ վարչարարության **• ոչ իրավաչափ վարչարարության, իսկ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի VII բաժնով (պատասխանատվությունը վարչարարությամբ պատճառված վնասի համար) նախատեսված դեպքերում՝ նաև իրավաչափ վարչարարության** • իրավաչափ վարչարարությամբ, իսկ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի VII բաժնով (պատասխանատվությունը վարչարարությամբ պատճառված վնասի համար) նախատեսված դեպքերում՝ նաև ոչ իրավաչափ վարչարարության
137	ՎՀՎՎՕ-ում ամրագրված վարչարարության նշված սկզբունքներից ո՞րն է կիրառելի ինչպես կաշկանդված, այնպես էլ հայեցողական վարչարարության նկատմամբ. **• վարչարարության օրինականության սկզբունքը** • հայեցողական լիազորությունների սահմանափակման սկզբունքը • հավասատիության կանխավարկածը • կամայականության արգելքի սկզբունքը
138	ՎՀՎՎՕ-ում ամրագրված վարչարարության նշված սկզբունքներից, ո՞րն է կիրառելի ինչպես կաշկանդված, այնպես էլ հայեցողական վարչարարության նկատմամբ. **• ձևական պահանջների չարաշահելու արգելքի սկզբունքը** • հայեցողական լիազորությունների սահմանափակման սկզբունքը • մարդասիրության սկզբունքը • “A majore ad minus”առավելագույնը ներառում է նվազագույնը սկզբունքը
139	ՎՀՎՎՕ-ում ամրագրված վարչարարության նշված սկզբունքներից, ո՞րն է կիրառելի բացառապես հայեցողական վարչարարության նկատմամբ. • ձևական պահանջների չարաշահելու արգելքի սկզբունքը • վարչարարության արդյունավետության սկզբունքը • վարչարարության օրինականության սկզբունքը **• հայեցողական լիազորությունների սահմանափակման սկզբունքը**

140	Վարչական մարմինների լիազորությունները կարո՞ղ են սահմանվել ՀՀ Նախագահի հրամանագրով. • **այո, օրենքով նախատեսված դեպքերում** • այո, ՀՀ Ազգային ժողովի որոշումներով նախատեսված դեպքերում • ցանկացած դեպքում • այո, ՀՀ կառավարության որոշումներով նախատեսված դեպքերում
141	ՎՀՎՎՕ-ի համաձայն վարչական ակտի հիմնական հատկանիշ է հանդիսանում. • **անհատական իրավական ակտ լինելը** • իրավական նորմ պարունակելը • ընդհանուր և անորոշ հասցեատերերին ուղղված կարգավորումներ պարունակելը • միջազգային մասնավոր իրավունքի ոլորտում ընդունված լինելը
142	Ստորև նշված հիմքերից ո՞րն է դիմումով հարուցված վարչական վարույթը կարճելու հիմք. • **երբ դատարանի վարույթում գտնվում է միևնույն առարկայի վերաբերյալ և միևնույն հիմքերով գործ** • անձը, ում հասցեագրված է լինելու վարչական ակտը, վերացրել է օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումները կամ պատշաճ միջոցներ է ձեռնարկել խախտումները կանխելու ուղղությամբ, և նման դեպքերում օրենքն այդ խախտումների վերաբերյալ չի պահանջում վարչական ակտի ընդունում • դիմողը բանավոր ձևով հրաժարվում է իր դիմումից • օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումների կամ դրանց կանխման հետ չկապված հարցով իրավիճակի փոփոխման կամ օրենքով նախատեսված այլ հիմքով վերացել է վարչական ակտի ընդունման անհրաժեշտությունը
143	Ստորև նշված հիմքերից ո՞րն է վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը կարճելու հիմք. • երբ դիմողը գրավոր ձևով հրաժարվում է իր դիմումից • երբ դիմումը ներկայացվել է առանց ստորագրության, և վարչական մարմինը, միջոցներ ձեռնարկելով դիմողին բացահայտելու ուղղությամբ, չի կարողացել պարզել, թե ով է հայցում համապատասխան վարչական ակտի ընդունումը • երբ գոյություն ունի միևնույն անձի, միևնույն առարկայի վերաբերյալ և միևնույն հիմքերով ուժի մեջ մտած վարչական կամ դատական ակտ • **երբ անձը, ում հասցեագրված է լինելու վարչական ակտը, վերացրել է օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումները կամ պատշաճ միջոցներ է ձեռնարկել խախտումները կանխելու ուղղությամբ, և նման դեպքերում օրենքն այդ խախտումների վերաբերյալ չի պահանջում վարչական ակտի ընդունում**

144	Երբ իրավասու վարչական մարմինը չի ազատում փողոցը՝ մասնավոր սեփականության իրավունքով մի շարք անձանց պատկանող շինությունների մուտքը ձնածածկույթից. • իրավասու վարչական մարմինը դրանով սահմանափակում է անձանց իրավունքները • իրավասու վարչական մարմինը դրանով անձանց համար պարտականություն է սահմանում **• իրավասու վարչական մարմինը դրանով փաստացի չի ներգործում անձի իրավունքը սահմանափակող իրավիճակի վրա՝ դրսևորելով անգործություն, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ** • իրավասու վարչական մարմինը դրանով փաստացի ներգործում է անձի իրավունքը սահմանափակող իրավիճակի վրա՝ կատարելով գործողություն, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ
145	Վարչական մարմնի պաշտոնատար անձն իրավունք չունի քննարկելու և լուծելու գործը, եթե նա. • վարույթի մասնակիցների ներկայացուցչի բարեկամն է • տվյալ պաշտոնատար անձը կամ կոլեգիալ կազմի անդամը երբևէ գործել է ի շահ վարույթի մասնակիցներից որևէ մեկի ազգականի **• վարույթի մասնակիցներից որևէ մեկի ներկայացուցիչն է** • նախկինում մասնակցել է համանման գործերի քննարկմանը
146	Փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը վարչական մարմնի. • պարտավորությունն է • իրավունքն է **• պարտականությունն է** • վարչական մարմնի համապատասխան պաշտոնատար անձի բարի կամքի դրսևորումն է
147	Ֆիզիկական անձանց պարզաբանումներ տալը դիմումով առաջադրվող հարցի կապակցությամբ, ինչպես նաև տվյալ վարչական վարույթի հետ կապված նրանց իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ պարզաբանումներ տալը վարչական մարմնի. **• պարտականությունն է** • իրավունքն է • պարտավորությունն է • վարչական մարմնի համապատասխան պաշտոնատար անձի բարի կամքի դրսևորումն է

148	Եթե անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը վարչական մարմինը. **• պարտավոր է կասեցնել վարչական վարույթը** • իրավունքն ունի կասեցնել վարչական վարույթը • կարող է կասեցնել վարչական վարույթը • ունի ոչնչով չկաշկանդված հայեցողություն՝ կարող է կասեցնել, կարող է և չկասեցնել վարչական վարույթը
149	Վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե. **• անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը** • ընդունվելիք վարչական ակտի հասցեատեր իրավաբանական անձը վերակազմակերպվում է • վարույթին իրականացնող վարչական մարմնի համապատասխան պաշտոնատար անձը չի ներկայացել • վարչական ակտի հասցեատերը բացակայում է, և վարչական մարմինը, նախքան վարչական ակտ ընդունելը, անհրաժեշտ է համարում նրա ներկայությունը՝ վարույթին առնչվող որոշ կարևոր հանգամանքներ նրանից պարզելու համար
150	Պարտավոր անձը հարկադրանքի միջոցների կիրառման մասին. • չի նախազգուշացվում **• պետք է նախազգուշացվի** • կարող է նախազգուշացվել • վարչական մարմինը ունի ոչնչով չկաշկանդված հայեցողություն կարող է նախազգուշացնել պարտավոր անձին կարող է և չնախազգուշացնել նրան

№	2014 թվականի գարնանային հոսք ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՐՑԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ
1	Վարչական դատավարությունը սահմանվում է. • ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով • ՀՀ վարչական և քաղաքացիական դատավարության օրենսգրքերով • **ՀՀ դատական և վարչական դատավարության օրենսգրքերով, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված դեպքերում** • ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով, եթե ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով այլ բան նախատեսված չէ
2	Վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը մատնանշելու և դրանց վերաբերյալ ապացույցներ պահանջելու, անհրաժեշտ ներքին համոզմունք ձևավորելու նպատակով ողջամիտ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ դատավարական գործողությունների իրականացումը. • դատարանի պարտականությունն է • դատարանի իրավունքն է • **դատարանի իրավունքն է, որը սահմանափակված է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված պատճառաբանված ներքին համոզման հանգելու դատարանի պարտականությամբ և պետք է բխի արդարության բոլոր պահանջների պահպանման սահմանադրական հիմնադրույթից** • դատարանի իրավասությունից դուրս է
3	Հանրային իրավահարաբերությունների շարքին չեն դասվում. • անձի հարաբերությունները պետության հետ, որը հանդես է գալիս որպես հանրային իշխանության կրող • այն հարաբերությունները, որոնք ծագում են պետական կառավարման մարմինների գործադիր-կարգադրիչ գործունեության ընթացքում՝ վարչական մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց միջև • այն հարաբերությունները, որոնք ծագում են ֆիզիկական կամ իրավաբանական անձանց մասնավոր իրավունքների կարգավորմանն ուղղված վարչական մարմինների գործունեության ընթացքում • **վարչական մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց միջև քաղաքացիական պայմանագրերից ծագած հարաբերությունները**

4	Մասնավոր իրավահարաբերություններից բխող պահանջը կարող է արդյոք ընդդատյա լինել վարչական դատարանին. • ոչ • այո, եթե այն ուղղված է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց դեմ • այո, եթե այն ներկայացվել է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից • **այո, եթե այն ածանցվում է հանրային իրավահարաբերություններից բխող պահանջից**
5	Վնասի հատուցման պահանջն արդյոք ընդդատյա է վարչական դատարանին. • **ոչ** • այո • այո, եթե այն ուղղված է վարչական մարմնի դեմ • այո, եթե այն վերաբերում է վարչարարությամբ հասցված վնասին
6	Արդյոք ժողովրդական պատգամավորների խորհրդի պետական կառավարման մարմինների ակտերը ենթակա են բողոքարկման վարչական դատավարության կարգով. • **այո** • միայն օրենքով նախատեսված դեպքերում • այո, եթե ՀՀ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները հանդիսանում են նրանց իրավահաջորդը • ոչ
7	Վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել. • անվավեր ճանաչել միջամտող վարչական ակտը • առ ոչինչ ճանաչել միջամտող վարչական ակտը • ոչ իրավաչափ ճանաչել միջամտող վարչական ակտը • **վերացնել միջամտող վարչական ակտը**
8	Ո՞ր պահից է ծագում վարչական դատավարական գործունակությունը իրավաբանական անձանց և հիմնարկների համար. • իրավաբանական անձանց համար անմիջապես պետական գրանցման, իսկ հիմնարկների համար՝ ստեղծման պահից 15 օր հետո • իրավաբանական անձանց համար համապատասխան փաստաթղթերը իրավասու մարմնին ներկայացնելուց 5 օր հետո, իսկ հիմնարկների համար՝ ստեղծման վերաբերյալ որոշում կայացնելու պահից • իրավաբանական անձանց համար ստեղծման պահից, իսկ հիմնարկների համար՝ պետական գրանցման պահից

	• իրավաբանական անձանց համար պետական գրանցման, իսկ հիմնարկների համար՝ ստեղծման պահից
9	Տասնչորսից տասնութ տարեկան անչափահասները վարչական դատարանում ո՞ր դեպքերում իրավահարաբերություններից ծագող գործերով կարող են ինքնուրույն ներկայացնել իրենց շահերը. **• օրենքով նախատեսված դեպքերում** • օրենքով նախատեսված դեպքերում՝ օրինական ներկայացուցչի պարտադիր մասնակցությամբ • չեն կարող • բոլոր դեպքերում՝ օրինական ներկայացուցչի համաձայնությամբ
10	Ի՞նչ լեզվով է տարվում վարչական դատավարությունը. **• հայերեն** • հայերեն, իսկ կողմերի համաձայնությամբ՝ նրանց հասկանալի լեզվով • հայերեն, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ ազգային փոքրամասնությունների լեզվով • հայերեն, իսկ կողմերի համաձայնությամբ՝ դատավարության մասնակիցներին և դատավորին հասկանալի լեզվով
11	Ստորև նշված հանգամանքներից որն ինքնին արգելք չէ հայցի հիմքը կամ առարկան փոփոխելու համար. • միջնորդությունը ներկայացվել է դատաքննության ավարտից հետո • նման փոփոխությունը բերում է վեճի բնույթի փոփոխության • նման փոփոխության արդյունքում վեճը ընդդատյա չի կարող լինել վարչական դատարանին **• նման փոփոխության արդյունքում փոխվում է հայցատեսակը**
12	Այն դեպքում, երբ վարչական դատարանը պարզում է, որ վարչական մարմինը հայեցողական լիազորություններն իրականացրել է օրենսդրությանը ոչ համապատասխան, դատարանը. **• պարտավորեցնում է վարչական մարմնին վարչական ակտ ընդունել կամ կատարել գործողություն՝ հիմք ընդունելով դատարանի իրավական դիրքորոշումը** • պարտավորեցնում է վարչական մարմնին ընդունել հայցվող բարենպաստ վարչական ակտը կամ կատարել հայցվող գործողությունը • ընդունում է հայցվող բարենպաստ վարչական ակտը կամ կատարում է հայցվող գործողությունը • մերժում է հայցը, քանի որ իրավասու չէ գնահատելու վարչական մարմինների հայեցողական լիազորությունների իրականացման իրավաչափության հարցը

13	Նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի դատական ակտերը կարող են բողոքարկվել վերաքննիչ դատարան, իսկ վերաքննիչ դատարանի դատական ակտերը՝ վճռաբեկ դատարան. · միայն նյութական իրավունքի խախտման հիմքով · միայն դատավարական իրավունքի խախտման հիմքով · **թե նյութական, թե դատավարական իրավունքի խախտման հիմքով** · դրանք բողոքարկման ենթակա չեն
14	Ովքե՞ր են վարչական դատավարության մասնակիցները. · կողմերը, երրորդ անձինք, վկաները, թարգմանիչները. փորձագետները, դատավորը · **կողմերը, երրորդ անձինք** · կողմերը, երրորդ անձինք, վկաները, թարգմանիչները, փորձագետները · կողմերը, երրորդ անձինք, կողմերի և երրորդ անձանց ներկայացուցիչները
15	Ե՞րբ է հնարավոր հայցը ներկայացնել վարչական դատարան մի քանի հայցվորի (համահայցվորների) կողմից. · **երբ նրանց պահանջները միատեսակ են կամ ընդդեմ մի քանի պատասխանողների (համապատասխանողներ)** · երբ նրանց պահանջները միատեսակ են և ընդդեմ մի քանի պատասխանողների (համապատասխանողներ) · մի քանի հայցվորի կողմից (համահայցվորներ) հայցը չի կարող ներկայացվել · մի քանի հայցվորի կողմից (համահայցվորներ) հայցը չի կարող ներկայացվել, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի
16	Վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով կողմերն ինչի՞ իրավունք չունեն. · ծանոթանալու գործի նյութերին, քաղվածքներ անելու, ստանալու դրանց պատճենները՝ հաշվի առնելով դռնփակ նիստին ներկայացվող պահանջները · **դատավորին բացարկ հայտնելու** · ներկայացնելու ապացույցներ և մասնակցելու դրանց հետազոտմանը՝ հաշվի առնելով դռնփակ նիստին ներկայացվող պահանջները · ներկայացնելու իրենց առաջարկներն ու փաստարկները գործի քննության ընթացքում ծագող բոլոր հարցերի վերաբերյալ
17	Վարչական գործերով դատավարությունն իրականացվում է. · **գործի քննության ժամանակ գործող օրենքով** · վիճելի իրավահարաբերության ծագման պահին գործող օրենքով · գործն ըստ էության լուծող դատական ակտի կայացման պահին գործող օրենքով · հայցադիմումը ներկայացնելու պահին գործող օրենքով

18	Երրորդ անձինք ե՞րբ կարող են ներգրավվել վարչական դատավարության մեջ. · մինչև գործը վարույթ ընդունելը · մինչև գործով վճռի հրապարակումը · գործի քննության ցանկացած փուլում · **մինչև դատաքննության ավարտը**
19	Այն բոլոր գործողությունները, որոնք կատարվել են վարչական դատավարության ընթացքում մինչև գործի մեջ իրավահաջորդի մտնելը. · **պարտադիր են նրա համար այնքանով, որքանով պարտադիր կլինեին այն անձի համար, որին իրավահաջորդը փոխարինել է** · պարտադիր չեն նրա համար · պարտադիր են նրա համար օրենքով նախատեսված դեպքերում · պարտադիր են նրա համար այնքանով, որքանով դատարանը կհամարի պարտադիր
20	Վարչական դատարանը հայցվորի միջնորդությամբ ե՞րբ է փոխարինում պատասխանողին. · գործի դատաքննության ընթացքում · **գործի քննության նախապատրաստման ընթացքում** · մինչև գործով վճիռ կայացնելու նպատակով դատարանի խորհրդակցական սենյակ անցնելը · մինչև գործով վճռի հրապարակումը
21	Վարչական դատարանի կողմից փաստերի ի պաշտոնե պարզման սկզբունքը, ի թիվս այլնի, հնարավորություն է ընձեռում դատարանին մատնանշել. · հայցադիմումում թույլ տրված ձևական սխալները · պատասխանողի ոչ պատշաճ լինելը · հայցի հիմնավորումների թերի լինելը · **վեճի լուծման համար անհրաժեշտ փաստական հանգամանքների վերաբերյալ առկա ապացույցների լրացման անհրաժեշտությունը**
22	Վարչական դատարանում ոչ պատշաճ պատասխանողին փոխարինելուց կամ գործում երկրորդ պատասխանողի ներգրավելուց հետո ո՞ր փուլից է սկսվում գործի վարույթը. · այն փուլից, որից փոխարինվել է ոչ պատշաճ պատասխանողը, կամ երբ գործում երկրորդ պատասխանող է ներգրավվել · կողմերի համաձայնությամբ՝ ցանկացած փուլից · **սկզբից** · սկզբից, եթե դատարանը այլ բան չի որոշում (ելնելով առավել արդյունավետ դատաքննություն անցկացնելու նպատակից)

23	Վարչական դատարանում ինչպե՞ս է կողմը կատարում դատավարական գործողություններ. • միայն անձամբ, բացառությամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերի • **անձամբ կամ մեկ կամ մի քանի ներկայացուցչի միջոցով, բացառությամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերի** • անձամբ կամ մեկ ներկայացուցչի միջոցով, բացառությամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերի • անձամբ կամ մինչև երեք ներկայացուցչի միջոցով, բացառությամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերի
24	Ո՞վ է հանդես գալիս վարչական դատավարությունում որպես սահմանված կարգով անհայտ բացակայող ճանաչված քաղաքացու ներկայացուցիչ. • **հանդես է գալիս նրա գույքի հավատարմագրային կառավարիչը** • հանդես է գալիս նրա առաջին աստիճանի ժառանգներից մեկը • հանդես է գալիս դատարանի կողմից որոշված անձը • հանդես է գալիս նրա իրավահաջորդը
25	Այն գործով, որին պետք է մասնակցեր մահացած կամ սահմանված կարգով մահացած ճանաչված քաղաքացու ժառանգը, եթե ժառանգությունը ոչ ոք դեռևս չի ընդունել, որպես ժառանգի ներկայացուցիչ վարչական դատարանում ո՞վ է հանդես գալիս. • հանդես է գալիս ժառանգական գույքի փաստացի տիրապետողը • հանդես է գալիս ժառանգների համաձայնությամբ նշանակված անձը • **հանդես է գալիս ժառանգական գույքի պահպանման և կառավարման համար նշանակված անձը** • հանդես է գալիս այն ժառանգի ներկայացուցիչը, որն առաջինն է դիմել ժառանգությունն ընդունելու համար
26	Ի պաշտոնե ո՞վ է հանդես գալիս վարչական դատարանում որպես պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի ներկայացուցիչ. • միայն այդ մարմնի ղեկավարը • ղեկավար պաշտոն զբաղեցնող յուրաքանչյուր ոք • **այդ մարմնի ղեկավարը կամ նրա տեղակալը** • այդ մարմնի ղեկավարը, նրա տեղակալը կամ աշխատակազմի ղեկավարը
27	Վարչական դատարանը ե՞րբ կարող է հեռացնել վարույթից կողմի այն ներկայացուցչին, որը փաստաբան չէ, կամ օրինական ներկայացուցիչ չէ, կամ ի պաշտոնե ներկայացուցիչ չէ. • **եթե նախապատրաստական փուլում կամ դատաքննության ընթացքում պարզ է դառնում, որ տվյալ անձն ունակ չէ վարչական դատարանում ներկայացնելու կողմին** • միայն եթե նախապատրաստական փուլում պարզ է դառնում, որ տվյալ անձն ունակ չէ վարչական դատարանում ներկայացնելու կողմին

	• այդպիսի ներկայացուցիչը ընդհանրապես չի կարող հեռացվել վարույթից • միայն եթե դատաքննության ընթացքում պարզ է դառնում, որ տվյալ անձն ունակ չէ վարչական դատարանում ներկայացնելու կողմին:
28	Արդյո՞ք վարչական դատավարությունում գործում է գործերի քննության հրապարակայնության սկզբունքը. • **այո, քանի որ նշված սկզբունքը սահմանված է ՀՀ դատական օրենսգրքով** • այո, քանի որ նշված սկզբունքն ունի համընդհանուր բնույթ • ոչ, քանի որ նշված սկզբունքը սահմանված չէ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով • ոչ, քանի որ նշված սկզբունքը սահմանված չէ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով և ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը հղում չի կատարում ՀՀ դատական օրենսգրքին
29	Ստորև նշվածներից ո՞րը չի կարող որպես ապացույց գնահատվել վարչական դատավարությունում. • նյութական աշխարհի այն օբյեկտները, որոնք իրենց առկայությամբ, դրությամբ, արտաքին տեսքով, ներքին հատկություններով, գտնվելու վայրով կամ այլ հատկանիշներով կարող են գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի հաստատման միջոց դառնալ • **կողմի բացատրությունները** • փորձագետի եզրակացությունը • գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի մասին տեղեկություններ պարունակող իրավական ակտերը, տեղեկանքները, գործարար և մասնավոր թղթակցությունը
30	Արդյո՞ք հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր վեճերն են ընդդատյա վարչական դատարանին. • այո, առանց բացառության • **այո, բացառությամբ այլ դատարանների ենթակայությանը վերապահված գործերի** • այո, բացառությամբ վարչական մարմինների միջև ծագած վեճերը • միայն վարչարարության («Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի իմաստով) ընթացքում ծագած վեճերը
31	Ըստ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 16-րդ հոդվածի 1-ին մասի՝ վարչական դատավարությունում որպես երրորդ անձ չեն կարող հանդես գալ. • ֆիզիկական անձինք, որոնց իրավունքները կարող են շոշափվել գործի քննության արդյունքում ընդունվելիք դատական ակտով • առևտրային կազմակերպությունները, որոնց իրավունքները կարող են շոշափվել գործի քննության արդյունքում ընդունվելիք դատական ակտով

	• հասարակական կազմակերպությունները, որոնց իրավունքները շոշափվում են գործի քննության արդյունքում ընդունվելիք դատական ակտով • **վարչական մարմինները, որոնց լիազորություններին առնչվում է գործի քննության արդյունքում ընդունվելիք դատական ակտը**
32	Եթե գործի քննության նախապատրաստման ընթացքում վարչական դատարանը հանգում է այն համոզման, որ հայցը ներկայացվել է ոչ այն պատասխանողի դեմ, որը պետք է պատասխանի ըստ հայցի, իսկ հայցվորը համաձայն չէ փոխարինել պատասխանողին, վարչական դատարանն իրավունք ունի արդյոք ներգրավել պատշաճ պատասխանողին որպես երկրորդ պատասխանող. • այո • **միայն հայցվորի համաձայնությամբ** • միայն հայցվորի և պատասխանողի համաձայնությամբ • ոչ
33	Ֆիզիկական կամ իրավաբանական անձ հանդիսացող կողմը իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած ո՞ր ապացույցներն է պարտավոր ներկայացնել վարչական դատարանին. • որոնք կգտնի նպատակահարմար • այն բոլոր ապացույցները, որոնք հիմնավորում են իր պահանջները կամ առարկությունները, ինչպես նաև հակառակ կողմի պահանջները կամ առարկությունները • **այն բոլոր ապացույցները, որոնցով նա հիմնավորում է իր պահանջները կամ առարկությունները** • նա ապացույցներ ներկայացնելու պարտականություն չի կրում
34	Իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում գտնվող ո՞ր ապացույցներն է պարտավոր նաև ներկայացնել վարչական մարմինը. • որոնք կարող են առնչություն ունենալ գործի հետ • **որոնք հիմնավորում են հակառակ կողմի պահանջները կամ առարկությունները** • որոնք գտնում է նպատակահարմար • որոնք կպահանջի հակառակ կողմը

35	Եթե վարչական դատարանում բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա ո՞վ է կրում դրա բացասական հետևանքները. · վարչական մարմինը, եթե այդ փաստը դրված է եղել ֆիզիկական կամ իրավաբանական անձի հայցի հիմքում · ֆիզիկական կամ իրավաբանական անձը, եթե այդ փաստը հիմք է հանդիսացել վիճարկվող իրավական ակտն ընդունելու, գործողությունը կատարելու, անգործություն թույլ տալու համար **· ֆիզիկական կամ իրավաբանական անձ հայցվորը, եթե այդ փաստը դրված է եղել հայցի հիմքում և վիճարկվող իրավական ակտն ընդունելու, գործողությունը կատարելու, անգործություն թույլ տալու համար հիմք չի հանդիսացել** · ոչ ոք
36	Ի՞նչ կարող է անել վարչական դատարանը, եթե կողմը ոչնչացնում կամ թաքցնում է որևէ ապացույց կամ այլ եղանակով խոչընդոտում է դրա հետազոտմանը և գնահատմանը՝ դատավարության մյուս կողմի համար անհնարին կամ դժվարին դարձնելով ապացույցներ հավաքելը և ներկայացնելը. · նման դեպքում դատարանը կարող է ապացուցված համարել համապատասխան փաստը · նման դեպքում դատարանը կարող է խոչընդոտող կողմի դեմ ըստ էության որոշում կայացնել **· նման դեպքում դատարանը կարող է խոչընդոտող կողմի վրա դնել հակառակի ապացուցման բեռը** · դատարանը նման դեպքերում որևէ լիազորություն չունի
37	Ստորև նշվածից ո՞րը ապացուցման կարիք չունեցող փաստ չէ՝ ըստ վարչական դատավարության օրենսգրքի. · հանրահայտ փաստերը · այն փաստերը, որոնք հակառակ կողմը չի վիճարկում, բացառությամբ այն դեպքի, երբ դատարանը գտնում է, որ դրանց ապացուցումն անհրաժեշտ է · քրեական գործով օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված այն փաստերով, ըստ որոնց՝ հաստատված են որոշակի գործողություններ և դրանք կատարած անձինք **· նախկինում քննված քաղաքացիական կամ վարչական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված փաստերը**
38	Ի՞նչ ձևով չի կարող իրականացվել ապացույցների ապահովումը վարչական դատավարությունում. · վկաներին հարցաքննելով **· գործին մասնակցող անձանց իրավունքները սահմանափակելով** · գրավոր կամ իրեղեն ապացույցներ զննելով · գրավոր կամ իրեղեն ապացույցներ առգրավելով

39	Դատարանը գործում առկա ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ. • **որոշում է փաստի հաստատված լինելու հարցը** • լուծում է վեճը • պարզում է վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը • կիրառում է օրենքը
40	Ստորև նշվածներից ո՞վ է կարող որպես վկա հարցաքննվել վարչական դատավարությունում. • ներկայացուցիչը կամ փաստաբանն այն փաստերի առնչությամբ, որոնք նրանց հայտնի են դարձել իրենց վստահորդին իրավաբանական ծառայություններ մատուցելիս • մարդու իրավունքների պաշտպանը՝ գործի այն փաստերի առնչությամբ, որոնք նրան հայտնի են դարձել իր պարտականությունները կատարելիս • ձեռնադրված հոգևորական-խոստովանահայրը՝ գործի այն փաստերի մասին, որոնք նրան հայտնի են դարձել խոստովանության ժամանակ • **կազմակերպության ղեկավարը գործի այն փաստերի մասին, որոնք նրան հայտնի են դարձել իր պաշտոնական պարտականությունների կատարման ժամանակ**
41	Ի՞նչ ապացուցողական նշանակություն ունի վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերով վարչական իրավախախտման մասին արձանագրությունը. • **արձանագրությունն ինքնին ապացույց չէ** • արձանագրությունն ինքնին ապացույց է • արձանագրությունն ինքնին ապացույց չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ այլ ապացույցներ ներկայացնելը անհնարին է • արձանագրությունն ինքնին ապացույց է, եթե պատասխանող կողմը դրան չի առարկում
42	Արդյո՞ք վկան պարտավոր է ներկայանալ վարչական դատարան դատարանի կանչով. • այո, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի • ոչ • **այո** • ոչ, բացառությամբ դատարանի կողմից սահմանված դեպքերի
43	Արդյո՞ք պարտադիր է հանձնարարությունը ստացած դատարանի համար դատական հանձնարարության մասին որոշումը՝ ըստ վարչական դատավարության օրենսգրքի. • **այո** • ոչ • այո, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի • այո, եթե այդ մասին դատարանը նշել է դատական հանձնարարությունում

44	Ո՞ր վկաները կարող են հարցաքննվել միաժամանակ վարչական դատավարությունում. • **այն վկաները, որոնց ցուցմունքները հակասում են միմյանց** • այն վկաները, որոնք միասին հարցաքննվելու համաձայնություն են տվել • այն վկաները, որոնց միասին հարցաքննվելու վերաբերյալ որոշում կկայացնի դատարանը • կողմի միջնորդությամբ հրավիրված վկաները
45	Ինչի՞ մասին է դատարանը նախազգուշացնում վկային վարչական դատավարությունում. • կեղծ ցուցմունք տալու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին • **ակնհայտ կեղծ ցուցմունք տալու կամ ցուցմունք տալուց հրաժարվելու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին** • կեղծ ցուցմունք տալու կամ ցուցմունք տալուց հրաժարվելու համար նախատեսված վարչական պատասխանատվության մասին • ակնհայտ կեղծ ցուցմունք տալու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին, ինչպես նաև ցուցմունք տալուց հրաժարվելու համար նախատեսված վարչական պատասխանատվության մասին
46	Ինչպիսի՞ հարցեր չի թույլատրվում տալ վկային ուղղակի հարցաքննության ընթացքում վարչական դատավարությունում. • հուշող կամ պատասխանն այլ կերպ ուղղորդող հարցեր, բացառությամբ դատարանի տրված հարցերի • հուշող կամ պատասխանն այլ կերպ ուղղորդող հարցեր, բացառությամբ այն կողմի հարցերի, որի միջնորդությամբ հրավիրվել է տվյալ վկան • **հուշող կամ պատասխանն այլ կերպ ուղղորդող հարցեր, բացառությամբ, եթե դա անհրաժեշտ է վկայի ցուցմունքը հստակեցնելու համար** • հուշող կամ պատասխանն այլ կերպ ուղղորդող հարցեր, բացառությամբ միաժամանակյա հարցաքննության
47	Ո՞ր դեպքում է թույլատրվում վկային ուղղորդող հարցեր տալը վարչական դատավարությունում. • մինչև 16 տարեկան վկայի հարցաքննության ընթացքում • մինչև 14 տարեկան վկայի հարցաքննության ընթացքում • **վկայի խաչաձև հարցաքննության ընթացքում** • երբեք չի թույլատրվում
48	Ովքե՞ր չեն կարող հարցաքննվել որպես վկա վարչական դատավարությունում. • մինչև 16 տարեկան երեխաները • մինչև 14 տարեկան երեխաները • **անձինք, որոնք ֆիզիկական կամ հոգեկան արատների պատճառով ունակ չեն ճիշտ ընկալելու և վերարտադրելու գործով ապացուցման ենթակա**

	հանգամանքները • անձինք, որոնք այդ փաստի առնչությամբ արդեն հարցաքննվել են
49	Փորձագետը կարող է դատարանին ցուցմունք տալ, եթե. • կիրառման ենթակա իրավական նորմը մեկնաբանելու համար դատարանին կօգնի գիտական, տեխնիկական կամ այլ հատուկ իմացությունը • կիրառման ենթակա տեխնիկական կանոններ պարունակող իրավական նորմը կիրառելու համար դատարանին կօգնի գիտական, տեխնիկական կամ այլ հատուկ իմացությունը • կիրառման ենթակա իրավական նորմի խախտումը հաստատելու համար դատարանին կօգնի գիտական, տեխնիկական կամ այլ հատուկ իմացությունը **• գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստի առկայությունը կամ բացակայությունը պարզելու համար դատարանին կօգնի գիտական, տեխնիկական կամ այլ հատուկ իմացությունը, ապա անձը, որն իր կրթության, ունակության, հմտության կամ փորձի շնորհիվ կարող է փորձագետ համարվել, կարող է դատարանին ցուցմունք տալ տվյալ ապացույցի կամ փաստի վերաբերյալ եզրակացության ձևով**
50	Ե՞րբ կարող է անձը նշանակվել փորձագետ առանց իր գրավոր համաձայնության՝ համաձայն վարչական դատավարության օրենսգրքի. **• երբ տվյալ հարցով փորձագիտական եզրակացություն տալը տվյալ անձի պաշտոնեական պարտականությունն է պետական փորձագիտական հաստատությունում** • երբ ՀՀ-ում տվյալ անձը հանդիսանում է այդ ոլորտի միակ մասնագետը • դատարանի որոշմամբ ցանկացած դեպքում • անձն առանց իր գրավոր համաձայնության չի կարող նշանակվել փորձագետ
51	Վարչական դատարանն ի՞նչ չի նշում փորձաքննություն նշանակելու մասին որոշման մեջ. • փորձագետին նշանակելու հիմքերը • փորձագետի անունը կամ փորձագիտական հաստատության անվանումը, որը պետք է փորձագետ նշանակի • փորձագետին հանձնվող նյութերը **• փորձագետի կրթությունը, գիտական աստիճանները (առկայության դեպքում)**

52	Ո՞ր հարցերին պատասխանելուց հրաժարվելու իրավունք ունի փորձագետը վարչական դատավարությունում. • ցանկացած հարցի, եթե այն լավ չի ձևակերպված • **իր հատուկ գիտելիքների շրջանակներից դուրս գտնվող հարցերից** • իրավունք չունի հրաժարվելու հարցերին պատասխանելուց • բոլոր հարցերի, բացառությամբ դատարանի կողմից տվածների
53	Ե՞րբ կարող է իրականացվել համալիր փորձաքննություն վարչական դատարանի որոշմամբ. • համալիր փորձաքննություն անցկացվել չի կարող • ցանկացած դեպքում, երբ առկա են փորձաքննություն նշանակելու հիմքեր • **եթե փորձաքննության իրականացման համար անհրաժեշտ է տարբեր մասնագիտությունների գծով առնվազն երկու փորձագետի մասնակցություն** • եթե փորձաքննության իրականացման համար անհրաժեշտ է տարբեր մասնագիտությունների գծով առնվազն երեք փորձագետի մասնակցություն
54	Ի՞նչ կարող է անել վարչական դատարանը, եթե գտնում է, որ եզրակացությունը բավարար չափով պարզ կամ լրիվ չէ. • **դատարանը կարող է իր նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ հանձնարարել փորձագետին որոշակի ժամկետում լրացուցիչ փորձաքննություն իրականացնել** • դատարանը կարող է իր նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ նշանակել համալիր փորձաքննություն • դատարանը կարող է իր նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ զրկել տվյալ անձին համապատասխան գործունեությամբ զբաղվելու լիազորությունից • դատարանը կարող է իր նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ տուգանել համապատասխան փորձագետին
55	Արդյո՞ք գրավոր ապացույցներ են համարվում էլեկտրոնային կամ կապի այլ միջոցով վարչական գործով ստացված նյութերը. • ոչ • **այո, եթե առկա է հաղորդակցության իսկությունն ապացուցելու հնարավորություն** • այո, եթե այդ փաստերը ապացուցվում են նաև այլ ապացույցներով • ոչ, բացառությամբ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ներկայացվածների
56	Ի՞նչ ձևով է ներկայացվում վարչական գործով էլեկտրոնային կամ կապի այլ միջոցով ստացված նյութը. • դատարանի կողմից սահմանված ձևով • թղթի վրա տպված և նոտարական կարգով հաստատված վիճակում • էլեկտրոնային կրիչի միջոցով • **թղթի վրա տպված վիճակում**

57	Ո՞ր դեպքերում են պարտադիր ներկայացվում փաստաթղթերի բնօրինակները վարչական դատավարությունում. • **այն դեպքում, երբ համապատասխան փաստերն օրենքներին կամ նորմատիվ իրավական այլ ակտերին համապատասխան կարող են հաստատվել միայն բնօրինակով** • դատարանի կողմից սահմանված դեպքերում • դատարանի կամ կողմերի կողմից փաստաթղթի իսկությունը կասկածի տակ դրվելու դեպքում • բոլոր դեպքերում, բացառությամբ բնօրինակը ներկայացնելու անհնարինության դեպքերի
58	Ի՞նչ կարող է պահանջել վարչական դատարանն օտարալեզու գրավոր ապացույց ներկայացրած գործին մասնակցող անձից. • պահանջել գրավոր ապացույցը ներկայացնելու հայերեն լեզվով • **պահանջել գրավոր ապացույցը ներկայացնելու օրենքով սահմանված կարգով վավերացված հայերեն թարգմանությամբ** • պահանջել դատարանում գրավոր ապացույցը բանավոր կերպով ներկայացնել հայերեն լեզվով • պահանջել գրավոր ապացույցը ներկայացնելու հայերեն թարգմանությամբ, եթե այն ՀՀ ազգային փոքրամասնության լեզվով չի ներկայացված
59	Եթե ապացույցը տիրապետող հակառակ կողմը չի կատարում ապացույցը ներկայացնելու վերաբերյալ վարչական դատարանի կարգադրությունը, ապա. • **միջնորդող կողմի ներկայացրած չվավերացված պատճենը կարող է համարվել հավաստի** • միջնորդող կողմի ներկայացրած չվավերացված պատճենը կարող է համարվել հավաստի, եթե հակառակ կողմը չի առարկում • դատարանը կարող է պարտավորեցնել ներկայացնելու համապատասխան ապացույցը • դատարանը կարող է տուգանել ապացույցը տիրապետող հակառակ կողմին
60	Ե՞րբ է վարչական դատարանը զննում կատարում տեղում. • միայն այն դեպքում, եթե զննման օբյեկտը հնարավոր չէ տեղաշարժել • բոլոր դեպքերում, փորձագետի միջնորդությամբ • **եթե զննման օբյեկտը հնարավոր չէ տեղաշարժել, կամ դրա տեղափոխումը դատարան կապված է անհամաչափ դժվարությունների կամ ծախսերի հետ** • ցանկացած դեպքում, երբ զննման հետ կապված ծախսերը հոգում է զննում կատարելու միջնորդություն ներկայացրած անձը

61	Անձը դիմել է անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե, խնդրելով գրանցել ձեռք բերված անշարժ գույքը: Վարչական մարմինը մերժել է դիմումը՝ պատճառաբանելով, որ դիմողը չի ապացուցել տվյալ անշարժ գույքը ձեռք բերելու փաստը, բացի այդ այդ անշարժ գույքը գտնվում է արգելանքի տակ: Անձը վարչական դատավարության կարգով պարտավորեցման հայց է հարուցում անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի դեմ: Տվյալ դեպքում ով է կրում նշված փաստերի ապացուցման պարտականությունը. • հայցվորը • պատասխանողը • **հայցվորը՝ անշարժ գույքը ձեռք բերելու փաստի մասով, պատասխանողը՝ անշարժ գույքը արգելանքի տակ գտնվելու փաստի մասով** • հայցվորը՝ անշարժ գույքը արգելանքի տակ գտնվելու փաստի մասով, պատասխանողը՝ անշարժ գույքը ձեռք բերելու փաստի մասով
62	Օրերով հաշվարկվող ժամկետներում չեն ներառվում. • հանգստյան օրերը • **օրենքով նախատեսված ոչ աշխատանքային օրերը** • հանգստյան օրերը և օրենքով նախատեսված ոչ աշխատանքային օրերը • օրենքով նախատեսված աշխատանքային օրերը
63	Ի՞նչ ժամկետներում և ի՞նչ կարգով է վարչական դատարանը քննում բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին միջնորդությունը. • դատարանում այն ստանալու օրվանից հետո՝ տասնօրյա ժամկետում՝ առանց գործին մասնակցող անձանց ծանուցման, եթե վարչական դատավարության օրենսգրքով այլ բան նախատեսված չէ • անհապաղ, առանց գործին մասնակցող անձանց ծանուցման, եթե վարչական դատավարության օրենսգրքով այլ բան նախատեսված չէ • **դատարանում այն ստանալու օրվանից հետո՝ հնգօրյա ժամկետում՝ առանց գործին մասնակցող անձանց ծանուցման, եթե վարչական դատավարության օրենսգրքով այլ բան նախատեսված չէ** • դատարանում այն ստանալու օրվանից հետո՝ հնգօրյա ժամկետում՝ գործին մասնակցող անձանց ծանուցելով, եթե վարչական դատավարության օրենսգրքով այլ բան նախատեսված չէ:
64	Կարո՞ղ են արդյոք կողմերը բողոքարկել բաց թողնված դատավարական ժամկետի վերականգնման միջնորդության առնչությամբ կայացված վարչական դատարանի որոշումը. • **այո, կարող են** • ոչ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը մերժել է դատավարական

	ժամկետի վերականգնման միջնորդությունը • բաց թողնված դատավարական ժամկետի վերականգնման միջնորդության առնչությամբ կայացված դատարանի որոշումը բողոքարկման ենթակա չէ • ոչ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը սահմանում է բողոքարկման իրավունքը
65	Ինչի՞ց են կազմված դատական ծախսերը՝ ըստ վարչական դատավարության օրենսգրքի. • միայն պետական տուրքից • միայն քննության հետ կապված այլ ծախսերից • **պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից** • պետական տուրքից, գործի քննության հետ կապված այլ ծախսերից, ինչպես նաև դատարանի կողմից աշխատանքային ժամերից դուրս կատարված աշխատանքի դիմաց վճարվող գումարից
66	Վարչական դատավարությունում պետական տուրքի չափի, դրա վճարումից ազատելու, պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու և դրա չափը նվազեցնելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են. • ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով • ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով այնքանով, որքանով դրա նորմերը իրենց էությամբ կիրառելի են («mutatis mutandis») վարչական դատավարության նկատմամբ և չեն հակասում սույն օրենսգրքին և վարչական դատավարության էությանը • <<Պետական տուրքի մասին>> և ՀՀ այլ օրենքներով • **<<Պետական տուրքի մասին>> ՀՀ օրենքով**
67	Գործի քննության հետ կապված այլ ծախսերը չեն ներառում. • **պետական տուրքը** • կողմերի՝ դատական նիստին ներկայանալու ճանապարհածախսը • վկաներին, փորձագետներին, թարգմանիչներին վճարվելիք գումարները • ֆիզիկական կամ իրավաբանական անձի ներկայացուցիչներին վճարվելիք գումարները
68	Վկաներին, փորձագետներին և թարգմանիչներին վճարումը կատարում է. • կողմը, որի դեմ կայացվել է վճիռ • կողմը, որը միջնորդել է դատավարությանը ներգրավել վկա, փորձագետ և (կամ) թարգմանիչ, իսկ դատարանի նախաձեռնությամբ նրանց ներգրավելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտը • Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը • **Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտը**

69	Ինչպե՞ս է որոշվում փորձագետների և թարգմանիչների վճարվելիք գումարների չափը՝ համաձայն վարչական դատավարության օրենսգրքի. • **կողմերի հետ խորհրդակցելով, փորձագետների և թարգմանիչների նախնական համաձայնությամբ** • ըստ ՀՀ կառավարության սահմանած նորմերի • ՀՀ վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին օրենքով սահմանված կարգով • վճարվում է համալսարանի պրոֆեսորի, համապատասխան ժամանակահատվածի համար վճարվող գումարի կրկնապատիկի չափով
70	Եթե դատավարության մասնակիցը գործի քննության ընթացքում փոխել է իր հասցեն և այդ մասին չի հայտնել դատարանին, ապա նրա վերջին հայտնի հասցեով ծանուցագրի ուղարկման փաստը. • **բավարար է գործի քննությունը վերջինիս բացակայությամբ իրականացնելու համար** • բավարար է գործի քննությունը վերջինիս բացակայությամբ իրականացնելու համար, եթե դատավարության մյուս մասնակիցները չեն առարկում • բավարար չէ գործի քննությունը վերջինիս բացակայությամբ իրականացնելու համար, և դատարանը պարտավոր է ամեն դեպքում ապահովել վերջինիս կողմից դատական նիստի ժամանակի և վայրի մասին տեղեկանալը • բավարար չէ գործի քննությունը վերջինիս բացակայությամբ իրականացնելու համար, և դատարանը պարտավոր է ծանուցագիրը տեղադրել Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում
71	Ո՞վ է վճարում ներկայացուցիչների ծախսերը՝ համաձայն վարչական դատավարության օրենսգրքի. • **նրանց ներգրաված դատավարության մասնակիցը** • ՀՀ դատական դեպարտամենտը • պարտվող կողմը • ՀՀ կառավարությունը
72	Եթե պատասխանող է հանդիսացել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ պաշտոնատար անձը, ապա ըստ վարչական դատավարության օրենսգրքի ո՞ր դեպքում է դատական ծախսերը դրվում Հայաստանի Հանրապետության կամ համապատասխան համայնքի վրա. • **եթե պատասխանողի որոշումը, գործողությունը կամ անգործությունը դատարանը ճանաչել է իրավաչափ, սակայն հաստատել է, որ հայցվորի՝ վարչական մարմիններին ներկայացրած վարչական բողոքը մինչև դատարանում դրա քննությունը թողնվել է անպատասխան՝ օրենքի խախտմամբ, կամ պատասխանը տրվել է օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ** • բոլոր դեպքերում • եթե պատասխանողի որոշումը, գործողությունը կամ անգործությունը

	դատարանը ճանաչել է իրավաչափ • երբ կայացվում է հաշտության համաձայնություն
73	Ինչպե՞ս են բաշխվում դատական ծախսերն ըստ վարչական դատավարության օրենսգրքի, եթե հայցվորի կամ բողոք բերողի պահանջները բավարարվում են մասամբ. • ծախսերը կրում է հայցվորը կամ բողոք բերողը • ծախսերը կրում է պատասխանողը • բողոք բերողը ազատվում է դատական ծախսերի փոխհատուցումից **• հաշվանցման եղանակով դատարանը կարող է հայցվորին, բողոք բերողին և պատասխանողին փոխադարձաբար ազատել դատական ծախսերի փոխհատուցումից կամ համաչափորեն բաշխել դատական ծախսերի փոխհատուցումը նրանց միջև**
74	Երրորդ անձինք ե՞րբ են կարող կրել դատական ծախսերի փոխհատուցման պարտականությունը՝ համաձայն վարչական դատավարության օրենսգրքի. • միայն այն դեպքում, երբ դատավարության մեջ ներգրավվել են դատարանի որոշմամբ, սակայն նրանց դատավարական գործողությունների հետևանքով առաջացել են դատական ծախսեր • երբ նրանց դատավարական գործողությունների հետևանքով առաջացել են դատական ծախսեր **• միայն այն դեպքում, եթե նրանք դատավարության մեջ ներգրավվել են իրենց դիմումի համաձայն, և նրանց դատավարական գործողությունների հետևանքով առաջացել են դատական ծախսեր** • երրորդ անձինք դատական ծախսերի փոխհատուցման պարտականությունը չեն կրում
75	Ե՞րբ պետք է կատարվի դատական ծախսերի փոխհատուցման վճարումը՝ համաձայն վարչական դատավարության օրենսգրքի. **• դատական ծախսերի բաշխման հարցը լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան 10 օր հետո** • դատական ծախսերի բաշխման հարցը լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում • դատական ծախսերի բաշխման հարցը լուծող դատական ակտը հրապարակելուց հետո ոչ ուշ, քան 15 օր հետո • դատարանի կողմից սահմանված ժամկետում

76	Ստորև նշվածներից ո՞րը դատավորի համար հայցադիմումը վերադարձնելու հիմք չէ. · եթե հայցադիմումում նշված չեն հայցվորի պահանջի իրավական հիմքերը · եթե մեկ հայցադիմումում միացված են մեկ կամ մի քանի պատասխանողի ուղղված, միմյանց հետ չկապված պահանջներ · **եթե մինչև հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելը հայցվորը դիմել է այն հետ վերցնելու մասին** · եթե հայցադիմումը ստորագրված չէ, կամ այն ստորագրել է ստորագրելու լիազորություն չունեցող անձը կամ այնպիսի անձ, որի պաշտոնեական դրությունը նշված չէ
77	Ի՞նչ հետևանք է առաջացնում ծանուցագիրը ստանալուց հրաժարվելը՝ ըստ վարչական դատավարության օրենսգրքի. · հավասարեցվում է այն հանձնված լինելուն, սակայն խոչընդոտ է գործը քննելու համար, եթե հրաժարվողը դատավարության կողմ է · **հավասարեցվում է այն հանձնված լինելուն և խոչընդոտ չէ գործը քննելու համար** · առաջացնում է քրեական պատասխանատվություն · առաջացնում է վարչական պատասխանատվություն
78	Ի՞նչ չի կարող պահանջել հայցվորը վիճարկման հայցով. · մասամբ վերացնել միջամտող վարչական ակտը · ամբողջությամբ փոփոխել միջամտող վարչական ակտը · մասամբ վերացնել կամ փոփոխել զուգորդվող վարչական ակտը · **ամբողջությամբ կամ մասամբ վերացնել կամ փոփոխել ցանկացած միջամտող իրավական ակտ**
79	Նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու գործերով ով կարող է դիմել վարչական դատարան. · յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ, եթե համարում է, որ այդ նորմատիվ իրավական ակտերով խախտվել են Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգի հիմունքները · պետական և տեղական ինքնակառավարման մարմինները կամ պաշտոնատար անձինք, եթե համարում են, որ տվյալ նորմատիվ ակտով խախտվել է գերակա հանրային շահը · **մարդու իրավունքների պաշտպանը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց նորմատիվ ակտերի դեմ** · նորմատիվ իրավական ակտն ընդունած պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը, եթե համարում է, որ դրանով խախտվել են ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքները

80	Ի՞նչ կարող է պահանջել հայցվորը պարտավորեցման հայցով. • չընդունելու այն վարչական ակտը, որը վարչական մարմինը պատրաստվում է ընդունել • **ընդունելու այն բարենպաստ վարչական ակտը, որը վարչական մարմինը չի ընդունել** • ընդունելու այլ անձի համար միջամտող վարչական ակտ, որը վարչական մարմին չի ընդունել, սակայն օրենքով պարտավոր է ընդունել • ընդունելու նորմատիվ իրավական ակտ, որը վարչական մարմին չի ընդունել, սակայն օրենքով պարտավոր է ընդունել
81	Ի՞նչ կարող է պահանջել հայցվորը գործողության կատարման հայցով. • **կատարելու որոշակի գործողություններ կամ ձեռնպահ մնալու այնպիսի գործողություններից, որոնք ուղղված չեն վարչական ակտի ընդունմանը** • կատարելու որոշակի գործողություններ, որոնց արդյունքում պետք է ընդունվի բարենպաստ վարչական ակտ • ձեռնպահ մնալու այնպիսի գործողություններից, որոնց արդյունքում ընդունվելու է միջամտող վարչական ակտ • միայն կատարելու որոշակի գործողություններ
82	Ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ճանաչելու որևէ իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը. • եթե բաց է թողել վիճարկման, պարտավորեցման կամ գործողության կատարման հայց ներկայացնելու համար սահմանված դատավարական ժամկետը • եթե բաց է թողել վիճարկման, պարտավորեցման կամ գործողության կատարման հայց ներկայացնելու համար սահմանված դատավարական ժամկետը և դատարանը մերժել է բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին միջնորդությունը • **եթե չի կարող ներկայացնել վիճարկման, պարտավորեցման կամ գործողության կատարման հայց** • ցանկացած դեպքում, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները

83	Ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ոչ իրավաչափ ճանաչելու այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտը, եթե. • դա կվերականգնի մինչև խախտումը եղած վիճակը • համարում է, որ նմանատիպ իրավիճակում վարչական մարմինը կարող է նմանատիպ միջամտող վարչական ակտ կրկին ընդունել • **դա նպատակ է հետապնդում վերականգնելու հայցվորի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը** • հայցվորը մտադիր է պահանջել բարոյական վնասի հատուցում
84	Արդյոք բարենպաստ վարչական ակտը հնարավոր է վիճարկել վարչական դատավարությունում. • այո • **ոչ** • այո, եթե հայցվորը համարում է, որ բարենպաստ վարչական ակտով խախտվել են իր իրավունքները և ազատությունները • այո, եթե հայցվորը համարում է, որ բարենպաստ վարչական ակտի ընդունմանն ուղղված վարչարարությունը եղել է ոչ իրավաչափ
85	Վարչական ակտի համապատասխան կետն անվավեր ճանաչելու մասին հայցապահանջի շրջանակներից դուրս է. • վարչական ակտի համապատասխան կետն անվավեր ճանաչելը • վարչական ակտի համապատասխան կետը մասնակի անվավեր ճանաչելը • **վարչական ակտն անվավեր ճանաչելը** • վարչական ակտի համապատասխան կետն անվավեր ճանաչելու մասին հայցը մերժելը
86	Հայցվորը ե՞րբ իրավունք ունի մեկից ավելի պահանջներ միավորել մեկ հայցում՝ համաձայն վարչական դատավարության օրենսգրքի. • երբ դրանք ուղղված են միևնույն պատասխանողի դեմ • երբ դրանք փոխկապակցված են • **եթե դրանք ուղղված են միևնույն պատասխանողի դեմ և փոխկապակցված են** • երբ դրանց միասին քննելը հայցվորի համար կլինի առավել բարենպաստ
87	Ո՞ր հայցի հետ կարող է ներկայացվել պահանջ այն հետևանքները վերացնելու մասին, որոնք առաջացել են վիճարկվող վարչական ակտի կամ վիճարկվող գործողության (անգործության) կամ վարչական ակտ ընդունելը մերժելու կամ վարչական ակտ չընդունելու հետևանքով. • ոչ մի • միայն վիճարկման և պարտավորեցման • միայն գործողության կատարման և ճանաչման • **վիճարկման, պարտավորեցման, գործողության կատարման կամ ճանաչման**

88	Պարտավորեցման հայցի դեպքում ե՞րբ կարող է հայցը վարչական դատարան ներկայացվել. • վեցամսյա ժամկետում այն պահից, երբ դիմում է տրվել համապատասխան վարչական մարմին • **մեկամսյա ժամկետում այն պահից, երբ մերժվել է տվյալ վարչական ակտի ընդունումը** • երկամսյա ժամկետում այն պահից, երբ մերժվել է տվյալ վարչական ակտի ընդունումը • եռամսյա ժամկետում այն պահից, երբ լրացել է վարչական ակտ ընդունելու համար սահմանված առավելագույն ժամկետը
89	Գործողության կատարման հայցի դեպքում ե՞րբ կարող է հայցը վարչական դատարան ներկայացվել. • **մեկամսյա ժամկետում՝ վարչական մարմնի կողմից այն մերժելու պահից** • մեկամսյա ժամկետում՝ այն պահից, երբ վարչական մարմնին դիմում է ներկայացվել պահանջվող գործողությունը կատարելու վերաբերյալ • երկամսյա ժամկետում այն պահից, երբ վարչական մարմնին դիմում է ներկայացվել պահանջվող գործողությունը կատարելու վերաբերյալ • եռամսյա ժամկետում՝ վարչական մարմնի կողմից այն մերժելու պահից
90	Ճանաչման հայցի դեպքում ե՞րբ կարող է հայցը ներկայացվել վարչական դատարան. • մեկամսյա ժամկետում՝ վարչական մարմնի կողմից այն մերժելու պահից • **անկախ ժամկետից** • երկամսյա ժամկետում այն պահից, երբ լրացել է վարչական ակտ ընդունելու համար սահմանված առավելագույն ժամկետը • մեկամսյա ժամկետում այն պահից, երբ մերժվել է տվյալ վարչական ակտի ընդունումը
91	Որ օրվանից է հաշվարկվում վարչական ակտը դատական կարգով բողոքարկելու ժամկետն այն դեպքում, երբ այդ ակտը, մինչ դատական կարգով բողոքարկելը, բողոքարկվել է նաև վարչական կարգով. • **վարչական բողոքի քննության համար սահմանված ժամկետն ավարտվելու հաջորդ օրվանից** • վարչական բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու հաջորդ օրվանից • վարչական բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու հաջորդ օրվանից, իսկ բողոքի քննության համար սահմանված ժամկետում համապատասխան որոշում չկայացվելու դեպքում՝ վարչական բողոքի քննության համար սահմանված ժամկետն ավարտվելու հաջորդ օրվանից • վարչական բողոք ներկայացնելու հաջորդ օրվանից

92	Ստորև նշված ո՞ր տեղեկությունը կարող է չպարունակել հայցադիմումը՝ համաձայն վարչական դատավարության օրենսգրքի. · հայցվորի անունը, ազգանունը (անվանումը) · հայցվորի բնակության (գտնվելու) վայրը · **վարչական դատարանի նստավայրի անվանումը** · այն փաստերը, որոնց վրա հիմնվում է հայցվորի պահանջը
93	Այն դեպքում, երբ գործով որպես պատասխանող հանդես է գալու վարչական մարմինը կամ պաշտոնատար անձը, հայցվորը հայցադիմումը և դրան կցվող փաստաթղթերի պատճենը նաև ո՞ր մարմնին է ուղարկում. · **ՀՀ ֆինանսների նախարարությանը** · ՀՀ կառավարությանը · ՀՀ կենտրոնական բանկին · ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին
94	Այն դեպքում, երբ հայցադիմումին կից փաստաթղթերը ծավալուն են, կամ դրանք դժվար է պատճենահանել, համաձայն վարչական դատավարության օրենսգրքի հայցվորը պատասխանողին և գործին մասնակցող այլ անձանց հայցադիմումի հետ ի՞նչ է ուղարկում. · այդ փաստաթղթերի էլեկտրոնային կրիչը · ծանուցում, որ նշված փաստաթղթերը, դրանց ծանոթանալու նպատակով, դեպոնացվելու են դատարանում · **ծանուցում, որ նշված փաստաթղթերը, դրանց ծանոթանալու նպատակով, դեպոնացվելու են նոտարիատում** · ծանուցում, որ նշված փաստաթղթերը, դրանց ծանոթանալու նպատակով, դեպոնացվելու են բանկում
95	Բնակչության պետական ռեգիստրում մշտական բնակության վայր նշված չլինելու, ինչպես նաև պատասխանողի՝ Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակության վայր չունենալու դեպքում ո՞ր հասցեով է ուղարկվում հայցադիմումը՝ համաձայն վարչական դատավարության օրենսգրքի. · պատասխանողի վերջին բնակության վայրի հասցեով · պատասխանողի աշխատանքի վայրի հասցեով · պատասխանողի փաստացի բնակության հասցեով · **պատասխանողի որևէ անշարժ գույքի գտնվելու վայրի հասցեով**
96	Հայցադիմումը ստանալուց հետո ստորև նշված ո՞ր որոշումը վարչական դատարանը կայացնելու իրավունք չունի. · հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը · հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը · հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշումը · **հայցադիմումը վերահասցեագրելու մասին որոշումը**

97	Հայցադիմումը ստանալուց հետո ի՞նչ ժամկետում է վարչական դատարանը որոշում կայացնում հայցադիմումը վերադարձնելու մասին. • եռօրյա ժամկետում • **մեկշաբաթյա ժամկետում** • հնգօրյա ժամկետում • օրացուցային յոթօրյա ժամկետում
98	Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելու պահից վարչական դատարանն այդ որոշման պատճենը ի՞նչ ժամկետում է ուղարկում դատավարության մասնակիցներին. • **եռօրյա ժամկետում** • հնգօրյա ժամկետում • ողջամիտ ժամկետում • հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելու պահին
99	Վարչական դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը պատասխանողին ուղարկելու հետ միաժամանակ վերջինիս ինչի՞ մասին է նախազգուշացնում. • հայցադիմումին պատասխան ներկայացնելու անհրաժեշտության և չներկայացման համար սահմանված վարչական պատասխանատվության մասին • պատասխան ներկայացնելու անհրաժեշտության և չներկայացման համար սահմանված քրեական պատասխանատվության մասին • դատարան չներկայանալու իրավական հետևանքների մասին • **հայցադիմումին պատասխան ներկայացնելու անհրաժեշտության և չներկայացման իրավական հետևանքների մասին**
100	Եթե դատարանի գնահատմամբ նորմատիվ իրավական ակտի իրավաչափությունը վիճարկելու գործը ձեռք է բերել հասարակական մեծ հնչեղություն, դատարանը. • **քննում է այն բանավոր ընթացակարգով** • ներգրավում է գործի քննությանը զանգվածային լրատվության միջոցներին • այդ մասին տեղեկացնում է ՀՀ հանրային խորհրդին • հրավիրում է հանրային լսումներ
101	Դատավորը կարող է վերադարձնել հայցադիմումը, եթե դրան կից չի ներկայացվել. • հայցվորի տիրապետման ներքո գտնվող բոլոր հնարավոր գրավոր ապացույցները, որոնք հաստատում են իր պնդած փաստերը, եթե նա կրում է դրանց ապացուցման բեռը, և եթե դրանք հնարավոր է կցել հայցադիմումին • հայցվորի սոցիալական քարտի պատճենը • **հայցադիմումը և կից փաստաթղթերի պատճենները (եթե դրանք հնարավոր է պատճենահանել) պատասխանողի կողմից, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածով սահմանված կարգին համապատասխան, ստանալը**

	հավաստող փաստաթղթերը • լիազորագիր կամ այլ փաստաթուղթ, որը հավաստում է այն ներկայացուցչի լիազորությունը, որը հանդես է գալու գործի քննության ընթացքում
102	Հայցադիմումում թույլ տրված խախտումները վերացվելու և որոշումը ստանալու օրվանից հետո ի՞նչ ժամկետում՝ դատարան կրկին ներկայացվելու դեպքում հայցադիմումը վարչական դատարանում ընդունված է համարվում սկզբնական ներկայացնելու օրը. • 3-օրյա ժամկետում • **15-օրյա ժամկետում** • 5-օրյա ժամկետում • 10-օրյա ժամկետում
103	Ստորև նշվածներից ո՞ր դեպքը հիմք չի կարող հանդիսանալ հայցադիմումի ընդունումը մերժելու համար. • հայցը ներկայացրել է այն անձը, ում սուբյեկտիվ իրավունքը չի կարող խախտված լինել • ներկայացված հայցով վիճարկվում է վարչական մարմնի կամ դրա պաշտոնատար անձի այնպիսի ակտ, որը չի առնչվում մասնավոր անձանց իրավունքներին և ազատություններին • վարչական դատարանի վարույթում առկա է նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ գործ • **ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետում հայցվորը չի վերացրել հայցադիմումի այնպիսի թերությունները, որոնց չվերացնելն արգելք չէ գործի քննության համար**
104	Վարչական դատարանը ո՞ր գործերն իրավունք ունի գործի քննության ցանկացած փուլում մեկ վարույթում միացնելու. • **միևնույն առարկային վերաբերող մի քանի գործ** • նույն հայցվորի հայցադիմումների հիման վրա հարուցված գործերը • պետական մարմինների կողմից ներկայացված հայցադիմումների հիման վրա հարուցված գործերը • տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ներկայացված հայցադիմումների հիման վրա հարուցված գործերը

105	Ի՞նչ ժամկետներում պետք է իրականացվի վարչական գործի դատաքննության նախապատրաստությունը և բուն դատաքննությունը. · ողջամիտ ժամկետներում, բայց ոչ ավել, քան երկու տարվա ընթացքում · **ողջամիտ ժամկետներում՝ հաշվի առնելով առանձին գործերի քննության և լուծման համար վարչական դատավարության օրենսգրքով սահմանված հատուկ ժամկետները** · հայցադիմումը ստանալուց հետո վեցամսյա ժամկետում, բացառությամբ այն դեպքերի, երբ առանձին գործերի քննության և լուծման համար վարչական դատավարության օրենսգրքով սահմանված են ժամկետներ · ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով գործի քննության որևէ ժամկետ նախատեսված չէ
106	Ի՞նչ կարող է չբովանդակել հայցադիմումի պատասխանը՝ համաձայն վարչական դատավարության օրենսգրքի. · նշում այն մասին, որ պատասխանը ներկայացվում է վարչական դատարան · հայցվորի անունը, ազգանունը (անվանումը) · պատասխանի էությունը (հակիրճ նկարագրությունը) · **պատասխանողի ֆաքսի, հեռախոսի համարը, էլեկտրոնային հասցեն**
107	Ինչպիսի՞ իրավական հետևանքներ է առաջացնում հայցադիմումին պատասխան չներկայացնելը՝ համաձայն վարչական դատավարության օրենսգրքի. · վարչական պատասխանատվություն · դատարանը պարտավոր է դա գնահատել որպես պատասխանողի կողմից հայցվորի վկայակոչած փաստերի ընդունում · **դատարանը կարող է դա գնահատել որպես պատասխանողի կողմից հայցվորի վկայակոչած փաստերի ընդունում** · դատարանը կարող է գնահատել որպես անհարգալից վերաբերմունք դատարանի նկատմամբ և զրկել պատասխանողին դատական նիստերին մասնակցելու իրավունքից
108	Ստորև նշվածներից ո՞րը հակընդդեմ հայցն ընդունելու հիմք չէ՝ համաձայն վարչական դատավարության օրենսգրքի. · **հակընդդեմ և սկզբնական հայցը միասին քննարկելը կլինի առավել արդյունավետ** · հակընդդեմ և սկզբնական հայցերի միջև առկա է փոխադարձ կապ, և դրանց համատեղ քննությունը կարող է ապահովել վեճի առավել արագ և ճիշտ լուծումը · հակընդդեմ հայցի բավարարումը լրիվ կամ մասամբ բացառում է սկզբնական հայցի բավարարումը · հակընդդեմ պահանջն ուղղված է սկզբնական պահանջի հաշվանցմանը

109	Ի՞նչ չի անում վարչական դատարանը նախնական դատական նիստում. · չի պարզում հայցի առարկան և հիմքերը · **չի պարզում վճիռ կայացնելու համար կողմերի համար ընդունելի ժամկետը** · չի պարզում գործին մասնակցող անձանց ու դատավարության այլ մասնակիցների կազմը · չի պարզում վիճելի իրավահարաբերության բնույթը և կիրառման ենթակա օրենսդրությունը
110	Քանի՞ նախնական դատական նիստ կարող է հրավիրել վարչական դատարանը. · մեկ · մինչև երեք · մինչև երկու · **ըստ անհրաժեշտության՝ դատարանը կարող է հրավիրել մեկից ավելի նախնական դատական նիստ**
111	Ե՞րբ է դատավորը որոշում կայացնում վարչական գործը դատաքննության նշանակելու մասին. · դիմում տալուց հետո ոչ ուշ, քան 1 ամսվա ընթացքում · հայցադիմումը ստանալուց ոչ ուշ, քան 1 ամսվա ընթացքում · գործը քննության նախապատրաստելը ավարտելուց ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում · **երբ համարում է գործի դատաքննությունը նախապատրաստված**
112	Վարչական դատավարությունում գործի վարույթը կասեցնելու հիմքերի, ինչպես նաև կասեցումն առաջացրած հանգամանքները վերանալուց հետո գործի վարույթը վերսկսելու վրա ՀՀ ո՞ր օրենքի դրույթներն են տարածվում. · ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերը · **ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերը** · ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերը · <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի համապատասխան նորմերը
113	Ո՞ր իրավական ակտերով է սահմանվում վարչական դատարանում վարչական գործերով դատավարության կարգը. · **ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով և ՀՀ դատական օրենսգրքով, իսկ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում նաև՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով այնքանով, որքանով դրա նորմերը իրենց էությամբ կիրառելի են վարչական դատավարության նկատմամբ և չեն հակասում վարչական դատավարության օրենսգրքին և վարչական դատավարության էությանը** · ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով և ՀՀ դատական օրենսգրքով · ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով և ՀՀ դատական օրենսգրքով, իսկ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով

	նախատեսված դեպքերում նաև՝ ՀՀ քաղաքացիական և քրեական դատավարության օրենսգրքերով այնքանով, որքանով դրա նորմերը իրենց էությամբ կիրառելի են վարչական դատավարության նկատմամբ և չեն հակասում վարչական դատավարության օրենսգրքին և վարչական դատավարության էությանը • միայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով
114	Ստորև նշվածներից ո՞ր դեպքը վարչական գործի քննության ցանկացած փուլում վարույթի կարճման հիմք չէ. • վեճը բխում է մասնավոր իրավահարաբերություններից • նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ • գործին մասնակցող իրավաբանական անձը լուծարվել է • **գործին մասնակցող քաղաքացու մահից հետո վիճելի իրավահարաբերությունը չի բացառում իրավահաջորդությունը**
115	Վարչական դատարանում դատաքննությունը ինչպե՞ս և որտե՞ղ է անցկացվում. • դատական նիստերի և լսումների միջոցով՝ դատարանի շենքում դատավորի աշխատասենյակում կամ դատական նիստերի դահլիճում • **դատական նիստերի միջոցով՝ դատարանի շենքում դրա համար հատուկ նախատեսված տեղում** • դատավորի կողմից սահմանված միջոցով և դատարանի կողմից սահմանված դրա համար հատուկ նախատեսված տեղում • դատական նիստերի, լսումների և դատարանի կողմից սահմանված այլ միջոցներով՝ դատարանի շենքում կամ դրանից դուրս դրա համար հարմարեցված տեղում
116	Դատավարության մասնակիցները և այլ անձինք ինչպե՞ս են դիմում վարչական դատարանին. • **<<Հարգելի դատարան>>** • <<Բարձր դատարան>> • <<Ձերդ գերազանցություն>> • <<Ձերդ արդարադատություն>>
117	Վարչական դատավարության մասնակիցները և այլ անձինք դատական նիստում դատարանի և մյուս կողմի հետ ինչպե՞ս են հաղորդակցվում. • նստած, բացառությամբ նախագահողի թույլատրած դեպքերի • **հոտնկայս, բացառությամբ նախագահողի թույլատրած դեպքերի** • դատարանի կողմից սահմանված կարգով • հոտնկայս, բացառությամբ, ֆիզիկական արատ ունեցող անձանց

118	Ի՞նչ է անում նախագահողը դատական նիստը բացելուց հետո՝ համաձայն վարչական դատավարության օրենսգրքի. · կողմերին ծանոթացնում է իրենց իրավունքներին և պարտականություններին · լուծում է բացարկների հարցը · դատարանի դահլիճից դուրս է հանում նիստին ներկա գտնվելու իրավունք չունեցող անձանց · **հրապարակում է դատարանի կազմը և քննության ենթակա գործը**
119	Նախագահողի կողմից դատական նիստը բացելուց, դատարանի կազմը և քննության ենթակա գործը հրապարակելուց հետո վարչական դատարանին ինչի՞ մասին է զեկուցում դատական նիստի քարտուղարը. · կողմերի՝ նիստին ներկա գտնվելու մասին, չներկայացած կողմի պատշաճ կարգով ծանուցված լինելու, ինչպես նաև նրանց բացակայության պատճառների մասին և ձեռնարկված միջոցների մասին · **դատավարության մասնակիցների և դատավարությունում այլ անձանց՝ նիստին ներկա գտնվելու մասին, չներկայացած անձանց պատշաճ կարգով ծանուցված լինելու, ինչպես նաև նրանց բացակայության պատճառների մասին** · լսումների անցկացված լինելու, լսումների արդյունքում հաշտության համաձայնություն կնքած լինելու, դատական նիստը հետաձգելու միջնորդությունների մասին · դատավորին բացարկ հայտնելու միջնորդության մասին
120	Ո՞վ է պարզում դատական նիստին ներկայացած վարչական դատավարության մասնակիցների և այլ անձանց ինքնությունը, ստուգում ներկայացուցիչների լիազորությունները. · դատական նիստի քարտուղարը · դատավորի օգնականը · դատական կարգադրիչը · **նիստը նախագահողը**
121	Արդյո՞ք արգելք է դատական նիստի ժամանակի և վայրի մասին պատշաճ կարգով ծանուցված վարչական դատավարության մասնակիցների չներկայանալը գործի քննության համար. · **արգելք չէ** · արգելք է · արգելք է միայն այն դեպքում, երբ չի ներկայացել կողմը · արգելք է, եթե կողմերից մեկը պնդում է դա
122	Նիստը նախագահողը վարչական դատավարության մասնակիցներին և այլ անձանց. · պարտադիր կարգով պարզաբանում է նրանց իրավունքները և պարտականությունները · կողմերի միջնորդությամբ պարզաբանում է նրանց իրավունքները և պարտականությունները

	• **ըստ անհրաժեշտության պարզաբանում է նրանց իրավունքները և պարտականությունները** • պարզաբանում է նրանց իրավունքները և պարտականությունները միայն այն դեպքում, եթե կողմը ներկայացված չէ փաստաբանով
123	Ո՞ր դեպքերում և ի՞նչ կարգով վարչական դատարանն իրավունք ունի հետաձգելու գործի դատաքննությունը. • դատարանն իրավունք ունի հետաձգելու գործի դատաքննությունը ցանկացած դեպքում, կողմերի միջնորդությամբ • **դատարանն իրավունք ունի հետա**ձգելու գործի դատաքննությունը քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով • դատարանն իրավունք ունի հետաձգելու գործի դատաքննությունը վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին օրենքով սահմանված դեպքերում և կարգով • դատարանն իրավունք ունի հետաձգելու դատաքննությունը դատական օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով
124	Ի՞նչ կարգով է դատարանը լուծում վարչական դատավարության մասնակիցների գործի քննության հետ կապված բոլոր հարցերով դիմումները և միջնորդությունները. • լուծում է գործին մասնակցող մյուս անձանց կարծիքները լսելուց հետո, բացառությամբ այն դեպքերի, երբ անհրաժեշտ է անհապաղ լուծում տալ • լուծում է գործին մասնակցող մյուս անձանց կարծիքները լսելուց հետո, բացառությամբ այն դեպքերի, երբ հապաղումը կխոչընդոտի գործի արդյունավետ և արդարացի լուծմանը • **լուծում է գործին մասնակցող մյուս անձանց կարծիքները լսելուց հետո** • լուծում է անհապաղ, իր հայեցողությամբ կարող է լսել գործին մասնակցող մյուս անձանց կարծիքները
125	Գործի քննության մինչև ո՞ր փուլը հայցվորն իրավունք ունի առանց որևէ պատճառաբանության լրիվ կամ մասնակի հրաժարվելու իր պահանջներից՝ համաձայն վարչական դատավարության օրենսգրքի. • մինչև դատաքննության սկիզբը • **մինչև դատաքննության ավարտը** • մինչև գործը քննության ընդունելը • իրավունք չունի

126	Ընտրությունների արդյունքների ամփոփումից հետո ընտրությունների կազմակերպման և անցկացման ընթացքում ընտրական իրավունքի խախտման վերաբերյալ ներկայացված հայցերը. • քննվում են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ գլխի (ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերի վարույթը) կանոններով՝ 7-օրյա ժամկետում • քննվում են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ գլխի (ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերի վարույթը) կանոններով՝ 15-օրյա ժամկետում • **քննվում են ընդհանուր վարութային կանոններով և ժամկետով** • ենթակա չեն վարչական դատարանում քննության
127	Ու՞մ խոսքն է լսում դատարանը վարչական գործը ներկայացնելուց հետո. • դատական նիստի քարտուղարի բացման խոսքը • հայցվորի բացման խոսքը, իսկ այն դեպքում, երբ պատասխանողը սահմանված ժամկետում պատասխան չի ներկայացրել՝ նաև պատասխանողի բացման խոսքը • **լսում է հայցվորի, երրորդ անձանց և պատասխանողի բացման խոսքերը** • հայցվորի բացման խոսքը, իսկ նորմատիվ ակտերի իրավաչափությունը ստուգելու և ընտրական վեճերի վարույթում՝ նաև պատասխանողի խոսքը
128	Որքա՞ն կարող է տևել բացման խոսքը՝ ըստ վարչական դատավարության օրենսգրքի. • ոչ ավել քան 1 ժամ • ոչ ավել քան 2 ժամ • ոչ ավել քան 30 րոպե • **դատարանը կարող է ի սկզբանե սահմանել բացման խոսքի առավելագույն տևողություն**
129	Վարչական դատարանն արդյո՞ք ընդունում է գործին մասնակցող անձանց ներկայացրած լրացուցիչ ապացույցները գործն առաջին ատյանի կարգով քննության նախապատրաստելու ավարտից հետո. • ոչ • **այո, եթե դրանք ներկայացնողը հիմնավորում է գործի քննության նախապատրաստության ընթացքում այդ ապացույցները ներկայացնելու անհնարինությունը՝ իրենից անկախ պատճառներով** • այո • ոչ, բացառությամբ այն դեպքերի, երբ լրացուցիչ ապացույցները ներկայացնում է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը

130	Նախնական դատական նիստին կողմերից մեկի չներկայանալու դեպքում դատարանը չի կարող. • **իրականացնել գործի քննությունը և ավարտել այն** • գործը նախապատրաստել դատաքննությանը • հետաձգել նախնական դատական նիստը • նշանակել դատաքննություն
131	Կարո՞ղ է արդյոք վարչական դատարանն իր նախաձեռնությամբ մերժել ապացույցի ընդունումը և հետազոտումը. • վարչական դատարանը չի կարող իր նախաձեռնությամբ մերժել ապացույցի ընդունումը և հետազոտումը • վարչական դատարանը չի կարող իր նախաձեռնությամբ մերժել ապացույցի ընդունումը և հետազոտումը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի • վարչական դատարանը կարող է իր նախաձեռնությամբ մերժել ապացույցի ընդունումը և հետազոտումը, բացառությամբ այն դեպքերի, երբ ապացույցը ներկայացնում է ընտրական վեճով • **վարչական դատարանը կարող է իր նախաձեռնությամբ մերժել ապացույցի ընդունումը և հետազոտումը**
132	Ստորև թվարկվածներից որ սուբյեկտն իրավասու չէ դիմելու վարչական դատարան դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հայցով. • ֆիզիկական և իրավաբանական անձը • մարդու իրավունքների պաշտպանը • տեղական ինքնակառավարման մարմինները • **ՀՀ գլխավոր դատախազությունը**
133	Ի՞նչ է անում վարչական դատարանը, եթե դատական վիճաբանությունների ժամանակ անհրաժեշտ է համարում գործի համար նշանակություն ունեցող նոր հանգամանքներ պարզել կամ նոր ապացույցներ ձեռք բերել կամ հետազոտել. • որոշում է դատաքննությունը հետաձգել • որոշում է դատաքննությունը ընդմիջել • **որոշում է կայացնում գործի դատաքննությունն այդ մասով վերսկսելու մասին** • որոշում է դատաքննությունը կասեցնել
134	Վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործը քննելիս վարչական դատարանն իրավասու չէ. • պարզել, թե տեղի է ունեցել արդյոք վարչական իրավախախտման դեպքը • պարզել, թե նախատեսված է արդյոք օրենքով վարչական պատասխանատվություն տվյալ իրավախախտումը կատարելու համար • նշանակել կամ մերժել նշանակել վարչական տույժ • **վարչական տույժ նշանակելու դեպքում բռնագանձել դրա գումարը պատասխանողից**

135	Ստորև նշված ո՞ր դեպքում վարչական գործով չի կիրառվում արագացված դատաքննություն. • եթե դիմում է ներկայացվել ընտրողների ցուցակների ճշգրտման վերաբերյալ • եթե հայցն ակնհայտ հիմնավոր է • եթե անհրաժեշտ չէ լսել փորձագետին կամ հարցաքննել վկաներին, զննում կատարել, տալ դատական հանձնարարություններ, և, եթե կողմերը գրավոր համաձայնություն են ներկայացրել՝ գործը գրավոր ընթացակարգով քննելու վերաբերյալ • **եթե դիմում է ներկայացվել ընտրությունների արդյունքների վիճարկման վերաբերյալ**
136	Վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերով վարչական իրավախախտման մասին արձանագրությունն. • ինքնին ապացույց է • ապացույց է, եթե պատասխանողը չի առարկում • ապացույց է, եթե պատասխանողն ընդունում է իրավախախտման փաստը • **ինքնին ապացույց չէ**
137	Ի՞նչ է անում վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս. • լուծում է միջնորդությունները • լսում է կողմերին • որոշում է հաշտության համաձայնությունը հաստատելու կամ այն մերժելու հարցը • **գնահատում է ապացույցները**
138	Ստորև նշվածներից ո՞րը վարչական գործն ըստ էության լուծող դատական ակտի տեսակ չէ. • վարչական մարմնին այն վարչական ակտն ընդունելուն պարտավորեցնելու մասին, որի ընդունումը վարչական մարմինը մերժել է կամ չի ընդունել • դատավարության մասնակիցներին և այլ անձանց որոշակի գործողություններ կատարելուն կամ դրանց կատարումից ձեռնպահ մնալուն պարտավորեցնելու մասին • այլևս իրավաբանական ուժ չունեցող անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու մասին • **վարչական ակտն ամբողջությամբ կամ մասնակիորեն ուժը կորցրած ճանաչելու մասին**

139	Դատավարական որ սկզբունքներն են խախտվում, երբ դատարանը վճիռ է կայացնում գործին մասնակից չդարձված անձանց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ. • հավասարության • մրցակցային դատավարության • հրապարակայնության • **հավասարության և մրցակցային դատավարության**
140	Վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերով ով է կրում վարչական պատասխանատվություն նախատեսող արարքի ապացուցման բեռը. • այն ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որի դեմ ներկայացվել է հայցը • այն ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որը հայց է ներկայացրել ընդդեմ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի (պաշտոնատար անձի) և պնդում է, որ վերջինս, կատարելով որևէ գործողություն կամ չկատարելով որևէ հայցվող գործողություն, թույլ է տվել վարչական իրավախախտում • **պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը (պաշտոնատար անձը), որը կատարել է վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ ֆիզիկական կամ իրավաբանական անձի հայցադիմումի համար հիմք հանդիսացած գործողություն կամ չի կատարել որևէ հայցվող գործողություն, սակայն հայցվորի պնդմամբ պարտավոր էր այն կատարել** • վարչական դատարանը
141	Ո՞ր պահից են օրինական ուժի մեջ մտնում վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը. • **հրապարակման պահից մեկ ամիս հետո, եթե այդ ակտերի օրինական ուժի մեջ մտնելու այլ ժամկետ նախատեսված չէ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով** • հրապարակումից հետո 10-րդ օրը, եթե այդ ակտերի օրինական ուժի մեջ մտնելու այլ ժամկետ նախատեսված չէ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով • հրապարակումից հետո 7-րդ օրը, եթե այդ ակտերի օրինական ուժի մեջ մտնելու այլ ժամկետ նախատեսված չէ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով • հրապարակումից հետո 15-րդ օրը, եթե այդ ակտերի օրինական ուժի մեջ մտնելու այլ ժամկետ նախատեսված չէ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով

142	Ո՞ր դեպքերում է վարչական դատարանը կայացնում լրացուցիչ որոշում. • **գործի քննության ընթացքում դատարանի կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների էական կամ կոպիտ կամ պարբերական խախտումներ, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության և օրենքի այլ էական խախտումներ հայտնաբերելու դեպքում դատարանը վճռի հետ միաժամանակ կայացնում է լրացուցիչ որոշում** • գործի քննության ընթացքում դատարանի կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների և ազատությունների խախտումներ, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության խախտումներ հայտնաբերելու դեպքում դատարանը վճռի հետ միաժամանակ կայացնում է լրացուցիչ որոշում • դատարանը լրացուցիչ որոշում կայացնելու իրավունք չունի • ցանկացած դեպքում
143	Ու՞մ է ուղարկվում վարչական դատարանի լրացուցիչ որոշումը. • լրացուցիչ որոշումն ուղարկվում է ՀՀ կառավարություն • **լրացուցիչ որոշումն ուղարկվում է խախտում թույլ տված պաշտոնատար անձի վերադասին, իսկ դա չլինելու դեպքում՝ խախտում թույլ տված պաշտոնատար անձին** • լրացուցիչ որոշումն ուղարկվում է ՀՀ սահմանադրական դատարան • լրացուցիչ որոշումն ուղարկվում է Հանրապետության Նախագահին
144	Վարչական դատարանի դատական ակտերի դեմ, բացառությամբ այն դեպքերի, որոնց համար վերաքննություն օրենքով նախատեսված չէ, վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն. • դատավարության կողմ չհանդիսացող ցանկացած անձ • առաջին ատյանի դատարանում դատավարության մասնակից չդարձված անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ չի կայացվել գործն ըստ էության լուծող դատական ակտ • **գլխավոր դատախազը կամ նրա տեղակալները՝ օրենքով նախատեսված դեպքերում** • ցանկացած դատախազ՝ օրենքով նախատեսված դեպքերում
145	Վարչական դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել. • հրապարակման պահից սկսած 15-օրվա ընթացքում • դատական ակտը ստանալու պահից սկսած մեկամսյա ժամկետում • **երեք ամսվա ընթացքում այն պահից, երբ բողոքաբերը իմացել է կամ կարող է իմանալ նման դատական ակտի կայացման մասին, եթե նա դատավարության մասնակից չի դարձվել, իսկ նրա իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ** • հրապարակման պահից սկսած մեկամսյա ժամկետում՝ նոր կամ նոր երևան եկած հանգամանքների հիմքով դատական ակտը բողոքարկելու դեպքում

146	Վերաքննիչ բողոքում չի նշվում. • նյութական կամ դատավարական իրավունքի նորմի այն խախտումը, որը կարող էր ազդել գործի ելքի վրա • վերաքննիչ բողոքում նշված նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտման, ինչպես նաև գործի ելքի վրա դրանց ազդեցության վերաբերյալ հիմնավորումները կամ նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հետևանքով գործի վերանայման հիմքերը • **վերաքննիչ բողոքի էության հակիրճ նկարագրությունը** • բողոքին կցվող փաստաթղթերի ցանկը
147	Ըստ վարչական մարմնի հայցի ընդդեմ ֆիզիկական անձի՝ 100.000 ՀՀ դրամ տուգանք բռնագանձելու պահանջի մասին, և ըստ ֆիզիկական անձի հակընդդեմ հայցի ընդդեմ վարչական մարմնի՝ 100.000 ՀՀ դրամ տուգանք նշանակելու մասին վարչական ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին, վարչական գործով վարչական դատարանի վճռի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքի համար ենթակա է վճարման պետական տուրք հետևյալ չափով. • 100.000 ՀՀ դրամի 3 տոկոսի չափով • բազային տուրքի տասնապատիկի չափով • **100.000 ՀՀ դրամի 3 տոկոսի և բազային տուրքի տասնապատիկի հանրագումարի չափով** • 100.000 ՀՀ դրամի 2 տոկոսի և բազային տուրքի քսանապատիկի հանրագումարի չափով
148	Վերաքննիչ բողոքը վերադարձնելու հիմք չէ. • **վերաքննիչ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո** • բողոքի պատճենները՝ դատական ակտ կայացրած դատարանին և գործին մասնակցող այլ անձանց ուղարկելու մասին ապացույցները բողոքին կցված չլինելը • եթե բողոքի շրջանակում առերևույթ բացառվում է դատական սխալի՝ նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտման առկայության հնարավորությունը, որը կարող էր ազդել գործի ելքի վրա • եթե վերաքննիչ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո, և բաց թողած ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը մերժվել է
149	Վերաքննիչ բողոքը վերադարձվելու դեպքում այն կրկին կարող է ներկայացվել, եթե վերաքննիչ բողոքը վերադարձվել է հետևյալ հիմքով. • **բողոքի շրջանակում առերևույթ բացառվում է դատական սխալի՝ նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտման առկայության հնարավորությունը, որը կարող էր ազդել գործի ելքի վրա** • վերաքննիչ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո, և բաց թողած ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը մերժվել է • մինչև վերաքննիչ դատարանի կողմից բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելը բողոք բերած անձից դիմում է ստացվել այն հետ վերցնելու

	մասին • բողոքը ներկայացրել է այն անձը, որը վարչական դատարանի դատական ակտը բողոքարկելու իրավունք չունի
150	Վերաքննիչ դատարանը գործը պետք է քննի և որոշում կայացնի. • երկամսյա ժամկետում այն օրվանից, երբ ներկայացվել է վերաքննիչ բողոքը • երկամսյա ժամկետում այն օրվանից, երբ վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ • երկամսյա ժամկետում այն օրվանից, երբ լրացել է բողոքարկվող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու ժամկետը • **ողջամիտ ժամկետում**
151	Վերաքննիչ դատարանում գործի դատաքննությունն իրականացվում է. • վարչական դատարանում դատաքննության իրականացման կանոններին համապատասխան • **վարչական դատարանում դատաքննության իրականացման կանոններին համապատասխան՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված առանձնահատկությունների հաշվառմամբ** • վճռաբեկ դատարանում դատաքննության իրականացման կանոններին համապատասխան • վերաքննիչ քաղաքացիական դատարանում դատաքննության իրականացման կանոններին համապատասխան
152	Վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է. • վերաքննիչ բողոքում ներկայացված հիմքերի սահմաններում՝ ձեռնարկելով անհրաժեշտ միջոցներ բողոքն ըստ էության քննելու համար • **վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջի սահմաններում՝ ձեռնարկելով անհրաժեշտ միջոցներ բողոքն ըստ էության քննելու համար** • վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջի և հիմքերի սահմաններում՝ ձեռնարկելով անհրաժեշտ միջոցներ բողոքն ըստ էության քննելու համար • վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջի և հիմքերի սահմաններում՝ ձեռնարկելով անհրաժեշտ միջոցներ գործն ըստ էության քննելու համար
153	Ի՞նչ չի կարող կատարվել վարչական գործի նոր քննության ժամանակ. • **իրականացվել հայցից հրաժարում** • ընդունվել հայցվորի պահանջները • հրավիրվել նոր վկա • նշանակվել փորձաքննություն

154	Ի՞նչ ծավալով է իրականացվում գործի նոր քննությունը ստորադաս դատարանում. · գործի ամբողջ ծավալով · **վերադաս դատարանի սահմանած ծավալով** · հայցվորի առաջարկած ծավալով · դատավարության մասնակիցների համաձայնությամբ որոշված ծավալով
155	Վարչական գործի նոր քննությունից հետո կայացրած գործն ըստ էության լուծող դատական ակտն օրինական ուժի մեջ է մտնում. · քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի վճիռների ուժի մեջ մտնելու համար սահմանված կարգով · **վարչական դատարանի կայացրած՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի ուժի մեջ մտնելու համար սահմանված կարգով** · վճռաբեկ դատարանի որոշումների ուժի մեջ մտնելու համար սահմանված կարգով · դատարանների նախագահների խորհրդի կողմից սահմանված կարգով
156	Վարչական վերաքննիչ դատարանի՝ բողոքը վերադարձնելու մասին որոշումը կարող է բողոքարկվել՝. · **վճռաբեկության կարգով՝ որոշումը ստանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում** · վճռաբեկության կարգով՝ որոշումը ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում · վերաքննության կարգով՝ որոշումը ստանալուց հետո՝ 14-օրյա ժամկետում · վճռաբեկության կարգով՝ որոշումը ստանալուց հետո՝ մեկ ամսյա ժամկետում
157	Վարչական դատարանի ստորև նշված ո՞ր միջանկյալ դատական ակտը բողոքարկման ենթակա չէ. · հայցի ապահովում ձեռնարկելու մասին · լրացուցիչ վճիռ կայացնելը մերժելու մասին · վրիպակները, գրասխալները և թվաբանական սխալներն ուղղելու կամ ուղղում կատարելը մերժելու մասին · **փորձաքննություն նշանակելու մասին միջնորդությունը մերժելու մասին**
158	Ի՞նչ կարգով կարող է բողոքարկվել վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի վերանայման արդյունքով վերաքննիչ դատարանի կայացված որոշումը. · վերաքննության կարգով · կարող է բողոքարկվել վարչական դատարանի նախագահին · **վճռաբեկության կարգով** · բողոքարկման ենթակա չէ

159	Վարչական վերաքննիչ դատարանը միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքները քննում և կայացնում է որոշում. · **գործը ստանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում** · գործը ստանալուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում · գործը ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում · գործը ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում
160	Վարչական դատավարությունում թվարկածներից ո՞վ իրավունք ունի վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտը բողոքարկելու վճռաբեկ դատարանում. · դատավարության կողմ չհանդիսացող ցանկացած անձ · առաջին ատյանի և վերաքննիչ դատարանում դատավարության մասնակից չդարձված անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ չի կայացվել գործն ըստ էության լուծող դատական ակտ · **գլխավոր դատախազը կամ նրա տեղակալները՝ օրենքով նախատեսված դեպքերում** · միայն գլխավոր դատախազը
161	Վարչական դատավարությունում միջանկյալ դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք կարող է բերվել միայն. · **վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ այն ստանալու պահից տասնհինգօրյա ժամկետում, եթե վարչական դատավարության օրենսգրքով կամ այլ օրենքով այլ ժամկետ սահմանված չէ** · վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ այն ստանալու պահից մեկամսյա ժամկետում, եթե վարչական դատավարության օրենսգրքով կամ այլ օրենքով այլ ժամկետ սահմանված չէ · վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ այն ստանալու պահից երկշաբաթյա ժամկետում, եթե վարչական դատավարության օրենսգրքով կամ այլ օրենքով այլ ժամկետ սահմանված չէ · վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ այն ստանալու պահից երեսուն օրյա ժամկետում, եթե վարչական դատավարության օրենսգրքով կամ այլ օրենքով այլ ժամկետ սահմանված չէ
162	Վարչական դատավարությունում վճռաբեկ բողոք բերած անձն իրավունք ունի դիմում ներկայացնելու բողոքը հետ վերցնելու մասին. · **վճռաբեկ դատարան բողոք ներկայացնելուց հետո մինչև դատաքննության ավարտը** · մինչև վճռաբեկ դատարանում գործի քննությունն սկսելը · մինչև դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը · վճռաբեկ դատարան բողոք ներկայացնելուց հետո մեկամսյա ժամկետում

163	Վարչական դատավարությունում վճռաբեկ դատարանը գործը պետք է քննի և որոշում կայացնի. • **ողջամիտ ժամկետում** • ողջամիտ ժամկետում, բայց ոչ ուշ քան հարյուր օրում • մեկամսյա ժամկետում • բողոք ներկայացնելուց հետո մեկամսյա ժամկետում
164	Վարչական դատավարությունում վերադաս դատարանի կողմից ստորադաս դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտը բեկանելու և գործը նոր քննության վերադարձնելու մասին դատական ակտ կայացնելու դեպքում. • ստորադաս դատարանը շարունակում է գործի քննությունը գործը ստանալուց ոչ ուշ, քան 3 օր հետո • ստորադաս դատարանը հարուցում է վերանայման վարույթ գործը ստանալուց ոչ ուշ, քան 3 օր հետո • **ստորադաս դատարանը հարուցում է գործի նոր քննության վարույթ գործը ստանալուց ոչ ուշ, քան 3 օր հետո** • ստորադաս դատարանը փոփոխում է դատական ակտը
165	Վճռաբեկ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վարչական դատարանում դիրքորոշում արտահայտած չլինելու դեպքում. • **վճռաբեկ դատարանը այն քննության առարկա չի դարձնում** • վճռաբեկ դատարանը այն քննության առարկա է դարձնում • վճռաբեկ դատարանը այն քննության առարկա է դարձնում, եթե բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար • վճռաբեկ դատարանը այն քննության առարկա է դարձնում, եթե բողոքում բարձրացված հարցին չանդրադառնալը կարող է ծանր հետևանքներ առաջացնել բողոքաբերի համար
166	Նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ վարչական դատարանի ընդդատությանը վերապահված գործերն ըստ էության ի՞նչ կազմով է քննում և լուծում վարչական դատարանը. • կոլեգիալ՝ ամբողջ կազմով • կոլեգիալ՝ 3 դատավորի կազմով • **կոլեգիալ՝ 5 դատավորի կազմով** • միանձնյա
167	Ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման՝ վարչական դատարանը կարող է արդյոք դուրս գալ հայցի սահմաններից. • այո, իր հայեցողությամբ • միայն եթե դա բխում է արդարադատության շահերից • միայն եթե հակառակ դեպքում հնարավոր չէ ապահովել իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը • **ոչ, չի կարող**

168	Այն դեպքում, երբ վիճարկվում է որևէ նորմատիվ իրավական ակտի համապատասխանությունը ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ ակտին, վարչական դատարանը դատական ակտ կայացնելիս ի՞նչ կարող է անել. • ստուգել նաև տվյալ ակտի համապատասխանությունն այլ՝ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ ակտերին, եթե կողմերից մեկը ներկայացրել է նման միջնորդություն, և եթե դա վերապահված չէ ՀՀ սահմանադրական դատարանին • **կարող է ստուգել նաև տվյալ ակտի համապատասխանությունն այլ՝ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ ակտերին, եթե դա վերապահված չէ ՀՀ սահմանադրական դատարանի իրավասությանը** • ստուգել նաև տվյալ ակտի համապատասխանությունն այլ՝ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ ակտերին, եթե առանց այդ ակտերի համապատասխանությունը ստուգելու հնարավոր չէ կայացնել իրավաչափ որոշում • կարող է կողմերին առաջարկել ներկայացնելու նոր դիմում, ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ ակտերին վիճարկվող ակտի համապատասխանությունն ստուգելու հարցով
169	Ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերով վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը. • օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և ենթակա են բողոքարկման վերաքննության կարգով • օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և ենթակա են բողոքարկման վճռաբեկության կարգով • օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից և ենթակա են բողոքարկման վճռաբեկության կարգով • **օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից և ենթակա չեն բողոքարկման**
170	Անվավեր ճանաչված նորմատիվ իրավական ակտերի վրա հիմնված՝ վարչական դատարանի որոշման ընդունմանը նախորդող ժամանակահատվածում ընդունված և կատարված վարչական կամ դատական ակտերը. • ենթակա են վերանայման դատարանի կողմից սահմանված ժամկետում • ենթակա են վերանայման, մեկամսյա ժամկետում • **վերանայման ենթակա չեն, սակայն վարչական դատարանի որոշման օրինական ուժի մեջ մտնելու պահից այլևս չեն կարող կիրառվել** • ենթակա են վերանայման ողջամիտ ժամկետում

171	Վարչական դատարանը ի՞նչ ժամկետով կարող է հետաձգել իր կողմից անվավեր ճանաչված նորմատիվ իրավական ակտի իրավաբանական ուժը կորցնելու ժամկետը. · **ոչ ավել, քան 3 ամիս** · ոչ ավել, քան 6 ամիս · ոչ ավել, քան 9 ամիս · ոչ ավել, քան 1 տարի
172	Հավաքի անցկացման մասին համայնքի ղեկավարի որոշումների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերը քննելիս վարչական դատարանն ընդունում է որոշում. · **համայնքի ղեկավարի որոշումը ուժի մեջ թողնելու մասին** · համայնքի ղեկավարի որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին · հավաքի անցկացումը թույլատրելու մասին · հավաքի անցկացումն արգելելու մասին
173	Վարչական դատարանին ընդդատյա ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործեր չեն. · Ազգային ժողովի ընտրությունների ընթացքում թեկնածուների և կուսակցությունների ընտրական ցուցակները գրանցելու վերաբերյալ վարչական ակտերի իրավաչափությունը վիճարկելու մասին գործերը · տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքների վիճարկման վերաբերյալ գործերը · **ընտրողների ցուցակների ճշգրտման վերաբերյալ գործերը** · ընտրական հանձնաժողովների կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի նկատմամբ հսկողություն իրականացնելու հետ կապված գործերը
174	Ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ հայցով վարչական դատարան չեն կարող դիմել. · ընտրողները, եթե համարում են, որ վարչական մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ խախտվել է նրանց ընտրելու իրավունքը · ընտրվողները, եթե համարում են, որ վարչական մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ խախտվել է նրանց ընտրվելու իրավունքը · **ընտրողները, եթե համարում են, որ վարչական մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ խախտվել է նրանց նախընտրած թեկնածուի ընտրվելու իրավունքը** · համապատասխան ընտրական հանձնաժողովները՝ թեկնածուի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու պահանջով

175	Ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերը վարչական դատարանը քննում է. · միանձնյա՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքների վիճարկման վերաբերյալ գործերով · կոլեգիալ՝ 3 դատավորի կազմով, Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով թեկնածուի գրանցումը մերժելու վերաբերյալ վարչական ակտերը վիճարկելու մասին գործերով · կոլեգիալ՝ 5 դատավորի կազմով, թեկնածուի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու պահանջով դատարան դիմելուն համապատասխան ընտրական հանձնաժողովներին պարտավորեցնելու վերաբերյալ գործերով **· միանձնյա՝ ընտրական հանձնաժողովների կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի նկատմամբ հսկողություն իրականացնելու հետ կապված գործեր**
176	Վարչական դատարանն ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերը քննում է. **· քվեարկության օրվանից հինգից երկու օրացուցային օր առաջ ներկայացված՝ ընտրական հանձնաժողովների կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի նկատմամբ հսկողություն իրականացնելու հետ կապված հայցադիմումները՝ մինչև քվեարկության օրը** · քվեարկության օրը, դրան նախորդող կամ հաջորդող օրը ներկայացված՝ ընտրական հանձնաժողովների կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի նկատմամբ հսկողություն իրականացնելու հետ կապված հայցադիմումները՝ ոչ ուշ, քան ընտրությունների արդյունքների ամփոփման՝ օրենքով սահմանված վերջնաժամկետի օրը · քվեարկության օրվանից վեց և ավելի օր օր առաջ ներկայացված՝ ընտրական հանձնաժողովների կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի նկատմամբ հսկողություն իրականացնելու հետ կապված հայցադիմումները՝ օրացուցային հինգ օրվա ընթացքում · ընտրությունների արդյունքների վիճարկման վերաբերյալ հայցադիմումները՝ ոչ ուշ, քան հայցադիմումները ստանալուց հետո՝ օրացուցային հինգ օրվա ընթացքում
177	Ընտրական հանձնաժողովների կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի նկատմամբ հսկողություն իրականացնելու հետ կապված հայցադիմումներ կարող են ներկայացվել. · անկախ ժամկետներից · անկախ ժամկետներից, բայց ոչ ուշ, քան քվեարկության հաջորդ օրը ներառյալ **· նախընտրական քարոզչությունը սկսվելու օրվանից մինչև քվեարկության հաջորդ օրը ներառյալ** · նախընտրական քարոզչությունը սկսվելու օրվանից մինչև ընտրությունների

	արդյունքների ամփոփման՝ օրենքով սահմանված վերջնաժամկետի նախորդ օրը ներառյալ
178	ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված հատուկ ժամկետների հաշվառմամբ դատավորը ընտրական գործեր քննելիս պետք է ձգտի գործի քննությունն իրականացնել այնպիսի ժամկետում, որ. • ավարտի գործի քննությունը մինչև քվեարկության նախորդ օրը • քվեարկության օրը հայցադիմում ներկայացվելու դեպքում՝ ավարտի գործի քննությունը նույն օրը • քվեարկությունից հետո հայցադիմում ներկայացվելու դեպքում՝ ավարտի գործի քննությունը մինչև ընտրությունների արդյունքների ամփոփման՝ օրենքով սահմանված վերջնաժամկետի նախորդ օրը • **չխաթարվեն հետագա ընտրական գործընթացները**
179	Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նորմատիվ բնույթ ունեցող որոշումները վիճարկելու վերաբերյալ գործերը վարչական դատարանը քննում է. • նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի քննության համար սահմանված ժամկետներում • **նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի քննության համար սահմանված կազմով** • բանավոր ընթացակարգով • օրացուցային 15 օրվա ընթացքում
180	Ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերով վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերը. • վերջնական են, վերանայման ենթակա չեն և ուժի մեջ են մտնում կայացման պահից • **ուժի մեջ են մտնում կայացման պահից և կարող են բողոքարկվել վերաքննության կարգով ստանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում** • ուժի մեջ են մտնում կայացման պահից և կարող են բողոքարկվել վերաքննության կարգով ստանալուց հետո անհապաղ • ուժի մեջ են մտնում կայացման պահից և կարող են բողոքարկվել վճռաբեկության կարգով ստանալուց հետո եռօրյա ժամկետում

181	Եթե գործի քննությունից հետո վարչական դատարանը, սպառելով ապացույցներ ձեռք բերելու համար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցները, այդուհանդերձ, հնարավորություն չի ունեցել պարզելու ընտրության իրական արդյունքները, սակայն վարչական դատարանի կողմից որպես հավաստի գնահատված ապացույցներից ակնհայտ է դարձել, որ ընտրախախտումներն ունեցել են կազմակերպված, զանգվածային, կրկնվող կամ պարբերական բնույթ, և դրանց համադրումը վկայում է դրանց միջև համակարգային այնպիսի փոխկապակցվածության մասին, որի պայմաններում խախտվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 4-րդ հոդվածով ամրագրված ընտրական իրավունքի սկզբունքները, ապա որոշում ընդունելիս վարչական դատարանն իրավասու է. • նշանակել նոր ընտրություններ • **անվավեր ճանաչել ընտրությունների արդյունքները** • ընտրությունները ճանաչել չկայացած • պարտավորեցնել համապատասխան ընտրական հանձնաժողովին անցկացնել նոր ընտրություններ
182	Վարչական դատարան չեն կարող դիմել. • ֆիզիկական անձինք, եթե համարում են, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված նրանց իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվեին Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտերի ուժով • հասարակական կազմակերպությունները, եթե համարում են, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ անմիջականորեն կարող են խախտվել նրանց՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները • պետական և տեղական ինքնակառավարման մարմինները կամ պաշտոնատար անձինք՝ ընդդեմ վարչական մարմնի, եթե համարում են, որ այդ մարմնի վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ խախտվել կամ անմիջականորեն կարող են խախտվել պետության կամ համայնքի այն իրավունքները, որոնց պաշտպանության լիազորությունը դրված է դիմողի վրա, եթե այդ վեճը ենթակա չէ լուծման վերադասության կարգով • **բոլոր հասարակական կազմակերպությունները, եթե համարում են, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց**

	պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ անմիջականորեն կարող են խախտվել որևէ անձի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները
183	Դատավարական ժամկետների ավարտն ի՞նչ իրավական հետևանք է առաջացնում գործին մասնակցող անձանց համար. **• նրանք կորցնում են այդ ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը՝ պահպանելով այդ իրավունքը վերականգնելու հնարավորությունը** • նրանք կորցնում են այդ ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը՝ առանց այդ իրավունքը վերականգնելու հնարավորության • նրանք չեն կորցնում այդ ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը, սակայն չեն կարող պահանջել դատարանից ընթացք տալ իրենց կողմից ներկայացված փաստաթղթերին • որևէ իրավական հետևանք չի առաջացնում
184	Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշման՝ հայցի ապահովման ինստիտուտի շրջանակներում դատարանը. **• կարող է կասեցնել վարչական ակտի գործողությունը** • պարտավոր է կասեցնել վարչական ակտի գործողությունը • չի կարող կասեցնել վարչական ակտի գործողությունը • համարում է վարչական ակտի գործողությունը մեխանիկորեն կասեցված

185	Վիճարկման հայցի դեպքում ե՞րբ կարող է հայցը վարչական դատարան ներկայացվել. **• երկամյա ժամկետում՝ վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահից** • երկամյա ժամկետում՝ վարչական ակտի ընդունման պահից • մեկամյա ժամկետում՝ վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահից • մեկամյա ժամկետում՝ վարչական ակտի ընդունման պահից
186	Ինչպիսի՞ն է պատասխանողի կողմից հայցադիմումի պատասխանը ներկայացնելու կարգը՝ համաձայն վարչական դատավարության օրենսգրքի. **• պատասխանողը պարտավոր է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, դատարան ուղարկել հայցադիմումի պատասխանը** • պատասխանողն իրավունք ունի հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, դատարան ուղարկել հայցադիմումի պատասխանը • պատասխանողն իրավունք ունի հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում, դատարան ուղարկել հայցադիմումի պատասխանը • պատասխանողը պարտավոր է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում, դատարան ուղարկել հայցադիմումի պատասխանը
187	Վարչական մարմինն ի՞նչ հարցով չի կարող դիմել վարչական դատարան. • ֆիզիկական կամ իրավաբանական անձին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջով, եթե օրենքով նախատեսված է, որ վարչական պատասխանատվության կարող է ենթարկել միայն դատարանը • ֆիզիկական կամ իրավաբանական անձանց որոշակի իրավունքներից զրկելու կամ նրանց վրա որոշակի պարտականություններ դնելու պահանջով, եթե օրենքով դա վերապահված է դատարանին • վարչական ակտի հիման վրա ֆիզիկական կամ իրավաբանական անձից բռնագանձում իրականացնելու պահանջով **• ընդդեմ մեկ այլ վարչական մարմնի իրավասության վերաբերյալ վեճով, եթե այդ վեճը ենթակա է լուծման վերադասության կարգով, սակայն չի լուծվել**

188	Վարչական ակտն անվավեր ճանաչելու պահանջի շրջանակներում դատարանն ի՞նչ վճիռ չի կարող կայացնել. • **փոփոխել վարչական ակտը** • անվավեր ճանաչել վարչական ակտը • մասնակի անվավեր ճանաչել վարչական ակտը • մերժել հայցը
189	Վճռի իրավական հիմնավորումն առավելապես իրենից ներկայացնում է. • հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ նյութական իրավունքի համապատասխան նորմի վկայակոչում • հաստատված փաստերի, իրավահարաբերությունների նկատմամբ նյութական իրավունքի համապատասխան նորմի վկայակոչում և եզրահանգում • **հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ նյութական իրավունքի համապատասխան նորմի ընտրություն, վկայակոչում, կիրառում և տվյալ նորմի կիրառման պատճառաբանում** • հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ նյութական իրավունքի համապատասխան նորմի վկայակոչում և կիրառում
190	Ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ հայցադիմում կարող է ներկայացվել. • **3 օրացուցային օրվա ընթացքում այն օրվանից, երբ հայցվորն իմացել է կամ ողջամտորեն պարտավոր էր իմանալ իր ընտրական իրավունքի խախտման մասին** • 3 աշխատանքային օրվա ընթացքում այն օրվանից, երբ հայցվորն իմացել է կամ ողջամտորեն պարտավոր էր իմանալ իր ընտրական իրավունքի խախտման մասին • 3 օրվա ընթացքում այն օրվանից, երբ հայցվորն իմացել է կամ ողջամտորեն պարտավոր էր իմանալ իր ընտրական իրավունքի խախտման մասին • մինչև քվեարկության նախորդ օրը, անկախ ժամանակային սահմանափակումից, իսկ քվեարկությունից հետո՝ մինչև ընտրությունների արդյունքների ամփոփման՝ օրենքով սահմանված վերջնաժամկետի նախորդ օրը
191	Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց նորմատիվ իրավական ակտերի վիճարկման վերաբերյալ ո՞ր գործերն ընդդատյա չեն վարչական դատարանին. • գերատեսչական նորմատիվ իրավական ակտերի՝ ՀՀ օրենքներին համապատասխանությունը վիճարկելու վերաբերյալ գործերը • **տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանությունը վիճարկելու վերաբերյալ գործերը** • ՀՀ Նախագահի նորմատիվ բնույթ ունեցող ակտերի՝ ՀՀ օրենքներին համապատասխանությունը վիճարկելու վերաբերյալ գործերը

	• ՀՀ կառավարության նորմատիվ որոշումների՝ ՀՀ օրենքներին համապատասխանությունը վիճարկելու վերաբերյալ գործերը
192	Հավաքը սահմանափակումներով անցկացնելու մասին համայնքի ղեկավարի որոշման իրավաչափության վիճարկման վերաբերյալ գործերը ընդդատյա են. • ՀՀ սահմանադրական դատարանին **• ՀՀ վարչական դատարանին** • ՀՀ ընդանուր իրավասության առաջին ատյանի դատարանին • ՀՀ կենտրոնական բանկին
193	Վարչական դատավարությունում դատական նիստին ներկայացուցչի հետ մասնակցող կողմն իրավունք ունի. • իր ներկայացուցչի լիազորությունները հաստատելու դատարանի առջև՝ բանավոր սահմանելով վերջինիս լիազորությունների ծավալը • իր ներկայացուցչի լիազորությունները հաստատելու դատարանի առջև՝ առանց սահմանելու վերջինիս լիազորությունների ծավալը • իր ներկայացուցչի լիազորությունները իրավունք չունի հաստատելու դատարանի առջև **• իր ներկայացուցչի լիազորությունները հաստատելու դատարանի առջև՝ գրավոր սահմանելով վերջինիս լիազորությունների ծավալը**
194	Վարչական դատարանի կողմից փաստերի ի պաշտոնե պարզման սկզբունքը (ex officio) ենթադրում է, որ. **• գործի փաստերը վարչական դատարանը պարզում է ի պաշտոնե** • գործի իրավական հարցերը վարչական դատարանը պարզում է ի պաշտոնե • գործի իրավական հարցերը և փաստերը վարչական դատարանը պարզում է ի պաշտոնե • գործի փաստերը, ինչպես նաև գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հարցերը վարչական դատարանը պարզում է ի պաշտոնե
195	Վարչական դատարանում կոլեգիալ կարգով դատական ակտ կայացնելիս դատավորը. • իրավունք ունի ձեռնպահ մնալու քվեարկելուց **• իրավունք չունի ձեռնպահ մնալու քվեարկելուց** • իրավունք ունի ձեռնպահ մնալու քվեարկելուց, եթե ներկայացնում է հատուկ կարծիք • միայն նիստում նախագահողն իրավունք ունի ձեռնպահ մնալու քվեարկելուց

196	Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները կամ պաշտոնատար անձինք՝ ընդդեմ վարչական մարմնի վարչական դատարան կարող են դիմել. • եթե համարում են, որ այդ մարմնի վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ խախտվել կամ անմիջականորեն կարող են խախտվել պետության կամ համայնքի իրավունքները, անկախ այն հանգամանքից դրանց պաշտպանության լիազորությունը դրված է դիմողի վրա, թե ոչ • եթե համարում են, որ այդ մարմնի վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ խախտվել կամ անմիջականորեն կարող են խախտվել պետության կամ համայնքի իրավունքները, անկախ այն հանգամանքից դրանց պաշտպանության լիազորությունը դրված է դիմողի վրա, թե ոչ, եթե այդ վեճը ենթակա չէ լուծման վերադասության կարգով **• եթե համարում են, որ այդ մարմնի վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ խախտվել կամ անմիջականորեն կարող են խախտվել պետության կամ համայնքի այն իրավունքները, որոնց պաշտպանության լիազորությունը դրված է դիմողի վրա, եթե այդ վեճը ենթակա չէ լուծման վերադասության կարգով** • եթե այդ վեճը ենթակա չէ լուծման վերադասության կարգով
197	Վարչական դատավարությունում իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում գտնվող հակառակ կողմի պահանջները կամ առարկությունները հիմնավորող ապացույցներ վարչական դատարան ներկայացնելու պարտականությունը կրում է. **• միայն վարչական մարմինը** • միայն իրավաբանական անձինք • կողմերը • վարչական մարմինները, պաշտոնատար անձինք, ֆիզիկական և իրավաբանական անձինք
198	Վարչական դատավարությունում հատուկ վարույթ չի հանդիսանում. • նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթը • հավաքի անցկացման մասին համայնքի ղեկավարի որոշումների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթը • ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերի վարույթը **• արհեստակցական միությունների գործունեությունը կասեցնելու կամ դադարեցնելու վերաբերյալ վեճերով գործերի վարույթը**
199	Վարչական դատավարությունում հատուկ վարույթ է հանդիսանում. **• դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերի վարույթը** • արհեստակցական միությունների գործունեությունը կասեցնելու կամ դադարեցնելու վերաբերյալ վեճերով գործերի վարույթը • կուսակցությունների, գործունեությունը կասեցնելու վերաբերյալ վեճերով

	գործերի վարույթը • հանրային իրավունքի բնագավառում գործող կամ գործելու նպատակ ունեցող միավորումների գործունեությունը դադարեցնելու վերաբերյալ վեճերով գործերի վարույթը
200	Նորմատիվ իրավական ակտն անվավեր ճանաչելու մասին վարչական դատարանի որոշումները պաշտոնական հրապարակման պահից Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում պարտադիր են. • միայն կողմերի համար • միայն վարչական մարմինների համար **• բոլորի համար** • միայն հանրային իրավունքի բնագավառում գործող կամ գործելու նպատակ ունեցող միավորումների համար

№	2014 թվականի գարնանային հոսք ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՐՑԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ
1	Ըստ օրինականության սկզբունքի. • հանցանք կատարած յուրաքանչյուր անձ ենթակա է քրեական պատասխանատվության • **արարքի հանցավորությունը, դրա պատժելիությունը և քրեաիրավական այլ հետևանքները որոշվում են միայն քրեական օրենքով** • արարքի հանցավորությունը և դրա պատժելիությունը որոշվում են դա կատարելու ժամանակ գործող քրեական օրենքով • անձը ենթակա է քրեական պատասխանատվության միայն անձամբ իր կատարած հանցանքի համար
2	Ա-ն առանց հաշվառման ապօրինաբար զբաղվել է դեղագործական գործունեությամբ, որի արդյունքում տուժողի առողջությանը անզգուշությամբ պատճառվել է միջին ծանրության վնաս: Խնդրվում է որակել Ա-ի արարքը. • **Ա-ի արարքում առկա է դեղագործական գործունեությամբ ապօրինաբար զբաղվելու հանցակազմ** • Ա-ի արարքում առկա է տուժողի առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելու հանցակազմ • Ա-ի արարքում առկա է անզգուշությամբ տուժողի առողջությանը ծանր վնաս պատճառելու հանցակազմ • Ա-ի արարքում առկա են ինքնիրավչության և անզգուշությամբ տուժողի առողջությանը ծանր վնաս պատճառելու հանցակազմեր
3	Օրենքի առջև հավասարության սկզբունքը որպես խտրականության անթույլատրելի չափանիշ չի սահմանում. • կրոնը • լեզուն • **տարիքը** • գույքային դրությունը
4	Անձնական պատասխանատվության սկզբունքը սահմանում է, որ. • հանցանք կատարած յուրաքանչյուր անձ ենթակա է պատժի կամ քրեաիրավական այլ ներգործության • **անձը ենթակա է քրեական պատասխանատվության միայն անձամբ իր կատարած հանցանքի համար** • անձը ենթակա է քրեական պատասխանատվության միայն հանրության համար վտանգավոր այնպիսի արարքի համար, որը կատարման պահին քրեական օրենքով համարվել է հանցագործություն • արարքի հանցավորությունը, դրա պատժելիությունը և քրեաիրավական այլ հետևանքները որոշվում են միայն քրեական օրենքով

5	Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը հիմնվում է. • ՀՀ քրեական օրենսգրքի և քրեաիրավական նորմեր պարունակող այլ իրավական ակտերի վրա • **Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և միջազգային իրավունքի սկզբունքների ու նորմերի վրա** • Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, քրեական օրենսգրքի և այլ իրավական ակտերի վրա • Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի վրա: Քրեական պատասխանատվություն նախատեսող նոր օրենքներն ընդգրկվում են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում
6	Ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքը սահմանում է, որ. • անձը ենթակա է քրեական պատասխանատվության միայն հանրության համար վտանգավոր այնպիսի արարքի և դրա հետևանքների համար, որոնց վերաբերյալ նա դրսևորել է դիտավորություն • անձը ենթակա է քրեական պատասխանատվության միայն հանրության համար վտանգավոր այնպիսի արարքի համար, որը կատարման պահին քրեական օրենքով համարվել է հանցագործություն • **անձը ենթակա է քրեական պատասխանատվության միայն հանրության համար վտանգավոր այնպիսի գործողության կամ անգործության և հանրության համար վտանգավոր հետևանքների համար, որոնց վերաբերյալ նրա մեղքը հաստատվել է իրավասու դատարանի կողմից** • սուբյեկտիվ մեղսայնացումը արգելվում է
7	Մարդու իրավունքների պաշտպանին, կապված նրա լիազորությունների իրականացման հետ, վիրավորանք հասցնելը. • հանցագործություն չի համարվում • համարվում է կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործություն • **համարվում է արդարադատության դեմ ուղղված հանցագործություն** • համարվում է մարդու իրավունքների պաշտպանի դեմ ուղղված հանցագործություն
8	Ինքնասպանության հասցնելու սուբյեկտիվ կողմը դրսևորվում է. • միայն դիտավորությամբ • միայն անզգուշությամբ • միայն անուղղակի դիտավորությամբ • **անուղղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ**
9	Հանցագործություն է համարվում. • մեղավորությամբ կատարված այն արարքը, որն արգելված է քրեական օրենսգրքով • **մեղավորությամբ կատարված՝ հանրության համար վտանգավոր այն արարքը, որը նախատեսված է քրեական օրենսգրքով** • հանրության համար վտանգավոր այն արարքը, որը նախատեսված է քրեական

	օրենսգրքով • մեղավորությամբ կատարված՝ հանրության համար վտանգավոր, պատժելի այն արարքը, որը նախատեսված է քրեական օրենսգրքով
10	Կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործություն չէ. • մոր կողմից նորածին երեխայի սպանությունը • հանցանք կատարած անձին բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցմամբ սպանությունը • **բժշկական գաղտնիքը հրապարակելը** • փոխպատվաստման վիրահատություն կատարելու կանոնները խախտելը
11	Կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործություն է. • սեքսուալ բնույթի բռնի գործողությունները • բժշկական գաղտնիք հրապարակելը • **մարդու իմունային անբավարարության վիրուսի հարուցիչով վարակելը** • մարդկանց կյանքի կամ առողջության համար վտանգավոր հանգամանքների վերաբերյալ տեղեկություն թաքցնելը
12	Արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքն արգելում է. • օբյեկտիվ մեղսայնացումը • անձին խոշտանգումների, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ենթարկելը • **նույն հանցագործության համար անձին երկրորդ անգամ դատապարտելը** • քրեական օրենքն անալոգիայով կիրառելը
13	Գործուն զղջալու հիմքով անձին քրեական պատասխանատվությունից ազատելու պայմաններ են հանդիսանում առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարելը: Ինչպիսի՞ պայմաններ պետք է նախատեսվեն նոր օրենքով, որպեսզի այն համարվի հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ վատթարացնող օրենք. • առաջին անգամ ցանկացած տեսակի հանցանք կատարելը • առաջին անգամ ոչ մեծ, միջին ծանրության կամ ծանր հանցանք կատարելը • **առաջին անգամ ոչ մեծ ծանրության հանցանք կատարելը** • ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարելը
14	Ըստ հանրության համար վտանգավարության բնույթի և աստիճանի հանցակազմերը լինում են. • նյութական, ձևական և հատած • երկընտրելի դիսպոզիցիայով • պարզ, բարդ և այլընտրանքային • **հիմնական, մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով**

15	Սեփականության դեմ ուղղված հանցագործություն է. • բնակարանի անձեռնմխելիությունը խախտելը • **գույքի պահպանության պարտականություններն անփույթ կամ անբարեխիղճ կատարելը** • ռադիոակտիվ նյութեր հափշտակելը կամ շորթելը • թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր հափշտակելը կամ շորթելը
16	Կողոպուտ է համարվում. • **ուրիշի գույքի բացահայտ հափշտակությունը** • ուրիշի գույքի բացահայտ հափշտակությունը զգալի չափերով • ուրիշի գույքի գաղտնի հափշտակությունը զգալի չափերով • ուրիշի գույքը հափշտակելու նպատակով հարձակումը
17	Գողության համար զգալի չափ է համարվում. • հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից հարյուրապատիկը չգերազանցող գումարը (արժեքը) • հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից հազարապատիկը չգերազանցող գումարը (արժեքը) • հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից հինգհարյուրապատիկը չգերազանցող գումարը (արժեքը) • **հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկից հինգհարյուրապատիկը չգերազանցող գումարը (արժեքը)**
18	Հափշտակության համար խոշոր չափ է համարվում. • հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից հազարապատիկը չգերազանցող գումարը (արժեքը) • **հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից երեքհազարապատիկը չգերազանցող գումարը (արժեքը)** • հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկը չգերազանցող գումարը (արժեքը) • հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկից երեքհազարապատիկը չգերազանցող գումարը (արժեքը)
19	Հափշտակության համար առանձնապես խոշոր չափ է համարվում. • հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող գումարը (արժեքը) • հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը գերազանցող գումարը (արժեքը) • **հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհազարապատիկը գերազանցող գումարը (արժեքը)** • հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձը

20	Գողությունը, դա. • **ուրիշի գույքի զգալի չափերով գաղտնի հափշտակությունն է** • ուրիշի գույքի բացահայտ հափշտակությունն է զգալի չափերով • ուրիշի գույքի յուրացումն է զգալի չափերով • ուրիշի գույքի բռնի հափշտակությունն է, որը մեծ վնաս է պատճառել տուժողին
21	Գողությունը համարվում է ծանրացնող հանգամանքներում կատարված, եթե. • **այն կատարվել է պահեստարան կամ շինություն ապօրինի մուտք գործելով** • այն կատարվել է տուժողի նկատմամբ բռնություն գործադրելով • այն կատարվել է գիշեր ժամանակ • այն կատարվել է տուժողի անօգնական վիճակն օգտագործելով
22	Ըստ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի խարդախությունը, դա. • հանցավորին վստահված ուրիշի գույքի հափշտակությունն է զգալի չափերով • խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով ուրիշին գույքային վնաս պատճառելն է, զգալի չափերով • **խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով ուրիշի գույքի զգալի չափերով հափշտակությունն է կամ ուրիշի գույքի նկատմամբ իրավունք ձեռք բերելը** • այլ անձանց գույքի նկատմամբ իրավունք ձեռք բերելն է, որը ենթադրում է այդ գույքի օգտագործում, տիրապետում և տնօրինում
23	Խարդախությունը համարվում է ծանրացնող հանգամանքներում կատարված, եթե. • այն կատարվել է հանցավորից կախյալ վիճակում գտնվող անձի նկատմամբ • այն կատարվել է զգալի չափերով • **պաշտոնեական դիրքն օգտագործելով** • այն կատարվել է օտարերկրացու նկատմամբ
24	Յուրացնելը կամ վատնելը, համաձայն քրեական օրենսգրքի 179 հոդվածի սահմանման, դա. • հանցավորին վստահված ուրիշի գույքի հափշտակությունն է • **հանցավորին վստահված ուրիշի գույքի հափշտակությունն է զգալի չափերով** • հանցավորին վստահված պետական գույքի հափշտակությունն է զգալի չափերով • պաշտոնեական դիրքը չարաշահելու միջոցով ուրիշի գույքի հափշտակությունն է
25	Շորթում չէ. • անձի մերձավորի մասին արատավորող տեղեկություններ հրապարակելու սպառնալիքով այդ անձի գույքի նկատմամբ իրավունքը հանձնելու պահանջը • անձի մասին արատավորող տեղեկություններ հրապարակելու սպառնալիքով նրա գույքի նկատմամբ իրավունքը հանձնելու պահանջը • անձի նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքով նրա գույքի նկատմամբ իրավունքը հանձնելու պահանջը

	• **անձի նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքով նրա անձնական ոչ գույքային իրավունքները հանձնելու պահանջը**
26	Շորթումը համարվում է ծանրացնող հանգամանքներում կատարված, եթե. • այն կատարվել է անձի նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքով • այն կատարվել է անձի գույքը ոչնչացնելու սպառնալիքով • **այն կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ** • այն կատարվել է գույքի նկատմամբ իրավունքը հանձնելու պահանջով
27	Քրեական օրենսգրքի 188 հոդվածի (Ապօրինի ձեռնարկատիրությունը) դիսպոզիցիայից ելնելով՝ ապօրինի ձեռնարկատիրություն չէ. • առանց պետական գրանցման (բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի) ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելը՝ զուգորդված պետությանը զգալի վնաս պատճառելով • առանց հատուկ թույլտվության (լիցենզիայի) լիցենզավորման ենթակա ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելը՝ զուգորդված պետությանը զգալի վնաս պատճառելով • օրենքով արգելված ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելը՝ զուգորդված կազմակերպություններին զգալի վնաս պատճառելով • **օրենքով արգելված գործունեություն իրականացնելը՝ զուգորդված պետությանը խոշոր վնաս պատճառելով**
28	Յուրացման համար զգալի չափ է համարվում հանցագործության պահին Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի. • տասնապատիկից հինգհարյուրապատիկը չգերազանցող գումարը (արժեքը) • քսանապատիկից հինգհարյուրապատիկը չգերազանցող գումարը (արժեքը) • հնգապատիկից հինգհարյուրապատիկը չգերազանցող գումարը (արժեքը) • **երեսնապատիկից հինգհարյուրապատիկը չգերազանցող գումարը (արժեքը)**
29	Քրեական օրենսգրքին համապատասխան՝ կեղծ գովազդ չէ. • գովազդատուի կողմից գովազդ սպառողներին կանխամտածված մոլորեցնելը • գովազդ արտադրողի կողմից գովազդ սպառողներին կանխամտածված մոլորեցնելը • գովազդակրի կողմից գովազդ սպառողներին կանխամտածված մոլորեցնելը • **գովազդ արտադրողի կողմից գովազդատուին կանխամտածված մոլորեցնելը**

30	Հասարակական կարգի և բարոյականության դեմ ուղղված հանցագործություն չէ. • ահաբեկչության մասին սուտ հաղորդում տալը • վանդալիզմը • **բռնաբարությունը** • խուլիգանությունը
31	Մաքսանենգությունը կհամարվի ծանրացնող հանգամանքներում կատարված, եթե. • այն կատարվել է օդային տրանսպորտով • այն կատարվել է պատերազմի ժամանակ • այն կատարվել է հատուկ պահեստարանների օգտագործմամբ • **այն կատարվել է մաքսային հսկողություն իրականացնող անձի նկատմամբ բռնություն գործադրելով**
32	Ո՞րն է տարածության մեջ ՀՀ քրեական օրենսգրքի գործողության քաղաքացիության սկզբունքի էությունը. • ՀՀ սահմաններից դուրս հանցանք կատարած ՀՀ քաղաքացիները և ՀՀ-ում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձինք բոլոր դեպքերում պատասխանատվության են ենթարկվում ՀՀ քրեական օրենսգրքով • ՀՀ սահմաններից դուրս հանցանք կատարած ՀՀ քաղաքացիները և ՀՀ-ում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձինք բոլոր դեպքերում պատասխանատվության են ենթարկվում հանցանքի կատարման վայրի պետության քրեական օրենսգրքով • **ՀՀ սահմաններից դուրս հանցանք կատարած ՀՀ քաղաքացիները և ՀՀ-ում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձինք պատասխանատվության են ենթարկվում ՀՀ քրեական օրենսգրքով այն դեպքում, եթե չեն դատապարտվել հանցանքի կատարման վայրի պետությունում և գտնվում են ՀՀ-ում** • ՀՀ տարածքում հանցանք կատարած բոլոր անձինք պատասխանատվության են ենթարկվում ՀՀ քրեական օրենսգրքով
33	Բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործություն չէ. • թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր հափշտակելը կամ շորթելը • սանիտարահակահամաճարակային կանոնները խախտելը • մարդկանց կյանքի կամ առողջության համար վտանգավոր հանգամանքների վերաբերյալ տեղեկություն թաքցնելը • **թմրամիջոց գործածելը**
34	Առանձնակի արժեք ունեցող առարկաներ հափշտակելը հանցակազմի առարկա են համարվում. • նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկը գերազանցող արժեք ունեցող գույքը կամ այլ առարկաները • պատմության կամ մշակույթի այն հուշարձանները, որոնց արժեքը գերազանցում է նվազագույն աշխատավարձի տասնապատիկը

	• **պատմական, գեղարվեստական կամ մշակութային առանձնակի արժեք ունեցող առարկաները կամ փաստաթղթերը** • հատուկ պահպանման տակ վերցված պատմական, գեղարվեստական կամ մշակութային հուշարձանները՝ անկախ նրանց արժեքից
35	Ա-ն ալկոհոլային հարբածության վիճակում իր անձնական ավտոմեքենայով վրաերթի է ենթարկում կանգառում կանգնած անձանց նրանց առողջությանը պատճառելով միջին ծանրության վնաս: Տեսնելով դեպի իր կողմը վազող մարդկանց և մտածելով, որ հաշվեհարդար են տեսնելու իր նկատմամբ, նա մեքենան ուղղում է դեպի այդ անձանց կողմը և վրաերթի ենթարկում Բ-ին, որը ստացած մարմնական վնասվածքներից մահանում է, իսկ Ա-ն դեպքի վայրից դիմում է փախուստի: Ա-ն կատարել է. • սպանություն (ՀՀ քր. օր-ի 104 հոդված) • ճանապարհային երթևեկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնների խախտում (ՀՀ քր. օր-ի 242 հոդված) • ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը թողնելը (ՀՀ քր. օր-ի 244 հոդված) • **բոլոր վերը նշված գործողությունների համակցություն**
36	Բանդիտիզմ չէ. • կազմակերպությունների վրա հարձակվելու նպատակով կազմակերպված զինված խումբ ստեղծելը • անձանց վրա հարձակվելու նպատակով կազմակերպված զինված խումբ ստեղծելը • բանդայի կողմից կատարվող հարձակումներին մասնակցելը • **մի խումբ անձանց կողմից կազմակերպության գույքին տիրանալու նպատակով կատարված հարձակումը**
37	Զանգվածային անկարգությունները. • **հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործություն է** • հասարակական կարգի և բարոյականության դեմ ուղղված հանցագործություն է • կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործություն է • խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործություն է

38	Ո՞ր պատժատեսակները որպես լրացուցիչ պատժատեսակ կարող են նշանակվել միայն քրեական օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված դեպքերում. • **գույքի բռնագրավումը և որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը** • գույքի բռագրավումը և հատուկ կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից կամ որակավորման դասից զրկելը • որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը և հատուկ կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից կամ որակավորման դասից զրկելը • տուգանքը և գույքի բռնագրավումը
39	Ա-ն մարդաշատ փողոցում դանակի երկու հարվածով սպանել է իր հետ թշնամական հարաբերությունների մեջ գտնվող Բ-ին և դեպքի պատճառով հավաքվածներից մեկին հրելով և երկու բառով հայհոյանք տալով՝ դիմել է փախուստի: Խնդրվում է որակել Ա-ի հանցանքը. • Ա-ն կատարել է զենքի գործադրմամբ խուլիգանություն և սպանություն • Ա-ն կատարել է խուլիգանական դրդումներով սպանություն • Ա-ն կատարել է խուլիգանական դրդումներով սպանություն և խուլիգանություն • **Ա-ն կատարել է հասարակ սպանություն**
40	Նախկինում սպանություն կատարած անձը դատապարտվելուց և պատիժը կրելուց հետո, ընկերոջ հետ վիճաբանության ժամանակ, դանակի հարված հասցնելով սպանել է նրան: Խնդրվում է որակել նրա արարքը. • անձի արարքը ենթակա է որակման որպես երկու անձի դիտավորյալ սպանություն • **անձի արարքը ենթակա է որակման որպես հասարակ սպանություն** • անձի արարքը ենթակա է որակման որպես նախկինում սպանություն կատարած անձի կողմից կատարված սպանություն • անձի արարքը ենթակա է որակման որպես ծանրացուցիչ հանգամանքներում կատարված սպանություն
41	Դատվածության մարման ժամկետի ընդհատման հիմքն է. • **նոր հանցանքի կատարումը** • ծանր կամ առանձնապես ծանր հանցանքի կատարումը • դիտավորյալ հանցանքի կատարումը • միջին ծանրության դիտավորյալ հանցանքի, ծանր կամ առանձնապես ծանր հանցանքի կատարումը
42	Ա-ն որս անելու ժամանակ հրացանից արձակած գնդակով սպանել է Բ-ին, որն իրենից աննկատ անցած է եղել որսի բնի մոտ և Ա-ի տեսադաշտում չի եղել: Խնդրվում է որակել Ա-ի արարքը. • Ա-ն հանցանք չի գործել • **Ա-ն անզգուշությամբ Բ-ին մահ է պատճառել**

	• Ա-ն թույլ է տվել հանցավոր անփութություն • Ա- ն կատարել է հասարակ սպանություն
43	Ա-ն աշխատանքից վերադառնալով տուն՝ մեկ անգամ ձեռքով հարվածել է 10-ամյա երեխային ծեծի ենթարկող կնոջը, որը կարճ ժամանակով կորցրել է գիտակցությունը: Ուշքի գալուց հետո կինը տան խոհանոցում օգտագործել է խիստ ներգործող նյութ և ինքնասպան եղել: Խնդրվում է որակել Ա-ի արարքը. • Ա-ն ենթակա է քրեական պատասխանատվության կնոջն ինքնասպանության հասցնելու համար • Ա-ն ենթակա է քրեական պատասխանատվության կնոջը սպանելու համար • Ա-ն ենթակա է քրեական պատասխանատվության կնոջն անզգուշությամբ մահ պատճառելու համար • **Ա-ի գործողություններում հանցակազմ չկա**
44	Տուգանքը նշանակվում է քրեական օրենսգրքի հատուկ մասով նախատեսված դեպքերում. • միայն շահադիտական դրդումներով հանցանքների համար • միայն ոչ մեծ և միջին ծանրության, ինչպես նաև ծանր հանցանքների համար • միայն ոչ մեծ ծանրության հանցանքների համար • **միայն ոչ մեծ և միջին ծանրության հանցանքների համար**
45	Ա-ն Բ-ին բռնաբարելու ընթացքում, վերջինիս դիմադրությունը հաղթահարելու նպատակով ձեռքով սեղմում է նրա կոկորդը, որի հետևանքով Բ-ն մահանում է: Խնդրվում է որակել Ա-ի արարքը. • Ա-ն կատարել է բռնաբարություն և սպանություն • Ա-ն կատարել է բռնաբարությամբ զուգորդված սպանություն • **Ա-ն կատարել է անզգուշությամբ տուժողի մահ առաջացրած բռնաբարություն** • Ա-ն կատարել է այլ հանցագործություն թաքցնելու նպատակով սպանություն
46	Բռնաբարություն կատարողի հետ բռնաբարությանը ներկա է լինում նաև մի կին, որը միաժամանակ օգնում է բռնաբարողին տուժողի ձեռքերը բռնելով և նրա դիմադրությունը կոտրելով: Խնդրվում է որակել կնոջ արարքը. • **նա հանդիսանում է բռնաբարությանը օժանդակող** • նա հանդիսանում է մի խումբ անձանց կողմից կատարված բռնաբարության օժանդակող • նա հանդիսանում է մի խումբ անձանց կողմից կատարված բռնաբարության համակատարող • նա ծանր հանցանք թաքցնող է և բռնաբարության օժանդակող

47	Ա-ն զգալի արժեք ներկայացնող իրերով լի պայուսակը դնելով խանութի պատի տակ՝ մտնում է խանութ ծխախոտ գնելու: Խանութից դուրս գալուց հետո նկատում է, որ պայուսակը չկա: Ուշադիր զննելով շրջակայքը՝ նա նկատում է, որ ինչ-որ մեկը իր պայուսակը ձեռքին հեռանում է մոտակա ճանապարհով: Ա-ն վազում է նրա հետևից և առանց որևէ դիմադրության նրանից վերցնում պայուսակը: Խնդրվում է որակել պայուսակ տանողի արարքը. • **պայուսակը տանողը կատարել է գողության փորձ** • պայուսակը տանողը կատարել է կողոպուտ • պայուսակը տանողը գտանք է յուրացրել • պայուսակը տանողի արարքում հանցակազմ չկա
48	Ա-ն ծանոթացել է մեծ արժեքների պահեստարանի պահակի հետ և նրա հետ համատեղ օղի խմել: Այդ ընթացքում պահակի օղու բաժակի մեջ գցել է քնաբեր: Որոշ ժամանակ անց պահակը քնել է: Օգտվելով դրանից՝ Ա-ն պահակի մոտից վերցրել է պահեստի բանալիները և հափշտակել զգալի չափերով գույք: Ինչպե՞ս կորակեք Ա-ի արարքը. • **Ա-ն կատարել է գողություն** • Ա-ն կատարել է կողոպուտ • Ա-ն կատարել է ավազակային հարձակում • Ա-ն կատարել է խարդախություն
49	Ա-ն զբոսայգում հանդիպելով Բ-ին՝ նրա վրա է ուղղում խաղալիք ատրճանակը և նրանից պահանջում վզից կախված շուրջ հարյուր գրամանոց ոսկյա խաչը: Ընդ որում Բ-ն խաղալիք ատրճանակը ընկալում է որպես իսկական զենք և Ա-ին է տալիս ոսկյա խաչը: Խնդրվում է որակել Ա-ի արարքը. • Ա-ն կատարել է սովորական կողոպուտ • Ա-ն կատարել է որակյալ կողոպուտ • Ա-ն կատարել է որակյալ կողոպուտ և ապօրինի զենք կրելու հանցանքներ • **Ա-ի արարքում առկա է հասարակ ավազակություն**
50	Ա- ն ավազակային հարձակում կատարելու ժամանակ կիրառել է արճիճից պատրաստված ատրճանակի մակետ, որը շատ նման է իրական ատրճանակին, բայց փաստացի հնարավոր չէ կրակ արձակել, սակայն դրանով հարվածել է մարդու գլխին: Խնդրվում է որակել Ա-ի արարքը. • **Ա-ն կատարել է որակյալ ավազակային հարձակում, որպես զենք օգտագործվող այլ առարկաների գործադրմամբ** • Ա-ն կատարել է որակյալ ավազակային հարձակում զենքի գործադրմամբ • Ա-ն կատարել է հասարակ ավազակային հարձակում • Ա-ն կատարել է ավազակության փորձ

51	Անձը մտնելով հիմնարկի հաշվապահության սենյակ՝ այնտեղից իր հետ տանում է մի փաթեթ հաշվապահական բլանկներ, որոնք իրենցից տնտեսական որևէ արժեք չեն ներկայացնում և հաշվառված ու համարակալված չեն: Բացի դա, տվյալ անձը նպատակ չի հետապնդել այդ ձևով հափշտակություն կատարել: Խնդրվում է որակել նրա արարքը. • անձի արարքում կա գողության հանցակազմ • անձի արարքում կա փաստաթղթեր հափշտակելու հանցակազմ • **անձի արարքում հանցակազմ չկա** • անձի արարքում կա կողոպուտի հանցակազմ
52	ՀՀ քրեական օրենսգրքի 80-րդ հոդվածում սահմանված՝ պատժից ազատելն արտակարգ հանգամանքների հետևանքով կիրառվում է՝ • մեղադրական դատավճիռ կայացնելիս, երբ առկա են այնպիսի արտակարգ հանգամանքներ, որոնք դատավճռով նշանակված պատժի կատարումը դարձնում են աննպատակահարմար կամ անհնարին • մեղադրական դատավճիռը օրինական ուժի մեջ մտնելու հետ մեկտեղ, երբ մինչև դատավճիռը օրինական ուժի մեջ մտնելը ի հայտ են եկել այնպիսի արտակարգ հանգամանքներ, որոնք պատժի կատարումը դարձնում են աննպատակահարմար կամ անհնարին • **մեղադրական դատավճիռը օրինական ուժի մեջ մտնելուց հետո պատժի որոշ մասը կրած դատապարտյալի նկատմամբ, երբ դատապարտյալի նկատմամբ նշանակված պատժի կրման ընթացքում ի հայտ են եկել այնպիսի արտակարգ հանգամանքներ, որոնք նրա կողմից պատժի հետագա կրումը դարձնում են աննպատակահարմար կամ անհնարին** • մեղադրական դատավճիռը օրինական ուժի մեջ մտնելու հետ մեկտեղ, երբ ի հայտ են եկել այնպիսի արտակարգ հանգամանքներ, որոնք նրա կողմից պատժի կրումը դարձնում են աննպատակահարմար կամ անհնարին
53	Ա-ն և Բ-ն լողանում են լճում, որի ընթացքում Բ-ն խեղդվում է, իսկ Ա-ն տեսնելով, որ Բ-ն խեղդվում է՝ որևէ միջոց չի ձեռնարկում նրան փրկելու համար՝ պատճառաբանելով, որ ինքը ոտքից հաշմանդամ է և օգնելու դեպքում հնարավոր էր, որ ինքն էլ խեղդվեր: Խնդրվում է որակել Ա-ի արարքը. • Ա-ն ենթակա է քրեական պատասխանատվության անձին վտանգի մեջ թողնելու համար • Ա-ն ենթակա է քրեական պատասխանատվության վտանգի մեջ ընկած անձին չօգնելու համար • **Ա-ի արարքում հանցակազմ չկա** • Ա-ն ենթակա է քրեական պատասխանատվության անզգուշությամբ մահ պատճառելու համար

54	Հանցագործության տեսակը որոշելու համար անհրաժեշտ է ղեկավարվել. • տվյալ հանցագործության համար քրեական օրենքով նախատեսված պատժի նվազագույն չափով • **տվյալ հանցագործության համար քրեական օրենքով նախատեսված պատժի առավելագույն չափով** • տվյալ հանցագործության համար քրեական օրենքով նախատեսված պատժի նվազագույն և առավելագույն չափերով • դատարանի կողմից նշանակված պատժի տեսակով և չափով
55	Օդանավը զավթելու ժամանակ տեղի ունեցած փոխհրաձգության ժամանակ հանցագործները դիտավորյալ սպանել են երկու ուղևորի: Խնդրվում է որակել արարքը. • **արարքը ենթակա է որակման որպես օդանավ զավթելու որակյալ հանցակազմ և երկու անձի դիտավորյալ սպանություն** • արարքը ենթակա է որակման որպես օդանավ զավթելու առանձնապես որակյալ հանցանք • արարքը ենթակա է որակման որպես տեռորիստական ակտ • արարքը ենթակա է որակման որպես որակյալ սպանություն
56	Վկայի ներկայանալուն կամ նրան ցուցմունք տալուն խոչընդոտելը, դա. • վկայի կողմից դատարան ներկայանալուն խոչընդոտելն է, որը կատարվել է բռնություն գործադրելով, եթե առողջությանը պատճառվել է ոչ մեծ ծանության վնաս • **վկայի կողմից դատարան, նախնական քննության մարմիններ ներկայանալուն կամ նրան ցուցմունք տալուն խոչընդոտելը, որը կատարվել է բռնություն գործադրելով կամ այն գործադրելու սպառնալիքով կամ այլ ապօրինի գործողություններով** • վկայի կողմից դատարան, դատախազություն, հետաքննության, նախաքննության մարմիններ ներկայանալուն կամ նրան ցուցմունք տալուն խոչընդոտելը, որը կատարվել է բռնություն գործադրելով կամ այն գործադրելու սպառնալիքով կամ այլ ապօրինի գործողություններով • վկայի կողմից դատարան, ինչպես նաև մինչդատական վարույթն իրականացնող անձանց և մարմիններին ներկայանալուն կամ նրան ցուցմունք տալուն խոչընդոտելը, որը կատարվել է բռնություն գործադրելով կամ այն գործադրելու սպառնալիքով կամ այլ ապօրինի գործողություններով

57	Ակնհայտ անմեղ անձին քրեական պատասխանատվության ենթարկելը, դա. • քննիչի կամ հետաքննություն կատարող անձի կողմից անձնական դրդումներով անձին առանց բավարար հիմքերի կամ ապացույցների քրեական պատասխանատվության կանչելն է • **անձին քրեական պատասխանատվության ենթարկելն է՝ չհաստատված հանցագործության դեպքով կամ առանց դեպքի անձի մասնակցությունը հիմնավորող կամ ոչ բավարար չափով հիմնավորող կամ առանց նրա արարքում հանցակազմը հավաստող փաստական տվյալների առկայության** • հետաքննություն կատարող անձի, քննիչի կամ դատախազի կողմից անձնական դրդումներով անձին առանց բավարար հիմքերի կամ ապացույցների քրեական պատասխանատվության կանչելն է • հետաքննություն կատարող անձի, քննիչի կամ դատախազի կողմից շահադիտական դրդումներով անձին առանց բավարար հիմքերի կամ ապացույցների քրեական պատասխանատվության կանչելն է ծանր կամ առանձնապես ծանր հանցանքների համար
58	Ակնհայտ անարդար դատավճիռ, վճիռ կամ դատական այլ ակտ կայացնելը, դա. • դատախազի կամ քննիչի կողմից շահադիտական կամ անձնական այլ դրդումներով ակնհայտ անմեղ անձի նկատմամբ քրեական պատիժ նշանակելու միջնորդություն անելն է • **դատավորի կողմից շահադիտական կամ անձնական այլ դրդումներով ակնհայտ անարդար դատավճիռ, վճիռ կամ դատական այլ ակտ կայացնելն է** • դատավորի կողմից այնպիսի դատավճիռ, վճիռ կամ որոշում կայացնելն է, որով ակնհայտ հանցավոր անձը արդարացվում է • դատավորի կողմից այնպիսի դատավճիռ կամ վճիռ կայացնելն է, որով անձի նկատմամբ նշանակվում է արարքի ծանրությանը չհամապատասխանող մեղմ պատիժ
59	Քրեական օրենսգրքի 351 հոդվածի համաձայն՝ քրեական պատասխանատվությունից ապօրինի ազատելը, դա. • դատավորի կողմից հանցանք կատարելու մեջ մեղավոր անձին քրեական պատասխանատվությունից ապօրինի ազատելն է • **դատախազի, քննիչի կամ հետաքննություն կատարող անձի կողմից հանցանք կատարելու մեջ կասկածվող կամ մեղադրվող անձին քրեական պատասխանատվությունից ապօրինի ազատելն է** • դատախազի կամ դատավորի կողմից միայն ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվությունից ապօրինի ազատելն է • դատավորի, դատախազի, քննիչի կամ հետաքննություն կատարող անձի կողմից հանցանք կատարելու մեջ մեղադրվող անձին քրեական պատասխանատվությունից ապօրինի ազատելն է

60	Ապացույցները կեղծելը. • դա միայն քրեական գործով ապացույցների կեղծելն է ցանկացած անձի կողմից • դա, թե քրեական, և թե քաղաքացիական գործերով ապացույցների կեղծելն է ցանկացած անձի կողմից • **դա քաղաքացիական գործով ապացույցներ կեղծելն է գործին մասնակցող անձի կամ նրա ներկայացուցչի կողմից, ինչպես նաև քրեական գործով ապացույցներ կեղծելը հետաքննություն կատարող անձի, քննիչի, դատախազի կամ պաշտպանի կողմից** • դա քաղաքացիական գործով ապացույցներ կեղծելն է գործին մասնակցող անձի կամ նրա ներկայացուցչի կողմից, ինչպես նաև քրեական գործով ապացույցներ կեղծելը հետաքննություն կատարող անձի, քննիչի, դատախազի, դատավորի կամ պաշտպանի կողմից
61	Հանցագործության ո՞ր տեսակին է դասվում այն դիտավորյալ հանցանքը, որի համար նախատեսված է ազատազրկում՝4-8 տարի ժամկետով. • ոչ մեծ ծանրության • միջին ծանրության • **ծանր** • առանձնապես ծանր
62	Քրեական օրենքի հետադարձ ուժը նշանակում է, որ. • այդ օրենքը տարածվում է այն հանցագործությունների և դրանք կատարող անձանց վրա, ովքեր հանցանք են կատարում այդ օրենքն ընդունվելուց հետո • **այդ օրենքը տարածվում է մինչև ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց, այդ թվում՝ այն անձանց վրա, ովքեր կրում են պատիժը կամ կրել են դա, սակայն ունեն դատվածություն** • այդ օրենքը տարածվում է մինչև ուժի մեջ մտնելը դատապարտված անձանց կամ այն անձանց վրա, ովքեր պատիժը կրել են և չունեն դատվածություն • այդ օրենքը տարածվում է մինչև ուժի մետ մտնելը կատարված հանցագործությունների և նշանակված պատիժների նկատմամբ, եթե դրանով չեն խախտվում հանրային շահերը

63	Ա-ն ու Բ-ն ալկոհոլի օգտագործման ժամանակ որոշում են հումորի համար իրենց ղեկավարին՝ ալկոհոլից հարբած Գ-ին գետում թրջել և հրում են վերջինիս գցելով գետը: Չկարողանալով հաղթահարել ջրի հոսքը Գ-ն սկսում է խեղդվել, սակայն Ա-ն և Բ-ն տեսնելով, որ գետի հոսանքը ուժեղ է չեն օգնում Գ-ին և վերջինս խեղդվում է: Վախենալով հնարավոր պատասխանատվությունից նրանք դիակը ջրից հանում և այրում են: Քանի որ տուն վերադառնալու ճանապարհին Ա-ն կարծիք է արտահայտում, որ նպատակահարմար է մեղայականով ներկայանալ ոստիկանություն, դրա համար նախկինում ավազակության համար երկու անգամ դատապարտված Բ-ն որոշելով ձերբազատվել Ա-ից, սպանում է նրան: Բ-ն ենթակա է քրեական պատասխանատվության. • երկու կամ ավելի անձի սպանության համար • անզգուշությամբ մահ պատճառելու և այլ հանցանքի կատարումը թաքցնելու նպատակով սպանության համար • **վտանգի մեջ թողնելու, որն առաջացրել է մարդու մահ և այլ հանցանքը թաքցնելու նպատակով սպանության համար** • խմբի կողմից կատարված անզգուշությամբ մահ պատճառելու և այլ հանցանքը թաքցնելու նպատակով սպանության համար
64	Ուղևոր Օ-ն թողնելով իր մանկահասակ երեխային գնացքի կուպեում կանգառի ժամանակ գնում է կայարան հեռագիր տալու, ինչի արդյունքում գնացքի շարժվելու պահին ուշանում է: Ուղեկցորդը խոչընդոտում է ընթացքի ժամանակ նրա բարձրանալուն գնացք, ինչի արդյունքում Օ-ն ընկնում և մահանում է: Որակեք ուղեկցորդի արարքը. • արարքում հանցակազմ չկա • սպանություն • **անզգուշությամբ մահ պատճառել** • առողջությանը ծանր վնաս պատճառելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ
65	Այլընտրանքային աշխատանքային ծառայողի կողմից ծառայության պարտականությունները կատարելուց հրաժարվելը, դա. • **այլընտրանքային աշխատանքային ծառայողի կողմից ծառայությունից կամ դրա առանձին պարտականությունները կատարելուց հրաժարվելը, որը զուգորդվել է դրանց փաստացի դադարեցմամբ** • այլընտրանքային աշխատանքային ծառայողի կողմից իրեն որևէ վնասվածք պատճառելու (անդամախեղելու), հիվանդության սիմուլյացիայի, կեղծ փաստաթղթեր օգտագործելու կամ խաբեության այլ միջոցով կամ ապօրինի այլ եղանակով ծառայության պարտականությունները կատարելուց հրաժարվելն է • այլընտրանքային աշխատանքային ծառայողի կողմից ծառայությունից կամ դրա առանձին պարտականությունները կատարելուց հրաժարվելն է • այլընտրանքային աշխատանքային ծառայողի կողմից ծառայությունից

	վերջնականապես հրաժարվելու նպատակով ծառայության վայրն ինքնակամ թողնելը, ինչպես նաև նույն նպատակով ծառայության չներկայանալն է
66	Ապրանքային նշանն ապօրինի օգտագործելն օբյեկտիվ կողմից կատարվում է. • ապրանքային կամ սպասարկման նշանը կամ ֆիրմային անվանումը կեղծելը, եթե այդ արարքը խոշոր վնաս է պատճառել • **ապրանքային նշանը, սպասարկման նշանը, ֆիրմային անվանումն ապօրինի օգտագործելը, եթե այդ արարքը խոշոր վնաս է պատճառել** • ապրանքային նշանը, սպասարկման նշանակը, ակցիզը, ֆիրմային անվանումն ապօրինի օգտագործելը, եթե այդ արարքը էական վնաս է պատճառել • ապրանքային նշանը, սպասարկման նշանը, ֆիրմային անվանումն ապօրինի և անհատույց օգտագործելը, որը խոշոր վնաս է պատճառել
67	Քրեորեն պատժելի է սառը, նետողական և գազային զենք ապօրինի. • պահելը • **կրելը** • իրացնելը • պահելը, կրելը կամ իրացնելը
68	Նյութական հանցակազմի բնութագիրն է. • հանցանքն ավարտված է համարվում հանրորեն վտանգավոր արարքը սկսելու պահին • **հանցանքն ավարտված է համարվում հանրորեն վտանգավոր հետևանքները վրա հասնելու պահին** • հանցանքի կատարմամբ պատճառվում է նյութական վնաս • հանցանքն ավարտված է համարվում հանրորեն վտանգավոր արարքի կատարման պահին

69	Վարկը ոչ նպատակային օգտագործելը, դա. • պետության կամ միջազգային կազմակերպության կողմից տրամադրվող վարկը ոչ նպատակային օգտագործելն է, որը խոշոր վնաս է պատճառել անձանց, կազմակերպություններին կամ պետությանը • **պետության կամ միջազգային կազմակերպության կամ միջազգային պայմանագրով նախատեսված ծրագրի կողմից տրամադրվող նպատակային վարկը ոչ նպատակային օգտագործելը, եթե այդ արարքը խոշոր վնաս է պատճառել անձանց, կազմակերպություններին կամ պետությանը** • պետության կամ միջազգային պայմանագրով նախատեսված ծրագրի կողմից տրամադրվող նպատակային վարկը ոչ նպատակային օգտագործելը, եթե այդ արարքը խոշոր վնաս է պատճառել անձանց, կազմակերպություններին կամ պետությանը • պետության կամ միջազգային կազմակերպության կամ միջազգային պայմանագրով նախատեսված ծրագրի կամ Համաշխարհային բանկի կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տրամադրվող նպատակային վարկը ոչ նպատակային օգտագործելը, եթե այդ արարքը խոշոր վնաս է պատճառել անձանց, կազմակերպություններին կամ պետությանը
70	Ա-ն սիստեմատիկաբար ծեծի է ենթարկել և գյուղի հասարակության մեջ ստորացրել Բ-ի արժանապատվությունը այն բանի համար, որ վերջինս Ա-ի սիրած աղջկա հետ փորձել է խոսել ամուսնանալու հարցով: Վերջին անգամ Ա-ն հարբած վիճակում հանդիպելով Բ-ին՝ նորից է հայհոյանքներ տվել նրան և պահանջել, որ Բ-ն իր քրոջը տանի կոնկրետ վայր, որպեսզի Ա-ն կենակցի նրա հետ: Բ-ն վրդովվելով Ա-ի պահանջից՝ նույն պահին դանակի մեկ հարված է հասցրել Ա-ի որովայնի շրջանին, որի հետևանքով ստացած վնասվածքից Ա-ն մեկ օր անց հիվանդանոցում մահացել է: Խնդրվում է որակել Բ-ի արարքը. • **Բ-ն ենթակա է քրեական պատասխանատվության հոգեկան խիստ հուզմունքի վիճակում կատարված սպանության համար** • Բ-ն ենթակա է քրեական պատասխանատվության հասարակ սպանության համար • Բ-ն ենթակա է քրեական պատասխանատվության որպես անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ սպանության կատարող • Բ-ն քրեական պատասխանատվության ենթակա չէ, քանի որ նրա գործողություններում հանցակազմ չկա

71	Ա-ն գտնվելով հարբած վիճակում՝ մարդաշատ փողոցում հայհոյանքներ է տվել հավաքվածների հասցեին , շուրջ 10 րոպե շարունակ խախտել հասարակական կարգը և մոտը ապօրինի պահվող ատրճանակից կրակ արձակել դեպի օդ: Այնուհետև ատրճանակի բռնակով հարվածել է մի ավտոմեքենայի դիմապակուն և ջարդել այն: Խնդրվում է որակել Ա-ի հանցանքը. • Ա-ն կատարել է զենքի գործադրմամբ խուլիգանություն • **Ա-ն կատարել է զենքի գործադրմամբ խուլիգանություն և ապօրինի իր մոտ պահել է հրազեն** • Ա-ն կատարել է զենքի գործադրմամբ խուլիգանություն և շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով սպանության փորձ • Ա-ն ապօրինի իր մոտ պահել է հրազեն
72	Ա-ն 5-րդ հարկի շքապատշգամբից թևերից բռնած կախ է տվել կնոջը, պահանջել նրանից դրամ և սպառնացել չտալու դեպքում ցած նետել պատշգամբից: Կինը բարձրաձայն օգնություն է կանչել, որի ձայնից անցորդներից երկուսը մոտեցել են պատշգամբի տակ և փորձել են կնոջը ցած գցելու դեպքում բռնել նրան, որպեսզի չընկնի ասֆալտին: Ա-ն կնոջ ձեռքերը բաց է թողել, նա ընկել է նշված երկու անցորդի ձեռքերին, ինչպես կինը, այնպես էլ անցորդներից մեկը ստացել են առողջության ծանր վնաս: Խնդրվում է որակել Ա-ի արարքը. • Ա-ն կատարել է կնոջը շահադիտական դրդումներով սպանության փորձ և դիտավորությամբ առողջության ծանր վնաս պատճառել անցորդներից վնասվածք ստացողին • Ա-ն երկու անձի դիտավորյալ պատճառել է առողջության ծանր վնասվածքներ • Ա-ն կատարել է երկու անձի սպանության փորձ • **Ա-ն կատարել է կնոջը շահադիտական դրդումներով սպանելու փորձ և անցորդներից մեկի առողջությանը անզգուշությամբ պատճառել է ծանր վնաս**
73	Անձը գտնվելով ցմահ ազատազրկման մեջ՝ պատիժը կրելու ընթացքում ուղղիչ հիմնարկության աշխատակցին դիտավորությամբ պատճառել է առողջության ծանր վնաս: Արդյո՞ք նրա նկատմամբ նախաքննություն պետք է կատարվի և դատաքննություն տարվի, թե ոչ. • ոչ, քանի որ նա արդեն դատապարտված է ցմահ ազատազրկման • **այո, քանի որ նա կատարել է նոր հանցագործություն** • այո, եթե նա չի ընդունում իր հանցանքը և պնդում է, որ ինքը չի կատարել այդ արարքը • ոչ, քանի որ ինչ պատիժ էլ նրան տան, միևնույն է այն ներառվելու է ցմահ ազատազրկման մեջ
74	Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը որպես լրացուցիչ պատժատեսակ նշանակվում է. • 1-4 տարի ժամկետով • **1-3 տարի ժամկետով**

	• 2-3 տարի ժամկետով • 2-4 տարի ժամկետով
75	Նշված հանցագործություններից որի՞ համար քրեական պատասխանատվության ենթակա չէ 14-16 տարեկան անձը. • բռնաբարություն • շորթում • **դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառելը** • մարդուն առևանգելը
76	Ստորև բերված ո՞ր դեպքում է զենք կրելու իրավունք ունեցող անձի կողմից զենքով տեղամասային կենտրոն մուտք գործելու արարքը պարունակում հանցակազմ. • երբ արարքը կատարվել է քվեարկության օրը ծառայողական անհրաժեշտությունից ելնելով • երբ արարքը կատարվել է քվեարկության նախորդ օրը • **երբ արարքը կատարվել է քվեարկության օրը՝ զենք կրելու իրավունք ունեցող անձի կողմից զենքով ցուցադրաբար տեղամասային կենտրոն մուտք գործելով առանց ծառայողական անհրաժեշտության** • երբ արարքը կատարվել է քվեարկության օրը՝ քվեարկությանը մասնակցելու համար զենք կրելու իրավունք ունեցող անձի կողմից զենքով տեղամասային կենտրոն մուտք գործելով
77	Ստորև բերված ո՞ր հատկանիշն է ,հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարումները վճարելուց չարամտորեն խուսափելը՝ հանցանքը դարձնում որակյալ. • **եթե արարքը կատարվել է առանձնապես խոշոր չափերով** • եթե արարքը կատարվել է կրկին անգամ • եթե արարքը կատարվել է շահադիտական դրդումներով • եթե արարքը կատարվել է պաշտոնատար անձի հետ համաձայնության գալով
78	Եթե անձը հասել է քրեական օրենքով նախատեսված տարիքի, սակայն մտավոր զարգացման մեջ հետ մնալու հետևանքով ընդունակ չի եղել ամբողջ չափով գիտակցել իր արարքի բնույթն ու նշանակությունը կամ ղեկավարել դա, ապա. • նրա նկատմամբ կիրառվում են պատժի հետ միացված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ • նա ենթակա է քրեական պատասխանատվության, սակայն դա հաշվի է առնվում որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք • **նա ենթակա չէ քրեական պատասխանատվության** • նրա նկատմամբ կիրառվում են բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ, իսկ առողջանալուց հետո նա կարող է ենթարկվել պատժի

79	Ա-ն և Բ-ն ամուսնալուծվում են և դատարանը որոշում է նրանց 2 տարեկան երախային թողնել մոր՝ Ա-ի խնամքին: Ա-ն ապրուստի միջոց աշխատելու պատրվակով վերցնում է երեխային և գնում է ՌԴ արտագնա աշխատանքի՝ զրկելով հորը՝ Բ-ին երեխայի հետ տեսակցելու դատարանի կողմից սահմանած հնարավորությունից: Խնդրվում է որակել Ա-ի արարքը. • ծնողներից երեխային ապօրինաբար բաժանելը կամ երեխային փոխելը • առևանգում • **հանցակազմ չկա** • դատական ակտը չկատարելը
80	15 ամյա Ա-ն ցուցադրելով իր մոտ եղած դանակը սպառնում է սպանել Բ-ին, եթե վերջինս չհրաժարվի հանդիպելու Դ-ի հետ, որին Ա-ն հավանում է: Սպառնալիքը ընդունելով իրական Բ-ն չի շարունակում հանդիպել Դ-ին: Որակեք Ա-ի արարքը. • սպանության սպառնալիք • ապօրինի սառը զենք պահելը, կրելը և սպանության նախապատրաստություն • **հանցակազմ չկա** • ապօրինի սառը զենք պահելը, կրելը և սպանության սպառնալիք
81	Հայաստանի Հանրապետության դրոշի տակ գտնվող կամ Հայաստանի Հանրապետության տարբերանշանը կրող նավի կամ թռիչքում գտնվող օդանավի կամ օդային այլ սարքի վրա հանցանք կատարած անձը. • **անկախ դրա գտնվելու վայրից, ենթակա է քրեական պատասխանատվության Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով այլ բան նախատեսված չէ** • ենթակա է քրեական պատասխանատվության դրա գտնվելու վայրի օրենքներով • կախված դրա գտնվելու վայրից, ենթակա է քրեական պատասխանատվության Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով՝ միայն ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասում նախատեսված դեպքերում, ինչպես նաև դրա գտնվելու վայրի օրենքներով • անկախ դրա գտնվելու վայրից, ենթակա է քրեական պատասխանատվության միայն միջազգային պայմանագրերով նախատեսված կարգով
82	Պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների համաձայն հանցագործության համար նախատեսված պատիժներից առավել խիստը նշանակվում է. • **եթե նվազ խիստ տեսակը չի կարող ապահովել պատժի նպատակները** • առանձնապես ծանր հանցանք կատարած անձանց նկատմամբ • նախկինում դիտավորյալ հանցագործության համար դատապարտված անձանց նկատմամբ • նախկինում երկու կամ ավելի անգամ դիտավորյալ հանցագործությունների համար դատապարտված անձանց նկատմամբ

83	Հանցանք կատարած անձին հանձնելուց հրաժարվելու դեպքում օտարերկրյա պետության տարածքում կատարված հանցագործությունների համար. • **քրեական հետապնդում է իրականացվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան** • քրեական հետապնդում է իրականացվում միայն միջազգային պայմանագրերին համապատասխան • քրեական հետապնդում է իրականացվում հանցագործության կատարման վայրի օրենքներով • քրեական հետապնդում է իրականացվում հանցագործության կատարման վայրի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան
84	Բժիշկ-գինեկոլոգ Ա-ին է դիմում իր ծանոթ Բ-ն խնդրանքով, որպեսզի կատարի աբորտ: Բ-ի մոտ բացակայում են կանացի խորհրդատվության ուղեգիրը, լաբորատոր անալիզները և այլ հետազոտությունները, որոնք անհրաժեշտ են հղիության արհեստական ընդատման համար: Ա-ն առանց պատշաճ ձևակերպման կլինիկայի պայմաններում իրականացնում է աբորտ և հաշվի առնելով Բ-ի բավարար վիճակը նրան ուղարկում է տուն: Որակեք Ա-ի արարքը. • **ապօրինի աբորտ կատարելը** • հանցակազմ չկա • անփութություն և աբորտ • բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը
85	Թվարկածներից ո՞րն է պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք հանդիսանում, համաձայն քրեական օրենսգրքի 62 հոդվածի. • հանցանքն այնպիսի անձի կամ նրա ամուսնու նկատմամբ կատարելը, որը կապված է նրա կողմից իր ծառայողական պարտքը կատարելու հետ • հանցանքը ծայրահեղ անհրաժեշտության վիճակում կատարելը • հանցանքն ալկոհոլի, թմրամիջոցների կամ թմրեցնող այլ նյութերի ազդեցության տակ կատարելը • **հանցանքը նյութական կախվածության ազդեցության տակ կատարելը**
86	Թվարկածներից ո՞րն է պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք հանդիսանում, համաձայն քրեական օրենսգրքի 63 հոդվածի. • հանցանքը կարեկցանքի շարժառիթով կատարելը • հանցանքը նյութական կախվածության ազդեցության տակ կատարելը • հանցանքը հրամանը կամ կարգադրությունը կատարելու իրավաչափության պայմանները խախտելով կատարելը • **հանցանքը տուժողին ծաղրուծանակի ենթարկելով կատարելը**

87	Պատժի ժամկետները հաշվարկվում են. • **որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու, կարգապահական գումարտակում պահելու, ազատազրկման ժամկետները հաշվարկվում են ամիսներով և տարիներով: Հանրային աշխատանքների ժամկետը հաշվարկվում է ժամերով: Կալանքի ժամկետը հաշվվում է օրերով և ամիսներով** • որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու, կարգապահական գումարտակում պահելու, ազատազրկման ժամկետները հաշվարկվում են տարիներով: Հանրային աշխատանքների ժամկետը հաշվարկվում է ժամերով: Կալանքի ժամկետը հաշվվում է օրերով • որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու, կարգապահական գումարտակում պահելու, ազատազրկման ժամկետները հաշվարկվում են ամիսներով և տարիներով: Հանրային աշխատանքների և կալանքի ժամկետները հաշվվում են ամիսներով • որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու, կարգապահական գումարտակում պահելու, ազատազրկման ժամկետները հաշվարկվում են ժամերով, ամիսներով և տարիներով: Հանրային աշխատանքների ժամկետը հաշվարկվում է ժամերով և օրերով: Կալանքի ժամկետը հաշվվում է օրերով և ամիսներով
88	Օրենսդիր մարմնի կողմից ընդունվող համաներման ակտով. • հանցանք կատարած անձը կարող է չենթարկվել քրեական պատասխանատվության, իսկ ամբաստանյալը կարող է լրիվ կամ մասնակիորեն ազատվել ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ պատժից • հանցանք կատարած անձը կարող է չենթարկվել քրեական պատասխանատվության, իսկ մեղադրյալի նկատմամբ պատժի չկրած մասը կարող է փոխարինվել ավելի մեղմ պատժատեսակով, կամ կարող է վերացվել դատվածությունը, ինչպես նաև կարող է կիրառվել պայմանական դատապարտություն • հանցանք կատարած անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, իսկ դատապարտյալը կարող է ազատվել հիմնական պատժից, կամ պատժի չկրած մասը կարող է փոխարինվել ավելի մեղմ պատժատեսակով, կամ կարող է հանվել կամ մարվել դատվածությունը, կամ կարող է պատժի չկրած մասը կրճատվել • **հանցանք կատարած անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, իսկ դատապարտյալը կարող է լրիվ կամ մասնակիորեն ազատվել ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ պատժից, կամ պատժի չկրած մասը կարող է փոխարինվել ավելի մեղմ պատժատեսակով, կամ կարող է վերացվել դատվածությունը**

89	Իրադրության փոփոխման հետևանքով. • **առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե պարզվի, որ իրադրության փոփոխման հետևանքով այդ անձը կամ նրա կատարած արարքը դադարել է հանրության համար վտանգավոր լինելուց** • ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե պարզվի, որ իրադրության փոփոխման հետևանքով այդ անձը կամ նրա կատարած արարքը դադարել է հանրության համար վտանգավոր լինելուց՝ քրեական օրենսգրքի Հատուկ մասում նախատեսված դեպքերում • անձը չի կարող ազատվել քրեական պատասխանատվությունից • առաջին անգամ ոչ մեծ, միջին ծանրության կամ ծանր հանցանք կատարած անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե պարզվի, որ իրադրության փոփոխման հետևանքով այդ անձը կամ նրա կատարած արարքը դադարել է հանրության համար վտանգավոր լինելուց
90	Ցմահ ազատազրկման ձևով պատիժ կրող անձը կարող է պայմանական վաղաժամկետ ազատվել, եթե. • **դատարանը գտնի, որ նա պատիժը հետագա կրելու կարիքը չունի և փաստորեն կրել է ազատազրկման ոչ պակաս, քան քսան տարին** • պատիժն ի կատար ածող մարմինը գտնի, որ նա պատիժը հետագա կրելու կարիքը չունի և փաստորեն կրել է ազատազրկման ոչ պակաս, քան քսան տարին • դատարանը գտնի, որ նա պատիժը հետագա կրելու կարիքը չունի և փաստորեն կրել է ազատազրկման ոչ պակաս, քան տասնհինգ տարին • պատիժն ի կատար ածող մարմինը գտնի, որ նա ուղղվելու համար նշանակված պատժի մնացած մասը կրելու կարիք չունի և փաստորեն կրել է ազատազրկման ոչ պակաս, քան քսանհինգ տարին
91	Նշվածներից ու՞մ նկատմամբ կարող են նշանակվել հանրային աշխատանքներ. • առաջին խմբի հաշմանդամների • երկրորդ խմբի հաշմանդամների • **դատավճիռ կայացնելու պահին 16-18 տարեկան անձանց** • կենսաթոշակային տարիք ունեցող անձանց
92	Որ դեպքում կարգապահական գումարտակում պահելու դատապարտված զինծառայողը կարող է ազատվել պատիժը կրելուց. • **այնպիսի հիվանդության դեպքում, որի հետևանքով նա համարվում է զինվորական ծառայության համար ոչ պիտանի** • եթե հիվանդացել է հոգեկան խանգարմամբ, որը նրան զրկել է իր գործողությունների փաստական բնույթն ու նշանակությունը գիտակցելու հնարավորությունից • այնպիսի հիվանդության դեպքում, որի հետևանքով նա զրկվել է իր գործողությունները /անգործությունը/ գիտակցելու կամ դրանք ղեկավարելու

	հնարավորությունից • այնպիսի հիվանդության դեպքում, որը խոչընդոտում է պատիժը կրելուն
93	Կարգապահական գումարտակում պահելը ազատազրկման փոխարեն չի կարող նշանակվել այն դեպքում, երբ. • կալանքը որպես խափանման միջոց կիրառված չի եղել • կալանքը որպես խափանման միջոց կիրառված է եղել • անձը նախկինում դատապարտվել է դիտավորյալ հանցագործության համար • **անձը նախկինում կրել է ազատազրկման ձևով պատիժ**
94	Դատվածությունը հանվում է, եթե. • անձը պատիժը կրելուց հետո դրսևորել է անբասիր վարքագիծ, հատուցել կամ այլ կերպ հարթել է տուժողին պատճառված վնասը, ապա նրա խնդրանքով դատարանը կարող է դատվածությունը հանել մինչև դատվածությունը մարելու ժամկետը լրանալը, բայց ոչ շուտ, քան այդ ժամկետի կեսը լրանալը • անձը պատիժը կրելուց հետո դրսևորել է անբասիր վարքագիծ, կատարել է դատարանի կողմից իր վրա դրված պարտականությունները, ապա նրա խնդրանքով դատարանը կարող է դատվածությունը հանել մինչև դատվածությունը մարելու ժամկետը լրանալը, բայց ոչ շուտ, քան այդ ժամկետի կեսը լրանալը • անձը պատիժը կրելուց հետո դրսևորել է անբասիր վարքագիծ, հատուցել կամ այլ կերպ հարթել է տուժողին պատճառված վնասը, կատարել է դատարանի կողմից իր վրա դրված պարտականությունները, ապա նրա խնդրանքով դատարանը կարող է դատվածությունը հանել մինչև դատվածությունը մարելու ժամկետը լրանալը, բայց ոչ շուտ, քան այդ ժամկետի կեսը լրանալը • **անձը պատիժը կրելուց հետո դրսևորել է անբասիր վարքագիծ, ապա նրա խնդրանքով դատարանը կարող է դատվածությունը հանել մինչև դատվածությունը մարելու ժամկետը լրանալը, բայց ոչ շուտ, քան այդ ժամկետի կեսը լրանալը**
95	Անձը դատվածություն ունեցող է համարվում. • մեղադրական դատավճիռը կայացնելու պահից մինչև պատժի լրիվ կրումը • մեղադրական դատավճիռը կայացնելու պահից մինչև դատվածությունը մարվելու կամ հանելու պահը • մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից մինչև պատժի լրիվ կրումը

	• մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից մինչև դատվածությունը մարվելու կամ հանելու պահը
96	Դատվածությունը մարված չի համարվում. • պատիժը պայմանական չկիրառելու դեպքում՝ փորձաշրջանն անցնելուց հետո • ազատազրկումից ավելի մեղմ պատժի դատապարտված անձանց նկատմամբ՝ նշանակված պատիժը կրելուց մեկ տարի անցնելուց հետո **• ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության համար ազատազրկման դատապարտված անձանց նկատմամբ՝ պատիժը կրելուց երկու տարի անցնելուց հետո** • ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության համար ազատազրկման դատապարտված անձանց նկատմամբ՝ պատիժը կրելուց երեք տարի անցնելուց հետո
97	Եթե անձն օրենքով սահմանված կարգով պայմանական վաղաժամկետ ազատվել է պատիժը կրելուց, կամ պատժի չկրած մասը փոխարինվել է ավելի մեղմ պատժով, ապա դատվածությունը մարելու ժամկետը հաշվարկվում է. • դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու օրվանից **• հիմնական պատիժը և լրացուցիչ պատիժը կրելուց ազատելու պահից** • միայն հիմնական պատիժը կրելուց ազատելու պահից • դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու օրվանից կամ հիմնական պատիժը և լրացուցիչ պատիժը կրելուց ազատելու պահից, եթե այդ մասին նշված է դատարանի որոշման մեջ
98	Դատվածություն չունեցող են համարվում այն անձինք. **• ովքեր դատարանի դատավճռով դատապարտվել են առանց պատիժ նշանակելու կամ դատարանի դատավճռով ազատվել են պատիժը կրելուց կամ պատիժը կրել են այնպիսի արարքի համար, որի հանցավորությունն ու պատժելիությունը վերացված է օրենքով** • ովքեր օրենքով սահմանված կարգով պայմանական վաղաժամկետ ազատվել են պատիժը կրելուց, կամ պատժի չկրած մասը փոխարինվել է ավելի մեղմ պատժով • ովքեր կրել են ազատազրկման ձևով պատիժը կամ դատարանի դատավճռով ազատվել են պատիժը կրելուց կամ պատիժը կրել են այնպիսի արարքի համար, որի հանցավորությունն ու պատժելիությունը վերացված են օրենքով • ովքեր դատարանի դատավճռով դատապարտվել են 1) ազատազրկումից ավելի մեղմ պատժի՝ նշանակված պատիժը կրելուց մեկ տարի անցնելուց հետո. 2) ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության համար ՝ պատիժը կրելուց երեք տարի անցնելուց հետո. 3) ծանր հանցագործության համար՝ պատիժը կրելուց հինգ տարի անցնելուց հետո. 4) առանձնապես ծանր հանցագործության համար ՝ պատիժը կրելուց ութ տարի անցնելուց հետո

99	Նշվածներից ո՞րն է դատարանի կողմից օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու սխալ տարբերակ, եթե տվյալ հանցագործության համար նախատեսված է ազատազրկում 3-7 տարի ժամկետով. • կալանք՝ 2 ամիս ժամկետով • ազատազրկում՝ 1 տարի ժամկետով • **ազատազրկում՝ 2 ամիս ժամկետով** • ազատազրկում՝ 6 ամիս ժամկետով
100	Եթե հանցագործության համար նախատեսված է ազատազրկում՝ 3-8 տարի ժամկետով, ապա տվյալ հանցագործության նախապատրաստության համար նշանակվող պատիժը չի կարող գերազանցել. • 3 տարին • 1 տարին • **4 տարին** • 2 տարին
101	Եթե դատավճիռ կայացնելուց հետո պարզվի, որ անձը մեղավոր է նաև մեկ այլ հանցանքի համար, որը նա կատարել է նախքան առաջին գործով դատավճիռ կայացնելը, ապա վերջնական պատժի որոշման կարգն է. • առաջին դատավճռով նշանակված պատժի կրումը վերսկսվում է նորից, որից հետո անձը կրում է նոր նշանակված պատիժը • եթե առաջին դատավճռով նշանակված պատիժն ավելի խիստ է, քան նոր նշանակված պատիժը, ապա անձը կրում է միայն առաջին դատավճռով նշանակված պատիժը, հակառակ դեպքում՝ միայն նոր նշանակված պատիժը • **վերջնական պատժի ժամկետին հաշվակցվում է առաջին դատավճռով նշանակված պատժի կրած մասը** • վերջնական պատժի ժամկետին հաշվակցվում է առաջին դատավճռով նշանակված պատժի չկրած մասը
102	Հանցագործությունների համակցությունը կազմում են երկու դիտավորյալ հանցանքներ, որոնցից մեկի համար նախատեսված է ազատազրկում՝ 2-6 տարի ժամկետով, իսկ մյուսի համար՝ ազատազրկում՝ 6-12 տարի ժամկետով: Տվյալ դեպքում նշանակվող վերջնական պատիժը չի կարող գերազանցել. • 10 տարին • **25 տարին** • 15 տարին • 6 տարին

103	Դատավճիռների համակցությամբ վերջնական պատիժը, եթե դա կապված չէ ազատազրկման հետ, չի կարող գերազանցել. • քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածներով պատժի տվյալ տեսակների համար սահմանված առավելագույն չափը • քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածներով պատժի տվյալ տեսակների համար սահմանված առավելագույն չափը • **քրեական օրենսգրքի Ընդհանուր մասով պատժի տվյալ տեսակների համար սահմանված առավելագույն չափը** • քրեական օրենսգրքի Ընդհանուր մասով պատժի տվյալ տեսակների համար սահմանված առավելագույն չափի կրկնապատիկը
104	Դատավճիռների համակցությամբ վերջնական պատիժը. • **պետք է ավելի մեծ լինի, ինչպես նոր հանցագործության համար նշանակված պատժից, այնպես էլ նախորդ դատավճռով նշանակված պատժի չկրած մասից** • պետք է գերազանցի նոր հանցագործության համար նշանակված պատիժը • չպետք է ավելի մեծ լինի, ինչպես նոր հանցագործության համար նշանակված պատժից, այնպես էլ նախորդ դատավճռով նշանակված պատժի չկրած մասից • չպետք է ավելի մեծ լինի նոր հանցագործության համար նշանակված պատժից
105	Թվարկվածներից ո՞վ կարող է ազատվել պատժից արտակարգ հանգամանքների հետևանքով, համաձայն քրեական օրենսգրքի 80-րդ հոդվածի. • **ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության համար դատապարտված անձը դատապարտվածի կամ նրա ընտանիքի համար կարող է հանգեցնել ծանր հետևանքների** • միայն անզգուշությամբ կատարած հանցանքի համար դատապարտված անձը դատապարտվածի կամ նրա ընտանիքի համար կարող է հանգեցնել ծանր հետևանքների • ոչ մեծ կամ միջին ծանրության կամ ծանր հանցագործության համար դատապարտված անձը • միայն ոչ մեծ ծանրության հանցագործության համար դատապարտված անձը
106	Բ-ն, որը ավազակության համար տասը տարի ժամկետով պատիժ կրելուց հետո ազատվել է քրեակատարողական հիմնարկից, 16 տարեկան Ա-ի հետ նախնական պայմանավորվածության գալով, իրականացնում են ուրիշի գույքի բացահայտ հափշտակության օբյեկտիվ կողմը: Որակեք Բ-ի արարքը. • մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կատարված կողոպուտ • նախկինում հափշտակության համար դատվածություն ունեցող անձի կողմից կազմակերպված և խմբի կողմից կատարված կողոպուտ • **մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կատարված կողոպուտ և տասնութ տարին լրացած անձի կողմից անչափահասին հանցանքի կատարմանը ներգրավելը**

	• տասնութ տարին լրացած անձի կողմից անչափահասին հանցանքի կատարմանը ներգրավելը և կողոպուտի դրդչություն
107	Տասնութ տարին լրացած Բ-ն 13 տարեկան Ա-ին խաբեությամբ ներգրավում է գողություն կատարելուն: Որակեք Բ-ի արարքը. • անչափահասին հանցանքի կատարմանը ներգրավելը • հանցակազմ չկա • խմբի կողմից կատարած գողություն և անչափահասին հանցանքի կատարմանը ներգրավելը • **գողություն**
108	Վրեժի շարժառիթով կատարված սպանությունը չի համարվի հասարակ սպանություն, եթե. • **վրեժը ծագել է տուժողի ծառայողական գործունեության կապակցությամբ** • սպանությունը կատարվել է վրեժի պատճառ հանդիսացած արարքից հետո 24 ժամվա ընթացքում • վրեժը ծագել է տուժողի ապօրինի գործունեության կապակցությամբ • վրեժը ծագել է տուժողի կողմից հանցավորին զույքային վնաս պատճառելու կապակցությամբ
109	Հանցանքը շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով կատարված սպանություն որակելու անհրաժեշտ պայմանն է. • հանցավորի դիտավորությամբ ընդգրկված լինի երկու կամ ավելի անձանց մահը • հանցավորի դիտավորությամբ ընդգրկված անձից բացի մահանա առնվազն մեկ այլ անձ • **հանցավորի արարքի կատարման արդյունքում իրական վտանգի տակ դրվի նրա դիտավորությամբ չընդգրկված առնվազն մեկ այլ անձի կյանքը** • հանցավորի դիտավորությամբ ընդգրկված անձից բացի մահանան առնվազն երեք այլ անձինք

110	Վեներական հիվանդությամբ կամ այլ սեռավարակներով վարակելը, դա. • **այլ անձին վեներական հիվանդությամբ կամ այլ սեռավարակներով վարակելն է այն անձի կողմից, ով գիտեր իր մոտ այդ հիվանդության առկայության մասին** • այլ անձին վեներական հիվանդությամբ կամ այլ սեռավարակներով վարակելն է այն անձի կողմից, ով չգիտեր իր մոտ այդ հիվադության առկայության մասին, թեև պարտավոր էր և կարող էր իմանալ • այլ անձին անզգուշությամբ վեներական կամ այլ սեռավարակներով վարակելն է • այլ անձին ուղղակի դիտավարությամբ վեներական հիվանդությամբ կամ այլ սեռավարակներով վարակելն է այն անձի կողմից, ով չգիտեր իր մոտ այդ հիվանդության մասին
111	Պատգամավարության թեկնածու Ա-ն իր օգտին կողմ քվեարկելու համար միջնորդի միջոցով ընտրողներին տալիս է 15.000 ՀՀ դրամ: Որակեք Ա-ի արարքը. • ընտրակաշառք տալը • **ընտրողի կամքի ազատ իրականացմանը խոչընդոտելը** • անձնական կամ այլ շահագրգռվածությունից ելնելով կաշառք տալը • արարքում հանցակազմ չկա
112	Հանցանքը կորակվի որպես սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրել. • եթե սուբյեկտը լինի արական սեռի ներկայացուցիչ, իսկ տուժողը՝ իգական • եթե սուբյեկտը լինի արական սեռի ներկայացուցիչ, անկախ տուժողի սեռից • **անկախ սուբյեկտի և տուժողի սեռից** • եթե սուբյեկտն ու տուժողը լինեն տարբեր սեռի ներկայացուցիչներ
113	Մարդու շահագործման ձև չի համարվում. • ստրկությունը • հարկադիր աշխատանքը • **վիճակի խոցելիության օգտագործումը** • առքը և վաճառքը
114	Սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելու հատկանիշ չէ. • շանտաժը • **բռնության սպառնալիքը** • գույք ոչնչացնելու սպառնալիքը • տուժողի նյութական կախվածության օգտագործումը
115	2009 թվականի նոյեմբերի 7-ին՝ ժամը 18:30-ի սահմաններում, Երևանի Բաշինջաղյան 184/1 հասցեում գտնվող հագուստի խանութից Ս-ն, ծնված 1997 թվականին, փորձել է գաղտնի հափշտակել 15.000 ՀՀ դրամ արժողությամբ մեկ կանացի տաբատ, իսկ վերջինիս եղբայրը՝ անչափահաս Ն-ն, ծնված 2000 թվականին, փորձել է գաղտնի հափշտակել 2.000 ՀՀ դրամ արժողությամբ մեկ սրբիչ, սակայն վերջիններիս կամքից անկախ հանգամանքներում արարքը ավարտին չի հասցվել, քանի որ նրանք բռնվել են խանութի աշխատակիցների կողմից: Որակել արարքը.

	• **հանցակազմ չկա** • բացակայում է հանցագործության դեպքը • գողության փորձ • խմբի կողմից պահեստարանից կատարված գողության փորձ
116	Տասնվեց տարին չլրացած անձի հետ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելու սուբյեկտը. • 14 տարին լրացած յուրաքանչյուր մեղսունակ ֆիզիկական անձը • 16 տարին լրացած յուրաքանչյուր մեղսունակ ֆիզիկական անձը • 16 տարին լրացած, մեղսունակ արական սեռի ներկայացուցիչը • **18 տարին լրացած յուրաքանչյուր մեղսունակ ֆիզիկական անձը**
117	Համակարգչային տեղեկատվությանն ապօրինի տիրանալ չի համարվում. • համակարգչում պահվող տեղեկատվությունն առանց թույլտվության պատճենահանելը • մեքենայական կրիչների վրա պահվող տեղեկատվությունն առանց թույլտվության պատճենահանելը • համակարգչում պահվող տեղեկատվությունը հանձնելուն հարկադրելը՝ անձի կամ նրա մերձավորի մասին նշավակող տեղեկություններ հրապարակելու սպառնալիքով • **համակարգչում պահվող եւ օրենքով պահպանվող տեղեկատվության համակարգի որևէ մաս կամ ամբողջությամբ համակարգ առանց թույլտվության մուտք գործելը (ներթափանցելը), որը կատարվել է պաշտպանիչ համակարգի խախտմամբ**
118	Ա-ն որպեսզի մասնակցի ընտրություններին և կողմ քվեարկի որևէ թեկնածուի օգտին վերցնում է 10.000 ՀՀ դրամ: Խնդրվում է որակել Ա-ի արարքը՝ • հանցակազմ չկա • **ընտրողի կամքի ազատ իրականացմանը խոչընդոտելը** • կաշառք ստանալը • ապօրինի վարձատրություն ստանալը
119	Կաշառք ստանալն ավարտված է համարվում. • միայն կաշառքի առարկան ստանալու պահին • **կաշառք պահանջելու, կաշառքի խոստումը կամ առաջարկն ընդունելու կամ կաշառքը ստանալու պահին** • կաշառքի առարկան միջնորդին հանձնելու պահին • կաշառքի առարկան միջնորդի կողմից պաշտոնատար անձին հանձնելու պահին

120	Սանիտարահակահամաճարակային կանոնները խախտելը. • անկախ հետևանքներից չի համարվում հանցագործություն • **համարվում է հանցագործություն, եթե այն անզգուշությամբ առաջացրել է մարդկանց զանգվածային հիվանդացում կամ թունավորում** • համարվում է հանցագործություն, եթե այն անզգուշությամբ առաջացրել է մարդու հիվանդացում կամ թունավորում • անկախ հետևանքներից համարվում է հանցագործություն
121	Մարդկանց կյանքի կամ առողջության համար վտանգավոր հանգամանքների վերաբերյալ տեղեկություն թաքցնել չի համարվում. • մարդկանց կյանքի համար վտանգ ստեղծող երևույթների վերաբերյալ տեղեկություն աղավաղելը, որը կատարվել է բնակչությանն այդպիսի տեղեկությամբ ապահովելու պարտականություն ունեցող անձի կողմից • մարդկանց առողջության համար վտանգ ստեղծող դեպքերի վերաբերյալ տեղեկություն թաքցնելը, որը կատարվել է բնակչությանն այդպիսի տեղեկությամբ ապահովելու պարտականություն ունեցող անձի կողմից • **մարդկանց կյանքի կամ առողջության համար վտանգ ստեղծող հանրահայտ դեպքերի, իրադարձությունների, փաստերի կամ երևույթների վերաբերյալ տեղեկություն թաքցնելը** • մարդկանց կյանքի համար վտանգ ստեղծող փաստերի վերաբերյալ տեղեկություն թաքցնելը, որը կատարվել է բնակչությանն այդպիսի տեղեկությամբ ապահովելու պարտականություն ունեցող անձի կողմից
122	Մասնավոր բժշկական կամ դեղագործական գործունեությամբ ապօրինաբար զբաղվել է համարվում. • **առանց գրանցման կամ հատուկ թույլտվության (լիցենզիա) մասնավոր բժշկական կամ դեղագործական գործունեությամբ զբաղվելը, եթե դա անզգուշությամբ վնաս է պատճառել մարդու առողջությանը** • առանց գրանցման կամ հատուկ թույլտվության (լիցենզիա) մասնավոր բժշկական կամ դեղագործական գործունեությամբ զբաղվելը, որն էական ֆիզիկական կամ նյութական վնաս է պատճառել դեղերի կամ բժշկական ծառայությունների սպառողներին • առանց գրանցման կամ հատուկ թույլտվության (լիցենզիա) մասնավոր բժշկական կամ դեղագործական գործունեությամբ զբաղվելը, եթե դա դիտավորությամբ վնաս է պատճառել մարդու առողջությանը • մասնավոր բժշկական կամ դեղագործական գործունեությամբ զբաղվելը, եթե դա անզգուշությամբ կամ դիտավորությամբ վնաս է պատճառել մարդու առողջությանը կամ առաջացրել է մահ
123	Անառակաբարո գործողությունների տուժող կարող է լինել. • **16 տարին չլրացած անձը** • 18 տարին չլրացած անձը

	• միայն 16 տարին չլրացած իգական սեռի ներկայացուցիչը • միայն 16 տարին չլրացած՝ հանցավորին հակառակ սեռի ներկայացուցիչը
124	Ըստ ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ հոդվածի հանցանքը կատարելու ժամանակ է համարվում. • հանրորեն վտանգավոր հետևանքները վրա հասնելու պահը • հանցավոր գործունեությունն իրականացնելու պահը • **հանրության համար վտանգավոր գործողությունը /անգործությունը/ իրականացնելու ժամանակը՝ անկախ հետևանքները վրա հասնելու պահից** • շարունակվող հանցագործությունների դեպքում վերջին գործողությունը կատարելու պահը, իսկ տևող հանցագործությունների դեպքում առաջին գործողությունը կատարելու պահը
125	Ո՞ր դեպքում թմրամիջոցներ գործածելը չի համարվում հանցագործություն. • եթե նախորդ վեց ամսվա ընթացքում անձը նույնպիսի խախտում չի կատարել կամ կատարելու համար վարչական տույժի չի ենթարկվել • եթե նախորդ մեկ տարվա ընթացքում անձը նույնպիսի խախտում չի կատարել կամ կատարելու համար վարչական տույժի չի ենթարկվել • **թմրամիջոցներ գործածելը ընդհանրապես հանցագործություն չի համարվում** • եթե գործածողն այդ մասին հայտնել է իրավապահ մարմիններին
126	Օրենքով արգելված ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելը, որը զուգորդվել է անձանց կամ կազմակերպություններին կամ պետությանը զգալի վնաս պատճառելով, համարվում է. • **ապօրինի ձեռնարկատիրություն** • կեղծ ձեռնարկատիրություն • ապօրինի հակամրցակցային գործունեություն • շահույթ ստանալու նպատակով կեղծ ձեռնարկատիրություն
127	Կեղծ գովազդ հանցագործությունը կարող է կատարվել. • ուղղակի և անուղղակի դիտավորությամբ • **միայն ուղղակի դիտավորությամբ** • միայն անզգուշությամբ • ինչպես դիտավորությամբ, այնպես էլ անզգուշությամբ
128	Փաստաբանին կաշառք տալը, այսինքն՝ ապօրինաբար նրան անձամբ կամ միջնորդի միջոցով նրա կամ այլ անձի համար դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն խոստանալը կամ առաջարկելը կամ տրամադրելը՝ կաշառք տվողի կամ նրա ներկայացրած անձի օգտին գործողություններ կատարելու կամ չկատարելու համար, համարվում է. • կաշառք տալ • **առևտրային կաշառք**

	• կաշառքի միջնորդություն • կաշառք ստանալ
129	Հանցավոր ճանապարհով ստացված գույքի փոխարկումը (կոնվերտացումը) համարվում է. • **հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներն օրինականացնել (փողերի լվացում)** • հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներն օգտագործել և տիրապետել • հանցավոր ճանապարհով ստացված գույքը կամ դրամական միջոցները ոչ նպատակային օգտագործել • ապօրինի ձեռնարկատիրություն
130	Ո՞ր կետում են նշված միայն սեփականության դեմ ուղղված հանցագործություններ. • **ավազակություն, գույքային վնաս պատճառելը խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով, գույքն անզգուշությամբ ոչնչացնելը կամ վնասելը, ավտոմեքենային կամ տրանսպորտային այլ միջոցին ապօրինաբար տիրանալն առանց հափշտակելու նպատակի** • խարդախությունը, առանձնակի արժեք ունեցող առարկաներ հափշտակելը, սպառողներին խաբելը, կողոպուտը, գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը, յուրացնելը կամ վատնելը, շորթումը • հափշտակությունը, որը կատարվել է համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ, փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ հափշտակելը կամ վատնելը, համակարգչային տեղեկատվությանն ապօրինի տիրանալը • կողոպուտը, գողությունը, պետական պարգևները հափշտակելը, շորթումը, առանձնակի արժեք ունեցող առարկաներ հափշտակելը, ավտոմեքենային կամ տրանսպորտային այլ միջոցին ապօրինաբար տիրանալն առանց հափշտակելու նպատակի
131	Անչափահասին հանցանքի կատարմանը ներգրավելու հանցակազմի իմաստով անչափահաս ասելով հասկացվում է. • տվյալ հանցագործության համար քրեական պատասխանատվության տարիքի չհասած անձը • 16 -18 տարեկան անձը • **տվյալ հանցագործության համար քրեական պատասխանատվության տարիքի հասած, բայց 18 տարին չլրացած անձը** • 16 տարին չլրացած անձը

132	Հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարումները վճարելուց չարամտորեն խուսափելը համարվում է հանցագործություն, եթե. • **այն դրսևորվել է օրենսդրությամբ նախատեսված հաշվետվություններ, հաշվարկներ կամ հարկման հիմք հանդիսացող պարտադիր այլ փաստաթղթեր չներկայացնելու կամ նշված փաստաթղթերի մեջ ակնհայտ խեղաթյուրված տվյալներ մտցնելու միջոցով, որը կատարվել է խոշոր չափերով** • այն դրսևորվել է օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունների, հաշվարկների կամ հարկման հիմք հանդիսացող պարտադիր այլ փաստաթղթերի մեջ սխալ տվյալներ մտցնելու միջոցով, որի հետևանքով պետությանը պատճառվել է առանձնապես խոշոր չափի վնաս • այն դրսևորվել է օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունները, հաշվարկները կամ հարկման համար հիմք հանդիսացող պարտադիր այլ փաստաթղթերը իրավասու պետական մարմնին օրենքով սահմանված ժամկետներում չներկայացնելով, որի հետևանքով պետությանը պատճառվել է առանձնապես խոշոր չափի վնաս • այն դրսևորվել է օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունների, հաշվարկների կամ հարկման հիմք հանդիսացող պարտադիր այլ փաստաթղթերի կանխամտածված ոչնչացմամբ
133	Ա-ն և Բ-ն տեղեկանալով, որ Գ-ն բնակարանում պահում է խոշոր չափի գումար, որոշում են այն գաղտնի հափշտակել: Բնակարան մուտք գործելիս և այն խուզարկելիս գումարը չեն հայտնաբերում: Այդ պահին տուն է մտնում Գ-ն: Ա-ն անմիջապես դիմում է փախուստի, իսկ Բ-ն հարձակվելով Գ-ի վրա և դանակով սպառնալով՝ պահանջում է ասել գումարի տեղը: Սակայն համոզվելով, որ բնակարանում գումար չկա, հեռանում է: Խնդրվում է որակել Ա-ի և Բ-ի գործողությունները. • Ա-ն եւ Բ-ն ենթակա են պատասխանատվության՝ ավազակային հարձակում կատարելու համար • **Ա-ն ենթակա է պատասխանատվության գողության հանցափորձ կատարելու, իսկ Բ-ն՝ ավազակություն կատարելու համար** • Ա-ն ենթակա է պատասխանատվության գողության հանցափորձ կատարելու, իսկ Բ-ն՝ ավազակության հանցափորձ կատարելու համար • Ա-ն ենթակա է պատասխանատվության գողության, իսկ Բ-ն՝ գողության և ավազակության հանցափորձի համար
134	Իր պահանջները կատարելուն հարկադրելու նպատակով Ա-ն որոշում է պատանդ վերցնել երեխաներ: Իր մտադրությունն իրականացնելու համար խաղալիք ատրճանակով զինված՝ նա մտնում է դպրոց: Պահակից տեղեկանալով, որ այդ օրը դասերը շուտ են ավարտվել և դպրոցում երեխա չկա, որոշում է իր մտադրությունն իրականացնել հաջորդ օրը: Սակայն հետագայում հրաժարվում է իր մտադրությունից: Ենթակա՞ է արդյոք Ա-ն քրեական պատասխանատվության. • **ենթակա չէ**

	• ենթակա է՝ զենք գործադրելով պատանդ վերցնելու հանցափորձի համար • ենթակա է՝ զենք գործադրելով պատանդ վերցնելու հանցագործության նախապատրաստման համար • ենթակա է՝ ապօրինի կերպով զենք պահելու համար
135	Եթե տուժողի գույքը բացահայտ հափշտակելու նպատակով նրա նկատմամբ գործադրվում է կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն, ապա արարքը որակվում է. • որպես ավազակություն • որպես հասարակ կողոպուտ • **որպես ծանրացուցիչ հանգամանքներով կողոպուտ** • հանցագործությունների համակցությամբ՝ հասարակ կողոպուտ և առողջությանը համապատասխան ծանրության վնաս պատճառելը
136	16 տարեկան Ա-ն սեռական հարաբերության մեջ է մտնում ակնհայտ 14 տարին չլրացած աղջկա հետ նրա կամքով, և վերջինս գիտակցում է իր հետ կատարվող գործողությունների նշանակությունը: Որակեք Ա-ի արարքը. • բռնաբարություն • **հանցակազմ չկա** • կատարել սեքսուալ բնույթի գործողություններ տասնվեց տարին չլրացած անձի հետ • անառակաբարո գործողություններ
137	Ա-ն մարդաշատ վայրում պատահաբար նկատելով իր թշնամի Բ-ին՝ հայհոյանք տալով հարձակվում է նրա վրա և հարվածներ հասցնում, որի հետևանքով Բ-ն ստանում է միջին ծանրության մարմնական վնասվածք: Ա-ի գործողությունները պետք է որակել որպես. • որակյալ խուլիգանություն • դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնասվածք պատճառել և հասարակ խուլիգանություն • դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնասվածք պատճառել և որակյալ խուլիգանություն • **դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնասվածք պատճառել**

138	Երեխային դաստիարակելու պարտականությունը չկատարելը, դա. • **ծնողի կամ այն անձի կողմից, ում վրա դրված է երեխայի դաստիարակության պարտականությունը, կամ մանկավարժի կամ ուսումնական, բուժական կամ դաստիարակչական հաստատության այլ աշխատողների կողմից երեխային դաստիարակելու պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը** • ծնողի կամ այն անձի կողմից, ում վրա այդ պարտականությունները դրված են ըստ ծառայության, կամ այն անձի կողմից, ով այդ պարտականությունը կատարում է հատուկ հանձնարարությամբ կամ ստանձնել է կամավոր, եթե դրա հետևանքով երեխայի առողջությանն անզգուշությամբ պատճառվել է միջին ծանրության վնաս • ծնողի կամ այլ անձի կողմից, ում վրա դրված է այդ պարտականությունը երեխային դիտավորությամբ առանց հսկողության կամ անհրաժեշտ օգնության թողնելը, որն առաջացրել է նրա իրավունքների և օրինական շահերի էական խախտում • ծնողի կողմից երեխայի դաստիարակության պարտականություն, կամ մանկավարժի կամ ուսումնական, բուժական կամ դաստիարակչական հաստատության այլ աշխատողների կողմից երեխային դաստիարակելու պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որն առաջացրել է էական վնաս երեխայի իրավունքների ու օրինական շահերին կամ վնաս առողջությանը
139	Մարդու իմունային անբավարարության վիրուսի հարուցիչով վարակելը, դա. • **այլ անձին մարդու իմունային անբավարարության վիրուսի հարուցիչով դիտավորությամբ կամ ինքնավստահությամբ վարակելն այն անձի կողմից, ով գիտեր իր մոտ այդ հիվանդության առկայության մասին** • այլ անձին մարդու իմունային անբավարարության վիրուսի հարուցիչով անզգուշությամբ վարակելն այն անձի կողմից, ով գիտեր իր մոտ այդ հիվանդության առկայության մասին • այլ անձին մարդու իմունային անբավարարության վիրուսի հարուցիչով վրեժի շարժառիթով, եթե անձը գիտեր իր մոտ այդ հիվանդության առկայության մասին • այլ անձին մարդու իմունային անբավարարության վիրուսի հարուցիչով անփութությամբ կամ ինքնավստահությամբ վարակելն այն անձի կողմից, ով չգիտեր իր մոտ այդ հիվանդության առկայության մասին
140	Քրեական օրենքն ունի հետադարձ ուժ, եթե. • անձը կատարել է այնպիսի հանցանք, որի համար նախատեսվում է ազատազրկման հետ չկապված պատիժ • **դրանով վերացվում է արարքի հանցավորությունը, մեղմացվում է պատիժը կամ այլ կերպ բարելավվում է հանցանք կատարած անձի վիճակը** • անհրաժեշտ է անձին ազատել քրեական պատասխանատվությունից և պատժի հետագա կրումից և եթե այդ օրենքը որևէ կերպ բարելավում է անձի պատիժը կրելու պայմանները

	• դրանով վերացվում է արարքի հանցավորությունը և միաժամանակ չի վատթարանում հանցագործության զոհերի վիճակը
141	Անձին՝ անմիջականորեն նրա իրավունքներն ու օրինական շահերը շոշափող և սահմանված կարգով հավաքված փաստաթղթերը կամ նյութերը ներկայացնելուց պաշտոնատար անձի կողմից ապօրինի հրաժարվելը կամ անձին այդպիսի տեղեկությունը ոչ լրիվ կամ դիտավորյալ աղավաղված ներկայացնելը, եթե դա տվյալ անձի իրավունքներին և օրինական շահերին վնաս է պատճառել համարվում է. • **անձին տեղեկություն ներկայացնելուց հրաժարվել** • քաղաքացիների իրավահավասարությունը խախտել • պաշտոնեական լիազորությունները չարաշահել • պաշտոնեական լիազորություններն անցնել
142	Հավաքը դադարեցնելու վերաբերյալ ոստիկանության ներկայացուցչի օրինական որոշմանը չենթարկվելուն ուղղված կոչերը հանցագործությու՞ն է ըստ գործող քրեական օրենսգրքի. • ոչ • **այո** • այո, եթե կատարվում է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ • այո, եթե կատարվում է իշխանության ներկայացուցիչներին դիմադրելով
143	Խղճի կամ դավանանքի ազատության իրավունքի իրականացմանը խոչընդոտելը, դա. • խղճի կամ դավանանքի ազատության հիմքով անձին զինվորական ծառայությունից հրաժարվելու դեպքում քրեական պատասխանատվության ենթարկելն է • կրոնական կազմակերպություններ չգրանցելը կամ կրոնական ծեսերի կատարումն արգելելն է • **կրոնական կազմակերպությունների օրինական գործունեությանը կամ կրոնական ծեսերի կատարմանը խոչընդոտելն է** • կրոնական կազմակերպությունների կողմից հոգեորսությամբ զբաղվելուն կամ այլ կերպ հավատացյալներ հավաքագրելուն խոչընդոտելն է

144	Եթե զգալի չափերով գույքը հափշտակելիս ներկա են այլ անձինք, ովքեր նկատում են հանցավորի գործողությունները, սակայն չեն գիտակցում դրանց նշանակությունը, ապա. • արարքը բոլոր դեպքերում որակվում է որպես գողություն • արարքը բոլոր դեպքերում որակվում է որպես կողոպուտ • **արարքը որակվում է որպես գողություն, եթե հանցավորը գիտակցում է, որ այլ անձինք չեն հասկանում իր գործողությունների նշանակությունը** • արարքը որակվում է որպես կողոպուտ, եթե հանցավորը գիտակցում է, որ այլ անձինք չեն հասկանում իր գործողությունների նշանակությունը
145	Ներման ակտով հնարավոր չէ. • լրացուցիչ պատժից ազատելը • պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելը • **քրեական պատասխանատվությունից ազատելը** • դատվածության վերացումը
146	Անչափահասների նկատմամբ ըստ դատավճիռների համակցության ազատազրկման ձևով նշանակվող վերջնական պատիժը. • **չի կարող գերազանցել տասներկու տարին** • չի կարող գերազանցել տասը տարին • սահմանվում է ութից մինչև տասներկու տարի ժամանակով • կարող է գերազանցել տասներկու տարին միայն առանձնապես վտանգավոր հանցագործությունների կատարման դեպքում
147	Մինչեվ 16 տարին լրանալը միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կատարած անձանց նկատմամբ ազատազրկումը, ըստ հանցագործությունների համակցության, չի կարող գերազանցել. • վեց տարին • **յոթ տարին** • տասը տարին • տասներկու տարին
148	16-ից մինչև 18 տարին լրանալը միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կատարած անձանց նկատմամբ ազատազրկումը, ըստ հանցագործությունների համակցության, չի կարող գերազանցել. • վեց տարին • ութ տարին • **տասը տարին** • տասներկու տարին
149	Ըստ ՀՀ քրեական օրենսգրքի 40-րդ հոդվածի հանցակցի սահմանազանցում է համարվում. • հանցակիցներից մեկի կողմից հանցագործությունն ավարտին հասցնելուց կամովին հրաժարվելը • **անձի կողմից այնպիսի հանցանք կատարելը, որը չի ընդգրկվում մյուս**

	հանցակիցների դիտավորությամբ • կազմակերպչի, դրդչի կամ օժանդակողի կողմից միաժամանակ որպես կատարող հանդես գալը • հանցավոր համագործակցության անդամ չհանդիսացող անձի կողմից համագործակցության առաջադրանքով հանցանք կատարելը
150	Անձին տեղեկություն ներկայացնելուց հրաժարվելը, դա. • **անձին՝ անմիջականորեն նրա իրավունքներն ու օրինական շահերը շոշափող և սահմանված կարգով հավաքված փաստաթղթերը կամ նյութերը ներկայացնելուց պաշտոնատար անձի կողմից ապօրինի հրաժարվելը կամ անձին այդպիսի տեղեկությունը ոչ լրիվ կամ դիտավորյալ աղավաղված ներկայացնելը, եթե դա տվյալ անձի իրավունքներին և օրինական շահերին վնաս է պատճառել** • անձին՝ նրա անձնական կյանքին, իրավունքներն ու օրինական շահերը շոշափող և սահմանված կարգով հավաքված փաստաթղթերը կամ նյութերը ներկայացնելուց պաշտոնատար անձի կողմից ապօրինի հրաժարվելը կամ անձին այդպիսի տեղեկությունը ոչ լրիվ կամ դիտավորյալ աղավաղված ներկայացնելը • անձին՝ նրա անձնական կյանքին, հիվանդությանը, նրա այլ իրավունքներն ու օրինական շահերը շոշափող և սահմանված կարգով հավաքված փաստաթղթերը կամ նյութերը ներկայացնելուց պաշտոնատար կամ այլ անձի կողմից ապօրինի հրաժարվելը կամ անձին այդպիսի տեղեկությունը ոչ լրիվ կամ դիտավորյալ աղավաղված ներկայացնելը, եթե դա տվյալ անձի իրավունքներին և օրինական շահերին վնաս է պատճառել • անձին՝ անմիջականորեն նրա իրավունքներն ու օրինական շահերը շոշափող, նրա բանկային կամ այլ իրավունքներին վերաբերող և սահմանված կարգի խախտմամբ հավաքված փաստաթղթերը կամ նյութերը ներկայացնելուց պաշտոնատար անձի կողմից ապօրինի հրաժարվելը կամ անձին այդպիսի տեղեկությունը ոչ լրիվ կամ դիտավորյալ աղավաղված ներկայացնելը, եթե դա տվյալ անձի իրավունքներին և օրինական շահերին վնաս է պատճառել
151	Մակերեսային կամ ստորերկրյա ջրերը, խմելու ջրամատակարարման աղբյուրներն աղտոտելը, աղբոտելը, խցանելը, սպառելը կամ դրանց բնական հատկությունները կամ որակական բաղադրությունն այլ կերպ փոփոխելը, եթե այդ արարքները դիտավորությամբ կամ անզգուշությամբ կենդանական կամ բուսական աշխարհին, ձկնային պաշարներին, անտառային կամ գյուղացիական տնտեսությանն էական վնաս են պատճառել, համարվում է. • ծովային միջավայրն աղտոտել • **ջրերն աղտոտել** • ձկնային պաշարների պահպանության կանոնները խախտել • ընդերքի պահպանման և օգտագործման կանոնները խախտել

152	Հանցագործությունից կամովին հրաժարում է համարվում. • անձի կողմից հանցանքը կատարելուց հետո ինքնակամ վարույթն իրականացնող մարմին ներկայանալը, խմբի անդամներին մերկացնելը • անձի կողմից հանցանքը կատարելուց հետո ինքնախոստովական ցուցմունք տալը, հանցանքի հանգամանքների բացահայտմանը աջակցելը, տուժողին պատճառված վնասը հատուցելը, խմբի անդամների մերկացնելը • **անձի կողմից հանցագործության նախապատրաստությունը կամ հանցափորձը կամ անմիջականորեն հանցանք կատարելուն ուղղված գործողությունը (անգործությունը) դադարեցնելը, եթե անձը գիտակցել է հանցագործությունն ավարտին հասցնելու հնարավորությունը** • անձի կողմից հանցափորձը կամ անմիջականորեն հանցանք կատարելուն ուղղված գործողությունը (անգործությունը) դադարեցնելը, հանցագործության հետևանքները կանխելը, տուժողին օգնություն ցույց տալը, եթե անձը գիտակցել է հանցագործությունն ավարտին հասցնելու հնարավորությունը
153	Հանցագործության կազմակերպիչը, դրդիչը կամ օժանդակողը կամովին հրաժարվելու դեպքում. • **ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե նա պետական մարմիններին հաղորդելով կամ ձեռնարկված այլ միջոցներով կանխել է կատարողի կողմից հանցագործությունն ավարտին հասցնելը** • ենթակա չէ քրեական պատասխանատվության • ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե նրա կատարած արարքը ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործություն է • ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե հրաժարումը եղել է վերջնական
154	Կեղծ փողեր և արժեթղթեր պատրաստելը և պահելը քրեորեն պատժելի է. • միայն եթե դրա արդյունքում փողը կամ արժեթուղթը իրացվում է • **միայն եթե պատրաստումը և պահումը կատարվում է իրացման նպատակով** • պատրաստելու և պահելու ցանկացած դեպքում • միայն եթե պատրաստումը և պահումը կատարվում է նույն անձի կողմից
155	Որքա՞ն է կազմում քրեական պատասխանատվությունից ազատելու վաղեմության ժամկետը միջին ծանրության հանցագործության համար. • մեկ տարի՝ հանցանքն ավարտված համարելու օրվանից • երկու տարի՝ հանցանքն ավարտված համարելու օրվանից • չորս տարի՝ հանցանքն ավարտված համարելու օրվանից • **հինգ տարի՝ հանցանքն ավարտված համարելու օրվանից**
156	Պաշտոնական լիազորություններն անցնելը կարող է դրսևորվել. • գործողությամբ, իսկ անգգուշությամբ կատարվելու դեպքում՝ նաև անգործությամբ • միայն անգործությամբ

	• ինչպես գործողությամբ, այնպես էլ անգործությամբ • **միայն գործողությամբ**
157	Սպանության ծանրացնող հանգամանք է համարվում. • կրկին անգամ կատարված սպանությունը • համակցությամբ կատարված սպանությունը • խանդի շարժառիթով սպանությունը • **զանգվածային անկարգությունների ընթացքում դրանց մասնակցի կողմից կատարված սպանությունը**
158	Դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու ծանրացնող հանգամանք է համարվում. • զանգվածային անկարգությունների ընթացքում դրանց մասնակցի կողմից առողջությանը ծանր վնաս պատճառելը • խանդի շարժառիթով առողջությանը ծանր վնաս պատճառելը • **ահաբեկչությամբ զուգորդված առողջությանը ծանր վնաս պատճառելը** • նախկինում նույն արարքի համար դատվածություն ունեցող անձի կողմից առողջությանը ծանր վնաս պատճառելը
159	Հանցանք կատարած անձին բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցում է համարվում. • **բռնելու միջոցների ակնհայտ անհամապատասխանությունն արարքի և դա կատարող անձի վտանգավորությանը, ինչպես նաև բռնելու հանգամանքներին, որոնց հետևանքով անձին դիտավորությամբ պատճառվել է այնպիսի վնաս, որը պայմանավորված չի եղել բռնելու անհրաժեշտությամբ** • բռնելիս դիտավորությամբ այնպիսի միջոցների կիրառումը, որոնք ակնհայտորեն չեն համապատասխանել ինչպես հանցագործության, այնպես էլ դա կատարող անձի վտանգավորությանը, ինչպես նաև բռնելու հանգամանքներին, որոնց հետևանքով անձին դիտավորությամբ պատճառվել է այնպիսի վնաս, որը պայմանավորված չի եղել բռնելու անհրաժեշտությամբ • բռնելու միջոցների ակնհայտ անհամապատասխանությունն արարքի և դա կատարող անձի վտանգավորությանը, ինչպես նաև բռնելու հանգամանքներին, որոնց հետևանքով անձին անզգուշությամբ պատճառվել է այնպիսի վնաս, որը պայմանավորված չի եղել բռնելու անհրաժեշտությամբ • բռնելիս դիտավորությամբ այնպիսի միջոցների կիրառումը, որոնք ակնհայտորեն չեն համապատասխանել ինչպես հանցագործության, այնպես էլ դա կատարող անձի վտանգավորությանը, ինչպես նաև բռնելու հանգամանքներին, որոնց հետևանքով անձին անզգուշությամբ պատճառվել է այնպիսի վնաս, որը պայմանավորված չի եղել բռնելու անհրաժեշտությամբ

160	Մեղքից բացի, դիվերսիայի սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշն է. • Հայաստանի Հանրապետության հանդեպ ատելության շարժառիթը • **պետությունը թուլացնելու նպատակը** • պետությանը որևէ գործողություն կատարելուն հարկադրելու նպատակը • պետական գաղտնիք ձեռք բերելու նպատակը
161	Վնասարարության նպատակն է. • ազգաբնակչությանը լուրջ անհանգստություն պատճառելը • հասարակական կարգը և անվտանգությունը խախտելը • բնակչությանն ահաբեկելը • **պետությունը թուլացնելը**
162	Միջին ծանրության հանցագործություն կհամարվի. • անզգուշությամբ կատարված այն արարքը, որի համար քրեական օրենքով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում 3 տարի ժամկետով ազատազրկումը • անզգուշությամբ կատարված այն արարքը, որի համար դատարանի կողմից նշանակված պատիժը չի գերազանցում 3 տարի ժամկետով ազատազրկումը • **անզգուշությամբ կատարված այն արարքը, որի համար քրեական օրենքով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում 10 տարի ժամկետով ազատազրկումը** • անզգուշությամբ կատարված այն արարքը, որի համար դատարանի կողմից նշանակված պատիժը չի գերազանցում 8 տարի ժամկետով ազատազրկումը
163	Ծանր հանցագործություններ են համարվում. • դիտավորությամբ կատարված այն արարքները, որոնց համար քրեական օրենսգրքով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում երկու տարի ժամկետով ազատազրկումը կամ որոնց համար նախատեսված է ազատազրկման հետ կապ չունեցող պատիժ, ինչպես նաեւ անզգուշությամբ կատարված այն արարքները, որոնց համար քրեական օրենսգրքով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում երեք տարի ժամկետով ազատազրկումը • դիտավորությամբ կատարված այն արարքները, որոնց համար քրեական օրենսգրքով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում հինգ տարի ժամկետով ազատազրկումը, ինչպես նաեւ անզգուշությամբ կատարված այն արարքները, որոնց համար քրեական օրենսգրքով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում տասը տարի ժամկետով ազատազրկումը • **դիտավորությամբ կատարված այն արարքները, որոնց համար քրեական օրենսգրքով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում տասը տարի ժամկետով ազատազրկումը** • դիտավորությամբ կատարված այն արարքները, որոնց համար քրեական օրենսգրքով նախատեսված է առավելագույն պատիժ՝ ազատազրկում տասը տարուց ավելի ժամկետով կամ ցմահ ազատազրկում

164	Ո՞ր կետում են սպառիչ թվարկված լրտեսության, որպես ինքնուրույն հանցագործության, սուբյեկտները. • յուրաքանչյուր ոք • **օտարերկրյա քաղաքացին եւ քաղաքացիություն չունեցող անձը** • միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացին • միայն օտարերկրյա քաղաքացին
165	Պատժի տեսակ չէ. • տուգանքը • կալանքը • **հոգեբուժական հիվանդանոցում հարկադիր բուժումը** • գույքի բռնագրավումը
166	Հանցակցի սահմանազանցման համար. • մյուս հանցակիցները կրում են համապարտ պատասխանատվություն • մյուս հանցակիցների պատասխանատվությունը որոշվում է ընդհանուր կարգով • **մյուս հանցակիցները պատասխանատվություն չեն կրում** • մյուս հանցակիցները պատասխանատվություն չեն կրում, եթե ապացուցում են, որ նրանք չեն գիտակցել սահմանազանցումը
167	Ըստ ՀՀ քրեական օրենսգրքի՝ մեկ հանցագործության համար որոշակի ժամկետով ազատազրկման առավելագույն ժամկետն է. • տասնհինգ տարին • երեսուն տարին • **քսան տարին** • քսանհինգ տարին
168	Որքա՞ն գումարն է համարվում առանձնապես խոշոր չափ ,հարկերը, տուրքերը, կամ պարտադիր այլ վճարումները վճարելուց խուսափելը հանցանքում. • հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող գումարը • հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկից մինչև հինգհազարապատիկը • **հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի տասնհինգհազարապատիկը գերազանցող գումարը** • հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի տասհազարապատիկը գերազանցող գումարը

169	Գործուն զղջալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատել հնարավոր է. • առաջին անգամ ոչ մեծ ծանրության կամ միջին ծանրության հանցանք կատարած անձին • ոչ մեծ ծանրության հանցանք կատարած անձին, ինչպես նաև քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով նախատեսված դեպքերում նաև այլ հանցանք կատարած անձի • **առաջին անգամ ոչ մեծ ծանրության կամ միջին ծանրության հանցանք կատարած անձին, իսկ քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածով հատկապես նախատեսված դեպքերում նաև այլ տեսակի հանցանք կատարած անձին** • գործուն զղջալը պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք է և կարող է հաշվի առնվել միայն պատիժ նշանակելիս
170	Երեք տարվա համատեղ ամուսնության ընթացքում Ա-ն և Բ-ն երեխաներ չեն ունենում: Ընտանիքը պահպանելու նպատակով Ա-ն ամուսնու երկարաժամկետ ծառայության մեկնելուց առաջ նրան հայտնում է, որ հղի է: Հետագայում, խաբեությունը թաքցնելու համար նա փողոցում մանկասայլակից վերցնում է ուրիշի երկու ամսական երեխային և խաբեությամբ գրանցում է իր անունով: Որակեք Ա-ի արարքը. • արարքում հանցակազմ չկա • երեխայի առևանգում • ՔԿԱԳ մարմիններին կեղծ տեղեկատվություն հաղորդելը • **երեխայի առևանգում և ՔԿԱԳ մարմիններին կեղծ տեղեկատվություն հաղորդելը**
171	Հայաստանի Հանրապետության տարածքում կատարված է համարվում այն հանցանքը, որը. • սկսվել, շարունակվել և ավարտվել է միայն Հայաստանի Հանրապետության տարածքում • սկսվել և ավարտվել է միայն Հայաստանի Հանրապետության տարածքում • **սկսվել, շարունակվել կամ ավարտվել է Հայաստանի Հանրապետության տարածքում, ինչպես նաև հանցակցությամբ կատարվել է այն անձանց հետ, ովքեր հանցավոր գործունեություն են իրականացրել այլ պետության տարածքում** • սկսվել և ավարտվել է միայն Հայաստանի Հանրապետության տարածքում, ինչպես նաև առանձնապես ծանր հանցագործությունները, եթե նրանք հանցակցությամբ կատարվել են այն անձանց հետ, ովքեր հանցավոր գործունեություն են իրականացրել այլ պետության տարածքում

172	Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս հանցանք կատարած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող քաղաքացիություն չունեցող անձինք. • ենթակա են պատասխանատվության ՀՀ քրեական օրենսգրքով, եթե նրանց կատարած արարքը ճանաչված է հանցագործություն ՀՀ քրեական օրենսգրքով • ենթակա են պատասխանատվության ՀՀ քրեական օրենսգրքով, եթե նրանց կատարած արարքը ճանաչված է հանցագործություն ՀՀ քրեական օրենսգրքով և եթե նրանք չեն դատապարտվել այլ պետությունում • ենթակա չեն պատասխանատվության ՀՀ քրեական օրենսգրքով • **ենթակա են պատասխանատվության ՀՀ քրեական օրենսգրքով, եթե նրանց կատարած արարքը ճանաչված է հանցագործություն դրա կատարման վայրի պետության օրենսդրությամբ, և եթե նրանք չեն դատապարտվել այլ պետությունում**
173	Օտարերկրյա քաղաքացիները և Հայաստանի Հանրապետությունում մշտապես չբնակվող, քաղաքացիություն չունեցող անձինք, ովքեր հանցանքը կատարել են Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս. • ենթակա չեն պատասխանատվության ՀՀ քրեական օրենսգրքով • ենթակա են պատասխանատվության ՀՀ քրեական օրենսգրքով, եթե տվյալ հանցագործության համար չեն դատապարտվել մեկ այլ պետությունում և քրեական պատասխանատվության են ենթարկվում Հայաստանի Հանրապետության տարածքում • **ենթակա են պատասխանատվության ՀՀ քրեական օրենսգրքով, եթե նրանք կատարել են այնպիսի հանցագործություններ, որոնք նախատեսված են ՀՀ միջազգային պայմանագրով, կամ այնպիսի ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություններ, որոնք ուղղված են ՀՀ շահերի կամ ՀՀ քաղաքացիների իրավունքների և ազատությունների դեմ և եթե տվյալ հանցագործության համար չեն դատապարտվել մեկ այլ պետությունում և քրեական պատասխանատվության են ենթարկվում Հայաստանի Հանրապետության տարածքում** • ենթակա են պատասխանատվության ՀՀ քրեական օրենսգրքով, եթե նրանք կատարել են մարդկության դեմ ուղղված այնպիսի ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություններ, որոնք նախատեսված են միջազգային պայմանագրերով և եթե տվյալ հանցագործության համար չեն դատապարտվել մեկ այլ պետությունում և քրեական պատասխանատվության են ենթարկվում Հայաստանի Հանրապետության տարածքում

174	Այլ պետության տարածքում հանցանք կատարած ՀՀ քաղաքացիներն. • **այլ պետության չեն հանձնվում** • հանձնվում են այդ պետությանը • Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրին համապատասխան՝ կարող են հանձնվել օտարերկրյա պետությանը քրեական պատասխանատվության ենթարկելու կամ պատիժը կրելու համար • Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրին համապատասխան, կարող են հանձնվել օտարերկրյա պետությանը, եթե հանձնումը չի պահանջվել նրանց ռասսայական, կրոնական, ազգային, որոշակի սոցիալական խմբի պատկանելության կամ քաղաքական կարծիքի պատճառով հետաքննության կամ պատժի կիրառման համար
175	Որո՞նք են հանցագործության տեսակներն ըստ բնույթի և հանրության համար վտանգավորության աստիճանի. • ըստ բնույթի և հանրության համար վտանգավորության աստիճանի հանցագործությունները դասակարգվում են՝ թեթև, միջին ծանրության, ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների • ըստ բնույթի և հանրության համար վտանգավորության աստիճանի հանցագործությունները դասակարգվում են՝ ոչ մեծ ծանրության, միջին ծանրության, ծանր հանցագործությունների • ըստ բնույթի և հանրության համար վտանգավորության աստիճանի հանցագործությունները դասակարգվում են՝ թեթև, ոչ մեծ ծանրության, միջին ծանրության և առանձնապես ծանր հանցագործությունների • **ըստ բնույթի և հանրության համար վտանգավորության աստիճանի հանցագործությունները դասակարգվում են՝ ոչ մեծ ծանրության, միջին ծանրության, ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների**
176	Հանցագործությունների համակցություն է համարվում. • ՀՀ քրեական օրենսգրքի տարբեր հոդվածներով կամ նույն հոդվածի տարբեր մասերով նախատեսված երկու կամ ավելի հանցանք կատարելը, որոնցից ոչ մեկի համար անձը դատապարտված չի եղել • ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված այնպիսի մեկ գործողությունը (անգործությունը), որը պարունակում է քրեական օրենսգրքի երկու հոդվածներով նախատեսված հանցագործությունների հատկանիշներ • ՀՀ քրեական օրենսգրքի նույն հոդվածի տարբեր մասերով նախատեսված երկու հանցանք կատարելը, որոնցից ոչ մեկի համար անձը դատապարտված չի եղել, կամ այնպիսի մեկ գործողությունը (անգործությունը), որը պարունակում է ՀՀ քրեական օրենսգրքի երկու կամ ավելի հոդվածներով նախատեսված հանցագործությունների հատկանիշներ • **ՀՀ քրեական օրենսգրքով (տարբեր հոդվածներով կամ միևնույն հոդվածով կամ հոդվածի միևնույն կամ տարբեր մասերով կամ կետերով) նախատեսված երկու կամ ավելի հանցանք կատարելը, որոնցից ոչ մեկի համար անձը**

	դատապարտված չի եղել, կամ այնպիսի մեկ գործողությունը (անգործությունը), որը պարունակում է ՀՀ քրեական օրենսգրքի երկու կամ ավելի հոդվածներով նախատեսված հանցագործությունների հատկանիշներ
177	Մանկատան տնօրենը չար երեխաներին նստեցնում է մանկատան խոնավ և մութ նկուղում և այնտեղ առանց ջրի և հացի պահում է 10-12 ժամ: Ստուգումների ընթացքում բացահայտվել է նման 20 դեպք: Որակեք տնօրենի արարքը. • ազատությունից ապօրինի զրկելը, որը կատարվել է անչափահասի նկատմամբ • **երեխային դաստիարակելու պարտականությունը չկատարելը, որը զուգորդվել է անչափահասի նկատմամբ դաժան վերաբերմունքով** • երեխայի կյանքի անվտանգության ապահովման կամ առողջության պահպանման պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը • խնամակալի կամ հոգաբարձուի իրավունքները չարաշահելը
178	Հանցագործությունների ռեցիդիվ է համարվում. • դիտավորությամբ հանցանք կատարելն այն անձի կողմից, ով նախկինում կատարել է դիտավորյալ հանցանք • հանցանք կատարելն այն անձի կողմից, ով դատվածություն ունի նախկինում կատարված հանցանքի համար • դիտավորությամբ հանցանք կատարելն այն անձի կողմից, ով դատվածություն ունի նախկինում կատարված հանցանքի համար • **դիտավորությամբ հանցանք կատարելն այն անձի կողմից, ով դատվածություն ունի նախկինում դիտավորությամբ կատարված հանցանքի համար**
179	Քրեական պատասխանատվության ենթակա է միայն. • մեղսունակ ֆիզիկական անձը, ում տասնչորս տարին լրացել է նախքան հանցանք կատարելը • մեղսունակ ֆիզիկական անձը, ում տասնվեց տարին լրացել է նախքան հանցանք կատարելը • մեղսունակ ֆիզիկական անձը, ում տասնութ տարին լրացել է նախքան հանցանք կատարելը, իսկ որոշ հանցանքների կատարման դեպքում՝ նաև, եթե նախքան հանցանք կատարելը լրացել է նրա 16 տարին • **մեղսունակ ֆիզիկական անձը, ով հանցանք կատարելու պահին հասել է քրեական օրենսգրքով սահմանված տարիքի**

180	Անփութության կամային հատկանիշի բնութագիրն է. • անձը տվյալ իրադրությունում պարտավոր էր կամ կարող էր նախատեսել հանրորեն վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը • **անձը տվյալ իրադրությունում պարտավոր էր և կարող էր նախատեսել հանրորեն վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը** • անձը տվյալ իրադրությունում պարտավոր չէր և չէր կարող նախատեսել հանրորեն վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը • անձը տվյալ իրադրությունում կարող էր նախատեսել հանրորեն վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը
181	Քրեորեն պատժելի է. • միայն ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության փորձը • միայն ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության փորձը • **ցանկացած տեսակի հանցագործության փորձը** • միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության փորձը
182	Հանցափորձ է համարվում. • ուղղակի դիտավորությամբ կատարված այն գործողությունը, որն անմիջականորեն ուղղված է հանցանք կատարելուն, եթե հանցանքն ավարտին չի հասցվել անձի կամքից անկախ հանգամանքներով • **ուղղակի դիտավորությամբ կատարված այն գործողությունը (անգործությունը), որն անմիջականորեն ուղղված է հանցանք կատարելուն, եթե հանցանքն ավարտին չի հասցվել անձի կամքից անկախ հանգամանքներով** • այն գործողությունը (անգործությունը), որն ուղղված է հանցանք կատարելուն, եթե հանցանքն ավարտին չի հասցվել անձի կամքից անկախ հանգամանքներով • հանցագործության օբյեկտիվ կողմի թեկուզ մի մասի կատարումը
183	Հանցագործության նախապատրաստություն է համարվում. • անուղղակի դիտավորությամբ կատարված այն գործողությունը, որն անմիջականորեն ուղղված է հանցանք կատարելուն • ուղղակի դիտավորությամբ հանցանք կատարելու համար միջոցներ կամ գործիքներ ձեռք բերելը կամ հարմարեցնելը • ուղղակի դիտավորությամբ հանցանք կատարելու համար միջոցներ կամ գործիքներ ձեռք բերելը կամ հարմարեցնելը, ինչպես նաև դիտավորությամբ այլ պայմաններ ստեղծելը, եթե անձը կամովին հրաժարվել է հանցագործությունն ավարտին հասցնելուց • **ուղղակի դիտավորությամբ հանցանք կատարելու համար միջոցներ կամ գործիքներ ձեռք բերելը կամ հարմարեցնելը, ինչպես նաև դիտավորությամբ այլ պայմաններ ստեղծելը, եթե հանցագործությունն ավարտին չի հասցվել այդ անձի կամքից անկախ հանգամանքներով**

184	Հանցագործության նախապատրաստությունը հնարավոր է. • **գործողությամբ և անգործությամբ** • միայն գործողությամբ • միայն անգործությամբ • գործողությամբ, իսկ ձևական հանցակազմերով հանցանքների դեպքում՝ նաև անգործությամբ
185	Հանցակցություն է համարվում. • հանցանքի կատարումը մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ • այնպիսի անձանց կայուն խումբը, ովքեր նախապես միավորվել են մեկ կամ մի քանի հանցանքներ կատարելու համար • երկու կամ ավելի անձանց դիտավորյալ համատեղ մասնակցությունը հանցագործությանը • **երկու կամ ավելի անձանց դիտավորյալ համատեղ մասնակցությունը դիտավորյալ հանցագործությանը**
186	Կատարող չի համարվի այն անձը, ով. • հանցանքը կատարել է այլ անձանց (համակատարողների) հետ համատեղ • անձամբ չի կատարել հանցանքը, սակայն հանցանքի օբյեկտիվ կողմի իրականացմանը ներգրավել է տվյալ հանցագործության համար քրեական պատասխանատվության տարիքի չհասած անձին • **չի հասել տվյալ հանցագործության համար քրեական պատասխանատվության տարիքի, սակայն մեկ ուրիշ անձի կողմից ներգրավվելով՝ իրականացրել է տվյալ հանցագործության օբյեկտիվ կողմը** • օգտագործել է այնպիսի անձանց, ովքեր հանցանքը կատարել են անզգուշությամբ
187	Կազմակերպիչ է համարվում այն անձը, ով. • կազմակերպել կամ ղեկավարել է հանցանքի կատարումը • կազմակերպել կամ ղեկավարել է հանցանքի կատարումը, ինչպես նաև ստեղծել է կազմակերպված խումբ կամ հանցավոր համագործակցություն • **կազմակերպել կամ ղեկավարել է հանցանքի կատարումը, ինչպես նաև ստեղծել է կազմակերպված խումբ կամ հանցավոր համագործակցություն կամ ղեկավարել է դրանք** • կազմակերպել կամ ղեկավարել է հանցանքի կատարումը, ինչպես նաև դրդել կամ օժանդակել է հանցանքի կատարմանը, ստեղծել է կազմակերպված խումբ կամ հանցավոր համագործակցություն կամ ղեկավարել է դրանք
188	Նշվածներից ո՞րը դրդչության եղանակ չէ. • համոզելը • նյութապես շահագրգռելը • հաղթահարելի հոգեկան հարկադրանքի ձևով սպառնալիք տալը • **անհաղթահարելի հոգեկան հարկադրանքի ձևով սպառնալիք տալը**

189	Օժանդակող կհամարվի այն անձը, որը. • պարտակել է հանցագործին՝ առանց դա նախապես խոստանալու • **նախապես խոստացել է պարտակել հանցագործին** • պարտակել է ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կատարած անձին՝ առանց դա նախապես խոստանալու • չի հայտնել հաստատապես հայտնի նախապատրաստվող ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության մասին
190	Հանցագործություն չի համարվում այն գործողությունը, որը կատարվել է անհրաժեշտ պաշտպանության վիճակում, այսինքն. • մի այնպիսի վտանգ վերացնելու համար, որը սպառնալիս է եղել ՀՀ շահերին և հանրային շահերին, եթե թույլ չի տրվել անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում • մի այնպիսի վտանգ վերացնելու համար, որը սպառնալիս է եղել տվյալ անձի կամ այլ քաղաքացիների իրավունքներին, եթե թույլ չի տրվել անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում • պաշտպանվողի կամ մեկ այլ անձի կյանքը հանրության համար վտանգավոր ոտնձգությունից կամ դրա իրական սպառնալիքից ոտնձգություն կատարողին վնաս պատճառելու միջոցով պաշտպանելիս • **պաշտպանվողի կամ մեկ այլ անձի կյանքը, առողջությունը և իրավունքները, հասարակության կամ պետության շահերը հանրության համար վտանգավոր ոտնձգությունից կամ դրա իրական սպառնալիքից՝ ոտնձգություն կատարողին վնաս պատճառելու միջոցով պաշտպանելիս, եթե թույլ չի տրվել անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում**
191	Հանցագործություն չի համարվում քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելը ծայրահեղ անհրաժեշտության վիճակում, այսինքն. • պաշտպանվողի կամ մեկ այլ անձի կյանքը, առողջությունը և իրավունքները, հասարակության կամ պետության շահերը հանրության համար վտանգավոր ոտնձգությունից կամ դրա իրական սպառնալիքից ոտնձգություն կատարողին վնաս պատճառելու միջոցով պաշտպանելիս • տվյալ անձի կամ այլ անձանց կյանքին, առողջությանը, իրավունքներին և օրինական շահերին, հասարակության կամ պետության շահերին սպառնացող վտանգը վերացնելու համար, եթե թույլ չի տրվել ծայրահեղ անհրաժեշտության սահմանների անցում • տվյալ անձի կամ այլ անձանց կյանքին, առողջությանը, իրավունքներին և օրինական շահերին, հասարակության կամ պետության շահերին սպառնացող վտանգը վերացնելու համար, եթե այդ վտանգը չէր կարելի վերացնել այլ միջոցներով • **տվյալ անձի կամ այլ անձանց կյանքին, առողջությանը, իրավունքներին և օրինական շահերին, հասարակության կամ պետության շահերին անմիջականորեն սպառնացող վտանգը վերացնելու համար, եթե այդ վտանգը չէր**

	կարելի վերացնել այլ միջոցներով, և թույլ չի տրվել ծայրահեղ անհրաժեշտության սահմանների անցում
192	Ծայրահեղ անհրաժեշտության սահմանազանցումն առկա կլինի. • միայն այն դեպքում, եթե օրենքով պաշտպանվող շահերին պատճառվի կանխված վնասի համեմատությամբ ավելի մեծ վնաս • **եթե օրենքով պաշտպանվող շահերին պատճառվի կանխված վնասի համեմատությամբ հավասար կամ ավելի մեծ վնաս** • միայն այն դեպքում, եթե անձին պատճառվի մահ • եթե վնասը պատճառվի երրորդ անձին, ով մեղք չուներ ստեղծված իրադրության մեջ
193	Պատիժը համաձայն քրեական օրենսգրքի. • պետական հարկադրանքի միջոց է, որը հատուցումն է կատարված հանցագործության համար • պետական հարկադրանքի միջոց է, որը դատարանի դատավճռով պետության անունից նշանակվում է հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ • հատուցումն է կատարած հանցագործության համար • **պետական հարկադրանքի միջոց է, որը դատարանի դատավճռով պետության անունից նշանակվում է հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ և արտահայտվում է այդ անձին իրավունքներից ու ազատություններից օրենքով նախատեսված զրկմամբ կամ դրանց սահմանափակմամբ**
194	Տուգանքը դրամական տուժանք է, որը սահմանվում է պատիժ նշանակելու պահին Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի. • **երեսնապատիկից երեքհազարապատիկի չափով** • հիսունապատիկից հինգհարյուրապատիկի չափով • երեսնապատիկից հինգհարյուրապատիկի չափով • հիսնապատիկից հազարապատիկի չափով

195	Անձը խուլիգանության համար ենթակա է քրեական պատասխանատվության. • միայն, եթե մինչև հանցանքը կատարելը լրացել է նրա 12 տարին • **միայն, եթե մինչև հանցանքը կատարելը լրացել է նրա 14 տարին** • միայն, եթե մինչև հանցանքը կատարելը լրացել է նրա 16 տարին • միայն, եթե մինչև հանցանքը կատարելը լրացել է նրա 18 տարին
196	Երբ խուլիգանության ընթացքում տուժողին պատճառվում է առողջության միջին ծանրության վնաս, ապա հանցավորի արարքը որակվում է. • որպես խուլիգանություն և դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառել • որպես խուլիգանություն և անզգուշությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառել • **որպես ծանրացուցիչ հանգամանքներում կատարված խուլիգանություն** • որպես ծանրացուցիչ հանգամանքներում կատարված խուլիգանություն և դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառել
197	Վանդալիզմը, դա. • հասարակական տրանսպորտում անպարկեշտ հայտարարություններ փակցնելն է • **շենքերը կամ այլ կառույցներն անպարկեշտ գրագրություններով կամ պատկերներով պղծելն է, հասարակական տրանսպորտում կամ այլ հասարակական վայրերում գույքը վնասելը, եթե բացակայում են առավել ծանր հանցագործության հատկանիշները** • հասարակական վայրերում գտնվող գույքը ոչնչացնելը • պետության կողմից պահպանվող օբյեկտներում գտնվող գույքը վնասելն է
198	Ազատությունից ապօրինի զրկելու համար անձը ենթակա է քրեական պատասխանատվության. • միայն, եթե մինչև հանցանքը կատարելը լրացել է նրա 12 տարին • միայն, եթե մինչև հանցանքը կատարելը լրացել է նրա 14 տարին • **միայն, եթե մինչև հանցանքը կատարելը լրացել է նրա 16 տարին** • միայն, եթե մինչև հանցանքը կատարելը լրացել է նրա 18 տարին
199	Բանդիտիզմը. • կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործություն է • սեփականության դեմ ուղղված հանցագործություն է • տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություն է • **հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործություն է**

200	Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը կարող է նշանակվել այն դեպքում, երբ. • անձը կատարել է ծանր հանցագործություն • անձը կատարել է առանձնապես ծանր հանցագործություն • **դատարանը, ելնելով հանցավորի պաշտոնավարության կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու ժամանակ նրա կատարած հանցագործության բնույթից, հնարավոր չի գտնում պահպանել որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու նրա իրավունքը** • դատարանը, ելնելով հանցավորի պաշտոնավարության ժամանակ նրա կատարած հանցագործության բնույթից, հնարավոր չի գտնում պահպանել որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու նրա իրավունքը
201	Ցմահ ազատազրկման կարող են դատապարտվել. • հանցանք կատարելիս տասնութ տարին չլրացած անձինք • դատավճիռ կայացնելու պահին հղի վիճակում գտնվող կանայք • հանցանք կատարելու պահին հղի վիճակում գտնվող կանայք • **դատավճիռ կայացնելու պահին խնամքին մինչև ութ տարեկան երեխա ունեցող կանայք**
202	Դատարանը չավարտված հանցագործության համար պատիժ նշանակելիս հաշվի չի առնում. • հանցավորի կատարած գործողությունների բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը • հանցավոր մտադրության իրականացման աստիճանը • այն հանգամանքները, որոնց հետևանքով հանցագործությունն ավարտին չի հասցվել • **պատճառված վնասը կամովին վերականգնելը**
203	Հանցագործության նախապատրաստության համար (բացառությամբ հանցագործությունների ռեցիդիվի, վտանգավոր և առանձնապես վտանգավոր ռեցիդիվի դեպքերի) նշանակված ազատազրկման ձևով պատժի ժամկետը չի կարող գերազանցել. • քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով կամ հոդվածի մասով որոշակի ժամկետով ազատազրկման ձևով նախատեսված պատժի նվազագույն ժամկետը • **քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով կամ հոդվածի մասով որոշակի ժամկետով ազատազրկման ձևով նախատեսված պատժի առավելագույն ժամկետի կեսը** • քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով կամ հոդվածի մասով որոշակի ժամկետով ազատազրկման ձևով նախատեսված պատժի առավելագույն ժամկետի մեկ երրորդը • քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով կամ

	հոդվածի մասով որոշակի ժամկետով ազատազրկման ձևով նախատեսված պատժի առավելագույն ժամկետի երկու երրորդը
204	ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի իմաստով նույն հանցագործության համար անձին երկրորդ անգամ դատապարտել. • արգելվում է, բացառությամբ միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերի • **արգելվում է** • թույլատրվում է, եթե նա նախկինում դատապարտվել է այլ պետության կողմից • թույլատրվում է, բացառությամբ միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերի
205	Հանցագործության նախապատրաստության կամ հանցափորձի համար չի նշանակվում. • ցմահ ազատազրկում, բացառությամբ վտանգավոր և առանձնապես վտանգավոր ռեցիդիվի դեպքերի • հանրային աշխատանքներ • կալանք • **ցմահ ազատազրկում**
206	Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը սահմանում է փորձաշրջան. • մեկից երեք տարի ժամկետով • **մեկից հինգ տարի ժամկետով** • երկուսից հինգ տարի ժամկետով • երեքից հինգ տարի ժամկետով
207	Տուժողի հետ հաշտվելու դեպքում անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե նա. • **կատարել է ոչ մեծ ծանրության հանցանք, հատուցել կամ այլ կերպ հարթել է տուժողին պատճառած վնասը** • առաջին անգամ կատարել է ոչ մեծ ծանրության հանցանք, հատուցել կամ այլ կերպ հարթել է տուժողին պատճառած վնասը • առաջին անգամ կատարել է ոչ մեծ ծանրության կամ միջին ծանրության հանցանք, հատուցել կամ այլ կերպ հարթել է տուժողին պատճառած վնասը • կատարել է ոչ մեծ ծանրության կամ միջին ծանրության հանցանք, հատուցել

	կամ այլ կերպ հարթել է տուժողին պատճառած վնասը, ինչպես նաև անկեղծորեն զղջացել է կատարած արարքի համար
208	Քննությունից կամ դատից խուսափող անձը չի կարող քրեական պատասխանատվության ենթարկվել, եթե. • **ոչ մեծ ծանրության կամ միջին ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից անցել է տասը տարի, իսկ ծանր կամ առանձնապես ծանր հանցանքն ավարտված համարելու օրվանից՝ քսան տարի և վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատված չի եղել նոր հանցագործությամբ** • ոչ մեծ ծանրության կամ միջին ծանրության հանցանք կատարելու օրվանից անցել է տասը տարի, իսկ ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կատարելու օրվանից՝ տասնհինգ տարի և վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատված չի եղել դիտավորյալ նոր հանցագործությամբ • ոչ մեծ ծանրության կամ միջին ծանրության հանցանք կատարելու օրվանից՝ անցել է տասնհինգ տարի, իսկ ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կատարելու օրվանից՝ քսան տարի և վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատված չի եղել նոր առանձնապես ծանր հանցագործությամբ • ոչ մեծ ծանրության կամ միջին ծանրության հանցանք կատարելու օրվանից անցել է տասնհինգ տարի, իսկ ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կատարելու օրվանից՝ քսանհինգ տարի և վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատված չի եղել նոր ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությամբ
209	Քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետի ընթացքը կասեցվում է, եթե անձը. • **խուսափում է քննությունից կամ դատից** • գտնվում է անմեղսունակության վիճակում • գտնվում է հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարման մեջ • օգտվում է քրեական պատասխանատվության ենթարկվելու անձեռնմխելիությունից

210	Մինչև տասնվեց տարին լրանալը կատարած ծանր կամ առանձնապես ծանր հանցանքի համար անչափահասների նկատմամբ ազատազրկում նշանակվում է. • առավելագույնը հինգ տարի ժամկետով • **առավելագույնը յոթ տարի ժամկետով** • քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով կամ հոդվածի մասով որոշակի ժամկետով ազատազրկման ձևով նախատեսված պատժի առավելագույն ժամկետի կեսը • քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով կամ հոդվածի մասով որոշակի ժամկետով ազատազրկման ձևով նախատեսված պատժի առավելագույն ժամկետի մեկ երրորդը
211	Տասնվեցից մինչև տասնութ տարին լրանալը կատարած ծանր կամ առանձնապես ծանր հանցանքի համար անչափահասների նկատմամբ ազատազրկում նշանակվում է. • առավելագույնը յոթ տարի ժամկետով • **առավելագույնը տասը տարի ժամկետով** • քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով կամ հոդվածի մասով որոշակի ժամկետով ազատազրկման ձևով նախատեսված պատժի նվազագույն ժամկետը • քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով կամ հոդվածի մասով որոշակի ժամկետով ազատազրկման ձևով նախատեսված պատժի առավելագույն ժամկետի կեսը
212	Անչափահասի նկատմամբ պատիժ նշանակելիս հաշվի են առնվում. • **նրա կյանքի և դաստիարակության պայմանները, հոգեկանի զարգացման աստիճանը, առողջության վիճակը, անձի այլ առանձնահատկությունները, ինչպես նաև նրա վրա այլ անձանց ազդեցությունը** • նրա կյանքի և դաստիարակության պայմանները, հոգեկանի զարգացման աստիճանը, առողջության վիճակը, կրթությունը, սեռը, անձի այլ առանձնահատկությունները, ինչպես նաև նրա վրա այլ անձանց ազդեցությունը • նրա կյանքի և դաստիարակության պայմանները, առողջության վիճակը, կրթությունը, սեռը, անձի այլ առանձնահատկությունները, ինչպես նաև նրա վրա այլ անձանց ազդեցությունը • նրա կյանքի և դաստիարակության պայմանները, առողջության վիճակը, կրթությունը, սեռը, անձի այլ առանձնահատկությունները, ինչպես նաև նրա վրա այլ անձանց ազդեցությունը, ինչպես նաև հանցագործությամբ պատճառված վնասը նրանց օրինական ներկայացուցիչների կողմից վերականգնելը

213	Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ դատարանը կարող է նշանակել. • միայն քրեական օրենսգրքի Հատուկ մասում նախատեսված արարքը անմեղսունակության վիճակում կատարած անձի նկատմամբ • միայն քրեական օրենսգրքի Հատուկ մասում նախատեսված արարքը անմեղսունակության վիճակում կատարած անձի նկատմամբ, ինչպես նաև հանցանք կատարած այն անձանց նկատմամբ, ովքեր ճանաչվել են ալկոհոլամոլությունից կամ թմրամոլությունից բուժման կարիք ունեցող • միայն քրեական օրենսգրքի Հատուկ մասում նախատեսված արարքը անմեղսունակության կամ սահմանափակ մեղսունակության վիճակում կատարած անձանց նկատմամբ • **քրեական օրենսգրքի Հատուկ մասում նախատեսված արարքը անմեղսունակության կամ սահմանափակ մեղսունակության վիճակում կատարած անձանց նկատմամբ, կամ այն անձանց նկատմամբ, ում մոտ հանցանքը կատարելուց հետո առաջացել է պատժի նշանակումը, կամ կատարումն անհնար դարձնող հոգեկան խանգարում, կամ հանցանք կատարած այն անձանց նկատմամբ, ովքեր ճանաչվել են ալկոհոլամոլությունից կամ թմրամոլությունից բուժման կարիք ունեցող**
214	Հանդիպակաց մեքենայի կուրացնող լույսերի ազդեցությունից ձին խրտնել է, որի հետևանքով սայլը շրջվել է և ուղևորը մահացել: Որակեք սայլվորի արարքը. • սպանություն • անզգուշությամբ մահ պատճառել • **արարքում հանցակազմ չկա** • ճանապարհային երթևեկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որն առաջացրել է մարդու մահ
215	Ա-ն վեճի ժամանակ հարվածել է Բ-ի քթին /դասվել է թեթև վնասվածքների շարքը/, որի հետևանքով երկարատև արյունահոսության պատճառով Բ-ն մահացել է: Պարզվել է, որ Բ-ն ունեցել է արյան ծանր հիվանդություն /հեմոֆիլիա/, մահվան պատճառն էլ դարձել է հենց այդ հիվանդությունը: Որակեք Ա-ի արարքը. • սպանություն • անզգուշությամբ մահ պատճառել • արարքում հանցակազմ չկա • **առողջությանը ոչ մեծ ծանրության վնաս պատճառել**

216	Օտարերկրյա պետության դատարանի դատավճիռը. • **կարող է հաշվի առնվել, եթե Հայաստանի Հանրապետության քաղաքացին, օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը դատապարտվել է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կատարած հանցանքի համար և կրկին հանցանք է կատարել Հայաստանի Հանրապետության տարածքում** • չի կարող հաշվի առնվել • կարող է հաշվի առնվել միայն, եթե Հայաստանի Հանրապետության քաղաքացին դատապարտվել է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կատարած հանցանքի համար և կրկին հանցանք է կատարել Հայաստանի Հանրապետության տարածքում • կարող է հաշվի առնվել միայն, եթե օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը դատապարտվել է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կատարած հանցանքի համար և կրկին հանցանք է կատարել Հայաստանի Հանրապետության տարածքում
217	Սահմանափակ մեղսունակության դեպքում քրեական պատասխանատվության հարցը լուծվում է հետևյալ կերպ. • մեղսունակ անձը, ով հանցանքը կատարելիս հոգեկան խանգարման հետևանքով չէր կարող ամբողջությամբ գիտակցել իր գործողության (անգործության) փաստացի բնույթն ու հասարակական վտանգավորությունը կամ ղեկավարել դա, ենթակա չէ քրեական պատասխանատվության • մեղսունակ անձը, ով հանցանքը կատարելիս հոգեկան խանգարման հետևանքով չէր կարող ամբողջությամբ գիտակցել իր գործողության (անգործության) փաստացի բնույթն ու հասարակական վտանգավորությունը կամ ղեկավարել դա, ենթակա է քրեական պատասխանատվության միայն հարկադիր բուժում ստանալուց հետո • **մեղսունակ անձը, ով հանցանքը կատարելիս հոգեկան խանգարման հետևանքով չէր կարող ամբողջությամբ գիտակցել իր գործողության (անգործության) փաստացի բնույթն ու հասարակական վտանգավորությունը կամ ղեկավարել դա, ենթակա է քրեական պատասխանատվության** • մեղսունակ անձը, ով հանցանքը կատարելիս հոգեկան խանգարման հետևանքով չէր կարող ամբողջությամբ գիտակցել իր գործողության (անգործության) փաստացի բնույթն ու հասարակական վտանգավորությունը կամ ղեկավարել դա, ենթակա է քրեական պատասխանատվության՝ միայն բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ նշանակելուց հետո

218	Սահմանափակ մեղսունակությունը. • **որպես մեղմացնող հանգամանք, հաշվի է առնվում պատիժ նշանակելիս և կարող է հիմք դառնալ պատժի հետ միաժամանակ բժշկական բնույթի հարկադրանքի միջոց նշանակելու համար** • պատիժ նշանակելիս չի դիտվում որպես մեղմացնող հանգամանք • որպես ծանրացնող հանգամանք, հաշվի է առնվում պատիժ նշանակելիս և կարող է հիմք դառնալ պատժի հետ միաժամանակ բժշկական բնույթի հարկադրանքի միջոց նշանակելու համար • պատիժ նշանակելիս չի դիտվում որպես մեղմացնող կամ ծանրացնող հանգամանք, սակայն կարող է հիմք դառնալ պատժի հետ միաժամանակ բժշկական բնույթի հարկադրանքի միջոց նշանակելու համար
219	Ալկոհոլի, թմրամիջոցների կամ թմրեցնող այլ նյութերի օգտագործման հետևանքով հարբած վիճակում հանցանք կատարած անձանց քրեական պատասխանատվության հարցը լուծվում է հետևյալ կերպ. • ազատվում են քրեական պատասխանատվությունից • **ենթարկվում են քրեական պատասխանատվության և դատարանը պատժի հետ միաժամանակ կարող է նշանակել բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ, եթե այդ հակման պատճառով առկա է նրա կողմից նոր հանցագործություն կատարելու վտանգը** • ենթարկվում են քրեական պատասխանատվության և դատարանը պատժի հետ միաժամանակ պարտադիր նշանակում է բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ • ենթարկվում են քրեական պատասխանատվության, սակայն դատարանը պատիժ նշանակելիս դա հաշվի է առնում որպես պատասխանատվությունը մեղմացնող
220	Հանցակցի սահմանազանցում է համարվում. • **անձի կողմից այնպիսի հանցանք կատարելը, որը չի ընդգրկվում մյուս հանցակիցների դիտավորությամբ** • անձի կողմից այնպիսի հանցանք կատարելը, որը ընդգրկվում է մյուս հանցակիցների դիտավորությամբ • անձի կողմից այնպիսի հանցանք կատարելը, որը չի ընդգրկվում հանցակիցներից՝ միայն կատարողի դիտավորությամբ • անձի կողմից այնպիսի հանցանք կատարելը, որը չի ընդգրկվում հանցակիցներից՝ միայն կազմակերպչի դիտավորությամբ

221	Բժիշկ Ա-ն կյանքից զրկում է անհուսալի հիվանդ Բ-ին, այդ թվում վերջինիս ցանկությամբ և համաձայնությամբ՝ նրա մարմնի առողջ մասերը կամ հյուսվածքները օգտագործելու նպատակով: Որակեք Ա-ի արարքը. • սպանություն, որը կատարվել է կարեկցանքի շարժառիթով • էվթանազիա • **տուժողի մարմնի մասերի կամ հյուսվածքների օգտագործման նպատակով սպանություն** • շահադիտական դրդումներով սպանություն
222	Հանցանքը համարվում է մի խումբ անձանց կողմից առանց նախնական համաձայնության կատարված, եթե. • **դրան մասնակցել են այնպիսի համակատարողներ, ովքեր նախապես չեն պայմանավորվել հանցանքը համատեղ կատարելու մասին** • դրան մասնակցել են այնպիսի համակատարողներ, ովքեր չնայած նախապես պայմանավորվել են հանցանքը համատեղ կատարելու մասին,սակայն նրանցից մեկը թույլ է տվել հանցակցի սահմանազանցում • դրան մասնակցել են այնպիսի համակատարողներ, ովքեր նախապես պայմանավորվել են հանցանքը համատեղ կատարելու մասին • դրան մասնակցել են այնպիսի համակատարողներ և օժանդակողներ ովքեր նախապես պայմանավորվել են հանցանքը համատեղ կատարելու մասին
223	Հանցանքը համարվում է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կատարված, եթե դրան մասնակցել են այնպիսի համակատարողներ, ովքեր. • մինչև հանցագործությունը ավարտին հասցնելը պայմանավորվել են հանցանքը համատեղ կատարելու մասին • **նախապես, մինչև հանցագործությունը սկսելը, պայմանավորվել են հանցանքը համատեղ կատարելու մասին** • օժտված են հանցագործության սուբյեկտի հատկանիշներով • միավորվել են ծանր կամ առանձնապես ծանր հանցանքներ կատարելու համար
224	Մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը օբյեկտիվ կողմից դրսևորվում է. • **պաշտոնատար անձի կողմից մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու նպատակով նրա գործունեությանը ցանկացած ձևով միջամտելու ձևով** • անձի կողմից մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու նպատակով նրա գործունեությանը ցանկացած ձևով միջամտելու ձևով • մարդու իրավունքների պաշտպանին, կապված նրա լիազորությունների իրականացման հետ, սպառնալու կամ նրան վիրավորանք հասցնելու կամ նրա նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելու ձևով • նման հանցակազմ գոյություն չունի

225	Հանրային աշխատանքները. • **նշանակվում են որպես հիմնական պատիժ** • նշանակվում են որպես օժանդակ պատիժ • նշանակվում են որպես լրացուցիչ պատիժ • նշանակվում են և որպես լրացուցիչ և որպես հիմնական պատիժ
226	Հանրային աշխատանքները կարող են նշանակվել. • **միայն ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործություններ կատարած, առավելագույնը երկու տարի ժամկետով ազատազրկման դատապարտված անձանց նկատմամբ** • միայն ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործություններ կատարած, առավելագույնը մեկ տարի ժամկետով ազատազրկման դատապարտված անձանց նկատմամբ • միայն ոչ մեծ ծանրության հանցագործություններ կատարած, առավելագույնը երկու տարի ժամկետով ազատազրկման դատապարտված անձանց նկատմամբ • միայն ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործություններ կատարած, ազատազրկման հետ չկապված պատժի դատապարտված անձանց նկատմամբ
227	18 տարին լրացած անձի նկատմամբ կալանքը դատարանը նշանակում է. • **տասնհինգ օրից մինչև երեք ամիս ժամկետով և միայն այն դեպքում, երբ կալանավորումը որպես խափանման միջոց չի կիրառվել** • մինչև վեց ամիս ժամկետով ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասում նախատեսված դեպքերում • երեք ամսից մինչև վեց ամիս ժամկետով և միայն այն դեպքում, երբ կալանավորումը որպես խափանման միջոց չի կիրառվել • երեք ամսից մինչև վեց ամիս ժամկետով՝հանրային աշխատանքների դատապարտված անձի կողմից պատիժը կրելուց չարամտորեն խուսափելու դեպքում
228	Հանցանք կատարելուց հետո հոգեկան խանգարմամբ հիվանդացած անձի բուժվելու դեպքում պատիժ նշանակելիս կամ պատիժը կրելը վերականգնելիս նրա նկատմամբ հոգեբուժական հիվանդանոցում հարկադիր բուժում կիրառելու ժամկետը. • չի հաշվակցվում • **հաշվակցվում է պատժի ժամկետին՝ հոգեբուժական կազմակերպությունում գտնվելու մեկ օրը հաշվելով ազատազրկման մեկ օրվա դիմաց** • հաշվակցվում է պատժի ժամկետին՝ հոգեբուժական կազմակերպությունում գտնվելու երկու օրը հաշվելով ազատազրկման մեկ օրվա դիմաց • հաշվակցվում է պատժի ժամկետին՝ հոգեբուժական կազմակերպությունում գտնվելու երեք օրը հաշվելով ազատազրկման մեկ օրվա դիմաց

229	Պատժի կատարման հետ միացված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի կիրառումը դադարեցնելն իրականացնում է. • **դատարանը՝ պատիժն ի կատար ածող մարմնի միջնորդությամբ՝ բժիշկ-հոգեբույժների հանձնաժողովի եզրակացության հիման վրա** • դատարանը՝ սեփական նախաձեռնությամբ կամ բժիշկ-հոգեբույժների հանձնաժողովի միջնորդության հիման վրա • բժիշկ-հոգեբույժների հանձնաժողովը՝ հարկադիր բուժում ստացող անձի միջնորդությամբ, եթե գտնում է, որ անձն այլևս հարկադիր բուժման կարիք չունի • բժիշկ-հոգեբույժների հանձնաժողովը, եթե գտնում է, որ անձն այլևս հարկադիր բուժման կարիք չունի
230	Հանցագործություն չի համարվում. • **քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելը ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքի ազդեցությամբ, եթե դրա հետևանքով անձը չէր կարող ղեկավարել իր գործողությունները (անգործությունը)** • քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելը հոգեկան հարկադրանքի ազդեցությամբ • քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելը ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքի ազդեցությամբ, որն անձին չի զրկում իր գործողությունները ղեկավարելու հնարավորությունից • դիտավորությամբ կամ անզգուշությամբ Քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելը ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքի ազդեցությամբ
231	Եթե քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս է պատճառվել այն անձի կողմից, ով գործել է ի կատարումն ակնհայտ անօրինական հրամանի կամ կարգադրության, ապա. • այդպիսի վնաս պատճառելու համար պատասխանատվություն է կրում միայն ակնհայտ անօրինական հրաման կամ կարգադրություն արձակած անձը • այդպիսի վնաս պատճառելու համար պատասխանատվություն է կրում միայն ակնհայտ անօրինական հրաման կամ կարգադրություն կատարած անձը • այդպիսի վնաս պատճառելու համար պատասխանատվություն է կրում, ինչպես ակնհայտ անօրինական հրաման կամ կարգադրություն արձակած անձը, այնպես էլ՝ այդ հրամանով կամ կարգադրությամբ միայն ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կատարած անձը • **այդպիսի վնաս պատճառելու համար պատասխանատվություն է կրում ինչպես ակնհայտ անօրինական հրաման կամ կարգադրություն արձակած անձը, այնպես էլ՝ այդ հրամանով կամ կարգադրությամբ դիտավորյալ հանցանք կատարած անձը**

232	Անձին դատապարտելիս դատարանը, հաշվի առնելով հանցավորի անձը բնութագրող տվյալները, նրան կարող է զրկել հատուկ կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից կամ որակավորման դասից. • եթե անձը կատարել է միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցանք • **եթե անձը կատարել է ծանր կամ առանձնապես ծանր հանցանք** • միայն առանձնապես ծանր հանցանք կատարելու դեպքում • միայն ծանր հանցանք կատարելու դեպքում
233	Հանրային աշխատանքներ կարող են նշանակվել. • կենսաթոշակային տարիք ունեցող անձանց նկատմամբ • հղի կանանց նկատմամբ • ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնվող զինծառայողների նկատմամբ • **խնամքին մինչև ութ տարեկան երեխա ունեցող անձանց նկատմամբ**
234	Հանրային աշխատանքները կատարելուց չարամտորեն խուսափելու դեպքում հանրային աշխատանքների չկրած մասը դատարանը փոխարինում է. • **կալանքով կամ որոշակի ժամկետով ազատազրկմամբ՝ կալանքի կամ որոշակի ժամկետով ազատազրկման մեկ օրը հաշվարկելով հանրային աշխատանքների երեք ժամվա դիմաց** • կալանքով կամ որոշակի ժամկետով ազատազրկմամբ՝ կալանքի կամ որոշակի ժամկետով ազատազրկման մեկ օրը հաշվարկելով հանրային աշխատանքների վեց ժամվա դիմաց • ուղղիչ աշխատանքներով կամ որոշակի ժամկետով ազատազրկմամբ՝ ուղղիչ աշխատանքների կամ ազատազրկման մեկ օրը հաշվարկելով հանրային աշխատանքների վեց ժամվա դիմաց • տուգանքով կամ կալանքով՝ կալանքի մեկ օրը հաշվարկելով հանրային աշխատանքների չորս ժամվա դիմաց, տուգանքը հաշվարկելով նվազագույն աշխատավարձի չափով՝ հանրային աշխատանքների չորս ժամվա դիմաց
235	Ազատազրկումը որոշակի ժամկետով, դա. • **դատապարտյալին ուղղիչ հիմնարկում անազատության մեջ պահելու ձևով հասարակությունից մեկուսացնելն է, որը սահմանվում է երեք ամսից քսան տարի ժամկետով** • ամբաստանյալին ուղղիչ հիմնարկում անազատության մեջ պահելու ձևով հասարակությունից մեկուսացնելն է, որը սահմանվում է երեք ամսից քսանհինգ տարի ժամկետով • հասարակությունից խիստ մեկուսացման պայմաններում դատապարտյալին պահելն է, որը սահմանվում է մինչև տասնհինգ տարի ժամկետով • հասարակությունից խիստ մեկուսացման պայմաններում դատապարտյալին պահելն է, որը սահմանվում է վեց ամսից մինչև տասնհինգ տարի ժամկետով

236	Անզգույշ հանցագործության համար ազատազրկումը. • **չի կարող գերազանցել տասը տարին** • չի կարող գերազանցել հինգ տարին • նշանակվում է երեքից մինչև հինգ տարի ժամկետով • նշանակվում է հինգից տասը տարի ժամկետով
237	Դատավճիռների համակցությամբ պատիժ նշանակելիս ազատազրկման ժամկետները լրիվ կամ մասնակիորեն գումարելու դեպքում առավելագույն ժամկետը չի կարող գերազանցել. • 10 տարին • **30 տարին** • 20 տարին • համակցությունը կազմող հանցագործություններից ամենածանրի համար նախատեսված պատժի առավելագույն չափը
238	Ցմահ ազատազրկումը. • **դատապարտյալին ուղղիչ հիմնարկում անազատության մեջ պահելու ձևով հասարակությունից անժամկետ մեկուսացնելն է, որը, քրեական օրենսգրքով նախատեսված դեպքերում, կարող է նշանակվել առանձնապես ծանր հանցագործությունների համար** • դատապարտյալին ուղղիչ հիմնարկում անազատության մեջ պահելու ձևով հասարակությունից անժամկետ մեկուսացնելն է, որը, քրեական օրենսգրքով նախատեսված դեպքերում, կարող է նշանակվել ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների համար • դատապարտյալին ուղղիչ հիմնարկում անազատության մեջ պահելու ձևով հասարակությունից անժամկետ մեկուսացնելն է, որը, քրեական օրենսգրքով և Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում, կարող է նշանակվել ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների համար • դատապարտյալին ուղղիչ հիմնարկում անազատության մեջ պահելու ձևով հասարակությունից մեկուսացնելն է, որը, քրեական օրենսգրքով և Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում, կարող է նշանակվել ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների համար
239	Պատիժ նշանակելիս պատժի տեսակը և չափը որոշվում են. • **հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով** • միայն հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանով և բնույթով • միայն պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող

	հանգամանքներով • միայն հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով
240	ՀՀ քրեական օրենսգրքի 63 հոդվածով նախատեսված՝ պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք չէ. • հանցանքը ալկոհոլի ազդեցության տակ կատարելը • **հանցանքը արյան վրեժի շարժառիթով կատարելը** • հանցանքը առանձին դաժանությամբ կատարելը • հանցանքը տարերային աղետի պայմաններում կատարելը
241	Ո՞վ է կարող ազատվել քրեական պատասխանատվությունից գործուն զղջալու դեպքում համաձայն քրեական օրենսգրքի 72 հոդվածի 1-ին մասի. • **առաջին անգամ ոչ մեծ ծանրության կամ միջին ծանրության հանցանք կատարած անձը, եթե նա հանցանք կատարելուց հետո կամովին ներկայացել է մեղայականով, աջակցել է հանցագործությունը բացահայտելուն, հատուցել կամ այլ կերպ հարթել է հանցագործությամբ պատճառված վնասը** • միայն ոչ մեծ ծանրության հանցանք կատարած անձը, եթե նա հանցանք կատարելուց հետո կամովին ներկայացել է մեղայականով, աջակցել է հանցագործությունը բացահայտելուն, հատուցել կամ այլ կերպ հարթել է հանցագործությամբ պատճառված վնասը • առաջին անգամ ոչ մեծ ծանրության, միջին ծանրության կամ ծանր հանցանք կատարած անձը, եթե նա հանցանք կատարելուց հետո կամովին ներկայացել է մեղայականով, աջակցել է հանցագործությունը բացահայտելուն, հատուցել կամ այլ կերպ հարթել է հանցագործությամբ պատճառված վնասը • միայն ոչ մեծ ծանրության, միջին ծանրության կամ ծանր հանցանք կատարած անձը, եթե նա հանցանք կատարելուց հետո աջակցել է հանցագործությունը բացահայտելուն, հատուցել կամ այլ կերպ հարթել է հանցագործությամբ պատճառված վնասը
242	Հանցանքների համակցությամբ և դատավճիռների համակցությամբ պատիժները լրիվ կամ մասնակիորեն գումարելիս ազատազրկման մեկ օրվան համապատասխանում է. • կալանքի կամ կարգապահական գումարտակում պահելու մեկ օրը, հանրային աշխատանքների երեք օրը • կալանքի կամ կարգապահական գումարտակում պահելու մեկ օրը, հանրային աշխատանքների չորս ժամը, տուգանքը նվազագույն աշխատավարձի կրկնապատիկի չափով • **կալանքի կամ կարգապահական գումարտակում պահելու մեկ օրը, հանրային**

	աշխատանքների երեք ժամը • կալանքի կամ կարգապահական գումարտակում պահելու մեկ օրը, հանրային աշխատանքների վեց ժամը
243	Կ-ին դանակահարելու, առողջությանը ծանր վնաս պատճառելու համար պատիժը կրելուց և կալանավայրից վերադառնալուց հետո Լ-ն նրանից պահանջել է դրամական փոխհատուցում կալանավայրում կրած զրկանքների դիմաց: Կ-ն հրաժարվել է և Լ-ի հերթական պահանջից հետո պայմանավորվել մեկնել Սյունիքի մարզի Շղարշիկ գյուղ Բանավան՝ իբր տնից փող վերցնելու և նրան տալու համար: Հասնելով տան մոտ՝ Կ-ն իջել է մեքենայից, մտել տուն, վերցրել որսորդական հրացանը, դուրս եկել, մոտեցել Լ-ին և մոտ տարածությունից կրակել նրա վրա և տեղում կյանքից զրկել է նրան: Որակել Կ-ի արարքը. • **սպանություն առանց ծանրացնող կամ մեղմացնող հանգամանքի** • շահադիտական դրդումներով սպանություն • հոգեկան խիստ հուզմունքի վիճակում կատարված սպանություն • անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ սպանություն
244	Եթե դատարանը հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին հետևյալ դեպքերում. • **եթե դատապարտյալի նկատմամբ նշանակվել է պատիժ կալանքի, ազատազրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով** • եթե դատապարտյալի նկատմամբ նշանակվել է պատիժ հանրային աշխատանքների, կալանքի, ազատազրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով • եթե դատապարտյալի նկատմամբ նշանակվել է պատիժ հանրային աշխատանքների, ուղղիչ աշխատանքների, կալանքի, տուգանքի ձևով • եթե դատապարտյալի նկատմամբ նշանակվել է պատիժ հանրային աշխատանքների, կալանքի, տուգանքի, ազատազրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով
245	Ավարտված հանցագործություն է համարվում. • **այն արարքը, որը պարունակում է քրեական օրենսգրքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները** • այն արարքը, որը պարունակում է քրեական օրենսգրքով նախատեսված հանցակազմի օբյեկտիվ կողմի հատկանիշները • հանրորեն վտանգավոր արարքը • այն արարքը, որն առաջացրել է հետևանք

246	Հանցափորձը կատարվում է. • **ուղղակի դիտավորությամբ** • դիտավորությամբ • անուղղակի դիտավորությամբ • անզգուշությամբ
247	Ա-ն կենցաղային հողի վրա հաճախակի վիճաբանել է կնոջ, նրա ծնողների և եղբայրների հետ, որոնցից մեկի ժամանակ կնոջ եղբոր՝ Բ-ի կողմից իրեն ապտակելու համար վիրավորված որոշել է վրեժխնդիր լինել և սպանել նրան: Այդ նպատակով ձեռք բերելով ատրճանակ Ա-ն գնացել է Բ-ի տան մոտ, շուրջ երկու ժամ դարանակալել, սակայն վերջինիս՝ տանից դուրս չգալու պատճառով չի կարողացել մինչև վերջ հասցնել իր հանցավոր մտադրությունը: Որակել Ա-ի արարքը. • **սպանության նախապատրաստություն և ապօրինի զենք ձեռք բերել, պահել, կրել** • սպանության փորձ և ապօրինի զենք ձեռք բերել, պահել, կրել • հանցակազմ չկա • ապօրինի զենք ձեռք բերել, պահել, կրել
248	Առանձնապես ծանր հանցագործություններ են համարվում. • դիտավորությամբ կատարված այն արարքները, որոնց համար քրեական օրենսգրքով նախատեսված է առավելագույն պատիժ՝ ազատազրկում տասներկու տարի ժամկետով կամ ցմահ ազատազրկում • դիտավորությամբ կատարված այն արարքները, որոնց համար քրեական օրենսգրքով նախատեսված է առավելագույն պատիժ՝ ազատազրկում տասնհինգ տարի ժամկետով կամ ցմահ ազատազրկում • դիտավորությամբ կատարված այն արարքները, որոնց համար քրեական օրենսգրքով նախատեսված է առավելագույն պատիժ քսան տարի ժամկետով կամ ցմահ ազատազրկում • **դիտավորությամբ կատարված այն արարքները, որոնց համար քրեական օրենսգրքով նախատեսված է առավելագույն պատիժ՝ ազատազրկում տասը տարուց ավելի ժամկետով կամ ցմահ ազատազրկում**
249	Արձակուրդ չտրամադրելու պատճառով տնօրենից նեղացած Ա-ն աշխատողների շրջանում տեղեկություն է տարածում այն մասին, իբր տնօրենը տառապում է վարակիչ հիվանդությամբ: Արդյունքում շատ աշխատակիցներ վախենալով վարակվելուց դիմում են գրում և հեռանում աշխատանքից: Որակեք Ա-ի արարքը՝ • **հանցակազմ չկա** • զրպարտություն • անձնական կամ ընտանեկան կյանքի մասին տեղեկություններ ապօրինի հավաքելը, պահելը, օգտագործելը կամ տարածելը • բժշկական գաղտնիք հրապարակելը

250	Ա-ն ու Բ-ն Դ-ի տանը օդի օգտագործելուց լինելով առաջարկում են վերջինիս նույնպես միանալ իրենց, սակայն ստանալով մերժում նրանք Դ-ին փակում են սառը սենյակում ասելով. եթե փոշմանես ձայն տուր: Շարունակելով հարբեցողությամբ զբաղվելը նրանք մոռանում են Դ-ի մասին: Առավոտյան արթնանալուց Դ-ին հայտնաբերում են մահացած մրսածությունից: Որակեք Ա-ի ու Բ-ի արարքը. • հանցակազմ չկա • անզգուշությամբ մահ պատճառել և ազատ տեղաշարժվելու իրավունքը խախտել • **ապօրինի ազատությունից զրկել, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ** • նախնական համաձայնությամբ խմբի կողմից ապօրինի ազատությունից զրկել և անզգուշությամբ մահ պատճառել
251	Ա-ն զրկված լինելով ծնողական իրավունքներից խաբեությամբ դպրոցից տանում է իր աղջկան այդ մասին տեղյակ չպահելով ոչ մեկին: Որակեք Ա-ի արարքը՝ • **առևանգում** • հանցակազմ չկա • ծնողներից երեխային ապօրինի բաժանելը կամ երեխային փոխելը • առևանգում և ծնողներից երեխային ապօրինի բաժանելը կամ երեխային փոխելը
252	Ա-ն, աշխատելով հոգեբուժական հիվանդանոցում, որպես բաժնի վարիչ, տեղեկանում է, որ իր կինը ինտիմ հարաբերությունների մեջ է իր ծանոթ Բ-ի հետ: Որոշելով նրանից վրեժ լուծել, նա Բ-ին հրավիրում է ռեստորան և նրա բաժակի մեջ լցնում խիստ ներգործող թմամիջոց: Երբ Բ-ն կորցնում է գիտակցությունը Ա-ն մատուցողին խնդրում է հրավիրել հոգեբուժական շտապ օգնություն ասելով, որ իր ընկերոջ մոտ հոգեկան հիվանդության նոպա է սկսվել և ինքը շտապում է հիվանդանոց: Հիվանդանոցում նա դիմավորելով բուժօգնության մեքենան, Բ-ին տեղավորում է իր բաժին ձևակերպելով համապասխան փաստաթղթեր՝ շիզոֆրենիա ախտորոշմամբ: Մեկ ամսվա ընթացքում Բ-ին Ա-ի նշանակմամբ ներարկում են թմրամիջոց, ինչի արդյունքում վերջինս մշտապես գտնվում էր թմամիջոցային հարբածության վիճակում և ի վերջո ձեռք է բերում կախվածություն թմարմիջոցից: Միայն հիվանդանոցի աշխատակիցներից մեկի զանգի հիման վրա, երբ դատախազությունը միջամտում է Բ-ի <<բուժումը>> ավարտվում է: Որակեք Ա-ի արարքը. • ապօրինի ազատությունից զրկել և թմրամիջոց իրացնել • հոգեբուժական հիվանդանոցում ապօրինի տեղավորելը կամ պահելը, որը կատարվել է պաշտոնեական դիրքի չարաշահմամբ և թմրամիջոց իրացնել • բժշկի կողմից պաշտոնեական դիրքի չարաշահում • **հոգեբուժական հիվանդանոցում ապօրինի տեղավորելը կամ պահելը, որը**

	կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով և անզգուշությամբ առաջացրել է տուժողի մոտ այլ ծանր հետևանքներ
253	Ա-ն ծովափում տեղավորվելով մի խումբ 11-13 տարեկան աղջիկների կողքին, բացում է իր սեռական օրգանը, երբ մոտակայքում մեծեր չկան: Ծանոթանալով 12 տարեկան Բ-ի հետ նրան հակում է իր հետ սեռական հարաբերության մեջ մտնելու դրա դիմաց խոստանալով նրան նվիրել գեղեցիկ ներքնազգեստ: Պարզվում է, որ Բ-ն արդեն իսկ տիրապետում է սեռական հարաբերություններին բնորոշ որոշակի իմացությունների՝ տվյալ տարիքի երեխաներին ոչ բնորոշ: Որակեք Ա-ի արարքը. • հանցակազմ չկա • անառակաբարո գործողություններ • սեքսուալ բնույթի գործողություններ կատարելը տասնվեց տարին չլրացած անձի հետ • **անառակաբարո գործողություններ և սեքսուալ բնույթի գործողություններ կատարելը տասնվեց տարին չլրացած անձի հետ**
254	Ա-ն չնայած Բ-ի դիմադրությանը նրա հետ կատարում է սեռական ակտ: Դուրս պրծնելով Ա-ի ձեռքից Բ-ն իրեն զցում է բազմաբնակարան շենքի 9-րդ հարկից կյանքին վերջ տալով ինքնասպանությամբ: Որակեք Ա-ի արարքը. • ինքնասպանության հասցնելը • **բռնաբարություն** • երկուսի համակցություն • հանցակազմ չկա

255	Ս-ն 2008 թվականի հուլիսի 19-ին՝ ժամը 19.30-ի սահմաններում, օտնվելով թեթև աստիճանի ալկոհոլային հարբածության վիճակում, իր տան դիմաց վիճաբանության մեջ է մտել իր փեսա Մ-ի հետ, նախկինում իր ընտանիքի անդամների հասցեին արված հայհոյանքի դիմաց պարզաբանում ստանալու կապակցությամբ, որի ընթացքում իր մոտ եղած դանակով բազմաթիվ հարվածներ է հասցրել Մ-ի կենսականորեն կարևոր օրգանների շրջանին՝ կրծքավանդակին և որովայնին, ու կյանքից զրկել նրան: Որակել Ս-ի արարքը. • դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը, որն անզգուշությամբ առաջացրել է մահ • **հասարակ սպանություն** • խուլիգանական շարժառիթով սպանություն • հոգեկան խիստ հուզմունքի վիճակում կատարված սպանություն
256	Վ-ն 2008թ. հոկտեմբերի 6-ին՝ ժամը 23-ի սահմաններում, իր բնակարանում կենցաղային հարցի շուրջ վիճաբանել է վթարի ենթարկվելու կապակցությամբ իրեն տեսակցության եկած հարևան Հ-ի հետ և, վիրավորվելով վերջինիս կողմից շարունակաբար իրեն ուղղված վիրավորանքներից, ներկաների համար անսպասելի վերցրել է սեղանին դրված դանակը և նստած դիրքից հարվածել նրա որովայնին, պատճառելով առողջությանը ծանր վնաս, որից հետո դանակը գցել է սեղանին և կնոջ՝ Օ-ի հետ վերջինիս օգնություն ցույց տվել: Այնուհետև Օ-ն իրենց տուն է կանչել Հ-ի կնոջը, որն էլ ամուսնուն ուղեկցել է տուն: Գիշերվա ընթացքում Հ-ի վիճակը վատացել է, նրան տեղափոխել են հիվանդանոց և վիրահատել: Որակեք Վ-ի արարքը. • **դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառել** • անզգուշությամբ առողջությանը ծանր վնաս պատճառել • հոգեկան խիստ հուզմունքի վիճակում առողջությանը ծանր վնաս պատճառել • սպանության փորձ
257	Դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու ծանրացնող հանգամանք չի հանդիսանում. • շահադիտական դրդումներով կատարելը • երկու կամ ավելի անձանց նկատմամբ կատարելը • մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից կատարելը • **վրեժի շարժառիթով կատարելը**
258	Դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու ծանրացնող հանգամանք է հանդիսանում. • **առանձին դաժանությամբ կատարելը** • պաշտոնատար անձի կողմից կատարելը • անչափահասի նկատմամբ կատարելը • վրեժի շարժառիթով կատարելը

259	Դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու ծանրացնող հանգամանք է հանդիսանում. • **առանձին դաժանությամբ կատարելը** • պաշտոնատար անձի կողմից կատարելը • անչափահասի նկատմամբ կատարելը • վրեժի շարժառիթով կատարելը
260	Դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու ծանրացնող հանգամանք չի հանդիսանում. • առանձին դաժանությամբ կատարելը • երկու կամ ավելի անձանց նկատմամբ կատարելը • մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից կատարելը • **վրեժի շարժառիթով կատարելը**
261	Բռնաբարության ծանրացնող հանգամանք է հանդիսանում. • շահադիտական դրդումներով կատարելը • պաշտոնատար անձի կողմից կատարելը • **անչափահասի նկատմամբ կատարելը** • խաբեությամբ կատարելը
262	Բռնաբարության ծանրացնող հանգամանք չի հանդիսանում. • անչափահասի նկատմամբ կատարելը • **երկու կամ ավելի անձանց նկատմամբ կատարելը** • մի խումբ անձանց կողմից կատարելը • տուժողի կամ այլ անձի նկատմամբ առանձին դաժանությամբ կատարելը
263	Արարքի հանցավորությունը և պատժելիությունը որոշվում են. • **դա կատարելու ժամանակ գործող քրեական օրենքով** • գործով վերջնական որոշում կայացնելու ժամանակ գործող քրեական օրենքներով • գործի դատական քննության ժամանակ գործող քրեական օրենքով • գործի նախաքննության ժամանակ գործող քրեական օրենքով
264	Խնամքը ստանձնելու նպատակով երեխայի առքը հանցագործության որակյալ հատկանիշ չի համարվում. • **շահադիտական դրդումներով կատարելը** • պաշտոնական դիրքն օգտագործելով կատարելը • կեղծ որդեգրում կատարելու միջոցով կատարելը • երկու կամ ավելի երեխաների նկատմամբ կատարելը
265	Արարքի հանցավորությունը սահմանող, պատիժը խստացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ վատթարացնող օրենքը. • ունի հետադարձ ուժ • **հետադարձ ուժ չունի** • ունի հետադարձ ուժ, եթե դա նախատեսված է օրենքով • հետադարձ ուժ ունի միայն արարքի հանցավորությունը սահմանելու մասով

266	Ավազակության որակյալ հատկանիշ չի համարվում. • մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կատարելը • **զգալի չափով գույք հափշտակելու նպատակով կատարելը** • բնակարան, պահեստարան կամ շինություն ապօրինի մուտք գործելով կատարելը • զենքի կամ որպես զենք օգտագործվող այլ առարկաների գործադրմամբ կատարելը
267	Ո՞ր կետում են սպառիչ թվարկված հանցակիցների տեսակները. • օժանդակող և կազմակերպիչ • կատարող, կազմակերպիչ, դրդիչ, օժանդակող և պարտակող • **կատարող, կազմակերպիչ, դրդիչ և օժանդակող** • դրդիչ և օժանդակող
268	Թվարկածներից ո՞րը պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք չի համարվում. • **հանցանքը վրեժի շարժառիթով կատարելը** • հանցանքը կատարելու ռեցիդիվը • հանցանքը հանրության համար վտանգավոր եղանակով կատարելը • հանցանքը հանցավորի համար ակնհայտ հղի կնոջ նկատմամբ կատարելը
269	Ըստ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի՝ ուղղիչ աշխատանքները. • նախատեսված են որպես հիմնական պատիժ • նախատեսված են որպես լրացուցիչ պատիժ • նախատեսված են և որպես հիմնական, և որպես լրացուցիչ պատիժ • **նախատեսված չեն որպես պատիժ**
270	Ըստ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հանրային աշխատանքները. • **կիրառվում են միայն որպես հիմնական պատիժ** • կիրառվում են որպես լրացուցիչ պատիժ • կիրառվում են և որպես հիմնական, և որպես լրացուցիչ պատիժ • նախատեսված չէ որպես պատիժ
271	Ըստ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի կալանքը. • **կիրառվում է միայն որպես հիմնական պատիժ** • կիրառվում է որպես լրացուցիչ պատիժ • կիրառվում է և որպես հիմնական, և որպես լրացուցիչ պատիժ • նախատեսված չէ որպես պատիժ
272	Ըստ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի՝ որոշակի ժամկետով ազատազրկումը. • **կիրառվում է միայն որպես հիմնական պատիժ** • կիրառվում է որպես լրացուցիչ պատիժ

	• կիրառվում է և որպես հիմնական, և որպես լրացուցիչ պատիժ • նախատեսված չէ որպես պատիժ
273	Ըստ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի՝ ցմահ ազատազրկումը. • **կիրառվում է միայն որպես հիմնական պատիժ** • կիրառվում է որպես լրացուցիչ պատիժ • կիրառվում է և որպես հիմնական, և որպես լրացուցիչ պատիժ • նախատեսված չէ որպես պատիժ
274	Ըստ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հատուկ կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից կամ որակավորման դասից զրկելը. • կիրառվում է որպես հիմնական պատիժ • **կիրառվում է միայն որպես լրացուցիչ պատիժ** • կիրառվում է և որպես հիմնական, և որպես լրացուցիչ պատիժ • նախատեսված չէ որպես պատիժ
275	Ներքոհիշյալ արարքներից ո՞րը ,մշակումն արգելված թմրանյութերի, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսեր ապօրինի ցանելը կամ աճեցնելը՞ հանցանքը չի դարձնում որակյալ. • եթե արարքը կատարվել է կազմակերպված խմբի կողմից • եթե արարքը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ • **եթե արարքը կատարվել է որպես արհեստ** • եթե արարքը կատարվել է առանձնապես խոշոր չափերով
276	Ըստ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը. • նախատեսված է որպես հիմնական պատիժ • նախատեսված է որպես լրացուցիչ պատիժ • **նախատեսված է և որպես հիմնական, և որպես լրացուցիչ պատիժ** • նախատեսված չէ որպես պատիժ
277	Հանցանքը համարվում է կազմակերպված խմբի կողմից կատարված, եթե. • **դա կատարվել է այնպիսի անձանց կայուն խմբի կողմից, ովքեր նախապես միավորվել են մեկ կամ մի քանի հանցանքներ կատարելու համար** • դրան մասնակցել են այնպիսի համակատարողներ, ովքեր նախապես՝ մինչև հանցագործությունը սկսելը, պայմանավորվել են հանցանքը համատեղ կատարել • դրան մասնակցել են այնպիսի համակատարողներ, ովքեր չեն պայմանավորվել հանցանքը համատեղ կատարելու մասին • դա կատարվել է ծանր կամ առանձնապես ծանր հանցանքներ կատարելու համար ստեղծված կազմակերպված խմբի միավորմամբ

278	ՀՀ քաղաքացու ներքոհիշյալ արարքներից ո՞րը չի պարունակում ,պետական դավաճանություն՝ հանցակազմ. • ի վնաս ՀՀ ինքնիշխանության թշնամու կողմն անցնելը • օտարերկրյա պետության ներկայացուցչին պետական գաղտնիք ներկայացնող տեղեկություններ հանձնելը • **ՀՀ ինքնիշխանության վերաբերյալ հերյուրանքներ տարածելը** • լրտեսության միջոցով տեղեկություններ հաղորդելը
279	Ըստ հանցագործության տեսակային օբյեկտի խուլիգանությունը. • **հասարակական կարգի և բարոյականության դեմ ուղղված հանցագործություն է** • հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործություն է • մարդու դեմ ուղղված հանցագործություն է • պատվի և արժանապատվության դեմ ուղղված հանցագործություն է
280	Որքա՞ն գումարը գերազանցելու դեպքում է պաշտոնական լիազորությունները չարաշահելը գույքային վնասի դեպքում դիտվում քրեորեն պատժելի արարք. • **ՀՀ-ում սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափը գերազանցող գումարը կամ դրա արժեքը** • ՀՀ-ում սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափը գերազանցող գումարը կամ դրա արժեքը • ՀՀ-ում սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափը գերազանցող գումարը կամ դրա արժեքը • ՀՀ-ում սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհազարապատիկի չափը գերազանցող գումարը կամ դրա արժեքը
281	Վաշխառության հիմնական հանցակազմը նկարագարված է որպես. • նյութական հանցակազմ • ձևական հանցակազմ • հատած հանցակազմ • խառը հանցակազմ
282	Հասարակական կազմակերպությունների, կուսակցությունների և առևտրային կառույցների պաշտոնատար անձինք <<պաշտոնական լիազորությունները չարաշահելու>> հանցանքի սուբյեկտ հանդիսանու՞մ են, թե ոչ. • այո • **ոչ** • միայն տվյալ կառույցների ղեկավարները • այո, եթե ունեն կնիք և այլ տարբերանշաններ

283	Կաշառք ստանալու հանցանքում որքա՞ն գումարն է համարվում խոշոր չափ. • ՀՀ-ում սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից հինգհարյուրապատիկը չգերազանցող գումարը (արժեքը) • ՀՀ-ում սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից հինգհարյուրապատիկը չգերազանցող գումարը (արժեքը) • ՀՀ-ում սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկը չգերազանցող գումարը (արժեքը) • **ՀՀ-ում սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից հազարապատիկը չգերազանցող գումարը (արժեքը)**
284	Կաշառք ստանալու հանցանքում որքա՞ն գումարն է համարվում առանձնապես խոշոր չափ. • ՀՀ-ում սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկը գերազանցող գումարը (արժեքը) • **ՀՀ-ում սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող գումարը (արժեքը)** • ՀՀ-ում սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը գերազանցող գումարը (արժեքը) • ՀՀ-ում սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկը գերազանցող գումարը (արժեքը)
285	Ներքոհիշյալ ո՞ր դեպքում է <<փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձևաթղթեր, տրանսպորտային միջոցների պետհամարանիշներ կեղծելը, իրացնելը կամ օգտագործելը>> հանցանքը դարձնում որակյալ. • եթե արարքը կատարվել է կրկին անգամ • եթե արարքը կատարվել է պաշտոնատար անձի կողմից • **եթե արարքը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ** • եթե արարքը կատարվել է որպես արհեստ
286	Ստորև բերված ո՞ր դեպքում է կաշառք տվող անձն ազատվում քրեական պատասխանատվությունից. • երբ անձը կաշառքը տվել է ընտանեկան ծանր հանգամանքներից ելնելով • երբ անձը կաշառքը տվել է միջնորդի միջոցով • **եթե տեղի է ունեցել կաշառքի շորթում, կամ եթե այդ անձը կաշառք տալու մասին ոչ ուշ, քան երեք օրվա ընթացքում կամավոր հայտնել է իրավապահ մարմիններին** • երբ անձը կաշառք տալու մասին վարույթն իրականացնող մարմնի կանչով ճշմարիտ ցուցմունք է տվել նախաքննական մարմնին

287	Ո՞րն է ,կաշառքի միջնորդությունե հանցակազմի բնորոշումը ըստ ՀՀ քրեական օրենսգրքի. • կաշառքի գումարի տալն է մեկ այլ անձի միջնորդությամբ • կաշառք տվողի և կաշառք ստացողի միջև կաշառք տալու հարցի հստակեցումն է՝ անկախ կաշառքի գումարը տալու կամ չտալու հանգամանքից • կաշառք տվողի անունից կաշառքի գումարը ստացողին փոխանցելու հարցին նպաստելն է **• կաշառք տվողի և կաշառք ստացողի միջև կաշառքի շուրջ համաձայնության գալուն կամ արդեն կայացած համաձայնության իրականացմանը նպաստելն է**
288	,Կեղծ փողեր կամ արժեթղթեր պատրաստելը, պահելը կամ իրացնելըե հանցանքում որքա՞ն գումարն է համարվում խոշոր չափ. • ՀՀ-ում սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկը գերազանցող գումարը (արժեքը) **• ՀՀ-ում սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող գումարը (արժեքը)** • ՀՀ-ում սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը գերազանցող գումարը (արժեքը) • ՀՀ-ում սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկը գերազանցող գումարը (արժեքը)
289	Ստորև բերված ո՞ր դեպքն է պարունակում ,պաշտոնատար անձի կոչումը կամ իշխանությունն ինքնակամ յուրացնելուե հանցակազմ. • եթե անձը հագել է իրավապահ մարմնի աշխատակցի համազգեստ և դուրս է եկել հասարակական վայր • եթե անձը ցույց է տվել դատական մարմնի աշխատակցի վկայական խանութում արտահերթ սննդամթերք գնելու համար **• եթե անձը հագել է իրավապահ մարմնի, կամ դատական մարմնի աշխատողների համազգեստ, որը զուգորդվել է դրա հիման վրա հանցանք կատարելով** • եթե անձը հագել է իրավապահ մարմնի աշխատակցի համազգեստ և կեղծել է նրա վկայականը
290	,Կեղծ փողեր կամ արժեթղթեր պատրաստելը, պահելը կամ իրացնելըե հանցանքում որքա՞ն գումարն է համարվում առանձնապես խոշոր չափ. • ՀՀ-ում սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը գերազանցող գումարը (արժեքը) • ՀՀ-ում սահմանված նվազագույն աշխատավարձի հազարհինգհարյուրապատիկը գերազանցող գումարը (արժեքը) **• ՀՀ-ում սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհազարապատիկը գերազանցող գումարը (արժեքը)** • ՀՀ-ում սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկը գերազանցող գումարը (արժեքը)

291	Սուտ մատնությունը քրեորեն պատժելի է, եթե. • կատարվել է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության մեջ մեղադրելով • **անձը գործել է, գիտակցելով, որ իր տրամադրած տեղեկատվությունը կեղծ է** • կատարվել է մեղադրանքի արհեստական ապացույցներ ստեղծելով • կատարվել է շահադիտական դրդումներով
292	Ներքոհիշյալ ո՞ր դեպքում ,սուտ մատնությունե հանցանքը որակյալ չի համարվում. • երբ այն զուգորդվել է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության մեջ մեղադրելով • երբ զուգորդվել է մեղադրանքի արհեստական ապացույցներ ստեղծելով • **երբ կատարվել է մի խումբ անձանց կողմից** • երբ կատարվել է շահադիտական դրդումներով
293	,Սուտ մատնությունե հանցանքը ավարտված է համարվում, եթե. • **սուտ մատնություն պարունակող տեղեկատվությունը արդեն հայտնվել է համապատասխան մարմիններին** • սուտ մատնություն պարունակող տեղեկատվությունը գրելու պահից մինչև համապատասխան մարմիններին առաքելը • սուտ մատնության հիման վրա հարուցվել է քրեական գործ • սուտ մատնության հիման վրա անձը փաստացի դատապարտվել է
294	Թվարկվածներից ո՞րն է պարունակում ,հանցագործությունը պարտակելը՝ հանցակազմի հատկանիշներ. • ցանկացած հանցագործություն կատարած անձի, ինչպես նաև հանցագործության կատարման գործիքների ու միջոցների, հանցագործության հետքերի կամ հանցավոր ճանապարհով ձեռք բերված առարկաների նախապես չխոստացված պարտակումը • ցանկացած հանցագործության առարկաների նախապես չխոստացած պարտակում է • ինչպես հանցանք կատարած անձանց, այնպես էլ հանցագործության գործիքների նախապես խոստացված պարտակումը • **թմրամիջոցների մաքսանենգություն կատարած անձի նախապես չխոստացված պարտակումը**
295	Վաշխառության որակյալ հատկանիշ է հանդիսանում. • եթե արարքի հետևանքով տուժողը սնանկացել է • եթե արարքը կատարվել է անձի համար ոչ ձեռնտու պայմաններում • **եթե արարքը կատարվել է որպես արհեստ** • եթե արարքը կատարվել է կրկին անգամ

296	Ներքոհիշյալ ո՞ր հատկանիշն է, որ ,վնասաբեր ծրագրեր մշակելը, օգտագործելը և տարածելը հանցանքը չի դարձնում որակյալ. • եթե արարքը կատարվել է շահադիտական դրդումներով • եթե արարքը անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ • եթե արարքը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ • **եթե արարքը կատարվել է պաշտոնատար անձի կողմից**
297	Ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը ներքոհիշյալ ո՞ր դեպքում չի համարվում որակյալ հանցանք. • երբ այն կատարվել է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության մեջ մեղադրանքի առնչությամբ • **երբ այն կատարվել է կազմակերպված խմբի կողմից** • երբ այն կատարվել է այլ շահադիտական դրդումներով • երբ այն զուգորդվել է այլ արհեստական ապացույցներ ստեղծելով
298	Ո՞ր դեպքում է սուտ ցուցմունք տված անձը ազատվում քրեական պատասխանատվությունից. • երբ նա նախաքննության և դատաքննության ընթացքում տված սուտ ցուցմունքի մասին մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը հայտնում է համապատասխան մարմիններին • երբ նա տված սուտ ցուցմունքի մասին հայտնում է համապատասխան մարմիններին՝ մինչև դատավճռի, վճռի կամ որոշման օրինական ուժի մեջ մտնելը • երբ տված սուտ ցուցմունքի կապակցությամբ մեղայականով ներկայանում է իրավապահ մարմիններին անկախ դատարանի դատավճռի, վճռի կամ որոշման օրինական ուժ ստանալը, որով ինքը տվել է սուտ ցուցմունքներ • **երբ տված սուտ ցուցմունքի մասին կամովին հայտնում է մինչև դատարանի կողմից դատավճիռ, վճիռ կամ որոշում կայացնելը**
299	Դատավարության ներքոհիշյալ մասնակիցներից ո՞վ չի կարող հանդիսանալ ,սուտ բացատրություն, սուտ ցուցմունք կամ կեղծ եզրակացություն տալու կամ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելուե հանցագործության սուբյեկտ. • գործով անցնող վկան • գործով անցնող թարգմանիչը • գործով անցնող փորձագետը • **գործով անցնող մասնագետը**
300	Դատավարության ներքոհիշյալ մասնակիցներից ո՞վ չի կարող հանդիսանալ ,նախաքննության կամ հետաքննության տվյալները հրապարակելուե հանցանքի սուբյեկտ. • վկաները • տուժողները • մասնագետը • դատական նիստի քարտուղարները

301	Ներքոհիշյալ ո՞ր դեպքում <<փախուստն ազատազրկման վայրից, կալանավորվածներին պահելու վայրից կամ ձերբակալվածներին պահելու վայրից>> հանցանքը որակյալ չի համարվում. • **երբ այն կատարվել է տեխնիկական միջոցների օգտագործմամբ** • երբ այն կատարվել է զենք կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ • երբ այն կատարվել է մի խումբ անձանց կողմից • երբ այն կատարվել է այլ անձի կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ այն գործադրելու սպառնալիքով
302	Ո՞րն է ,հրամանը չկատարելը՝ հանցանքի բնորոշումը՝ ըստ ՀՀ քրեական օրենսգրքի. • պետի հրամանը չկատարելը՝ անկախ առաջացած հետևանքներից • պետի հրամանը չկատարելը, որն առաջացրել է զգալի վնաս ծառայության շահերին • **պետի՝ օրինական և սահմանված կարգով տված հրամանը ստորադասի կողմից չկատարելը, որն էական վնաս է պատճառել ծառայության շահերին** • պետի՝ օրինական պահանջը չկատարելը, որն էական վնաս է պատճառել ծառայության շահերին
303	Ներքոհիշյալ ո՞ր դեպքում <<հրամանը չկատարելը>> հանցանքը որակյալ չի համարվում. • **արտակարգ իրավիճակների ժամանակ** • ռազմական դրության ընթացքում • պատերազմի ժամանակ • մարտի պարագաներում
304	Պետի կողմից տրված ակնհայտ անօրինական հրամանի չկատարումը ստորադասի կողմից արդյո՞ք կարելի է դիտել ,հրամանը չկատարելը՝ հանցանք և չկատարողին քրեական պատասխանատվության կանչել. • այո, կարելի է, եթե դա տրվել է բանակային վարժանքների ժամանակ շարային պատրաստության ժամանակ • **ոչ, չի կարելի** • այո, կարելի է, եթե դա պահանջել է զինվորական իրադրությունը • այո, կարելի է, քանի որ ստորադասը պարտավոր է կատարել հրամանը և այն բողոքարկել վերադասին
305	Ըստ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի՝ գույքի բռնագրավումը. • կիրառվում է որպես հիմնական պատիժ • **կիրառվում է միայն որպես լրացուցիչ պատիժ** • կիրառվում է և որպես հիմնական, և որպես լրացուցիչ պատիժ • նախատեսված չէ որպես պատիժ

306	Դասալքության պարտադիր հատկանիշը. • մեկ շաբաթից ավելի տևողությամբ զորամասը թողնելը • մեկ ամսից ավելի տևողությամբ զորամասը թողնելը • ռազմական դրության ժամանակ կատարվելը • **զինվորական ծառայությունից վերջնականապես խուսափելու նպատակը**
307	Ա-ն կասկածելով իր տղայի կնոջը ամուսնուն դավաճանելու մեջ պարբերաբար բացում է վերջինիս ուղարկած նամակները և ծանոթանում է դրանց բովանդակությանը: Դրանցից մեկում նա գտնում է իր կասկածների հաստատում և եղելությունը ներկայացնում է տղային: Որակեք արարքը. • արարքում հանցակազմ չկա • անձնական կյանքի գաղտնիությունը խախտելը • **նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական կամ այլ հաղորդումների գաղտնիությունը խախտելը** • անձնական կամ ընտանեկան կյանքի մասին տեղեկություններ ապօրինի հավաքելը, պահելը, օգտագործելը կամ տարածելը
308	Ա-ի երկու տարեկան երեխային, որի մայրը մահացած է, առանց Ա-ի համաձայնության իրենից վերցրել է երեխայի մայրական տատիկը և հրաժարվում է երեխային վերադարձնել՝ նրան պահելով գաղտնի վայրում: Խնդրվում է որակել արարքը. • արարքը հանցակազմ չի պարունակում • **արարքը ենթակա է որակման երեխային առանց ծնողների համաձայնության նրանցից բաժանելու հանցակազմով** • արարքը ենթակա է որակման անչափահասին առևանգելու հանցակազմով • արարքը ենթակա է որակման որպես ինքնիրավչություն
309	Տուգանքը կիրառվում է. • որպես հիմնական և լրացուցիչ պատիժ • **միայն որպես հիմնական պատիժ** • միայն որպես լրացուցիչ պատիժ • միայն այլ լրացուցիչ պատիժների հետ մեկտեղ
310	Զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործություն չէ. • դասալքությունը • սահմանապահ ծառայություն կրելու կանոնները խախտելը • պետի նկատմամբ բռնի գործողություններ կատարելը • **ժամկետային զինվորական ծառայությունից խուսափելը**
311	ՀՀ քրեական օրենսգիրքը հիմնվում է. • **ՀՀ Սահմանադրության և միջազգային իրավունքի սկզբունքների ու նորմերի վրա** • ՀՀ Սահմանադրության և օրենքների վրա • ՀՀ Սահմանադրության և այլ նորմատիվ իրավական ակտերի վրա • միայն ՀՀ Սահմանադրության վրա

312	Քրեական պատասխանատվության հիմքն է. • **հանցանք, այսինքն՝ այնպիսի արարք կատարելը, որն իր մեջ պարունակում է քրեական օրենքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները** • հանցագործությունը, որը համապատասխանում է քրեական օրենսգրքի հատուկ մասով նախատեսված որևէ հանցակազմի հատկանիշներին • հանցագործությունը, որն իրենում ներառում է քրեական օրենսգրքի հատուկ մասի որևէ հոդվածով նախատեսված հանցակազմի տարրեր • այն հանրորեն վտանգավոր, մեղավորությամբ կատարված հակաօրինական արարքը, որը պարունակում է քրեական օրենքով նախատեսված որևէ հանցակազմի տարրեր
313	Արարքի հանցավորությունը, դրա պատժելիությունը և քրեաիրավական այլ հետևանքները որոշվում են. • քրեական օրենքով, ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային իրավունքի սկզբունքներով ու նորմերով • **միայն քրեական օրենքով** • միայն քրեական օրենքով և ՀՀ Սահմանադրությամբ • քրեական օրենքով, ՀՀ Սահմանադրությամբ և քրեական իրավունքի նորմեր պարունակող այլ օրենքներով
314	Անձը ենթակա է քրեական պատասխանատվության. • **միայն անձամբ իր կատարած հանցանքի համար** • անձամբ իր, ինչպես նաև իր անչափահաս երեխաների կատարած հանցանքների համար • անձամբ իր կատարած հանցանքի համար, եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ միջազգային պայմանագրերով • անձամբ իր, ինչպես նաև իր գիտությամբ այլ անձանց կողմից կատարած հանցանքի համար
315	Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը ծառայում է. • մարդու և իրավաբանական անձի ֆիզիկական, հոգեկան, նյութական, էկոլոգիական և այլ անվտանգությունն ապահովելուն • հանրության կարիքներին • **մարդու ֆիզիկական, հոգեկան, նյութական, էկոլոգիական և այլ անվտանգությունն ապահովելուն** • պատժի անհատականացման սկզբունքին
316	Արարքի հանցավորությունը և պատժելիությունը որոշվում են. • հանցանքը կատարելու ժամանակ գործող քրեական օրենքով, եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով • դատավճիռը կայացնելու ժամանակ գործող քրեական օրենքով • **հանցանքը կատարելու ժամանակ գործող քրեական օրենքով** • հանցանքը կատարած անձին որպես մեղադրյալ ներգրավելու պահին գործող քրեական օրենքով

317	Պատասխանատվությունը մասնակիորեն մեղմացնող և միաժամանակ պատասխանատվությունը մասնակիորեն խստացնող օրենքը. • հետադարձ ուժ չունի • ունի հետադարձ ուժ • **հետադարձ ուժ ունի միայն այն մասով, որը մեղմացնում է պատասխանատվությունը** • այդպիսի օրենք չի կարող ընդունվել
318	ՀՀ քաղաքացին, այլ պետություն տարածքում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 391-րդ հոդվածով (անգործությունը կամ հանցավոր հրաման արձակելը զինված ընդհարման ժամանակ) նախատեսված հանցանք կատարելու համար կրու՞մ է արդյոք քրեական պատասխանատվություն, եթե հանցանքը կատարելու վայրի պետության քրեական օրենսգրքով այդ արարքը նախատեսված չէ. • ոչ, չի կրում • **այո, կրում է** • կրում է, եթե դա նախատեսված է ՀՀ միջազգային պայմանագրով • կրում է, եթե դա նախատեսված է ՀՀ և հանցանքը կատարելու վայրի պետության միջև կնքված երկկողմ պայմանագրով
319	ՀՀ տարածքից դուրս հանցանք կատարած և ՀՀ-ում գտնվող օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք. • **ՀՀ միջազգային պայմանագրին համապատասխան՝ կարող են հանձնվել օտարերկրյա պետությանը՝ քրեական պատասխանատվության ենթարկելու կամ պատիժը կրելու համար** • չեն կարող հանձնվել օտարերկրյա պետությանը • կարող են հանձնվել օտարերկրյա պետությանը՝ քրեական պատասխանատվության ենթարկելու կամ պատիժը կրելու համար միայն իրենց համաձայնության դեպքում • հանցանքը կատարելու վայրի պետության պահանջով բոլոր դեպքերում ենթակա են հանձնման, բացառությամբ այն դեպքերի, երբ հանցանքը ուղղված է եղել ՀՀ քաղաքացու դեմ
320	Եթե Հայաստանի Հանրապետությունը հրաժարվել է հանձնել Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս հանցանք կատարած և Հայաստանի Հանրապետությունում գտնվող օտարերկրյա քաղաքացուն կամ քաղաքացիություն չունեցող անձին, ապա. • օտարերկրյա պետության տարածքում կատարված հանցանքի համար քրեական հետապնդում է իրականացվում այդ երկրի քրեական օրենսդրությանը համապատասխան • **օտարերկրյա պետության տարածքում կատարված հանցանքի համար քրեական հետապնդում է իրականացվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան**

	• օտարերկրյա պետության տարածքում կատարված հանցանքի համար Հայաստանի Հանրապետությունում քրեական հետապնդում չի իրականացվում • օտարերկրյա պետության տարածքում կատարված հանցանքի համար քրեական հետապնդում է իրականացվում Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան
321	Հանցագործություն է համարվում. • **մեղավորությամբ կատարված՝ հանրության համար վտանգավոր այն արարքը, որը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքով** • մեղավորությամբ կատարված՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց համար վտանգավոր այն արարքը, որը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքով • մեղավորությամբ կատարված՝ հանրության համար վտանգավոր այն արարքը, որը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքով և քրեաիրավական նորմեր պարունակող այլ օրենքներով • մեղավորությամբ կատարված՝ հանրության համար վտանգավոր այն արարքը, որը նախատեսված է ՀՀ Սահմանադրությամբ և քրեական օրենսգրքով
322	Հանցագործություն չի համարվում այն գործողությունը կամ անգործությունը, որը թեև ձևականորեն պարունակում է ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված որևէ արարքի հատկանիշներ, սակայն իր նվազ կարևորության պատճառով հասարակական վտանգավորություն չի ներկայացնում, այսինքն. • **ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը կամ պետությանը էական վնաս չի պատճառել և չէր կարող պատճառել** • ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը կամ պետությանը էական վնաս չի պատճառել թեև կարող էր պատճառել • իրադրության փոփոխման հետևանքով անձը կամ նրա կատարած արարքը դադարել է հանրության համար վտանգավոր լինելուց • ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը կամ պետությանը էական վնաս չի պատճառել

323	Ստորև բերված ո՞ր դեպքում հանցագործությունների ռեցիդիվը չի համարվում վտանգավոր. • դիտավորությամբ հանցանք կատարելու դեպքում, եթե անձը նախկինում երկու անգամից ոչ պակաս ազատազրկման է դատապարտվել դիտավորյալ հանցագործության համար • ծանր հանցանք կատարելու դեպքում, եթե անձը նախկինում ազատազրկման է դատապարտվել ծանր հանցագործության համար • ծանր հանցանք կատարելու դեպքում, եթե անձը նախկինում ազատազրկման է դատապարտվել առանձնապես ծանր հանցագործության համար • **առանձնապես ծանր հանցանք կատարելու դեպքում, եթե անձը նախկինում ազատազրկման է դատապարտվել միջին ծանրության հանցագործության համար**
324	Ստորև բերված ո՞ր դեպքում հանցագործությունների ռեցիդիվը չի համարվում առանձնապես վտանգավոր. • անձի կողմից դիտավորությամբ այնպիսի հանցանք կատարելու դեպքում, որի համար նա դատապարտվում է ազատազրկման, եթե անձը նախկինում երեք անգամից ոչ պակաս ցանկացած հաջորդականությամբ ազատազրկման է դատապարտվել միջին ծանրության դիտավորյալ հանցագործության, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար • անձի կողմից այնպիսի ծանր հանցանք կատարելու դեպքում, որի համար նա դատապարտվում է ազատազրկման, եթե անձը նախկինում երկու անգամ ազատազրկման է դատապարտվել ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար • անձի կողմից առանձնապես ծանր հանցանք կատարելու դեպքում, եթե անձը նախկինում դատապարտվել է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար • **դիտավորությամբ հանցանք կատարելու դեպքում, եթե անձը նախկինում երեք անգամ ազատազրկման է դատապարտվել դիտավորյալ հանցագործության համար**
325	Ռեցիդիվը գնահատելիս հաշվի չեն առնվում. • այն հանցագործությունները, որոնք կատարած անձինք կամովին ներկայացել են մեղայականով • **այն հանցագործությունները, որոնք կատարվել են մինչև անձի տասնութ տարին լրանալը** • այն հանցանքները, որոնց դեպքում անձը հաշտվել է տուժողի հետ • այն ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործությունները, որոնք կատարած անձինք կամովին ներկայացել են մեղայականով

326	Քրեական պատասխանատվության ենթակա է միայն. • գործունակ ֆիզիկական անձը, ով հանցանք կատարելու պահին հասել է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով սահմանված տարիքի • իրավունակ ֆիզիկական անձը, ով հանցանք կատարելու պահին հասել է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով սահմանված տարիքի **• մեղսունակ ֆիզիկական անձը, ով հանցանք կատարելու պահին հասել է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով սահմանված տարիքի** • մեղսունակ ֆիզիկական անձը, ով քրեական պատասխանատվության ենթարկվելու պահին հասել է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով սահմանված տարիքի
327	Հանրության համար վտանգավոր արարքն անմեղսունակության վիճակում կատարած անձի նկատմամբ դատարանը. • նշանակում է բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ • նշանակում է պատիժ • նշանակում է բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ, իսկ առողջանալուց հետո այդ անձը կարող է ենթարկվել պատժի **• կարող է նշանակել բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ**
328	Եթե անձը հանցանքը կատարել է մեղսունակության վիճակում, սակայն մինչև դատարանի կողմից դատավճիռ կայացանելը հիվանդացել է հոգեկան հիվանդությամբ, որը զրկել է նրան իր արարքի նշանակությունը գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից, ապա. • նրա նկատմամբ կարող են կիրառվել միայն բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ • նրա նկատմամբ կարող է կիրառվել միայն պատիժ **• նրա նկատմամբ կարող են կիրառվել բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ, իսկ առողջանալուց հետո նա կարող է ենթարկվել պատժի** • նրա նկատմամբ կարող են կիրառվել բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ, իսկ առողջանալուց հետո նա պարտադիր կերպով ենթարկվում է պատժի՝ անկախ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման տևողությունից
329	Հանցանքը համարվում է ուղղակի դիտավորությամբ կատարված, եթե. **• անձը գիտակցել է իր գործողության (անգործության)՝ հանրության համար վտանգավոր բնույթը, նախատեսել է հանրության համար դրա վտանգավոր հետևանքները և ցանկացել է դրանց վրա հասնելը** • անձը գիտակցել է իր գործողության (անգործության)՝ հանրության համար վտանգավոր բնույթը, նախատեսել է հանրության համար դրա վտանգավոր հետևանքները և գիտակցաբար թույլ է տվել դրանք • անձը գիտակցել է իր գործողության (անգործության)՝ հանրության համար վտանգավոր բնույթը, սակայն չի նախատեսել հանրության համար դրա վտանգավոր հետևանքները և դրանց վրա հասնելը

	• անձը չի գիտակցել իր գործողության (անգործության)՝ հանրության համար վտանգավոր բնույթը, սակայն նախատեսել է հանրության համար դրա վտանգավոր հետևանքները և ցանկացել է դրանց վրա հասնելը
330	Հանցանքը համարվում է անուղղակի դիտավորությամբ կատարված, եթե. • անձը չի գիտակցել իր գործողության (անգործության)՝ հանրության համար վտանգավոր բնույթը, սակայն նախատեսել է հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, ցանկացել այդ հետևանքները և գիտակցաբար թույլ է տվել դրանք • անձը գիտակցել է իր գործողության (անգործության)՝ հանրության համար վտանգավոր բնույթը, սակայն չի նախատեսել հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը և չի ցանկացել այդ հետևանքները • **անձը գիտակցել է իր գործողության (անգործության)՝ հանրության համար վտանգավոր բնույթը, նախատեսել է հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, չի ցանկացել այդ հետևանքները, բայց գիտակցաբար թույլ է տվել դրանք** • անձը գիտակցել է իր գործողության (անգործության)՝ հանրության համար վտանգավոր բնույթը, նախատեսել է հանրության համար դրա վտանգավոր հետևանքները և ցանկացել է դրանց վրա հասնելը
331	Դիտավորյալ հանցագործության ծանրացնող հանգամանքների համար անձը ենթակա է քրեական պատասխանատվության, եթե նա՝ • կարող էր գիտակցել նման հանգամանքների առկայությունը • պարտավոր էր գիտակցել նման հանգամանքների առկայությունը • նույնիսկ չի գիտակցել այդ հանգամանքները • **գիտակցել է այդ հանգամանքները**
332	Հանցանքը համարվում է ինքնավստահությամբ կատարված, եթե. • անձը չի նախատեսել իր գործողության (անգործության)՝ հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, կամ առանց բավարար հիմքերի՝ ինքնավստահորեն հույս է ունեցել, որ դրանք կկանխվեն • **անձը նախատեսել է իր գործողության (անգործության)՝ հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, սակայն առանց բավարար հիմքերի՝ ինքնավստահորեն հույս է ունեցել, որ դրանք կկանխվեն** • անձը չի նախատեսել իր գործողության (անգործության)՝ հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, և առանց բավարար հիմքերի՝ ինքնավստահորեն հույս է ունեցել, որ դրանք կկանխվեն

	• անձը չի նախատեսել է իր գործողության (անգործության)՝ հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, թեև տվյալ իրադրությունում կարող էր և պարտավոր էր նախատեսել դրանք
333	Արարքը չի կարող որակվել քրեական օրենսգրքի 281 հոդվածով (Աշխատանքներ իրականացնելիս շրջակա միջավայրի պահպանության կանոնները խախտելը), եթե. • **արարքը դիտավորությամբ առաջացրել է մարդկանց մահ** • արարքն անզգուշությամբ առաջացրել է մարդկանց զանգվածային հիվանդություններ • արարքն անզգուշությամբ առաջացրել է կենդանիների զանգվածային ոչնչացում • արարքն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ
334	Եթե օրենքն ավելի խիստ պատասխանատվություն է նախատեսում անզգուշությամբ ծանր հետևանքներ առաջացրած դիտավորյալ հանցագործության համար, ապա անձն այդ հետևանքների համար պատասխանատվություն է կրում միայն այն դեպքում, եթե. • **նա նախատեսել է իր գործողության (անգործության)՝ հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, սակայն առանց բավարար հիմքերի՝ ինքնավստահորեն հույս է ունեցել, որ դրանք կկանխվեն, կամ չի նախատեսել իր գործողության (անգործության)՝ հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, թեև տվյալ իրադրությունում պարտավոր էր և կարող էր նախատեսել դրանք** • նա չի նախատեսել իր գործողության (անգործության)՝ հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, և չէր կարող նախատեսել դրանք • նա չի նախատեսել իր գործողության (անգործության)՝ հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, և չէր կարող ու պարտավոր չէր նախատեսել դրանք • նա նախատեսել է իր գործողության (անգործության)՝ հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը և գիտակցաբար թույլ է տվել դրանց առաջացումը

335	Քրեական օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված հանցագործության հատուկ սուբյեկտ չհանդիսացող անձը, ով մասնակցել է այդ հոդվածով նախատեսված հանցանքի կատարմանը, տվյալ հանցագործության համար. • ենթակա չէ քրեական պատասխանատվության • կարող է պատասխանատվություն կրել միայն որպես կատարող • կարող է պատասխանատվություն կրել միայն որպես օժանդակող • **կարող է պատասխանատվություն կրել միայն որպես կազմակերպիչ, դրդիչ կամ օժանդակող**
336	Կատարողի կողմից իրենից անկախ հանգամանքներով հանցագործությունն ավարտին չհասցնելու դեպքում մյուս հանցակիցները. • պատասխանատվություն չեն կրում • **պատասխանատվություն են կրում հանցագործության նախապատրաստության կամ հանցափորձին հանցակցելու համար** • պատասխանատվություն են կրում միայն հանցափորձին հանցակցելու համար • պատասխանատվություն են կրում որպես համակատարողներ
337	Անհրաժեշտ պաշտպանության իրավունքն անձին է պատկանում. • եթե նա զրկված է եղել ոտնձգությունից խուսափելու կամ այլ անձանց կամ պետական մարմինների օգնությանը դիմելու հնարավորությունից • **անկախ ոտնձգությունից խուսափելու կամ այլ անձանց կամ պետական մարմինների օգնությանը դիմելու հնարավորությունից, ինչպես նաև անկախ անձի մասնագիտական կամ այլ հատուկ պատրաստվածությունից և պաշտոնեական դիրքից** • եթե սպառված են ոտնձգությունից պաշտպանվելու բոլոր օրինական միջոցները • ելնելով անձի մասնագիտական կամ այլ հատուկ պատրաստվածությունից եւ պաշտոնեական դիրքից
338	Հանցանք կատարած անձին բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցմամբ արարքը. • **հանցագործություն է, եթե հատկապես նախատեսված է քրեական օրենսգրքի Հատուկ մասով** • հանցագործություն է համարվում • հանցագործություն չի համարվում • հանցագործություն է, եթե առաջացրել է ծանր հետևանքներ
339	Հանցանք կատարած անձին բռնելու իրավունք ունեն. • միայն դրա համար հատկապես լիազորված անձինք • **դրա համար հատկապես լիազորված անձինք, ինչպես նաև տուժողը և այլ անձինք** • միայն դրա համար հատկապես լիազորված անձինք և տուժողը • միայն տուժողը

340	Ռիսկը հիմնավորված չի համարվում, եթե դա. • **ակնհայտորեն զուգորդված է եղել երրորդ անձանց զոհվելու վտանգով, էկոլոգիական կամ հասարակական աղետի սպառնալիքով** • ակնհայտորեն զուգորդված է եղել տուժողի կամ երրորդ անձանց զոհվելու վտանգով, էկոլոգիական կամ հասարակական աղետի սպառնալիքով • ակնհայտորեն զուգորդված է եղել երրորդ անձանց զոհվելու վտանգով, կամ քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելու այլ սպառնալիքով • ակնհայտորեն զուգորդված է եղել քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելու սպառնալիքով
341	Հանրորեն օգտակար նպատակի հասնելու համար գործադրված հիմնավորված ռիսկի ժամանակ քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելը. • **հանցագործություն չի համարվում** • հանցագործություն է համարվում • հանցագործություն է համարվում, եթե հատկապես նախատեսված է քրեական օրենսգրքի Հատուկ մասով • հանցագործություն չի համարվում, եթե այլ բան նախատեսված չէ քրեական օրենսգրքի Ընդհանուր մասով
342	Ակնհայտ անօրինական հրամանը կամ կարգադրությունը չկատարելը. • **բացառում է քրեական պատասխանատվությունը** • բացառում է քրեական պատասխանատվությունը, եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի ընդհանուր մասով • առաջացնում է քրեական պատասխանատվություն միայն, եթե հատկապես նախատեսված է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի Հատուկ մասով • չի բացառում քրեական պատասխանատվությունը
343	Նշվածներից ո՞րն է հատուկ սուբյեկտով հանցագործություն. • ինքնիրավչությունը • պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանությունը • **հիվանդին օգնություն ցույց չտալը** • իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելը
344	Տուգանքի չափը դատարանը որոշում է. • ղեկավարվելով բացառապես իր ներքին համոզմամբ • հաշվի առնելով հանցագործության ծանրությունը, ինչպես նաև՝ մեղադրյալի անձը բնութագրող հանգամանքները • հաշվի առնելով հանցագործության ծանրությունը, ինչպես նաև՝ տուժողին պատճառված վնասի չափը • **հաշվի առնելով կատարված հանցագործության ծանրությունը և դատապարտվողի գույքային դրությունը**

345	ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի համաձայն վաշխառությունը, դա. • պարտք տրված դրամի կամ տեսակային հատկանիշով որոշվող գույքի համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի եռապատիկը գերազանցող չափով տոկոսներ ստանալը, ինչպես նաև անձի անօգնական վիճակից օգտվելով անհիմն հարստացումը • պարտք տրված դրամի կամ տեսակային հատկանիշներով որոշվող գույքի համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքը գերազանցող չափով տոկոսներ ստանալը • անձի հետ նրա համար ձեռնտու պայմաններում այնպիսի գործարք կատարելը, որից օգտվել է մյուս կողմը **• պարտք տրված դրամի կամ տեսակային հատկանիշով որոշվող գույքի համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը գերազանցող չափով տոկոսներ ստանալը, ինչպես նաև անձի հետ նրա համար ծայրահեղ ոչ ձեռնտու պայմաններում այլ գործարք կատարելը, որից օգտվել է մյուս կողմը**
346	Արարքը համարվում է առանց մեղքի կատարված նաև այն դեպքում, եթե. • անձը չի նախատեսել իր գործողության (անգործության)՝ հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, չի ցանկացել դրանց առաջացումը, բայց ծայրահեղ պայմաններին կամ նյարդահոգեկան ծանրաբեռնվածությանն իր հոգեֆիզիոլոգիական հատկությունների անհամապատասխանության հետևանքով չէր կարող կանխել դրանց առաջացումը • անձը ցանկացել է իր գործողության (անգործության)՝ հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, չի նախատեսել դրանց առաջացումը, բայց ծայրահեղ պայմաններին կամ նյարդահոգեկան ծանրաբեռնվածությանն իր հոգեֆիզիոլոգիական հատկությունների անհամապատասխանության հետևանքով չէր կարող կանխել դրանց առաջացումը • անձը գիտակցել և նախատեսել է իր գործողության (անգործության)՝ հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, չի ցանկացել դրանց առաջացումը, այդուհանդերձ ծայրահեղ պայմաններին կամ նյարդահոգեկան ծանրաբեռնվածությանն իր հոգեֆիզիոլոգիական հատկությունների անհամապատասխանության, ինչպես նաև դրանց նկատմամբ անտարբերության հետևանքով չէր կարող կանխել դրանց առաջացումը **• անձը նախատեսել է իր գործողության (անգործության)՝ հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, չի ցանկացել դրանց առաջացումը, բայց ծայրահեղ պայմաններին կամ նյարդահոգեկան**

	ծանրաբեռնվածությանն իր հոգեֆիզիոլոգիական հատկությունների անհամապատասխանության հետևանքով չէր կարող կանխել դրանց առաջացումը
347	Հանցանքը համարվում է դիտավարությամբ կատարված. • եթե օրենքն ավելի խիստ պատասխանատվություն է նախատեսում անզգուշությամբ ծանր հետևանքներ առաջացրած դիտավորյալ հանցագործության համար, ապա անձն այդ հետևանքների համար պատասխանատվություն է կրում միայն այն դեպքում, եթե նա նախատեսել է իր գործողության (անգործության)՝ հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, սակայն առանց բավարար հիմքերի՝ ինքնավստահորեն հույս է ունեցել, որ դրանք կկանխվեն, կամ չի նախատեսել իր գործողության (անգործության)՝ հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, թեև տվյալ իրադրությունում պարտավոր էր և կարող էր նախատեսել դրանք • եթե անձը գիտակցել է իր գործողության (անգործության)՝ հանրության համար վտանգավոր բնույթը, նախատեսել է հանրության համար դրա վտանգավոր հետևանքները և ցանկացել է դրանց վրա հասնելը • եթե անձը գիտակցել է իր գործողության (անգործության)՝ հանրության համար վտանգավոր բնույթը, նախատեսել է հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, չի ցանկացել այդ հետևանքները, բայց գիտակցաբար թույլ է տվել դրանք • **վերոնշյալ բոլոր դեպքերում**

348	Հանցանքը համարվում է անզգուշությամբ կատարված. • **եթե անձը նախատեսել է իր գործողության (անգործության)՝ հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, սակայն առանց բավարար հիմքերի՝ ինքնավստահորեն հույս է ունեցել, որ դրանք կկանխվեն, կամ եթե անձը չի նախատեսել իր գործողության (անգործության)՝ հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, թեև տվյալ իրադրությունում պարտավոր էր և կարող էր նախատեսել դրանք** • եթե օրենքն ավարտված հանցագործության համար քրեական պատասխանատվությունը չի կապում հանցավոր արարքի որոշակի հետևանքների առաջացման հետ, հանցանքը համարվում է անզգուշությամբ կատարված, եթե դա կատարող անձը գիտակցել է իր արարքի՝ հանրության համար վտանգավոր բնույթը և ցանկացել է կատարել դա • եթե օրենքն ավելի խիստ պատասխանատվություն է նախատեսում անզգուշությամբ ծանր հետևանքներ առաջացրած դիտավորյալ հանցագործության համար, ապա անձն այդ հետևանքների համար պատասխանատվություն է կրում միայն այն դեպքում, եթե նա նախատեսել է իր գործողության (անգործության)՝ հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, սակայն առանց բավարար հիմքերի՝ ինքնավստահորեն հույս է ունեցել, որ դրանք կկանխվեն, կամ չի նախատեսել իր գործողության (անգործության)՝ հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, թեև տվյալ իրադրությունում պարտավոր էր և կարող էր նախատեսել դրանք • վերոնշյալ ոչ մի դեպքում
349	Մինչև դատական քննությունը կալանքի տակ գտնվող անձի նկատմամբ տուգանքի ձևով պատիժ նշանակելիս. • **դատարանը, հաշվի առնելով կալանքի տակ պահելու ժամկետը, մեղմացնում է նշանակված պատիժը կամ լրիվ ազատում պատիժը կրելուց** • դատարանը հաշվակցում է պատիժները՝ կալանքի տակ գտնվելու մեկ օրը հաշվակցելով քսան նվազագույն աշխատավարձի դիմաց • դատարանը հաշվակցում է պատիժները՝ կալանքի տակ գտնվելու մեկ օրը հաշվակցելով տասը նվազագույն աշխատավարձի դիմաց • կալանքի տակ պահելու ժամկետը հաշվի չի առնվում

350	Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում. • **հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները** • հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը, հանցավորի անձը բնութագրող տվյալները, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքները • հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը, հանցավորի անձը բնութագրող տվյալները, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքները, ինչպես նաև տուժողին պատճառված վնասը հատուցած լինելու հանգամանքը • հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը, հանցավորի անձը բնութագրող տվյալները, ինչպես նաև տուժողին պատճառված վնասը հատուցած լինելու հանգամանքը
351	Նշվածներից ո՞րը հատուկ սուբյեկտով հանցագործություն չէ. • բռնաբարությունը • մոր կողմից նորածին երեխայի սպանությունը • **ակնհայտ հղի կնոջ սպանությունը** • պետական դավաճանությունը
352	Նշվածներից ո՞ր դեպքում է պատիժը պայմանականորեն չկիրառելու վերացման հարցը լուծում դատարանը. • փորձաշրջանի ընթացքում միայն անզգույշ հանցանք կատարելու դեպքում • փորձաշրջանի ընթացքում միայն ոչ մեծ ծանրության հանցանք կատարելու դեպքում • փորձաշրջանի ընթացքում դատապարտյալի կողմից պատիժը պայմանականորեն չկիրառելիս իր վրա դրված պարտականությունները կատարելուց չարամտորեն խուսափելու դեպքում՝ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի միջնորդությամբ • **փորձաշրջանի ընթացքում դատապարտյալի կողմից պատիժը պայմանականորեն չկիրառելիս իր վրա դրված պարտականությունները կատարելուց չարամտորեն խուսափելու դեպքում՝ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի միջնորդությամբ, ինչպես նաև անզգույշ կամ ոչ մեծ ծանրության դիտավորյալ հանցանք կատարելու դեպքում**
353	Քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները հաշվարկվում են. • դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից • դատավճիռը կայացնելու պահից

	• **հանցանքն ավարտված համարելու պահից** • դատվածության մարման պահից
354	Եթե անձը պատիժը կրելու ընթացքում հիվանդացել է հոգեկան խանգարմամբ, որը նրան զրկել է իր գործողությունների (անգործության) փաստական բնույթն ու նշանակությունը գիտակցելու կամ դրանք ղեկավարելու հնարավորությունից, ապա. • **դատարանը նրան ազատում է պատիժը կրելուց** • դատարանը կարող է նրան ազատել պատիժը կրելուց • դատարանը հետաձգում է պատժի կրումը և նշանակում է հարկադիր բուժում • դատարանը կարող է հետաձգել պատժի կրումը և նշանակել հարկադիր բուժում
355	Եթե հղի կանանց կամ մինչև երեք տարեկան երեխա ունեցող անձանց պատժի կրումը հետաձգելու դեպքում դատապարտյալը հրաժարվում է երեխայից կամ նրան հանձնել է մանկատուն կամ խուսափում է երեխային խնամելուց և դաստիարակելուց, որի մասին գրավոր նախազգուշացվել է, ապա. • **դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի միջնորդությամբ դատարանը կարող է դատապարտյալին ուղարկել դատավճռով նշանակված պատիժը կրելու** • դատարանը դատապարտյալին ուղարկում է դատավճռով նշանակված պատիժը կրելու • դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի միջնորդությամբ դատարանը դատապարտյալին ուղարկում է դատավճռով նշանակված պատիժը կրելու • ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության դեպքում դատարանը կարող է, իսկ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության դեպքում դատապարտյալին ուղարկում է դատավճռով նշանակված պատիժը կրելու
356	Անչափահասների նկատմամբ չի կարող նշանակվել. • որոշակի ժամկետով ազատազրկում • **գույքի բռնագրավում** • կալանք • հանրային աշխատանքներ
357	Անչափահասների նկատմամբ տուգանք. • **կիրառվում է անչափահասի ինքնուրույն վաստակի կամ այնպիսի գույքի առկայության դեպքում, որի վրա կարող է տարածվել բռնագանձում** • կիրառվում է անչափահասի կամ նրա ծնողների, կամ խնամակալի մոտ այնպիսի գույքի առկայության դեպքում, որի վրա կարող է տարածվել բռնագանձում • կիրառվում է նրա ծնողների կամ խնամակալի մոտ այնպիսի գույքի

	առկայության դեպքում, որի վրա կարող է տարածվել բռնագանձում • չի կիրառվում
358	Կալանքը անչափահասի նկատմամբ. • չի կարող կիրառվել • **չի կարող կիրառվել, եթե դատավճիռը կայացնելու պահին չի լրացել նրա տասնվեց տարին** • չի կարող կիրառվել, եթե հանցանքը կատարելու պահին չի լրացել նրա տասնվեց տարին • կարող է կիրառվել՝ անկախ տարիքից
359	Որպես դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց՝ ժամանցի ազատության սահմանափակումը և անչափահասի վարքագծի նկատմամբ հատուկ պահանջների սահմանումը չի կարող արտահայտվել. • որոշակի վայրեր այցելելու արգելքի ձևով • ժամանցի որոշակի ձևերի, այդ թվում՝ մեխանիկական տրանսպորտային միջոցներ վարելու հետ կապված արգելքի ձևով • առանց տեղական ինքնակառավարման մարմնի համաձայնության այլ վայրեր ուղևորվելու իրավունքի սահմանափակում • **որոշակի անձանց հետ շփվելու արգելքի ձևով**
360	Բժշկական բնույթի հարկադրանքի միջոց նշանակելիս դատարանը հաշվի է առնում. • **անձի հոգեկան հիվանդությունը, նրա կատարած արարքի բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը** • անձի հոգեկան հիվանդությունը, նրա կատարած արարքի բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը, հանցավորի անձը բնութագրող տվյալները, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքները • անձի հոգեկան հիվանդությունը, նրա կատարած արարքի բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը, ինչպես նաև ուշադրության արժանի այլ հանգամանքներ • անձի կատարած արարքի բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը, նրա անձը բնութագրող տվյալները, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքները

361	Որքա՞ն է մեղադրական դատավճռի վաղեմության ժամկետը դիտավորյալ հանցագործության համար դատապարտված լինելու դեպքում, եթե այդ հանցագործության համար նախատեսված է ազատազրկում՝ 1-3 տարի ժամկետով. • 2 տարի • **5 տարի** • 10 տարի • 15 տարի
362	Հանցանք կատարած անձին բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցմամբ առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելու հանցագործության (քրեական օրենսգրքի 115-րդ հոդված) սուբյեկտ են. • միայն դրա համար հատկապես լիազորված անձինք • **դրա համար հատկապես լիազորված անձինք, ինչպես նաև տուժողը և այլ անձինք** • միայն դրա համար հատկապես լիազորված անձինք և տուժողը • միայն տուժողը
363	Անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում են համարվում. • **դիտավորյալ այն գործողությունները, որոնք, պաշտպանվողի համար ակնհայտ, չեն համապատասխանում ոտնձգության բնույթին և վտանգավորությանը** • ուղղակի դիտավարությամբ կատարված այն գործողությունները, որոնք, պաշտպանվողի համար ակնհայտ, չեն համապատասխանում ոտնձգության բնույթին և վտանգավորությանը • անզգուշությամբ կատարված այն գործողությունները, որոնք, պաշտպանվողի համար ակնհայտ են, որ չեն համապատասխանում ոտնձգության բնույթին ու վտանգավորության աստիճանին • ինքնավստահությամբ կատարված այն գործողությունները, որոնք, պաշտպանվողի համար ակնհայտ, չեն համապատասխանում ոտնձգության բնույթին ու վտանգավորությանը
364	Այլ անձին մարդու իմունային անբավարարության վիրուսի հարուցիչով վարակելու ակնհայտ վտանգի ենթարկելը. • **ավարտված հանցագործություն է** • հանցագործության նախապատրաստում է • հանցափորձ է • հանցագործություն չէ
365	Եթե հանցանքների համակցությունն ընդգրկում է միայն միջին ծանրության և ոչ մեծ ծանրության հանցանքներ, ապա վերջնական պատիժը նշանակվում է. • **պատիժները լրիվ կամ մասնակիորեն գումարելու միջոցով** • նվազ խիստ պատիժն ավելի խիստ պատժով կլանելու կամ պատիժները լրիվ կամ մասնակիորեն գումարելու միջոցով

	• նվազ խիստ պատիժն ավելի խիստ պատժով կլանելու կամ պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով • նվազ խիստ պատիժն ավելի խիստ պատժով կլանելու կամ պատիժները լրիվ գումարելու միջոցով
366	Ա-ն վիճելով իր ընկերուհու հետ, որը աշխատում է ինքնաթիռում ուղեկցորդուհի զանգահարում է օդանավակայան և հայտնում, որ ինքնաթիռում, որի ուղղությունն է Երևան-Մոսկվա տեղադրված է ռումբ, որը կաշխատի թռիչքից 30 րոպե անց: Դրա հետ կապված թռիչքը հետաձգվում է, իսկ ուղևորները դուրս են բերվում ինքնաթիռից: Ստուգման արդյունքում պարզվում է, որ այդ տեղեկությունը սուտ է: Որակեք Ա-ի արարքը. • հանցագործության մասին սուտ հաղորդում տալը • **ահաբեկչության մասին սուտ հաղորդում տալը** • հանցակազմ չկա • օդանավի թռիչքի կանոնները խախտելը, որը քաղաքացիներին պատճառել է անհանգստություն
367	Հիվանդին օգնություն ցույց չտալու համար քրեական պատասխանատվության է ենթակա. • **միայն այն անձը, ով պարտավոր էր հիվանդին օգնություն ցույց տալ** • հիվանդին բուժող բժիշկը • այն անձը, ով օգնություն ցույց տալու իրական հնարավորություն է ունեցել կամ ինքն է հիվանդին դրել կյանքի կամ առողջության համար վտանգավոր վիճակում • այն անձը, ով օգնություն ցույց տալու իրական հնարավորություն է ունեցել
368	Ա-ն ազատվելով քրեակատարողական հիմնարկից ստեղծում է չորս անձից կազմված զինված խումբ քաղաքացիների և կազմակերպությունների վրա հարձակվելու նպատակով: Երկու տարվա ընթացքում նրանք կատարել են հինգ հարձակում քաղաքացիների բնակարանների վրա զույք և դրամական միջոցներ հափշտակելու նպատակով, իսկ երկու անգամ ինկանսացիայի աշխատակիցների վրա: Բնակարաններ մուտք գործելը նրանք իրականացրել են ոստիկանության աշխատակցի համազգեստով: Ինկանսացիայի աշխատակիցների վրա հարձակվելու ժամանակ սպանվել է աշխատակիցներից մեկը, իսկ երկուսի առողջությանը պատճառվել է ծանր վնաս: Որակեք արարքը. • բանդիտիզմ • հանցավոր համագործակցություն ստեղծելը կամ հանցավոր համագործակցությանը մասնակցելը և սպանություն, որը զուգորդվել է շահադիտական դրդումներով, պատվերով, ինչպես նաև շորթմամբ, ավազակությամբ կամ բանդիտիզմով • **բանդիտիզմ, բնակարան ապօրինի մուտք գործելով ավազակություն և սպանություն, որը զուգորդվել է շահադիտական դրդումներով, պատվերով, ինչպես նաև շորթմամբ, ավազակությամբ կամ բանդիտիզմով**

	• բանդիտիզմ և սպանություն, որը զուգորդվել է՝ շահադիտական դրդումներով, պատվերով, ինչպես նաև շորթմամբ, ավազակությամբ կամ բանդիտիզմով
369	Դատարանի վճռով 28 ամյա Ա-ից հօգուտ նրա հիվանդ ծնողի որոշվել է բռնագանձել ալիմենտ, սակայն Ա-ն դատարանի վճիռը մեկ տարի է չի կատարում պատճառաբանելով, որ երբ ինքը անչափահաս է եղել, հայրը նրան չի պահել, զբաղվել է հարբեցողությամբ, մշտապես փոխել է բնակության վայրը, որպեսզի ընտանիքին օգնություն ցույց չտա և այլն: Որակեք Ա-ի արարքը. • հանցակազմ չկա • դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռ, դատավճիռը կամ այլ դատական ակտը չկատարելը • **զավակի կողմից անաշխատունակ ծնողին պահելուց չարամտորեն խուսափելը** • թեև Ա-ի արարքը պարունակում է հանցակազմի հատկանիշներ, սակայն առկա են արարքի հանցավորությունը բացառող հանգամանքներ
370	Եթե անձը միջին ծանրության հանցագործության համար դատապարտվել է չորս տարի ժամկետով ազատազրկման, ապա նրա դատվածությունը կմարվի պատիժը կրելուց. • 1 տարի անցնելուց հետո • 2 տարի անցնելուց հետո • **3 տարի անցնելուց հետո** • 4 տարի անցնելուց հետո
371	Ա-ն առանց պետական գրանցման ապօրինաբար զբաղվել է մասնավոր բժշկական գործունեությամբ, որի ժամանակ տուժողի առողջությանը անզգուշությամբ պատճառել է ծանր վնաս: Խնդրվում է որակել Ա-ի գործողությունները. • Ա-ի արարքում առկա է տուժողի առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելու հանցակազմ • **Ա-ի արարքում առկա է մասնավոր բժշկական գործունեությամբ ապօրինաբար զբաղվելու հանցակազմ** • Ա-ի արարքում առկա է անզգուշությամբ տուժողի առողջությանը ծանր վնաս պատճառելու հանցակազմ

	• Ա-ի արարքում առկա են ինքնիրավչության և անզգուշությամբ տուժողի առողջությանը ծանր վնաս պատճառելու հանցակազմեր
372	Յուրաքանչյուր անգամ, երբ 8 ամյա աղջնակը դպրոցում ստանում է անբավարար գնահատական նրա հայրը՝ Ա-ն երեխայի նկատմամբ կիրառում է դաժան պատիժներ՝ ծեծի է ենթարկում, սառը նկուղում փակի տակ է պահում, արգելում է տանից դուրս գալ, հրաժարվում է կերակրել և այլն: Չդիմանալով երեխան տանից փախնում է և դիմում ոստիկանություն: Որակեք Ա-ի արարքը. • հանցակազմ չկա • ծեծ և խոշտանգում • **երեխային դաստիարակելու պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որը զուգորդվել է դաժան վերաբերմունքով** • խնամակալի կամ հոգաբարձուի իրավունքները չարաշահելը
373	Ոչ մի տեղ չաշխատած Ա-ն իր հինգ տարեկան տղայի հետ մշտապես քաղաքից-քաղաք տեղափոխվելով տղային հարկադրում է մուրացկանություն կատարել: Օրվա հավաքված գումարը ծախսում է ալկոհոլային խմիչքի օգտագործման վրա՝ տղային թողնելով ընդամենը հացի գումար: Ձերբակալման ժամանակ Ա-ն հայտարարում է, որ չի կարողացել գտնել աշխատանք դրա համար հարկադրված է եղել տեղափոխվել վայրից վայր և երեխայի հետ միասին մուրացկանություն անել: Որակեք Ա-ի արարքը. • հանցակազմ չկա • հարբեցողությամբ զբաղվելը • երեխային դաստիարակությամբ զբաղվելու պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը • **երեխային ոգելից խմիչքների օգտագործմանը, ուժեղ ներգործող կամ այլ թմրեցնող նյութերի ոչ բժշկական օգտագործմանը, թափառաշրջիկությանը ներգրավելը կամ մուրացկանության հետ կապված գործողություններ կատարելուն ներգրավելը, որը կատարվել է ծնողի կողմից**
374	Մարդու անձնական կամ ընտանեկան գաղտնիք համարվող տեղեկություններն առանց նրա համաձայնության օգտագործելը կամ հրապարակային ելույթներով, հրապարակայնորեն ցուցադրվող ստեղծագործություններով կամ լրատվության միջոցներով այդպիսի տեղեկություններ տարածելը կամ հավաքելը կամ պահելը. • բոլոր դեպքերում հանցագործություն է • հանցագործություն չէ • հանցագործություն է միայն, եթե կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով

	• **հանցագործություն է միայն, եթե այդ գործողությունները նախատեսված չեն օրենքով**
375	Իմանալով, որ հարևանությամբ ապրող Ա-ն չի համարվում նրան դաստիարակող անձանց երեխան, Բ-ն նրա 18 տարին լրանալու օրը ցանկանալով նրան ցավ պատճառել պատմում է նրա որդեգրման պատմությունը: Երբ ասվածը հաստատում են որդեգրողները Ա-ն իրեն զգում է բազմաբնակարան շենքի 8-րդ հարկից: Որակեք Բ-ի արարքը. • ինքնասպանության հասցնել • արարքում հանցակազմ չկա • **որդեգրման գաղտնիքը հրապարակելը կամ որդեգրման համաձայնություն տալուն հակելը կամ հարկադրելը** • անզգուշությամբ մահ պատճառելը
376	Բնակարանի անձեռնմխելիությունը խախտելը քրեական օրենսգրքի 147 հոդվածում սահմանվում է հետևյալ կերպ. • **մարդու կամքին հակառակ նրա բնակարան ապօրինի մուտք գործելն է** • առանց դատարանի որոշման մարդու բնակարան մուտք գործելն է • առանց իրավասու մարմնի որոշման մարդու բնակարան մուտք գործելն է • բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով մարդու բնակարան մուտք գործելն է
377	ՀՀ ԱՆ Վարդաշեն քրեակատարողական հիմնարկի աշխատակիցներ՝ Գ-ն, Ա-ն և Լ-ն քրեակատարողական հիմնարկի կալանավոր, դատապարտյալ Ռ-ին տարել են Ա-ի աշխատասենյակ, որտեղ կշտամբել են նրան, թե երկարատև տեսակցության ժամկետը երկարացնելու հարցով ինչու է դիմել ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության պետին, այլ ոչ թե իրենց, որից հետո բռնության և հատուկ միջոցների գործադրմամբ՝ ռետինե մահակներով ծեծի են ենթարկել Ռ-ին՝ նրան հասցնելով ձախ աչքի և ոտքերի վնասվածքներ, այսինքն՝ միջին ծանրության վնաս: Որակեք Գ-ի, Ա-ի և Լ-ի արարքները. • դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը խմբի կողմից • պաշտոնեական դիրքը չարաշահելը • **պաշտոնեական լիազորությունները սահմանազանցելը** • խոշտանգում

378	Ա-ն ազատվելով ազատազրկման վայրից իրենց շենքի բակում հավաքում է երեխաներին և պատմելով իր հանցավոր անցյալի մասին համոզում է նրանց, որ երիտասարդ տարիները ազատազրկման վայրում անցկացնելուց հետո միայն կարող ես քեզ իսկական տղամարդ զգալ: Ա-ն ենթակա է արդյոք քրեական պատասխանատվության. • **ոչ, քանի որ նրա արարքում հանցակազմ չկա** • այո, անչափահասին հանցանքի կատարմանը ներգրավելու համար • այո, անչափահասին հանցանքի կատարման դրդելու համար • այո, անչափահասների շրջանում հանցանքի կատարման պրոպագանդա անցկացնելու համար
379	Ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծել չի համարվում. • հանրաքվեի կամ ընտրությունների ընթացքում ձայներն ակնհայտ սխալ հաշվելը • ընտրությունների արդյունքները, այդ թվում՝ արձանագրությունները, դրանց պատճենները, այլ ընտրական փաստաթղթերը եւ դրանց քաղվածքները ակնհայտ սխալ տվյալներով հաստատելը • քվեատուփ հափշտակելը • **քաղաքացու ընտրական կամ հանրաքվեի իրավունքի ազատ իրականացմանը խոչընդոտելը**
380	Կուսակցության (կուսակցությունների դաշինքի) վերաբերյալ զրպարտչական տեղեկություններ տարածելը հանցագործություն է միայն. • **եթե այն կատարվել է ընտրողներին ապակողմնորոշելու նպատակով ընտրությունների անցկացման ընթացքում** • եթե այն կատարվել է ընտրողներին ապակողմնորոշելու նպատակով • եթե այն կատարվել է ընտրություններն ավարտվելուց հետո • եթե այն կատարվել է ընտրությունների անցկացման ընթացքում
381	Գործադուլի մասնակցելուն կամ օրինական գործադուլի մասնակցելուց հրաժարվելուն հարկադրելը հանցագործություն է. • բոլոր դեպքերում • **եթե դա կատարվել է բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով** • եթե դա կատարվել է աշխատանքից ազատելու սպառնալիքով • եթե դա կատարվել է օրենքով չնախատեսված միջոցների կիրառմամբ
382	Քրեական օրենսգրքի 156-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունը (հղի կնոջը կամ մինչև երեք տարեկան երեխա ունեցող անձին աշխատանքի ընդունելուց անհիմն հրաժարվելը կամ աշխատանքից անհիմն ազատելը) ուղղված է. • **մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների ու ազատությունների դեմ** • տնտեսական գործունեության դեմ

	• պետական ծառայության դեմ • կառավարման կարգի դեմ
383	Ստորև բերված ո՞ր դեպքում կրոնական կամ հասարակական միավորում կազմելը կամ ղեկավարելը հանցագործություն չէ. • եթե այդ կազմակերպության գործունեությունը զուգորդված է անձանց առողջությանը վնաս պատճառելով • եթե այդ կազմակերպության գործունեությունը զուգորդված է անձանց իրավունքների դեմ ոտնձգություններով • եթե այդ կազմակերպության գործունեությունը զուգորդված է անձանց իրենց քաղաքացիական պարտականություններից հրաժարվելուն դրդելով • **եթե այդ կազմակերպության գործունեությունը զուգորդված է անձանց իրենց համոզմունքները կամ դավանանքը փոխելուն դրդելով**
384	Ա-ն դիմում է դատախազություն քրեական պատասխանատվության ենթարկել Բ-ին, քանի որ վերջինս իր հրատարակած 400 էջանոց մենագրությունում վերցրել է Բ-ի հոդվածներից մեկում արտահայտած գաղափարները առանց նրա հեղինակության վրա հղում կատարելու և առանց նրա համաձայնության: Որակեք Ա-ի արարքը. • **հանցակազմ չկա** • հեղինակային և հարակից իրավունքները խախտելը • արտոնագրային իրավունքը խախտելը • գրագողություն
385	Ստորև նկարագրված գործողություններից ո՞րը քրեական օրենսգրքի 169-րդ հոդվածով նախատեսված հանցագործություն (որդեգրման գաղտնիքը հրապարակելը կամ որդեգրման համաձայնություն տալուն հակելը կամ հարկադրելը) չի համարվի. • որդեգրման գաղտնիքը որդեգրողի կամքին հակառակ հրապարակելն այն անձի կողմից, ով որդեգրման փաստը պարտավոր էր պահպանել որպես ծառայողական կամ մասնագիտական գաղտնիք • որդեգրման գաղտնիքը որդեգրողի կամքին հակառակ շահադիտական կամ այլ ստոր դրդումներով հրապարակելը • որդեգրման նպատակով որդեգրվողի օրինական ներկայացուցչի կամքին հակառակ նրան որդեգրման համաձայնություն տալուն շահադիտական կամ այլ ստոր դրդումներով հակելը կամ հարկադրելը • **որդեգրվողի օրինական ներկայացուցչի կողմից շահադիտական կամ այլ ստոր դրդումներով որդեգրման համաձայնություն տալը**

386	Երեխային դաստիարակելու պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար քրեական պատասխանատվության կարող են ենթարկվել. • միայն ծնողը կամ այն անձը, ում վրա դրված է երեխայի դաստիարակության պարտականությունը • միայն ծնողը կամ մանկավարժը կամ ուսումնական, բուժական կամ դաստիարակչական հաստատության այլ աշխատողները **• միայն ծնողը կամ այն անձը, ում վրա դրված է երեխայի դաստիարակության պարտականություն, կամ մանկավարժը կամ ուսումնական, բուժական կամ դաստիարակչական հաստատության այլ աշխատողները** • միայն ծնողը
387	Սուտ ցուցմունք տալու համար քրեական պատասխանատվությունը վրա է հասնում. • նախաքննության և դատական քննության ընթացքում տրված ցուցմունքների միջև տարբերության դեպքում • նախաքննության ընթացքում նույն վկայի կողմից տարբեր ցուցմունքներ տալու պահից **• նույն վկայի կողմից միևնույն գործով վարույթի ընթացքում տրված ակնհայտ տարբեր ցուցմունքների դեպքում, եթե կա օրինական ուժի մեջ մտած դատավճիռ այդ ցուցմունքների գնահատմամբ** • նույն վկայի կողմից դատական քննության ընթացքում ակնհայտ տարբերվող ցուցմունքներ տալու դեպքում, եթե կա օրինական ուժի մեջ մտած դատավճիռ այդ ցուցմունքների գնահատմամբ
388	Քրեական օրենսգրքի 171-րդ հոդվածով նախատեսված հանցագործության կատարման համար (երեխայի կյանքի անվտանգության ապահովման կամ առողջության պահպանման պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը) քրեական պատասխանատվության կարող է ենթարկվել. • երեխայի ծնողը, ինչպես նաև այն անձը, ում վրա երեխայի կյանքի կամ առողջության պահպանման պարտականությունները դրված են ըստ ծառայության • երեխայի ծնողը, ինչպես նաև այն անձը, ով երեխայի կյանքի կամ առողջության պահպանման պարտականությունները կատարում է հատուկ հանձնարարությամբ • երեխայի ծնողը, ինչպես նաև այն անձը, ով երեխայի կյանքի կամ առողջության պահպանման պարտականությունները ստանձնել է կամավոր **• այն անձը, ում վրա երեխայի կյանքի կամ առողջության պահպանման պարտականությունները դրված են ըստ ծառայության, կամ այն անձը, ով այդ պարտականությունը կատարում է հատուկ հանձնարարությամբ կամ ստանձնել է կամավոր**

389	Քրեական օրենսգրքի 180-րդ հոդվածի (առանձնակի արժեք ունեցող առարկաներ հափշտակելը) իմաստով ո՞ր առարկաները չեն համարվում առանձնակի արժեք ունեցող. • պատմական առանձնակի արժեք ունեցող առարկաները • **գիտական առանձնակի արժեք ունեցող առարկաները** • գեղարվեստական առանձնակի արժեք ունեցող առարկաները • մշակութային առանձնակի արժեք ունեցող առարկաները
390	Ա-ն աշխատելով որպես մեքենավար, վարելով ,ՄՈՒԱԶԵ մակնիշի N1 ինքնաթափը, վայրէջքային տեղամասում բեռնատարը կանգնեցնելուց հետո, անիվները չի թեքել դեպի հանքուղու կողապատը, իսկ վարորդի տեղը թողնելուց առաջ ինքնաարգելակումը միացնելու համար կառավարման վահանակի վրայի հատուկ սեղմակով չի զրոյացրել հիդրավլիկ համակարգի ճնշումը, այսինքն՝ չի ապահովել կանգառի անվտանգությունն ու չի բացառել մեքենայի ինքնաբերաբար շարժումը, որի արդյունքում ինքնաթափն ինքնաբերաբար ընթացել է ցած, առաջամասով ընդհարվել այնտեղ կայանած ,Տոյոտա Լենդ Կրաուզերե մակնիշի ավտոմեքենային, որն էլ առաջ հրվելով վրաերթի է ենթարկել ապարաբարձիչ մեքենայի մեքենավար Գ-ին: Վերջինս ստացած մարմնական վնասվածքներից մահացել է, իսկ ավտոմեքենային պատճառվել է 550.000 ՀՀ դրամի վնաս: Որակեք Ա-ի արարքը. • հանցակազմ չկա • անզգուշությամբ մահ պատճառել և գույքը անզգուշությամբ ոչնչացնելը կամ վնասելը • ճանապարհային երթևեկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը • **ճանապարհային երթևեկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը և գույքը անզգուշությամբ ոչնչացնելը կամ վնասելը**
391	Ս-ն աշխատելով տաքսի ծառայությունում, 2009 թվականի մարտի 21-ի գիշերը՝ ժամը 5-ի սահմաններում, իր վարմանը հանձնված ,ԳԱԶ 31105411Ե մակնիշի ավտոմեքենայով Ա կայարանից Բագրատաշեն գյուղ է տեղափոխել գործով չպարզված չորս ուղևոր կանանց, որոնցից մեկը Այրում կայարանում որպես ուղեվարձ նրան է տվել 10.000 դրամ անվանական արժեքով Ծ-04795926 սերիա-համարի հայկական թղթադրամ, որը չի համապատասխանել պետական ստանդարտներին: Ս-ն, հաջորդ օրը նկատելով, որ թղթադրամը չի համապատասխանում սահմանված ստանդարտներին, 2009 թվականի մարտի 23-ին՝ ժամը 12-ի սահմաններում, նշված թղթադրամը տվել է Ալավերդի քաղաքի բնակիչ Ա-ին, իսկ վերջինս նույն օրը՝ ժամը 17-ի սահմաններում, այդ թղթադրամով փորձել է առևտուր կատարել, որը չի հաջողվել: Որակեք Ս-ի արարքը. • հանցակազմ չկա • **կեղծ փողեր կամ արժեթղթեր պատրաստելը, պահելը կամ իրացնելը**

	• կեղծ փողեր կամ արժեթղթեր պատրաստելու, պահելու կամ իրացնելու փորձ • խարդախություն
392	Խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով սեփականատիրոջը կամ գույքի այլ տիրապետողին խոշոր չափերի վնաս պատճառելը, եթե բացակայում են հափշտակության հատկանիշները. • **քրեական օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված առանձին հանցագործություն է** • հանցագործություն չէ • ընդգրկվում է քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածով (գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը) • ընդգրկվում է քրեական օրենսգրքի 186-րդ հոդվածով (գույքն անզգուշությամբ ոչնչացնելը կամ վնասելը)
393	Որպեսզի ուրիշի գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը քրեական պատասխանատվություն առաջացնի, պարտադիր պայման է. • **այդ արարքով զգալի չափերի վնաս պատճառված լինի** • այդ արարքով խոշոր չափերի վնաս պատճառված լինի • այդ արարքը կատարված լինի հրկիզման, պայթյունի կամ հանրավտանգ այլ եղանակով • այդ արարքի հետևանքով առաջացած լինի պատմական, գիտական կամ մշակութային առանձնակի արժեք ունեցող առարկաների ոչնչացում կամ վնասում
394	Որպեսզի ուրիշի գույքն անզգուշությամբ ոչնչացնելը կամ վնասելը քրեական պատասխանատվություն առաջացնի, պարտադիր պայման է. • որպեսզի այդ արարքով զգալի չափերի վնաս պատճառված լինի • **որպեսզի այդ արարքով խոշոր չափերի վնաս պատճառված լինի** • որպեսզի այդ արարքը կատարված լինի կրակի կամ առավել մեծ վտանգի այլ աղբյուրի հետ անզգույշ վերաբերվելու հետևանքով կամ առանձնապես խոշոր չափերի վնաս պատճառած լինի • որպեսզի այդ արարքի հետևանքով առաջացած լինի պատմական, գիտական կամ մշակութային առանձնակի արժեք ունեցող առարկաների ոչնչացում կամ վնասում

395	Օրինական ձեռնարկատիրական և այլ տնտեսական գործունեությանը խոչընդոտելու համար քրեական պատասխանատվության կարող է ենթարկվել. • ցանկացած անձ • **միայն պաշտոնատար անձը** • միայն քաղաքացիական ծառայողը • ցանկացած պետական ծառայող
396	Հարկային տեսչությունում հաշվառված համապատասխանաբար ,Նե, ,Մե ու ,Թե ՍՊ ընկերությունների տնօրեն Մ-ն իր ընկեր Գ-ի միջոցով ծանոթացել է հարկային տեսչությունում հաշվառված ,Ջե ԲԲ ընկերության տնօրեն Ա-ի հետ և վերջինիս կեղծ հաշիվ-ապրանքագրեր տրամադրելու առաջարկի շուրջ ձեռք բերելով պայմանավորվածություն՝ առանց ապրանքների մատակարարման՝ գումարի 8,5 տոկոսի վճարման դիմաց, իր երեք ՍՊ ընկերությունների անունից կազմել ու Գ-ի միջոցով ,Ջե ԲԲ ընկերությանն է տրամադրել թվով 16, ընդհանուր առմամբ 74.993.718 ՀՀ դրամի կեղծ հաշիվ-ապրանքագրեր՝ ,Նե ՍՊԸ-ով՝ 71.154.000 ՀՀ դրամի, ,Մե ՍՊԸ-ով՝ 2.319.000 ՀՀ դրամի, ,Թե ՍՊԸ-ով՝ 1.520.718 ՀՀ դրամի: Որակեք Մ-ի արարքը. • հարկեր վճարելուց խուսափելը, որը կատարվել է առանձնապես խոշոր չափերով • ապօրինի ձեռնարկատիրություն • **կեղծ ձեռնարկատիրություն** • կեղծ հաշիվ ապրանքագրեր իրացնելը
397	Վարկը ոչ նպատակային օգտագործելը հանցագործություն է. • բոլոր դեպքերում • եթե վարկը տրված է պետության կողմից • եթե վարկը տրված է պետության կամ միջազգային կազմակերպության կամ միջազգային պայմանագրով նախատեսված ծրագրի կողմից • **եթե վարկը տրված է պետության կամ միջազգային կազմակերպության կամ միջազգային պայմանագրով նախատեսված ծրագրի կողմից և վարկը ոչ նպատակային օգտագործելը խոշոր վնաս է պատճառել անձանց**

398	Օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ կարող է նշանակվել, եթե. • **հանցանքի շարժառիթների ու նպատակների, հանցավորի դերի, հանցանքը կատարելիս ու դրանից հետո նրա վարքագծի և այլ հանգամանքների հետ կապված բացառիկ հանգամանքների առկայության դեպքում, որոնք էականորեն նվազեցնում են հանցանքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը, ինչպես նաև խմբակային հանցագործության մասնակցի կողմից խմբի կատարած հանցանքը բացահայտելուն ակտիվորեն աջակցելը** • հանցանքի շարժառիթների ու նպատակների, հանցանքը կատարելիս ու դրանից հետո նրա վարքագծի և այլ հանգամանքների հետ կապված բացառիկ հանգամանքների առկայության դեպքում, որոնք էականորեն նվազեցնում են հանցանք կատար անձի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը, ինչպես նաև խմբակային հանցագործության մասնակցի կողմից խմբի կատարած հանցանքը բացահայտելուն ակտիվորեն աջակցելը • հանցանքի շարժառիթների, հանցավորի դերի, հանցանքը կատարելիս ու դրանից հետո նրա վարքագծի և այլ հանգամանքների հետ կապված բացառիկ հանգամանքների առկայության դեպքում, որոնք էականորեն նվազեցնում են հանցանք կատարած անձի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը, ինչպես նաև խմբակային հանցագործության մասնակցի կողմից խմբի կատարած հանցանքը բացահայտելուն ակտիվորեն աջակցելը, պատճառված վնասը հատուցելը կամ այլ կերպ հարթելը • հանցանքի շարժառիթների ու նպատակների, հանցավորի դերի, հանցանքը կատարելիս ու դրանից հետո նրա վարքագծի և այլ հանգամանքների հետ կապված բացառիկ հանգամանքների առկայության դեպքում, որոնք էականորեն նվազեցնում են հանցանքի, այն կատարած անձի՝ հանրության համար վտանգավորության բնույթն ու աստիճանը, ինչպես նաև խմբակային հանցագործության մասնակցի կողմից խմբի կատարած հանցանքը բացահայտելուն ակտիվորեն աջակցելը, հանցագործությամբ պատճառած վնասը հատուցելը կամ այլ կերպ հարթելը
399	Գույքի բռնագրավումը պարտադիր է, բացառությամբ. • **դատապարտյալի կամ նրա խնամքի տակ գտնվող անձանց համար անհրաժեշտ գույքն այն ցանկին համապատասխան, որը սահմանված է օրենքով** • քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածով նախատեսված մաքսանենգության ճանապարհով Հայաստանի Հանրապետության սահմանով տեղափոխված մաքսանենգության առարկաների • ահաբեկչության ֆինանսավորմանն ուղղված գույքի, այդ թվում՝ քրեական օրենսգրքի 217-րդ հոդվածով նախատեսված արարքների ֆինանսավորման նպատակով օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գույքի, ներառյալ՝ այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտների կամ այլ տեսակի օգուտների, այդ արարքների կատարման համար օգտագործված կամ

	օգտագործման համար նախատեսված գործիքների • որևէ բացառություն սահմանված չէ
400	Կալանք պատիժը չի կարող նշանակվել. • **դատավճիռը կայացնելու պահին տասնվեց տարին չլրացած անձանց կամ հղի կանանց կամ խնամքին մինչև ութ տարեկան երեխա ունեցող անձանց նկատմամբ** • զինծառայողների նկատմամբ • դատավճիռը կայացնելու պահին 18 տարին չլրացած անձանց կամ հղի կանանց կամ խնամքին մինչև երեք տարեկան երեխա ունեցող կանանց նկատմամբ • այն անձանց նկատմամբ, ում նկատմամբ կիրառվել է որևէ խափանման միջոց, ինչպես նաև դատավճիռ կայացնելու պահին 18 տարին չլրացած անձանց կամ հղի կանանց կամ խնամքին մինչև երեք տարեկան երեխա ունեցող կանանց նկատմամբ
401	Ս-ն 2007 թվականի դեկտեմբերի 20-ին, ժամը 09.10-ի սահմաններում, ,ԳԳԳԵ տաքսի ծառայության ՎԱԶ 21-07 մակնիշի ավտոմեքենան ոգելից խմիչքների ազդեցության տակ վարելու ժամանակ, փողոցների խաչմերուկում չի ենթարկվել երթևեկությունը կարգավորող, նշված վայրում ծառայողական պարտականություններ կատարող ճանապարհային ոստիկանության տեսուչ Գ-ի օրինական պահանջներին, դուրս գալով ավտոմեքենայից՝ հայհոյանքներ է տվել նրա հասցեին, ձեռքերով ու ոտքերով հարվածելով Գ-ի մարմնի տարբեր մասերին՝ գործադրել է վերջինիս առողջության համար ոչ վտանգավոր բռնություն: Որակեք Ս-ի արարքը. • խուլիգանություն, որը զուգորդվել է իշխանության ներկայացուցչին կամ հասարակական կարգի պահպանության պարտականություններ իրականացնող կամ հասարակական կարգի խախտումը խափանող անձին դիմադրություն ցույց տալով • խուլիգանություն և իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելը • **իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելը** • իշխանության ներկայացուցչի օրինական պահանջները չկատարելը, որը զուգորդվել է նրա նկատմամբ բռնություն գործադրելով

402	Քրեական օրենսգրքի 196-րդ հոդվածով (հրապարակային սակարկությունների անցկացման կարգը չարամտորեն խախտելը) հրապարակային սակարկությունների անցկացման կարգը չարամտորեն խախտելը քրեական պատասխանատվություն է առաջացնում միայն այն դեպքում, եթե. • **դրանով խոշոր վնաս է պատճառվել գույքի սեփականատիրոջը, սակարկություններ կազմակերպողին, գնորդին կամ այլ տնտեսավարող սուբյեկտին** • այդ արարքը կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով • դրանով առանձնապես խոշոր չափի վնաս է պատճառվել գույքի սեփականատիրոջը, սակարկություններ կազմակերպողին, գնորդին կամ այլ տնտեսավարող սուբյեկտին • դրանով էական վնաս է պատճառվել գույքի սեփականատիրոջը, գնորդին կամ պահանջատիրոջը
403	Քրեական օրենսգրքի 197-րդ հոդվածով (ապրանքային նշանն ապօրինի օգտագործելը) քրեական պատասխանատվություն է նախատեսվում. • **ապրանքային նշանը, սպասարկման նշանը, ֆիրմային անվանումն ապօրինի օգտագործելու համար, եթե այդ արարքը խոշոր վնաս է պատճառել** • ապրանքային նշանը, սպասարկման նշանը, ֆիրմային անվանումն ապօրինի օգտագործելու համար, եթե այդ արարքը էական վնաս է պատճառել • ապրանքային նշանը, սպասարկման նշանը, ֆիրմային անվանումն ապօրինի օգտագործելու համար, եթե այդ արարքը զգալի չափերի վնաս է պատճառել • ապրանքային նշանը, սպասարկման նշանը, ֆիրմային անվանումն ապօրինի օգտագործելու, ինչպես նաև ապրանքի աշխարհագրական ծագման վերաբերյալ իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ տարածելու համար, եթե այդ արարքը խոշոր վնաս է պատճառել
404	Քրեական օրենսգրքի 203-րդ հոդվածի իմաստով (կեղծ վճարային փաստաթղթեր պատրաստելը կամ իրացնելը) վճարային փաստաթուղթ չի համարվի. • արժեթուղթը • արժեթուղթ չհամարվող, սակայն գույքային իրավունքների մասին վկայող փաստաթուղթը • գույքային իրավունքներ սահմանող կամ տրամադրող փաստաթուղթը • **Հայաստանի Հանրապետության դրամը**
405	Քրեական օրենսգրքի 204-րդ հոդվածով (չարաշահումը արժեթղթեր թողարկելիս) նախատեսված հանցագործությունը չի կարող դրսևորվել. • **առանց սահմանված կարգով գրանցման արժեթղթեր թողարկելու ձևով** • առանց սահմանված կարգով գրանցման արժեթղթեր թողարկելու և դրանք հրապարակային բաշխելու ձևով • արժեթղթերի գրանցման համար ակնհայտ կեղծ փաստաթղթեր օգտագործելու ձևով

	• արժեթղթերի թողարկման հայտարարագրում ակնհայտ ոչ ստույգ տեղեկատվություն մտցնելու ձևով
406	Թվարկածներից ո՞րը կեղծ ձեռնարկատիրության նպատակ չէ. • վարկեր ստանալը • հարկերից խուսափելը • գերավճարներ առաջացնելը • **փողերի լվացումը**
407	Քրեական օրենսգրքի 211-րդ հոդվածով (ակցիզային դրոշմանիշներով դրոշմավորման կանոնները խախտելը) նախատեսված հանցագործությունը չի կարող դրսևորվել. • ակցիզային դրոշմանիշների մեկից ավելի անգամ օգտագործման հնարավորությունը չբացառող ձևով դրոշմավորված ապրանքներն իրացնելու ձևով • դրոշմավորման ենթակա ապրանքները ոչ այդ արտադրատեսակի դրոշմավորման համար տրամադրված ակցիզային դրոշմանիշներով դրոշմավորված իրացնելու ձևով • որոշակի տարողությամբ տարաների համար տրամադրված դրոշմանիշներով՝ օրենսդրությամբ չնախատեսված այլ տարողություն ունեցող տարաներով (տուփերով) դրոշմավորված ապրանքներն իրացնելու ձևով • **ակցիզային դրոշմանիշներով դրոշմավորման ենթակա չդրոշմավորված կամ չվերադրոշմավորված ապրանքներ իրացնելու ձևով**
408	Առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից իրենց կարգադրիչ կամ այլ լիազորություններն այդ կազմակերպության շահերին հակառակ և իր կամ ուրիշ անձանց օգտին օգտագործելու կամ առավելություններ ձեռք բերելու կամ այլ անձանց վնաս պատճառելու նպատակով օգտագործելը հանցագործություն է միայն, եթե. • **այդ գործողություններով անձանց, կազմակերպությունների կամ պետության իրավունքներին ու օրինական շահերին էական վնաս է պատճառվել** • այդ գործողություններով առևտրային կամ այլ կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին էական վնաս է պատճառվել • այդ գործողությունները ծանր հետևանք են առաջացրել • այդ գործողությունները հանգեցրել են առևտրային կամ այլ կազմակերպության սնանկության

409	Ա-ն աշխատելով որպես քննիչ Վ-ի կողմից խարդախությամբ խոշոր չափերով գումարներ հափշտակելու փաստի առթիվ իր վարույթում քննվող քրեական գործի նախաքննության ընթացքում անձնական դրդումներով Վ-ին քրեական պատասխանատվությունից ազատելու նպատակով 2006 թվականի հոկտեմբեր ամսին քրեական գործում եղած մի շարք փաստաթղթերի բովանդակությունը ենթարկել է փոփոխության՝ դրանցում տեղեկություններ մտցնելով Վ-ի կողմից հանցագործությունների կատարման հանգամանքների, այդ թվում՝ կատարման ժամանակի և հափշտակված գումարի չափի վերաբերյալ, ինչպես նաև կազմել է փաստաթղթեր: Կեղծ տեղեկություններ պարունակող փաստաթղթերը հիմք ընդունելով՝ Ա-ն 10.10.2006 թվականին որոշում է կայացրել քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմությունն անցնելու հիմքով Վ-ի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին, դրանով իսկ հանցագործությունների կատարման մեջ կասկածվող Վ-ին ազատել է քրեական պատասխանատվությունից: Որակեք Ա-ի արարքը. • պաշտոնեական կեղծիք • ապօրինի քրեական պատասխանատվությունից ազատել • պաշտոնեական դիրքի չարաշահում • **պաշտոնեական կեղծիք և ապօրինի քրեական պատասխանատվությունից ազատել**
410	Ակնհայտ հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույք ձեռք բերելը կամ իրացնելը ՀՀ քրեական օրենսգրքի 216-րդ հոդվածով (ակնհայտ հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույք ձեռք բերելը կամ իրացնելը) նախատեսված հանցագործություն է. • բոլոր դեպքերում • **միայն, եթե դա նախապես խոստացված չի եղել** • միայն, եթե դա նախապես խոստացված է եղել • միայն, եթե դա կատարվել է խոշոր չափերով
411	Շենքեր, շինություններ, տրանսպորտի, հաղորդակցության կամ կապի միջոցներ, այլ հաղորդակցության ուղիներ զավթելը կամ դրանք պահելը հանցագործություն է. • բոլոր դեպքերում • **եթե զուգորդված է եղել դրանք ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքով, որը կատարվել է զավթածն ազատելու պայմանով՝ պետությանը, կազմակերպությանը կամ քաղաքացուն որեւէ գործողություն կատարելուն կամ որեւէ գործողություն կատարելուց ձեռնպահ մնալուն հարկադրելու նպատակով** • միայն, եթե զուգորդված է եղել պատանդներ վերցնելով, որը կատարվել է զավթածն ազատելու պայմանով՝ պետությանը, կազմակերպությանը կամ քաղաքացուն որևէ գործողություն կատարելուն կամ որևէ գործողություն կատարելուց ձեռնպահ մնալուն հարկադրելու նպատակով

	• միայն, եթե զուգորդված է եղել զավթածն ազատելու պայմանով պետությանը, կազմակերպությանը կամ քաղաքացուն որևէ գործողություն կատարելուն կամ որևէ գործողություն կատարելուց ձեռնպահ մնալուն հարկադրելու նպատակով
412	Հանցավոր համագործակցություն ստեղծելը կամ հանցավոր համագործակցություն ղեկավարելը. • **հանցագործություն է** • պատասխանատվությունն ու պատիժը խստացնող հանգամանք է • որոշ հանցագործությունների որակյալ հատկանիշ է • հանցակցության ձև է
413	Հանցավոր համագործակցությանը մասնակցելը. • հանցակցության ձև է • պատասխանատվությունն ու պատիժը խստացնող հանգամանք է • որոշ հանցագործությունների որակյալ հատկանիշ է • **հանցագործություն է**
414	Եթե անձի գործողություններն այլ հանցակազմ չեն պարունակում, ապա հանցավոր համագործակցություն ստեղծող անձը ազատվում է այդ արարքի համար քրեական պատասխանատվությունից. • եթե պետական մարմիններին հայտում է իր կողմից հանցավոր համագործակցություն ստեղծելու մասին եւ խափանում է դրա գործունեությունը • **եթե պետական մարմիններին կամովին հայտում է իր կողմից հանցավոր համագործակցություն ստեղծելու մասին եւ նպաստում է դրա գործունեության խափանմանը** • եթե պետական մարմիններին կամովին հայտում է իր կողմից հանցավոր համագործակցություն ստեղծելու մասին • եթե դատաիրավական համակարգի մարմիններին հայտնում է իր կողմից հանցավոր համագործակցություն ստեղծելու մասին
415	Օրենքով չնախատեսված զինված միավորումներին մասնակցելը հանցագործություն է. • **բոլոր դեպքերում** • միայն, եթե առաջացրել է ծանր հետևանքներ • միայն, եթե անձը մասնակցել է այդ միավորումների կողմից կատարված հանցավոր գործողություններին • միայն, եթե էական վնաս է պատճառել

416	Օրենքով սահմանված կարգի խախտմամբ հավաքը դիտավորությամբ կազմակերպելը և անցկացնելը. • հանցագործություն չէ • **հանցագործություն է** • հանցագործություն է, եթե զուգորդվել է այդ հրապարակային միջոցառումը դադարեցնելու վերաբերյալ որոշման պահանջներին չենթարկվելով • հանցագործություն է, եթե զուգորդվել է այդ հրապարակային միջոցառումը դադարեցնելու վերաբերյալ որոշման պահանջներին չենթարկվելու կոչերով
417	Էլեկտրոնային արագացուցիչների շահագործումից հանելու ընթացքում անվտանգության կանոնները խախտելը առաջացնում է քրեական պատասխանատվություն. • **եթե անզգուշությամբ մարդու առողջությանը պատճառել է ծանր կամ միջին ծանրության վնաս** • բոլոր դեպքերում • եթե անզգուշությամբ էական վնաս է պատճառել շրջակա միջավայրին • միայն, եթե դիտավորությամբ առաջացրել է մարդու մահ կամ այլ ծանր հետևանքներ
418	Լեռնահանքային, շինարարական կամ այլ աշխատանքների կատարման ընթացքում անվտանգության կանոնները խախտելը առաջացնում է քրեական պատասխանատվություն. • բոլոր դեպքերում • եթե անզգուշությամբ էական վնաս է պատճառել շրջակա միջավայրին • **եթե անզգուշությամբ մարդու առողջությանը պատճառվել է ծանր կամ միջին ծանրության վնաս** • միայն, եթե անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ կամ այլ ծանր հետևանքներ
419	Ռադիոակտիվ նյութեր ապօրինի ձեռք բերելը, պահելը, օգտագործելը, փոխադրելը, հանձնելը, իրացնելը, ոչնչացնելը կամ վնասելը հանցագործություն է. • ոչ • այո, միայն, եթե նշված արարքներով մարդու առողջությանն անզգուշությամբ պատճառել են ծանր կամ միջին ծանրության վնաս • այո, միայն, եթե նշված արարքների հետևանքով անզգուշությամբ առաջացել է մարդու մահ կամ այլ ծանր հետևանքներ • **այո**

420	Քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածով (ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը) նախատեսված արարք կատարած անձը ազատվում է քրեական պատասխանատվությունից. • **եթե կամովին հանձնում է այդ հոդվածում նշված առարկաները և նրա գործողություններն այլ հանցակազմ չեն պարունակում** • եթե կամովին հանձնում է այդ հոդվածում նշված առարկաները • եթե նրա գործողությունները չեն առաջացրել հանրորեն վտանգավոր հետևանքներ • եթե կամովին հանձնել է այդ հոդվածում նշված առարկաները և նպաստել է իր արարքի հանրորեն վտանգավոր հետևանքների վերացմանը
421	Հրազենը կամ ռազմամթերքն անփութորեն պահպանելը քրեական պատասխանատվություն է առաջացնում. • եթե դրանով պայմաններ են ստեղծվել այդ հրազենը կամ ռազմամթերքն ուրիշի կողմից օգտագործելու համար • եթե դա առաջացրել է ծանր հետևանքներ • **եթե դրանով պայմաններ են ստեղծվել այդ հրազենը կամ ռազմամթերքն ուրիշի կողմից օգտագործելու համար և դա առաջացրել է ծանր հետևանքներ** • բոլոր դեպքերում
422	Դյուրավառ կամ այրիչ նյութերի պահպանման, հաշվառման, փոխադրման, առաքման կամ օգտագործման կանոնները խախտելը, ինչպես նաև նշված նյութերի ապօրինի փոխադրումը կամ առաքումը հանցագործություն է. • **եթե այդ արարքների կատարումը անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ կամ մարդու մահ** • միայն, եթե այդ արարքների կատարումը անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ • միայն, եթե այդ արարքների կատարումը անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ • բոլոր դեպքերում
423	Երկաթուղային, օդային կամ ջրային տրանսպորտի երթևեկության անվտանգության եւ շահագործման կանոնները խախտելն այն անձի կողմից, ով, ըստ կատարվող աշխատանքի կամ զբաղեցրած պաշտոնի, պարտավոր էր պահպանել այդ կանոնները. • բոլոր դեպքերում առաջացնում է քրեական պատասխանատվություն • քրեական պատասխանատվություն է առաջացում միայն, եթե այդ արարքը մարդու առողջությանն պատճառել է ծանր կամ միջին ծանրության վնաս կամ առաջացրել է խոշոր վնաս • քրեական պատասխանատվություն է առաջացում միայն, եթե այդ արարքը առաջացրել է մարդկանց մահ • **քրեական պատասխանատվություն է առաջացում, եթե այդ արարքը**

	անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ, կամ մարդու առողջությանն անզգուշությամբ պատճառել է ծանր կամ միջին ծանրության վնաս կամ առաջացրել է խոշոր վնաս կամ անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի մարդու մահ
424	Քրեական օրենսգրքի 241-րդ հոդվածով (երկաթուղային, օդային կամ ջրային տրանսպորտի երթևեկության անվտանգության և շահագործման կանոնները խախտելը) քրեական պատասխանատվության կարող է ենթարկվել. • **միայն այն անձը, ով, ըստ կատարվող աշխատանքի կամ զբաղեցրած պաշտոնի, պարտավոր է պահպանել երկաթուղային, օդային կամ ջրային տրանսպորտի երթևեկության անվտանգության և շահագործման կանոնները** • ցանկացած անձ • յուրաքանչյուր անձ, ով իր գործողություններով կամ անգործությամբ խախտել է երկաթուղային, օդային կամ ջրային տրանսպորտի երթևեկության անվտանգության և շահագործման կանոնները • միայն այն անձը, ով, ըստ կատարվող աշխատանքի կամ զբաղեցրած պաշտոնի, պարտավոր է պահպանել երկաթուղային, օդային կամ ջրային տրանսպորտի երթևեկության անվտանգության և շահագործման կանոնները, ինչպես նաև երկաթուղային, օդային կամ ջրային տրանսպորտի ուղևորները, եթե վերջիններս իրենց գործողություններով խախտել են այդ կանոնները
425	Տրանսպորտային միջոցը հարբած կամ տասնվեց տարին չլրացած անձին հանձնելը. • քրեական պատասխանատվություն չի առաջացնում • անկախ հետևանքներից առաջացնում է քրեական պատասխանատվություն • **առաջացնում է քրեական պատասխանատվություն միայն այն դեպքում, եթե դրա հետևանքով անզգուշությամբ առաջացել է մարդու մահ կամ մարդու առողջությանն անզգուշությամբ պատճառվել է ծանր կամ միջին ծանրության վնաս կամ առաջացել է խոշոր վնաս** • առաջացնում է քրեական պատասխանատվություն միայն այն դեպքում, եթե դրա հետևանքով անզգուշությամբ առաջացել է մարդու մահ կամ մարդու առողջությանն անզգուշությամբ պատճառվել է ծանր կամ միջին ծանրության վնաս

426	Ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը թողնելը տրանսպորտային միջոց վարող և ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտած անձի կողմից. • **առաջացնում է քրեական պատասխանատվության միայն այն դեպքում, եթե դրա հետևանքով անզգուշությամբ առաջացել է մարդու մահ կամ մարդու առողջությանն անզգուշությամբ պատճառվել է ծանր կամ միջին ծանրության վնաս** • անկախ հետևանքներից առաջացնում է քրեական պատասխանատվություն • առաջացնում է քրեական պատասխանատվության միայն այն դեպքում, եթե դրա հետևանքով անզգուշությամբ առաջացել է մարդու մահ կամ մարդու առողջությանն անզգուշությամբ պատճառվել է ծանր կամ միջին ծանրության վնաս կամ առաջացել է խոշոր վնաս • քրեական պատասխանատվություն չի առաջացնում
427	Քրեական օրենսգրքի 244-րդ հոդվածով (ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը թողնելը) նախատեսված արարքի համար պատասխանատվության կարող է ենթարկվել. • ցանկացած անձ • **տրանսպորտային միջոց վարող և ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտած անձը** • տվյալ պատահարի մասնակիցները • այն անձը, ով, ըստ կատարվող աշխատանքի կամ զբաղեցրած պաշտոնի, պարտավոր էր օգնություն ցույց տալ պատահարից տուժածներին
428	Քրեական օրենսգրքի 244-րդ հոդվածով (ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը թողնելը) նախատեսված հանցագործությունն ուղղված է. • կյանքի և առողջության դեմ • **հասարակական անվտանգության դեմ** • մարդկության անվտանգության դեմ • կառավարման կարգի դեմ
429	Ստորև նշվածներից ո՞վ կարող է քրեական պատասխանատվության ենթարկվել քրեական օրենսգրքի 247-րդ հոդվածով (տրանսպորտի անվտանգ աշխատանքն ապահովող կանոնները խախտելը) նախատեսված արարքի համար. • **հետիոտնը** • այն անձը, ով, ըստ կատարվող աշխատանքի կամ զբաղեցրած պաշտոնի, պարտավոր էր պահպանել տրանսպորտի անվտանգ աշխատանքն ապահովող կանոնները • ավտոմեքենա կամ մեխանիկական այլ տրանսպորտային միջոց վարող անձը • ցանկացած անձ

430	Քրեական օրենսգրքի 247-րդ հոդվածով (տրանսպորտի անվտանգ աշխատանքն ապահովող կանոնները խախտելը) նախատեսված հանցագործությունն ուղղված է. • կյանքի և առողջության դեմ • **հասարակական անվտանգության դեմ** • մարդկության անվտանգության դեմ • կառավարման կարգի դեմ
431	Քրեական օրենսգրքի 250-րդ հոդվածով (միջազգային թռիչքների կանոնները խախտելը) նախատեսված հանցագործությունն ուղղված է. • կյանքի և առողջության դեմ • մարդկության անվտանգության դեմ • **հասարակական անվտանգության դեմ** • կառավարման կարգի դեմ
432	Համակարգչում, համակարգչային համակարգում, ցանցում կամ մեքենայական կրիչների վրա պահվող և օրենքով պահպանվող տեղեկատվության համակարգի որևէ մաս կամ ամբողջությամբ համակարգ առանց թույլտվության մուտք գործելը (ներթափանցելը), որը կատարվել է պաշտպանիչ համակարգի խախտմամբ. • հանցագործություն չէ • բոլոր դեպքերում հանցագործություն է • հանցագործություն է, եթե կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով կամ կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ և անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ • **հանցագործություն է, եթե անզգուշությամբ առաջացրել է տեղեկատվության փոփոխություն կամ համակարգչային սարքավորումների շարքից դուրս բերում կամ այլ զգալի վնաս**
433	Քրեական օրենսգրքի 259-րդ հոդվածով (ահաբեկչության մասին սուտ հաղորդում տալը) նախատեսված հանցագործությունն ուղղված է. • **հասարակական կարգի դեմ** • հասարակական անվտանգության դեմ • կառավարման կարգի դեմ • պետական ծառայության դեմ
434	Քրեական օրենսգրքի 261-րդ հոդվածով (շահադիտական նպատակով այլ անձի պոռնկությամբ զբաղվելուն ներգրավելը) նախատեսված հանցագործությունն ուղղված է. • սեռական անձեռնմխելիության դեմ • պատվի և արժանապատվության դեմ • սեռական ազատության դեմ • **բարոյականության դեմ**

435	Քրեական օրենսգրքի 279-րդ հոդվածով (անվտանգության պահանջներին չհամապատասխանող ապրանքներ թողարկելը կամ իրացնելը, աշխատանքներ կատարելը կամ ծառայություններ մատուցելը) նախատեսված հանցագործությունն ուղղված է. • **բնակչության առողջության դեմ** • անձանց անվտանգության դեմ • տնտեսական գործունեության դեմ • կյանքի և առողջության դեմ
436	Քրեական օրենսգրքի 283-րդ հոդվածով (շրջակա միջավայրի աղտոտման հետևանքները վերացնելու միջոցներ չձեռնարկելը) քրեական պատասխանատվություն չի առաջացնում, եթե. • այդ արարքը անզգուշությամբ առաջացրել է կենդանիների զանգվածային ոչնչացում • այդ արարքը անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ • այդ արարքը անզգուշությամբ առաջացրել է մարդկանց զանգվածային հիվանդացում • **այդ արարքը անզգուշությամբ առաջացրել է մարդու հիվանդացում**
437	Արգելված վտանգավոր քիմիական և կենսաբանական նյութեր կամ թափոններ արտադրելը քրեական պատասխանատվություն է առաջացնում. • բոլոր դեպքերում • միայն, եթե դա առաջացրել է ծանր հետևանքներ • միայն, եթե դա մարդու առողջությանը կամ շրջակա միջավայրին էական վնաս է պատճառել • **եթե դա մարդու առողջությանը կամ շրջակա միջավայրին էական վնաս պատճառելու վտանգ է ստեղծել**
438	Քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածով (անտառներ ոչնչացնելը կամ վնասելը) նախատեսված հանցագործությունը կարող է կատարվել. • **պայթուցիկ նյութերի կամ առավել վտանգի այլ աղբյուրի հետ անզգույշ վերաբերմունքի արդյունքում** • պայթուցիկ նյութերի կամ առավել վտանգի այլ աղբյուրի դիտավորյալ կիրառմամբ • ցանկացած եղանակով • պաշտոնեական դիրքի օգտագործմամբ
439	Քրեական օրենսգրքի 304-րդ հոդվածով (վնասարարությունը) նախատեսված արարքի նպատակը. • արդյունաբերության, տրանսպորտի, գյուղատնտեսության, դրամական համակարգի, առևտրի կամ տնտեսության այլ ճյուղերի գործունեության քայքայումն է • պետական մարմինների գործունեության քայքայումն է

	• **պետությունը թուլացնելն է** • սահմանադրական կարգի տապալումն է
440	Քրեական օրենսգրքի 304-րդ հոդվածով (վնասարարությունը) նախատեսված արարքը կարող է կատարվել. • ցանկացած միջոցներով • **կազմակերպությունների բնականոն աշխատանքին խոչընդոտելու միջոցով** • ահաբեկչության միջոցով • պետական իշխանությունը յուրացնելուն ուղղված գործողությունների միջոցով
441	Պետական գաղտնիք հրապարակելը (քրեական օրենսգրքի 306-րդ հոդված) կարող է կատարվել. • միայն դիտավորությամբ • միայն ուղղակի դիտավորությամբ • միայն անզգուշությամբ • **ինչպես դիտավորությամբ, այնպես էլ անզգուշությամբ**
442	Պետական գաղտնիք հրապարակելու համար (քրեական օրենսգրքի 306-րդ հոդվածով) քրեական պատասխանատվության չի կարող ենթարկվել այն անձը. • ով պետական գաղտնիքի հետ ծանոթանալու իրավունք ուներ • ում պետական գաղտնիքը վստահված է եղել • ում պետական գաղտնիքը հայտնի է դարձել ծառայության բերմամբ • **ով պետական գաղտնիք պարունակող տեղեկությունները ձեռք է բերել կաշառքի, սպառնալիքի, շորթման կամ այլ հանցավոր եղանակով**
443	Բ-ն հանգուցյալ ծնողների բնակարանը 1994 թվականին սեփականաշնորհել է իր անվամբ, որը 2001 թվականի մարտ ամսին, իր ամուսնու՝ Մ-ի հետ վաճառել են: Բնակարանի վաճառքից հետո Ա-ի մայրը՝ Գ-ն՝ Բ-ի քույրը քրոջից և նրա ամուսնուց բազմիցս պահանջել է հանգուցյալ ծնողների բնակարանի վաճառքից ստացած գումարի իր փայաբաժինը: Ա-ն 2004թ. հունվար ամսին հերթական անգամ մորաքրոջ ամուսին Մ-ից պահանջել է իր մոր հասանելիք 5500 ԱՄՆ դոլար փայաբաժինը: Մերժում ստանալուց հետո Ա-ն օրենքով սահմանված կարգի խախտմամբ, օգտագործելով ակնհայտ կեղծ պայմանագիրը, Մ-ին պատկանող 4.024.000 դրամ արժողությամբ միկրոավտոբուսը 2.837.350 դրամին համարժեք 5000 ԱՄՆ դոլարով վաճառել է Վ-ին Մ-ին պատճառելով էական վնաս: Որակեք Ա- արարքը. • խարդախություն • փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձևաթղթեր, տրանսպորտային միջոցների պետհամարանիշներ կեղծելը, իրացնելը կամ օգտագործելը և վատնում • **ինքնիրավչություն և փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձևաթղթեր, տրանսպորտային միջոցների պետհամարանիշներ կեղծելը, իրացնելը կամ**

	օգտագործելը • ինքնիրավչություն
444	Ա-ն հանդիպելով իրեն անծանոթ Բ-ին և տեսնելով, որ ականատեսներ չկան, նրանից պահանջել է վերջինիս 4000 դրամ արժողությամբ բջջային հեռախոսը: Բ-ն հրաժարվել է այն տալ: Ա-ն գրպանից հանել է խոհանոցային դանակը և սպառնալով սպանել Բ-ին, կրկին պահանջել է իրեն տալ բջջային հեռախոսը, որը վերջինս տվել է: Ա-ն վերցրել է հեռախոսը և հեռացել է: Խնդրվում է որակել Ա-ի արարքը. • Ա-ն կատարել է կողոպուտ, որը նախատեսված է քրեական օրենսգրքի 176 հոդվածի 1-ին մասով • **Ա-ն կատարել է ավազակություն, որը նախատեսված է քրեական օրենսգրքի 175 հոդվածի 2-րդ մասով** • Ա-ն կատարել է սառը զենքի գործադրմամբ ավազակություն և ապօրինի կերպով սառը զենք կրելու հանցանք • Ա-ի արարքում չկա հանցակազմ, քանի որ պատճառված վնասը 5000 դրամից պակաս է
445	Հանցագործությունը պարտակելը, դա. • քրեական օրենսգրքով հանցանք համարվող արարքների պարտակելն է, որն արտահայտվում է հանցանք կատարած անձի, հանցագործության գործիքների և դրա հետևանքով ձեռք բերված գույքի նախապես չխոստացված պարտակման ձևով, եթե բացակայում են քրեական օրենսգրքի 334 պրիմ հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշները • **ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կատարած անձի, ինչպես նաև հանցագործության կատարման գործիքների ու միջոցների, հանցագործության հետքերի կամ հանցավոր ճանապարհով ձեռք բերված առարկաների նախապես չխոստացված պարտակումն է, եթե բացակայում են քրեական օրենսգրքի 334 պրիմ հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշները** • քրեական օրենսգրքով նախատեսված ցանկացած հանցագործություն թաքցնելն է, երբ անձը իմացել է այդ մասին, սակայն համապատասխան մարմիններին չի հայտնել

	• քրեական օրենսգրքով նախատեսված ցանկացած հանցագործություն թաքցնելն է, երբ անձը հաստատապես իմանալով կատարված կամ կատարվելիք հանցագործության մասին ոչ միայն չի հայտնում համապատասխան մարմիններին, այլև իր գործողություններով նպաստում է, որ հանցանք կատարած անձը թաքնվի քննությունից
446	Ներքոհիշյալ ո՞ր հատկանիշը չի համարվում <<հրամանը չկատարելը>> հանցանքի պարտադիր հատկանիշ. • հանցավոր արարքի առկայությունը • գրավոր հրամանի առկայությունը • ծառայության շահերին պատճառված էական վնասը • պատճառական կապի առկայությունը
447	Ա-ն դանակի հարվածով ցանկանում է սպանել Բ-ին, սակայն հարվածի շեղման պատճառով Բ-ն ստանում է առողջության ծանր վնաս: Խնդրվում է որակել Ա-ի արարքը. • արարքը ենթակա է որակման որպես դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառել • **արարքը ենթակա է որակման որպես սպանության փորձ** • արարքը ենթակա է որակման որպես անզգուշությամբ առողջությանը ծանր վնաս պատճառել • արարքը ենթակա է որակման որպես անզգուշությամբ մահ պատճառելու փորձ
448	Քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունը (պաշտոնական լիազորություններն անցնելը) կարող է կատարվել. • **ուղղակի կամ անուղղակի դիտավորությամբ** • միայն ուղղակի դիտավորությամբ • միայն անզգուշությամբ • ինչպես դիտավորությամբ, այնպես էլ անզգուշությամբ
449	Պաշտոնատար անձի կողմից դիտավորությամբ այնպիսի գործողություններ կատարելը, որոնք ակնհայտորեն դուրս են եկել նրա լիազորությունների շրջանակից, չեն որակվի քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածով (պաշտոնական լիազորություններն անցնելը), եթե այդ գործողություններով էական վնաս է պատճառվել. • **համայնքների իրավունքներին ու օրինական շահերին** • անձանց իրավունքներին ու օրինական շահերին

	• կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին • պետության օրինական շահերին
450	Քրեական օրենսգրքի 310-րդ հոդվածով (ձեռնարկատիրական գործունեությանն ապօրինի մասնակցելը) նախատեսված հանցագործության սուբյեկտ են. • **պաշտոնատար անձինք** • անհատ ձեռնարկատերերը • անհատ ձեռնարկատերերը, ինչպես նաև առևտրային կազմակերպությունների մասնակիցները • ձեռնարկատիրական գործունեության մասնակիցները
451	Պաշտոնատար անձի կողմից, օրենքով սահմանված արգելքին հակառակ, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող կազմակերպություն հիմնադրելը կառաջացնի քրեական պատասխանատվություն քրեական օրենսգրքի 310-րդ հոդվածով (ձեռնարկատիրական գործունեությանն ապօրինի մասնակցելը). • բոլոր դեպքերում • **եթե այդ արարքները կապված են այդպիսի կազմակերպությանը հովանավորելու հետ** • եթե այդ գործողությունները էական վնաս են պատճառել անձանց, կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին, հասարակության կամ պետության օրինական շահերին (գույքային վնասի դեպքում՝ հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափը գերազանցող գումարը կամ դրա արժեքը) • եթե այդ գործողությունները ծանր հետևանք են առաջացրել
452	Կարմիր խաչի կամ Կարմիր մահիկի խորհրդանիշը եւ տարբերանշանները, ինչպես նաեւ Կարմիր խաչի կամ Կարմիր մահիկի անվանումներն ապօրինի օգտագործելը քրեական օրենսգրքի 320-րդ հոդվածով (կարմիր խաչի կամ մահակի խորհրդանիշը կամ նշանն ապօրինի օգտագործելը) քրեական պատասխանատվություն է առաջացնում. • **անկախ հետևանքներից** • միայն, եթե ծանր հետևանքներ է առաջացրել • միայն, եթե դրանով էական վնաս է պատճառվել • միայն, եթե կատարվել է պաշտոնեական դիրքը օգտագործելու միջոցով

453	Կապի ուղիների պահպանության կանոնները խախտելը, որն անզգուշությամբ վնասել է միջազգային կապի մալուխային ուղիները, քրեական օրենսգրքի 321-րդ հոդվածով (կապի ուղիները վնասելը) քրեական պատասխանատվություն է առաջացնում. • անկախ հետևանքներից • միայն, եթե ծանր հետևանքներ է առաջացրել • միայն, եթե դրանով էական վնաս է պատճառվել • **միայն, եթե առաջացել է կապի ընդհատում**
454	Պետական պարգևները հափշտակելը քրեական օրենսգրքի 323-րդ հոդվածով (պետական պարգևները հափշտակելը) քրեական պատասխանատվություն է առաջացնում. • **բոլոր դեպքերում** • միայն զգալի չափերով հափշտակության դեպքում • միայն, եթե դրանով էական վնաս է պատճառվել • միայն խոշոր կամ առանձնապես խոշոր չափերով կատարված հափշտակության դեպքում
455	Քաղաքացու անձնագիրը կամ կարևոր այլ փաստաթուղթ հափշտակելը քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածով (փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ հափշտակելը կամ վնասելը) քրեական պատասխանատվություն. • չի առաջացնում • **առաջացնում է բոլոր դեպքերում** • առաջացնում է միայն, եթե կատարվել է կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով • առաջացնում է միայն, եթե կատարվել է շահադիտական դրդումներով կամ անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով
456	Պաշտոնական փաստաթղթեր, դրոշմներ կամ կնիքներ հափշտակելը, ոչնչացնելը, վնասելը կամ թաքցնելը քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածով (փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ հափշտակելը կամ վնասելը) քրեական պատասխանատվություն. • չի առաջացնում • առաջացնում է բոլոր դեպքերում • առաջացնում է միայն, եթե կատարվել է կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով • **առաջացնում է միայն, եթե կատարվել է շահադիտական դրդումներով կամ անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով**

457	Քրեական օրենսգրքի 326-րդ հոդվածով (պաշտոնական փաստաթղթեր կամ պետական պարգևներ ապօրինի ձեռք բերելը կամ իրացնելը) քրեական պատասխանատվություն է նախատեսված փաստաթղթեր, ինչպես նաև այդպիսի փաստաթղթերի ձևաթղթեր կամ պետական պարգևներ ապօրինի ձեռք բերելու կամ իրացնելու համար. • անկախ շարժառիթից, կատարման ձևից, ինչպես նաև անկախ այն բանից, թե ինչպիսինն են այդ փաստաթղթերը, փաստաթղթերի ձևաթղթերը կամ պետական պարգևները • **միայն եթե այդ փաստաթղթերը, փաստաթղթերի ձևաթղթերը կամ պետական պարգևները իրավունք վերապահող կամ պատասխանատվությունից ազատող են** • միայն եթե այդ արարքը կատարվել է կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով • միայն եթե կատարվել է շահադիտական դրդումներով կամ անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով
458	Տուժող Ս-ն 2005 թվականի ապրիլի 13-ին դիմել է ,Էրեբունիե բժշկական կենտրոն: Որտեղ ուրոլոգի կողմից որոշում է կայացվել հրատապ կարգով կեսարյան հատում, այնուհետև՝ նեֆրեկտոմիա (երիկամի հեռացում) և ստորին սիներակի թրոմբեկտոմիա (թրոմբի հեռացում) կատարելու վերաբերյալ: Կեսարյան հատումից հետո ուրոլոգ Ե-ն անցել է նեֆրեկտոմիայի և ստորին սիներակի թրոմբեկտոմիայի կատարմանը: Վիրահատության սկզբում ստորին սիներակի վրա թրոմբից վեր և վար դրվել են սեղմիչներ: Սեղմիչների դրման փուլում տեղի է ունեցել փորոքների ֆիբրիլյացիա, որը արձանագրվել է անեսթեզիոլոգի կողմից: Դեֆիբրիլյացիա է կատարվել, որի արդյունքում սրտի աշխատանքը վերականգնվել է, սակայն հինգ րոպե անց կրկին ֆիբրիլյացիա է տեղի ունեցել: Այս անգամ նորից սրտի աշխատանքը վերականգնվել է: Սակայն հինգ րոպե անց տեղի է ունեցել երրորդ ֆիբրիլյացիան, որից հետո սրտի աշխատանքը չի վերականգնվել, և ռեանիմացիայի 45-րդ րոպեին արձանագրվել է կենսաբանական մահ: Որակել Ե-ի արարքը. • **արարքում հանցակազմ չկա** • բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որն առաջացրել է մարդու մահ • հիվանդին օգնություն ցույց չտալը, որն առաջացրել է մարդու մահ • անզգուշությամբ մահ պատճառել
459	Քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունը (ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից, վարժական հավաքներից կամ զորահավաքներից խուսափելը) ուղղված է. • **կառավարման կարգի դեմ** • պետական ծառայության դեմ

	• հասարակական անվտանգության դեմ • զինվորական ծառայության կարգի դեմ
460	Քրեական օրենսգրքի 327 ցուցիչ 2 հոդվածով նախատեսված հանցագործությունը (այլընտրանքային աշխատանքային ծառայողի կողմից ծառայությունից խուսափելը) ուղղված է. • հասարակական անվտանգության դեմ • պետական ծառայության դեմ • **կառավարման կարգի դեմ** • զինվորական ծառայության կարգի դեմ
461	Քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի (պետական սահմանն ապօրինի հատելը) գործողությունը չի տարածվում այն դեպքերի վրա, երբ. • **ՀՀ Սահմանադրությամբ եւ ՀՀ օրենսդրությամբ վերապահված քաղաքական ապաստանի իրավունքից օգտվելու համար օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձն առանց սահմանված փաստաթղթերի կամ առանց պատշաճ թույլտվության մուտք է գործում Հայաստանի Հանրապետություն** • Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան դիվանագիտական անձեռնմխելիությամբ օժտված անձն առանց սահմանված փաստաթղթերի կամ առանց պատշաճ թույլտվության մուտք է գործում Հայաստանի Հանրապետություն • պետական սահմանն ապօրինի հատած անձը մեղայականով ներկայանում է իրավապահ կամ պետական իրավասու մարմիններին • մինչև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քրեական պատասխանատվության ենթարկվելն անձը կամովին լքել է Հայաստանի Հանրապետության տարածքը

462	Ա-ն Ախթալայի լեռնահարստացման համակարգի վերականգնման և գունավոր մետաղների խտանյութի արտադրության կազմակերպման նպատակով 2000 թվականի մարտի 1-ին ,Ախթալայի ԼՀԿԵ ՓԲԸ և ,Մեթըլ-Փրինս ԷԼ ԹԻ ԴԻԵ կորպորացիայի միջև կնքվել է համատեղ գործունեության պայմանագիր: Դրա համաձայն՝ վերջինիս կողմից ներդրված գումարներով ,Ախթալայի ԼՀԿԵ ՓԲԸ-ում 2000 թվականի օգոստոսի 10-ից մինչև 2001 թվականի հոկտեմբերի 5-ն ընկած ժամանակահատվածում Ա-ն իրականացրել է կոմբինատի վերակառուցման և վերականգնման աշխատանքներ: Կանխիկ գումարով սարքավորումներ ձեռք բերելու նպատակով ,Ախթալայի ԼՀԿԵ ՓԲԸ-ի տնօրեն Ա-ի հրամանով ստեղծվել է գնման հանձնաժողով: Նշված ծրագրի իրականացման ընթացքում Ա-ն իր պաշտոնական դիրքն օգտագործելով, ներդրված գումարներից հափշտակություն կատարելու դիտավորությամբ ձեռք բերված ապրանքանյութական արժեքների իրական գները գնման հանձնաժողովից թաքցնելով, հանձնարարել է հանձնաժողովի նախագահին իր կողմից ներկայացված և ձեռք բերվածից ավել նշված գների ցուցակով կազմել շուկայից ձեռք բերման միակողմանի գնման ակտեր և այդ միջոցով հափշտակել է առանձնապես խոշոր չափերի հասնող՝ 9.155.500 ՀՀ դրամ: Որակեք Ա-ի արարքը. • առանձնապես խոշոր չափերի խարդախություն • **առանձնապես խոշոր չափերի յուրացնելը կամ վատնելը** • պաշտոնական դիրքի չարաշահում • առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից լիազորությունները չարաշահելը
463	Պետական սահմանի նշանները վերցնելը, տեղաշարժելը կամ ոչնչացնելը քրեական պատասխանատվություն է առաջացնում. • բոլոր դեպքերում • **միայն, եթե կատարվել է ՀՀ պետական սահմանն ապօրինի փոխելու նպատակով** • միայն, եթե կատարվել է ՀՀ պետական սահմանն ապօրինի փոխելու կամ պետական շահերին այլ կերպ վնաս հասցնելու նպատակով • միայն, եթե առաջացրել է ՀՀ պետական սահմանի ապօրինի փոփոխություն
464	Քրեական օրենսգրքի 331-րդ հոդվածով (պետական խորհրդանիշներն անարգելը) նախատեսված հանցանք չի հանդիսանա. • Հայաստանի Հանրապետության զինանշանը անարգելը • Հայաստանի Հանրապետության պետական օրհներգն անարգելը • այլ պետության պետական խորհրդանիշներն անարգելը • **Հայաստանի Հանրապետության պատմական արժեքներն անարգելը**

465	Արդարադատության իրականացմանը խոչընդոտելու նպատակով դատարանի գործունեությանը միջամտելը քրեական պատասխանատվություն է առաջացնում քրեական օրենսգրքի 332-րդ հոդվածով (արդարադատության իրականացմանը և քննությանը խոչընդոտելը), եթե այդ միջամտությունը տեղի է ունեցել. • **ցանկացած ձևով միջամտելու դեպքերում** • սպառնալիքների կամ պաշտոնական դիրքն օգտագործելու միջոցով • սպառնալիքների, պաշտոնական դիրքը կամ անձնական կապերն օգտագործելու միջոցով • պաշտոնական դիրքն օգտագործելու միջոցով
466	Գործի բազմակողմանի, լրիվ եւ օբյեկտիվ քննությանը խոչընդոտելու նպատակով դատախազի, քննիչի կամ հետաքննություն կատարող անձի գործունեությանը միջամտելը քրեական պատասխանատվություն է առաջացնում քրեական օրենսգրքի 332-րդ հոդվածով (արդարադատության իրականացմանը և քննությանը խոչընդոտելը), եթե այդ միջամտությունը տեղի է ունեցել. • պաշտոնական դիրքն օգտագործելու միջոցով • սպառնալիքների կամ պաշտոնական դիրքն օգտագործելու միջոցով • սպառնալիքների, պաշտոնական դիրքը կամ անձնական կապերն օգտագործելու միջոցով • **ցանկացած ձևով միջամտելու դեպքերում**
467	Ի-ն 2006 թվականի հունիսի 30-ին Կոտայքի մարզի Հանքավան գյուղի տարածքով հոսող Մարմարիկ գետում զանգվածային ոչնչացման եղանակով՝ հոսանքալարերի օգնությամբ, բեղլու և այլ տեսակի ձկներ է արդյունահանել, որի ընթացքում՝ ժամը 13.30-ի սահմաններում, գետի հուն մտած Դ-ն հանկարծակի ձեռք տալով գետի ջրերում գտնվող հոսանքալարերին, էլեկտրահարվել է և մահացել: Որակեք Ի-ի արարքը. • արարքում հանցակազմ չկա • ջրային կենդանիներ և բույսեր ապօրինի արդյունահանելը • անզգուշությամբ մահ պատճառել • **ջրային կենդանիներ և բույսեր ապօրինի արդյունահանելը և անզգուշությամբ մահ պատճառել**
468	Վկայի կամ տուժողի կողմից դատարան, նախնական քննության մարմիններ ներկայանալուն կամ նրանց ցուցմունք տալուն խոչընդոտելը առաջացնում է քրեական պատասխանատվություն քրեական օրենսգրքի 337-րդ հոդվածով (վկայի կամ տուժողի ներկայանալուն կամ նրանց ցուցմունք տալուն խոչընդոտելը). • բոլոր դեպքերում • **միայն, եթե կատարվել է բռնություն գործադրելով կամ այն գործադրելու սպառնալիքով կամ այլ ապօրինի գործողություններով** • միայն, եթե կատարվել է տուժողի կամ վկայի հետ ունեցած անձնական հարաբերություններն օգտագործելով

	• միայն, եթե հանգեցրել է ոչ ճիշտ դատական ակտի կայացմանը կամ այլ ծանր հետևանքներ է առաջացրել
469	Ա-ն 2007-2009 թ. ժամանակահատվածում միջնակարգ դպրոցում շրջանառվող մի շարք պաշտոնական փաստաթղթերում՝ աշակերտների շարժի մատյաններում, դասամատյաններում և հիմնական կրթության վկայականների բաշխման մատյաններում, ակնհայտ կեղծ տեղեկություններ և գրառումներ մտցնելու միջոցով, առանց կրթություն ստանալու և ավարտական քննություններ հանձնելու կազմել և հիմնական կրթության կեղծ վկայականներ է հանձնել 52 աշակերտների: Արդյունքում սահմանված կրթական ծրագիրը չանցած, բավարար ուսում չստացած աշակերտները կեղծ վկայականների օգտագործմամբ հնարավորություն են ստացել նորմատիվ ակտերի խախտմամբ շարունակելու հետագա ուսումը: Խնդրվում է որակել արարքը. • պաշտոնեական լիազորությունները չարաշահելը • պաշտոնեական լիազորությունների անցնելը • արարքում հանցակազմ չկա • **պաշտոնեական լիազորությունները չարաշահելը և պաշտոնեական կեղծիք**
470	Նույն սենյակում գտնվելու ընթացքում էլեկտրական սալիկի կարճ միացում տալու պատճառով Հ-ն նստած տեղից փորձել է վազել էլեկտրական սալիկն անջատելու, այդ ժամանակ Ս-ն, որը նստած դանակով հաց կտրելուց է եղել, կտրուկ շրջվել է դեպի Հ-ի կողմը, դրա հետևանքով նրանք բախվել են և Ս-ի ձեռքի դանակը վնասել է Հ-ին՝ պատճառելով առողջությանը ծանր վնաս: Որակեք արարքը. • **հանցակազմ չկա** • անզգուշությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը • դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը • ծայրահեղ անհրաժեշտության պայմաններում ծանր վնաս պատճառելը
471	Անձնական երաշխավորի կողմից իր ստանձնած պարտավորությունները չարամտորեն չկատարելը քրեական պատասխանատվություն է առաջացնում. • բոլոր դեպքերում • **եթե դրա հետևանքով կասկածյալը կամ մեղադրյալը խուսափել է քննությունից կամ դատից** • եթե դրա հետևանքով կասկածյալը կամ մեղադրյալը խուսափել է քննությունից կամ դատից, կամ նոր հանցանք է կատարել • եթե դա առաջացրել է ծանր հետևանքներ

472	Ապօրինի ձերբակալելը քրեական պատասխանատվություն է առաջացնում քրեական օրենսգրքի 348-րդ հոդվածով (ապօրինի ձերբակալելը). • բոլոր դեպքերում • **միայն, եթե ձերբակալումը եղել է ակնհայտ ապօրինի** • միայն, եթե ձերբակալումը կատարվել է ուղղակի դիտավորությամբ • միայն, եթե ապօրինի ձերբակալումը ծանր հետևանք է առաջացրել
473	Ստորև նշված գործողություններից ո՞րն է հանդիսանում կաշառքի կամ առևտրային կաշառքի պրովոկացիա. • հանցագործության արհեստական ապացույցներ ստեղծելու նպատակով պաշտոնատար անձին, առանց նրա համաձայնության, դրամ տալը • շանտաժի նպատակով առևտրային կամ այլ կազմակերպություններում կարգադրիչ կամ կառավարման այլ գործառույթներ իրականացնող անձին գույքային բնույթի ծառայություններ մատուցելը • **շանտաժի նպատակով պաշտոնատար անձին, առանց նրա համաձայնության, գույքային բնույթի ծառայություններ մատուցելու փորձը** • հանցագործության արհեստական ապացույցներ ստեղծելու նպատակով առևտրային կամ այլ կազմակերպություններում կարգադրիչ կամ կառավարման այլ գործառույթներ իրականացնող անձին գույքային բնույթի ծառայություններ մատուցելը
474	Զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները խախտելը նրանց միջև ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում քրեական պատասխանատվություն չի առաջացնում. • եթե այն արտահայտվել է անձին ծաղրուծանակի ենթարկելով • եթե այն արտահայտվել է անձի պատիվն ու արժանապատվությունը ստորացնելով • եթե այն արտահայտվել է անձին հալածելով • **եթե այն արտահայտվել է անձի գույքը ոչնչացնելով**
475	Պայմանագրային հիմունքներով զինվորական ծառայություն անցնող զինծառայողի կողմից զորամասը ինքնակամ թողնելը քրեական պատասխանատվություն է առաջացնում, եթե դա կատարվել է. • **երեք օրից ավելի, բայց մեկ ամսից ոչ ավելի տևողությամբ, ինչպես նաև երեք ամսվա ընթացքում երեք և ավելի անգամ մինչև երեք օր տևողությամբ** • երեք օրից ավելի, ինչպես նաև երեք ամսվա ընթացքում երեք և ավելի անգամ մեկից երեք օր տևողությամբ • հինգ օրից ավելի, բայց մեկ ամսից ոչ ավելի տևողությամբ, ինչպես նաև երեք ամսվա ընթացքում երեք և ավելի անգամ մեկից երեք օր տևողությամբ • մեկ ամսից ոչ ավելի տևողությամբ, ինչպես նաև երեք ամսվա ընթացքում երեք և ավելի անգամ մեկից երեք օր տևողությամբ

476	Բ-ն 2006 թվականի մայիս ամսվա վերջին Մեղրու մաքսակետի տարածքում պարսիկ բեռնատարի վարորդից 200 ԱՄՆ դոլարով գնել է 100 գրամ ,ափիոնե տեսակի թմրամիջոց և նույն օրը, պայմանավորվածության համաձայն, տվել է Ս-ին: 2006 թվականի հունիս ամսին Բ-ն մեկնել է ԻԻՀ Ջուլֆա քաղաք, որտեղ իր ծանոթ Ջաֆարից Ս-ի խնդրանքով և նրա տված 600 ԱՄՆ դոլարով գնել է 300 գրամ ,ափիոնե տեսակի թմրամիջոց: Ջուլֆա քաղաքում Բ-ն հանդիպել է իր փեսա Ա-ին, որը Հայաստանի Հանրապետություն տեղափոխելու համար նրան տվել է ևս 200 գրամ ,ափիոնե տեսակի թմրամիջոց: Սոխի պարկում թաքցրած 500 գրամ ,ափիոնե տեսակի թմրամիջոցը Բ-ն ԻԻՀ-ից Մեղրու մաքսակետով 2006 թվականի հունիս ամսվա սկզբին տեղափոխել է Հայաստանի Հանրապետություն: Ագարակ քաղաքում 300 գրամ ,ափիոնե տեսակի թմրամիջոցը նա հանձնել է Ս-ին, իսկ 200 գրամը պահել է իրենց տանը: Որակեք Բ-ի արարքը. • **թմրամիջոցների մաքսանենգություն և իրացնելու նպատակով առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցներ ապօրինի ձեռք բերել, պահել, փոխադրել և ապօրինի իրացնել** • թմրամիջոցների իրացնելը և թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը, որը կատարվել է մաքսային սահմանով • թմրամիջոցների մաքսանենգություն և առանց իրացնելու նպատակի առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցներ ապօրինի ձեռք բերելը, պահելը, փոխադրելը • իրացնելու նպատակով առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցներ ապօրինի ձեռք բերել, պահել, փոխադրել և ապօրինի իրացնել, որը կատարվել է մաքսային սահմանով
477	Զինվորական ծառայությունից կամ դրա առանձին պարտականությունները կատարելուց զինծառայողի հրաժարվելը քրեական պատասխանատվություն է առաջացնում. • բոլոր դեպքերում • միայն, եթե արարքը վնաս է պատճառել կամ կարող էր վնաս պատճառել պետության անվտանգության շահերին • **միայն, եթե այդ արարքը զուգորդվել է զինվորական ծառայության կամ առանձին պարտականությունների կատարման փաստացի դադարեցմամբ** • միայն, եթե այդ արարքը կատարվել է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում
478	Զինծառայողին վստահված զենքը սահմանված կարգի խախտմամբ մեկ ուրիշին հանձնելը քրեական պատասխանատվություն է առաջացնում. • բոլոր դեպքերում • **եթե ստացողի կատարած գործողություններն առաջացրել են մարդկային զոհեր կամ այլ ծանր հետևանքներ** • եթե զինծառայողի այդ գործողություններն առաջացրել են մարդկային զոհեր կամ այլ ծանր հետևանքներ

	• եթե գույքի արժեքը գերազանցում է սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը
479	Արդյո՞ք գերի հանձնվելը քրեական պատասխանատվություն է առաջացնում. • **այո, սակայն միայն այն դեպքերում, երբ դա կատարվել է վախկոտության կամ փոքրոգության պատճառով** • այո • այո, սակայն միայն այն դեպքում, երբ դա կատարվել է շահադիտական նպատակներով • այո, սակայն միայն այն դեպքում, եթե դա ծանր հետևանքներ է առաջացրել
480	Քրեական պատասխանատվությունից և պատժից ազատվելը հնարավոր է միայն. • օրենքով սահմանված հիմքերի և պայմանների առկայության դեպքում • Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, քրեական օրենսգրքով և քրեաիրավական նորմեր պարունակող այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերի և պայմանների առկայության դեպքում • Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, քրեական օրենսգրքով և քրեաիրավական նորմեր պարունակող այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերի և պայմանների առկայության դեպքում • **Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված հիմքերի և պայմանների առկայության դեպքում**
481	Անձը ենթակա է քրեական պատասխանատվության. • միայն հանրության համար վտանգավոր այնպիսի գործողության և հանրության համար վտանգավոր հետևանքների համար, որոնց վերաբերյալ նրա մեղքը հաստատված է իրավասու դատարանի կողմից • **միայն հանրության համար վտանգավոր այնպիսի գործողության կամ անգործության և հանրության համար վտանգավոր հետևանքների համար, որոնց վերաբերյալ նրա մեղքը հաստատված է իրավասու դատարանի կողմից** • միայն հանրության համար վտանգավոր այնպիսի գործողության կամ անգործության համար, որոնց վերաբերյալ նրա մեղքը հաստատված է իրավասու դատարանի կողմից • միայն Հայաստանի Հանրապետության, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց համար վտանգավոր այնպիսի գործողության կամ անգործության և վտանգավոր հետևանքների համար, որոնց վերաբերյալ նրա մեղքը հաստատված է իրավասու դատարանի կողմից

482	Հանցագործությունն ավարտին հասցնելուց կամովին հրաժարված անձը. • ենթակա չէ քրեական պատասխանատվության • ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե նրա կատարած արարքը ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործություն է • **ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե նրա փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ չի պարունակում** • ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե նա պետական մարմիններին հաղորդելով կամ ձեռնարկված այլ միջոցներով օժանդակել է հետագա վնասը կանխելուն
483	Հանցանքների համակցությամբ յուրաքանչյուր հանցագործության համար առանձին պատիժ (հիմնական եւ լրացուցիչ) նշանակելով՝ դատարանը վերջնական պատիժը որոշում է. • նվազ խիստ պատիժն ավելի խիստ պատժով կլանելու կամ նշանակված պատիժները լրիվ կամ մասնակիորեն գումարելու միջոցով • **նշանակված պատիժները լրիվ կամ մասնակիորեն գումարելու միջոցով** • նվազ խիստ պատիժն ավելի խիստ պատժով կլանելու կամ նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով • նվազ խիստ պատիժն ավելի խիստ պատժով կլանելու կամ նշանակված պատիժները գումարելու միջոցով
484	Եթե անչափահասի նկատմամբ կիրառվել է դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց, ապա նոր հանցանք կատարելիս. • **անչափահասը քրեական պատասխանատվության ենթակա չէ նախկին հանցագործության համար** • անչափահասը քրեական պատասխանատվության է ենթակա նաև նախկին հանցագործության համար • դատարանը վերացնում է դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցը և պատիժներ նշանակում նախկին և նոր հանցանքների համակցությամբ • դատարանը կարող է վերացնել դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցը և պատիժներ նշանակում նախկին և նոր հանցանքների համակցությամբ
485	Անչափահասի կողմից ազատազրկման հետ չկապված պատիժը կրելուց հետո նրա դատվածությունը. • մարված է համարվում պատիժը կրելուց մեկ տարի հետո • **համարվում է մարված** • մարված է համարվում պատիժը կրելուց վեց ամիս հետո • մարված է համարվում պատիժը կրելուց երեք ամիս հետո

486	Կուսակցություններ ստեղծելու իրավունքի իրականացմանը խոչընդոտելը քրեական պատասխանատվություն է առաջացնում. • միայն, եթե այդ արարքը առաջացրել է միավորման կամ կուսակցության անդամների իրավունքների և օրինական շահերի էական խախտում • միայն, եթե այդ արարքը առաջացրել է միավորման կամ կուսակցության իրավունքների և օրինական շահերի էական խախտում • միայն, եթե այդ արարքը հանգեցրել է միավորման կամ կուսակցության լուծարման • **անկախ հետևանքներից**
487	Ո՞ր տարբերակում պատժատեսակները դասավորված չեն մեղմից դեպի խիստը. • տուգանքը, հանրային աշխատանքները, կալանքը • հանրային աշխատանքները, կալանքը, կարապահական գումարտակում պահելը • **հանրային աշխատանքները, տուգանքը, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը** • տուգանքը, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը, կալանքը
488	Օրենքով սահմանված կարգի խախտմամբ հավաք կազմակերպելը և անցկացնելը, դա. • **հավաքը դադարեցնելու վերաբերյալ ոստիկանության ներկայացուցչի օրինական որոշմանը չենթարկվելուն ուղղված կոչերն է** • հավաքը կամ հասարակական կարգի խախտումը դադարեցնելու վերաբերյալ իշխանության ներկայացուցչի օրինական որոշմանը չենթարկվելու կոչերն է • հավաքը դադարեցնելու վերաբերյալ իշխանության մարմնի օրինական որոշումը չկատարելն է • օրենքով սահմանված կարգի խախտմամբ անցկացվող հավաքը դադարեցնելու վերաբերյալ ոստիկանության ներկայացուցչի օրինական որոշմանը չենթարկվելն է
489	Օրենքով սահմանված կարգի խախտմամբ հավաք կազմակերպելու և անցկացնելու համար քրեական պատասխանատվությունը վրա է հասնում. • օրենքով սահմանված կարգի խախտմամբ հավաք դիտավորությամբ անցկացնելու համար • օրենքով սահմանված կարգի խախտմամբ հավաք դիտավորությամբ կազմակերպելու համար • **օրենքով սահմանված կարգի խախտմամբ հավաք դիտավարությամբ կազմակերպելու և անցկացնելու համար** • օրենքով սահմանված կարգի խախտմամբ հավաք կազմակերպելու կամ անցկացնելու համար

490	Շենքեր, շինություններ, տրանսպորտի, հաղորդակցության կամ կապի միջոցներ զավթելը, դա. • **շենքեր, շինություններ, տրանսպորտի, հաղորդակցության կամ կապի միջոցներ, այլ հաղորդակցության ուղիներ զավթելը կամ դրանք պահելը՝ զուգորդված՝ դրանք ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքով, որը կատարվել է զավթածն ազատելու պայմանով պետությանը, կազմակերպությանը կամ քաղաքացուն որևէ գործողություն կատարելուն կամ որևէ գործողություն կատարելուց ձեռնպահ մնալուն հարկադրելու նպատակով** • շենքեր, շինություններ, տրանսպորտի, հաղորդակցության կամ կապի միջոցներ, այլ հաղորդակցության ուղիներ զավթելը կամ դրանք պահելը՝ զուգորդված՝ դրանք ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքով, որը կատարվել է զավթածն ազատելու պայմանով պետությանը, որևէ գործողություն կատարելուն կամ որևէ գործողություն կատարելուց ձեռնպահ մնալուն հարկադրելու նպատակով • շենքեր, շինություններ, տրանսպորտի, հաղորդակցության կամ կապի միջոցներ, այլ հաղորդակցության ուղիներ զավթելը կամ դրանք պահելը՝ զուգորդված՝ դրանք ոչնչացնելու սպառնալիքով, որը կատարվել է զավթածն ազատելու պայմանով կազմակերպությանը կամ քաղաքացուն որևէ գործողություն կամ անգործություն կատարելուն հարկադրելու նպատակով • շենքեր, շինություններ, տրանսպորտի, հաղորդակցության կամ կապի միջոցներ զավթելը՝ զուգորդված՝ դրանք վնասելու սպառնալիքով, որը կատարվել է զավթածն ազատելու պայմանով պետությանը, կազմակերպությանը կամ քաղաքացուն որևէ գործողություն կատարելուն կամ որևէ գործողություն կատարելուց ձեռնպահ մնալուն հարկադրելով
491	Ծովի կամ ջրային այլ ուղու վրա աղետի ենթարկվող կամ ենթարկված մարդկանց՝ նավապետի կողմից օգնություն ցույց չտալը քրեական պատասխանատվություն է առաջացնում. • բոլոր դեպքերում • **միայն, եթե այդ օգնությունը կարող էր ցույց տրվել առանց նավի, անձնակազմի կամ ուղևորների լուրջ վտանգման** • բացառությամբ այն դեպքի, երբ մարտի պարագաներում աղետի են ենթարկվել հակառակորդի զինծառայողները • միայն, եթե նավապետը հրաման է ստացել օգնություն ցույց տալու աղետի ենթարկվող կամ ենթարկված մարդկանց

492	Ծովի կամ ջրային այլ ուղու վրա աղետի ենթարկվող կամ ենթարկված մարդկանց օգնություն ցույց չտալը, եթե այդ օգնությունը կարող էր ցույց տրվել առանց նավի, անձնակազմի կամ ուղևորների լուրջ վտանգման, քրեական պատասխանատվություն է առաջացնում. • նավի անձնակազմի անդամների համար • միայն նավապետի կամ նավի անձնակազմի այն անդամների համար, ում նավապետի կողմից հրաման է տրվել օգնություն ցույց տալու աղետի ենթարկվող կամ ենթարկված մարդկանց • **միայն նավապետի համար** • նավի վրա գտնվող բոլոր այն անձանց համար, ով ի վիճակի էր օգնություն ցույց տալու աղետի ենթարկվող կամ ենթարկված մարդկանց
493	Ստորև նշված գործողություններից ո՞ր մեկը չի առաջացնի քրեական պատասխանատվություն քրեական օրենսգրքի 262-րդ հոդվածով (պոռնկությամբ զբաղվելուն նպաստելը). • պոռնկությամբ զբաղվելու համար հաստատություն ստեղծելը • որևէ հանրային հաստատություն պոռնկությամբ զբաղվելու համար օգտագործելը • պոռնկությամբ զբաղվելու համար բնակարան կամ այլ կացարան պարբերաբար տրամադրելը • **մարդուն պոռնկության մեջ ներգրավելը՝ կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիքով կամ դրա գործադրմամբ կամ հարկադրանքի այլ ձևերով**
494	Քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունն (թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց համարժեքների և պրեկուրսորների ապօրինի շրջանառությունն իրացնելու կամ պատրաստելու նպատակով) ուղղված է. • կյանքի և առողջության դեմ • հասարակական անվտանգության դեմ • **բնակչության առողջության դեմ** • հասարակական կարգի և բարոյականության դեմ

495	Պաշտոնական անփութություն է համարվում. • **պաշտոնատար անձի կողմից ծառայության նկատմամբ անբարեխիղճ կամ անփույթ վերաբերմունքի հետևանքով իր պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որն անզգուշությամբ էական վնաս է պատճառել անձանց կամ կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին (գույքային վնասի դեպքում՝ հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափը գերազանցող գումարը կամ դրա արժեքը** • պաշտոնատար անձի կողմից ծառայության նկատմամբ անբարեխիղճ վերաբերմունքի հետևանքով իր պարտականությունները չկատարելը, որն անզգուշությամբ էական վնաս է պատճառել անձանց կամ կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին կամ պետության օրինական շահերին (գույքային վնասի դեպքում՝ հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափը գերազանցող գումարը կամ դրա արժեքը • պաշտոնատար անձի կողմից ծառայության նկատմամբ անբարեխիղճ կամ անփույթ վերաբերմունքի հետևանքով իր պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որն էական վնաս է պատճառել անձանց կամ կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին • պաշտոնատար անձի կողմից ծառայության նկատմամբ անբարեխիղճ կամ անփույթ վերաբերմունքի հետևանքով իր պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որը դիտավորությամբ էական վնաս է պատճառել անձանց կամ կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին (գույքային վնասի դեպքում՝ հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափը գերազանցող գումարը կամ դրա արժեքը
496	Ա-ն աշխատելով ,Հայանտառ ՊՈԱԿ ,Կ-ի անտառտնտեսությունե մասնաճյուղի անտառպետության անտառապետ իր պահպանությանը հանձնված անտառպետության թիվ 5 պահաբաժնի ,Ցանցախե կոչվող անտառամասից Ս-ի, Հ-ի և Օ-ի միջոցով, բենզասղոցի գործադրմամբ ապօրինի կերպով հատել է 265 հատ կաղնի, բոխի, հացենի և տանձենի տեսակի տարբեր տրամագծի ծառեր, որի հետևանքով պետությանը պատճառվել է առանձնապես խոշոր չափի՝ 3.601.500 ՀՀ դրամի գույքային վնաս: Որակեք Ա-ի արարքը. • պաշտոնեական դիրքի չարաշահում • պաշտոնեական լիազորությունների անցնելը • **առանձնապես խոշոր չափերի ծառերի, թփերի և բուսածածկի ապօրինի հատումը** • անտառներ ոչնչացնելը կամ վնասելը

497	Հանցագործությո՞ն է արդյոք բնակարանի հատուկ թաքստոցում սառը զենք հանդիսացող դաշույն պահելը. • **ոչ** • այո • ոչ, եթե այդ մասին պահողը հայտնել է իրավապահ մարմիններին • ոչ, եթե դաշույնը կամովին հանձնվել է իրավապահ մարմիններին
498	Ապօրինի կերպով ողորկափող հրազեն ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը հանցագործությո՞ն է. • այո, եթե պիտանի է օգտագործման համար • այո, հանցագործություն է • **ոչ, հանցագործություն չէ** • այո, եթե դրա փողը կարձեցվել է
499	,Դիլիջանե Ազգային պարկի տեղամասի պետ Ա-ն, 2005-2006 թվականներին, իր ենթակայությամբ աշխատող, թիվ 5 պահաբաժնի տեսուչ Գ-ից պարբերաբար պահանջել է կենդանի խոզեր և դրանց դիմաց թույլատրել է կտրել ծառեր ու փայտանյութը տանել: 2006 թվականի օգոստոսի 25-ին, ստացված ահազանգի հիման վրա, Ազգային պարկի տնօրինության կողմից կազմվել է հանձնաժողով, որը թիվ 5 պահաբաժնում հայտնաբերել է 59 ծառերի ապօրինի անտառահատում: Կատարված հաշվարկի համաձայն պետությանը պատճառված վնասը սակագնային արժեքով կազմում է 2.874.500 ՀՀ դրամ, իսկ ընդհանուր վնասը՝ 14.300.000 ՀՀ դրամ: Որակեք Ա-ի արարքը. • **պաշտոնեական դիրքի չարաշահում** • պաշտոնեական լիազորությունների անցնելը • ծառերի, թփերի և բուսածածկի ապօրինի հատումը • անտառներ ոչնչացնելը կամ վնասելը
500	Ս-ն ժամը 21.00-ի սահմաններում պոկումով, բացահայտ հափշտակել է Ա-ի՝ 15.000 ՀՀ դրամ արժեքով ձեռքի պայուսակը, որի մեջ եղել են 6000 դրամ, 15.000 ՀՀ դրամ արժեքով 1 հատ ,Սոնի Էրիկսոնե մակնիշի բջջային հեռախոս՝ խոսելաքարտով, 10.000 ՀՀ դրամ արժեքով 1 հատ ոսկյա մատանի, 3100 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով բիժուտերիա հանդիսացող զարդեր, ինչպես նաև Ա-ի անձնագիրը, սոցիալական քարտը, փաստաբանի վկայականը և գրասենյակի ու տան բանալիները: Որակեք Ս-ի արարքը. • **կողոպուտ** • ավազակություն • կողոպուտ և փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ հափշտակելը կամ վնասելը • արարքում հանցակազմ չկա

501	Նախապատրաստվող ահաբեկչության մասին սուտ հաղորդում տալը. • հանցագործություն է, եթե այն առաջացրել է ծանր հետևանքներ • հանցագործություն է, եթե դրա հետևանքով կազմակերպությունը կրել է առանձնապես խոշոր չափի (արժեքի) վնաս • հանցագործություն է, եթե դրա հետևանքով երկարատև ժամանակով խաթարվել է պետական կառույցների բնականոն աշխատանքը և պետությունը կրել է առանձնապես խոշոր չափի (արժեքի) վնաս • **հանցագործություն է անկախ հետևանքներից**
502	Ա-ն և Խ-ն մանկությունից ճանաչել են միմյանց և գտնվել նորմալ հարաբերությունների մեջ: Խ-ն ռեստորանի մոտ նկատելով, որ Ա-ն ոգելից խմիչքի ազդեցության տակ հայհոյանքներ է տալիս քաղաքացիներին, նրան կարգի է հրավիրել: Դրանից վրդովված Ա-ն սկսել է վիճաբանել Խ-ի հետ, ո-րը կանխվել է շրջապատի բնակիչների միջամտությամբ: Այդ միջադեպից երեք օր հետո ժամը 23.30-ի սահմաններում, Ա-ն ռեստորանում հանդիպել է Խ-ին և, հիշելով 3 օր առաջ տեղի ունեցած անախորժ զրույցը, նորից սկսել է վիճաբանել նրա հետ, հայհոյանքներ են տվել միմյանց: Քաղաքացիների մի-ջամտությամբ Ա-ն դադարեցրել է իր գործողությունները և հեռացել: Սակայն որոշ ժամանակ անց իր հետ նախօրոք վերցված, ապօրինաբար ձեռք բերված հրազենով վերադարձել է և մոտ տարածությունից դիմահար կրակել Խ-ի սրտի շրջանին: Վերջինս ստացած վնասվածքից հիվանդանոց տեղափոխվելու ճանապարհին մահացել է: Որակել Ա-ի արարքը. • **խուլիգանություն, ապօրինի զենք պահել, կրել և հասարակ սպանություն** • խուլիգանական շարժառիթով սպանություն և ապօրինի զենք պահել, կրել • խուլիգանություն, ապօրինի զենք պահել, կրել և առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառել, որն անզգուշությամբ առաջացրել է մահ • կրկին անգամ կատարված խուլիգանություն, ապօրինի զենք պահել, կրել և հասարակ սպանություն
503	Թվարկվածներից ո՞րն է քրեական պատասխանատվության ենթակա <<հանցագործությունը պարտակելը>> հանցանքի համար. • գողություն կատարողի կինը, որը նախապես խոստացել էր ամուսնուն, որ կթաքցնի հանցագործության գործիքները • գողություն կատարողի հորեղբայրը, որն օժանդակել է այդ գողությունը կատարելուն, իսկ հետո իր տան նկուղում թաքցրել գողոնի մի մասը • գողություն կատարողի հարևանը, որը կատարելով նախապես տված խոստումը, իր տան նկուղում թաքցրել է գողոնի մի մասը • **գողություն կատարողի հարևանը, որն գողության հաջորդ օրն իմանալով կատարված գողության մասին, հանցագործության հետքերը վերացնելու նպատակով ոչնչացրել է ամբողջ գողոնը**

504	Օրինական ուժի մեջ մտած դատական ակտը քաղաքացու կողմից չկատարելը. • չի առաջացնում քրեական պատասխանատվություն • առաջացնում է միայն վարչական պատասխանատվություն • **առաջացնում է քրեական պատասխանատվություն, միայն նույն արարքի համար վարչական տույժ նշանակելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում** • առաջացնում է քրեական պատասխանատվություն, եթե անձը չարամտորեն խուսափում է այն կատարելուց և այլ միջոց չկա դատական ակտի կատարումն ապահովելու համար
505	Ուրիշի գույքի զգալի չափերով հափշտակությունը, որը կատարվել է վստահությունը չարաշահելու եղանակով՝ կաշառք ստանալու պատրվակով որակվում է որպես. • **խարդախություն** • կաշառք ստանալ • պաշտոնական դիրքի չարաշահում • կաշառք տալու դրդչություն
506	Ա-ն 2006 թվականի հունվարի 27-ի լույս 28-ի գիշերը՝ ժամը 1-ի սահմաններում գիշերային ակումբում, ալկոհոլ օգտագործած վիճակում ա-կումբի աշխատակիցների ներկայությամբ շուրջ 20 րոպե տևողությամբ հայ-հոյանքներ է տվել ակումբի պարուհիների հասցեին, այնուհետև, ապօրինի կերպով ձեռք բերված և այդ պահին իր կողմից կրվող թիվ 21137 համարի 7.65 տրամաչափի ,Մաուզերե տեսակի ատրճանակից կրակոց է արձակել և վնասել գիշերային ակումբի առաստաղը: Որակեք Ա-ի արարքը. • զենքի գործադրմամբ խուլիգանություն և ուրիշի գույքը ոչնչացնելը կամ վնասը • միայն ապօրինի զենք կրելը և պահելը, քանի որ զենքի գործադրումը վարչական իրավախախտում է, իսկ հայհոյանքներ տալը քաղաքացիական իրավախախտում է • **ապօրինի զենք պահելը, կրելը և զենքի գործադրմամբ խուլիգանություն** • ուրիշի գույքը ոչնչացնելը կամ վնասը, ապօրինի զենք պահելը, կրելը և զենքի գործադրմամբ խուլիգանություն
507	Մեղադրյալը տեխնիկական միջոցներ կիրառելու միջոցով ապօրինի մուտք է գործել պահեստարան և գաղտնի հափշտակել է զգալի չափերով գույք: Խնդրվում է որակել մեղադրյալի արարքը. • մեղադրյալի արարքը պետք է որակել որպես ծանրացնող հանգամանքներում՝ տեխնիկական միջոցների գործադրմամբ զուգորդված գողություն՝ քրեական օրենսգրքի 177 հոդվածի 2-րդ մասով • մեղադրյալի արարքը պետք է որակել որպես հասարակ գողություն՝ քրեական օրենսգրքի 177 հոդվածի 1-ին մասով • մեղադրյալի արարքը պետք է որակել որպես կողոպուտ • **մեղադրյալի արարքը պետք է որակել որպես գողություն, որը կատարվել է պահեստարան մուտք գործելով՝ քրեական օրենսգրքի 177 հոդվածի 2-րդ մասով**

508	Ավազակությունը ավարտված է համարվում. • **գույքին տիրանալու նպատակով անձի կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնությամբ կամ այդպիսի բռնության սպառնալիքով զուգորդված հարձակման պահից** • գույքին տիրանալու նպատակով անձի կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնությամբ կամ այդպիսի բռնության սպառնալիքով զուգորդված հարձակման պահից • գույքին իրական տիրանալու պահից, երբ հանցավորը կարող է իր հայեցողությամբ անարգել տնօրինելու կամ օգտագործելու գույքը • գույքին տիրանալու պահից, անկախ այն բանից, թե հանցավորը կարող է իր հայեցողությամբ անարգել տնօրինել կամ օգտագործել գույքը
509	Գույքի հափշտակման ժամանակ հանցավորի բանալին դեմ է անում տուժողի ծոծրակին, դրանով տպավորություն է ստեղծում, որ իբր դա զենք է և պահանջում է գույքը: Խնդրվում է որակել հանցավորի արարքը. • արարքը պետք է որակել որպես կողոպուտ • **արարքը պետք է որակել որպես հասարակ ավազակություն** • արարքը պետք է որակել որպես ավազակության փորձ • արարքը պետք է որակել որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ կատարած ավազակություն
510	Անվադողերի գործարանի փականակագործը գործարանի պահեստից գաղտնի վերցնում է մեկ հատ անվադող և թաքցնում է այն գործարանի տարածքում գտնվող իր արհեստանոցում՝ նպատակ ունենալով այն վաճառել իր հարևանին, սակայն չի հասցնում: Հաջորդ օրը գողոնը հայտնաբերվում է արհեստանոցում և առգրավվում: Խնդրվում է որակել հանցավորի արարքը. • հանցավորը կատարել է գողություն • **հանցավորը կատարել է գողության փորձ** • հանցավորը նախապատրաստվել է կատարելու գողություն • հանցավորը կատարել է կողոպուտ
511	Կոնյակի գործարանի բանվորը շշալցման արտադրամասից գողանում է 20 շիշ կոնյակ և պահում է դրանք գործարանի տարածքում գտնվող հանդերձարանի իր պահարանում: Կոնյակը նրան չի հաջողվում դուրս բերել գործարանի տարածքից: Ստիպված դրանք նա վաճառում է գործարանի տարածքում գտնվող բուֆետի բուֆետապանին և ստանում նրանից 25000 դրամ: Խնդրվում է որակել բանվորի արարքը. • **նա կատարել է գողություն** • նա կատարել է կողոպուտ • նա կատարել է գողության փորձ • նա կատարել է գողության և հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի իրացում

512	Հանցավորը թաքնվել է հանրախանութի մութ անկյուններից մեկում, գիշերը խանութի երկու տարբեր սեփանակատերերի պատկանող բաժինների դրամարկղերից վերցրել է դրանցում թողնված զգալի չափերի հասնող գումարները, իսկ հաջորդ օրը առավոտյան հանրախանութը բացվելուց հետո դուրս է եկել թաքստոցից ու հեռացել: Խնդրվում է որակել հանցավորի արարքը. • **նա կատարել է ուրիշի գույքի գաղտնի հափշտակություն՝ գողություն** • նա կատարել է ուրիշի գույքի բացահայտ հափշտակություն՝ կողոպուտ • նա կատարել է ուրիշի գույքի գաղտնի հափշտակություն՝ շինություն ապօրինի մուտք գործելով • նա կատարել է ուրիշի գույքի գաղտնի հափշտակություն՝ պահեստարան ապօրինի մուտք գործելով
513	Ցանկանալով պահեստից խոշոր չափերի յուրացում կատարել՝ պահեստապետը, ում վստահված է գույքը, իր նպատակն իրականացնում է մեկ շաբաթում երեք անգամ զգալի չափերով յուրացում կատարելով: Ինչպե՞ս պետք է որակվի արարքը նկատի ունենալով, որ հափշտակված ընդհանուր արժեքը խոշոր է. • հանցավորը պետք է մեղադրվի զգալի չափերով երեք ինքնուրույն հափշտակություն կատարելու համար, յուրաքանչյուր դրվագի համար առանձին-առանձին • հանցավորը պետք է մեղադրվի զգալի չափերով մեկ ընդհանուր հափշտակություն կատարելու համար • հանցավորը պետք է մեղադրվի զգալի չափերով կրկին անգամ յուրացում կատարելու համար • **հանցավորը պետք է մեղադրվի խոշոր չափերով յուրացում կատարելու համար**
514	Ցանկանալով պահեստից խոշոր չափերի գույքի յուրացում կատարել՝ գործարանի պահեստապետը, ում վստահված է գույքը, իր նպատակն իրականացնելու համար մեկ շաբաթում երեք անգամ զգալի չափերով յուրացում է կատարում, սակայն բռնվում է վերջին անգամ գործարանի տարածքից գույքը դուրս բերելու պահին: Ինչպե՞ս պետք է որակվի նրա արարքը, եթե հափշտակված գույքի ընդհանուր արժեքը խոշոր չէ. • **հանցավորը պետք է մեղադրվի խոշոր չափերով յուրացման փորձ կատարելու համար** • հանցավորը պետք է մեղադրվի զգալի չափերով մեկ ընդհանուր հափշտակություն կատարելու համար • հանցավորը պետք է մեղադրվի զգալի չափերով կրկին անգամ յուրացում կատարելու համար • հանցավորը պետք է մեղադրվի զգալի չափերով երեք ինքնուրույն հափշտակություն կատարելու համար, յուրաքանչյուր դրվագի համար առանձին-առանձին, ընդ որում վերջին դրվագով որպես հանցափորձ

515	Ի՞նչ ժամկետով է կալանքը նշանակվում անչափահասի նկատմամբ քրեական գործով. • 15 օր ժամկետով • 15-ից 30 օր ժամկետով • **15 օրից երկու ամիս ժամկետով** • 15 օրից երեք ամիս ժամկետով
516	2006 թվականի ապրիլի 10-ին՝ ժամը 14:30-ի սահմաններում, Կ-ն ալկոհոլ օգտագործած վիճակում փողոցում հանդիպել է նախկին հարևան Ա-ին, որը եղել է իր ազգական և Կ-ի հարևան Ն-ին պատկանող Ֆոլկսվագեն-Գոլֆ մակնիշի ավտոմեքենայով: Տեղյակ լինելով, որ, իբր, Ն-ն ցանկանում է վաճառել ավտոմեքենան, Կ-ն այդ թեմայով զրուցել է Ա-ի հետ և զննել մեքենան: Զրույցի ընթացքում Ա-ն և Կ-ն ավտոմեքենայի արժեքի շուրջ համաձայնության չեն եկել, այդ առթիվ կոպիտ տոնով խոսել են միմյանց հետ, ինչը վերածվել է փոխադարձ քաշքշուքի: Այնուհետև Ա-ից վրեժխնդիր լինելու նպատակով Կ-ն գնացել է իրենց տուն և բակում գտնվող խորդանոցից վերցնելով հարվածող-փշրող սառը զենք համարվող մահակը՝ վերադարձել է և տեսել, որ վերը նշված ավտոմեքենան կանգնած է նույն վայրում, իսկ Ա-ն այնտեղ չէ: Մոտենալով ավտոմեքենային՝ Կ-ն իր մոտի մահակով և մայթեզրին ընկած քարով հարվածել և կոտրել է ավտոմեքենայի բոլոր ապակիները, վնասել թափքի մետաղական հատվածները՝ Ն-ին պատճառելով 850.000 ՀՀ դրամ գույքային վնաս, որից հետո դիմել է փախուստի: Որակեք Կ-ի արարքը. • որպես զենք օգտագործվող առարկայի գործադրմամբ խուլիգանություն • խուլիգանություն և ուրիշի գույքը ոչնչացնելը կամ վնասելը • **ուրիշի գույքը ոչնչացնելը կամ վնասելը** • գույքային վնաս պատճառելը խաբեությամբ կամ վստահությունը չարաշահելով
517	Քրեական օրենսգրքի 330-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունը (պետական սահմանի նշանները վերցնելը, տեղաշարժելը կամ ոչնչացնելը) կարող է կատարվել. • ուղղակի կամ անուղղակի դիտավորությամբ • միայն ուղղակի դիտավորությամբ • միայն անզգուշությամբ • ինչպես դիտավորությամբ, այնպես էլ անզգուշությամբ
518	Ա-ն ապօրինի պատրաստել ու իր մոտ պահել է մարիխուանա տեսակի թմրամիջոց, որից 1,82 գրամը 01.03.06 թվականին բնակարանում Ռ-ի, Գ-ի և Ն-ի հետ միասին ծխել են: Որակեք Ա-ի արարքը. • հանցակազմ չկա • թմրամիջոց իրացնել • թմրամիջոց պատրաստել, պահել և իրացնել • **թմրամիջոց պատրաստել և պահել**

519	Ի՞նչ տեսակի դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ չի կարող իր նախաձեռնությամբ նշանակել դատարանը անչափահասի նկատմամբ. • նախազգուշացում • **խիստ նախազգուշացում** • ծնողների կամ նրանց փոխարինող անձանց կամ տեղական ինքնակառավարման կամ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի հսկողությանը հանձնելն առավելագույնը վեց ամիս ժամկետով • ժամանցի ազատության սահմանափակումը եւ վարքագծի նկատմամբ հատուկ պահանջների սահմանումն առավելագույնը վեց ամիս ժամկետով
520	Դատարանի դատավճռով բռնագրավման ենթակա գույքը թաքցնելը. • չի առաջացնում քրեական պատասխանատվություն • առաջացնում է վարչական պատասխանատվություն • առաջացնում է պատասխանատվություն դատական ակտը դիտավորությամբ չկատարելու համար • **առաջացնում է պատասխանատվություն արգելանքի տակ գտնվող կամ բռնագրավման ենթակա գույքի նկատմամբ ապօրինի գործողություններ կատարելու համար**
521	Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններին սուտ տեղեկություններ հաղորդելը. • հանցագործություն չէ • **հանցագործություն է** • հանցագործություն է միայն, եթե կատարվել է շահադիտական կամ անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով • հանցագործություն է միայն, եթե զուգորդվել է կեղծ փաստաթղթեր ներկայացնելով
522	Կեղծ եզրակացություն կամ սուտ ցուցմունք տալու նպատակով փորձագետին կաշառելը համարվում է. • կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործություն • **արդարադատության դեմ ուղղված հանցագործություն** • տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություն • հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործություն
523	Քրեական օրենսգրքի 269.1. հոդվածով նախատեսված հանցագործությունն (Թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր կամ դրանց պրեկուրսորներ ստանալու իրավունք տվող փաստաթղթեր ապօրինի պատրաստելը, օգտագործելը, կեղծելը կամ կեղծված փաստաթղթեր իրացնելը) ուղղված է. • **բնակչության առողջության դեմ** • հասարակական անվտանգության դեմ

	• կյանքի և առողջության դեմ • հասարակական կարգի և բարոյականության դեմ
524	Ա-ն ավտոշուկայում տեսնելով, որ Մ-ն, Գ-ն, Բ-ն և Է-ն ավտոմեքենայի գնի սակարկության առթիվ վիճաբանության ժամանակ ծեծի են ենթարկում և բռնություն գործադրում իր խնամակալության տակ գտնվող հաշմանդամ հորը՝ Հ-ին, սարսափահար լինելով նրան կորցնելու մտքից, հուզական գերլարվածությունից կորցրել է ինքնատիրապետումը և հորը պաշտպանելու նպատակով միջամտել է ծեծկռտուքին, տեղում պատահական ձեռքն ընկած բահի փայտյա բռնակով անկանոն շարժում է կատարել և հարվածել կռվին մասնակից Գ-ին, նրա առողջությանը պատճառելով ծանր վնաս: Որակեք Ա-ի արարքը. • հոգեկան խիստ հուզմունքի վիճակում առողջությանը ծանր վնաս պատճառել • դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառել • անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ առողջությանը ծանր վնաս պատճառել • **անհրաժեշտ պաշտպանություն**
525	Վկային կամ տուժողին սուտ ցուցմունք տալուն, փորձագետին կեղծ եզրակացություն տալուն կամ թարգմանչին սխալ թարգմանություն կատարելուն հարկադրելը, ինչպես նաև ցուցմունք տալուց խուսափելուն հարկադրելը, որը զուգորդվել է այդ անձանց կամ նրանց մերձավորի նկատմամբ շանտաժով, սպանության, առողջությանը վնաս պատճառելու, գույքը ոչնչացնելու սպառնալիքով հանցագործությունն ուղղված է. • կառավարման կարգի դեմ • սահմանադրական կարգի դեմ • **արդարադատության դեմ** • անձի կյանքի և առողջության դեմ
526	ՀՀ քրեական օրենսգրքով պաշտոնական փաստաթղթեր թաքցնելու համար նախատեսվա՞ծ է արդյոք քրեական պատասխանատվություն. • նախատեսված է, եթե միայն այդ արարքը կատարվել է միայն շահադիտական դրդումներով • **նախատեսված է, եթե այդ արարքը կատարվել է շահադիտական դրդումներով կամ անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով** • նախատեսված է, եթե միայն այդ արարքը կատարվել է միայն անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով • չի նախատեսված

527	Նշվածներից ո՞րն է քրեական օրենքով նախատեսված որպես պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք. • արյան վրեժի շարժառիթը • **այլ անձանց իրավաչափ գործողությունների համար վրեժի շարժառիթը** • վրեժի շարժառիթը • խանդի շարժառիթը
528	Ավտոմեքենա վարող անձի կողմից ճանապարհային երթևեկության կանոնները խախտելու հետևանքով մարդու առողջությանն անզգուշությամբ պատճառվել է կարճատև քայքայում: Կա՞ արդյոք վարորդի արարքում հանցակազմ. • այո, հանցակազմ կա • **ոչ, հանցակազմ չկա** • կա հանցակազմ, եթե միաժամանակ անզգուշությամբ խոշոր չափի նյութական վնաս է պատճառվել տուժողին • կա հանցակազմ, եթե վարորդը ավտոմեքենան վարել է հարբած վիճակում
529	ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի համաձայն ավազակությունը, դա. • ուրիշի գույքը հափշտակելու նպատակով կատարված հարձակումն է, որը զուգորդվել է կյանքից զրկելով • ուրիշի գույքի հափշտակությունն է կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով • ուրիշի գույքը հափշտակելու նպատակով հարձակումն է կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով • **ուրիշի գույքը հափշտակելու նպատակով հարձակումն է, որը կատարվել է կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով**
530	Խարդախության դեպքում զգալի չափ է համարվում. • **հանցագործության պահին Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից հինգհարյուրապատիկը չգերազանցող գումարը (արժեքը)** • հանցագործության պահին Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկից հինգհարյուրապատիկը չգերազանցող գումարը (արժեքը) • հանցագործության պահին Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկից հինգհարյուրապատիկը չգերազանցող գումարը (արժեքը) • հանցագործության պահին Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկից երեսնապատիկը չգերազանցող գումարը (արժեքը)

531	Ա-ի վստահված անձ Բ-ն հասկանալով, որ Ա-ի հաղթանակը անիրատեսական է, որպեսզի չընտրվի նաև մյուս թեկնածուն ընտրություններին մասնակցելուց հրաժարվելու պայմանով ընտրողներին բռնություն կիրառելու սպառնալիքով հարկադրում է չմասնակցել ընտրություններին: Որակեք Բ-ի արարքը. • ընտրություններկն մասնակցելուն խոչընդոտելը • արարքում հանցակազմ չկա • անձնական կամ այլ շահագրգռվածությունից ելնելով կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն կիրառելու սպառնալիքը • **ընտրողի կամքի ազատ իրականացմանը խոչընդոտելը**
532	Ներքոհիշյալ ո՞ր դեպքում ,փախուստն ազատազրկման վայրից, կալանավորվածներին պահելու վայրից կամ ձերբակալվածներին պահելու վայրիցե հանցանքը որակյալ չի համարվում. • **երբ այն կատարվել է տեխնիկական միջոցների օգտագործմամբ** • երբ այն կատարվել է զենք կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ • երբ այն կատարվել է մի խումբ անձանց կողմից • երբ այն կատարվել է այլ անձի կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ այն գործադրելու սպառնալիքով
533	Քրեական պատասխանատվության միակ հիմքը. • անձի՝ քրեական պատասխանատվության տարիքի հասած լինելն է • **հանցանք, այսինքն՝ այնպիսի արարք կատարելն է, որն իր մեջ պարունակում է քրեական օրենքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները** • մեղքն է • անձի խոստովանական ցուցմունքն է
534	Վիճաբանության ընթացքում Ա-ն մի քանի անգամ ապտակում է Բ-ին, որի արդյունքում վերջինիս պատճառվում է ֆիզիկական ցավ: Որակեք Ա-ի արարքը. • արարքում հանցակազմ չկա • առողջությանը թեթև վնաս պատճառել • **ծեծ** • ծեծ և առողջությանը թեթև վնաս պատճառել

535	Անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում է համարվում և քրեական պատասխանատվության է հանգեցնում. • զենքի կամ ցանկացած այլ միջոցների կամ առարկաների գործադրումը զինված անձի հարձակումից պաշտպանվելու համար • զենքի կամ ցանկացած այլ միջոցների կամ առարկաների գործադրումը անձանց խմբի հարձակումից պաշտպանվելու համար • զենքի կամ ցանկացած այլ միջոցների կամ առարկաների գործադրումը ապօրինաբար և բռնությամբ բնակարան ներխուժելը կանխելու համար՝ անկախ ոտնձգողին պատճառած վնասի ծանրությունից **• զենքի կամ ցանկացած այլ միջոցների կամ առարկաների գործադրումը ապօրինաբար բնակարան ներխուժելը կանխելու համար՝ անկախ ոտնձգողին պատճառած վնասի ծանրությունից**
536	Դատավարության ներքոհիշյալ մասնակիցներից ո՞վ չի կարող հանդիսանալ ,փախուստն ազատազրկման վայրից, կալանավորվածներին պահելու վայրից կամ ձերբակալվածներին պահելու վայրիցե հանցանքի սուբյեկտ. • ձերբակալված կասկածյալները **• կալանքի տակ չգտնվող մեղադրյալները** • կալանքի տակ գտնվող մեղադրյալները • դատապարտյալները
537	Ներքոհիշյալ ո՞ր դեպքում ,պետին դիմադրելը կամ նրան զինվորական ծառայության պարտականությունները չկատարելուն կամ ոչ պատշաճ կատարելուն հարկադրելը հանցանքը որակյալ չի դարձնում. • երբ հանցանքը կատարվել է մի խումբ անձանց կողմից **• երբ հանցանքը կատարվել է այլ զինծառայողների ներկայությամբ** • երբ այդ արարքներն անզգուշությամբ առաջացրել են այլ ծանր հետևանքներ • երբ հանցանքը կատարվել է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում
538	Արդարադատության դեմ ուղղված հանցագործություն չէ. • սուտ մատնությունը **• իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելը** • հանցագործություն պարտակելը • հանցագործության մասին չհայտնելը
539	Ստորև թվարկվածներից ո՞րը նախատեսված չէ ՀՀ քրեական օրենսգրքի 2-րդ հոդվածում (ՀՀ քրեական օրենսգրքի խնդիրներ) որպես քրեական օրենսդրության խնդիր. • մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները հանցավոր ոտնձգություններից պաշտպանելը • իրավաբանական անձանց իրավունքները հանցավոր ոտնձգություններից պաշտպանելը

	• շրջակա միջավայրը հանցավոր ոտնձգություններից պաշտպանելը • **հանցագործությամբ պատճառված վնասի հատուցումը**
540	Նշվածներից որն է նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 146-րդ հոդվածում (Նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական կամ այլ հաղորդումների գաղտնիությունը խախտելը) որպես քաղաքացիների նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական կամ այլ հաղորդումների գաղտնիությունը խախտելու ծանրացուցիչ հանգամանք. • նույն արարքը, որը կատարվել է կրկին անգամ • նույն արարքը, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ • նույն արարքը, որը կատարվել է կազմակերպված խմբի կողմից • **նույն արարքը, որը կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով**
541	Հ-ն 2008 թվականի փետրվարի 15-ին՝ ժամը 23:30-ի սահմաններում, փողոցի վրա գտնվող ,Պե խանութ-սրահի մոտակայքում, ներկա լինելով Վ-ի և Ս-ի միջև գումարի պարտք ու պահանջի շուրջ ծագած վիճաբանությանը և, առանց բժշկի թույլտվության, գտնվելով կանաբիսի խմբին պատկանող թմրամիջոցի ազդեցության տակ, ապօրինաբար իր մոտ կրած թիվ 1299179 գործարանային համարով ,ԱԿ-74ե տիպի ակոսափող ինքնաձիգից, չնչին առիթով, իր անձի առավելությունը ընդգծելու մոլուցքով կրակահերթ է արձակել ընթացքի մեջ գտնվող ,Օպել-Վեկտրաե մակնիշի ավտոմեքենայի վրա՝ վարորդ Լ-ի, ուղևորներ Շ-ի և Ա-ի, ինչպես նաև այդ պահին նշված վայրում գտնվող հետիոտներ Մ-ի և Գ-ի ուղղությամբ: Կրակահերթի հետևանքով բացի ավտովարորդ Լ-ից և հետիոտն Գ-ից, Շ-ի առողջությանը պատճառվել է ծանր վնաս՝ կյանքին վտանգ սպառնացող, Ա-ի և Մ-ի առողջությանը՝ միջին ծանրության վնաս՝ առողջության տևական քայքայումով, իսկ Լ-ին պատկանող վերը նշված ավտոմեքենային պատճառվել է զգալի չափի՝ 215.000 ՀՀ դրամի նյութական վնաս: Որակեք Հ-ի արարքը. • շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով կատարված սպանության փորձ • թմրամիջոցի ապօրինի գործածում, շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով կատարված սպանության փորձ, առողջությանը ծանր, միջին ծանրության վնաս պատճառել • **շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով, խուլիգանական դրդումներով կատարված սպանության փորձ, ուրիշի գույքի դիտավորությամբ վնասել և ապօրինի զենք կրել, պահելը**

	• ալկոհոլային կամ այլ հարբածության վիճակում սպանության փորձ, և զենքի գործադրմամբ խուլիգանություն
542	Ա-ն մտնելով հարևանի բնակարանը՝ տեսնում է, որ տանն է միայն երկու տարեկան երեխան և ուրիշ ոչ-ոք չկա: Օգտվելով դրանից՝ նա բնակարանից հափշտակում է պատից կախված ոսկյա ժամացույցը, որը զգալի արժեք է ներկայացնում: Որակել Ա-ի արարքը. • Ա-ն կատարել է կողոպուտ • **Ա-ն կատարել է գողություն** • Ա-ն կատարել է ավազակություն • Ա-ն կատարել է խարդախություն
543	Ա-ն իմանալով, որ Բ-ն բժշկի թույլտվությամբ թմրամիջոցներ է գործածում, մի քանի անգամ գնացել է Բ-ի բնակարան և նրանից խնդրել իրեն հյուրասիրել թմրամիջոցով: Սակայն Բ-ն ամեն անգամ հրաժարվել է նրան թմրամիջոց հյուրասիրելուց: Հերթական անգամ Բ-ն, ընդառաջելով նրա խնդրանքին, թմրամիջոց է հյուրասիրել Ա-ին և բռնվել ոստիկանության աշխատակիցների կողմից. • Բ-ն կատարել է առանց իրացնելու նպատակի թմրամիջոց ապօրինի պահելու և թմրամիջոցը ապօրինի իրացնելու հանցանքներ • **Բ-ն կատարել է միայն թմրամիջոց ապօրինի իրացնելու հանցանք** • Բ-ն կատարել է թմրամիջոց ապօրինի ձեռք բերելու և պահելու հանցանք • Բ-ն կատարել է թմրամիջոց ապօրինի պահելու և իրացնելու հանցանքներ

544	Գերության մեջ գտնվող զինծառայողի կողմից ռազմական նշանակություն ունեցող աշխատանքներին կամ այնպիսի այլ միջոցառումներին կամովին մասնակցելը, որոնք ակնհայտ կերպով կարող են վնաս պատճառել Հայաստանի Հանրապետությանը կամ նրա դաշնակից պետություններին, քրեական պատասխանատվություն է առաջացնում, որակվում է ՀՀ քրեական օրենսգրքի 382-րդ հոդվածով (հանցավոր գործողությունները գերության մեջ գտնվող զինծառայողի կողմից). • միայն, եթե զինծառայողը սպա կամ ենթասպա չէ • միայն, եթե զինծառայողը գտնվում է ծայրահեղ անհրաժեշտության մեջ • միայն, եթե կատարվել է շահադիտական դրդումներով կամ իր նկատմամբ հակառակորդի ներողամիտ վերաբերմունքն ապահովելու նպատակով **• եթե բացակայում են պետական դավաճանության հատկանիշները**
545	Թվարկածներից ո՞րը չի նախատեսված քրեական օրենսգրքում որպես առաջին անգամ դասալքություն կատարած զինծառայողին քրեական պատասխանատվությունից ազատելու պարտադիր հանգամանք. • եթե դասալքությունը կատարվել է ծանր հանգամանքների զուգորդման հետևանքով ծառայությունից խուսափելու պահից երեք օրվա ընթացքում մեղայականով զորամաս ներկայանալը • ծառայությունից խուսափելու պահից երեք օրվա ընթացքում մեղայականով զորամաս կամ իրավապահ մարմիններ ներկայանալը **• ծառայությունից խուսափելու հարգելի պատճառի առկայությունը** • ծառայությունից խուսափելու պահից երեք օրվա ընթացքում մեղայականով իրավապահ կամ պետական այլ մարմիններ ներկայանալը
546	Կալանքը, որպես պատիժ, կարող է նշանակվել. • միայն ոչ մեծ ծանրության հանցանքների համար **• միայն ոչ մեծ և միջին ծանրության հանցանքների համար** • միայն անզգույշ հանցանքների համար • միայն առաջին անգամ կատարված հանցանքների համար
547	Կալանքը հանդիսանում է. • միայն լրացուցիչ պատժատեսակ • ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ պատժատեսակ • այլընտրանքային պատժատեսակ **• միայն հիմնական պատժատեսակ**

548	Հայաստանի Հանրապետության և այլ պետությունների տարածքում անձի կողմից հանցանք կատարելու դեպքում. • նրա պատասխանատվությունը վրա է հասնում այն պետության քրեական օրենսգրքով, որի քաղաքացին է անձը **• նրա պատասխանատվությունը վրա է հասնում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով, եթե անձը քրեական պատասխանատվության է կանչվել Հայաստանի Հանրապետության տարածքում, և եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով այլ բան նախատեսված չէ** • նրա պատասխանատվությունը վրա է հասնում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով, եթե անձը Հայաստանի Հանրապետության քաղաքացի է • նրա պատասխանատվությունը վրա է հասնում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով, եթե անձը Հայաստանի Հանրապետության երկքաղաքացի է
549	Եթե օտարերկրյա պետությունների դիվանագիտական ներկայացուցիչները ՀՀ տարածքում կատարում են հանցանք, ապա. • նրանք քրեական պատասխանատվության են ենթարկվում ընդհանուր հիմունքներով • նրանք ենթակա են միայն կարգապահական պատասխանատվության **• նրանց քրեական պատասխանատվության հարցը լուծվում է միջազգային իրավունքի նորմերին համապատասխան** • նրանց քրեական պատասխանատվության հարցը լուծվում է ՀՀ գլխավոր դատախազի կողմից
550	Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները և Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող և քաղաքացիություն չունեցող անձինք ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ (Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներն օրինականացնելը), 200-րդ (առևտրային կաշառք), 201-րդ (արհեստավարժ մարզամրցումների և հանդիսադիր առևտրային մրցույթների մասնակիցներին ու կազմակերպիչներին կաշառելը), 384-րդ (ագրեսիվ պատերազմ), հոդվածներով նախատեսված հանցանքները կատարելու համար ենթակա են քրեական պատասխանատվության Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով. • եթե այդ արարքը նախատեսված է հանցանքը կատարելու վայրի պետության քրեական օրենսգրքով • եթե այդ հանցանքի վաղեմության ժամկետը լրացել է **• անկախ հանցանքը կատարելու վայրի պետության քրեական օրենսգրքով այդ արարքը նախատեսված լինելուց կամ չլինելուց** • եթե այդ հանցանքի վաղեմության ժամկետը կասեցված չի եղել

551	Նշված դեպքերից ո՞րը կհամարվի վտանգավոր ռեցիդիվ. • դիտավորյալ հանցանք կատարելու դեպքում, եթե անձը նախկինում ազատազրկման է դատապարտվել ծանր հանցագործության համար **• ծանր հանցանք կատարելու դեպքում, եթե անձը նախկինում ազատազրկման է դատապարտվել ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար** • ծանր հանցանք կատարելու դեպքում, եթե անձը նախկինում ազատազրկման է դատապարտվել դիտավորյալ հանցագործության համար • դիտավորյալ հանցանք կատարելու դեպքում, եթե անձը նախկինում ազատազրկման է դատապարտվել դիտավորյալ հանցագործության համար
552	Անզգուշությամբ կատարված արարքը հանցագործություն է, եթե. **• դա հատկապես նախատեսված է քրեական օրենսգրքի հատուկ մասով** • լրացել է այն կատարող անձի 16 տարին • այն ուղղված է անձի կյանքի դեմ • այն էական վնաս է պատճառել անձի իրավունքներին և օրինական շահերին
553	Չավարտված հանցագործություն են համարվում. • հանցափորձը և բոլոր հանցագործությունների նախապատրաստությունը **• հանցափորձը և ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների նախապատրաստությունը** • ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների փորձը և նախապատրաստությունը • ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների փորձը և բոլոր հանցագործությունների նախապատրաստությունը
554	Հանցափորձը հնարավոր է. • միայն գործողությամբ • միայն անգործությամբ **• գործողությամբ և անգործությամբ** • գործողությամբ, իսկ ծանր և առանձնապես ծանր հանցանքների դեպքում՝ նաև անգործությամբ

555	Նշված դատողություններից ո՞րն է ճիշտ. • կազմակերպիչը, դրդիչը և օժանդակողը բոլոր դեպքերում ենթակա են պատասխանատվության կատարված հանցանքը նախատեսող հոդվածով՝ հղում կատարելով քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածին (հանցակիցների տեսակները) **• կազմակերպիչը, դրդիչը և օժանդակողը ենթակա են պատասխանատվության կատարված հանցանքը նախատեսող հոդվածով՝ հղում կատարելով քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածին (հանցակիցների տեսակները)՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նրանք միաժամանակ եղել են հանցագործության համակատարողներ** • կազմակերպիչը, դրդիչը և օժանդակողը ենթակա են պատասխանատվության կատարված հանցանքը նախատեսող հոդվածով՝ հղում կատարելով քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածին (հանցակիցների տեսակները)՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նրանք չեն հանդիսանում հանցագործության հատուկ սուբյեկտ • կազմակերպիչը, դրդիչը և օժանդակողը բոլոր դեպքերում ենթակա են պատասխանատվության կատարված հանցանքը նախատեսող հոդվածով՝ առանց հղում կատարելու քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածին (հանցակիցների տեսակները)
556	Նշված դատողություններից ո՞րն է ճիշտ. **• քրեական օրենսգրքի հատուկ մասի հոդվածում նշված հանցագործության հատուկ սուբյեկտ չհամարվող անձը, ով մասնակցել է այդ հոդվածով նախատեսված հանցանքի կատարմանը, տվյալ հանցագործության համար կարող է պատասխանատվություն կրել միայն որպես կազմակերպիչ, դրդիչ կամ օժանդակող** • քրեական օրենսգրքի հատուկ մասի հոդվածում նշված հանցագործության հատուկ սուբյեկտ չհամարվող անձը, ով մասնակցել է այդ հոդվածով նախատեսված հանցանքի կատարմանը, տվյալ հանցագործության համար պատասխանատվություն է կրում որպես կատարող • քրեական օրենսգրքի հատուկ մասի հոդվածում նշված հանցագործության հատուկ սուբյեկտ չհամարվող անձը, ով մասնակցել է այդ հոդվածով նախատեսված հանցանքի կատարմանը, տվյալ հանցագործության համար կարող է պատասխանատվություն կրել միայն որպես օժանդակող • քրեական օրենսգրքի հատուկ մասի հոդվածում նշված հանցագործության հատուկ սուբյեկտ չհամարվող անձը, ով մասնակցել է այդ հոդվածով նախատեսված հանցանքի կատարմանը, ենթակա չէ քրեական պատասխանատվության
557	Զինվորական ծառայության մեջ սահմանափակումը համարվում է. • լրացուցիչ պատժատեսակ • և՛ հիմնական, և՛ լրացուցիչ պատժատեսակ **• հիմնական պատժատեսակ** • այլընտրանքային պատժատեսակ

558	Եթե դատապարտվողն ի վիճակի չէ անհապաղ և ամբողջությամբ վճարելու նշանակված տուգանքը, ապա դատարանը. • տուգանքը փոխարինում է հանրային աշխատանքներով **• նրա համար վճարման ժամկետ է սահմանում առավելագույնը մեկ տարի ժամկետով կամ թույլատրում է տուգանքը մաս առ մաս վճարել նույն ժամկետում** • նրա համար վճարման ժամկետ է սահմանում առավելագույնը վեց ամիս ժամկետով կամ թույլատրում է տուգանքը մաս առ մաս վճարել նույն ժամկետում • պատիժը պայմանականորեն չի կիրառում
559	Զինվորական ծառայության մեջ սահմանափակումը կարող է կիրառվել միայն. **• սպայի կամ ենթասպայի կոչում ունեցող զինծառայողի նկատմամբ** • սպայի կոչում ունեցող զինծառայողի նկատմամբ • գլխավոր խմբի զինվորական կոչում ունեցող զինծառայողի նկատմամբ • ժամկետային զինծառայողի նկատմամբ
560	Ո՞ր հանցագործությունների համար կարող է նշանակվել զինվորական ծառայության մեջ սահմանափակումը. • զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների համար • զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված ցանկացած հանցագործությունների համար • զինծառայողների կողմից կատարված ցանկացած հանցագործությունների համար **• զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործությունների համար**
561	Ի՞նչ ժամկետով են կիրառվում զինվորական ծառայության մեջ սահմանափակման բովանդակությունը կազմող սահմանափակումները. • երեք ամսից մեկ տարի ժամկետով • երեք ամսից երկու տարի ժամկետով **• երեք ամսից երեք տարի ժամկետով** • երեքից վեց ամիս ժամկետով
562	Նշվածներից ո՞րը չի հանդիսանում զինվորական ծառայության մեջ սահմանափակման բովանդակությունը կազմող սահմանափակում. • տվյալ անձը երեք ամսից երեք տարի ժամկետով չի կարող նշանակվել իր զբաղեցրած պաշտոնից ավելի բարձր (այդ թվում՝ ավելի բարձր վարձատրվող) պաշտոնի **• երեք ամսից երեք տարի ժամկետով տվյալ անձի դրամական բավարարման գումարից պահվում է 30 տոկոս** • տվյալ անձին երեք ամսից երեք տարի ժամկետով չի կարող շնորհվել ավելի բարձր հերթական կոչում • երեք ամսից երեք տարի ժամկետով կասեցվում է հերթական զինվորական

	կոչում շնորհելու՝ օրենքով սահմանված ժամկետը՝ դրամական բավարարման գումարից մինչև 20 տոկոս պահումով
563	Զինվորական ծառայության մեջ սահմանափակումը չի կարող նշանակվել. • միայն եթե առկա է հանցանքների համակցություն, և կատարված հանցագործություններից մեկի համար կարող է նշանակվել կամ նշանակված է ազատությունից զրկելու հետ կապված կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու հետ կապված պատիժ **• եթե առկա է հանցանքների կամ դատավճիռների համակցություն, և կատարված հանցագործություններից մեկի համար կարող է նշանակվել կամ նշանակված է ազատությունից զրկելու հետ կապված կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու հետ կապված պատիժ** • միայն եթե առկա է դատավճիռների համակցություն, և կատարված հանցագործություններից մեկի համար կարող է նշանակվել կամ նշանակված է ազատությունից զրկելու հետ կապված կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու հետ կապված պատիժ • միայն եթե առկա է հանցանքների համակցություն, և կատարված հանցագործություններից մեկի համար կարող է նշանակվել կամ նշանակված է ազատությունից զրկելու հետ կապված պատիժ
564	Զինծառայողի կողմից օրենքով սահմանված հիմքերով զինվորական ծառայությունից ազատվելու դեպքում դատարանի կողմից զինվորական ծառայության մեջ սահմանափակումը փոխարինվում է տուգանքով՝ զինվորական ծառայության մեջ սահմանափակման մեկ ամիսը հաշվարկելով նվազագույն աշխատավարձի. • տասնապատիկի դիմաց **•երեսնապատիկի դիմաց** • հարյուրապատիկի դիմաց • հիսնապատիկի դիմաց

565	Բացառությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի (գույքի բռնագրավում) չորրորդ և հինգերորդ, ինչպես նաև 5.1-ին մասերով նախատեսված դեպքերի՝ գույքի բռնագրավումը կարող է նշանակվել. **• շահադիտական դրդումներով կատարված ծանր և առանձնապես ծանր հանցանքների համար քրեական օրենսգրքի հատուկ մասով նախատեսված դեպքերում** • շահադիտական դրդումներով կատարված բոլոր հանցանքների համար • ծանր և առանձնապես ծանր բոլոր հանցանքների համար • միայն շահադիտական դրդումներով կատարված առանձնապես ծանր հանցանքների համար քրեական օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված դեպքերում
566	Մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը կալանքի տակ պահելու ժամկետը հաշվակցվում է ազատազրկման, կարգապահական գումարտակում պահելու ձևով նշանակված պատժին. • մեկ օրը հաշվելով մեկուկես օրվա դիմաց • մեկ օրը հաշվելով երկու օրվա դիմաց • երկու օրը հաշվելով մեկ օրվա դիմաց **• մեկ օրը հաշվելով մեկ օրվա դիմաց**
567	Մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը կալանքի տակ պահելու ժամկետը հաշվակցվում է հանրային աշխատանքների ձևով նշանակված պատժին՝ մեկ օրը հաշվելով. • հինգ ժամի դիմաց **• երեք ժամի դիմաց** • տասը ժամի դիմաց • տասնհինգ ժամի դիմաց
568	Մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը կալանքի տակ պահելու կամ այլ պետությունում կատարած հանցանքի համար դատարանի դատավճռով ազատազրկման ձևով նշանակված պատիժը կրելու ժամանակ քրեական օրենսգրքի 16-րդ հոդվածի (հանցանք կատարած անձանց հանձնելը) հիման վրա անձին հանձնելու դեպքում. • այլ պետությունում կատարած հանցանքի համար դատարանի դատավճռով ազատազրկման ձևով նշանակված պատիժը հաշվի չի առնվում • մեկ օրը հաշվարկվում է մեկուկես օրվա դիմաց **• մեկ օրը հաշվարկվում է մեկ օրվա դիմաց** • մեկ օրը հաշվարկվում է երկու օրվա դիմաց

569	Ըստ ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի (պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելը)՝ պայմանական վաղաժամկետ ազատում կարող է կիրառվել միայն, եթե դատապարտյալը փաստացի կրել է ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության համար նշանակված պատժի ոչ պակաս, քան. • մեկ քառորդը • կեսը **• մեկ երրորդը** • երկու երրորդը
570	Ըստ ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի (պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելը)՝ պայմանական վաղաժամկետ ազատում կարող է կիրառվել միայն, եթե դատապարտյալը փաստացի կրել է ծանր հանցագործության համար նշանակված պատժի ոչ պակաս, քան. • մեկ քառորդը **• կեսը** • մեկ երրորդը • երկու երրորդը
571	Ըստ ՀՀ քրեական օրենսգրքի 77-րդ հոդվածի (պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելը)՝ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելը հնարավոր է միայն. **• ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության դեպքում** • անզգույշ հանցագործության դեպքում • առաջին անգամ հանցանք կատարելու դեպքում • լրացուցիչ պատժատեսակի նշանակման դեպքում
572	Ըստ ՀՀ քրեական օրենսգրքի 77-րդ հոդվածի (պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելը)՝ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու դեպքում. • անձը չի կարող ազատվել լրացուցիչ պատժից • անձը կարող է միայն մասնակիորեն ազատվել լրացուցիչ պատժից **• անձը կարող է լրիվ կամ մասնակիորեն ազատվել լրացուցիչ պատժից** • անձը կարող է լրիվ կամ մասնակիորեն ազատվել լրացուցիչ պատժից, եթե հատուցել է տուժողին հանցագործությամբ պատճառված նյութական վնասը
573	Ըստ ՀՀ քրեական օրենսգրքի 77-րդ հոդվածի (պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելը)՝ պատժի չկրած մասը կարող է փոխարինվել ավելի մեղմ պատժատեսակով դատապարտյալի կողմից պատժի ոչ պակաս, քան. • կեսը փաստացի կրելուց հետո • երկու երրորդը փաստացի կրելուց հետո • մեկ քառորդը փաստացի կրելուց հետո **• մեկ երրորդը փաստացի կրելուց հետո**

574	Արտակարգ հանգամանքների հետևանքով պատժից ազատելը դատարանի. • **իրավունքն է** • պարտականությունն է • ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների դեպքում իրավունքն է, իսկ ծանր և առանձնապես հանցագործությունների դեպքում՝ պարտականությունը • առաջին անգամ հանցանք կատարելու դեպքում իրավունքն է, իսկ մնացած դեպքերում՝ պարտականությունը
575	Եթե անձը մինչև դատվածությունը մարվելը նոր հանցանք է կատարում, ապա. • դատվածության մարման ժամկետն կասեցվում է • **դատվածության մարման ժամկետն ընդհատվում է** • դատվածությունը մարվում է • դատվածությունը հանվում է
576	Անչափահասների նկատմամբ տուգանքը նշանակվում է պատիժ նշանակելու պահին Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի. • երեսնապատիկից հինգհարյուրապատիկի չափով • **տասնապատիկից հինգհարյուրապատիկի չափով** • հիսնապատիկից հինգհարյուրապատիկի չափով • երեսնապատիկից երեքհարյուրապատիկի չափով
577	Անչափահասին հատուկ ուսումնադաստիարակչական կամ բժշկական-դաստիարակչական հաստատությունում տեղավորելու միջոցով պատժից ազատելը հնարավոր է. • առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության կատարման դեպքում • ցանկացած տեսակի հանցանքի կատարման դեպքում՝ անկախ առաջին անգամ կատարելու հանգամանքից • **ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության կատարման դեպքում** • մինչև տասնվեց տարին լրանալը հանցանք կատարելու դեպքում
578	Ըստ ՀՀ քրեական օրենսգրքի 94-րդ հոդվածի (պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելը)՝ անչափահաս տարիքում հանցանք կատարած և ազատազրկման դատապարտված անձի նկատմամբ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատում կարող է կիրառվել, եթե դատապարտյալը փաստացի կրել է ծանր հանցագործության համար նշանակված պատժի ոչ պակաս, քան. • կեսը • երկու երրորդը • **մեկ երրորդը** • մեկ քառորդը

579	Այլ անձին մարդու իմունային անբավարարության վիրուսի հարուցիչով վարակելու ակնհայտ վտանգի ենթարկելու սուբյեկտը. • միայն այն անձն է, ով գիտեր իր մոտ այդ հիվանդության առկայության մասին **• 16 տարին լրացած, ֆիզիկական մեղսունակ անձն է** • 14 տարին լրացած, ֆիզիկական մեղսունակ անձն է • միայն ՁԻԱՀ-ով հիվանդ անձն է
580	Փոխպատվաստման վիրահատություն կատարելու կանոնները խախտելը համարվում է հանցագործություն. • անկախ որևէ հետևանքի վրա հասնելուց **• եթե դա անզգուշությամբ ծանր կամ միջին ծանրության վնաս է պատճառել մարմնի մասեր կամ հյուսվածքներ տվողի կամ ընդունողի առողջությանը** • միայն եթե դա անզգուշությամբ առաջացրել է տուժողի մահ • միայն եթե դա կատարվել է մարմնի մասեր կամ հյուսվածքներ տվողի կամքին հակառակ
581	Անձին՝ առանց իր ազատ կամաարտահայտության և իրազեկված ու պատշաճ ձևակերպված համաձայնության բժշկական կամ գիտական փորձերի ենթարկելը հանցագործություն է. **• անկախ որևէ հետևանքի վրա հասնելուց** • միայն եթե դա անզգուշությամբ ծանր կամ միջին ծանրության վնաս է պատճառել նրա առողջությանը, • միայն եթե դա անզգուշությամբ առաջացրել է տուժողի մահ • միայն եթե դա կատարվել է անօգնական վիճակում գտնվող անձի նկատմամբ
582	Նշվածներից որը ՀՀ քրեական օրենսգրքի 138-րդ հոդվածով (բռնաբարություն) նախատեսված չէ որպես բռնաբարության ծանրացուցիչ հանգամանք. • կատարվել է մի խումբ անձանց կողմից **• կատարվել է ակնհայտ հղի կնոջ նկատմամբ** • կատարվել է տուժողի կամ այլ անձի նկատմամբ առանձին դաժանությամբ • կատարվել է անչափահասի նկատմամբ
583	Հեղինակային կամ հարակից իրավունքի օբյեկտն ապօրինի օգտագործելը կամ հեղինակությունը յուրացնելը, ինչպես նաև առանց հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների իրավատիրոջ համաձայնության նրա ստեղծագործությունը շահույթ ստանալու նպատակով մագնիսական, օպտիկական, թվային, լազերային և ցանկացած այլ տիպի էլեկտրոնային կրիչների վրա ամրագրելը, տարածելը և (կամ) վաճառելը համարվում է հանցագործություն. • անկախ կատարման եղանակից և չափերից • միայն եթե այդ արարքը կատարվել է պաշտպանիչ տեխնիկական միջոցների շրջանցմամբ

	• միայն եթե այդ արարքը կատարվել է զգալի չափերով • միայն եթե այդ արարքը կատարվել է զգալի չափերով
584	Երեխայի կյանքի անվտանգության ապահովման կամ առողջության պահպանման պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը համարվում է հանցագործություն. • եթե դա երեխայի առողջությանը անզգուշությամբ պատճառել է թեթև վնաս • եթե դա երեխայի առողջությանը անզգուշությամբ պատճառել է միջին ծանրության վնաս **• միայն եթե դա երեխայի առողջությանը անզգուշությամբ պատճառել է ծանր վնաս** • միայն եթե դա առաջացրել է երեխայի մահ
585	Քրեորեն պատժելի է ծնողի կողմից երեխային կամ տասնութ տարին լրացած անաշխատունակ զավակին դատարանի վճռով ապրուստի միջոցներ վճարելուց. • ցանկացած տևողությամբ չարամտորեն խուսափելը **• երեք ամսից ավելի չարամտորեն խուսափելը** • միայն վեց ամսից ավելի չարամտորեն խուսափելը • մեկ ամսից ավելի չարամտորեն խուսափելը
586	Գույքի պահպանության պարտականություններն անփույթ կամ անբարեխիղճ կատարելը համարվում է հանցագործություն. • անկախ որևէ հետևանքի վրա հասնելուց • եթե դրա հետևանքով տեղի է ունեցել այդ գույքի զգալի չափերի հասնող հափշտակում, վնասում կամ կորուստ **• եթե դրա հետևանքով տեղի է ունեցել այդ գույքի խոշոր չափերի հասնող հափշտակում, վնասում կամ կորուստ** • միայն եթե դրա հետևանքով տեղի է ունեցել այդ գույքի առանձնապես խոշոր չափերի հասնող հափշտակում, վնասում կամ կորուստ
587	Կեղծ գովազդի սուբյեկտ կարող է լինել. • միայն գովազդատուն • միայն գովազդ արտադրողը • միայն գովազդակիրը **• գովազդատուն, գովազդ արտադրողը կամ գովազդակիրը**

588	Կեղծ գինի կամ կեղծ օղի կամ ալկոհոլային կեղծ այլ խմիչք պատրաստելը համարվում է հանցագործություն. **• եթե դա կատարվել է իրացման նպատակով** • միայն եթե դա անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ կամ այլ ծանր հետևանքներ • միայն եթե դա զուգորդվել է հարկ վճարելուց խուսափելով • միայն եթե դա կատարվել է խոշոր չափերով
589	Շահադիտական նպատակով այլ անձի պոռնկությամբ զբաղվելուն ներգրավելը որակվում է ՀՀ քրեական օրենսգրքի 261-րդ հոդվածով՝ որպես հասարակական բարոյականության դեմ ուղղված հանցագործություն. •բոլոր դեպքերում • եթե դա կատարվել է անչափահասի նկատմամբ **•եթե բացակայում են մարդու թրաֆիքինգի կամ շահագործման հատկանիշները** • եթե դա կատարվել է բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով
590	Դիակը կամ թաղման վայրերն անարգանքի ենթարկելը համարվում է հանցագործություն. • միայն եթե դա կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ • միայն եթե դա կատարվել է ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ թշնամանքի շարժառիթով • միայն եթե դա կատարվել է գերեզմաններում գտնվող կամ դրանց վրա եղած առարկաները հափշտակելով **• վերը նշված բոլոր դեպքերում**
591	Թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր, ինչպես նաև այդպիսիք պատրաստելու համար օգտագործվող և հատուկ հսկողության տակ գտնվող նյութեր, սարքավորումներ կամ գործիքներ արտադրելու, ձեռք բերելու, պահելու, հաշվառելու, բաց թողնելու, փոխադրելու կամ առաքելու կանոնները խախտելն այն անձի կողմից, ում վրա դրված է եղել այդ կանոնների պահպանության պարտականությունը. • հանցագործություն է միայն այն դեպքում, եթե դա անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ **• հանցագործություն է միայն այն դեպքում, եթե դրա հետևանքով տեղի է ունեցել նշված նյութերի հափշտակություն կամ ապօրինի շրջանառություն** • հանցագործություն է միայն այն դեպքում, եթե դա կատարվել է շահադիտական դրդումներով • հանցագործություն է անկախ հետևանքից և շարժառիթից

592	Թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր, ինչպես նաև այդպիսիք պատրաստելու համար օգտագործվող և հատուկ հսկողության տակ գտնվող նյութեր, սարքավորումներ կամ գործիքներ արտադրելու, ձեռք բերելու, պահելու, հաշվառելու, բաց թողնելու, փոխադրելու կամ առաքելու կանոնները խախտելն այն անձի կողմից, ում վրա դրված է եղել այդ կանոնների պահպանության պարտականությունը. • հանցագործություն է միայն այն դեպքում, եթե դա անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ • հանցագործություն է միայն այն դեպքում, եթե դրա հետևանքով տեղի է ունեցել նշված նյութերի հափշտակություն կամ ապօրինի շրջանառություն **• հանցագործություն է միայն այն դեպքում, եթե դա կատարվել է շահադիտական դրդումներով** • հանցագործություն է անկախ հետևանքից և շարժառիթից
593	Դատական և իրավապահ այլ մարմինների աշխատողների համազգեստը կամ վկայականն օգտագործելը. **• հանցագործություն է միայն այն դեպքում, եթե դա զուգորդվել է դրա հիման վրա հանցանք կատարելով** • հանցագործություն է միայն այն դեպքում, եթե դա կատարվել է դատարանի, իրավապահ այլ մարմնի շենք մուտք գործելու նպատակով • հանցագործություն է միայն այն դեպքում, եթե դա զուգորդվել է դրա հիման վրա ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կատարելով • հանցագործություն է վերոնշյալ բոլոր դեպքերում
594	Պետական պարգևները հափշտակելը համարվում է. **• կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործություն** • պետական ծառայության դեմ ուղղված հանցագործություն • մտավոր սեփականության դեմ ուղղված հանցագործություն • սեփականության դեմ դեմ ուղղված հանցագործություն
595	Զորամաս կամ հատուկ պահպանվող զինվորական այլ տարածք սահմանված կարգի խախտմամբ մուտք գործելը. • Հանցագործություն է միայն այն դեպքում, եթե դա կատարվել է բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով • Հանցագործություն է միայն այն դեպքում, եթե դա կատարվել է զենք կամ որպես զենք օգտագործվող այլ առարկա գործադրելով • Հանցագործություն է միայն այն դեպքում, եթե դա անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ **• Հանցագործություն է բոլոր դեպքերում**

596	Պետին (հրամանատարին) ծեծելը կամ նրա նկատմամբ այլ բռնություն գործադրելը կամ դա գործադրելու սպառնալիքը պետի (հրամանատարի) կամ նրա մերձավորի նկատմամբ, եթե դա կապված չէ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու հետ. • հանցագործություն չէ անկախ սուբյեկտից, շարժառիթից և վայրից • հանցագործություն է միայն այն դեպքում, եթե դա կատարվել է սպայի կամ ենթասպայի կողմից • հանցագործություն է միայն այն դեպքում, եթե դա կատարվել է խուլիգանական դրդումներով **• հանցագործություն է միայն այն դեպքում, եթե դա կատարվել է զորամասում կամ զինվորական ծառայություն կրելու այլ վայրում**
597	Ստորադասին (ենթակային) ծեծելը կամ նրա նկատմամբ այլ բռնություն գործադրելը կամ դա գործադրելու սպառնալիքը ստորադասի (ենթակայի) կամ նրա մերձավորի նկատմամբ, եթե դա կապված չէ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու հետ. • հանցագործություն չէ անկախ սուբյեկտից, իրադրությունից և վայրից • հանցագործություն է միայն այն դեպքում, եթե դա կատարվել է սպայի կողմից • հանցագործություն է միայն այն դեպքում, եթե դա կատարվել է այլ զինծառայողների ներկայությամբ **• հանցագործություն է միայն այն դեպքում, եթե դա կատարվել է զորամասում կամ զինվորական ծառայություն կրելու այլ վայրում**
598	Զինծառայողի կողմից զորամասում, ծառայության վայրում կամ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու ընթացքում մոլեխաղերի մասնակցելը. • հանցագործություն չէ անկախ նպատակից, կրկնակիությունից և հետևանքից **• հանցագործություն է միայն այն դեպքում, եթե դա կատարվել է իր կամ այլ անձի համար գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն ստանալու նպատակով** • հանցագործություն է միայն այն դեպքում, եթե դա կատարվել է նույն արարքի համար կարգապահական տույժի ենթարկվելուց հետո մեկ տարվա ընթացքում երկրորդ անգամ • հանցագործություն է միայն այն դեպքում, եթե դա էական վնաս է պատճառել զինվորական ծառայության շահերին

599	Թմրամիջոց կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութ ապօրինի գործածելը. • Հանցագործություն չէ անկախ կրկնակիությունից, սուբյեկտից, վայրից, ժամանակից և թմրամիջոցի կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութի տեսակից • Հանցագործություն է միայն այն դեպքում, եթե դա կատարվել է նույն արարքի համար վարչական տույժի ենթարկվելուց հետո մեկ տարվա ընթացքում երկրորդ անգամ **• Հանցագործություն է միայն այն դեպքում, եթե դա կատարվել է զինծառայողի կողմից զորամասում, ծառայության վայրում կամ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու ընթացքում** • Հանցագործություն է միայն այն դեպքում, եթե դա սինթետիկ թմրամիջոց կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութ է
600	Ցեղասպանությունը և խաղաղության ու մարդկության անվտանգության դեմ ուղղված մյուս հանցագործությունները հերքելը, մեղմացնելը, դրանց հավանություն տալը կամ արդարացնելը. • Հանցագործություն է միայն այն դեպքում, եթե դա կատարվել է օտարերկրյա քաղաքացու կողմից **• Հանցագործություն է միայն այն դեպքում, եթե դա կատարվել է ռասայական պատկանելության, մաշկի գույնի, ազգային կամ էթնիկական ծագման կամ կրոնական պատկանելության հիման վրա՝ անձի կամ անձանց խմբի նկատմամբ ատելություն, խտրականություն կամ բռնություն հրահրելու նպատակով** • Հանցագործություն է միայն այն դեպքում, եթե դա կատարվել է շահադիտական դրդումներով • Հանցագործություն է անկախ սուբյեկտից, շարժառիթից և նպատակից

№	2014 թվականի գարնանային հոսք ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՐՑԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ
1	Քրեական հետապնդման հարուցում է համարվում. • քրեական հետապնդման մարմնի որոշումը՝ քրեական գործ հարուցելու մասին • քրեական հետապնդման մարմնի որոշումը՝ անձին բերման ենթարկելու մասին **• քրեական հետապնդման մարմնի որոշումը՝ անձին որպես մեղադրյալ ներգրավելու, ինչպես նաև մինչև այդ նրան ձերբակալելու կամ նրա նկատմամբ խափանման միջոց կիրառելու մասին** • դատախազի կողմից մեղադրական եզրակացությունը հաստատելը և քրեական գործը դատարան ուղարկելը
2	Համաձայն Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի՝ քրեական հետապնդման դադարեցում է համարվում. • մեղադրյալի նկատմամբ ընտրված խափանման միջոցը վերացնելը • մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանավորումը վերացնելը • քրեական գործով քրեական հետապնդում իրականացնող մարմնի որոշումը՝ առաջադրված մեղադրանքը վերացնելու՝ արդարացման կամ ոչ արդարացման հիմքով **• քրեական գործով վարույթն իրականացնող մարմնի որոշումը՝ առաջադրված մեղադրանքը վերացնելու կամ մեղադրանքից հրաժարվելու մասին**
3	Դատավարության ո՞ր մասնակիցներն են հանդես գալիս պաշտպանության կողմում. • կասկածյալը, մեղադրյալը, պաշտպանը, քաղաքացիական հայցվորը և քաղաքացիական պատասխանողը • միայն կասկածյալը, մեղադրյալը, պաշտպանը, քաղաքացիական պատասխանողը և նրա ներկայացուցիչը • միայն կասկածյալը, մեղադրյալը, փաստաբանը և քաղաքացիական պատասխանողը **• կասկածյալը, մեղադրյալը, նրանց օրինական ներկայացուցիչները, պաշտպանը, քաղաքացիական պատասխանողը և նրա ներկայացուցիչը**

4	Ո՞ր մարմնի որոշմամբ է կատարվում բնակարանի խուզարկությունը. • քրեական հետապնդման մարմնի • **միայն դատարանի** • դատարանի և օրենքով նախատեսված դեպքերում՝ դատախազի որոշմամբ • միայն դատարանի, իսկ անհետաձգելի դեպքում, երբ իրականացվում է հանցագործության վայրից փախուստի դիմած կասկածյալի հետապնդում, նաև հետաքննության մարմնի կամ քննիչի որոշմամբ
5	Ի՞նչ լեզվով է տարվում Հայաստանի Հանրապետությունում քրեական դատավարությունը. • հայերեն լեզվով, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի • հայերեն, սակայն դատավարության բոլոր մասնակիցների համաձայնությամբ կարող է տարվել նաև այլ լեզվով • դատարանի կողմից որոշված լեզվով • **հայերեն**
6	Ո՞վ իրավունք ունի հարուցել քրեական գործ. • դատավորը, դատախազը, քննիչը և հետաքննության մարմինը • դատախազը կամ քննիչը՝ դատախազի համաձայնությամբ • դատախազը և քննիչը • **հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը**
7	Թվարկվածներից, որ՞ գործն ըստ էության լուծող դատական ակտ չէ. • **կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի ժամկետը երկարացնելու վերաբերյալ դատարանի որոշումը** • դատարանի դատավճիռը • քրեական գործով վարույթի կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը • բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին որոշումը
8	Ինչպիսի՞ լիազորություն չունի դատախազը. • բողոքարկելու դատարանի դատավճիռները և այլ վերջնական որոշումները • հայց ներկայացնելու դատարան՝ ի պաշտպանություն պետության գույքային շահերի • **հայց ներկայացնելու դատարան՝ ի պաշտպանություն քաղաքացիների գույքային շահերի** • իրականացնելու հսկողություն հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ

9	Ինչպիսի՞ լիազորություն չունի դատախազը քրեական գործի մինչդատական վարույթի ընթացքում. · **հանցագործության բացահայտման նպատակով կատարելու օպերատիվ-հետախուզական միջոցառումներ** · հարուցելու և իրականացնելու քրեական հետապնդում · ցանկացած քրեական գործ վերցնելու հետաքննության մարմնից և հանձնելու նախաքննության մարմնին · վերադարձնելու քրեական գործը քննիչին՝ լրացուցիչ քննություն կատարելու համար պարտադիր ցուցումով
10	Ինչպիսի՞ լիազորություն չունի դատախազը (մեղադրողը) քրեական գործը դատարանի կողմից քննելիս. · **լուծելու քննիչի դեմ բերված բացարկի հարցը** · առարկելու նախագահողի անօրինական գործողությունների դեմ · հրաժարվելու մեղադրյալի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց · հետաքննության մարմնին նրա համար պարտադիր հանձնարարություններ տալու, ապահովելու դատարանին ապացույցներ ներկայացնելը
11	Ինչպիսի՞ լիազորություն չունի քննիչը քրեական գործի քննության ընթացքում. · առանձին քննչական գործողությունների կատարումը հանձնարարելու հետաքննության մարմնին · առանց դատախազի համաձայնության ձերբակալելու հանցագործության համար կասկածվող անձին · **քրեական գործը հետաքննության մի մարմնից վերցնելու և հանձնելու հետաքննության մեկ այլ մարմնի** · դիմելու դատարան՝ մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդությամբ
12	Ինչպիսի՞ որոշում չի կարող կայացնել հետաքննության մարմինը. · քրեական գործ հարուցելու մասին · փորձաքննություն նշանակելու մասին · **քրեական գործի վարույթը կարճելու մասին** · քրեական գործի հարուցումը մերժելու մասին
13	Ի՞նչ իրավունք չունի տուժողը. · ձեռք բերելու նյութեր և դրանք ներկայացնելու դատարանին · բողոքարկելու դատարանի դատավճիռը և այլ վերջնական որոշումները · մասնակցելու վերաքննիչ դատարանի դատական նիստին · **նախաքննության ավարտման պահից անվճար ստանալու քրեական գործի բոլոր նյութերի պատճենները**

14	Ո՞ր պահից է անձը դադարում կասկածյալ լինելուց. • քրեական գործը մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկելու պահից • անձի՝ որպես կասկածյալ լինելը դադարեցնելու մասին քրեական հետապնդման մարմնի կողմից որոշում կայացնելու պահից • **կասկածյալին որպես մեղադրյալ ներգրավելու պահից** • կասկածյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու մասին որոշում կայացնելու պահից
15	Կասկածյալի հետ անհրաժեշտ քննչական գործողություններ կատարելու դեպքում քննիչը իրավունք ունի՞ կասկածյալի և իր պաշտպանի տեսակցության ժամկետը սահմանափակել. • ոչ մի դեպքում քննիչը նման իրավունք չունի • այո, իրավունք ունի, սակայն պաշտպանի հետ տեսակցության ժամկետը չի կարող պակաս լինել երեք ժամից • այո, իրավունք ունի, սակայն պաշտպանի հետ տեսակցության ժամկետը չի կարող պակաս լինել չորս ժամից • **այո, իրավունք ունի, սակայն պաշտպանի հետ տեսակցության ժամկետը չի կարող պակաս լինել երկու ժամից**
16	Քրեական գործի վարույթի ընթացքում դատավարության ո՞ր մասնակիցներն իրավունք ունեն ունենալ օրինական ներկայացուցիչ. • միայն անչափահաս և անգործունակ տուժողը, քաղաքացիական հայցվորը, կասկածյալը և մեղադրյալը • միայն կասկածյալը և մեղադրյալը • միայն անչափահաս կամ անգործունակ կասկածյալը և մեղադրյալը • **միայն անչափահաս կամ անգործունակ տուժողը, քաղաքացիական հայցվորը, կասկածյալը, մեղադրյալը, ինչպես նաև անչափահաս վկան**
17	Քրեական դատավարության համապատասխան մասնակցի օրինական ներկայացուցիչների միջև անհամաձայնության դեպքում ո՞վ է ընտրում, թե նրանցից ով պետք է մասնակցի որպես օրինական ներկայացուցիչ. • **դատախազը կամ դատարանը** • քննիչը, դատախազը կամ դատարանը • միայն դատարանը • հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը կամ դատարանը
18	Քրեական դատավարության ո՞ր մասնակիցներն իրավունք ունեն ունենալ ներկայացուցիչ. • միայն տուժողը, քաղաքացիական հայցվորը և կասկածյալը • միայն տուժողը և քաղաքացիական հայցվորը • միայն տուժողը և քաղաքացիական պատասխանողը • **միայն տուժողը, քաղաքացիական հայցվորը և քաղաքացիական պատասխանողը**

19	Քրեական գործով վարույթի կարգը որոշվում է այն քրեադատավարական օրենքով. • որը գործում է հանցագործության կատարման պահին • որը գործում է հանցագործին ի հայտ բերելու պահին • որը գործում է համապատասխան քննչական կամ այլ դատավարական գործողությունների կատարման պահին • **որը գործում է համապատասխանաբար հետաքննության, նախաքննության կամ գործը դատարանում քննելու ժամանակ**
20	Ընթերական իրավունք չունի. • ծանոթանալ համապատասխան քննչական գործողության արձանագրության հետ • **ստանալ համապատասխան քննչական գործողության արձանագրության պատճենը** • ստանալ քրեական գործով վարույթի ընթացքում կրած ծախսերի հատուցում • քննչական գործողության կատարման ընթացքում անել դիտողություններ
21	Նշված դեպքերում դատախազի որ ցուցումների հետ համաձայն չլինելով՝ քննիչը իրավունք ունի կասեցնել դրանց կատարումը և բողոքարկել վերադաս դատախազին. • քրեական գործով վարույթը կասեցնելու • խափանման միջոց կիրառելու • մեղադրյալի նկատմամբ հետախուզում հայտարարելու • **անձին որպես մեղադրյալ ներգրավելու**
22	Վարույթ ընդունված վճռաբեկ բողոքը վճռաբեկ դատարանը քննում է. • **կոլլեգիալ նախագահի և առնվազն երեք դատավորի կազմով** • միանձնյա • կոլլեգիալ՝ երեք դատավորի կազմով • կոլլեգիալ՝ նախագահի և առնվազն հինգ դատավորի կազմով
23	Մեղադրողին հայտնված բացարկը լուծում է. • վերադաս դատախազը • համապատասխան դատարանի նախագահը • **համապատասխան դատարանը** • Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը
24	Քննիչին կամ հետաքննության մարմնի աշխատակցին հայտնված բացարկը լուծում է. • **քննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնող դատախազը կամ վերադաս դատախազը** • համապատասխան քննչական բաժնի պետը կամ հետաքննության մարմնի ղեկավարը • միայն վերադաս դատախազը

	• միայն քննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացրած դատախազը
25	Քրեական դատավարությունում ապացույցի թույլատրելիությունը հիմնավորելու պարտականությունն ընկած է. • մեղադրանքի կողմի վրա • վարույթ իրականացնող մարմնի վրա • դատարանի վրա • **այն ձեռք բերող կողմի վրա**
26	Քրեական հետապնդման մարմնի որոշմամբ մեղադրյալը կարող է ձերբակալվել, եթե. • այդ որոշումը հաստատվում է դատարանի կողմից • անհրաժեշտ է մեղադրյալին մեկ կալանավայրից տեղափոխել այլ կալանավայր • **մեղադրյալը խախտել է իր նկատմամբ կիրառված խափանման միջոցի պայմանները** • դատարանի կողմից կալանավորման միջնորդությունը մերժելու դեպքում
27	Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու միջնորդությամբ դատարան դիմելու իրավունք ունեն. • հետաքննության մարմինը, քննիչը կամ դատախազը • **դատախազը կամ քննիչը** • դատախազը կամ քննիչը՝ դատախազի համաձայնությամբ • միայն դատախազը
28	Քրեական դատավարությունում գրավի արժեքի ապացուցման պարտականությունը կրում է. • **գրավատուն** • գործով չշահագրգռված մասնագետը • գործով չշահագրգռված փորձագետը • վարույթ իրականացնող մարմինը
29	Ո՞վ իրավունք ունի ժամանակավոր դադարեցնել հանրային ծառայության մեջ գտնվող կասկածյալի կամ մեղադրյալի պաշտոնավարությունը. • քրեական հետապնդման մարմնի միջնորդությամբ դատարանը • միայն դատախազը • դատախազը, ինչպես նաև դատախազի համաձայնությամբ՝ հետաքննության մարմինը և քննիչը • **դատախազը, ինչպես նաև դատախազի համաձայնությամբ՝ քննիչը**

30	Ո՞ր դեպքում է քրեական դատավարությունում հարուցված քաղաքացիական հայցն ազատվում պետական տուրքի գանձումից. • միայն այն դեպքում, եթե քաղաքացիական հայցը ներկայացրել է դատախազը՝ ի պաշտպանություն պետության գույքային շահերի • բոլոր դեպքերում պետական տուրքը գանձվում է • ազատվում է միայն այն դեպքում, եթե քաղաքացիական հայցը ներկայացրել է արդարացվածը՝ ի հատուցում պատճառված վնասների • **բոլոր դեպքերում քրեական դատավարությունում հարուցված քաղաքացիական հայցն ազատվում է պետական տուրքի գանձումից**
31	Քրեական գործի վարույթի ընթացքում ե՞րբ է կարող հարուցվել քաղաքացիական հայց. • միայն քրեական գործը մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկելու պահից • **քրեական գործի հարուցումից մինչև դատավճիռ կայացնելու համար դատարանի հեռանալը խորհրդակցական սենյակ** • միայն քրեական գործի մինչդատական քննության ընթացքում • միայն քրեական գործի դատական քննության ընթացքում
32	Երկու կամ ավելի հանցագործությունների վերաբերյալ գործերն առաջին ատյանի տարբեր դատարաններին ընդդատյա լինելու դեպքում գործը քննում է. • ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը • **ընդհանուր իրավասության առաջին ատյանի այն դատարանը, որի դատական տարածքում ավարտվել է տվյալ գործով մինչդատական վարույթը** • ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը • ընդհանուր իրավասության առաջին ատյանի այն դատարանը, որը քննել է կալանքի վերաբերյալ միջնորդությունը
33	Քրեական հետապնդում իրականացնող մարմինները նոտարական գաղտնիք կազմող տեղեկությունները կարող են ստանալ. • հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի կամ դատարանի որոշմամբ • միայն դատախազի կամ դատարանի որոշմամբ • **միայն դատարանի որոշմամբ** • դատախազի համաձայնությամբ կայացված քննիչի որոշմամբ
34	Քրեական դատավարության օրենսգրքով սահմանված դատավարական ժամկետները հաշվվում են. • **ժամերով, օրերով, ամիսներով և տարիներով** • ամիսներով և տարիներով • ժամերով և օրերով • օրերով, ամիսներով և տարիներով

35	Քրեական գործ հարուցելու դեպքում ի՞նչ է ուղարկվում հանցագործության մասին հաղորդած ֆիզիկական անձին. • գրություն՝ քրեական գործ հարուցելու մասին • **քրեական գործ հարուցելու մասին որոշման պատճենը** • քրեական գործ հարուցելու մասին տեղեկանք • հաղորդում տված ֆիզիկական անձը հրավիրվում է քրեական հետապնդման մարմին, որտեղ պարզաբանվում է նրա իրավունքներն ու պարտականությունները
36	Քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ որոշումը դատարանի կողմից վերացվելուց հետո. • դատարանը հարուցում է քրեական գործ և ուղարկում դատախազին նախաքննություն կատարելու համար • նյութերն ուղարկում է քննիչին քրեական գործ հարուցելու համար • նյութերն ուղարկում է դատախազի քննարկմանը, որը կարող է կրկին մերժվել դատախազի կողմից • **բողոքարկվող որոշման վերացումը պարտադիր է դարձնում դատախազի կողմից գործի հարուցումը**
37	Ի՞նչ լիազորություն չունի քննչական բաժնի պետը. • նախաքննության կատարումը հանձնարարելու մի քանի քննիչների • քրեական գործը մի քննիչից հանձնելու մյուս քննիչին • քննիչին ցուցումներ տալու առանձին քննչական գործողություններ կատարելու վերաբերյալ • **հաստատելու քննիչի կողմից կազմված մեղադրական եզրակացությունը**
38	Քրեական գործի նյութերին մեղադրյալի կամ նրա պաշտպանի ծանոթանալու ժամկետը կարող է սահմանափակվել. • դատախազի համաձայնությամբ՝ քննիչի կայացրած որոշմամբ, եթե նրանց կողմից առանց անհարգելի պատճառների ձգձգվում է գործի նյութերին ծանոթանալը • մեղադրյալի կամ նրա պաշտպանի ծանոթանալու ժամկետը չի կարող սահմանափակվել • դատախազի համաձայնությամբ՝ հետաքննության մարմնի կայացրած որոշմամբ, եթե նրանց կողմից առանց անհարգելի պատճառների ձգձգվում է գործի նյութերին ծանոթանալը • **քննիչի որոշմամբ, եթե մեղադրյալը կամ նրա պաշտպանը առանց հարգելի պատճառների ձգձգում են քրեական գործին ծանոթանալը**
39	Մինչև տասնվեց տարեկան վկայի հարցաքննությանը պարտադիր է. • օրինական ներկայացուցչի մասնակցությունը • պաշտպանի մասնակցությունը • **մանկավարժի մասնակցությունը** • դատախազի մասնակցությունը

40	Չերբակալված կասկածյալի հարցաքննությանը պաշտպանի մասնակցությունն անհապաղ ապահովելու անհնարինության դեպքում քննիչը պարտավոր է նրա մասնակցությունն ապահովել կասկածյալին արգելանքի վերցնելուց հետո. · 12 ժամվա ընթացքում · 72 ժամվա ընթացքում · **24 ժամվա ընթացքում** · 48 ժամվա ընթացքում
41	Նշված անձանցից ու՞մ նկատմամբ քննիչն իրավունք ունի կայացնել որոշում՝ քննում կատարելու մասին. · կասկածյալի, մեղադրյալի, վկայի, տուժողի կամ տուժողի իրավահաջորդի · կասկածյալի, մեղադրյալի, տուժողի իրավահաջորդի, քաղաքացիական հայցվորի · կասկածյալի, մեղադրյալի, վկայի, տուժողի, քաղաքացիական պատասխանողի կամ քաղաքացիական հայցվորի · **կասկածյալի, մեղադրյալի, վկայի կամ տուժողի**
42	Ստորև թվարկված ո՞ր անձանց են առարկաները ճանաչման ներկայացնելիս նախապես նախազգուշացնում ցուցմունքներ տալուց հրաժարվելու կամ խուսափելու, ակնհայտ սուտ ցուցմունքներ տալու համար սահմանված քրեական պատասխանատվության մասին. · մեղադրյալին, կասկածյալին, տուժողին կամ վկային · **տուժողին կամ վկային** · կասկածյալին, մեղադրյալին, տուժողին, վկային, քաղաքացիական պատասխանողին կամ քաղաքացիական հայցվորին · տուժողին, վկային կամ փորձագետին
43	Որո՞նք են առգրավում կատարելու հիմքերը. · առգրավում կարող է կատարվել բոլոր այն դեպքերում, երբ առկա է գործի համար նշանակություն ունեցող առարկաներ և փաստաթղթեր վերցնելու անհրաժեշտությունը · առգրավում կարող է կատարվել այն դեպքում, երբ գործի համար նշանակություն ունեցող առարկաներ կամ փաստաթղթերը կարող են ոչնչացվեն · **առգրավում կարող է կատարվել գործի համար նշանակություն ունեցող որոշակի առարկաներ և փաստաթղթեր վերցնելու անհրաժեշտության դեպքում և, եթե ստույգ հայտնի են, թե որտեղ և ում մոտ են դրանք գտնվում** · առգրավում կարող է կատարվել բոլոր այն դեպքերում, երբ կասկած կա, որ գործի համար նշանակություն ունեցող առարկաներ և փաստաթղթեր պահված են որոշակի տեղում

44	Մեղադրյալի գույքի վրա կալանք դնելու ընթացքում կարո՞ղ է արդյոք կալանք դրվել ամուսինների կամ ընտանիքի համատեղ սեփականություն հանդիսացող գույքի վրա. • **կարող է, եթե բավարար ապացույցներ կան, որ համատեղ սեփականությունն ավելացել կամ ձեռք է բերվել հանցավոր ճանապարհով վաստակած միջոցների հաշվին** • չի կարող. • կարող է միայն դատախազի համաձայնությամբ • կարող է միայն դատարանի համաձայնությամբ
45	Ո՞ր դատողությունն է համարվում սխալ. • **հետաքննությունը սկսվում է մինչև քրեական գործ հարուցելը** • նախաքննությունը պարտադիր է բոլոր գործերով • նախնական քննությունը համարվում է քրեական դատավարության ինքնուրույն փուլ • դատական քննության նախապատրաստելը քրեական դատավարության ինքնուրույն փուլ է
46	Նախաքննության ժամկետները կարող է երկարացնել. • դատարանը • **դատախազը** • քննչական բաժնի պետը • հետաքննության մարմնի ղեկավարը
47	Նախնական քննության տվյալները. • հրապարակման ենթակա չեն • **հրապարակվում են միայն վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ** • հրապարակվում են միայն դատախազի համաձայնությամբ • հրապարակվում են միայն պաշտպանության կողմի համաձայնությամբ
48	Բնակարանի խուզարկության մասին միջնորդությունները դատավորի կողմից պետք է քննվի. • անհապաղ, բայց ոչ ուշ, քան դրանք ստացվելուց 12 ժամվա ընթացքում • անհապաղ, բայց ոչ ուշ, քան դրանք ստանալու հաջորդ օրը • անհապաղ, բայց ոչ ուշ, քան դրանք ստացվելուց երկու օրվա ընթացքում • **անհապաղ**
49	Առանց տուժողի բողոքի մասնավոր մեղադրանքի գործերով քրեական գործ կարող է հարուցել. • դատախազը • դատարանը • հետաքննության մարմնի աշխատակիցը՝ դատախազի համաձայնությամբ • **ոչ ոք իրավունք չունի քրեական գործ հարուցել**

50	Դատարանի որոշմամբ իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումները հապաղում չհանդուրժող դեպքերում՝ առանց դատարանի համապատասխան որոշումը կատարելու դեպքում, միջոցառումներ իրականացնող մարմինը քանի՞ ժամվա ընթացքում այդ մասին պետք է ծանուցի դատարանին. • 12 ժամվա ընթացքում • 24 ժամվա ընթացքում • 36 ժամվա ընթացքում • **48 ժամվա ընթացքում**
51	Օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունը դատարանը պետք է քննարկի և որոշում կայացնի. • **այն ստանալուց հետո՝ 12 ժամվա ընթացքում** • այն ստանալուց հետո՝ 24 ժամվա ընթացքում • այն ստանալուց հետո՝ 36 ժամվա ընթացքում • այն ստանալուց հետո՝ 48 ժամվա ընթացքում
52	Քրեական հետապնդման մարմինների անօրինական և անհիմն որոշումների և գործողությունների դեմ ներկայացված բողոքներն ի՞նչ ժամկետում պետք է քննվեն դատավորի կողմից. • այն ստանալու պահից մեկ ամսվա ընթացքում • այն ստանալու պահից անհապաղ, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում • **այն ստանալու պահից տասն օրվա ընթացքում** • այն ստանալու պահից յոթ օրվա ընթացքում
53	Քրեական գործով նախաքննությունը սկսվում է. • հանցագործության մասին հաղորդումը ընդունելու պահից • անհրաժեշտ հնարավոր բոլոր դատավարական գործողությունները կատարելուց հետո • **քրեական գործ հարուցելու մասին որոշում կայացնելուց հետո** • անհետաձգելի քննչական գործողությունները կատարելուց հետո
54	Քրեական գործը դատական քննության նախապատրաստելիս դատավորը ինչպիսի՞ որոշում չի կարող կայացնել. • քրեական գործի վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին • քրեական գործը մեղադրողին վերադարձնելու մասին • քրեական գործի վարույթը կասեցնելու մասին • **քրեական գործով փորձաքննություն նշանակելու մասին**

55	Քրեական գործով վարույթը կարող է կասեցվել, երբ. • **գործում է անհաղթահարելի ուժ, որը ժամանակավորապես խոչընդոտում է քրեական գործով հետագա վարույթին** • տուժողը ծանր հիվանդ է • վկան թաքնվում է քննությունից • անձը չի հասել օրենքով սահմանված քրեական պատասխանատվության տարիքին
56	Արտաշիրմում կատարելիս պարտադիր պետք է մասնակից դարձվեն. • **դատաբժշկական բնագավառի մասնագետ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ այլ մասնագետ** • տուժողի մերձավոր ազգականները • քրեական օրենքով չթույլատրված արարք կատարած անձինք • վկան և դատական նիստի քարտուղարը
57	Եթե քրեական գործի քննությանը դատավորի մասնակցությունը անհնար է և նա փոխարինվում է այլ դատավորով, ապա գործի քննությունը. • պաշտպանության կողմի միջնորդությամբ վերսկսվում է • մեղադրյալի կողմի միջնորդությամբ շարունակվում է • բոլոր դեպքերում շարունակվում է • **բոլոր դեպքերում վերսկսվում է**
58	Նշված որոշումներից ո՞րը դատարանը իրավունք ունի խորհրդակցական սենյակում չկայացնել. • որոշում փորձաքննություն նշանակելու մասին • **որոշում վկային բերման ենթարկելու մասին** • որոշում բացարկը բավարարելու մասին • որոշում քրեական գործի վարույթը կարճելու մասին
59	Ամբաստանյալի կողմից ցուցմունք տալուց հետո ո՞վ իրավունք ունի նրան առաջինը հարցաքննել. • տուժողը • մեղադրողը • **ամբաստանյալի պաշտպանը** • դատարանը
60	Կարո՞ղ է արդյոք ամբաստանյալը հարցաքննվել մյուս ամբաստանյալների բացակայությամբ. • չի կարող, քանի որ բոլոր դեպքերում ամբաստանյալը պետք է ցուցմունք տա մյուս ամբաստանյալների ներկայությամբ • կարող է, եթե այդպիսի ցանկություն է հայտնել ամբաստանյալը կամ նրա պաշտպանը • կարող է, եթե այդպիսի միջնորդություն է ներկայացրել մեղադրողը • **բացառիկ դեպքերում ամբաստանյալը կարող է հարցաքննվել մյուս**

	ամբաստանյալների բացակայությամբ, դատարանի պատճառաբանված որոշմամբ, եթե դա անհրաժեշտ է գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար
61	Թվարկածներից ո՞ր դեպքում է թույլատրվում հրապարակել նախաքննության ընթացքում մեղադրյալի տված ցուցմունքները. • բոլոր դեպքերում չի թույլատրվում հրապարակել • նախաքննության ընթացքում մեղադրյալի տված ցուցմունքները հրապարակվում են, եթե այդ մասին միջնորդում են միայն ամբաստանյալը և նրա պաշտպանը • նախորդ ցուցմունքները հրապարակվում են, եթե ամբաստանյալը չի ներկայացել դատական նիստին • **նախաքննության ընթացքում տված մեղադրյալի ցուցմունքները հրապարակվում են, եթե ամբաստանյալը հրաժարվում է դատական քննության ժամանակ ցուցմունքներ տալ մեղադրանքի էության մասին**
62	Անձը որպես դատապարտյալ ո՞ր հանգամանքների շուրջ է հարցաքննվում. • քննվող քրեական գործով իրեն հայտնի բոլոր հանգամանքների շուրջ • **իր նկատմամբ կայացված և օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված հանգամանքների շուրջ** • իրեն առաջադրված մեղադրանքի շուրջ • բոլոր այն հանգամանքների շուրջ, որը նպատակահարմար կգտնեն պարզաբանել դատարանը կամ գործով մասնակցող կողմերը:
63	Փորձագետի կողմից եզրակացությունը դատարանում հրապարակելուց հետո այն պարզելու կամ լրացնելու նպատակով ո՞վ է առաջին հերթին հարցաքննում փորձագետին. • **այն անձը, որի միջնորդությամբ նշանակվել է փորձաքննությունը** • դատարանը • փորձագետի հարցաքննության հերթականությունը որոշում է դատարանը • բոլոր դեպքերում մեղադրողը

64	Այն դեպքում, երբ դատաքննության ընթացքում պաշտպանության կողմը միջնորդում է իր կողմից ներկայացված և գործին կցված դեռևս չհետազոտված ապացույցները չհետազոտելու մասին, ապա այդ միջնորդությունը դատարանի համար պարտադի՞ր է, թե ոչ. · այդ միջնորդությունը դատարանի համար պարտադիր չէ և այն կարող է մերժել · **այդ միջնորդությունը պարտադիր է դատարանի համար և այն պետք է բավարարվի** · դատարանի կողմից այդ միջնորդությունը չի կարող բավարարվել, եթե դրա դեմ առարկում է մեղադրողը · բոլոր դեպքերում դատարանը պարտավոր է քրեական գործում առկա բոլոր ապացույցները հետազոտել դատաքննության ընթացքում
65	Դատական վիճաբանությունները բաղկացած են հետևյալ հաջորդականությամբ արտասանած ճառերից. · **մեղադրողի, տուժողի կամ նրա ներկայացուցչի, քաղաքացիական հայցվորի կամ նրա ներկայացուցչի, քաղաքացիական պատասխանողի կամ նրա ներկայացուցչի, պաշտպանի և ամբաստանյալի** · մեղադրողի, պաշտպանի, ամբաստանյալի · մեղադրողի, տուժողի կամ նրա ներկայացուցչի, քաղաքացիական պատասխանողի, ամբաստանյալի, պաշտպանի · պաշտպանի, քաղաքացիական պատասխանողի կամ նրա ներկայացուցչի, մեղադրողի, տուժողի կամ նրա ներկայացուցչի, քաղաքացիական հայցվորի կամ նրա ներկայացուցչի
66	Ու՞մ է միշտ պատկանում վերջին ռեպլիկի իրավունքը. · մեղադրողին · տուժողին · միայն պաշտպանին · **պաշտպանին և ամբաստանյալին**
67	Ամբաստանյալի վերջին խոսքի ժամանակ թույլատրվու՞մ է նրան հարցեր տալ, թե ոչ. · թույլատրվում է, եթե հարցերը նրան ուղղում է պաշտպանը · թույլատրվում է, եթե հարցերը նրան ուղղում է դատարանը · **չի թույլատրվում** · թույլատրվում է, եթե հարցերին պատասխանելու համաձայնություն է տալիս ամբաստանյալը

68	Ի՞նչ է հայտարարում դատարանը ամբաստանյալի վերջին խոսքը լսելուց հետո խորհրդակցական սենյակ հեռանալուց առաջ դատավճիռ կամ որոշում կայացնելու համար. • **դատավճիռ կամ որոշումը հրապարակելու վայրը, օրը և ժամը** • դատավճռի կամ որոշման առաքման օրը • դատավճիռը կամ որոշումը ստանալու կարգը • դատավճռին կամ որոշմանը ծանոթանալու կարգը
69	Դատավճիռ կայացնելիս դատարանի լուծմանը ենթակա հարց չի հանդիսանում. • ում վրա և ինչ չափով պետք է դրվեն դատական ծախսերը • ինչ անել իրեղեն ապացույցները • հանցանքը կատարելու մեջ մեղավոր ճանաչված ամբաստանյալի նկատմամբ արդյոք անհրաժեշտ է կիրառել բուժում գինեմոլությունից • **քրեական պատիժներ իրականացնող հաստատության տեսակը՝ համապատասխան ռեժիմով, որտեղ ամբաստանյալը պետք է կրի ազատազրկման ձևով նշանակված պատիժը**
70	Համաձայն Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի՝ դատարանի դատավճիռը կարող է լինել. • **մեղադրական կամ արդարացման** • միայն մեղադրական • մեղադրական կամ արդարացման կամ մասնակի մեղադրական • մասնակի մեղադրական կամ մասնակի արդարացման
71	Առաջին ատյանի դատարանը դատավճռի պատճենը դատապարտվածին կամ արդարացվածին հանձնում է հրապարակելուց. • ոչ ուշ, քան 3 օրվա ընթացքում • **ոչ ուշ, քան 5 օրվա ընթացքում** • ոչ ուշ, քան 7 օրվա ընթացքում • ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում
72	Դատավարության ո՞ր մասնակիցների նամակագրությունը կարող է վերահսկվել դատարանի որոշմամբ. • տուժողի, կասկածյալի կամ մեղադրյալի • **կասկածյալի կամ մեղադրյալի** • կասկածյալի, մեղադրյալի կամ նրանց պաշտպանի • տուժողի, վկայի կամ քաղաքացիական պատասխանողի
73	Քրեական դատավարությունում դատարանի նախաձեռնությամբ հրավիրված վկային ո՞վ է առաջինը հարցաքննում. • պաշտպանության կողմը • **մեղադրանքի կողմը** • դատարանը

	• դատարանի նախաձեռնությամբ հրավիրված վկային առաջին հերթին հարցաքննելու իրավունքը որոշում է դատարանը
74	Ստորև թվարկվածներից ո՞ր դեպքում է, որ վերաքննիչ դատարանում գործի քննության ժամանակ պաշտպանի մասնակցությունը պարտադիր չէ. • եթե ամբաստանյալը ժամկետային ծառայության զինծառայող է • եթե ամբաստանյալը ոչ բավարար չափով է տիրապետում դատավարության լեզվին • եթե ամբաստանյալը անչափահաս է • **եթե ամբաստանյալը կատարել է առանձնապես ծանր հանցագործություն, որի համար որպես պատիժ կարող է նշանակվել ցմահ ազատազրկում**
75	Վերաքննիչ դատարանում քրեական գործով դատական նիստին բոլոր դեպքերում պարտադիր է. • **դատախազի մասնակցությունը** • տուժողի և իր ներկայացուցչի մասնակցությունը • դատախազի, ամբաստանյալի և նրա պաշտպանի մասնակցությունը • դատախազի, տուժողի, ամբաստանյալի և նրա պաշտպանի մասնակցությունը
76	Վերաքննիչ դատարանում քրեական գործով դատաքննությունը սկսվում է. • դատախազի կողմից մեղադրական եզրակացության եզրափակիչ մասի ընթերցմամբ • նախագահողի կողմից դատական ակտի եզրափակիչ մասի ընթերցմամբ • նախագահողի կողմից դատական ակտի բովանդակության, ինչպես նաև մեղադրական եզրակացության, վերաքննիչ բողոքի և դրա դեմ առկա առարկությունների շարադրմամբ • **նախագահողի կողմից դատական ակտի բովանդակության, ինչպես նաև վերաքննիչ բողոքի և դրա դեմ առկա պատասխանների էության շարադրմամբ**
77	Ինչպիսի՞ որոշում չի կարող կայացնել քրեական վերաքննիչ դատարանը. • մերժել վերաքննիչ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ • ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարել վերաքննիչ բողոքը՝ համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով դատական ակտը • **բեկանել առաջին ատյանի դատարանի մեղադրական դատավճիռը և գործն ուղարկել դատախազին** • քաղաքացիական հայցի մասով ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանել դատական ակտը և այդ մասով հաստատել կողմերի հաշտության համաձայնություն

78	Պատիժը կրելուց ազատելով մեղադրական դատավճիռ կայացնելու դեպքում՝ ամբաստանյալը կալանքից ազատվում է. • դատավճիռը օրինական ուժի մեջ մտնելուց հետո • որոշումը վերաքննիչ դատարան բողոքարկվելուց ու քննարկվելուց հետո • **անհապաղ՝ դատական նիստի դահլիճում** • դատարանի դատավճռի հիման վրա տրված կատարման կարգադրությունը ստորագրելուց հետո
79	Մեղադրյալը (ամբաստանյալը) դատական քննության արագացված կարգ անցկացնելու միջնորդություն կարող է ներկայացնել. • քրեական գործ հարուցելուց անմիջապես հետո • դատաքննության ընթացքում • **քրեական գործը դատարան ուղարկելու պահից մինչև դատաքննությունը սկսելը** • դատական վիճաբանությունների ընթացքում
80	Վերաքննիչ դատարանում դատական վիճաբանությունների ընթացքում առաջինը ելույթ է ունենում. • պաշտպանը • մեղադրողը • վերաքննիչ դատարանն է որոշում, թե առաջինն ով պետք է ելույթ ունենա • **վերաքննիչ բողոք բերած անձը**
81	Ու՞մ որոշմամբ է թույլատրվում հեռախոսային խոսակցությունները լսելն ու ձայնագրառելը. • քննիչի, դատախազի, հետաքննության մարմնի կամ դատարանի որոշմամբ • դատախազի կամ դատարանի որոշմամբ • դատարանի, դատախազի կամ դատախազի համաձայնությամբ՝ քննիչի որոշմամբ • **միայն դատարանի որոշմամբ**
82	Ազատազրկման դատապարտված անձի նկատմամբ դատական որոշման կատարումը կարող է հետաձգվել. • **որոշում կայացրած դատարանի կողմից** • միայն ամբաստանյալի բնակության վայրի առաջին ատյանի դատարանի կողմից • միայն Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատի կողմից • քրեական պատիժներն ի կատար ածող մարմինների վարչակազմի կողմից՝ առաջին ատյանի դատարանի որոշման հիման վրա

83	Ազատազրկման դատապարտված անձի նկատմամբ դատական որոշման կատարումը հետաձգելու հիմք չի հանդիսանում. · դատապարտյալի ծանր հիվանդությունը, որը խոչընդոտում է պատիժը կրելուն մինչև նրա առողջանալը · դատական որոշման կատարման պահին դատապարտյալի հղիությունը՝ մեկ տարուց ոչ ավելի ժամանակով · դատապարտված կնոջ փոքրահասակ երեխաների առկայությունը՝ մինչև երեխայի երեք տարեկան դառնալը **· եթե տվյալ պահին պատժի կրելը կարող է առանձնապես ծանր հետևանքներ առաջացնել դատապարտյալի կամ նրա ընտանիքի համար՝ հրդեհի կամ այլ տարերային աղետների դեպքում, բայց ոչ ավել, քան երեք ամիս ժամկետով**
84	Դիվանագիտական անձեռնմխելիությունից չեն օգտվում. · դիվանագիտական սուրհանդակները **· օտարերկրյա պետության դիվանագիտական ներկայացուցչության աշխատակազմի ցանկացած անդամ** · հյուպատոսական հիմնարկների ղեկավարները և այլ պաշտոնատար անձինք · միջազգային կազմակերպություններում օտարերկրյա պետության ներկայացուցչությունների անդամները և անձնակազմը, դրանց պաշտոնատար անձինք, որոնք Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվում են միջազգային հանրաճանաչ սովորույթների ուժով
85	Դիվանագիտական ներկայացուցչության զբաղեցված շենք մուտք գործելը կարող է կատարվել. · միայն դատարանի որոշմամբ · միայն Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի միջնորդության հիման վրա՝ դատարանի որոշմամբ · միայն Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության համաձայնությամբ **· միայն դիվանագիտական ներկայացուցչության ղեկավարի կամ այդ պաշտոնը զբաղեցնող անձի համաձայնությամբ**
86	Ո՞ր դեպքում վերաքննիչ դատարանը ամբաստանյալի նկատմամբ կարող է նշանակել առաջին ատյանի դատարանի դատավճռով նախատեսվածից ավելի խիստ պատիժ. · երբ վերաքննիչ բողոքի քննարկման ընթացքում ի հայտ են եկել պատիժը ծանրացնող նոր հանգամանքներ · միայն, երբ վերաքննիչ բողոք բերել է դատախազը **· երբ տվյալ հիմքով վերաքննիչ բողոքը բերել է դատախազը, ինչպես նաև տուժողը կամ նրա ներկայացուցիչը** · երբ վերաքննիչ դատարանը գտնում է, որ անհրաժեշտ է ավելի խիստ պատիժ նշանակել

87	Բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթ հարուցելու մասին որոշում կայացնելու իրավունք ունի. • հետաքննության մարմինը, քննիչը կամ դատախազը • միայն դատախազը • **քննիչը կամ դատախազը** • դատախազը կամ քննիչը՝ դատախազի համաձայնության դեպքում
88	Եթե քրեական գործի քննության ընթացքում պարզվի, որ հանցակիցներից որևէ մեկն արարք կատարելու պահին գտնվել է անմեղսունակության վիճակում, ապա նրա նկատմամբ գործը. • առանձնացվում է առանձին վարույթում, եթե այդպիսի միջնորդություն է ներկայացնում նրա պաշտպանը • **բոլոր դեպքերում առանձնացվում է առանձին վարույթում** • առանձնացվում է առանձին վարույթում, եթե դրա դեմ չեն առարկում մյուս հանցակիցները և նրանց պաշտպանները • կարող է առանձնացվել առանձին վարույթում դատախազի որոշման հիման վրա
89	Նշվածներից ո՞րը չի հանդիսանում անմեղսունակության վիճակում հանրորեն վտանգավոր արարք կատարած անձանց նկատմամբ կիրառվող անվտանգության միջոց. • հսկողության համար հիվանդին հանձնելը ազգականներին՝ իրազեկելով առողջապահության մարմիններին • հսկողության համար հիվանդին հանձնելը հոգաբարձուներին, խնամակալներին՝ իրազեկելով առողջապահության մարմիններին • հոգեբուժական հիվանդանոց տեղավորելը • **հիվանդին այլ անձանցից մեկուսացնելը և առանձին խցում պահելը**
90	Քրեական գործով վարույթն ավարտելու համար հավաքված ապացույցները բավարար համարելու դեպքում քննիչը բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու գործերով ստորև թվարկվածներից ինչպիսի՞ որոշում չի կարող կայացնել. • բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու համար գործը դատարան ուղարկելու մասին • ընդհանուր հիմքերով քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին • **գործի վարույթը կասեցնելու մասին՝ մինչև անձի առողջանալը** • գործով վարույթը կարճելու մասին, եթե քրեական օրենքով չթույլատրված արարքն անմեղսունակության վիճակում կատարած անձը քննության պահին առողջացել է և չունի բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու կարիք

91	Բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վերաբերյալ դատաքննությունը սկսվում է. • դատախազի կողմից մեղադրական եզրակացության եզրափակիչ մասի հրապարակմամբ • բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու անհրաժեշտության մասին դատախազի միջնորդագրով • բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու անհրաժեշտության մասին փորձագետի եզրակացության հրապարակելով • **բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու անհրաժեշտության մասին դատախազի զեկույցով**
92	Ինչպիսի՞ որոշում է կայացնում դատարանը, եթե արարքը կատարելու պահին անձը գտնվել է անմեղսունակության վիճակում, իսկ դատական քննության պահին՝ առողջացել է. • քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին, ինչպես նաև անձի նկատմամբ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու մասին • **քրեական վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին** • անձին քրեական պատասխանատվությունից և պատժից ազատելու ու նրա նկատմամբ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու մասին • քրեական պատասխանատվությունից և պատժից ազատելու մասին
93	Հանցանքը կատարելուց հետո հոգեկան խանգարում ստացած անձանց նկատմամբ կարո՞ղ են կիրառվել խափանման միջոցներ, թե ոչ. • նշված անձանց նկատմամբ չեն կարող կիրառվել խափանման միջոցներ • նշված անձանց նկատմամբ կարող են կիրառվել միայն անվտանգության միջոցներ • **նշված անձանց նկատմամբ կարող են կիրառվել խափանման միջոցներ, եթե դրան չի խոչընդոտում նրանց առողջական վիճակը** • նշված անձանց նկատմամբ խափանման միջոցներ կարող են կիրառվել, եթե նրանց կողմից կատարվել է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություններ
94	Ո՞ր դատարանի կողմից է քննարկվում բժշկական բնույթի հարկադրական միջոցը վերացնելու կամ փոխելու վերաբերյալ միջնորդությունը. • այն դատարանի, որի կողմից կիրառվել է բժշկական բնույթի հարկադրական միջոցը • **բժշկական հաստատության գտնվելու վայրի դատարանի, որտեղ կիրառվում են բժշկական բնույթի հարկադրական միջոցները** • հիվանդի բնակության վայրի դատարանի • քրեական վերաքննիչ դատարանի

95	Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով դատարանի վարույթում գտնվող քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու հարցերով հաղորդակցությունն իրականացվում է. • Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջոցով • **Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության միջոցով** • Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի միջոցով • այն դատարանի միջոցով, որի վարույթում գտնվում է քրեական գործը
96	Դատավճիռն ի կատար ածելու առնչությամբ ոչ ՀՀ քաղաքացու հանձնելը կատարվում է այնպիսի արարքների համար, որոնք խնդրանքն ուղարկած օտարերկրյա պետության և Հայաստանի Հանրապետության օրենքով համարվում է պատժելի, և որոնց կատարման համար անձը դատապարտվել է ազատազրկման. • **վեց ամսից ոչ պակաս ժամկետով** • մեկ տարուց ոչ պակաս ժամկետով • երկու տարուց ոչ պակաս ժամկետով • երեք տարուց ոչ պակաս ժամկետով
97	Անձի հանձնման մասին օտարերկրյա պետության իրավասու մարմնի խնդրանքի կատարումը մերժման հիմք չէ. • եթե խնդրանքը վերաբերում է Հայաստանի Հանրապետության քաղաքացու հանձնմանը • հանձնման դեպքում տվյալ օտարերկրյա պետության օրենքներին համապատասխան կարող է նշանակվել մահապատիժ, և այդ պետությունը բավարար երաշխիքներ չի տալիս առ այն, որ հանձնելու դեպքում այդպիսի պատիժ չի նշանակվի և չի կիրառվի • անձի նկատմամբ նույն արարքի համար արդեն իսկ կայացվել է օրինական ուժի մեջ մտած դատավճիռ • **խնդրանքը վերաբերում է քաղաքացիություն չունեցող անձին**
98	Եթե միևնույն անձին հանձնելու մասին խնդրանքներ են ստացվել մի քանի պետություններից, ապա ո՞վ է որոշում, թե որ պետության խնդրանքը պետք է բավարարվի առաջին հերթին. • այդ հարցը որոշվում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից • այդ հարցը որոշվում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության կողմից • **այդ հարցը որոշում է խնդրանքները ստացած Հայաստանի Հանրապետության դատախազը կամ դատարանը** • բոլոր դեպքերում որոշում է միայն Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը

99	Մինչև հանձնելու մասին խնդրանքը ստանալը օտարերկյա պետության իրավասու մարմնի միջնորդությամբ Հայաստանի Հանրապետությունում կալանավորված անձը ազատ է արձակվում, եթե նրան հանձնելու խնդրանքը չի ստացվել. • կալանքի վերցնելու օրվանից՝ 10 օրվա ընթացքում • կալանքի վերցնելու օրվանից՝ 15 օրվա ընթացքում • կալանքի վերցնելու օրվանից՝ 20 օրվա ընթացքում • **կալանքի վերցնելու օրվանից՝ 30 օրվա ընթացքում**
100	Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում օտարերկրյա պետությունների բարձրագույն դատական մարմնի դատավճիռը Հայաստանի Հանրապետությունում ճանաչում է. • Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը • Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը • Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը • **Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը**
101	Անմեղսունակության վիճակում քրեական օրենքով չթույլատրված արարք կատարած անձանց նկատմամբ խափանման միջոցներ կարող են կիրառվել. • այո, եթե դրան չի խոչընդոտում անձի առողջական վիճակը • այո, եթե անձը կատարել է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն • **ոչ, անկախ այն հանգամանքից, թե ինչ վիճակում է գտնվում անձը** • այո, եթե դրա վերաբերյալ առկա է դատարանի որոշում
102	Որո՞նք են քրեական հետապնդման մարմինները. • դատախազը, քննիչը • **դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը** • դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը, տուժողը • դատախազը, քննիչը, տուժողը
103	Ստորև թվարկվածներից ո՞րը չի հանդիսանում անմեղության կանխավարկածի հատկանիշ. • հանցագործության համար կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունը ապացուցված չէ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով • **կասկածյալը և մեղադրյալն ունեն պաշտպանության իրավունք** • կասկածյալը կամ մեղադրյալը պարտավոր չեն ապացուցել իրենց անմեղությունը • կասկածյալի կամ մեղադրյալի անմեղության ապացուցման պարտականությունը չի կարող դրվել պաշտպանության կողմի վրա

104	Քրեական դատավարությունում ու՞մ վերաբերյալ անձը իրավունք ունի ցուցմունք չտալ. • միայն իր և ամուսնու վերաբերյալ • միայն իր վերաբերյալ • **իր, ամուսնու և մերձավոր ազգականների վերաբերյալ** • իր, ամուսնու և ազգականների վերաբերյալ
105	Ո՞րը քրեական դատավարության սկզբունք չէ. • **ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքը** • օրինականության սկզբունքը • օրենքի առջև հավասարության սկզբունքը • անձի անձեռնմխելիության սկզբունքը
106	Ո՞րը չի հանդիսանում քրեական գործով վարույթի կասեցման հիմք. • հայտնի չէ անձը, ով գործով պետք է ներգրավվի որպես մեղադրյալ • գործում է անհաղթահարելի ուժ, որը ժամանակավորապես խոչընդոտում է քրեական գործով հետագա վարույթին • **դատաքննության ժամանակ նշանակվել է փորձաքննություն** • մեղադրյալը գտնվում է ՀՀ սահմաններից դուրս, որի պատճառով չի կարող մասնակցել քրեական գործով վարույթին, եթե առանց նրա մասնակցության քրեական գործով հետագա վարույթն անհնարին է
107	Ո՞ր դեպքերում քննիչը իրավունք չունի գործի վարույթը կարճել և քրեական հետապնդումը դադարեցնել վաղեմության ժամկետները անցնելու հիմքով. • քննիչը բոլոր դեպքերում պարտավոր է գործի վարույթը կարճել և քրեական վարույթը դադարեցնել վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով • **եթե դրա դեմ առարկում է մեղադրյալը** • եթե բացակայում է դատախազի գրավոր ցուցումը • այդ հիմքով քննիչը իրավունք չունի գործի վարույթը կարճել կամ դադարեցնել քրեական վարույթը
108	Նախաքննության ավարտման ձև չէ. • **քրեական գործով վարույթի կասեցումը** • քրեական գործով վարույթի կարճումը • բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու համար քրեական գործը դատարան ուղարկելը • մեղադրական եզրակացություն կազմելը
109	Քանի՞ դատավորի կազմով են քննվում քրեական գործերը առաջին ատյանի դատարանում. • **մեկ դատավորի** • երեք դատավորի • մեկ դատավորի, իսկ ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների վերաբերյալ գործերով՝ երեք դատավորի

	• մեկ դատավորի, իսկ առանձնապես ծանր հանցագործությունների վերաբերյալ գործերով՝ երեք դատավորի
110	Գործը մեղադրողին վերադարձնելու մասին որոշում դատավորը կայացնում է այն դեպքում. • երբ հետաքննության կամ նախաքննության մարմինների կողմից թույլ է տրվել քրեադատավարական օրենքի էական խախտում, եթե դա չի կարող վերացվել դատական քննության ընթացքում • երբ առկա են մեղադրանքը ավելի ծանր կամ փաստական հանգամանքներով սկզբնականից տարբերվող մեղադրանքով փոխելու հիմքեր • երբ մեղադրյալը թաքնվում է դատից • **երբ մեղադրական եզրակացությունը չի համապատասխանում քրեական դատավարության օրենսգրքի պահանջներին, կամ արարքի իրավաբանական որակումը չի համապատասխանում արարքի նկատագրությանը կամ չի բխում գործում առկա ապացույցներից**
111	Քրեական դատավարությունում ի՞նչ լիազորություն չունի դատարանը. • դատավճիռն ի կատար ածելիս ուղարկել • դատավճիռն ի կատար ածելիս ծագող հարցեր լուծել • **քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում քրեական գործ հարուցելու որոշում ընդունել** • դատվածությունը հանելու հետ կապված հարցեր լուծել
112	Կարո՞ղ է քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխվել, եթե տվյալ գործով քրեական դատավարությանը մասնակցող անձանցից շատերը բնակվում են տվյալ առաջին ատյանի դատարանի դատական տարածքից դուրս. • ոչ • այո, անկախ մեղադրյալների համաձայնությունից • **այո, միայն բոլոր մեղադրյալների համաձայնությամբ** • այո, միայն մեկ մեղադրյալի մասնակցությամբ գործերով և իր համաձայնությամբ
113	Ո՞ր մարմինն է հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ իրականացնում հսկողություն. • Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեն • հետաքննության և նախաքննական մարմնի պետը • **դատախազը** • դատարանը

114	Քրեական հետապնդման մարմինը որքա՞ն ժամանակ կարող է անձին պահել կասկածյալի վիճակում անազատության հետ չկապված խափանման միջոց ընտրելու մասին որոշումը նրան հայտարարելու պահից. · ոչ ավելի, քան 96 ժամ · ոչ ավելի, քան 3 օր · **ոչ ավելի, քան 7 օր** · ոչ ավելի, քան 10 օր
115	Արգելանքի վերցվելուց հետո ի՞նչ ժամկետում կասկածյալը իրավունք ունի քրեական վարույթ իրականացնող մարմնի միջոցով մերձավոր ազգականներին տեղյակ պահել արգելանքի տակ պահվելու իր տեղի և հիմքի մասին. · **անմիջապես, բայց ոչ ուշ, քան 12 ժամվա ընթացքում** · անմիջապես, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում · անմիջապես, բայց ոչ ուշ, քան 36 ժամվա ընթացքում · անմիջապես, բայց ոչ ուշ, քան 48 ժամվա ընթացքում
116	Կասկածը չհաստատվելու դեպքում ի՞նչ կարգավիճակ է ձեռք բերում կասկածյալը. · ոչ մի կարգավիճակ · մեղադրյալի · վկայի · **արդարացվածի**
117	Կասկածյալի համար կարո՞ղ են պատասխանատվություն առաջացնել իր տված ցուցմունքները. · կասկածյալի վրա չի կարող որևէ պատասխանատվություն դրվել իր տրված ցուցմունքների համար · կասկածյալը պատասխանատվություն է կրում սուտ ցուցմունք տալու համար ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված կարգով · կասկածյալը պատասխանատվություն չի կրում սուտ ցուցմունք տալու համար ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված կարգով, բացի այն դեպքից, երբ նա հարցաքննվել է իրեն չմեղսագրվող արարքների վերաբերյալ · **կասկածյալի վրա չի կարող որևէ պատասխանատվություն դրվել իր տված ցուցմունքների համար, բացի այն դեպքից, երբ նա հայտարարել է հանցագործությանն ակնհայտորեն առնչություն չունեցող անձի կողմից հանցանք կատարելու մասին**
118	Ո՞վ է համարվում մեղադրյալ. · **այն անձը, որի նկատմամբ որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին** · այն անձը, որին առաջադրվել է մեղադրանք · այն անձը, որի նկատմամբ կալանքն ընտրվել է որպես խափանման միջոց · այն անձը, որը ձերբակալվել է քրեորեն պատժելի արարք կատարելու համար

119	Մեղադրյալը ո՞ր պահից է ստանում քրեական գործի բոլոր նյութերին ծանոթանալու իրավունք. • մեղադրանք առաջադրելու պահից • **նախաքննության ավարտման պահից** • գործը դատավորի կողմից վարույթ ընդունելու պահից • գործը դատախազին հանձնելու պահից
120	Մեղադրյալը ո՞ր պահից է ստանում քրեական գործի բոլոր նյութերից անվճար պատճեններ հանելու իրավունք. • մեղադրանք առաջադրվելու պահից • գործը նյութերին ծանոթանալուց հետո • **նախաքննության ավարտման պահից** • միայն դատավորի կողմից վարույթ ընդունելուց հետո
121	Ո՞ր դեպքում պաշտպանը չի դադարում որպես այդպիսին մասնակցել քրեական գործով վարույթին. • երբ կասկածյալը կամ մեղադրյալը լուծել են նրա հետ ունեցած համաձայնությունը • երբ նա լիազորված չէ մասնակցելու համապատասխան գործով հետագա վարույթին • երբ քրեական վարույթ իրականացնող մարմինը պաշտպանին ազատել է քրեական գործով վարույթին մասնակցելուց՝ հաշվի առնելով քրեական դատավարությանը նրա մասնակցությունը բացառող հանգամանքների հայտնաբերումը • **երբ կասկածյալը կամ մեղադրյալը հայտնել են պաշտպանից հրաժարվելու իրենց ցանկության մասին**
122	Թվարկածներից ո՞ր դեպքում պաշտպանի մասնակցությունը պարտադիր չէ. • մեղադրյալը ժամկետային զինծառայող է • կասկածյալը կամ մեղադրյալը չի տիրապետում, կամ ոչ բավարար չափով է տիրապետում հայերենին • հանցանքը կատարելու պահին կասկածյալը կամ մեղադրյալը անչափահաս է • **այն հանցագործությունների գործերով, որոնց համար որպես պատժամիջոց կարող է ցմահ ազատազրկում կիրառվել**
123	Բացարկման ենթակա չէ. • գործի ելքով շահագրգռված ընթերական • **գործի ելքով շահագրգռված վկան** • գործի ելքով շահագրգռված փորձագետը • գործի ելքով շահագրգռված դատական նիստի քարտուղարը

124	Քրեական վարույթ իրականացնող մարմինն իրավունք ունի՞ որևէ մեկին երաշխավորել հրավիրելու որևէ պաշտպանի. • այո, առանց վերապահման • այո, սակայն միայն հանրային պաշտպանի գրասենյակի փաստաբաններին • **ոչ** • այո, սակայն միայն տվյալ տարածքը սպասարկող փաստաբանին
125	Ո՞ր դեպքում վարույթն իրականացնող մարմինն իրավունք ունի կասկածյալին կամ մեղադրյալին առաջարկել հրավիրել այլ պաշտպան կամ պաշտպան նշանակել ՀՀ փաստաբանների պալատի միջոցով. • եթե պաշտպանի իրավիճակ ձեռք բերելու պահից 12 ժամվա ընթացքում պաշտպանը հնարավորություն չունի ներկայանալու կամ չի ներկայանում կասկածյալի հարցաքննությանը • **եթե պաշտպանը հնարավորություն չունի մասնակցելու քրեական գործով վարույթին 3 օրից ավելի ժամանակով** • եթե պաշտպանի իրավիճակ ձեռք բերելու պահից 12 ժամվա ընթացքում պաշտպանը հնարավորություն չունի ներկայանալու կամ չի ներկայանում արգելանքի վերցված մեղադրյալի առաջին հարցաքննությանը • եթե պաշտպանը հնարավորություն չունի մասնակցելու քրեական գործով վարույթին 7 օրից ավելի ժամանակով
126	Ո՞ր դեպքում է քրեական վարույթ իրականացնող մարմինն ընդունում մեղադրյալի հայտարարությունը պաշտպանից հրաժարվելու վերաբերյալ. • **եթե կասկածյալի կամ մեղադրյալի կողմից այդ մասին հայտարարվել է սեփական նախաձեռնությամբ, կամավոր և այն պաշտպանի ներկայությամբ, որը կարող էր նշանակվել կամ նշանակված է պաշտպան** • եթե կասկածյալի կամ մեղադրյալի կողմից այդ մասին հայտարարվել է սեփական նախաձեռնությամբ, կամավոր և այն պաշտպանի ներկայությամբ, որը կարող էր նշանակվել պաշտպան • եթե կասկածյալի կամ մեղադրյալի կողմից այդ մասին հայտարարվել է սեփական նախաձեռնությամբ, կամավոր և հանրային պաշտպանի ներկայությամբ • եթե կասկածյալի կամ մեղադրյալի կողմից այդ մասին հայտարարվել է սեփական նախաձեռնությամբ և կամավոր
127	Ո՞ր քննչական և դատավարական գործողությունների արձանագրություններին պաշտպանն իրավունք ունի ծանոթանալ մինչև նախաքննության ավարտը. • բոլոր այն քննչական գործողություններին, որոնք մինչև այդ պահը կատարվել են • միայն նրանց, որոնց ծանոթացման համար միջնորդել է պաշտպանը • ոչ մեկին • միայն նրանց, որոնց նա կամ իր պաշտպանյալը մասնակցել է

128	Պաշտպանն իրավունք ունի՞ ինքնակամ դադարեցնել իր լիազորությունները. • այո • միայն այն դեպքում, եթե հակասություն է առաջացել իր և իր պաշտպանյալի միջև • միայն այն դեպքում, եթե իր պաշտպանյալը ցանկանում է հրավիրել այլ պաշտպան • **ոչ**
129	Տուժողի ներկայացուցիչը, որը փաստաբան չէ, իրավունք ունի՞ հրաժարվել քրեական գործով վարույթին հետագա մասնակցությունից. • ոչ • **այո** • միայն այն դեպքում, եթե տուժողն ունի այլ ներկայացուցիչ • միայն այն դեպքում, եթե տուժողն ունի փաստաբան հանդիսացող այլ ներկայացուցիչ
130	Քրեական գործի վարույթին ո՞վ կարող է մասնակցել որպես տուժողի իրավահաջորդ. • միայն փաստաբանը • փաստաբանը կամ տուժողի մերձավոր ազգականները • **միայն տուժողի մերձավոր ազգականներից մեկը** • փաստաբանը, տուժողի մերձավոր ազգականները և այլ անձինք
131	Քրեական գործով վարույթի ընթացքում ո՞վ կարող է իրականացնել մահացած կամ իր կամքն արտահայտելու ունակությունը կորցրած տուժողի իրավունքները և պարտականությունները. • տուժողի ներկայացուցիչը • տուժողի փաստաբանը • տուժողի պաշտպանը • **տուժողի իրավահաջորդը**
132	Տուժողի իրավահաջորդը ե՞րբ իրավունք ունի դադարեցնել իր լիազորությունները. • **տուժողի իրավահաջորդ ճանաչված ցանկացած անձ իրավունք ունի ցանկացած պահի դադարեցնել իր լիազորությունները** • տուժողի իրավահաջորդ ճանաչված անձն իրավունք չունի քրեական գործով դադարեցնել իր լիազորությունները • տուժողի իրավահաջորդ ճանաչված փաստաբանն իրավունք չունի ցանկացած պահին դադարեցնել իր լիազորությունները • տուժողի իրավահաջորդ ճանաչված անձն իրավունք ունի քրեական գործով դադարեցնել իր լիազորությունները միայն այլ անձի կողմից այդ կարգավիճակը ստանձնելու ցանկություն հայտնելու դեպքում

133	Տուժողի իրավահաջորդը կարո՞ղ է կանչվել որպես վկա. • **այո** • ոչ • միայն իր համաձայնության դեպքում • միայն իր կարգավիճակը դադարեցնելուց հետո
134	Փորձագետը իրավունք ունի՞ ծանոթանալ քրեական գործի նյութերին. • այո, փորձագետն իրավունք ունի ծանոթանալ քրեական գործի բոլոր նյութերին • **այո, փորձագետն իրավունք ունի քրեական վարույթ իրականացնող մարմնի թույլտվությամբ ծանոթանալ եզրակացություն տալու համար անհրաժեշտ նյութերին** • ոչ • այո, սակայն միայն այն նյութերին, որոնք փորձաքննություն նշանակելու մասին որոշման հետ միասին իրեն տրամադրել է քրեական վարույթ իրականացնող մարմինը
135	Որպես ապացույց չի թույլատրվում օգտագործել. • մեղադրյալի ցուցմունքները, որոնք տրվել են առերեսման ժամանակ • գործի ելքով շահագրգռված վկայի ցուցմունքները • **մասնագետի կարծիքը** • տվյալ գործի մեղադրանքի հետ առնչվող՝ մեկ այլ քրեական գործով կասկածյալի կամ մեղադրյալի կամ ամբաստանյալի ցուցմունքները
136	Անհրաժեշտության դեպքում պահպանվող անձի անվտանգության ապահովումը իրականացնելու նպատակով ինչպիսի՞ միջոցներ չեն կարող կիրառվել. • **պաշտպանվող անձին ինքնապաշտպանության նպատակով հրազեն տրամադրելը** • պաշտպանվող անձի արտաքինը փոփոխելը • պաշտպանվող անձին բնակության այլ վայր փոխադրելը • պաշտպանվող անձի բնակարանը կամ այլ գույքը պահպանելը
137	Դատախազն ի՞նչ ժամկետում պետք է քննության առնի քննիչի կողմից անօրինական գործողություններ կատարելու մասին դատավարության մասնակիցների բողոքները. • անհապաղ, բայց ոչ ուշ, քան այն ստանալու պահից 24 ժամվա ընթացքում • **անհապաղ, բայց ոչ ուշ, քան այն ստանալու պահից 3 օրվա ընթացքում** • անհապաղ, բայց ոչ ուշ, քան այն ստանալու պահից 5 օրվա ընթացքում • անհապաղ, բայց ոչ ուշ, քան այն ստանալու պահից 7 օրվա ընթացքում

138	Քննիչը պետական պաշտոնատար անձ է, որն իր իրավասության սահմաններում քրեական գործով. • իրականացնում է հետաքննություն • դատարանում պաշտպանում է մեղադրանքը • **իրականացնում է նախաքննություն** • հսկողություն է իրականացնում հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ
139	Ո՞ր քննչական գործողությունը նախատեսված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով. • արտաշիրմումը • հետազոտման համար նմուշներ ստանալը • քննչական փորձարարությունը • **ցուցմունքների ստուգումը դեպքի վայրում**
140	Քրեական դատավարությունում այլ փաստաթղթերն ապացույց են ճանաչվում. • **վարույթ իրականացնող մարմնի որոշմամբ** • վարույթ իրականացնող մարմնի կողմից կազմված արձանագրությամբ • վարույթ իրականացնող մարմնի կողմից ձեռք բերվելով և գործին կցելով • կողմի միջնորդությամբ և գործին կցելով
141	Հնարավո՞ր է երկարացնել ձերբակալման 72 ժամյա ժամկետը. • այո, միայն դատարանի որոշմամբ • այո, միայն դատախազի որոշմամբ • այո, միայն գլխավոր դատախազի որոշմամբ • **ոչ**
142	Ո՞ր խափանման միջոցն է կալանավորման այլընտրանքային խափանման միջոց. • անձնական երաշխավորությունը • կազմակերպության երաշխավորությունը • **գրավը** • հսկողության հանձնելը
143	Քննչական խմբի ղեկավարն իրավունք չունի. • մասնակցել այլ քննիչների կողմից կատարվող քննչական գործողություններին • գործով անձամբ կատարել քննչական գործողություններ և կայացնել որոշումներ • **գործով տալ ցուցումներ** • դիմել դատարան մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու

144	Ու՞մ նկատմամբ կարող է որպես խափանման միջոց կիրառվել հսկողության հանձնելը. • ցանկացած կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ • ցանկացած մեղադրյալի նկատմամբ • միայն զինծառայողի կամ զինապարտի նկատմամբ՝ զորահավաքներ անցնելու ժամանակահատվածում • **անչափահաս կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ**
145	Եթե նախաքննության ընթացքում առաջադրված մեղադրանքի որևէ մաս չի հաստատվում, քննիչը իր որոշմամբ. • կարճում է գործի այդ մասը • **առաջադրված մեղադրանքի այդ մասը վերացնում է և դրա մասին հայտարարում մեղադրյալին** • այդ մասն առանձնացնում է որպես առանձին վարույթ • այդ մասով կասեցնում է գործով վարույթը
146	Ո՞ր խափանման միջոցները կարող են կիրառվել միայն մեղադրյալի նկատմամբ. • կալանավորումը և ստորագրություն վերցնելը չհեռանալու մասին • կալանավորումը և հսկողության հանձնելը • **կալանավորումը և գրավը** • կալանավորումը և հրամանատարության հսկողությանը հանձնումը
147	Ո՞ր խափանման միջոցը կարող է կիրառվել միայն դատարանի որոշմամբ. • **գրավը** • հսկողության հանձնելը • ստորագրությունը չհեռանալու մասին • հրամանատարության հսկողությանը հանձնումը
148	Ո՞րն է մեղադրյալին կալանքի տակ պահելու առավելագույն տևողությունը ծանր հանցագործությունների գործերով. • մինչև 6 ամիսը • մինչև 9 ամիսը • **մինչև 12 ամիսը** • 1 տարի 6 ամիսը
149	Քրեական գործով մինչդատական վարույթում մեղադրյալին կալանքի տակ պահելու երկամսյա ժամկետը կարո՞ղ է երկարացվել. • **այո, միայն դատարանի որոշմամբ** • այո, միայն դատախազի որոշմամբ • այո, միայն գլխավոր դատախազի որոշմամբ • ոչ

150	Մինչդատական վարույթում դատարանը ի՞նչ ժամկետի սահմաններում կարող է երկարացնել մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը. • յուրաքանչյուր անգամ մեկ ամսից ոչ ավելի ժամանակով • **յուրաքանչյուր անգամ երկու ամսից ոչ ավելի ժամանակով** • յուրաքանչյուր անգամ երեք ամսից ոչ ավելի ժամանակով • յուրաքանչյուր անգամ վեց ամսից ոչ ավելի ժամանակով
151	Մեղադրյալի՝ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու անհրաժեշտության դեպքում քննիչը, դատախազը կալանքի տակ պահելու ժամկետը լրանալուց քանի՞ օր առաջ պետք է դատարան ներկայացնեն պատճառաբանված միջնորդություն. • 3 օր առաջ • 5 օր առաջ • **10 օր առաջ** • 15 օր առաջ
152	Դատարանը, համաձայնվելով կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու անհրաժեշտությանը, ոչ ուշ, քան կալանքի տակ պահելու դատարանի որոշած ժամկետը լրանալուց քանի՞ օր առաջ է համապատասխան որոշում կայացնում. • 3 օր առաջ • **5 օր առաջ** • 10 օր առաջ • 15 օր առաջ
153	Կալանքի տակ պահելու վայրի վարչակազմը ի՞նչ ժամկետում է պարտավոր կալանքի տակ պահվող անձանց՝ դատարանին, դատախազին, քննիչին կամ հետաքննության մարմնին հասցեագրված բողոքները և այլ հայտարարությունները ստանալիս դրանք ուղարկել ըստ պատկանելիության. • 12 ժամվա ընթացքում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ 24 ժամվա ընթացքում • 12 ժամվա ընթացքում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ 48 ժամվա ընթացքում • անհապաղ, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում • **անհապաղ, բայց ոչ ուշ, քան 12 ժամվա ընթացքում**

154	Անձնական խուզարկությունը, առանց այդ մասին որոշում կայացնելու չի կարող կատարվել. • հանցագործության մեջ կասկածվողին բռնելիս և ոստիկանություն կամ այլ իրավապահ մարմին բերելիս • **մեղադրյալին հարցաքննելիս՝ նրա մոտ իրեղեն ապացույց հանդիսացող առարկա գտնվելու կասկածներ առաջանալու դեպքում** • հանցագործության մեջ կասկածվողին ձերբակալելիս և մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց կալանքը կիրառելիս • երբ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ այն շինությունում գտնվող անձը, որտեղ խուզարկություն է կատարվում, իր մոտ կարող է թաքցնել փաստաթղթեր կամ այլ առարկաներ, որոնք գործով կարող են ունենալ ապացուցողական նշանակություն
155	Անկախ միջնորդությունից՝ գործի նյութերը ծանոթացման համար քննիչը ներկայացնում է միայն. • տուժողին և մեղադրյալին • տուժողին, մեղադրյալին և քաղաքացիական պատասխանողին • քաղաքացիական պատասխանողին և նրա ներկայացուցչին • **մեղադրյալին և պաշտպանին**
156	Ո՞րն է գրավի նվազագույն չափը, որը կարող է նշանակվել ոչ մեծ ծանրության հանցագործության մեջ մեղադրվող անձի նկատմամբ. • **նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկը** • նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկը • նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկը • նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկը
157	Այլ լեզվով փաստաթղթերը քրեական գործին կցվում են. • դրանց հայերեն թարգմանությունների հետ՝ նոտարական կարգով վավերացված վիճակում • դատարանի կողմից թույլատրվելու դեպքում • դատախազի գրավոր համաձայնության առկայության դեպքում • **դրանց հայերեն թարգմանությունների հետ**
158	Հանցանք կատարելու մեջ կասկածվող անձին հետաքննության մարմնի, քննիչի կամ դատախազի մոտ բերելուց հետո քանի ժամվա ընթացքում է կազմվում կասկածյալին ձերբակալելու մասին արձանագրություն. • անհապաղ • **3 ժամվա ընթացքում** • անհապաղ, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում • 12 ժամվա ընթացքում

159	Հանցագործության մասին հաղորդում ստանալուց հետո ի՞նչ ժամկետում քննիչը կարող է ստուգել քրեական գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելը. • 3 օրվա ընթացքում • 7 օրվա ընթացքում • **10 օրվա ընթացքում** • մեկ ամսվա ընթացքում
160	Հանցագործության մասին տեղեկություն ստանալու դեպքում քննիչը ի՞նչ որոշում չի կարող կայացնել. • քրեական գործ հարուցելու մասին • քրեական գործ հարուցելը մերժելու մասին • **քրեական գործի հարուցումը հետաձգելու մասին** • հաղորդումն ըստ ենթակայության հանձնելու մասին
161	Նախաքննությունը տարվում է այն վայրում, որտեղ. • սկսվել է հանցանքը • **կատարվել է հանցանքը** • ավարտվել է հանցանքը • բնակվում է տուժողը
162	Քրեական գործի նյութերին մեղադրյալի և նրա պաշտպանի ծանոթանալու ժամկետը մտնու՞մ է գործի քննության ժամկետի մեջ. • **ոչ** • այո • միայն անազատության մեջ գտնվող մեղադրյալի ծանոթանալու ժամկետը • միայն մեղադրյալի ծանոթանալու ժամկետը
163	Քննիչն ի՞նչ ժամկետում պետք է կայացնի դատաավտոտեխնիկական փորձաքննություն նշանակելու մասին պաշտպանի միջնորդությունը մասնակիորեն մերժելու մասին որոշում. • 3 օրվա ընթացքում • **5 օրվա ընթացքում** • 7 օրվա ընթացքում • 10 օրվա ընթացքում
164	Ո՞ր դեպքում է առգրավման կատարման համար պահանջվում դատախազի թույլտվություն. • առգրավումը միշտ իրականացվում է դատախազի թույլտվությամբ • **երբ առգրավման ենթակա փաստաթղթերը պարունակում են պետական գաղտնիք** • երբ առգրավման ենթակա փաստաթղթերը պարունակում են բանկային գաղտնիք • երբ առգրավում կատարվում է բնակարանում

165	14 տարեկանը չլրացած անձը կարո՞ղ է նախաքննության ժամանակ հարցաքննվել որպես վկա. • այո, առանց վերապահման • ոչ • **այո, բայց պայմանով, որ նա կարող է հաղորդել գործի համար նշանակություն ունեցող տեղեկություններ** • այո, միայն առանձնապես ծանր հանցագործությունների վերաբերյալ գործերով
166	Ինչպիսի քննչական գործողություն պետք է կատարվի պարզելու համար ցուցմունքների միջև առկա էական հակասությունները. • տեղում ցուցմունքների ստուգում • կրկնակի հարցաքննություն • **առերեսում** • ճանաչման ներկայացնել
167	Քննիչը ե՞րբ է պարտավոր կատարել առերեսում մեղադրյալի և մեկ այլ անձի միջև. • երբ վերջինների ցուցմունքներում առկա են հակասություններ • **երբ վերջինների ցուցմունքներում առկա են էական հակասություններ** • քննիչը որևէ դեպքում պարտավոր չէ կատարել առերեսում մեղադրյալի և մեկ այլ անձի միջև, դա նրա իրավունքն է • երբ վերջինների ցուցմունքներում առկա են հակասություններ և նրանք որպես կասկածյալ առերես չեն հարցաքննվել
168	Ճանաչման ենթակա անձի հետ մեկտեղ առնվազն քանի՞ անձ պետք է ներկայացվի ճանաչման. • առնվազն երկու այլ անձ • **առնվազն երեք այլ անձ** • առնվազն չորս այլ անձ • առնվազն հինգ այլ անձ
169	Քննիչի կողմից փորձագետի եզրակացությունը ստանալուց հետո քանի՞ օրվա ընթացքում մեղադրյալն իրավունք ունի ծանոթանալ դրան. • յոթ օրվա ընթացքում • **տասը օրվա ընթացքում** • տասնհինգ օրվա ընթացքում • երեսուն օրվա ընթացքում
170	Քրեական դատավարությունում ո՞րը կրկնակի փորձաքննություն կատարելու հիմք չէ. • փորձագետի եզրակացությունը հիմնավորված չէ • փորձագետի եզրակացությունը կասկած է հարուցում • **փորձագետի եզրակացությունը բավարար չափով պարզ չէ** • խախտվել են փորձաքննության կատարման դատավարական կանոնները

171	Նախաքննության ավարտման պահից պաշտպանը իրավունք ունի՞ գործի բոլոր նյութերը պատճենահանել. • այո • այո, միայն այն նյութերը, որոնք չեն պարունակում պետական գաղտնիք • **այո, առանց սահմանափակման** • այո, միայն այն նյութերը, որոնց պատճենահանման վերաբերյալ նախապես ներկայացրել է միջնորդություն և այն բավարարվել է վարույթն իրականացնող մարմնի կողմից
172	Արդարացվածը ինչպիսի՞ հատուցում ստանալու իրավունք չունի. • վճարված դատական ծախսերի հատուցում • փաստաբանին վճարված գումարների հատուցում • **պատճառված բարոյական վնասի նյութական հատուցում** • հատուցում այն աշխատավարձի դիմաց, որից նա զրկվել է
173	Մեղադրական եզրակացություն կազմելուց առաջ գործի նյութերին ծանոթանալու ժամանակ պաշտպանն իրավունք ունի՞ վերադառնալ արդեն իսկ ծանոթացած հատորներին. • **այո** • ոչ • այո, եթե նախապես ներկայացնի միջնորդություն և վարույթն իրականացնող մարմինն այն բավարարի • այո, եթե չի ավարտվել ծանոթանալու համար օրենքով սահմանված ժամկետը
174	Ո՞ր մարմիններն են քրեական գործերով արդարադատություն իրականացնում. • **միայն առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարանները** • միայն առաջին ատյանի և վերաքննիչ դատարանները • միայն առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարանները և քննիչը • միայն առաջին ատյանի դատարանները
175	Գործի նյութերին ծանոթանալուց հետո ի՞նչ ժամկետում պաշտպանը իրավունք ունի ներկայացնել լրացուցիչ քննչական գործողություն կատարելու միջնորդություն. • երկօրյա ժամկետում • **մեկօրյա ժամկետում** • հնգօրյա ժամկետում • եռօրյա ժամկետում

176	Հայաստանի Հանրապետության քրեական վերաքննիչ դատարանում գործը դատական նիստում քննության նշանակելու մասին որոշումն ո՞վ է կայացնում. · **դատարանի կազմի նախագահող դատավորը** · տվյալ քրեական գործը քննող ամբողջ դատական կազմը · որոշում չի կայացվում, այդ հարցը լուծվում է գործը վերաքննիչ դատարանում ստացվելուց հետո՝ դատարանի գրասենյակի կողմից · ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի նախագահը
177	Մեղադրական եզրակացությամբ գործը ստանալուց հետո դատախազը քանի՞ օրվա ընթացքում է պարտավոր հաստատել մեղադրական եզրակացությունը կամ կայացնել այլ որոշում. · **5 օրվա ընթացքում** · 10 օրվա ընթացքում · 3 օրվա ընթացքում · 7 օրվա ընթացքում
178	Մեղադրական եզրակացությամբ գործը ստանալուց հետո դատախազը ի՞նչ որոշում չի կարող ընդունել. · կարճել քրեական գործի վարույթը կամ դադարեցնել քրեական հետապնդումը · **կասեցնել քրեական գործի վարույթը և նշանակել փորձաքննություն** · իր ցուցումներով գործը վերադարձնել քննիչին՝ լրացուցիչ քննություն կատարելու կամ մեղադրական եզրակացությունը վերակազմելու համար · իր որոշմամբ մեղադրանքի ձևակերպումից հանել առանձին կետեր, որակել հանցագործությունն այն օրենքի համապատասխան, որն, ի տարբերություն մեղադրական եզրակացությամբ կատարված որակումից, նախատեսում է նվազ ծանր պատասխանատվություն, և այդ փոփոխություններով հաստատել մեղադրական եզրակացությունը
179	Դատական նիստին կանչման ենթակա անձանց ցուցակի վերաբերյալ դատախազն ի՞նչ որոշում իրավունք ունի կայացնել մինչև գործը դատարան ուղարկելը. · միայն կրճատել դատական նիստին կանչման ենթակա անձանց ցուցակը · միայն լրացնել դատական նիստին կանչման ենթակա անձանց ցուցակը · դատախազն իրավունք չունի լրացնել դատական նիստին կանչման ենթակա անձանց ցուցակը · **կրճատել կամ լրացնել դատական նիստին կանչման ենթակա անձանց ցուցակը**
180	Մինչդատական վարույթում մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը կարո՞ղ է բողոքարկվել. · **այո, անկախ մեղսագրվող հանցագործության ծանրության աստիճանից** · ոչ · այո, միայն ոչ մեծ ծանրության, միջին ծանրության և ծանր հանցագործությունների գործերով

	• այո, միայն ոչ մեծ ծանրության, միջին ծանրության հանցագործությունների գործերով
181	Քրեական դատավարությունում որպես դատական սանկցիա դատարանի դահլիճից հեռացնելը թվարկածներից ու՞ մ նկատմամբ չի կարող կիրառվել. • **տվյալ պահին ցուցմունք տվող վկայի** • գործի քննությանը որպես կողմ մասնակցող փաստաբանի • հայցվորի • պատասխանողի
182	Մեղադրյալը քննիչի որոշմամբ պետք է ճանաչման ներկայացվի: Ո՞վ է որոշում ճանաչման ներկայացվող այլ անձանց միջև տվյալ մեղադրյալի տեղը. • մեղադրյալը՝ քննիչի համաձայնությամբ • **մեղադրյալն իր ընտրությամբ** • որոշվում է մեղադրյալի և ճանաչման ներկայացվող այլ անձանց փոխհամաձայնությամբ • մեղադրյալը, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով
183	Ո՞ր քրեական գործերն են անցնում դատական քննության նախապատրաստական փուլը. • ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների վերաբերյալ գործերը • միայն առանձնապես ծանր հանցագործությունների վերաբերյալ գործերը • միջին ծանրության, ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների վերաբերյալ գործերը • **բոլոր գործերը**
184	Ստորև նշված անձանցից ո՞վ չի կարող բերման ենթարկվել. • վկան • տուժողը • **քաղաքացիական պատասխանողը** • կասկածյալը
185	Դատարանն իրավունք ունի՞ դատաքննության ժամանակ դատական նիստի դահլիճից հեռացնել պաշտպանին. • այո, եթե պաշտպանը խախտում է դատական նիստի կարգը • այո, եթե պաշտպանը չի ենթարկվում դատարանի կարգադրություններին • այո, եթե պաշտպանը չի ենթարկվում դատարանի օրինական պահանջին • **ոչ**

186	Դատական նիստի արձանագրության համակարգչային արձանագրման կրիչի օրինակը՝ դրա համառոտագրման հետ, քրեական գործին մասնակցող անձանց գրավոր դիմումի հիման վրա տրամադրվում է. • դատական նիստի ավարտից հինգ օրվա ընթացքում • դատական նիստի ավարտից երեք օրվա ընթացքում • **դատական նիստի ավարտից անմիջապես հետո** • դատական նիստի ավարտից անմիջապես հետո, բայց ոչ ուշ, քան հաջորդ օրը
187	Ո՞ր քննչական գործողության կատարման համար որոշում չի կայացվում. • քննման • արտաշիրման • **առերեսման** • բնակարանի խուզարկության
188	Ի՞նչ դատավարական գործողությամբ է սկսվում դատաքննությունը. • ամբաստանյալի իրավունքների և պարտականությունների պարզաբանմամբ • ապացույցների հետազոտման կարգի որոշմամբ • ամբաստանյալի հարցաքննությամբ • **մեղադրողի կողմից մեղադրական եզրակացության եզրափակիչ մասի հրապարակմամբ**
189	Ի՞նչ ժամկետում է պարտավոր քրեական գործը քննել և որոշում կայացնել վերաքննիչ դատարանը. • **ողջամիտ ժամկետում** • դատական նիստ նշանակելու մասին որոշում կայացնելուց հետո՝ երեք ամսվա ընթացքում • վերաքննիչ դատարանի առաջին նիստից հետո՝ երեք ամսվա ընթացքում • այդպիսի ժամկետ օրենքով սահմանված չէ
190	Ովքե՞ր իրավունք ունեն բողոքարկել քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը. • **հանցագործության մասին հաղորդած ֆիզիկական կամ իրավաբանական անձը** • դատավարության բոլոր մասնակիցները • տուժողը, նրա ներկայացուցիչը, օրինական ներկայացուցիչը, տուժողի իրավահաջորդը, կասկածյալը, մեղադրյալը և նրա պաշտպանը • տուժողը, նրա օրինական ներկայացուցիչը, տուժողի իրավահաջորդը կամ նրանց ներկայացուցիչը

191	Քրեական դատավարությունում վճռաբեկ դատարանը իրավունք ունի՞ դուրս գալ վճռաբեկ բողոքի սահմաններից. • **ոչ** • այո, վճռաբեկ դատարանը կաշկանդված չէ վճռաբեկ բողոքով և կարող է գործը քննել լրիվ ծավալով • այո, վճռաբեկ դատարանը կաշկանդված չէ վճռաբեկ բողոքով, և իր նախաձեռնությամբ ձեռք բերած ապացույցներով և կարող է գործը քննել լրիվ ծավալով • վճռաբեկ դատարանը քննում է գործը վճռաբեկ բողոքում նշված հիմքերի և իր նախաձեռնությամբ ձեռք բերված ապացույցների սահմաններում
192	Պատժի կատարումն իրականացնող մարմինն ի՞նչ դատավարական փաստաթուղթ է ներկայացնում դատարան դատապարտյալին պատժից պայմանական վաղակետ ազատելու և պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժով փոխարինելու համար. • դիմում • միջնորդություն • բողոք • **միջնորդագիր**
193	Թվարկվածներից ովքե՞ր իրավունք ունեն վճռաբեկ դատարան բողոքարկելու քրեական վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության լուծող և գործն ըստ էության չլուծող դատական ակտերը. • **գլխավոր դատախազը և նրա տեղակալները՝ օրենքով նախատեսված դեպքերում** • գլխավոր դատախազը, նրա տեղակալները և վերաքննիչ դատարանում գործին մասնակցող մեղադրողը • գլխավոր դատախազը, նրա տեղակալները և հավատարմագրված փաստաբանները • միայն գլխավոր դատախազը և հավատարմագրված փաստաբանները
194	Քրեական դատավարությունում առարկան իրեղեն ապացույց է ճանաչվում. • **քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ** • միայն դատարանի որոշմամբ • միայն դատախազի որոշմամբ • միայն հետաքննության մարմնի կամ քննիչի որոշմամբ
195	Վճռաբեկ դատարանի քրեական պալատի որոշումը կարո՞ղ է բողոքարկվել, թե ոչ. • այո, ՀՀ սահմանադրական դատարան • այո, Մարդու իրավունքների եվրոպական դատարան • **ոչ** • այո, ՀՀ վճռաբեկ դատարան

196	Եթե վկան հայտարարում է, որ մեղադրյալի մարմնի վրա կան հետվիրահատական հետքեր, ապա դա հիմք է հանդիսանում. • մեղադրյալին ճանաչման ներկայացնելու • մեղադրյալին զննելու • **մեղադրյալին քննելու** • մեղադրյալին դատաբժշկական փորձաքննության ենթարկելու
197	Այն դեպքում, երբ գործի համար նշանակություն ունեցող որևէ հարցի պարզումը հնարավոր է միայն տարբեր բնագավառներում հատուկ գիտելիքների կամ հետազոտության տարբեր մեթոդիկաների միաժամանակյա կիրառում, ապա նշանակվում է. • հանձնաժողովային փորձաքննություն • **համալիր փորձաքննություն** • խառը փորձաքննություն • լրացուցիչ փորձաքննություն
198	Ո՞ր դեպքում է թույլատրվում կիրառել անչափահաս մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց. • **նրան վերագրվում է միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցանքների կատարում** • նրան վերագրվում է առանձնապես ծանր հանցանքների կատարում և նա նախկինում եղել է դատապարտված • նրան վերագրվում է միայն ծանր կամ առանձնապես ծանր հանցանքների կատարում • նրան վերագրվում է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների կատարումը և նա նախկինում եղել է դատապարտված
199	Բժշկական բնույթի հարկադրական միջոցներ դատարանը կիրառում է այն անձանց նկատմամբ. • **ովքեր քրեական օրենքով չթույլատրված արարքը կատարել են անմեղսունակ վիճակում, եթե այդ անձինք շարունակում են վտանգավոր լինել հասարակության համար** • ովքեր քրեական օրենքով չթույլատրված արարքը կատարել են անմեղսունակ վիճակում • ովքեր քրեական օրենքով արգելված արարքը կատարել են հոգեկան խիստ հուզմունքի վիճակում • ովքեր քրեական օրենքով չթույլատրված ծանր կամ առանձնապես ծանր արարքը կատարել են անմեղսունակ վիճակում, եթե այդ անձինք շարունակում են վտանգավոր լինել հասարակության համար

200	Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով քրեական գործերով մինչդատական վարույթում գտնվող գործերով դատավարական գործողությունները կատարելու վերաբերյալ հարցումները կատարելու առնչությամբ հաղորդակցությունն իրականացվում է. • Հայաստանի Հանրապետության քննչական վարչության միջոցով • Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի միջոցով • Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջոցով • **Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության միջոցով**
201	Դատական քննությանը ամբաստանյալի մասնակցությունը. • **պարտադիր է** • պարտադիր է, եթե դա անհրաժեշտ է համարում դատարանը • պարտադիր է, եթե դա պահանջում է պաշտպանության կողմը • պարտադիր չէ և որոշվում է դատախազի հայեցողությամբ
202	Քրեական դատավարությունում դատական սանկցիա կիրառելու մասին որոշումը ո՞ր պահից է մտնում ուժի մեջ. • **հրապարակման պահից ուժի մեջ է** • հրապարակման պահից 7 օրից հետո • հրապարակման հաջորդ օրվանից • հրապարակման պահից 10 օրից հետո
203	Արագացված դատական քննությունը կարող է կիրառվել այն հանցագործություններով, որոնց համար ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված պատիժը չի գերազանցում. • 5 տարին • 8 տարին • **10 տարին** • օրենքը նման սահմանափակում չունի
204	Ստորև նշվածներից ո՞ր լիազորությամբ մեղադրողն օժտված չէ գործը դատարանում քննելու ժամանակ. • ապացույցներ ներկայացնելու • ապացույցները դատարան ներկայացնելն ապահովելու մասին հետաքննության մարմնին հանձնարարություններ տալու • **քրեական գործի վարույթը կարճելու** • հրաժարվելու մեղադրյալի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց
205	Իրավաբանական անձը կարո՞ղ է արդյոք տուժող ճանաչվել. • **այո** • ոչ • այո, միայն քննիչի համաձայնությամբ • այո, միայն դատախազի համաձայնությամբ

206	Ստորև նշվածներից ո՞ր դեպքում անձը չի համարվում կասկածյալ. • անձի նկատմամբ մինչև մեղադրանք առաջադրելը որպես խափանման միջոց կիրառվել է չհեռանալու մասին ստորագրությունը • անձը ձերբակալվել է հանցանք կատարելու մեջ կասկածվելու պատճառով • անձի նկատմամբ մինչև մեղադրանք առաջադրելը որպես խափանման միջոց կիրառվել է անձնական երաշխավորությունը • **անձի նկատմամբ քրեական գործ է հարուցվել**
207	Որո՞նք են արդարացման հիմքերը. • հանցադեպի և հանցակազմի բացակայությունը • հանցադեպի և հանցակազմի բացակայությունը, ինչպես նաև կատարված հանցագործությանը մեղադրյալի մասնակցությունն ապացուցված չլինելը, եթե սպառված են նոր ապացույցներ ձեռք բերելու բոլոր հնարավորությունները • **հանցակազմի և հանցադեպի բացակայությունը, վնաս պատճառած արարքի քրեական օրենքով իրավաչափ համարվելը, ինչպես նաև կատարված հանցագործությանը մեղադրյալի մասնակցությունն ապացուցված չլինելը, եթե սպառված են նոր ապացույցներ ձեռք բերելու բոլոր հնարավորությունները** • հանցակազմի և հանցադեպի բացակայությունը, վաղեմության ժամկետն անցնելը, վնաս պատճառած արարքի՝ քրեական օրենքով օրինաչափ համարվելը, ինչպես նաև կատարված հանցագործությանը մեղադրյալի մասնակցությունն ապացուցված չլինելը, եթե սպառված են նոր ապացույցներ ձեռք բերելու բոլոր հնարավորությունները
208	Քրեական դատավարությունում ի՞նչ ժամկետում է վճռաբեկ դատարանը կայացնում որոշում վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին. • **գործը վճռաբեկ դատարանում ստանալու պահից մեկ ամսվա ընթացքում** • բողոքը վճռաբեկ դատարանում ստանալու պահից 10 օրվա ընթացքում • գործը վճռաբեկ դատարանում ստանալու պահից 15 օրվա ընթացքում • ողջամիտ ժամկետում
209	Քրեական դատավարությունում ի՞նչ ժամկետում է վճռաբեկ դատարանը գործը քննում դատական նիստում. • գործը վճռաբեկ դատարանում ստանալու պահից 30 օրվա ընթացքում • բողոքը վճռաբեկ դատարանում ստանալու պահից 10 օրվա ընթացքում • գործը վճռաբեկ դատարանում ստանալու պահից 15 օրվա ընթացքում • **ողջամիտ ժամկետում**

210	Քրեական դատավարությունում ի՞նչ ժամկետում է վճռաբեկ դատարանը ուղարկում իր վերջնական որոշումը բողոք բերած անձին. • որոշումը հրապարակելու պահից 5 օրվա ընթացքում • որոշումը հրապարակելու պահից 3 օրվա ընթացքում • որոշումը հրապարակելու պահից անհապաղ • **ողջամիտ ժամկետում**
211	Ո՞վ է ուղարկում դատավարության մասնակիցներին քրեական վերաքննիչ դատարանի կողմից կայացրած դատավճռի դեմ բերված վճռաբեկ բողոքի պատճենը. • **բողոք բերած անձը** • բողոքարկվող դատավճիռը կայացրած դատարանի գրասենյակը • քրեական վերաքննիչ դատարանը • վճռաբեկ դատարանի քրեական պալատը
212	Կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմը անձին կալանքի տակ պահելու ժամկետը լրանալուց քանի՞ օր առաջ պարտավոր է այդ մասին տեղյակ պահել համապատասխան քրեական հետապնդման մարմնին. • **7 օր առաջ** • 5 օր առաջ • 3 օր առաջ • կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմը նման պարտավորություն չունի
213	Վկան իրավունք ունի՞ քրեական վարույթ իրականացնող մարմին ներկայանալ փաստաբանի հետ. • ոչ, նման իրավունք վկան չունի • **այո** • այո, միայն այն գործերով, որոնք հարուցվել են տվյալ վկայի դեմ • այո, միայն մասնավոր մեղադրանքի գործերով
214	Դատական քննությունը ամբաստանյալի բացակայությամբ հնարավոր է, եթե. • ամբաստանյալը չի ներկայացել առանց հարգելի պատճառների • ամբաստանյալը չի ներկայացել հարգելի պատճառներով • ամբաստանյալի փոխարեն ներկայացել է նրա օրինական ներկայացուցիչը • **ամբաստանյալը հեռացվել է դատական նիստի դահլիճից**
215	Քննիչը քրեական գործ հարուցելու մասին որոշման պատճենը ի՞նչ ժամանակահատվածում է ուղարկում համապատասխան դատախազին. • անհապաղ • 12 ժամվա ընթացքում • **24 ժամվա ընթացքում** • քննիչը քրեական գործ հարուցելու մասին որոշումը դատախազին չի ուղարկում

216	Տուժողի պարտականություն չի հանդիսանում. • տալ ճշմարտացի ցուցմունքներ • տալ նմուշներ համեմատական հետազոտման համար • ենթարկվել քննման • **առանց վարույթն իրականացնող մարմնի թույլտվության չփոխել բնակության վայրը**
217	Թվարկվածներից որը դատական սանկցիայի տեսակ չէ. • **նկատողություն** • դատական տուգանք • նիստերի դահլիճից հեռացնելը • պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով համապատասխանաբար գլխավոր դատախազին կամ փաստաբանական պալատ դիմելը
218	Ճանաչվու՞մ է արդյոք տուժող այն անձը, ում կարող էր անմիջականորեն պատճառվել բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս, եթե ավարտվեր քրեական օրենքով չթույլատրված արարքի կատարելը. • ոչ, չի ճանաչվում • չի ճանաչվում, եթե այդ մասին անձը միջնորդություն չի ներկայացնում • **այո, ճանաչվում է** • ճանաչվում է, եթե նրան արդեն իսկ պատճառվել է բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս
219	Իրավունք ունի՞ արդյոք տուժողը մասնակցել վերաքննիչ դատարանի նիստերին. • տուժողը պարտավոր է մասնակցել վերաքննիչ դատարանի նիստերին • **այո, իրավունք ունի** • տուժողն իրավունք ունի մասնակցել վերաքննիչ դատարանի նիստերին միայն այն դեպքում, երբ ինքն է ներկայացրել վերաքննիչ բողոքը • ոչ, իրավունք չունի
220	Քրեական դատավարությունում ճանաչվու՞մ է արդյոք իրավաբանական անձը քաղաքացիական պատասխանող. • **այո, քաղաքացիական պատասխանող է ճանաչվում իրավաբանական անձը, որի վրա օրենքով, քրեական գործի վարույթի ընթացքում ներկայացված հայցի հիման վրա կարող է դրվել գույքային պատասխանատվություն քրեական օրենքով չթույլատրված արարքով գույքային վնաս պատճառած մեղադրյալի գործողությունների համար** • ոչ, քաղաքացիական պատասխանող կարող է ճանաչվել միայն ֆիզիկական անձը • ոչ, քաղաքացիական պատասխանող կարող է ճանաչվել միայն իրավաբանական անձի ներկայացուցիչը • ոչ, քաղաքացիական պատասխանող կարող է ճանաչվել միայն ֆիզիկական անձ հանդիսացող մեղադրյալը

221	Իրավունք ունի՞ արդյոք տուժողի ներկայացուցիչը նախաքննության ավարտման պահից ծանոթանալ գործի բոլոր նյութերին. • ոչ, նման իրավունք ունի միայն տուժողը • **այո, իրավունք ունի** • ոչ, տուժողի ներկայացուցիչը նախաքննության ավարտման պահից իրավունք ունի ծանոթանալ միայն տուժողի մասնակցությամբ կատարված գործողությունների արձանագրություններին • այո, իրավունք ունի, միայն քրեական վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ
222	Քրեական դատավարությունում իրավունք ունի՞ արդյոք դատական նիստի քարտուղարը լինել թարգմանիչ. • այո, եթե ազատորեն տիրապետում է քրեական դատավարության լեզվին և այն լեզվին, որից կատարվում է թարգմանությունը • այո, եթե ազատորեն տիրապետում է քրեական դատավարության լեզվին և այն լեզվին, որից կատարվում է թարգմանությունը, ինչպես նաև շահագրգռված չէ քրեական գործով • **ոչ, իրավունք չունի** • այո, եթե դրա դեմ չեն առարկում դատավարության մասնակիցները
223	Կարո՞ղ է արդյոք քրեական գործով վարույթին մասնակցել քրեական գործով վարույթն իրականացնող մարմնից անձնական կամ ծառայողական կախվածության մեջ գտնվող ընթերական. • այո, կարող է, եթե շահագրգռված չէ քրեական գործով • այո, կարող է, եթե հանդիսանում է ՀՀ քաղաքացի • այո, կարող է, եթե դատավարության մասնակիցները չեն առարկում • **ոչ, չի կարող**
224	Առաջին ատյանի դատարանի՝ կալանավորման, կալանքի ժամկետի երկարաձգման, բժշկական հաստատությունում անձանց տեղավորման մասին որոշումների դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել. • հրապարակման պահից՝ տասնօրյա ժամկետում • **հրապարակման պահից՝ հնգօրյա ժամկետում** • հրապարակման պահից՝ մեկամսյա ժամկետում • հրապարակման պահից՝ անմիջապես հետո
225	Կարելի՞ է արդյոք քրեական դատավարությունում անձին հարկադրել մասնակցելու իր արժանապատվությունը նվաստացնող դատավարական գործողությունների. • կարելի է, եթե դա անհրաժեշտ է քրեական գործով բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ նախաքննություն կատարելու համար • կարելի է, եթե այդպիսին է տվյալ դատավարական գործողության անցկացման, օրենքով սահմանված կարգը

	• կարելի է, եթե դա բխում է արդարադատության շահերից • **ոչ, չի կարելի**
226	Պարտադի՞ր է արդյոք կողմերի մասնակցությունը դատարանում քրեական գործի քննությանը. • պարտադիր է միայն մեղադրանքի կողմի մասնակցությունը • պարտադիր է միայն պաշտպանության կողմի մասնակցությունը • **այո, կողմերի մասնակցությունը պարտադիր է** • պարտադիր է, եթե կողմը այդ մասին միջնորդել է դատարանին
227	Ո՞ր տարածքում է համարվում կատարված տևող հանցագործությունը. • **այն տարածքում, որտեղ հանցագործությունը ավարտվել է** • այն տարածքում, որտեղ հանցագործությունը սկսվել է • մեղադրյալի բնակության վայրի տարածքում • տուժողի բնակության վայրի տարածքում
228	Ո՞ր տարածքում է համարվում կատարված շարունակվող հանցագործությունը. • այն տարածքում, որտեղ կատարվել է քրեական օրենքով չթույլատրված առաջին արարքը • **այն տարածքում, որտեղ կատարվել է քրեական օրենքով չթույլատրված վերջին արարքը** • մեղադրյալի բնակության վայրի տարածքում • տուժողի բնակության վայրի տարածքում
229	Իրավունք ունի՞ արդյոք քաղաքացիական պատասխանողը բողոքարկել հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատարանի գործողությունները և որոշումները. • **իրավունք ունի բողոքարկել միայն իրեն ներկայացված հայցի մասով** • իրավունք ունի բողոքարկել ցանկացած մասով • ոչ, չունի բողոքարկելու իրավունք • իրավունք ունի բողոքարկել միայն քննիչի գործողությունները և որոշումները
230	Ներգրավվու՞մ է արդյոք քրեական գործով վարույթում իրավաբանական հարցերով մասնագետ. • այո, ներգրավվում է վարույթն իրականացնող մարմնի պատճառաբանված որոշմամբ • այո, անհրաժեշտության դեպքում ներգրավվում է գիտական աստիճան ունեցող անձ

	• այո, ներգրավվում է Արդարադատության խորհրդի կազմից • **ոչ, չի ներգրավվում**
231	Քրեական դատավարությունում ո՞վ է լուծում առաջին ատյանի դատարանների միջև ընդդատության մասին վեճերը. • Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը • Հայաստանի Հանրապետության քրեական վերաքննիչ դատարանի նախագահը • Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահը • **Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի նախագահը**
232	Ստորև թվարկվածներից ո՞րը պաշտպանի պարտականությունը չէ. • **կողմի վերաքննիչ բողոքը ստանալու պահից 15 օրվա ընթացքում ներկայացնել Հայաստանի Հանրապետության քրեական վերաքննիչ դատարան գրավոր առարկությունները** • ենթարկվել դատախազի օրինական կարգադրություններին • մինչև ընդմիջում հայտնելը, առանց նախագահողի թույլտվության, չլքել դատական նիստերի դահլիճը • կասկածյալին կամ մեղադրյալին իրավաբանական օգնություն ցույց տալու համար ներկայանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով
233	Քրեական դատավարությունում տրված վերաքննիչ բողոքի մասին օրենսգրքի համապատասխան նորմում նշված անձանց ծանուցում է. • բողոք բերող անձը՝ ուղարկելով վերաքննիչ բողոքի օրինակը դատավարության բոլոր մասնակիցներին (բացառությամբ քննիչին և հետաքննության մարմնին) • Հայաստանի Հանրապետության քրեական վերաքննիչ դատարանը՝ մինչև դատական նիստի սկսելը, բայց ոչ պակաս, քան տասը օր առաջ • Հայաստանի Հանրապետության քրեական վերաքննիչ դատարանը՝ մինչև դատական նիստի սկսելը, բայց ոչ պակաս, քան յոթ օր առաջ • **բողոքարկվող դատական ակտը կայացրած դատարանը**
234	Քրեական դատավարությունում հարգելի պատճառներով բողոքարկման համար սահմանված ժամկետը բաց թողնելու դեպքում բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձինք կարո՞ղ են միջնորդել վերականգնելու բաց թողնված ժամկետը. • այո, միայն Հայաստանի Հանրապետության քրեական վերաքննիչ դատարան • այո, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարան • **այո, դատական ակտ կայացրած դատարան** • այո, Հայաստանի Հանրապետության քրեական վերաքննիչ դատարանի նախագահին

235	Քրեական դատավարությունում օրինական ուժի մեջ չմտած դատական ակտի բողոքարկումը կասեցնու՞մ է դրա օրինական ուժի մեջ մտնելը, թե ոչ. · **բողոքարկումը կասեցնում է դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը** · բողոքարկումը չի կասեցնում դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը · վերաքննիչ դատարանը բողոքն ընդունելուց հետո կարող է կասեցնել դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը · բողոքարկումը կասեցնում է դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը միայն քաղաքացիական հայցի մասով
236	Քանի՞ օրվա ընթացքում քրեական վարույթն իրականացնող մարմինը պետք է քննության առնի տուժող ճանաչելու մասին անձի պահանջը. · պահանջը ստանալու պահից 5 օրվա ընթացքում · պահանջը ստանալու պահից 7 օրվա ընթացքում · **պահանջը ստանալու պահից 3 օրվա ընթացքում** · պահանջը ստանալու պահից 10 օրվա ընթացքում
237	Մեղադրանքի կողմի թույլ տված քրեադատավարական օրենքի պահանջների խախտման հետևանքով ապացուցողական նշանակությունը կորցնելու ենթակա նյութը ո՞ր դեպքում կարող է թույլատրվել որպես ապացույց. · դատարանի որոշմամբ · **պաշտպանական կողմի միջնորդությամբ** · մեղադրանքի կողմի միջնորդությամբ · դատախազի պատճառաբանված որոշմամբ
238	Դատապարտյալի ցուցմունքները. · քրեական գործի քննության ընթացքում գրավոր կամ բանավոր ձևով նրա հաղորդած տվյալներն են · մինչդատական վարույթում գրավոր կամ բանավոր ձևով նրա հաղորդած տվյալներն են · դատարանում գրավոր կամ բանավոր ձևով նրա հաղորդած տվյալներն են · **մինչդատական վարույթում, ինչպես նաև դատարանում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով, հարցաքննության ժամանակ գրավոր կամ բանավոր ձևով նրա հաղորդած տվյալներն են**
239	Քրեական դատավարությունում փորձագետի հարցաքննության արձանագրությունը կարո՞ղ է արդյոք փոխարինել փորձագետի եզրակացությանը. · **չի կարող** · կարող է պաշտպանական կողմի միջնորդությամբ · կարող է մեղադրանքի կողմի միջնորդությամբ · կարող է դատարանի պատճառաբանված որոշմամբ

240	Քննչական գործողության արձանագրության ոչ լրիվությունը կարո՞ղ է արդյոք մեղադրանքի նպատակներով լրացվել ընթերակայի և այլ անձանց ցուցմունքներով. • կարող է լրացվել դատարանի պատճառաբանված որոշմամբ • կարող է լրացվել պաշտպանական կողմի համաձայնությամբ • կարող է լրացվել մեղադրանքի կողմի միջնորդությամբ. • **չի կարող լրացվել**
241	Ո՞ր դեպքում է կասկածյալին ազատում ձերբակալվածներին պահելու վայրի վարչակազմի ղեկավարը. • չի հաստատվել անձի կողմից քրեական օրենքով չթույլատրված արարք կատարելու մասին կասկածը • բացակայում է անձին արգելանքի տակ պահելու անհրաժեշտությունը • լրացել է ձերբակալման՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված առավելագույն ժամկետը, և դատարանը մեղադրյալին կալանավորելու մասին որոշում է կայացրել • **լրացել է ձերբակալման՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված առավելագույն ժամկետը, և դատարանը մեղադրյալին կալանավորելու մասին որոշում չի կայացրել**
242	Ո՞ր դեպքում անձին կալանքից ազատելու որոշում չի կարող ընդունել կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի ղեկավարը. • **եթե կարճվել է համապատասխան քրեական գործի վարույթը, կամ նրա նկատմամբ դադարեցվել է քրեական հետապնդումը** • եթե լրացել և չի երկարացվել կալանավորման մասին որոշում կայացնելիս կալանքի տակ պահելու՝ դատարանի կողմից սահմանված ժամկետը • եթե լրացել է անձին կալանքի տակ պահելու քրեական դատավարության օրենսգրքով սահմանված առավելագույն ժամկետը • մուծված է անձին կալանքից ազատելու համար դատարանի կողմից նշանակված գրավը
243	Որպես խափանման միջոց կազմակերպության երաշխավորության դեպքում իրավաբանական անձը պարտավո՞ր է արդյոք մուծել դրամական գումար. • ոչ, պարտավոր չէ • պարտավոր է մուծել դրամական գումար՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով • իրավաբանական անձը կարող է մուծել դրամական գումար միայն իր ցանկության դեպքում • **պարտավոր է մուծել դրամական գումար՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով**

244	Ո՞ր հանգամանքը պարտադիր չէ պաշտոնավարության ժամանակավոր դադարեցումը որպես դատավարական հարկադրանք կիրառելու համար. • **անձը հանրային ծառայության համակարգում զբաղեցնում է բարձրագույն պաշտոն** • բավարար հիմքեր կան ենթադրելու, որ անձը պաշտոնում մնալով կխոչընդոտի մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը • բավարար հիմքեր կան ենթադրելու, որ անձը պաշտոնում մնալով կխոչընդոտի հանցագործությամբ պատճառված վնասի հատուցմանը • բավարար հիմքեր կան ենթադրելու, որ անձը պաշտոնում մնալով կզբաղվի հանցավոր գործունեությամբ
245	Քրեական դատավարությունում ո՞ր դեպքում չի բացառվում քաղաքացիական հայցի հարուցումը. • կա նույն քաղաքացիական հայցով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած որոշում • կա հայցից քաղաքացիական հայցվորի հրաժարումն ընդունելու կամ հաշտության համաձայնությունը հաստատելու մասին դատարանի որոշում • **քրեական դատավարությունում հարուցված քաղաքացիական հայցը դատարանի կողմից թողնվել է առանց քննության** • կա դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի առկայություն, որով հայցը մերժվել կամ լրիվ կամ մասնակի բավարարվել է
246	Քրեական դատավարությունում ո՞ր դեպքում է դատախազի կողմից քաղաքացիական հայց հարուցվում և պաշտպանվում. • երբ քաղաքացիական հայցի չափը գերազանցում է նվազագույն աշխատավարձի 10 հազարապատիկը • **երբ խախտվել են պետության գույքային շահերը** • երբ հանցագործությունն ուղղված է եղել կառավարման կարգի դեմ • երբ քաղաքացիական հայցի չափը գերազանցում է նվազագույն աշխատավարձի 5 հազարապատիկը
247	Ո՞ր դեպքում քրեական վարույթն իրականացնող մարմինը կարող է հրաժարվել հայցադիմումն ընդունելուց. • երբ հայցի չափը չի գերազանցում նվազագույն աշխատավարձի հինգապատիկը • **երբ հայցադիմումը չի համապատասխանում քրեական դատավարության օրենսգրքի պահանջներին** • երբ հայցի չափը չի գերազանցում նվազագույն աշխատավարձի հիսնապատիկը • երբ քրեական օրենսգրքով չթույլատրված արարքը, որով պատճառվել է գույքային վնաս, դասվում է թեթև հանցագործությունների շարքին

248	Քրեական դատավարությունում քաղաքացիական հայցը լուծվում է. • հետաքննության մարմնի պատճառաբանված որոշմամբ • քննիչի պատճառաբանված որոշմամբ • **դատավճռով** • դատախազի համաձայնությամբ՝ քննիչի պատճառաբանված որոշմամբ
249	Թույլատրվու՞մ է արդյոք քննչական գործողությունների իրականացումը գիշերային ժամերին. • ոչ, ընդհանրապես չի թույլատրվում • **թույլատրվում է միայն անհետաձգելի դեպքերում** • թույլատրվում է միայն մինչև ժամը 24.00-ը • թույլատրվում է միայն համապատասխան քննչական գործողությանը մասնակից անձանց համաձայնությամբ
250	Իրավունք ունի՞ արդյոք քաղաքացիական պատասխանողը ծանոթանալ առաջադրված մեղադրանքին. • ոչ, իրավունք չունի • իրավունք ունի միայն նախաքննության ավարտման պահից • **այո, իրավունք ունի** • իրավունք ունի միայն դատաքննության ընթացքում
251	Իրավունք ունի՞ արդյոք քաղաքացիական հայցվորի ներկայացուցիչը բողոքարկել հետաքննության մարմնի և դատախազի գործողությունները. • իրավունք ունի բողոքարկել միայն իր ներկայացրած հայցի մասով • **այո, իրավունք ունի** • ոչ, չունի բողոքարկելու իրավունք • իրավունք ունի բողոքարկել միայն դատախազի գործողությունները
252	Թվարկածներից ո՞ր դեպքում է հետաքննության մարմնի աշխատակիցը կարող լրացուցիչ փորձաքննություն նշանակել. • երբ փորձագետի եզրակացությունը հիմնավորված չէ • **երբ նա համաձայն չէ փորձագետի եզրակացության հետ՝ վերջինիս ոչ բավարար չափով պարզ լինելու պատճառով** • երբ փորձագետի եզրակացությունը կասկած է հարուցում • երբ ապացույցները, որոնց վրա հիմնված է եզրակացությունը, ճանաչվել է ոչ հավաստի կամ խախտվել են փորձաքննության կատարման դատավարական կանոնները
253	Թվարկածներից ո՞րը չի հանդիսանում քրեական գործն ըստ էության լուծող դատական ակտ. • առաջին ատյանի դատարանի դատավճիռը • քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը

	• բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին որոշումը • **գործը լրացուցիչ քննության վերադարձնելու մասին որոշումը**
254	Իրավունք ունի՞ մեղադրողը բողոքարկելու գործն ըստ էության լուծող առաջին ատյանի դատարանների դատական ակտերը քաղաքացիական հայցի մասով. • իրավունք չունի բողոքարկելու • **իրավունք ունի բողոքարկելու միայն, երբ քաղաքացիական հայցը շոշափում է պետության գույքային շահերը** • իրավունք ունի բողոքարկելու միայն վերադաս դատախազի ցուցումով • իրավունք ունի բողոքարկելու միայն գլխավոր դատախազի կամ նրա տեղակալների ցուցումով
255	Դատավարական ի՞նչ փաստաթղթի հիման վրա է քննիչը ստանում փորձաքննության համար անհրաժեշտ նմուշներ. • **որոշման** • կարգադրության • գրության • հանձնարարության
256	Նմուշներ ստանալու մասին քննիչի կազմած դատավարական փաստաթղթում թվարկածներից ո՞րը պարտադիր չէ նշել. • նմուշներ ստացող անձը ով պետք է լինի • ինչ չափով և կոնկրետ ինչ նմուշներ պետք է ստացվեն • **ինչպես պետք է փաթեթավորվեն և կնիքվեն ստացված նմուշները** • որտեղ և ում պետք է ներկայացվեն նմուշները
257	Դատարանն իրավունք ունի՞ դատաքննության ժամանակ դատական տուգանք կիրառել գործի քննությանը որպես կողմի ներկայացուցիչ կամ պաշտպան մասնակցող փաստաբանի նկատմամբ. • այո, եթե պաշտպանը խախտում է դատական նիստի կարգը • այո, եթե պաշտպանը չի ենթարկվում դատարանի կարգադրություններին • **ոչ** • այո, եթե պաշտպանը չի ենթարկվում դատարանի օրինական պահանջին
258	Քրեական դատավարությունում ո՞ր պահին գործող օրենքին համապատասխան է որոշվում ապացույցների թույլատրելիությունը. • դատարանում ապացույցների հետազոտման պահին գործող օրենքին համապատասխան • ապացույցների գնահատման պահին գործող օրենքին համապատասխան • **ապացույցների ստացման պահին գործող օրենքին համապատասխան** • քրեական գործի վերջնական ընթացքը լուծող որոշման կամ դատավճռի կայացման պահին գործող օրենքին համապատասխան

259	Ո՞վ է լուծում ընթերակային հայտնված բացարկի հարցը. • քննչական գործողություն կատարող անձի վերադաս պաշտոնյան • հետաքննության կամ նախաքննության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազը • դատարանը • **քննչական գործողություն կատարող անձը**
260	Մեղադրյալի ցուցմունքները. • **մինչդատական վարույթում, ինչպես նաև դատարանում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով կատարված հարցաքննության ժամանակ գրավոր կամ բանավոր ձևով նրա հաղորդած տվյալներն են** • միայն մինչդատական վարույթում գրավոր կամ բանավոր ձևով նրա հաղորդած տվյալներն են • միայն դատարանում գրավոր կամ բանավոր ձևով նրա հաղորդած տվյալներն են • հետաքննության ընթացքում գրավոր կամ բանավոր ձևով նրա հաղորդած տվյալներն են
261	Որպես խափանման միջոց անձնական երաշխավորության դեպքում անձը պարտավո՞ր է արդյոք մուծել դրամական գումար. • ոչ, պարտավոր չէ • **պարտավոր է մուծել դրամական գումար՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով** • անձը կարող է մուծել դրամական գումար միայն իր ցանկության դեպքում • պարտավոր է մուծել դրամական գումար՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով
262	Եթե դատապարտյալն անվճարունակ է, իրավունք ունի՞ դատարանը նրան լրիվ ազատել որպես պետության եկամուտ գանձվելիք դատական ծախսերը վճարելուց. • **այո** • ոչ • այո, միայն մեղադրանքի կողմի համաձայնությամբ • այո, միայն ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների վերաբերյալ գործերով
263	Քրեական դատավարությունում թվարկածներից ու՞մ չի ուղարկվում վերաքննիչ դատարանի դատական ակտը. • արդարացվածի օրինական ներկայացուցիչներին • **քաղաքացիական պատասխանողի ներկայացուցչին, եթե նա չի մասնակցել քրեական գործի քննությանը** • դատապարտյալի օրինական ներկայացուցչին • տուժողի ներկայացուցչին

264	Թվարկածներից ո՞ր դեպքում դատական նիստի քարտուղարը կարող է մասնակցել դատական նիստի վարույթին. • եթե նա կանխակալ վերաբերմունք ունի որպես կողմ հանդես եկող անձի նկատմամբ • եթե որպես մասնավոր անձ ականատես է եղել այն փաստերին, որոնք վիճարկվում են դատաքննության ընթացքում • **եթե որպես դատական նիստի քարտուղար մասնակցել է նախորդ դատական նիստերին** • եթե հայտնաբերվում է նրա անձեռնհասությունը
265	Քրեական դատավարությանը մասնակցող անձանց պահանջներն ե՞րբ պետք է քննության առնվեն և լուծվեն. • **դրանք հայտարարելուց անմիջապես հետո, եթե քրեական դատավարության օրենսգրքով այլ կարգ սահմանված չէ** • մինչև դատաքննությունն ավարտվելը • պահանջի վերաբերյալ որոշում ընդունելու համար էական հանգամանքների պարզումից հետո • դատավճիռ կայացնելու հետ միաժամանակ
266	Ո՞վ է կրում մեղադրյալի մեղքի և պատասխանատվությունը խստացնող հանգամանքների առկայության ապացուցման պարտականությունը. • **քրեական հետապնդման մարմինները** • քրեական վարույթ իրականացնող մարմինները • քննիչը և դատախազը • քննիչը, դատախազը և դատարանը
267	Ու՞մ կողմից կարող է քրեական գործով մինչդատական վարույթում փոփոխվել և վերացվել կալանավորման և գրավի ձևով դատարանի ընտրած խափանման միջոցը. • միայն դատարանի կողմից • միայն դատախազի կողմից • վարույթն իրականացնող մարմնի կողմից • **դատարանի կողմից, իսկ քրեական գործով մինչդատական վարույթում՝ նաև դատախազի կողմից**
268	Ի՞նչ ժամկետում պետք է քննարկվեն և լուծվեն նախնական քննության մասնակիցների հարուցած գրավոր և բանավոր միջնորդությունները. • անհապաղ, սակայն առանձին դեպքերում ոչ ուշ, քան երեք օրվա ընթացքում • 48 ժամվա ընթացքում • **5 օրվա ընթացքում** • ողջամիտ ժամկետում

269	Ո՞րն է անձին որպես մեղադրյալ ներգրավելու հիմքը. • նրա կողմից հանցանքի կատարումը վկայող հավաստի ապացույցների համակցությունը • **նրա կողմից հանցանքի կատարումը վկայող բավարար ապացույցների համակցությունը** • նրա կողմից հանցանքի կատարումը վկայող հավաստի և ստուգված ապացույցների համակցությունը • քննիչի կողմից որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը
270	Ու՞մ որոշմամբ է գույքն ազատվում կալանքից. • քրեական հետապնդման մարմնի • քննիչի • այն մարմնի որոշմամբ, որի կողմից կալանք է դրվել գույքի վրա • **վարույթն իրականացնող մարմնի**
271	Կալանավորված անձը քանի՞ օրվանից ավելի չի կարող պահվել ձերբակալվածներին պահելու վայրերում, եթե ձերբակալվածներին պահելու վայրից քննչական մեկուսարան կամ, օրենքի պահանջներին համապատասխան, կալանավորվածներին պահելու այլ վայրեր նրա տեղափոխումը հնարավոր է. • 1 օրվանից ավելի • **3 օրվանից ավելի** • 7 օրվանից ավելի • 10 օրվանից ավելի
272	Ո՞ր քննչական գործողությունն է կատարվում առանց ընթերակաների մասնակցության. • քննում • արտաշիրմում • զննում • **առերեսում**
273	Իրավունք ունի՞ արդյոք տուժողը ծանոթանալ առաջադրված մեղադրանքին. • ոչ, տուժողն իրավունք չունի ծանոթանալ մեղադրանքին • տուժողն իրավունք ունի ծանոթանալ մեղադրանքին միայն նախաքննության ավարտման պահից • **այո, տուժողն իրավունք ունի ծանոթանալ մեղադրանքին** • տուժողն իրավունք ունի ծանոթանալ մեղադրանքին միայն դատաքննության ընթացքում

274	Կարո՞ղ են արդյոք դադարեցվել պաշտպանվող անձի նկատմամբ իրականացվող պաշտպանության միջոցները, եթե նա տվել է կեղծ ցուցմունք, որը հաստատվել է օրինական ուժի մեջ մտած դատավճռով. • **այո, այդ դեպքում պաշտպանության միջոցները կարող են դադարեցվել** • ոչ, նման հիմքով պաշտպանության միջոցները չեն կարող դադարեցվել • պաշտպանության միջոցները չեն կարող դադարեցվել ոչ մի դեպքում, քանի դեռ չի վերացել պաշտպանվող անձի կյանքին կամ անվտանգությանը սպառնացող իրական վտանգը • ոչ, պաշտպանության միջոցները չեն կարող դադարեցվել, քանի դեռ պաշտպանվող անձը այդ մասին գրավոր դիմում չի ներկայացրել
275	Քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում ոչ ժամանակին հարուցված միջնորդությունը. • վերադարձվում է այն հարուցած անձին • **թողնվում է առանց քննության** • մերժվում է • քննության է առնվում և լուծվում ստանալու պահից 10 օրվա ընթացքում
276	Դատավարության ո՞ր մասնակիցներն են ներկայացնում մեղադրանքի կողմը. • դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը, տուժողը, քաղաքացիական պատասխանողը և քաղաքացիական հայցվորը ու նրանց ներկայացուցիչները • քննիչը և հետաքննության մարմինը • միայն քրեական հետապնդման մարմինները • **քրեական հետապնդման մարմինները, ինչպես նաև տուժողը, քաղաքացիական հայցվորը և նրանց օրինական ներկայացուցիչներն ու ներկայացուցիչները**
277	Քրեական դատավարությունում քաղաքացիական հայցվորն իրավունք չունի. • դատարանում հանդես գալ ճառով և ռեպլիկով • **մինչև գործի դատական քննությունը սկսելը հանդես գալ դատական քննության արագացված կարգ կիրառելու միջնորդությամբ** • իր խնդրանքով անվճար ստանալ մեղադրական եզրակացության կամ եզրափակիչ որոշման պատճենը, ինչպես նաև դատավճռի կամ դատարանի այլ վերջնական որոշման պատճենը • ունենալ ներկայացուցիչ և դադարեցնել ներկայացուցչի լիազորությունները

278	Պաշտպանության միջոցներ ձեռնարկելու մասին քրեական դատավարությանը մասնակցող անձի դիմումը քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից քննարկվում է. • այդպիսի դիմում ստանալու պահից ոչ ուշ, քան երեք օրվա ընթացքում • այդպիսի դիմում ստանալու պահից անհապաղ, բայց ոչ ուշ, քան 12 ժամվա ընթացքում • այդպիսի դիմում ստանալու պահից ոչ ուշ, քան երկու օրվա ընթացքում • **այդպիսի դիմում ստանալու պահից անհապաղ, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում**
279	Ստորև նշվածներից ո՞ր դեպքում անձը չի նախազգուշացվում սուտ մատնության համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին. • երբ անձը հաղորդում է ներկայացնում ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության կատարման մասին • երբ անձը հաղորդում է ներկայացնում ոչ մեծ ծանրության հանցագործության կատարման մասին • երբ հաղորդում ներկայացնողը պաշտոնատար անձ է • **երբ չի լրացել հաղորդում ներկայացնողի 16 տարին**
280	Մինչև քրեական գործ հարուցելու մասին որոշում կայացնելը քննիչը (հետաքննության մարմնի աշխատակիցը) իրավունք չունի. • կատարել դեպքի վայրի զննություն • նշանակել փորձաքննություն • **կատարել քննում** • հետազոտման համար վերցնել նմուշներ
281	Քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման պատճենը ստանալու պահից քանի՞ օրվա ընթացքում այն կարող է բողոքարկվել վերադաս դատախազին. • 3 օրվա ընթացքում • **7 օրվա ընթացքում** • 10 օրվա ընթացքում • մեկ ամսվա ընթացքում

282	Մեղադրողը, դատարանում հայտնաբերելով քրեական հետապնդումը բացառող հանգամանքներ, պարտավոր է հայտարարել ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին և միջնորդել դատարանին կարճել քրեական գործը: Ի՞նչ որոշում պետք է կայացնի դատարանը, եթե գտնում է, որ ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդումը բացառող հիմք չկա, այլ հակառակը՝ ամբաստանյալի մեղավորությունը հիմնավորված է. • **պարտավոր է որոշում կայացնել քրեական գործը կարճելու և ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին** • իրավունք ունի որոշում կայացնել մեղադրողի միջնորդությունը մերժելու մասին • իրավունք ունի հետաձգել միջնորդության քննարկումը և այդ հարցը լուծել դատավճռով • պարտավոր է մերժել մեղադրողի միջնորդությունը և ընդհանուր կարգով քննել քրեական գործը
283	Իր իրավավիճակը հաստատելու համար պաշտպանը քրեական վարույթն իրականացնող մարմնին ի՞նչ փաստաթուղթ չպետք է ներկայացնի. • **օրդեր** • որպես պաշտպան հանդես գալու՝ մեղադրյալի ստորագրությամբ վավերացված փաստաթղթային հաստատում • փաստաբանների պալատի կողմից տրված՝ իր փաստաբան լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթ • անձը հաստատող փաստաթուղթ
284	Ո՞ր քրեական դատավարության օրենքը հետադարձ ուժ չունի. • դատավարության մասնակիցների վիճակը բարելավող • դատավարության մասնակիցներին իրավունքներ վերապահող • **դատավարության մասնակիցների իրավունքները սահմանափակող** • քրեադատավարական օրենքին ընդհանրապես հետադարձ ուժ չի տրվում
285	Քրեական դատավարությունում դատարանի կողմից դատական որոշումներն ի կատար ածելու հետ կապված հարցեր քննելիս դատախազ մասնակցու՞մ է. • նրա մասնակցության անհրաժեշտությունը որոշում է հարցը քննող դատավորը • նրա մասնակցության անհրաժեշտությունը որոշում է վերադաս դատախազը • **նրա մասնակցությունը պարտադիր է** • մասնակցության հարցը թողնված է դատական որոշումն ընդունելուց գործի քննությանը մասնակցած դատախազի հայեցողությանը

286	Խափանման միջոցներ կարող են կիրառվել. • միայն մեղադրյալի նկատմամբ • մեղադրյալի, իսկ բացառիկ դեպքերում նաև՝ կասկածյալի նկատմամբ • կասկածյալի, մեղադրյալի և քրեական դատավարության այլ մասնակիցների նկատմամբ **• միայն կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ**
287	Թվարկվածներից ո՞րը քրեական գործով վարույթը բացառող արդարացնող հիմք չէ. • բացակայում է հանցագործության դեպքը • արարքի մեջ հանցակազմ չկա • վնաս պատճառած արարքը քրեական օրենքով համարվում է իրավաչափ **• անձը արարքը կատարելու պահին չի հասել քրեական պատասխանատվության ենթարկելու՝ օրենքով նախատեսված տարիքին**
288	Նշվածներից ո՞րը հետաքննության մարմին չէ. • ոստիկանության մարմինները • քրեակատարողական հիմնարկները • ազգային անվտանգության մարմինները **• նավապետը**
289	Հետաքննության ավարտման ձև չէ. • հետաքննության ժամկետի լրանալը • մինչև հետաքննության ժամկետի լրանալը հանցանք կատարած անձի ի հայտ գալը • դատախազի կողմից հետաքննության մարմնի վարույթում գտնվող գործը նախաքննության կատարելու համար քննիչին հանձնելը կամ քննիչի՝ գործի քննությանը ներգրավվելը **• մեղադրական եզրակացություն կազմելը**
290	Դատավարական հարկադրանքի այլ միջոց է. **• պաշտոնավարության ժամանակավոր դադարեցումը** • վարչական հսկողությունը • անձնական երաշխավորությունը • հրամանատարության հսկողության հանձնելը

291	Նախաքննությունը պարտադիր է. · միայն ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների վերաբերյալ գործերով · միայն ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների վերաբերյալ գործերով **· բոլոր գործերով** · միայն անչափահասների վերաբերյալ գործերով
292	Նախաքննությունը ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածով (մաքսանենգություն) նախատեսված հանցագործության վերաբերյալ գործով կատարում են. · ոստիկանության քննիչները **· ազգային անվտանգության կամ մաքսային մարմինների քննիչները** · հարկային մարմինների քննիչները · հատուկ քննչական ծառայության քննիչները
293	Տուժողի հարցաքննությունը կատարվում է. · կասկածյալի հարցաքննության համար սահմանված կարգով **· վկայի հարցաքննության համար սահմանված կարգով** · մեղադրյալի հարցաքննության համար սահմանված կարգով · քրեական դատավարություն օրենսգրքով սահմանված հատուկ կարգով
294	Կասկածյալի հարցաքննությունը կատարվում է. **· նրան ձերբակալելուց կամ խափանման միջոց կիրառելու մասին որոշումը նրան հայտարարելուց անմիջապես հետո** · նրան ձերբակալելուց կամ խափանման միջոց կիրառելու մասին որոշումը նրան հայտարարելուց 48 ժամվա ընթացքում · նրան ձերբակալելուց կամ խափանման միջոց կիրառելու մասին որոշումը նրան հայտարարելուց 24 ժամվա ընթացքում · օրենքով կոնկրետ ժամկետ նախատեսված չէ
295	Առերեսում կատարելը քննիչի համար. · միայն իրավունք է · միայն պարտականություն է **· և՛ իրավունք է, և՛ պարտականություն** · միայն պարտավորություն է

296	Անհրաժեշտ հետազոտություններ կատարելուց հետո փորձագետը կազմում է. • տեղեկանք **• եզրակացություն** • արձանագրություն • ակտ
297	Անչափահասների գործերով վարութի կարգը կիրառվում է այն անձանց հանցագործությունների վերաբերյալ գործերով. **• ում 18 տարին չի լրացել հանցանքը կատարելու պահին** • ում 18 տարին չի լրացել ձերբակալման պահին • ում 18 տարին չի լրացել կալանքը որպես խափանման միջոց կիրառելու պահին • ում 18 տարին չի լրացել քրեական գործը դատարան ուղարկելիս
298	Արգելվում է նմուշներ ստանալ. **• մարդուն հոգեկան և ֆիզիկական տառապանքներ պատճառող կամ նրա մարմնի ամբողջականությանը վտանգ սպառնացող միջոցներով** • առանց դատախազի համաձայնության • առանց դատարանի թույլտվության • առանց այն անձի գրավոր համաձայնության, ումից պետք է վերցվեն նմուշներ
299	Փորձագետին չի թույլատրվում հարցաքննել, եթե նա. • համաձայնություն չի տալիս իրեն հարցաքննելու • ծանր հիվանդ է • եթե դրա դեմ առարկում է փորձագիտական հիմնարկի ղեկավարը **• մինչև նրա կողմից եզրակացություն տալը**
300	Դիակի, դրա մասերի ճանաչումը կատարվում է. • ներկայացված երեք այլ օրինակների հետ **• ներկայացված մեկ օրինակով** • դիահերձարանում առկա այլ օրինակների հետ • դիակի ճանաչում չի թույլատրվում